

ԿԱՐԼԵՆ ԴԱԼԼԱԶՅԱՆ

Լազ ՍՓՅՈՒՇԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԼԵՆ ԴԱԼՏՎՅԱՆ

ՀԱՅ ՍՓՅՈՒՇՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(համառոտ ակնարկ)



Երևան 2004

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՂԴԱԿԱՆ

ՀՏԴ 941(479.25)
ՊՄԴ 63.3(23)
Դ 133

Գիրքը տպագրվել է պետական
արակցությամբ

Դաստիարակության համար կազմակերպություն
Դ 133 Դայ Սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ). – Եր.: Զանգակ-97,
2004, 288 էջ:

Գրքում համարուտ շարադրված է ժամանակակից հայ Սփյուռքի պատմությունը՝
գոյավորումից մինչև մեր օրերը: Ներկա հրատարակությունը նույն համալսարանի 1998 թ.
հրատարակած աշխատության վերամշակված և ընդլայնված տարբերակն է:

Դ 0503020913 2004
0003(01) 2004

ՊՄԴ 63.3(23)

ISBN 99930 – 2 – 854 – 1



ՀԱՅԱՍՏԱՆԻ

Հանգստական գրադարան

© Դաստիարակություն

WILHELM

Դեռևս պատմության խորքերում հայ ժողովուրդը երբեն-երբեն ստվար զանգվածներով բնակություն է հաստատել օտար երկինքների տակ: Դա տեղի է ունեցել մի շարք պատճառներով, որոնց թվում հիմնականը հարազատ տարածըներից նրա բօնավտարումն էր կամ բօնի ուժով վերաբնակեցումը ուրիշ երկրներում ։ Յայաստանը նվաճած այլազան ցեղախմբերի ծեռքով: Եղել են նաև տնտեսական, առևտուրական հանգամանքներ և ուրիշ, համեմատաբար «խաղաղ» շարժառիթներ: Նոր վայրերում, իրու կանոն, հայությունը ստեղծել է հավաքական գոյության պահպանման միջոցներ, զարկ է տվել թե իր արտադրողական ուժերին, թե կրթամշակութային գործին: Յավաքական գոյության այդ վայրերն էլ մեր պատմագրությունը կոչել է հայոց գաղթավայրեր, որոնց պատմությունը լրջորեն ուսումնասիրված է և հրապարակված հայ գիտնականների կողմից:

XX դարի տասական թվականներին հայոց գաղթավայրերը համալրեց և նորերը ստեղծեց մի խոշոր ալիք ևս: Թուրքիայում հայերի ֆիզիկական բնաջնջան պետական քաղաքականության հետևանքով ամբողջովին հայաթափվեց Արևմտյան Հայաստանը: Ոչնչացվեց կամ բռնավտարվեց 1,5-2,0 միլիոն հայություն: Զավթվեց և թալանի մատնվեց նրանց ինչըն ու ունեցվածքը: Թուրքերի ծեռօրվ կատարվեց մի անօրինակ հանցագործություն նարդկայնության հանդեպ, որը շատ տարիներ հետո միայն ախտի որակվեր «գեղասպանություն» («գենոցիոյ»):

Դեմք նույն տասական թվականների վերջերին Արևելյան Հայաստանում իրականություն դարձավ հայ ժողովրդի դարավոր երազանքը: 1918 թվականի մայիսին հօչքակից անկախ Հայաստանի Հանրապետությունը: Այնուհետև հայոց պետականությունը շարունակվեց Հայաստանի Խորհրդային Հանրապետության ձևով 1920 թվականից ի վեր:

Առաջին և երկրորդ համրապետություններին 1990 թվականին փո-

Խարինելու եկավ Դայաստանի Երրորդ անկախ Դանրապետությունը: Այսպիսով՝ պատմական Դայաստանի այդ վերջին հողակոտորի վրա վերնձյուլվեց հայոց ազգային կյանքը: Դայության անսակարելի կամքով երկիրը գորովաճրով կոչվեց Մայր Դայրենիք: Ի տարբերություն նախորդող մի քանի դարերի՝ ստեղծվեց որակական նոր կացություն: Դայությունը փաստորեն ունեցավ կենտրոնաձիգ մի խարիսխ, որից դուրս և որի շուրջ՝ աշխարհով մեկ ցրված զանգվածներ, իբրև ցեղասպանությունից մազապուրծ բեկորներ: Մայր Դայրենիքից դուրս ծվարած այս զաղթօջախներն էլ կոչվեցին Սփյուռք: Սույն եզրը պայմանականորեն տարանջատում է ներկայիս զաղթօջախները պատմական զաղթավայրենից:

Կենտրոնածիգ ուժի հայոց պետականության գոյությունն էլ բնորոշվում է արդի Սփյուռքի քաղաքական հատկանիշը: Ի տարրերություն նախորդ դարերի ցոռնքի աշխարհով մեկ սփոված հայությունն այսօր ունի իր քաղաքական հենարանը: Դետևաբար, արդի Սփյուռքն էլ իր հերթին հնարավորին չափ օժանդակում է հայոց պետականության ամրապնդանը հավաքական ազդեցություն գործադրելով իր բնակած երկրների ու Դայաստանի միջպետական հարաբերությունների բնականոն ընթացքի վրա, ինչպես նաև հայության համազգային խնդիրների նկատմամբ օտար տերությունների դիրքորոշման վրա: Այս հանգամանքն ես որոշակիորեն տարրերակում է արդի Սփյուռքը իրու լուրջ քաղաքական առանձնահատկություն:

Հայ Սփյուռքի պատմության խորապես ընկալման համար անհրաժեշտ է առաջին հերթին հստակ պատկերացում ունենալ, թե ինչու տեղի ունեցավ Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում, որի հետևանքով էլ Վերջին հաշվով, առաջացավ ժամանակակից հայկական Սփյուռք:

XV ηαρήσι ή ψερ Ουμάνιαν λαμπτηριέργιοιν διανοιαί την ιωνητηρίαν
ηακιαν διαληρακιανηριέργιοιν έρηκροια μνακιόνη αρραγηήν έρηθηκιακιαν
ψηφραύμανηριέργιοινηθρή φανδηκιασηήήν φηγητηριέργιαν ιωρησιαί: Όω, ψερ-
θην ιωσηκι, ρασιατηρησιαί την ινιτησιακιαν ψωτηριόνηθροι, διανή ηη
νιψηρηηθρή ιωνηρ ιηδηνηκιαν αρτητηρηηηκιαν πισθη ιενησ αγη φανδ-
ψωδη έρη:

մանը գուգընթաց, օսմանականության գաղափարախոսությանը փոխարինելու էր գալիս բուն ազգայնական թուրքականության հավատամքը: Այդ պրոցեսը հատկապես արագացավ XIX դարի ընթացքում, երբ կայսրությունում ծավալվեցին ազգային–ազատագրական շարժումներ: Դույները, սերբերը, բուլղարները, ոումինները և ուրիշ երմիկական փորձանականություններ հասան հաջողության: Եվրոպյան «հիվանդ մարդ» հորդորչված կայսրությունը կանգնած էր փլուզման եզրին: Օսմանականության փոխարեն թուրքականության ազգայնական գաղափարախոսության որդեգրումն էլ կոչված էր փրկելու երկիրը:

1852 թ. Զեյթունի ապստամբությունից և 1878 թ. Սան Ստեֆանոյի դաշնագրից հետո հատկապես սաստկացան հալածանքները հայերի նկատմամբ: XIX դարավերջի հայկական կոտորածները, որոնց գոհ գնաց շուրջ 300 հազար մարդ, հենց թուրքականության գաղափարախոսության առաջին արյունոտ դրսնորումն էին գործնականում: Պատահական չեր, որ նույն ժամանակաշրջանում վերջնականապես ծնավորվեց այդ գաղափարախոսությունը՝ նույնիսկ ծնունդ տալով մի հատուկ «երիտրուրքական» կուսակցության: Թուրքականության գաղափարախոսության հիմնական երթյունն ամփոփվում է «Թուրքիան միայն թուրքերին» ազգայնական իդեալը սահմանող բանաձևի մեջ: Երկրում բնակվող մյուս բոլոր ազգային–երմիկական փորձանականությունները դրված էին թուրքանալու կամ Ֆիզիկապես ոչնչանալու և բոնավտարվելու երկընտրանքի առջև:

Թուրքականության գաղափարախոսությունը լրամշակվեց XX դարում՝ ընդունելով Ազգային ուխտի ծև և վերածվելով համարուրքականության կամ համարուրանական գաղափարախոսության, որի վերջնական բիրախն է բոլոր թուրքալեզու ժողովուրդների միավորումը մի կայսրության մեջ Աղրիատիկ ծովից մինչև Հյուսիսային սառուցյալ օվկիանոս: Այս գաղափարախոսությունը մեր օրերում կենդանի, գործող երևույթ է, որը Թուրքիայի պետական քաղաքականության մակարդակով հետապնդվում է մանավանդ ԽՄԴՍ փլուզումից հետո:

Դայ Սփյուռքի պատմությունը, վերջին հաշվով, աշխարհով մեկ ցրված հայության ազգային գոյատևության, այսինքն ազգային կեցությունն ապահովող հիմնախարիսխների ու մեխանիզմների ստեղծման

ու գործողության պատմությունն է: Այնքան լայն է դաշտը, որ Սփյուռքի համապարփակ պատմությունը շարադրելու գործը դեռ ապագայի խնդիր է: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ այսօր, երբ Հայաստանի Հանրապետության անկախության հոչակումով ստեղծված են «Մեկ ազգ, մեկ հայրենիք» ըղձալի կարգախոսը իրականության Վերածելու քաղաքական հնարավորությունները, արդիական իրամայական է ժողովորի տարրեր հատվածների կողմից միմյանց ճանաչելը: Բնականաբար, իրամայական է նաև ստեղծել սփյուռքահայության անցած ուղին և ներկա կացությունը գեր ուրվագծող համակարգված մի շարադրանք, որի նկատմամբ մեծ պահանջարկ է ներկայացնում բարձր կարգի աշակերտությունը և ուսանողությունը, ուսուցչությունը, մտավորականությունը, լայն ընթերցող հասարակայնությունը:

Տարիների ընթացքում Հայաստանում իրատարակվել են բազմաթիվ աշխատություններ, որոնք առնչվել են Սփյուռքի հայեցի կեցության այլազան հարցերին ու խնդիրներին: Երկար ժամանակի ընթացքում Սփյուռքի պատմության նկատմամբ վերաբերմունքի խնդիրը կրում էր գաղափարախոսականացվածության այլամերժ կնիքը, և պատմաբանների թե հասարակագետների հայցը կաղապարված էր Ալ. Մյանիկյանի և Աշ. Շովիաննիսյանի պաշտոնական հանգամանք կրող աշխատություններով:

Խորհրդային Սիությունում Ն. Խորոչչյովի անվան հետ կապվող «Ճհհալից» ի վեր, մասնավորապես, 60-ական թթ-ից, ազատամտություն է սկսվում տարածվել նաև պատմագրության մարզում, անշուշտ, որոշ սահմանների մեջ: Թեպետ, առաջվա նման, թելադրող դեռևս գաղափարախոսական սկզբունքն էր, այնուամենայնիվ, հնարավորություն էր ստեղծվում հանրությանը ներկայացնելու ոչ միայն «աշխատավորական» կամ «առաջադիմական» տարրերի գործունեությունը, այլև հայ Սփյուռքի քաղաքական մյուս հոսանքների, մշակութային, կրթական, բարեսիրական, երիտասարդական, մարգական, հայրենակցական և ուրիշ կազմակերպությունների պատմությունն ու առօրյան: Գրվում էր նույնիսկ ՀՀ դաշնակցության մասին, սակայն, իբրև կանոն, միայն ժխտական երանգներով:

Այդ ժամանակահատվածում լույս տեսան Ս. Գասպարյանի «Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր» և Ա. Աբրահամյանի «Դամառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության» աշխատությունները, որոնք սփյուռքահայության մասին համակարգված որոշ տեղեկություններ էին

պարունակում: Թեպետ այսօր դրանք հնացած են և ոչ առարկայական գնահատականներ են մատուցում, բայց իր ժամանակի համար Ա. Գասպարյանը և Ա. Աբրահամյանը կատարեցին կածանը հարթողի մեծապես շնորհակալ և գնահատելի գործը:

Դրատարակվեցին նաև սփյուռքահայ կյանքի առանձին շերտերը կամ համայնքները հետազոտող աշխատություններ՝ Լ. Խուրշույյանի «Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում», Յր. Սիմոնյանի «Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում», Ռ. Խաչատրյանի, Կ. Դալլաջյանի գրքերը համապատասխանաբար բուլղարահայ և լիբանանահայ կոմունիստական մամուլի մասին, Օ. Թոփուզյանի երկու հատորները Եգիպտոսի և Սիրիայի ու Լիբանանի գաղութների պատմության մասին, Ե. Յովհաննիսյանի գիրքը մերձավորակելյան ռազմական կոնֆլիկտի մեջ հայության կացության վերաբերյալ, Յ. Մելիքսեքյանի «Դայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը», Զ. Ղասարյանի «Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության», Բ. Ավագյանի գիրքը ԱՄՆ-ի հայության մասին, Դ. Փակելսանյանի «Իրանահայ համայնքը», Վ. Դանագասպյանի և Ե. Մելքոնյանի աշխատությունները Դայրենիքության միության պատմության վերաբերյալ և ուրիշ գործեր: Այդ գրականությունը եկավ ինչ-որ չափով լրացնելու արդի Սփյուռքի մասին մեր գիտելիքների աղքատիկ պաշարները:

Այսօր անհնարին է ընդունել այդ աշխատությունների մեջ մասունք արծարծված շատ թեզերն ու եզրահանգումները: Բայց պատմագիտության նկատմամբ էլ պահանջվում է պատմագիտական հայացք, ամեն երևոյթ իր ժամանակի և հնարավորությունների սահմաններում Ծժարելու անհրաժեշտություն: Եվ ինը նման մի նկատառումով էլ հարկ է նշել հիշյալ հեղինակների շնորհակալ ու գնահատելի աշխատանքը:

Անցնող տասնամյակների ընթացքում Սփյուռքում նս հրատարակվել են բազմաթիվ գրքեր, այդ թվում և օտար լեզուներով, որոնցում բացահայտվել է այս կամ այն համայնքի, քաղաքական, մշակութային, քարեսիրական, հայրենակցական և այլ կազմակերպությունների ու օջախների անցած ուղին, արդի կացությունը: Տարբեր ժամանակներում իրենց մեծ լուման են թերել Կարապետ Իգմիրյանը, Լևոն Չորմիսյանը, Լևոն Մողյանը, Անդրեաս Գարամանյանը, Զավեն Մըսքըյանը, Ժիրայր Նայիրին, Սիսակ Վարժապետյանը, Ռիշարդ Յովհաննիսյանը, Ավետիս Սանջյանը, Արեգ Բուշիգանյանը, Արա Ավագյանը, Ավետիս Եափությանը,

Կարպիս Տեր-Եղիայանը, ժիրայր Լիպարիտյանը, Մանուկ Յանգը, Զապել Գարբիելյանը, Դարուդ Թաքուշյանը, Դակոր Տեր-Կարապետյանը, Ոորերտ Մայրաքը, Ոորեր Ենապեցյանը, Խաչիկ Թեոլեռյանը, Շրաչ Տասնապետյանը, Տիգրան Գույումճյանը, Գևորգ Բարդակյանը, Գևորգ Խոլոպյանը և շատ ուրիշներ:

Սփյուռքահայության ամփոփ պատմությունը, սակայն, դեռ չի ստեղծվել: Սույն աշխատությունը մի փորձ է լրացնելու այդ բացատը հակիրճ ուրվապատկերի ծնով:

Դայ ժողովուրդը, իր պատմական ճակատագրի բերումով, այսօր Մայր Հայրենիքից Հայաստանի Հանրապետությունից և Լեռնային Պարարադի Հանրապետությունից բացի հավաքական կղզյակների ծնով բնակվում է աշխարհի շատ երկրներում: Ընդհանուր 8–8,5 միլիոնից շուրջ 3 միլիոն հայությունն ապրում է նախկին Խորհրդային Սիության սահմաններում, ևս 2,5 միլիոնի չափ բույն է հյուսել Ամերիկայի, Եվրոպայի, Աֆրիկայի, Ավստրալիայի երկինքների տակ: Սփյուռքահայություն ասելով՝ ավանդաբար, հասկացվել է հենց այդ վերջին նախկին Խորհրդային Սիության սահմաններից դուրս գտնվող զանգվածը:

Բնականաբար, Սփյուռքի մասին գիտական ուսումնասիրություններն ու հրապարակումները վերաբերել են հենց այդ հատվածին: Ներկայումս, սակայն, «Սփյուռք» հասկացության տակ ընկալվում է նաև Ոուսաստանի և Նորանկախ մյուս պետությունների լայնարձակ տարածքներում սփոված հայությունը, որ նախկինում հաճախ պայմանականորեն կոչվել է «Ներքին սփյուռք»: Վերջինիս վերաբերող ուսումնասիրություններ գրեթե գոյություն չունեն: Մի հանգամանք, որը որոշակի խոչընդոտներ է հարուցում սփյուռքահայության պատմության ամբողջական շարադրանքի հարցում:

Ընթերցողը պետք է նկատի ունենա նաև, որ աշխարհի երկրների մեծ մասում բնակվող հայության մասին պաշտոնական ստույգ վիճակագրական տվյալներ գոյություն չունեն: Հատերում նարդահամարներ չեն եղել կամ վաղուց ի վեր չեն եղել: Ուստի ժողովրդագրական տվյալները բերվում են գնահատականի ծնով՝ հենվելով հիմնականում եկեղեցական մարմինների այս կամ այն առիթով արված հաղորդումների, ինչպես նաև մանուկում երևացող կցկոտու տեղեկատվության վրա, որն իր հերթին նույնպես հաճախ մոտավոր է:

Զուրկ լինելով պետական հովանավորությունից՝ սփյուռքահայ շատ

զայթօջախների հասարակական կյանքն ընթանում է ոչ հաստատուն ռիթմով: Դաճախ են տեղաշարժերը, դադարում, կամ հաստատվում են նոր իրողություններ, վերանում, օտարվում կամ ստեղծվում են ազգային կյանքի ինֆրակառուցվածքի նոր խարիսխներ: Սույն աշխատության առաջին հրատարակությունից ի վեր անցած ժամանակներում, օդինակ, Ամերիկայի Միացյալ Նահանգներում և Կանադայում վերացել են կարևոր մշակութային հիմնադրամներ, հայագիտական հաստատություններ, փակվել է Ֆրանսիայի ամենահին դպրոցներից մեկը, դադարել են գործել զանգվածային լրատվության որոշ միջոցներ, բացվել են նորերը և այլն:

Այս ամենը վկայում է, որ սույն աշխատությունը չի կարող զերծ լինել վրիպումներից, թերություններից ու բացքողումներից: Նույնիսկ, հնարավոր է, որ մասամբ հնացած լինի որոշ տեղեկատվության մեջ: Ուստի հեղինակը դիմում է մասնագետներին՝ կոչ անելով թղթակցությամբ ուղղելու վրիպումները, լրացնելու պակասները: Ընորհակալությամբ կը դունկեն նաև գործնական թելադրանքները: Նման կարգի նյութերն ուղարկել հետևյալ հասցեով՝ Երևան, Մոսկովյան 3, «Դրայա Աճառյան» համայստրան:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

1. ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Արդի Սփյուռքում հասարակական կյանքի շատ շարժմբացներ պայմանավորված են ժողովրդագրական պատկերի ներկա վիճակով, բայց մանավանդ՝ վերջին 80–90 տարիների հոլովույթում ժողովրդագրական տեղաշարժերի բնույթով։ Ուստի, առաջին հերթին անհրաժեշտություն է զգացվում պարզաբանել հետևյալ հարցերը՝ ինչո՞ւ, ի՞նչ պատճառներով ու շարժափեխներով և ո՞ր ուղղություններով կատարվեցին ժողովրդագրական զանգվածային ելքերը մինչև ժամանակավոր կամ վերջնական հանգրվաններում հաստատվելը։

Դայկական զաղթավայրերի մեջ մասը մինչև արդի Սփյուռքի ծնավորման ժամանակաշրջանը արդեն մարել էր իրեն հավաքական ազգային կեցության կերպ կամ մոտ էր վերացման։ Եթե Լեհաստանի, Դունգարիայի, Ղրիմի, Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում պատճական զաղութեներն արդեն վերացել էին, ապա Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Իրանում, Եգիպտոսում, Ֆրանսիայում դեռ մյսում էր ազգային անթեղված կրակը։ 1915–ին ծայր առաջ Մեծ Եղեռնի հետևանքով աշխարհով մեկ ցրված հայությունը, այսպիսով, ոչ միայն կյանք տվեց նոր զաղթօջախների, այլև նոր ազգային ավյուն հաղորդեց արդեն մարող հին ածուներին։

Ժամանակակից Սփյուռքի ծնավորումն էլ սկսվում է այն պահից, երբ Թուրքիայի սուլթանական կառավարողները, գործի նմելով «Թուրքիան՝ թուրքերին» Ազգային ուխտը, ծեղնամոլիս եղան հայ ժողովրդի արմատական ոչնչացմանը Առաջին համաշխարհային պատերազմի օրերին։ Դամարտւանական ծրագրի մի վճռական մասը կազմող այդ Ազգային ուխտը շարունակվեց իրականացվել թե Արևելյան Դայաստանում մինչև 1920 թվականի աշունը, թե Արևմտյան Անադուլուտում 1922 թվականի հունվարին՝ թուրքական պատերազմի քողի տակ, թե Դարավային Կիլիկիայում մինչև 1939 թվականը՝ Ալեքսանդրերի Սանջաքը ֆրանսիացիների

կողմից Թուրքիային նվիրաբերելու հետևանքով: Յայ ժողովրդի մի խոչըն գործե կեսմիլիոնամոց հատվածի տեղահանությունը նախկին Ադրբեյջանական ԽՍՀ-ի տարածքից, որ սկիզբ առավ 1920-ական թվականներից է վեր Շուշիի սպանով և, այնուհետև, Նախիջևանի հայության խապա պարագումով, և հանգեց Սումգայիթի, Բաքվի, Կիրովարադի ջարդերին, արցախահայության նկատմամբ պետական քաղաքականության մակարդակի բարձրացրած տեսորի գործադրմանը՝ 1988–1992 թվականներին, նույնպես, առանց վարանելու, կարելի է գնահատել իրեն համարութքականության և նույն թուրքական Ազգային ուխտի մի եական մասը:

Թուրք-ադրբեյջանական քաղաքական այդ ռազմավարությունը այսօր իսկ կենդանի գործող մեխանիզմ է, որ հեռավոր թիրախում է ազգակից երկու ցեղախմբերի տարածքային միավորումը, բնականարար, բոլոր խոչընդոտների ֆիզիկական վերացման ճանապարհով: Նույն ռազմավարության գործող վկայությունն է հակաքրդական զանգվածային ահարեւէկությունը, որ իր ավարտին է հասել Ադրբեյջանի տարածքում քրդերի բռնի ազերիացման խողովակով, և շարունակվում է Թուրքիայում քրդերին դնելով բուրքացման կամ ոչնչացման երկընտրանքի առջև:

Ադրբեյջանի տարածքից բռնագաղթված հայության մի լուրջ զանգվածը լրացրեց Խորհրդային Միության սահմանների մեջ զտնվող հայության գաղթօջախները, ինչպես նաև հայտնվեց Ամերիկայում, Ֆրանսիայում և այլուր:

1970-ական թվականներին Խորհրդային Հայաստանից քաղաքական և տնտեսական պատճառներով սկսված արտագաղթի հետևանքով Սփյուռքի, մասնավորապես, ԱՄՆ-ի համայնքները համալրեց մի հոծ զանգված ևս, որի կազմում լուրջ թիվ ունի հայաստանաբնակ հայությունը: Վերջին տարիների քաղաքական և տնտեսական անկայունության պատճառով Հայաստանից հեռացավ ևս մեկ միլիոն մարդ: Կարելի է արձանագրել, որ քանական թվականներից ի վեր ծայր առած հայրենադարձությունը, որը զանգվածային բնույթ ստացավ մանականդ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, դադարել է, իսկ հակառակը՝ Սփյուռքի մեխանիկական աճի պրոցեսը դեռևս ընթացքի մեջ է:

Սփյուռքի ժողովրդագրական պատկերը դրսնորել է հարաբերական կայունություն: Ներքին միգրացիան, որոշ համայնքների ուղացումը ուղիղների հաշվին տևաբար շարունակվող, այսօր իսկ գործող պրոցես է:

Տարբեր աղյուսներ արձանագրում են, որ քսանական թվականներին ամբողջ սփյուռքահայության թիվը շուրջ 700 հազար էր: Եթե փորձենք գծել հայության գաղթի կորագիծը, ապա պետք է արձանագրենք 1915–1922 թվականների համար կենտրոնացում Մերձավոր Արևելքի և Արևելքան Եվրոպայի գրեթե բոլոր երկրներում, որոնք անմիջականորեն սահմանակից են Թուրքիային: Սա բնակ չի նշանակում, թե Արևմտյան Եվրոպայի երկրներ և Ամերիկա մայրցամաք բոնագաղթված հայություն չեր գուում: Պարզապես առաջին փուլում շեշտ ընդգծվում էր հարազատ երկրին պատմական Դայաստանին որքան կարելի է մոտ տարածքներում խարիսխ նետելու զանգվածային հոգեբանությունը: Դայության նման ծգուումը սատարվում էր հետևյալ առարկայական պայմաններով.

(Ա) Ընդունող երկրների մեծ մասը Օսմանյան կայսրության նախկին տիրույթներ էին, և բնիկ ժողովուրդները հայությանը հյուրընկալում էին հոժարական և բարեկամական զգացումով իրու նույն, ընդհանուր թշնամուց տուժածների:

(Բ) Դայությունն իր զանգվածով մանավանդ այդ երկրներում, ինչպես նաև շատերը նրանցից, ովքեր ավելի հեռու վայրեր էին գաղթել, իրենց կեցությունը համարում էին առժամյա ակնկալելով, որ պետությունների միջազգային համագործակցությունն ահա ուր որ է պիտի ստիպի պատերազմում պարտված Թուրքիային վերադարձնել թե հայրենի տարածքը, թե կողոպտված ինչըն ու ունեցվածքը, և անհամբեր սպասում էին վերադարձի ավետիքին:

(Գ) Պահպանելով անցյալ դարի կեսերին նշակված ազգային Սահմանդրության կարգն ու սարքը, որի հիմքում դրված էր համայնքի եկեղեցապետական վիճակը, հայությունը ոյուրավ դիմագրավում էր ուժացման վտանգին: Մանավանդ արար մուսուլմանական շրջապատը լրացուցիչ, գրեթե վճռական գործոնի դեր էր խաղում ազգային կեցությունն ապահովելու գործում:

Երեք–չորս տասնամյակի ընթացքում հայությունն այդ երկրներում արձանագրում է հուժկու վերելք, որի վրա և խարսխվում է ազգային կեցության ամբողջ կառուցքը կորական, նշակութային գործը: Եգիպտոսը, Լիբանանը, Սիրիան հանդես են գալիս իրու ազգային կյանքի վառարաններ, որոնցում թրծված բազմահարյուր երիտասարդները կանգնում են ազգային բնագավառների քաղաքական կուսակցությունների, դպրոցների, մշակութային, բարեսիրական, մարզական, երիտասարդական միությունների, եկեղեցական–համայնքային մարմինների ղեկի

մոտ, կազմում այդ օղակների հիմնական մտավորական ատադը՝ ամբողջ Սփյուռքի տարածքով մեկ:

Կորագիծը, սակայն, տակավ առ տակավ ցուցադրում է քաղաքականորեն անստույգ և անապահով կացություններից խույս տալու ձգտում: Թուրքիային մերձակա երկրներում քաղաքական անապահովության աճին գուգընթաց ծայր է առնում հայության գաղթը դեպի ավելի հաստատուն վարչակարգեր ունեցող պետություններ: Բանական թվականների վերջերին Դուռաստանում կենտրոնացած գաղթահայության մեծամասնությունը ցրվում է տարրեր երկրներ: Եշարժիտ է, այստեղ թուրքական յարադանի սպառնալիքից զատ, որը կախվել էր հույների վրա, առավել որոշիչը տնտեսական տագնապն էր:

Երեսնական թվականներին, Ալեքսանդրերի Սանջաքի ճակատագրի վերջնական լուծումից հիասքափված, Դարավային Ամերիկայի ճանապարհն է բռնում Մերձավոր Արևելքում, մասնավորապես Սիրիայում և Լիբանանում օթևանած հայության մի շոշափելի զանգվածը:

Քառասնական թվականների երկրորդ կեսերին նույն երկրամասերից դեպի Խորհրդային Դայաստան է անցնում շուրջ 100 հազար հայություն: Երկրորդ համաշխարհային պատերազմում հայրական ԽՄՀՍ-ը այդ պահին երևում էր իրու քաղաքականորեն կայուն մի իրավակարգ:

Դիսնական թվականներին Եգիպտոսի, Սիրիայի և Մերձավոր Արևելքի մի շարք ուրիշ երկրների քաղաքական կյանքում սկսվում է վերիվայրումների մի տևական շրջան, որը փաստորեն բերում է ազգային փոքրամասնությունների իրավունքների սահմանափակման (խոշոր դրամագլխի ազգայնացում, աշխատանքի իրավունքի սանդղահարթակի ներմուծում, որի վրա հայությանը հատկացվում էր վերջին աստիճաններից մեկը, կրթական գործի պետականացում, քաղաքական կուսակցությունների արգելում և այլն): Ծայր է առնում զարդը հեռավոր Ավստրալիա, Կանադա և Անգլիա: Նույն թվականներին Ստամբուլում և Զնյութնիայում կազմակերպված հունա-հայկական ջարդերի ու բալանի հետևանքով Թուրքիայից աստիճանաբար սկսում են հեռանալ հայության բեկորները կենտրոնանալով Կանադայում, ԱՄՆ-ում, Շվեյցարիայում: Շարժներացը շարունակվում է ներկայումս էլ:

Ծիշտ նույն տասնամյակում և գրեթե նույնատիպ պատճառներով հայությունը սկսեց լքել Բուլղարիան և Ռումինիան, որտեղ սոցիալիստական հասարակարգի կառուցման տրամաբանությամբ ամբողջատիրական իշխանությունները պետական քաղաքականության մակարդա-

կի վրա իրագործում էին ազգային փոքրանասնությունների բռնաձուլումը: Յշմնական ճանապարհը տանում էր դեպի Անդրիկայի ափերը:

Յոթանասնական թվականներին Կիպրոսից հետաքավ (իշմնականում դեպի Անգլիա) հայ ազգարնակչության գրեթե կեսը, քանի որ Թուրքիան անպատճիտ գրավեց վիթխարի մի հատված՝ իր արյունակիցներին հունական վտանգից պաշտպանելու պատրվակով, և հաջո մեծ տերությունների անմոռունչ կեցվածքի: Կիպրոսը հարստություն չունի և այդ իսկ պատճառով աշխարհի գորեղներից ոչ մեկին չի հետաքրքրում: Եթե 1989 թվականին Իրաքը զավթեց Քուվեյթի հողանասը (ի դեպ հայությունը այստեղից էլ ստիպված էր հեռանալ), ՄԱԿ-ը ու բոլոր մեծերը և նրանց արքանյակները վճռականորեն միջանմեցին պատժելու համար նախահարձակին: Այս պարագայում վճռականը նավի վիթխարի պաշարներն էին, որի շնորհիկ փոքրիկ Քուվեյթը, ի տարբերություն փոքրիկ և անպաշտպան Կիպրոսի, գտավ իր գորավոր պաշտպաններին: Ավագակարարո քաղաքականությունը պատժվեց, քայլ ոչ հանուն արդարության, այլ հանուն շահի: Պիտի բնավ չզարմանալ, որ պատժիների շարժերում հանդիս եկավ նաև ինքը Թուրքիան, և ոչ ոք մտաբերել իսկ չուցեց, թե նույն ավագակարարո քաղաքականությամբ նա կլլել էր Կիպրոսի համեղ պատաօք և հաջողությամբ նարսում էր ծիշտ նույն պահին, եթե գենք էր ճոճում մի ուրիշ ավագակի դեմ՝ հանուն նարդասիրության և փոքր երկրների իրավունքի:

Մերձավոր Արևելքի հայության փորձառությունը և ազգային կեցությանը սպասնացող վտանգների հոտառությունը թելադրեց հայ ազգարնակչության հետագա արտագաղթը երկրամասից: Արաքա-իսրայելան պարբերական պատերազմները և դյուրավառ հարաբերությունները, իսլամական հեղափոխությունը Իրանում և իսլամական արմատական շարժումները Սիրիայում ու Լիբանանում, Լիբանանի անվերջանալի քաղաքացիական պատերազմները, Իրաքա-իրանյան պատերազմը և քաղաքական այլազան մակընթացությունները և տեղատվությունները պատճառ եղան, որ լիբանանահայության գրեթե երեք քառորդը, սիրիահայության գրեթե կեսը, պարսկահայության մի շոշափելի մասը, Եղիպտոսի, Իսրայելի, Իրաքի, Հորդանանի հայության որոշ հատվածներ բռնեցին Եվրոպայի (ըստ Էլության, նոր գաղութներ առաջացան Արևմտյան Գերմանիայում, Շվեյչարյում, Դանիայում, Բելգիայում, Շոլանդիայում), Անդրիկա և Ավստրալիա մայրցամաքների ճանապարհները: Ժողովրդագրական այդ տեղաշարժը դեռ շարունակվում է: Անրոդ

վերոշարադրյալը թելաղրում է մի եզրակացություն, որի արդարացիությունը ստուգելու համար անհրաժեշտ է վերադասնալ Մերձավոր Արևելքում հայության կենտրոնացման խնդիրներին:

Բռնավտարված գանգվածները դեպի Միջազգետք ճանապարհին, բնականաբար, հայտնվում էին և խարիսխ նետում Սիրիա-լիբանանյան տարածքներում: Այդ հանգամանքի առարկայական պատճառները շարադրվեցին վերը: Բայց կային նաև հայկական քաղաքական մտածողության ենթակայական շարժառիթներ: Առկա էր զանազան մարմինների ու կազմակերպությունների հստակ ընդգծված տրամադրությունը հայության թեկորները ժամանակավորապես խարսխելու պատմական Դայաստանին հնարավորինս մոտ տարածքներում:

Թե՛ Ազգային պատվիրակությունը և թե՛ Դայաստանի Դանրապետության պատվիրակությունը, որոնք կոչված էին Եվրոպայում մասնակցելու հայության ճակատագրին վերաբերող քանակցություններին, թեպետ շատ խնդիրներում ունեին տարածայնություններ, այդ հարցում նմանատիպ հայացք էին պաշտպանում:

1922 աշնանը թվագրված մի փաստաթղթում արտացոլված է հայկական գույց պատվիրակությունների միասնական դիրքորոշումը: «Պատվիրակություններն այն կարծիքին են, որ առայժմ լավագույնն է հայ գաղթականները պահել Թուրքիո և Դայաստանի մերձակա պետությանց ու վայրերու մեջ,— նշված է այդ փաստաթղթում:— Անոնք այս ձևով կը հուսան, որ ա) գաղթականները կը պատսպարվին արդեն հայ գաղութներ ունեցող և նյութական տեսակետով դյուրություններ ընծայող երկիրներու մեջ, և բ) մանավանդ, եթե ապագային դյուրություններ ստեղծվեն հայ ժողովրդին իր բնագավառը վերադասնալու, անոնցմե շատեր անմիջապես կրնան մեկնի Դայրենից»:

Նման կարծիքի էին նաև ազգային կուսակցությունները: ՀՀԴ «Դրոշակ» պաշտոնաթերթ, օրինակ, գրում էր քսանական թվականների վերջերին. «Խսիստ կենսական և կարևոր նշանակություն ունի հայ ժողովրդի ազգային-մշակութային ու քաղաքական գարգացման համար ամփոփվել Դայաստանին մոտ, արևելյան երկրներում: Այստեղ սպասել վերադարձի ժամին»: Դատկանշական է, որ «Դրոշակ» մասնավորապես նկատի ունի Սիրիան իրու հայության բնակավայր. «Ապագա անկանականներու պահին նա առաջինը կլինի տեղից շարժվողն ու Դայրենից մտնողը»:

Սահմանամերձ գոտիներում հայկական ազգաբնակչության կուտա-

կումը հարուցեց թուրքական հատուկ ծառայությունների անհանգստությունը: Արդեն քսանական թվականների սկզբներին, երբ առաջին հայրենադարձները փոխադրվեցին Խորհրդային Հայաստան, թուրքական մամուլը աներկվիտ գրեց, որ Թուրքիայի արևելյան սահմանների մոտ հայերի կուտակման երևույթի մեջ սպառնալիք էր տեսնում երկրի համար: Ամենածանրակշիռ քայլեր ծեռնարկվեցին Սիրիայում հայության կուտակման դեմ: Նախ՝ 1919 թ. Դամասկոսում, ապա՝ 1926 թ. Հալեպում թուրքական ծառայություններին հաջողվեց գրգռել արարական լուսապես տարրերին և հայկական ջարդեր կազմակերպել: Միայն իսլամ և հայ հոգևորականության վճռական միջամտությամբ հնարավոր եղավ դադարեցնել ամբոխի վայրագությունները:

Ավելի լայն ծրագրված և խոր գողարկված քայլեր թուրքական ծառայությունները կատարեցին քսանական թվականների վերջերին և երեսնականների սկզբներին: Սիրիայում, Լիբանանում և Հունաստանում վրանաքաղաքների մեջ պատսպարված հայության սոցիալական կացությունը անտանելի էր: Աննդամբերքի հայքայրման գործը դարձել էր անհաղթահարելի, իսկ սանիտարական պայմանները ահավոր էին: Իշխանությունները բազմիցս սպառնում էին քանդել այդ կացարանները: Ազգերի լիգայի Նամսենյան գրասենյակը, որը մասամբ հոգում էր փախստականների կարիքները, միտք հեղացավ Սիրիայի հյուսիսում միքանի գյուղ կառուցել և այնտեղ փոխադրել հիշյալ կացարաններում բնակվողների մի մասին: Ակնկալվում էր, որ նորաբնակները կզբաղվեն գյուղատնտեսությամբ և սեփական ուժերով կլուծեն իրենց սոցիալական կարիքները: Դայ բարեգործական ընդհանուր միությունը համաձայնեց իր օժանդակությունը բերել այս ծրագրին:

Թուրքական իշխանությունները որոշեցին ծախողել այդ ծրագիրը և ստիպել հայությանը առհասարակ հեռանալ Սիրիայից: Յորինվեց փրուն առասպեկ, որի ուժը անհնարինության չափի մեջ էր: Ակզրում իենց արարական մամուլում՝ արաբների մեջ հակահայկական կրքեր բորբոքելու միտումով, ապա գերմանական, անգլիական մամուլում համաեվրոպական հասարակական կարծիք կազմակերպելու նպատակով, վերջապես խորհրդային մամուլում (այդ թվում և Հայաստանի) ծրագրի ծախողման գործում դաշնակիցներ շահելու ակնկալությամբ, իրատարակեց հետևյալը: Իբր, Ֆրանսիական իմպերիալիստները (պետք է մտապահել, որ Սիրիան ու Լիբանանը Առաջին աշխարհամարտից հետո անցել էին Ֆրանսիայի մանդատի տակ), Դայ հեղափոխական դաշնակ-

ցուրյունը և Յայ բարեգործական ընդհանուր միությունը մտադիր են Սիրիայի հյուսիսում ստեղծել հայկական անկախ տերություն՝ գրավելով արաք ժողովրդի հողերը: Այդ գործին իր պետք է օժանդակեին ռուսական միապետական տաճ վտարանդի զինվորական ուժերը՝ թագաժառանգ Կիրիլի գլխավորությամբ, և Թուրքիայի հարավում գործող քրդական ապստամբական ջոկատները: Նորաստեղծ հայկական պետության խնդիրը իր պետք է լիներ. ա) հարձակվել Թուրքիայի վրա, և բ) հարձակվել ԽՍՀՄ-ի վրա՝ Խորհրդային Յայաստանի տարածքը ազատագրելու համար:

Յավատացողներ գտնվեցին, կամ ոմանք ցուցադրեցին, թե հավատում են, որ այդ ծրագրվող գյուղերի հազիվ 15–20 հազարի հասնող բնակչությունը, կեսից ավելին՝ ծերեր ու երեխաներ, նույնիսկ արտադրության տարրական միջոցներից գուրկ, կիսամերկ ու անսվաղ, ատակ եր հարձակվելու Թուրքիայի և ԽՍՀՄ-ի վրա: Թուրքական առասպելի խայջը կլլեց նաև Յայաստանի ղեկավարությունը: 1931 թ. հոկտեմբերին հանդես եկավ Յայկոմկուսի առաջին քարտուղար Աղասի Խանջյանը, որը քննադատության կրակի տակ առավ առասպելի մեջ հիշատակված հայկական կազմակերպություններին, մասնավորապես Յայ բարեգործական ընդհանուր միությանը: Մեղադրանքներ և անվայելուչ պիտակներ հնչեցին առաջին հերթին ՀԲԸՄ-ի նախագահ Գալուստ Կյուլպենկյանի հասցեին: Կյուլպենկյանը պահանջեց հերքել անհիմն վերագրումները, բայց արդյունքի չհասնելով՝ հրաժարական տվեց ՀԲԸՄ-ի նախագահի պաշտոնից 1932 թ. ապրիլին:

Նանսենյան գրասենյակի ծրագիրը ոչ միայն ձախողվեց, այլև ծայր առավ Սիրիայից հայության ելքի պրոցեսը հիմնականում դեպի Յարավային Ամերիկայի երկրներ: Թուրքական հատուկ ծառայությունները, Սիրիայում հասնելով հաջողության երկրի հայաթափության հարցում, ծեռք բերեցին լուրջ փորձառություն: Ժամանակակից Թուրքիան շրջապատող բոլոր տարածքների հայաթափությունը, որը տեղի ունեցավ XX դարում և շարունակում է ընթանալ նաև մեր օրերում, կողմնակի կերպով վկայում է, որ սիրիական փորձառությունը դարձել է պետական քաղաքականության հիմք: Որևէ տարածքի հայաթափությունն ունի իր կոնկրետ պատճառները, որոնք անմիջական առնչություն չունեն Թուրքիայի հետ: Բայց զարմանալի օրինաչափությամբ մեկը մյուսի հետևից հայաթափում են Սև ծովը (իսկ Թուրքիան Սև ծովի հարավում է) լայն շրջանագծով շրջապատող տարածքները: Պատմության իրոք որ զար-

մանալի տրամաբանությանը Մեծ Եղեռնից ի վեր անցած տասնամյակ-ների ընթացքում անընդհատ ու անընդհատ արագացող ու ահազմացող տեմպերով հայաթափվում են հենց հայ ժողովրդի բնօրրանը՝ Հայաստան աշխարհը շրջապատող տարածքները։ Պրոցեսն ընդգրկել է նաև արևելահայությանը։ Նախիջևանի պարպումը, արցախահայության բռնի տեղահաննան քաղաքականությունը, բուն իսկ Արևելյան Հայաստանից սկսված արտագաղթը դրա վկայությունն են։ Արդյոք այս ամենը առարկայակա՞ն երևույթ է, արդյոք առկա չէ՝ այստեղ Թուրքիայի ենթակայական կանքը հայության պոտենցիալ հավակնություններից, համապատասխանաբար նաև պոտենցիալ վտանգից իրենց ապահովագրելու քաղաքականությունը։ Թերևս պատմությունը հետագայում պարզություն կնոցնի խնդրո առարկայի մեջ։ Այսօր, սակայն, հստակ է մեկ կետ. Թուրքիան, ուրեմն և իր արյունակիցները, սատար են գտնում մեծ տերությունների մոտ, որոնք գիտակցաբար, թե ոչ, նպաստում են համաթուրանական ազգայնական իդեալի իրականացմանը։ Ինչո՞վ բացատրել, օրինակ, ԱՄՆ-ի կառավարության պատրիաստականությունը յորանասնական թվականների կեսերին նյութական մեծ ծախսումների գնով լիրանանահայությանը Ամերիկա փոխադրելու կամ Խորհրդային Հայաստանից արտագաղթողների առջև դռները լայնորեն բացելու, նրանց «փախստականի» հանգանանք շնորհելու, համապատասխանաբար նյութական լուրջ աջակցություն տալու գործում, երբ նույն ժամանակահատվածում երկիրը ամուր կողպել էր դռները ուրիշ ազգային փոքրամասնությունների (հրեաներից բացի) առջև։ Միայն ԽՍՀՄ-ի նկատմամբ այդ տարիների հականարտությա՞նք, թե՞ դա, իրական փաստ լինելով, սոսկ քողածածկ էր։

Ինչպես բացատրել ԽՍՀՄ իշխանությունների «չեզոք» դիրքորոշումը Նախիջևանի պարպաման երկարատև ընթացքում, երբ ստալինյան ամբողջատիրության պայմաններում մտացածին հանցանքների մեղադրանքով պատճենում և աքսորվում էին նույնիսկ ամբողջ ազգեր ու ժողովրդներ, իսկ հայության փաստական ցեղասպանությունը Նախիջևանում չարժանացավ ոչ միայն քաղաքական գնահատականի, այլև սոսկական արձանագրման։ Ինչպես բացատրել կենտրոնական իշխանությունների հանցագործ բողովությունը 1988–1989 թվականներին Աղբեջանի տարածքում կազմակերպված հայկական ջարդերի առիվ կամ ուղղակի մեղսակցությունը Արցախի հայության բռնի տեղահանման գործում։ Արդյո՞ք միայն Հայաստանի Անկախության հոչակագ-

ոի հարուցած ոյսով և անհնազանդներին պատմելու ցանկությամբ, թե՝ սա էլ սոսկ մեր սահմանափակ ընկալման պտուղն է՝ որքան էլ որ արդարացի, բայց գեր մասամբ՝ ինքնախարկանք:

Այսպիսով՝ սփյուռքահայության ժողովրդագրական տեղաշարժի կորագիծը համառորեն ուղղվում է դեպի արևմտյան քաղաքակրթությունները: Այս շարժումը, որ բերում է Ֆիզիկական ապահովություն և տնտեսական կայունություն ու բարգավաճում, ազգային կեցության գետնի վլա հիյ է մի շարք վտանգավոր անպատճերություններով, որոնք նպաստում են ուժացման պրոցեսի արագացմանը:

Ա) Տասնյակ տարիների ընթացքում, մի քանի սերունդների ջանքերով, նյութական վիթխարի զոհորությամբ ստեղծված ազգային-մշակութային կեցության համակարգի ֆիզիկական տեղաշարժ տեղի չի ունենում ժողովրդագրական տեղաշարժին զուգահեռ: Դին խարիսխները մնում են Մերձավոր Արևելքում իրու, լավագույն դեպքում, ազգային կալվածներ, բայց առանց խոշոր զանգվածի, իսկ նոր խարիսխների ստեղծումը կպահանջի տևական ժամանակահատված՝ նկատի առնելով մանավանդ փոփոխված իրադրությունը:

Բ) Դայությունը Մերձավոր Արևելքում արմատներ ծգեց առանց լուրջ մշակութային տագնապների: Ընդունող հասարակությունը՝ նորերս ազատագրված օսմանյան բռնապետության կապանքներից, նույնպես ապրում էր ազգային-մշակութային ինքնահաստատնան մի շարժներաց, որպիսին վիճակվեց նաև բռնազարդված հայությանը: Զարգացումը տեղի էր ունենում զուգահեռ, այլև հաշտ մակարդակների վրա:

Արևմտյան քաղաքակրթությունների շրջապատում կացությունը փոխվում է: Դայության ազգային-մշակութային ինքնահաստատումը իրեն դեմ համույնան գտնում է ընդունող հասարակության հզոր մշակութը, որն առարկայականորեն ճնշիչ, մամլիչ ազդեցություն է գործում: Բնավ պատահական չէ, որ նախորդ սերունդների գաղրականությանը այդպես էլ չհաջողվեց ստեղծել ազգային-մշակութային կեցության այնպիսի զորավոր կառույց, ինչպիսին Մերձավոր Արևելքում էր:

Ազգապահպան մեխանիզմի այս հիմնարար օղակներից մեկի թուլացումը, հետևաբար, նշանակում է ուժացման շարժներաց զորացում:

Գ) Վերանում կամ գրեթե վերանում է կրոնական գործոնի արգելակիչ նշանակությունը: Մուսուլմանական շրջապատում, որքան էլ որ բարեկամական էին ընդունող հասարակության տրամադրությունները, հայապահպանության մեխանիզմը գործում էր շատ ավելի ոյուրին հենց

նույն այդ շրջապատի հակադարձության տրամաբանությամբ: Արևմտյան քրիստոնեական շրջապատը մերժում է նման արգելակի գոյության իրավունքն իսկ: Ազգային կամ կրոնական սահմանափակումների, հալածանքների բացակայությունը բթացնում կամ վերացնում է ազգային ինքնապաշտպանության բնագիները:

Դ) Արևմուտքի թե Արևելքի բոլոր հայկական համայնքներում էլ գործում է Եկեղեցին իր նվիրապետական կարգուկանոնով: Բայց որքան տեղաշարժ է կատարվում դեպի արևմտյան քաղաքակրթությունների շրջանակները, այնքան ավելի սկսում է գործնականում նվազել Եկեղեցապետական համակարգի կարողությունը: Աշխարհիկ ուժերն իրենք են անմիջականորեն տնօրինում համայնքի գրեթե բոլոր հարցերը՝ հաճախ Եկեղեցուն վերապահելով միակ ու եզակի դերը՝ հավատի ծառայությունը: Ընդունող հասարակության հայացքում առաջադիմական այս երևույթը ժամանակակից փուլում բացասական է անդրադասնում հայ ազգային փոքրանասնության համայնքային կյանքի կազմակերպման վրա: Եկեղեցին գրկվում է պատմական զարգացման ընթացքում ծեռք բերած աշխարհիկ առաքելություններից: «Դայոց առաջնորդ», «ազգապետ» և նման կարգի իմացքները շարունակում են գոյություն ունենալ առանց նախկին բովանդակության: Պատահական չէ, որ արևմտյան քաղաքակրթությունների շրջապատում հայկական գրեթե բոլոր համայնքները գուրկ են ազգային միասնական համայնքային մարմիններից, կամ էլ, երբ նման մարմինները ստեղծված են Եկեղեցու հովանու ներքո, նրանց գործնականում անզոր են լուրջ ազդեցություն գործելու ազգային կյանքի վրա: Ու նաև հենց այդ պատճառով Արևմուտքի հատկապես հայահոծ համայնքներում տիրում է ազգային–կազմակերպական քառու: Նոր շրջանի ժողովրդագրական տեղաշարժերը ավելի են գորացնում խառնաշփոթը, քանի որ «նորեկների» տեղայնացումը չի անցնում առանց «հնարնակների» հետ անցանկալի բախումների՝ ոչ միայն տնտեսական, այլև հենց ազգային կյանքի կազմակերպման գետնի վրա:

Ե) Արդի Սփյուռքի ամենաբնութագրական հատկանիշը հայության քենուացումն է երկու կենտրոններում՝ Ռուսաստանում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Ընդ որում, առաջին և հիմնական կենտրոնը՝ Դայաստանը, ժողովրդագրական առումով տանում է մյուս երկու կենտրոնների մատակարարի դերը: Նման երևույթը խիստ աննպաստավոր է ամբողջ հայության հետագա ճակատագրի համար, քանի որ հստակ պետք է ընկալել և յուրացնել, թե հայ ժողովրդի ազգային–երնիկական

ինքնության պահպանման վճռական գործոնը հայության պատմական հայրենիքի այս վերջին հողակտորի ։ Յայաստանի Յանրապետության Արցախի հետ միասին, պահպանումն է: Սփյուռքահայության հիշյալ ընթանական գործությունը աշխարհիս երկու հզոր տերությունների տարածքներում նպաստավոր չէ նաև ազգային միասնության իրականացման տեսակետից, իենց նույն տերությունների հնարավոր մրցակցության բերումով:

Այսպիսով՝ Սփյուռքի ժողովրդագրական հարաշարժուն պատկերն ունի հստակ արտահայտված մի միտում՝ առավել կենտրոնանալ աշխարհիս քաղաքականորեն ամենակայուն երկրներում: Կան, անշուշտ, կայուն իրավակարգ ունեցող ուրիշ երկրներ, ուր հայությունը կարող էր կենտրոնանալ (նման փորձեր քազմից արվել են և շարունակում են արվել), բայց դրանցից շատերը, ինչպես, օրինակ, Անգլիան, Կանադան, Ավստրալիան միգրացիայի առջև խիստ սահմանափակումներ են դնում: Մեր օրերում Սփյուռքի ժողովրդագրական պատկերն ունի հետևյալ տեսքը (նոտավոր տվյալներով):

Ուսասատան	2000000–2500000
Նախկին ԽՍՀՄ հանրապետություններ	600000–700000
ԱՄՆ	1000000–1200000
Ֆրանսիա	400000–450000
Իրան	100000–150000
Դարավային Ամերիկա (Արգենտինա, Բրազիլիա,	
Ուրուգվայ, Վենետիկա)	100000–125000
Կենտրոնական Եվրոպա (Գերմանիա, Ավստրիա,	
Իտալիա, Ըստիա, Բելգիա, Ֆոլանդիա)	70000–80000
Լիբանան	50000–60000
Սիրիա	60000–70000
Մերձավոր Արևելք և Աֆրիկա (Իրաք, Եգիպտոս, Յորդանիա,	
Պարսկական ծոցի երկրներ, Ասուան)	20000–30000
Արևելյան և Դարավարևելյան Եվրոպա (Բուլղարիա,	
Ռումինիա, Չումաստան, Կիպրոս)	25000–30000
Կանադա	30000–40000
Անգլիա	25000–30000
Ավստրալիա	25000–30000
Թուրքիա	50000–60000

Թրված հայություն կա նաև աշխարհի շատ ուրիշ երկրներում, սակայն, փոքր քվով և, իբրև կանոն, առանց կազմակերպված ազգային կյանքի:

Եթե կլորացնելու լինենք տեղեկատու առյուսակում թերված թվերը (միևնույն է՝ ստուգ վիճակագրություն գոյություն չունի), ապա կարելի է ասել, որ Սփյուռքի հայության ընդհանուր թվաքանակը տատանվում է 4,5 միլիոնից 5,5 միլիոնի միջև։ Նկատի առնելով նաև Հայաստանում (Հայաստանի Հանրապետություն + Արցախ) ազգաբնակչության 3,0 միլիոնից 3,2 միլիոն թիվը (վիճակագրական տվյալները դեռևս հրապարակված չեն սույն գրքի խմբագրման պահին, բայց դատելով 2003 ընտրություններին քվեի իրավունք ունեցողների թվից, վերը թերված գնահատականը շատ մոտ է իրականությանը)՝ կարելի է անվարան ասել, որ արդի Սփյուռքում բնակվող հայերի թիվը գրեթե կրկնակի անգամ մեծ է հայաստանաբնակների թվից։

2. ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Սփյուռքահայության պատմության ամբողջական հոլովույթը, առանձին փուլերում ու դրվագներում նրա ելենջները դյուրավ ըմբռնելու համար անհրաժեշտ է ամբարվելիք գիտելիքների հիմքում նախապես դնել Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների բնույթի ինացությունը, քանի որ հենց այդ հարաբերությունները տարբեր փուլերում նեծապես նպաստել կամ ընդհակառակն, խոչընդոտել են Սփյուռքի, նրա հասարակական-քաղաքական ուժերի գաղգացմանը, ներքին պայքարների գործունեության արդյունավետության բարձրացմանը։

1918-1920 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունը ժամանակ չունեցավ քիչ թե շատ ծավալուն հարաբերություններ հաստատելու համար Սփյուռքի հետ, քանի որ երկրի պաշտպանության խնդիրը գերակայում էր քաղաքականության բոլոր մարզերում։ Պատահական չեր, որ հայոց գաղթաշխարհին հասցեագրված հիմնական ծեռնարկումը ամբողջովին պաշտպանական բնույթի էր։ 1919 թվականին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հանգանակություն կազմակերպեց «Ռազմական փոխառություն» անվան տակ, և վարչապետ Ալ. Խատիսյանը մեկնեց արտասահմանի հայկական գաղթօջախներ՝ գործը հաջողությամբ գլուխ բերելու համար: 20 միլիոն դոլարի ծրագիրը գերակատարվեց: Չեզոնարկվեցին նաև ռազմական նպատակների այլ քայլեր, ինչպես, օրինակ, Հայաստանի համար ռազմական մի քանի օդանակ գնելու ծրագիրը: Բայց գրեթե բոլոր քայլերը վերջնական դրական արդյունքի շիասան:

Կայուն կապեր Սփյուռքի հետ հաստատվեցին Երկրորդ հանրապետության Խորհրդային Հայաստանի տարիներին, 1920 թվականի աշնանից մինչև 90-ական թվականների սկզբները:

Պաշտոնական քաղաքականությունը Խորհրդային Հայաստանը երթեր չի համարել անբողջ հայության հայրենիքը: Դավանվում էր մի թեզ, ըստ որի ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ Հայաստանում Երկիրը հոչակվում էր բանվորագյուղացիական: Այսինքն՝ մնացած դասակարգերն ու դասերը օտարված էին ազդարարվում: Յենց դասակարգային մոտեցումն էլ եղավ այն առանցքը, որի վրա քսանական թվականների կեսերից ի վեր կառուցվեց ու տասնյակ տարիներ իրականացվեց հայրենիքի դեպի Սփյուռք հասցեագրված քաղաքականությունը: ճշմարիտ է, վաթունական թվականներից ի վեր շեշտերը փոխվեցին, առաջացավ նոր որակ, բայց առանցքագաղաքարը դասակարգայնությունը, մնաց իրեն կողմնորոշիչ: Այս վերջին խնդրին դեռ կանորադառնանք:

Հայաստան-Սփյուռք հարաբերությունները վերապել են չորս հիմնական շրջան, որոնց համար ընդհանուրը Հայրենիքի հետ կապերը քայլ առ քայլ ընդլայնելու միտումն էր: Առանձին հանգրվաններում այդ կապերը նույնիսկ առհասարակ սեղմվել, սառեցվել կամ խզվել են, բայց պատմական տարածքի ու ժամանակի մեջ միտումը մնացել է գործող:

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ: ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՍԿՂԲՈՒՆՔ

Մինչև քսանական թվականների կեսերը, սակայն, մի կարճատև շրջանի համար Հայաստանի և Սփյուռքի միջև հարաբերությունները կառուցվում էին ամենաբնական ու պարզ սկզբունքի երեխական նույնության վրա: Այսինքն գործակցող գույգ կողմերն էլ ախտը է հայ լինեին, առանց քաղաքական, դավանական և դասակարգային խտրականու-

թյան: Մեծ բանաստեղծ Յովի. Թումանյանը եղավ այդ սկզբունքի մշակողը, որի էռաջունը, Թումանյանի մտահղացմամբ, ազգային միասնության գաղափարն էր:

1921 թ. Յայաստանում սով էր տիրում: Յանձնողովոյական աղետը ինչ-որ չափով ոլիմագրավելու համար վարչապետ Ալ. Մյասնիկյանի նախաձեռնությամբ ստեղծվում է Յայաստանի օգնության կոմիտե (ՅՕԿ), որի հիմնադիրների թվում էին ժամանակի բոլոր անվանի մտավորականները, հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչները: Նախագահ է ընտրվում Յովի. Թումանյանը: ՅՕԿ-ի առաքելությունը Թումանյանը տեսնում էր շատ ավելի լայն, սովահար ժողովրդին շտապօգնություն հասցնելու սահմաններից անդին: ՅՕԿ-ի հիմնադիր ժողովին նա ներկայացնում է սփյուռքահայությանն ուղղված կոչի նախագիծը: «Աշխարհի ամեն կողմ ցրված հայոց ժողովուրդ: Հսի՛ր,— գրում էր մեծ բանաստեղծը,— թեզ կանչում է Յայաստանի Օգնության կոմիտեն: Թեզ կանչում է Յայաստանի մայրաքաղաքում գումարված ամեն հոսանքի հայ գործիչների և գրականագետների ժողովը: Եւ գուցե երթեք դու չես լսել նրանց ծայները այսպես միացած ու միահամուռ...»:

Ծեշտն անմիջապես դմելով «միացած ու միահամուռ» հասկացությունների վրա Թումանյանը կոչ է անում մի կողմ դմել քաղաքական տարածայնությունները. «Յայ ժողովորդին սովից ազատելու և քանդված Յայաստանը վերաշինելու գործը վեր է ամեն կուսակցական տարածայնություններից»: Նույն օրերին նա մեկից ավելի անգամ շեշտում է երնիկական նույնության սկզբունքը: «Յայաստանի վերաշինության գործին պարտավոր է մասնակցել.— գրում է նա,— ամեն մի հայ՝ մոտիկից սկսած մինչև հեռավոր գաղութները»: «Էստեղ ամեն մի հայի պետք է առաջնորդի... քաղաքացիական պարտի խոր գիտակցությունը»:

ՅՕԿ-ի կոչն անմիջապես արծագանք գտավ գաղթաշխարհում: Գործող չորս քաղաքական կուսակցությունները՝ ՍԴ հնչակյան, Յայ հեղափոխական դաշնակցություն, Յայ ռամկավար, ազատական, համես եկան իրենց վերին դեկավար մարմինների հաճատեղ մի հայտարարությամբ: Այս վավերագիրը առաջինն է հայ Սփյուռքի պատմության մեջ՝ իրու հայ քաղաքական ուժերի միասնությունը փաստող իրողություն: Շիշտ Թումանյանի կոչի ոճով կուսակցությունները դիմում են սփյուռքահայությանը. «Լենք հայրենիքի ծայնը»: Ստորև այդ փաստաթուղթը.

«Բոլոր ժողովրդին առան զաւաք խցիւս ընտին և անհապատճեն մյուս գուշակություն»

«Բոլոր ժողովրդին»

Մեր արմաքամ ու դժբախու հայրենիքը, այս անգամ անօրության և սովոր արհավիրքներուն մատնված, կը գալարվի տանջահար, և կը մաշվի, սպառնալով նվազեցնել հույսերը մեր քաղաքական վերածնունդին ու վերականգնումին: Այս վիճակը չէր կրնար անտարերե ծգել հայ քաղաքական կուսակցությունները, որոնք տեսարանական ու քարտիֆայի ինչ տարբերություններ ալ ունենային ։ Յայստանի քաղաքական հարցի հետապնդումին մեր, և որքան ալ զանազան վեհի իրենց հայացքները ։ Յայստանի ներկա վարչածին նկատմամբ, մեկ էին մայր-երկրի ժողովուրդին ֆիզիքական գոյությունը անեղծ պահելու գերազանցապես մարդկային ու գերազանցապես հայրենասիրական պարտականության ու նպատակին մեր:

Ու ահա այսօր, անոնք հրապարակ կուգան հոչակելու աշխարհին և, մանավանդ, հայ ժողովուրդին, թե իրենք միացած են ուժ տալու ։ Յայստանի սպառնացող սովին դեմ մղվելիք նվիրական կովին, անկեղծ ու անվերապահ սրուակությամբ մը:

Յայսպարակային այս հայտարարությունը հրավեր մըն է թե կուսակցական հետևողներու և թե ասիասարակ ամրող հայ ժողովրդին բոլորվելու համար սովին դեմ կովելու անունով վեր բռնված այս որոշակին շուրջ:

Պատերազմելու, հաղթելու և վերածնունդը կերտելու համար հումկու քառկենք, ստեղծագործող մտքեր և զավակներ դիեցնող կուրծքեր պետք են: Ո՞ւր պիտի գտնենք զանոնք, եթե անօրությունը, սովոր Յայստանի հողին երեսն սրբ տանի այդ ուժերը, այդ գորությունները:

Յայստանի սովին դեմ մղվելիք կովին սրբությունը այս փաստին, այս անհրաժեշտության մեջն է, և բոլոր անոնք, որ Յայստանը կը սիրեն և անոր քաղաքական հույսերն ու երազները կապրին, այնքան ոգևորությամբ ու ցնծությամբ պետք է նետվին այս կովին մեջ, որքան այն մյուս կովին մեջ, ուր ռազմափորդին ու թնդանորներուն ձայնը զգյալիչ ու էլեկտրականացնող ագդեցություն մը կը գործե հոգիներու վրա:

Այս կովին մեջ ռազմափորդին ձայնը անսկադ հայ մանուկին տկար հեծկւտանքն է, նույնքան ներշնչիչ, նույնքան ցնցող զգայուն սրտերու համար:

Այս կովին մեջ թնդանորին ձայնը՝ իր զավակին համար կաթ աղաղակող հայ մոր, իր արտերուն համար սերմացու աղերսորդ հայ գյուղացին և իր դարբնոցին համար սալ ու մուրճ խնդրորդ հայ աշխատավորին ձայնն է:

Լսենք այդ ձայնը և հասնինք օգնութեան, փրկելու համար Յայստանը նոր

կոտորածեն, սովորաբան, և ժնունդ տալու համար մայր երկրի տնտեսական վերականգնումին, իր հիմք ազատ հայրենիքի վերաֆնունդին:

Ամեն սիրու, ամեն ճեղք դեպի հայրենիք՝ ժամ առաջ օգնություն հասցնելու համար:

ՄԴ ՂԱՅԱԿԱՆ ԿՈՍՏԱԿ. Պոլսու գործադիր մարմին,
ՀՀ Դաշնակցության Արտասահմանի մարմին,
Դայ Ռամկ. կուսակ. Կեդրոնական վարչություն,
Ազատական կուսակ. Կեդրոնական վարչություն։

Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների ժամանակագրական հիմքում ընկած այս վավերաբերեց հարազատորեն արտացոլում էին ամրողական հայության իրական զգումները՝ միասնություն հայրենիքնաշխարհի ժողովորդի հետ առանց քաղաքական դավանանքի, դասի ու դասակարգի խորության:

ՀՕԿ-ի կոչին արձագանքելով՝ 1921 թ. հոկտեմբերին վերոհիշյալ հայ քաղաքական կուսակցությունների (մինչ այդ Դայ ռամկավար և ազատական կուսակցությունները պաշտոնապես միավորվել էին), 43 միությունների և հասարակական կազմակերպությունների և մամուլի ներկայացուցիչների միացյալ ժողովը ստեղծում է մի նոր կազմակերպություն՝ Հայրենիքի օգնության մարմին (ՀՕՍ) անվանք։ Նախագահ է ընտրվում հասարակական գործիչ Վ. Ալբունյանը։ Սփյուռքի պատմության մեջ սա առաջին համազգային կազմակերպությունն էր։ ՀՕՍ-ը գործում էր Թումանյանի բանածնած վերկուսակցական, քացառապես ազգային միասնության սկզբունքով։

Արտասահմանում ՀՕԿ-ի առաքելությունը ծավալելու նպատակով 1921 թ. ուշ աշնանը Հովհ. Թումանյանը մեկնեց Պոլիս։ Հանդիպումներ ունեցավ բոլոր քաղաքական ուժերի ղեկավարության հետ։ Իր ամրող գործունեությունը ուղղեց ազգային միասնության հասնելու նպատակին։ Եկտեմբերի 1-ին ՀՕՍ-ի նախագահ Վ. Ալբունյանի հետ նա համատեղ մի փաստաթուղթ ստորագրեց, որը նույնպես առաջինն է Հայաստան-Սփյուռք հարաբերությունների պատմության մեջ։ Փաստաթրի մեջ ասված է.

«Մեծահարգ հայրենակիցներ,

ՀՕՍ-ը հիմնված 24 հոկտ. 1921 Կ. Պոլիս, կազմված քաղաքական չորս կուսակցություններու, մամուլի և 43 միություններու ներկայացուցիչներն, նպա-

տակ ընտրած է իր նյուրական և բարոյական աջակցությունը ընծայել Մայր-Դայրենիքին: ՀՕԿ-ը հիմնված Դայաստանի մեջ, որուն կամդամակցին երկիր ու Կովկասի հայ բոլոր հոսանքներու ղեկավարմերը, առաջադրած է կովկասի սովոր ղեմ և օգնել Դայաստանի վերաշինությամ:

Այսպես ուրեմն, ՀՕՍ-ը և ՀՕԿ-ը, իրենց հետ ունենալով արևելահայ և արևմտահայ մտավորական և հասարակական ուժերու ամրությունը, ուույն սրբազն առաջարկությունը ունին. պահպանել հայ ժողովորդի ֆիզիկական գոյությունը և նպաստել Դայաստանի վերաշինության աշխատանքին: Մենք համոզված ենք, որ ծրագրոր, գոր գծած են արևմտահայերը Պոլսու մեջ և արևելահայերը Դայաստանի մեջ, պիտի դառնա օրակարգը բոլոր հայերուն, ուր որ ալ գոլնված ըլլամ ամոնք: Վիշտայո ցմուզառմանածն չմախցին մազզու » Ինչքան ալ գաղափարական ըլլա պայքարը. գոր զանազան կրթակցություններ, ուույնիսկ հանուն Դայաստանի բարորության, հանուն հայ ժողովորդի երգանձնության, այնքան մողեգնորեն կմղեն իրարու ղեմ, պետք է դադրի այդ պայքարը հոն, ուր մեծ օրակարգը կամի Դայաստան և հայ ժողովուրդ: Մենք հոս և Դայաստանի մեջ հաստատած ենք ներդաշնակ համագործակցության կարելությունը, կարգը արտասահմանին է...»:

Դովի. Թումանյանը Պոլիս վերադարձավ հիվանդ և այդպես էլ չապացինվեց: 1923 թվականի գարնանը նրա մահվանից հետո, աստիճանաբար փոխվեց Դայրենիք-Սփյուռք հարաբերությունների սկզբունքը: Դիմքը, երնիկական նույնության ենթահողը, բնականաբար, մնաց նույնը: Բայց ազգային միասնության թումանյանական կենսական գաղափարին փոխարինելու եկավ դասակարգային և քաղաքական անհամատելիության և հաճախ անհանդուրժողականության սկզբունքը:

Նույնիսկ ՀՕԿ-ի նախագահի պաշտոնում Թումանյանի բուռն գործունեության օբյեկտն արդեն իսկ հնչում էին «գաղափարական բազեների» պահանջները, որպեսզի Դայաստանի մտավորականությունը, ինա Թումանյանը, հաշվի նստեն հասարակարգի աշխատավորական-դասակարգային բնույթի հետ:

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ: ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՇԵՐՏԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ

Արդեն քսանական թվականների կեսերից սկսած՝ պաշտոնապես դրվեց սփյուռքահայության դասակարգային շերտավորման պահանջը: Ընդունին դա արվեց բացորոշ, առանց բառերը ծամծելու, առանց

Նման պարագաներում դիվանագիտական «փափկանկատության» քողածածկ զինանոցը գործածելու: Թե Ալ. Մյասնիկյանը և թե Աշ. Չովհաննիսյանը, որոնց աշխատությունները փաստորեն դեկավարությունը դեռ տարան նոր սկզբունքի անցնելու հարցում, խոչը լումա ունեն ավերակների վերածված երկրի վերաշինության գործում: Բայց սփյուռքահայության հետ հարաբերությունների մշակման հարցում նրանք կատարեցին բացասական դեր: Նոր քաղաքանության կիրառման առաջին երկու տասնամյակները եղան կարծր ու կոշտ, երբ Հայաստանը, ըստ եռթյան, աստիճանաբար խզեց իր քոլոր հարաբերությունները Սփյուռքի հետ: Սփյուռքահայության ջախջախիչ մեծամասնությունը օտարվեց Հայոնենիքից: Կար միայն թվաքանակով ոչ ստվար մի զանգված «աշխատավորական» կոչվող խմբավորումներ և հայ համայնավարների կազմակերպություններ, որոնց խողովակով էլ (այն էլ ոչ միշտ) թույլ տրոփում էր կապի զարկերակը:

Նման պայմաններում բնավ էլ պիտի գարմանալի չրվա, որ 1922 թ. Հայաստանում իրագործված ուղղագրական ռեֆորմը նույնպես տակավ առ տակավ ստացավ քաղաքական գունավորում իրրև հայ ժողովրդի երկու հատվածների միջև մշակութային խզման, Սփյուռքը օտարելու միջոցի:

Օտարման առարկան առաջին հերթին քաղաքական կուսակցություններն էին: Մանավանդ դաշնակցության դեմ անզիջում և անհաշտ պայքար հայտարարվեց: Իրադրության շիկացման մասին է վկայում հետևյալ իրողությունը: 1926 թվականի Լենինականի երկրաշրմի հարուցած ծանր հետևանքները վերացնելու նպատակով հայտարարված հանգանակությանը դաշնակցությունը թերեց իր կարելի մասնակցությունը: Ավ. Ահարոնյանը, որ քաղաքական հակառակորդ էր Հայաստանի վարչակարգին, հրապարակային կոչ արեց դադարեցնել «եղբայրակեր կատարդությունը», «ոխն ու թշնամանքը», «ազգովին վերաշիններ մեր Հայրենի տունը»: Ամերիկահայ համայնավարները հենց արմատի վրա սրատեցին երկրաշրմի առիթով ՀՅ դաշնակցության հետ որևէ հարաբերության հնարավորությունը, քանի որ մինչև այդ 1925 թ. Երևանի ջրհեղեղի կապակցությամբ ունեն խորհրդային Հայաստանից ստացված «Բաց նամակ գաղութահայ աշխատավորությանը» խորագրով մի հրահանգ, որում կտրականապես մերժվում էր ընդունել դժբախտության առիթով ՀՅ դաշնակցության մասնակցությունը:

Այս ամենը բացատրվում է Խորհրդային Սիոնթյան կոմունիստական կուսակցության քաղաքականությամբ, որով համառորեն հետապնդվում էր հեղափոխության տարածման խնդիրը՝ իրեն նորաստեղծ երկրի փրկության միջոցի: Նետսարար Հայաստանի (նաև ամրող ԽՄԴՍ-ի) պաշտոնական գաղափարախոսության համար բնութագրականը հավատն էր, թե ահա, ուր որ է, հեղափոխությունը պետք է հաղթանակի ամրող աշխարհում: Ըստ այնմ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը թելադրանքներ էր անում, որպեսզի համապատասխան աշխատավորական ուժերը գործուն մասնակցություն բերեին իրենց ապրած երկրների բանվորական-հեղափոխական շարժումներին:

Այս վարքագիծը հատկապես ուժգնացավ, երբ հստակ դարձավ, որ Սփյուռքից ակնկալվող նյութական օգնությունը իրականում բնավ էլ բավարար չէր: ՀՕԿ-ի մասնաճյուղերը վերակազմավորվեցին, քննադատության կրակը ՀՀ դաշնակցությունից գատ ուղղվեց նաև ՄԴ հնչակյան և ՌԱ կուսակցությունների հասցեին:

Գաղափարախոսական բուռն առճակատման նյութ էին ծառայում ազգային իմացքից գրեթե ամբողջական հրաժարումը, դասակարգանության իմացքի բացարձակեցումը, պատերազմը բոլոր նրանց դեմ, ովքեր հնարավոր էին համարում կամ քարոզում «դասակարգային հաշտության մորալ» (Ա. Կարինյան):

Ստեղծվել էր մի բավականին պարադոքսալ վիճակ: Հայաստանի կոմկուսի, կառավարության գործունեությունը առարկայականորեն ուղղված էր և իր ընդհանուր գծերով ծառայեց հանրապետության ազգային դիմագծի անդապնդմանն ու հետագա զարգացմանը: Նույն ընթացքում, սակայն, «ազգ» և «Հայրենիք» և նման կարգի բառերի օգտագործումը, նույնիսկ մեղմ ասած, չէր խրախուսվում:

Հատկանշական է հետևյալ լուսաբանող օրինակը:

1925 թվականի փետրվարի 21-ին կայանում է ՀՕԿ-ի ընդլայնված պլենումը: Զեկուցող Ա. Երգմնյանը բնութագրում է Հայ հեղափոխական դաշնակցության գործունեությունը՝ հայտարարելով, թե այդ կուսակցությունն օգտագործում է հետևյալ գործոնները. կրոնը Հայաստանում հալածվում է, հայ մշակույթը ոչնչացվում է, նոր ուղղագրության հետևանքով հայ լեզուն ահավոր պայմանների մեջ է: Ա. Երգմնյանը ոչինչ չի հակադրում սրան: Նա լոկ «արծանագրում» է, որ այդ գաղափարները իրապես կարող են գրավել միայն «գիտնական-հայկաբաններին», միայն

մտավորականությանը, բայց «ոչ երբեք աշխատավոր մասսաներին, որոնք ծգուում են դեպի հեղափոխությունը, դեպի պրոգրեսը»:

Դետաքրքրական է, որ երբ նույն պլենումում ՀՕԿ-ի վարչության անդամ Թաղիանոսյանը խոսում է գաղութները Դայրենիքի, Դայաստանի, ազգության գաղափարների շուրջ համախմբելու հնարավորության մասին, Ա. Երզնկյանը անհրաժեշտ է գտնում պատասխանելու «Այստեղ «հայրենիք» բառից խուսափող չկա»: Նման հայտարարությունը ինքնին խոսում է:

Ազգային լեզվի, ազգային մշակույթի այս կարգի օտարումը տվյալ ազգի աշխատավոր զանգվածներից տեսական նակարդակի վրա կառուցում էր այն պատմեցը, որը գործնականում երկար վարագույր եղավ «միջազգայնական գաղափարներով» ներձնված ԽՍՀՄ-ի և «ազգայնականությամբ թունավորված» արտասահմանի միջև, իսկ մեր պարագայում Խորհրդային Դայաստանի ու գաղութահայության գերակշռող մեծամասնության միջև:

Դայրենիքի և Սփյուռքի միջև բազմապիսի կապերի արմատական ամրապնդման հնարավորության մի եզակի պահ եղավ 1923 թվականը, երբ Լոզանի ճախողանքից հետո գաղութահայության գրեթե բոլոր զանգվածները և ուժերը իրապաշտ մի ըմբռնումով իրենց հայացք դարձրել էին Խորհրդային Դայաստանին:

Կատարվեց ճիշտ հակառակը: Ակսվեց պատմեշի կառուցումը Դայաստանի և Սփյուռքի միջև: Ալ. Մարտունու «Կուսակցությունները գաղութահայության մեջ» աշխատությունը եկավ ամրացնելու այդ պատմեշի տեսական հիմքերը:

Աշխատությունը գրված էր մարտնչող կուսակցականության սկզբունքով, որի համար բնութագրականը «ով մեզ հետ չէ մեր դեմ է» տարաներժ կարգախոսն էր: Դեղինակը, սլաքն ուղղելով դեպի դուրս, հավանաբար նկատի էր առել նաև հանրապետության ներքին լսարանը, քանի որ, բացարձակապես կտրված լինելով արտաքին լրատվական աղբյուրներից, այդ լսարանը ատակ էր ոյուրահավատ ընկալելու որևէ «դեկավար խոսք», մանավանդ պատմական զարգացման մի այնպիսի հատվածում, երբ «ուսա-հեղափոխական» ոգին գերակշռող էր:

Խորհրդային հասարակությունը դեռ երկար ճանապարհ ուներ անցնելիք, մինչև որ հանգեր համամարդկային արժեքների գերադասության գաղափարին: Դամազգային արժեքների մասին առհասարակ խոսք չէր կարող լինել այդ տարիներին, քանի որ «համազգային» իմացքը ինքը

ոիտվում էր իրը դասակարգային շահի դրսնորման ծև և վերագրվում բուրժուական դասակարգին, հետևաբար և նրա գաղափարախոսների հասումներին: Աշխատության ողնաշարային միտումը Սփյուռքի այլազան շերտերից դասակարգայնորեն տարանջատվել էր: Ընդմին, տարանջատումը տեղի էր ունենում թե հակառակորդներից, թե համակիրներից:

Ա. Մյասնիկյանն առանց վարանելու հաստատում էր, թե Խորհրդային Դայաստանի սպասելիքը գաղութահայ աշխատավորության մեծագույն մասի, նույնիսկ ամբողջ աշխատավորության քաղաքական ու հասրակական համակրանքն ու համերաշխությունն է պրոլետարիատի կողունիստական հեղափոխության և խորհրդային կարգերի նկատմամբ: Ժամանակի ոգին հենց այդ էր: Սպասվում էր համաշխարհային հեղափոխություն ու ակնկալվում էր, որ արտասահմանի հայ աշխատավորությունը պետք է զանգվածաբար մասնակցեր նրան: Ոչ մի խոր ազգային գզացմունքի մասին, որով սփյուռքահայը իրոք կապված էր և ավելի սերտորեն կարող էր կապվել մայր հողի հետ:

Մյասնիկյանը նշում էր, թե գաղութահայության խոշորագույն մասը քաղացած է քանվորներից, չքավոր գյուղացիներից, արհեստավորներից: Անշուշտ, որ նման խավեր կային: Նույնիսկ իրոք մեծանանություն ունեին: Սակայն նրանց իրական հոգսը ֆիզիկական գյություն պահպանելու խնդիրն էր: Ֆրանսիայում, ԱՄՆ—ում և այլուր երկար ժամանակ նույնիսկ քաղաքացիության իրավունքից գրկված նրանց հաճախ մերժում էին ստանում աշխատանքի դիմելիս: Ամերիկայում գրեթե երկու տարի դատական մի պրոցես գնաց, ճիշտ 1925–26 թվականներին, պարզելու համար, թե արդյո՞ք հայերը սպիտակամորթ են, որպեսզի լուծվեր նրանց ԱՄՆ-ի քաղաքացիություն տալու հարցը:

Ակնկալել, թե այս խավերը, որ մեծապես նաև ապահասակարգայնացված էին, դադարել էին Արևմտահայաստանի գյուղացի լինելուց, քայլ դեռ չեն դարձել ԱՄՆ-ի կամ Եվրոպայի քանվոր դասակարգի մասը (դա հենց ինքը՝ Մյասնիկյանն է նշում), պետք է մասնակցեն գալիք հեղափոխությանը և այդ խողովակով միայն կապված են մայր հայրենիքին: Նման սպասումը հեռու էր իրերի իրական վիճակից: Մյասնիկյանը եթերային կանխատեսում էր, թե «Կոմունիզմը գաղութահայության կյանքում խոշորագույն ուժ է լինելու վաղը»:

Անշաբս ցուց տվեց պատմական գարգացումը, սփյուռքահայության հիշյալ խավերը Արևմուտքի երկրներում շատ շուտով վերացան: Տիրապետող նղան արհեստավորները, մանր ու խոշոր արդյունաբերողները,

վաճառականները, մտավորականները, որոնց շրջանում, ի դեպ, բնավ էլ մեծ չեր այն անձնավորությունների թիվը, ովքեր Դայրենիքի հետ առն չությունները կապում էին կոմունիստական հեղափոխության և խորհրդային վարչակարգի հետ: Բայց խիստ մեծ էր նրանց թիվը, ովքեր քաղաքական գետնի վրա պաշտպանում էին այդ վարչակարգը, իբրև պատմական զարգացման անհրաժեշտ միջոց՝ հայ ժողովրդի գոյատևության, նրա ազգային զարթոնքի և մշակույթի ծաղկման համար: Այսինքն ովքեր Դայրենիքին կապվում էին ոչ թե դասակարգային, այլ, մանավանդ, ազգային խողովակով:

Դայաստանի ղեկավարության առանձին անդամներ, սակայն, ոչ մի կերպ չեին համակերպվում նման մտքի հետ: Չընդունել վարչածուը, բայց ընդունել խորհրդային Դայաստանը որպես հայության հայրենիք և խարիսխ, այսպիսի մտակապակցությունն արդեն իսկ մերժելի էր: ՈՎԿ-ի ղեկավար գործիք Հրաչ Երվանդը մի առիթով ասել էր, թե ուամկավարները հավատարիմ են դեպի ռուս ժողովուրդը արևելումին, առանց նախապատվություն տալու սոցիալիստական վարդապետությանը: Այս առիթով 1925 թ. «Խորհրդային Դայաստան» օրաթերթի օգոստոսյան մի քանի համարում Ա. Կարինյանը կայծակ ու որոտ է տեղում և եզրակացնում, որ Ռամկավար ազատական կուսակցությունը միավետական է:

Ուրեմն, եթե հետագայում էլ Դայրենիքը, հետևելով այդ տրամաբանությանը, Սփյուռքի հետ կապերի բնագավառում ղեկավարվեր պրոլետարական հեղափոխության նկատմամբ նրա համակրանքով ու խորհրդային վարչածին հետ համերաշխության տրամաբանությամբ, այդ առն չությունները վաղուց դարձած կլինեին քանզարանային նմուշ, եթե անշուշտ, հաշվի չառնենք փոքրաթիվ նույնահայացք խմբակցությունները:

Բնական էր, որ Մյասնիկյանը ուժեղ քննադատում էր ԴՇ դաշնակցությանը: Վերոհիշյալ բացատրությունից հետո նույնքան բնական պետք է լինի ինձնալ, որ մերժում էր նաև ուամկավարների բարեկամությունը: «Ռամկավարները և բոլշևիկները,— ասում էր նա, — հակադիր ընեռներ են: Եւ որքան էլ ընեռներից մեկը ժամանակավոր համակրանք տածե դեպի մյուսը, հակամարտությունը միշտ էլ կը լինի»: Իսկ հնչակյանության նկատմամբ Մյասնիկյանի դիրքը պարզաբն քամահրական էր, որը բացատրվում էր ուրիշ սոցիալիստական հոսանքների նկատմամբ կոմունիստական կուսակցության ունեցած ավանդական քաղաքականությամբ, ինչպես նաև տվյալ պահին հնչակյան որոշ, մասնավորապես Նյու Յորքի և Փարիզի մարմինների ընթացքով, որով քն-

Նադատության սլաքներ էին ուղղված Խորհրդային Հայաստանի ղեկավարության, Գ. Միջազգայնականի և Ամերիկյան բանվորական կուսակցության հասցեին:

Ինչ վերաբերում է սփյուռքահայության շրջանում կոմունիստական շարժմանը, ապա Մյասնիկյանի շուրթերից նրա ուսերին դրած առաքելությունը, նույնիսկ իր ժամանակների տեսանկյունից դիտած, պարզապես ֆանտաստիկ էր. «Պատուել հայ նացիոնալիզմի բանձր մրնուրութը, վերջնականապես տապալել հայ «մարտական կազմակերպությունը», դուրս բերել հայ աշխատավորին թմրածությունից և նրան սերտ կերպով կապել համաշխարհային բանվորական շարժման»:

Մյասնիկյանի հարցադրումները մեծապես նպաստեցին երկակի, երթեն մինյանց նույնիսկ հակադիր քաղաքական նտայնության գոյավորմանը: Մի կողմից գոյացավ արտասահմանի կոմունիստական շարժման հայազգի մասնակիցների մի սերունդ, որի համար ազգային զգացումն ու պարտքը բնավ էլ ստորադասված խացքներ չեն, որն իր անսակարկելի մասնակցությունը բերեց ֆաշիզմի դեմ պատերազմին, Խորհրդային Հայաստանի շուրջ սփյուռքահայության այլազան խավերին համախմբելու գործին, Սփյուռք-Հայրենիք բազմազան կապերի ամրապնդմանը ու գարգացմանը, Դայ դատի հետապնդմանը:

Մյուս կողմից զարգացավ դոգմատիկ մի շարժում, որ եղավ Պապից ավելի պապական, նույնիսկ Խորհրդային Հայաստանի նկատմամբ, գերադասության զգացումը որակեց իրև «հայաստանիական», այսինքն՝ որպես շեղում ուղղափառ գժից, որպես համայնավարական նացիոնալիզմ:

Ա. Մյասնիկյանի աշխատությունը եղավ Հայրենիք-Սփյուռք հետագա հարաբերությունների անկյունաքարը երկար ժամանակի համար: Դասակարգային շերտավորման քաղաքականությունը, որը գործնականում սկսվեց իրականացվել ՀՕԿ-ի խողովակով, հենց այդ հիմքի վրա էր խարսխված:

1925 թվականին լույս է տեսնում Աշոտ Շովիաննիսյանի «Գաղութահայ խմնիրներ» գրքույկը, և տեղի է ունենում ՀՕԿ-ի ընդլայնված պլենում: Դատակ է, որ գրքույկի պարունակած դրույթները ընկած են պլենումի ընդունած որոշումների հիմքում:

Ա. Շովիաննիսյանը նախ ցույց է տալիս, թե որքան արհամարելի չնշին է եղել գաղութներից ստացված «օգնությունը» չորս տարիների ընթացքում և դրա համար հիմնական նեղադրանքն ուղղում է ուամկա-

վարների հասցեին, թեպետ գտնում է, որ պետք է շարունակել հարաբերությունները այդ կուսակցության հետ, որպեսզի ժողովուրդը տեսնի նրանց խոսքի և գործի անհամապատասխանությունը:

Անդրադառնալով ՀՀ դաշնակցությանը գտնում է, թե անհնարին է որևէ «համագործակցություն» նրա հետ: Այնուհետև, շոշափելով գաղթականության և որբերի խնդիրը, հայտնում է, թե քանի որ հայ բուրժուազիան դրամ չի տալիս այդ նպատակով, ուրեմն շահագրգոված չէ խնդրի լուծմամբ: Այն կարելի է լուծել կոմկուսի դրոշի ներքո: Բայց քանի որ խնդրո առարկան զանգվածն է, ուրեմն պետք է նրա անմիջական դեկավարումը կատարել «լայն քաղաքական, անկուսակցական պլատ-

ֆորմով»:

Թե ինչ էր նշանակում այս «լայն քաղաքական, անկուսակցական պլատֆորմը», դժվար է լուսաբանել ժամանակակից ըմբռնումներով: Դավանաբար այն, ինչի որ վերածվեցին ՀՕԿ-երը գրեթե անմիջապես: Դամենայն դեպս, հենց այդ նկատառումներից հետո Ա. Դովիաննիսյանը հարց է դնում. «ճշտելով մեր դիրքը դեպի գաղութահայ բուրժուազիան և իր «բարեգործությունը»,՝ պետք է, բնականաբար, դնենք առաջին հերթին ՀՕԿ-ի վերակազմության խնդիրը»: Ա. Դովիաննիսյանը մի կողմից պնդում է, թե անհրաժեշտ է, որ ՀՕԿ-ի ճյուղերը վերածվեն գաղութահայ մասսայական կազմակերպությունների, մյուս կողմից նա պահանջում է. «ՀՕԿ-ը պիտի դադարի լինել ազգի «կենդանի ուժերի», ազգային դասակարգերի ու կուսակցությունների կոնսուլյացիայի ասպարեզ: Նա պետք է դառնա աշխատավորական լայն մասսաների կազմակերպման մի օրգան, որը, վերջ տալով ներհակ դասակարգերի համագործակցության սին մտայնությանը, նպաստելու և ազգության դասակարգային շերտավորմանը»:

Այսպիսով ՀՕԿ-ից նախ օտարվում է «ազգային» իմացքը, ապա նա վեր է ածվում անկուսակցական մի կուսակցության, որը կոչված է, դասակարգային շերտավորմանը նպաստելով, կազմակերպել աշխատավորական լայն զանգվածներին: Թե այս ամենը ինչ առնչություն ուներ Դայաստանին մատուցվող օգնության հետ, սա արդեն պարապ հարց էր:

Սփյուռքի շատ մտավորականներ նույնիսկ անզեն աչքով տեսնում էին հակադրության այդ մոլուցքը, որն իրենց նակալման համար պարզապես իմաստագուրք էր: Պատմաբան Մանուկ Գ. ճգմեճյանը, օրինակ, արտահայտելով ուամկավար շրջանակի, և ոչ միայն նրա, տեսակետը,

Նշում էր. «Որոշ է, թե գաղութահայերը պետք եղած թափով ընդառաջ գացած չեն լրիվ կատարելու համար Նայաստանի հանդեպ իրենց ունեցած պարտավորությունը կամ սերտորեն Նայրենիքի հետ կապվելու՝ կորովի ու բեղմնավոր գործունեությամբ մը: Ասիկա թերության ու պարտազանցության պետք չէ վերագրել և ոչ ալ զոհաբերության պակասին, այլ առավելապես Նայաստանի վարիչներու բռնած պաղ վերաբերումին և այն արհամարհոտ դիրքին, որ անոնք կը տածեն հանդեպ արտասահմանի հայության»:

Պարզապես դժվար է ընկալել, որ Լոգանի ձախողանքից հետո, երբ գրեթե ամբողջ սփյուռքահայությունը հայացքը դարձրել էր դեպի Խորհրդային Նայաստան, դանդաղ թե արագ, բայց անվարան գալիս էր դեպի մեզ, այստեղ պիտի կատարվեր նման քաղաքական անպարարություն, անբավարար, կամ նույնիսկ «արհամարհելի», նյութական օգնությունը պատրվակելով, պիտի դասակարգային անհանատեղելիություն հայտարարվեր և գրեթե ամբողջ Սփյուռքը դիտվեր իբրև անբարեհուս:

ՀՕԿ-ի ընդլայնված պլենումում նույնպես քննարկվում են ՀՕԿ-ը զաղութահայ աշխատավորության կազմակերպիչ դարձնելու թեզերը: Ատենագրությունը պահպանել է հետևյալ ելույթները.

«Չուրար – Կամ ՀՕԿ-ը պիտի լիկվիդացիայի ենթարկել, կամ նրան տալ քաղաքական թերում... Նասարակական տրամադրությունը բարձրացնելու համար ՀՕԿ-ը պիտի ունենա քաղաքական թերում չմնալով միայն բարեգործական»:

«Գալիկյան – Պետք է լուծել արտասահմանյան մասնաճյուղերը և հրապարակ քաշել աշխատավոր մասսաներին՝ ուղարկելով այնտեղ կուսակցական ղեկավար ընկերների»:

«Գյուլնազարյան – Անհասկանալի են ինձ ՀՕԿ-ի քաղաքական թերման և կամ լուժման մասին եղած ծայները, մինչեռ ամբողջ Խորհրդային Միության մեջ լայն տեղ է տրվում անկուսակցականներին գործելու: Իմ շրջագայության ժամանակ ես տեսա ՀՕԿ-ի կատարած մեծ գործը: Նայ մասսաները պետական և ազգային գաղափարները միասին են ըմբռնում»:

«Թաղիանոսյան – ՀՕԿ-ի հիմնադիրները նպատակ ունեին Նայաստանի վերաշինությանը լժելու ամբողջ հայությանը: Այս տեսակետից ՀՕԿ-ը մի ակուսակցական կազմակերպություն պետք է լինի: Ինձ զարմացնում են այստեղ ընկ. Չուրարի և Գալիկյանի ասածները: Եթե ընդունենք, որ հայրենիքի, Նայաստանի և ազգու-

թյան գաղափարները դեռ կարող են ոգևորել արտասահմանյան հայությանը, ՅՕԿ-ը կարող է շարունակել իր գործը, իսկ եթե ոչ՝ դադարենք գործելուց: ՅՕԿ-ը չի կարող կուսակցական կազմակերպություն լինել: Այդ դեպքում մենք կիեռանանք»:

Արխիվում չեն պահպանվել այս պլենումի ընդունած որոշումներն ու բանաձևերը, սակայն դրանց բովանդակությունը կօահելը բնավ դժվար չէ, եթե դատելու լինենք, թե ինչ էր հրահանգում ՅՕԿ-ի պաշտոնաթերթ «Դրավիրակը», և թե ինչ արագությամբ փոթորիկ անցավ Սփյուռքի գրեթե բոլոր ուղղությունների մամուլում:

Ո՞վ կարող է լինել ՅՕԿ-ի անդամ (միայն զարմանալ կարելի է, որ այս հարցը տրվում էր ՅՕԿ-ի ստեղծումից հինգ տարի անց) հարցին «Դրավիրակը» պատասխանում է. «ՅՕԿ-երի շուրջ պիտի համախմբվեն միմիայն ու բացառապես նրանք, որոնք բարեկամական վերաբերմունք ունեն դեպի Դայաստանի խորհրդային իրավակարգը, ընդունում են նրան որպես մեր երկրի հարազատ կառավարությունը և ընդդիմադիր դերի մեջ չեն: ՅՕԿ-ը միաժամանակ անպայման պիտի հեռու մնա և ազատ պահի իր կազմակերպությունը դիմակավոր բարեկամներից... Արանք նույնքան վտանգավոր են, որքան ոչ ծառայալ թշնամիները: ՅՕԿ-երը նրանց համար չեն կարող գործունեության վայր լինել»:

Առաջին հասցեատերերը՝ մի կողմից աշխատավորներ, մյուսից դաշնակցականներ, միանգամայն հստակ էին: Բավականին հստակ էին նաև երկրորդ հասցեատերերը (ռամկավարները), եթե նկատի առնենք, մանավանդ, որ հիշյալ հողվածում ուղղակի ակնարկվում են հայաստանանպաստ կտակները, մասնավորապես Մելքոնյան կտակը, և որոշ «բարեկամների» կողմից դրա «զավթման» խնդիրը:

Սփյուռքում հրապարակումներ եղան այն մասին, թե ստացվել է ՅՕԿ-ի կենտրոնական մարմնի հրահանգը ՅՕԿ-երից բոլոր անհարազատ տարերին քշելու վերաբերյալ: «Նոր երկիր» թերթի աշխատակից Մ. Ա. Դավիթ-բեկը, խոսքին երգիծական երանգ տալով, հայտնեց, թե ՅՕԿ-երից վտարման հրամանին ենթակա են.

«1. Բարեգործական հաստատությունները որովհետև անոնք հայ հարուստներու սպասավորները, ծառաները, լաճերն ու ստրուկներն են:

2. Ռամկավարները, որովհետև անոնք Դայաստանի կեղծ բարեկամներն են:

3. Դնչակյանները, որովհետև անոնք սոցիալ-դավաճաններ են:

4. Դաշնակցականները, որովհետև անոնք Դայաստանի երդվյալ թշնամիներն են»:

Սփյուռքի այլազան ուժեր փորձում են պարզաբանություններ անել, բացատրություններ տալ բարձրացված հարցերի առթիվ, շտկել կացությունը: «Պայքար» թերթը նկատում է, թե Ա. Շովիաննիսյանի կոչը դասակարգային շերտավորման վերաբերյալ պարզապես վտանգավոր փորձ է, քանի որ արտասահմանի հայության շահագրգորությունը Դայաստանի հանդեպ գուտ ազգային է: «Ապագա» թերթում Արշակ Չոպանյանը պարզաբանում էր, որ արտասահմանում ՀՕԿ-ի գործը ոչ միայն նյութական միջոցներ հավաքելու է, այլ գաղութահայության բոլոր խավերի մեջ ազգային կյանքը վառ պահելը, այսինքն՝ ազգասիրական պրոպագանդայի մարմին լինելը: Ուրեմն և ՀՕԿ-ը պետք է ոչ թե մի դասակարգ մյուսի դեմ հաներ, այլ բոլոր դասակարգերը, բոլոր տարրերը Դայրենիքի գաղափարի շուրջ միավորեր:

ՀՕԿ-ի բնույթը քննադատում է Միմ: Վրացյանը՝ ուղղակի հակադրվելով Ա. Շովիաննիսյանի դրույթներին: «Արտասահմանում ՀՕԿ-ի մարմինները այժմ շատ ցավալի և անպատիվ դեր են կատարում,— գրում է նա:— Դայաստանի վերաշինության անվան տակ նրանք հետամուտ են լինում «Գաղութահայության շերտավորման», այսինքն՝ ծգտում են արտասահմանի հայ գաղութականությունը պառակտել ներքնապես»:

Արդեն 1920-ական թվականների վերջերին դասակարգային շերտավորման քաղաքականության համառ ու հետևողական գործադրման հետևանքով ռամկավարների գրեթե 80 տոկոսը դուրս եկավ ՀՕԿ-ից, հնչակյանները (Ամերիկյան շրջանը) անբողջովին խզեցին կապերը նրա հետ, ԴԴ դաշնակցությունն էլ, բնականաբար, արդեն իսկ դուրս էր:

Սփյուռքի այլազան թերթից ու կողմերից հնչող կարծիքները, սակայն, այլս ոչ մի նշանակություն չունեին: Դրանք, եթե պատահեր, որ ունենողվեին, ընդունվում և որակվում էին որպես դասակարգային հակառակորդի հերթական գաղափարախոսական դիվերսիա: Մանավանդ որ 1927-ից սկսած խիստ սեղմվում է Դայրենիք-Սփյուռք կապի օղակը: Իսկ ՀՕԿ-ի դեկավարությունը շարունակում էր ստանալ հերթական հաղթական գեկուցագրերը: Ահա դրանցից մեկը.

«ՀՕԿ-երը արտասահմանում ներկայումս հանդիսանում են այն միակ, բավականաշափ ուժեղ կազմակերպությունը, որ ա) սիստե-

մատիկ պրոպագանդ է մղում աշխատավորական զանգվածների մեջ և ինտելիգենցիայի մի որոշ խավում խորհրդային Դայաստանի և առհասարակ խորհրդային կարգերի համար, բ) պայքարում է ՀՀ դաշնակցության դեմ, գ) հանդիսանում է որպես մի պլատֆորմ, ուր կոմունիստ ընկերները մոտիկ շփման մեջ են մտնում բանվորական և մանր-արհեստավորական տարրերի հետ և անում որոշ պրոպագանդ նրանց շրջանում, դ) պատճառ է լինում, որ ռամկավարներից ու հնչակյաններից բանվորական-աշխատավորական տարրերը հետզիետե պոկվեն, ազատագրվեն ազգայնական իդեոլոգիայից և մոտենան բանվորականին, ե) տարածում է խորհրդային գրականությունը գաղութներում, զ) տալիս է նյութական օժանդակություն Դայաստանի շինարարությանը, է) աշխատում է Եվրոպայում և Ամերիկայում հայտնաբերված քիմիական տեխնիկական և ինդուստրիական նորություններ մուտքել Դայաստան»:

Ահա թե ինչով էր գրաղվում ԴՕԿ-ը «Վերակառուցումից» հետո: Այս կետերից թերևս միայն վերջին երկուսն են, որ անմիջականորեն վերաբերում էին նրա առաքելությանը: Մյուս բոլորը և փաստաթուղթն ամբողջությամբ վկայում են, որ ԴՕԿ-ը, իրոք, վեր էր ածվել դասակարգային շերտավորման գործիքի, այսինքն արդեն դրվել էր ԴՕԿ-ի վերացնան հիմքը: Բայց մինչև հրապարակից նրա լիովին անհայտացումը «Վերակառուցված» ԴՕԿ-ը տակավ առ տակավ սկսեց ծառայել իրեն մի պատճեց Դայրենիքի ու Սփյուռքի միջև: Նման պատճեշի գոյացմանը իրենց աջակցությունը չզլացան Սփյուռքի այն ուժերը (հիմնականում ՀՀ դաշնակցությունը, մասամբ՝ հնչակյանները և ռամկավարները), որոնք որդեգրեցին կրակի վրա յուղ լցնելու մարտավարություն, որը նույնպես հետապնդում է միայն կուսակցական առտնին շահեր և որևէ առնչություն չուներ ազգային լայն հետաքրքրությունների հետ:

Դեռագայում մի փորձ արվեց շտկելու համար վիճակը: 1934 թվականի սեպտեմբերին շրջաբերական մի նամակ հրատարակվեց, որտեղ դեկավարությունը ջանում էր սրբազնել ծախսավեր սխալները: «Տալ ԴՕԿ-ին կուսակցական բնույթ, որդեգրել ԴՕԿ-ի համար կուսակցական գործելակերպ,— ասված է այդ փաստաթորում,— դա նշանակում է պարզապես խեղաթյուրել նրա իսկական դիմագիծը, սահմանափակել, նեղացնել նրա մասսայական—դեմոկրատական բազան և այդպիսով արգելք լինել նրա ածմանն ու գարգացմանը: ... ԴՕԿ-ի բշնամինները, բոլոր հակախորհրդային տարրերը, ներ-

կայացնելով մեր կազմակերպությունը որպես կոմկուսի մի հատվածը, մի տարրերակը, ուրիշ նպատակ չունեն, եթե ոչ սարսափի ենթարկել միամիտ մասսաներին և նրանց հեռու պահել ՅՕԿ-երից:

Նույնքան վտանգավոր են ՅՕԿ-ի այն անդամները, որոնք, ձախության հիվանդությունից բռնված, շփորում են ՅՕԿ-ը կոմկուսի, Կարմիր սինդիկաների կամ Կարմիր օգնության հետ: Դրանք դյուրացնում են, կամա-ակամա, մեր քշնամիների հակահօկյան աշխատանքը»:

Քսանական թվականների կեսերին ՅՕԿ-ի կրած «Վերակառուցման» այս կիսարերան քննադատությունը 1934 թվականի համար արդեն իսկ հերոսական մի քայլ էր, որը ինքնին դատապարտված էր ձախողման: Ինչպես և սպասելի էր, ոչինչ փոխվել այլև չեր կարող, և ՅՕԿ-ը մի քանի տարի անց (ՀԽՍԴ ժողկոնխորհրդի 1937 թ. դեկտեմբերի 3-ի որոշման համաձայն) լուծարվեց:

Դասակարգային շերտավորման քաղաքականության արդյունքը եղավ ոչ միայն հայության ստվարագույն մասի օտարումը հայրենիքից, այլև սփյուռքահայ անխտիր բոլոր համայնքների պառակտման խորացումը անհաշտելի, հակառակորդ ուժերի: Նման արդյունքը ժամանակին համարվում էր համայնավարության խոչը ու լուրջ հաղթանակը: Ենշտ նման ինքնագոհությամբ երևույթը գնահատում էր, օրինակ, Փարիզի համայնավարական խոսափող «Արշավ» շարաթաթերթը՝ հայտարարելով, թե «Այդ մեր պարծանքն է»: Թերքի հպարտությունը, սակայն, այնքան էլ հիմնավոր չէ: «Պառակտման հունը իրոք խորացրեց դասակարգային շերտավորման քաղաքականությունը, սակայն գործնականում պառակտման կոնկրետ իրողության համար համայնավարների դափնիները գրեթե հավասար քաժանում էին թե ՅՅ դաշնակցությունը, թե քաղաքական մյուս ուժերը»:

ՅՕԿ-ի գործունեությունը, ինչնե, չի կարելի գնահատել միանշանակ՝ իբրև միայն Սփյուռքի դասակարգային շերտավորման գործիքի: Իր կոչման իսկ բերումով ՅՕԿ-ը լուրջ ներդրում ունեցավ թե երկրին օգնություն փութացնելու, թե Հայաստանի շուրջը, թեպես դասակարգայնորեն տարանջատված, այնուամենայնիվ, որոշ զանգված հանախմբելու, թե հայրենադարձության կազմակերպման գործում, նանավանդ Ֆրանսիայից ու Հունաստանից:

1920-ականների սկզբներից մինչև Երկրորդ աշխարհամարտի նախօրեն ծգվող հայրենադարձությունը ըստ եւրյան պարտադրված էր

Սփյուռքի այլազան կետերում, գաղթականական ճամբարներում ծանրագույն պայմանների մեջ ապրող և փրկության որևէ դուռ ակնկալող հայ փախստականների վիճակով:

Դայաստանը, իրականում գուրկ լինելով համապատասխան նյութական հնարավորություններից, չեր կարող ընդունել այդ ամրող բազմությունը: Սփյուռքն էլ իր հերթին չկարողացավ հայրայթել անհրաժեշտ նիշոցները:

Դետնողականորեն կիրառելով դասակարգային շերտավորման քաղաքականությունը՝ երկրի իշխանությունները հայրենադարձության հիմնական պայմանների շարքում պահանջում էին թեկնածուների դասակարգային տարանջատումը հակառակորդ ուժերից, քաղաքական հավատարմության ցուցադրումը խորհրդային կարգերին: Այդ թվականների ծախակողմյան մանուլը լեցուն է սփյուռքահայ կուսակցություններից դուրս գալու մասին հրաժարականներով:

Դայրենադարձությունը, այսպիսով, ազգահավաքի փոխարեն քաղաքական շահարկման նյութ եղավ: Սփյուռքի մանուլում բազմիցս եցից էջից չել չկել, օրինակ, Խորհրդային Դայաստանի ժամանակի (1927) դեկավարներից մեկի հետևյալ պաշտոնական հայտարարությունը. «Պետք է վերջ տալ հայության հավաքնան գաղափարին Դայաստանում, որպեսզի վառ ու կենդանի չմնա Միացյալ և Անկախ Դայաստանի գաղափարը ժողովրդական գանգվածների գիտակցության մեջ... որպեսզի մի անգամ ընդմիշտ փակվեն մանր բուրժուական ոռմանտիկների բոլոր հաշիվները, և 300000 արևմտահայ գաղթականները, հողային ֆոնդից գուրկ Դայաստանից հանվելով, ցրվեն Ռուսաստանում»:

Բնավ պատահական չեր այս մտայնությունը, իրևս բազմազգ խորհրդային «միասնական հայրենիքի» կառուցման ծրագրի օրինաչափ գավակ: Պահանջվում էր ոչ միայն Դայաստանում, այլև Սփյուռքում ամրոցովին ճնշել ազգային-քաղաքական գիտակցությունը: Ժամանակի դեկավարության մեծ մասը թերևս անկեղծորեն հավատում էր, թե գաղթահայը հայրենադարձվում է ոչ թե իր ազգային, այլ դասակարգային գիտակցության հրամայականով: Քմածին այս դոգման շղարշել էր տեսողությունը, և մարդիկ զարմանում ու նաև զայրանում էին, թե ինչու սփյուռքահայը պահանջում է ապրել միայն Դայաստանում, այլ ոչ թե անծայրածիր «սոցիալիստական հայրենիքի» ուրիշ որևէ վայրում, ասենք, Ալբայան երկրամասում, ուր, ի վերջո, «Վերաբնակեցվեց», իմաստը կեց հայրենադարձ հայերի մի ստվար գանգված 1949 թվականին:

Ինչու, մինչ պատերազմը կազմակերպված հայրենադարձության (շուրջ 42 հազար մարդ) հաջողության ապահովման գործում խոշոր էր ՀՕԿ-ի մասնակցությունը, որին աշխատակցում էին բազմաթիվ անշահախնդիր, հայրենասեր հայեր, լիովին արհամարիելով «աջ» կամ «ձախ» տիպի քաղաքական շահամոլությունը: ՀՕԿ-ը քսանական-երեսնական թվականներին Սփյուռքի ամենաճյուղավորված կազմակերպությունն էր (200-ից ավելի մասնաճյուղեր՝ Սփյուռքի համայնքների գերակշռող մասում), որին անդամակցող հարյուրավոր ու հարյուրավոր հայեր նվիրաբերվում էին գործին հենց հանուն ազգայինության:

Դասակարգային շերտավորման քաղաքականությունը ծնափոխումների ենթարկվեց պատերազմի ընթացքում: Դազգախեպ չեն առիրները, երբ պաշտոնական քարոզչությունը վկայակոչում էր ամրող արտահայտությունը առանց դասակարգային խորականության երբեմն-երբեմն վերապահումներ անելով դաշնակցության առիթով: Ի դեպ, ՀՀԴ հետ երկխոսության Ըույնիսկ մի փորձ արվեց (Սիրիա-Լիբանանի կոմկուսի 1943 թ. տարեվերջի համագումարին ՀՀ դաշնակցության դեկավար դեմքերից մեկի՝ Մ. Տեր-Գալուստյանի և պատվիրակության մասնակցությունը), որը, սակայն, շարունակություն չունեցավ:

Խորհրդային բանակի համար «Սասունցի Ռավիթ» և «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյուների ստեղծման առթիվ ծայր առած հանգանակությանը մասնակցեցին այլազան քաղաքական դավանանքների և տարբեր սոցիալական աստիճանների վրա գտնվող հազարավոր սփյուռքահայեր, և իշխանությունները շնորհակալությամբ ընդունեցին նվիրատվությունը: Ողջունվեց նաև Յայ քարեգործական ընդհանուր միության նյութական լուրջ աջակցությունը հետպատերազմյան շրջանի հայրենադարձության կազմակերպման գործին: Այս ամենում փաստութեն ի գորու էր պատերազմական արտակարգ պայմանների տրանաբանության թելադրանքը:

Վերին աստիճանի հետաքրքրական էջ է ներկայացնում պատերազմից անմիջապես հետո ծեռնարկված հայրենադարձությունը՝ իբրև քաղաքական վերլուծության առարկա:

Ի տարբերություն նախորդ շրջանի վիրխարի այդ գործը այս անգամ կյանքի կոչվեց խորհրդային Սիրության պետական շահագրգոռության իրականացման համար իբրև հիմնական փաստարկ: Դարցն այն է, որ պատերազմի հայրական ավարտի պահին կամ դրանից անմիջապես

հետո ԽՍՀՄ ղեկավարությունը ժրագրում էր վերականգնել Երևանի 1914 թվականի սահմանները՝ ժամանակը հասունացած համարելով:

Խորհրդային Միության անունից հրապարակված վկայագրեր չկան: Բայց մերկ փաստերի օղակների ազուցումը ցուցադրում է ամբողջական շղթայի առկայությունը:

1945 թ. մարտի 19-ին խորհրդային կառավարությունը ղենոնսացրեց 1925 թվականի ղեկտեմբերի 17-ի Թուրքիայի հետ կնքված բարեկամության և չեզոքության պայմանագիրը, իրը մի փաստաթուղթ, որն այլևս չէր համապատասխանում նոր պայմաններին:

1945 թվականի ապրիլին Ստալինն ընդունեց կարողիկոսական տեղապահ Գևորգ Արքեպիսկոպոս Չորեցյանին: Դայ բարձրաստիճան հոգևորականի ընդունելությունը Ստալինի մոտ առհասարակ անսպասելի էր ամբողջ աշխարհի համար (իրավ է, որ մինչ այդ նման ընդունելության արժանացել էր Դամայն Ռուսիո պատրիարք Սերգին, բայց դա տեղի էր ունեցել պատերազմի սկզբներին և հետապնդում էր թշնամու դեմ պայքարում ոուս հոգևորականության և հավատացյալների աջակցությունն ապահովելու նպատակը):

«Սովետական Դայաստան» պաշտոնաթերթը, որ Երևար տարիներ շարունակ ոչ մի խոսք չէր տպագրել բռնագրավված հայկական հողերի մասին, 1945 թ. հունիսի 13-ին առաջին եզրու զգայացունց մի լուր հրապարակեց: «Ամերիկայի հայ ազգային խորհրդի ղեկարացիան» վերտառությամբ: Նյութը հաղորդել էր ՏՍՍՍ հեռագրական գործակալության հատուկ թղթակիցը Սան Ֆրանցիսկոյից: «Ազգային խորհրդը», որի մեջ, ըստ հաղորդագրության, միավորվել էին ԱՄՆ-ի հայկական բոլոր ուժերը և կազմակերպությունները (բացառությամբ ՀՀ դաշնակցության), դիմել էր ՄԱԿ-ի առաջին նստաշրջանին պահանջելով Թուրքիայի կողմից բռնագրավված հայկական հողերը միացնել Հայկական Խորհրդային Հանրապետությանը, որը հնարավորություն կրնճեներ հայրենից վերադառնալ թուրքական տիրապետությունից փախած հայությանը: Դաջորդ օրը, ինչպես դա ընդունված էր խորհրդային նամուլում, թերթը հրապարակեց լայն արձագանքներ, այդ թվում՝ գրող Դ. Ղեմիրյանի ստորագրությամբ: Բոլոր նյութերի մեջ բանաձեռնումը նույնն էր՝ Վերադարձնել տարածքը, որպեսզի սփյուռքահայությունը Երևանի Վերադարձնա: Խմբագրությունը իր կողմից հայտնում էր, որ «Դեկարացիան» մեծ ընդունելություն է գտել աշխատավորության ամենալայն խավերում:

Երևար տարիներ անց (1980) միայն հրապարակավ հայտնի դար-

ձավ, որ 1945 թվականի հունիսի սկզբներին, այսինքն ճիշտ «Ամերիկայի հայ ազգային խորհրդի» քայլերի հետ համընթաց և ճիշտ նույն օրերին ԽՍԴՄ արտգործողեկով Վ. Սոլոտովը երկու հանդիպումներ է ունեցել Թուրքիայի դեսպան Սարգսերի հետ և պահանջել վերադարձնել Կարսը ու Արդահանը, առհասարակ 1914 թվականի սահմանները: Կարծամանակ հետո՝ հուլիսին, երեք մեծերի՝ Պոտսդամի խորհրդաժողովում Ստալինը թե Սոլոտովը հաստատել են պահանջը: Դետաքրքրությունից գործ է Մոլոտովի կողմից խնդրի հիմնավորման փաստարկների թվում թերզած միտքը, թե հայերի տարածքը ընդլայնվելուց հետո արտասահմանի շատ հայեր կծառեն վերադառնալ Դայթենիք:

1945 թ. օգոստոսի 12-ին առաջին անգամ հնչեց Խորհրդային Դայաստանի հիմնը: Սարմենի այդ քանաստեղությունը պարունակում էր մի շատ կարևոր միտք՝ Խորհրդային Դայաստանը հայտարարվելու էր Դայրենիք հայության: Եթե քանաստեղությունը գրված լիներ շատ ավելի վաղ, հեղինակը և հրատարակիչները, վստահաբար, պիտի ոյուրավ չըթափեին իրենց օձիքը, եթե ավելի ուշ՝ պիտի մերժվեր անտարակույս: Այդ միտքը պահի քաղաքական կոնյունկտուրայի տրամաբանության արդյունքն էր, ավելին թերևս պահանջված, թելադրված արդյունքը:

Նույն թվականի նոյեմբերի 27-ին Գևորգ Զ կարողիկոսը ուղերձներ է հղում Ստալինին, Տրումենին և Ետլիին ճիշտ նույն քանածումով՝ հողերը վերադարձնել խակական տերերին և միացնել Խորհրդային Դայաստանին, որպեսզի հայությունը վերադառնա իր բնօրրանը:

Դեկտեմբերի 2-ին հրապարակվում է ԽՍԴՄ կառավարության որոշումը «Արտասահմանի հայերի Սովետական Դայաստան վերադառնալու կապակցությամբ ծեսնարկվող միջոցառումների մասին»:

1946 թ. փետրվարի 1-ին երեսնի Գ. Սունդուկյանի անվան քատրութի սրահում ԽՍԴՄ Գերագույն խորհրդի պատգամավորի թեկնածուի հանգամանքով ընտրողների հետ հանդիպման ժամանակ Դայկոմիկուսի առաջին քարտուղար Գ. Դարությունյանը անում է մի հայտարարություն, որը իր տեսակի մեջ եզակի է Դայկոմիկուսի ամբողջ պատմության մեջ: Գ. Դարությունյանը պահանջում է Թուրքիայից վերադարձնել զավթված հայկական տարածքները հայրենադարձվող հայերին ընդունելու համար: Եական է շեշտել, որ Դայկոմիկուսի դեկապարզ խոսում է ամբողջ հայության անունից:

Այսպիսով՝ տարրեր օղակների համակցումից ծեսավորվում է շղթան: Դամունկել էին հայ ժողովորի իղերն ու ԽՍԴՄ պետական շահերը, ո-

րոնց իրականացման համար իշխանությունները հաշվի չեն նստում նույնիսկ այն բանի հետ, որ Դայաստանը, ինչպես և ամբողջ Երկիրը, հեռավոր անգամ պատրաստ չէր հայրենադարձության կազմակերպմանը, նման ծավալի և ընդգրկման գործողության, այն էլ կայժակնային արագությամբ: Թվում էր, թե պատմության առթած այս եզակի և երջանիկ պահի տրամաբանությամբ պաշտոնական գաղափարախոսական քարոզչությունն էլ գեր առժամարար պիտի փոխեր ալիքները, պիտի համազգային բնույթ ու բովանդակություն հաղորդեր հայրենադարձությանը՝ աշխարհին ու նրա հանրային կարծիքին ևս ներկայանալու համար համազգային, ամբողջական մուրհակով:

Բայց մինչև 1946-ի ամուսն քարավանների մեկնումը քաղաքական կոնյունկտուրան սկսել էր տատանվել և մինչև 1947 թվականի աշունը արմատապես վերափոխվել էր: ԽՍՀՄ կառավարության անունից Վիշինսկին ՍԱԿ-ում քարծրացրեց տարածքների պահանջը, բայց... վրացիների անունով:

Պատահական չէր, որ հայրենադարձության շարժներացը շեշտակի մակարդկեց, և Գ. Դարությունյանի հիշյալ ելույթի մեջ հնչած 350–400 հազարի փոխարեն երկիրն ընդունեց ընդամենը 90 հազար մարդ: Այս կերպափոխությունը, ասես աստիճանաբար, արթնացրեց նիրիել թվացող կրօքերը: Կազմակերպական կերպի և քարոզչական մեքենայի գործողության մեջ սկսվեց տառացիորեն կրկնվել այն ամենը, նույնիսկ երթեմն ավելի ուժգնությամբ, ինչ տեղի էր ունեցել նախապատերազմական հայրենադարձության շրջանում: Դարձյալ սոցիալական և քաղաքական համատեղելիության պահանջներ, դարձյալ հրաժարականների անվերջանալի շարքերի հրապարակումներ, դարձյալ արյունոտ ընդհարումներ հակառակորդ կողմերի միջև և նույնիսկ զոհեր:

Այնուամենայնիվ, պատերազմական շրջանի արտակարգ պայմանների տրամաբանության բերումով (տարածքային պահանջատիրությունը և իրըն դրա հիմնավորում հայրենադարձությունը ևս պատերազմի ստեղծած հնարավորությունների մեջ էն) ծայր առած նույնիսկ սահմանափակ ու դրվագային լայնախոհությունը անհետանք չանցավ:

Այլևս հնարավոր չէր հաշվի չնստել Սփյուռքի շատ կենտրոններում ստեղծված ազգային ճակատների հետ, որոնց կազմում մեծ մասամբ համախմբվում էին (ՀՀ դաշնակցությունից բացի) տարրեր քաղաքական ուղղությունների և դասերի ուժեր: Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի Դայկական ընկերության խողովակով (ԱՕԿՍ)

կապեր հաստատվեցին և վերահաստատվեցին տարբեր երկրների հայ-կական կազմակերպությունների (ոչ միայն համայնավարական) հետ: Դայաստան սկսեցին այցելել մտավորականներ (գրական համագումարների) և հոգնորականներ (Ա. Էջմիածնում տեղի ունեցող կրոնաեկեղեցական միջոցառումներին մասնակցելու համար):

Պատերազմական շրջանից մինչև վարչունականների սկիզբն ընկած ժամանակահատվածը դասակարգային շերտավորման քաղաքականության մի յուրատեսակ ենթափուլ էր, անցումային շրջան, երբ «դասակարգային շերտավորումը» իրև քաղաքականության բացահայտ գործուն լժակ աստիճանաբար վերափոխվում էր ավելի կրավորական, երբեմն քողածածուկ «Դասակարգային մոտեցման» սկզբունքի: Այսինքն կյանքն ինքը նախապատրաստում էր ու փութացնում երրորդ շրջանը:

Վճռական նշանակություն ուներ ԽՄԿՍ ներքին կյանքում սկսված խրուչչովյան ճնհալը, որի ընթացքում կատարվեց Արևմուտքի առջև իշեցված երկաթե վարագույրի խորտակման փորձ: Խորհրդային Միության կոմկուսը կարգախոս ընդունեց աշխարհը հուզող գերիարգերի (խաղաղության խնդիրը) լուծման գործում լայն դեմոկրատական ճակատի անհրաժեշտության մասին, որով հնարավոր նկատվեց գործակցությունը տարբեր դավանանքների ուժերի ու շարժումների հետ քաղաքական կուսակցություններից մինչև կրօնաեկեղեցական միավորումները: Դառաջաղինություն նշանավորող այս երևույթը իր վավերացումը գտավ հիսնական թվականների վերջերին գումարված կոմունիստական և բանվորական կուսակցությունների մի քանի խորհրդակցություններում: Դայաստանի կոմկուսը, բնականաբար, պիտի հետևեր ԽՄԿԿ-ի ընթացքին: Մանավանդ որ հարցը վաղուց արդեն հասունացած էր: Սփյուռքի նկատմամբ ինը վարքագիծը այլևս արդեն լրջորեն խոչընդոտում էր Դայաստանի իսկ մտավոր և հոգնոր կյանքի հետագա զարգացումը: Նոր հայացքի անհրաժեշտությունը օրվա հրամայական էր:

ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ: ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԵՐՏԱՎՈՐՄԱՆ ՄԿՋԲՈՒՆԵ

1961 թվականի մայիսին փոքր-ինչ ուշացումով նշվեց Խորհրդային Դայաստանի 40-ամյակը: Սփյուռք-Դայաստան հարաբերությունների պատմության մեջ առաջին անգամ լինելով՝ պաշտոնական հանդիսությունում գործում էր առաջարկած առաջարկական համագումարը:

թյանը միատեղ հրավիրված էին տարրեր խավերը ներկայացնող շուրջ հիսուն սփյուռքահայեր, այդ թվում ՍԴ հնչակյան, Ռամկավար ազատական կուսակցությունների ղեկավարները իրենց պատվիրակություններով, Լիբանանի համայնավար կուսակցության հայկական հատվածի և Իրանահայ մշակութային միության պատվիրակությունները, շատ ուրիշ երեսելի գործիչներ ԱՄՆ-ից, Եվրոպայից, Հարավային Ամերիկայից: Երևանում սփյուռքահայ պատվիրակների հանդիպումը և Խրուչչովի հետ յուրօրինակ կերպով նշանավորում էր կարևոր մի եղելություն: Կենտրոնը դրանով հավանություն էր տալիս Սփյուռքի նկատմամբ Հայաստանի քաղաքականության լուրջ շրջադարձին: Հարաբերությունների ոլորտը շեշտ ընդլայնվում էր, ներգրավում բոլոր դասերի ու քաղաքական ուղղությունների սփյուռքահայերին: Միակ բացառությամբ Հայ հեղափոխական դաշնակցությունը տեղ չուներ հրավիրյալների շարքում:

Բուն հանդիպումը որևէ դրական կոնկրետ բովանդակություն չուներ: Իբրև անմիջական մասնակից տողերիս հեղինակը կարող է վկայել, որ սփյուռքահայ քաղաքական հոսանքների թե տարրեր համայնքների բոլոր ներկայացուցիչները արտահայտվելու առիթ ունեցան: Բոլորը, ասես նախապես պայմանավորված, խոսում էին այն մասին, թե երկորի ղեկավարից Հայաստանի հոբելյանի առիթով անակնկալի սպասումներ ունեն, քայլ ոչ մեկը այդպես էլ հստակ չարտասանեց ակնկալվող «անակնկալի» անունը: Խոսքը, անշուշտ, Ղարաբաղի մասին էր: Խրուչչովը կարծ պատասխանեց, թե ԽՍՀՄ-ում ազգային հարցը լուծված է, և անցավ ուրիշ խնդիրների: Այսպիսով՝ եականը հենց ինքը երևույթ էր՝ իբրև մեկնակետ նոր քաղաքականության համար:

Քաղաքականության մեջ շրջադարձի քանածնումը տեղի ունեցավ թիւ ավելի ուշ՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության 22-րդ համագումարում, 1961 թ. սեպտեմբերին: Առաջին անգամ լինելով՝ Հայաստանի կոմկուսի անունից պաշտոնական գնահատանքի խոսք ասվեց ՍԴ հնչակյան և ՌԱ կուսակցությունների հասցեին՝ որպես «առաջադիմական» և «հայրենասիրական» ուժերի, և առաջին անգամ Խորհրդային Հայաստանի իշխանություններն անհրաժեշտ գտան ընդլայնել հարաբերությունները սփյուռքահայության հետ ոչ թե դասակարգային, այլ ժողովրդավարական լայն բազայի վրա:

Տեղին է ընդգծել, որ հետագայում էլ, նույնիսկ շփումների ու հարաբերությունների ամենաաշխույժ պահերին, մինչև 1988 թվականը, այ-

սինքն մինչև Պարաբաղյան շարժման և ժողովրդավարական շարժումների պարտադրանքի տակ ընդունած կերպը, Դայաստանի կոմկուսը հրապարակավ, պաշտոնապես չեղ «խոստովանում» ՍԴ հնչակյան և ՌԱ կուսակցությունների հետ շփումների իրականությունը: Բառորդ դարից ավելի այդ տարածության ու ժամանակի մեջ տեղի են ունեցել տասնյակ ու տասնյակ պաշտոնական հանդիպումներ Գերազույն խորհրդի ու կառավարության թե կոմկուսի Կենտկոմի ղեկավարության մակարդակով: Բայց մամուլում չկա իսկ մի եզակի լուր, որ հայտներ, թե ընդունվել էին հենց ՍԴ հնչակյան կամ ՌԱ կուսակցությունների լիազոր ներկայացուցիչները, պատվիրակությունները: Դրա փոխարեն հայտարգում էր, թե ընդունելության արժանացել են «սփյուռքահայ հայտնի հասարակական գործիչներ», և տրվում էին անուններ: «Խոստովանում» բայց հավանաբար ոչ հստակ է քարգմանում կացությունը: Պարզապես Դայաստանի իշխանությունները գրկված էին ինքնուրույն արտաքին քաղաքականության իրավունքից, և արտասահմանյան որևէ քաղաքական կուսակցության (մեր պարագայում՝ ՍԴ և ՌԱԿ) հետ պաշտոնական որևէ հարաբերության համար անհրաժեշտաբար պետք է ստացվեր Կենտրոնի թույլտվությունը: Նմանապես, թեպետ քազմաթիվ առիթների առկայության, Դայաստանի ոչ մի պաշտոնական ներկայացուցիչ չի մասնակցել ՍԴ-ի կամ ՌԱԿ-ի կուսակցական ծեռնարկումներին, նույնիսկ հորելանների կապակցությամբ:

ՀՀԴ նկատմամբ քաղաքականության մեջ էական փոփոխություն տեղի չունեցավ: Այնուամենայնիվ, մի կարևոր կետ անհրաժեշտ է նկատի ունենալ: Թե՛ համագումարում և թե՛ նրանից հետո հաճախ ՀՀ դաշնակցության քննադատությունը հնչում էր «դաշնակ պարագլուխների» հասցեին, այսինքն որդեգրվել էր նոր մարտավարություն, որով շարքերը դիտարկվում էին ուրիշ ակնոցով՝ իբրև «մոլորյալներ»: Իսկ նման հարցադրումից մակաբերվում էր շարքերի հետ հարաբերելու և շփումների հնարավորությունը:

Դաշնակցության դեմ պայքարի հարցերը դիտարկելիս ժամանակ առ ժամանակ այդ պայքարի սրացումները, մակընթացությունները և տեղատվությունները ճիշտ ըմբռնելու համար, առհասարակ, անհրաժեշտ է նկատի ունենալ ոչ միայն բուն ՀՀԴ մարտավարությունն ու ռազմավարությունը, հակախորհրդային ուժերի շարքերում նրա դիրքը և դերը՝ իր իսկ ըմբռնումով, և վարքը, այլև մի էական, արտաքինից երթեք չերևացող կետ ևս: Խորհրդային իշխանության յոթ տասնամյակների ընթաց-

քում Երևան-Մոսկվա փոխհարաբերությունների ընդգրկած ժամանակի ու տարածության մեջ հարաբերաբար աներևույթ ներկա էր լինում ՀՀ դաշնակցությունը¹: Վարչունական և հետագա թվականներին մեկից ավելի անգամներ Սփյուռքից թելադրանքներ են եղել դադարեցնելու ՀՀ դաշնակցության դեմ ելույթները Դայաստանի մամուլում կամ պաշտոնական ամբիոններից պատճառաբանելով, թե դրանք նոր ավուն են հաղորդում «մարող» կուսակցությանը: Այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ նման ելույթներ, երբեմն նույնիսկ խիստ կոչտ, տեղի էին ունենում: Ասես, ի գորու էր Վոլտերի «Եթե նույնիսկ Աստված չկա, նրան պետք է ստեղծել» բանաձևում:

Այսպիսով՝ վարչունական թվականների հենց սկզբներից որդեգրվեց Սփյուռքի քաղաքական շերտավորման քաղաքականությունը, որը քաղաքականորեն օտարում էր «դաշնակ պարագլուխներին» և հարաբերությունների դրսերը բացում սփյուռքահայ զանգվածի առօց: Սփյուռքահայության հետ հարաբերությունների ընդլայնման առաքելությունը դրվեց «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի» վրա՝ հասարակական (ոչ կառավարական) մի մարմնի, որի գործունեությունը սերտորեն կապված էր կոմիտեսի Կենտկոմի և հանրապետության կառավարության հետ: «Պատահական չէ, որ կոմիտեն սփյուռքում ընկալվում էր իրու կառավարության մարմին:

Եթե իր նախորդին ԴՕԿ-ին, վիճակվեց գաղթահայ ստվար զանգվածներին Խորհրդային Դայաստանից օտարելու ճակատագիրը, ապա կոմիտեն կոչվեց կատարելու հակառակը: Անշուշտ Սփյուռքի նկատմամբ Դայաստանի քաղաքականության, ուրեմն և կոմիտեի գործունեության հիմքում ևս ընկած էր «դասակարգային մոտեցման» սկզբունքը: Բայց դա արդեն ոչ թե քաղաքական ուղղակի գործոն էր, ինչպես առաջին փուլում, այլ գաղափարախոսական առաջադրանք, որը հազվադեպ էր գտնում անմիջանորդված ճակատային իրացման արտահայտություններ:

Կոմիտեն եղավ ոչ թե Սփյուռքի պառակտման գործիք, ինչպես երբեմն փորձ է արվում նրան դա վերագրել թե Դայաստանում, թե արտասահմանում, այլ հիմնականում արտահայտության գեր մի լուրջ մասը Դայրենիքին

¹ Օրինակները շատ են: Լուսաբանության կարգով, տողերիս հեղինակը կարող է հիշատակել մեկը: 1961 թ. մայիսի 6-ի համելստերյանց 3ա. Զարորյանը պատրաստվում էր գեկոցումը հրապարակել ուստերեն լեզվով՝ որպես հարցանք քարծրաստիճան հյուրի նկատմամբ: Ն. Խորուչչյովը, իմանալով այդ մասին, անմիջապես կարգադրեց հայերեն կարդալ: «Թող դաշնակները ասելից չդարձնեն»:

մերձեցնելու խողովակ: Պառակտումը Սփյուռքում արդեն իսկ գոյություն ուներ և թեժ ծեսը էր ընդունել մինչև կոմիտեի ստեղծումը (1964):

Առհասարակ զաղափարախոսական կաղապարի լուրջ բուլացման, լիբերալ (ազատամտական) մտածելակերպի համառորեն ներբափանցման օրինաշափ հետևանք էր որդեգրված նոր քաղաքականությունը: Այդ երսույթը շնորհիվ էր, որ Հայաստանում աստիճանաբար զարգացում ստացավ ազգային գիտակցության արքնացման, ազգային ինքնաճանաչման ուժգնացման շարժընթացը: Մեծ եղեռնի հիսնամյակի նշումը, Սարդարապատի և Հայոց ցեղասպանության հուշահամալիրուրի կառուցումները, իսկ ազգային-ազատագրական շարժումների պատմության հետ կապված պատմական ու գեղարվեստական գրականության հրատարակումը. այս բոլորը պարզապես անհնարին պիտի լինեին նախորդող տարիներին:

Խորիրադային Հայաստան որոշ ազատամտականության մուտքի և տարածման հենց այդ շրջանն էր, որ նախապատրաստեց հողը նոր որակի հետազ ժողովրդավարական շարժումների և Հայաստանի անկախության հօչակման համար: Այս ամենում բնավ էլ թերագնահատելի չէ Սփյուռքի նկատմամբ քաղաքականության երրորդ շրջանի իրականացման հավաքական արդյունքը:

ՉՈՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ: ԲՈԼՈՐ ՏԻԴԻ ՀԵՐՏԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱԶԱՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔ

Արդեն նախորդ փուլի ընդերքում հասունանում էր քաղաքական սահմանափակումների վերացման անհրաժեշտությունը: Տակավ առ տակավ բազմաթիվ էին լինում դեպքերը, երբ շփումներ էին տեղի ունենում ոչ միայն «հայրենասիրական» կոչված ուժերի, այլև Յայ հեղափոխական դաշնակցության մականի տակ գործող այլազան կրթական, մշակութային, մարզական կազմակերպությունների հետ. ուսուցիչների և աշակերտների խմբական այցելություններ ու մասնակցություն Հայաստանում ծեռնարկվող միջոցառումներին, ուսանողների մուտք հանրապետության բարձրագույն կրթական հաստատություններ, մարզական փոխադարձ հանդիպումներ, մշակութային խմբերի ելույթներ և մասնագետների գործուղումներ «Համազգային» միության խնդրանքով, մամուլի ներկայացուցիչների հավաքներ և այլն:

Որևէ կարգի սահմանափակումներից զերծ հարաբերություններ գործնականում սկսեցին հաստատվել 1988 թվականի տարեվերջին Հայաստանին պատահած ահավոր երկրաշարժի առիրով:

1989 թվականի վերջերին «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե» և սփյուռքահայության անխորհր բոլոր քաղաքական հոսանքների մականի տակ գտնվող մշակութային միությունների միջև ստորագրվեց մի փաստաբույր, որն ազդարարում էր հարաբերությունների մեջ համահավասարության սկզբունքը՝ համագոյային արժեքների գերակայությունը ճանաչելու հիման վրա:

Հայաստան-Սփյուռք հարաբերությունների նոր փուլի վերջնական հաստատումը կապված էր ժողովրդավարական հումկու շարժման հաղթանակի և Հայաստանի անկախության հոչակման հետ:

«Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն», ինչպես և ՀՕԿ-ը ուներ արտասահմանի հայության հետ հարաբերությունների մենաշնորհի իրավունքը: Նոր փուլը վերացնում է նաև այդ մենաշնորհը, ուր սահմանափակում էր նշանակում Հայաստանի մնացած բոլոր (կառավարական թե արտակառավարական) մարմինների ու կազմակերպությունների համար: Հայաստանի Հանրապետության բոլոր կազմակերպությունները և քաղաքացիները օրենքի առջև Սահմանադրության շրջանակներում հավասարապես ազատ են մտնելու մշակութային թե տնտեսական, կրթական, թե գիտական, քաղաքական, թե հասարակական հարաբերությունների մեջ Սփյուռքի որևէ կազմակերպության ու անհատների հետ: Այս առումով կոմիտեն, կորցնելով մենաշնորհը, ըստ եւրյան, սպառել էր իր դերը: ՀՕԿ-ը իրեն սպառեց ընդգրկման սահմանները նեղացնելով, կոմիտեն ընդլայնելով:

Ավելի քան տասը տարի է, ինչ որդեգրվել է նոր սկզբունքը: Ակնկալվող արդյունքը, սակայն, ցավալիորեն փոքր է, որովհետև տեսական հմարավորությունը գործնականում կիրառում չգտավ: Ավելին, երբեմն արվեցին քայլեր, որոնք ոչ միայն համապատասխան չեն ազատ հարաբերությունների սկզբունքին, այլև, ընդհակառակն, ուղղակի հիշեցնում էին քանական թվականների «Դասակարգային շերտավորման» տիտուր իրականությունը, օրինակ՝ ՀՀԴ կուսակցության օտարումը Երրորդ հանրապետության ղեկավարության ծեռօդով, այդ կուսակցության անդամների նկատմամբ դատավարությունը և այլն:

Իշխանությունները փորձեցին սփյուռքահայության հետ հարաբերությունները կառուցել ուղղաձիգ սկզբունքով Սփյուռքը ընդունելով

իբրև Դայաստանի Դանրապետությանը ենթակա իրողություն։ Դրապարակավ խրախուսվում էր սփյուռքահայ գոյություն ունեցող կառուցների ականահարումը, իրահրվում էին պառակտումներ, խնդիր էր առաջադրվում արմատապես փոխել սփյուռքահայ կազմակերպությունների ղեկավար անձնակազմերը, որպեսզի նոր մարդիկ անառարկելի կատարեին Երևանի ցուցումները։ Միաժամանակ, սփյուռքահայությանը մերժվեց իր կարծիքը հայտնելու իրավունքը, նույնիսկ այն պարագայում, երբ իշխանությունները համազգային խնդիրներ էին թիրախում։ Դայաստանի ներքին գործերին չխառնվելու թեզը ստացավ լայն քաղաքացիության իրավունք, բայց, դրան գրագահեռ և միաժամանակ, անընդհատ ավելի ու ավելի ուժգնանում էր Սփյուռքից ֆինանսական միջոցներ հայթայթելու պահանջը։ Սփյուռքում առաջի կարգ անցավ «Ուրք փողը տվեք, մնացածը ձեր գործը չէ» հանկերգը։

Տասնամյակի երկրորդ կեսում փորձեր արվեցին շտկելու իրավիճակը։ 1999 և 2002 թվականներին գումարվեցին համազգային ժողովներ Դայաստան–Սփյուռք հարաբերությունների հասունացած հարցերը քննարկելու համար։ Դայրենիքի և Սփյուռքի միջև երկխոսության այդ երևույթը վկայում էր, որ իշխանությունները փորձում էին հրաժարվել ուղղաձիգ սկզբունքից և որդեգորել հորիզոնականը։ Անց հորիզոնական սկզբունքը կարող էր համապատասխանել Դայաստանի պետականության և Սփյուռքում պետականության բացակայության պայմաններում իրոք արդյունավետ գործակցությանը կողմերի միջև։

3. ՍՓՅՈՒՌՔ–ՀԱՅՐԵՆԻՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՅԱՐՑԸ

Սփյուռք–Հայրենիք հարաբերությունները բնութագրող մի երևույթ նույնպես կարոտ է նախնական լուսարանության, առանց որի շատ հարցեր կարող են պարզապես անբացատրելի թվակալ։ Խոսքն այն մասին է, թե ինչու և ինչպես էին սփյուռքահայ տարբեր խավերն ու հոսանքները ընկալում խորհրդային Դայաստանի իրականությունը։

Սփյուռքից դեպքի Հայրենիք և հակառակ ուղղությամբ իրականացվող փոխհարաբերությունների բնույթը բնակ էլ պարզ ու դյուրակ ընկալվելիք չէ, ինչպես թվացել է տասնյակ տարիներ շարունակ, ավելին

մատուցվել է իրև մակերեսին ցայտում երևացող եռթյուն բարեկամ-հակառակորդ, առաջադիմական-հետադիմական, հայրենասիրական-հակահայաստանյան երկանդամ պարզունակ բանաձևի տեսքով։ Փոխհարաբերությունների խորքը ըմբռնելու համար անհրաժեշտաբար հարկ է գեր բռուցիկ հայացք նետել Դոկտեմբերյան հեղափոխության հետևանքով իշխանության գլուխ եկած ուժերի կոմունիստական կուսակցության թե խորհրդային կառավարության ազգային քաղաքականության առանցքային հարցերի վրա։

Մարքսիստական գաղափարաբանությունը ազգը համարում է պատմական իրողություն, այսինքն իրև հասարակության գարգացման հոլովույթի մի որոշակի դարաշրջանում առաջացած գոյ, որը, ունենալով իր սկիզբը, պետք է ունենա և իր վախճանը։ Ըստ այնմ, մարքսիզմն ընդունում է ազգային հարցի երկու փուլ՝ ա) գոյավորման շրջանը, որը բխում և համընկնում է բուրժուական դարաշրջանի առաջացմանը ու գոյատևմանը, բ) սոցիալիստական շրջանը, որը նշանավորում է ազգերի վախճանը։ Եթե ազգային հարցի պատմությամբ առաջադրված բուրժուական լուծումը, այսպիսով, ազգի ծնավորումն է, ազգային պետականության ստեղծումը, ապա սոցիալիստականը ազգերի ծովումն է։

Նորաստեղծ խորհրդային իշխանությունը, սակայն, կանգնեց պատմական մի իրողության առջև, եթե Ուսասատանում կապիտալիստական հարաբերությունների գարգացումը չեղ հասցըել հանգել ազգային հարցի բուրժուական լուծմանը, և կայսրության ամրող տարածքով մեկ տասնյակ ու տասնյակ ժողովուրդներ վերապրում էին պատմական գարգացման այլազան փուլեր՝ նախնադարյան համայնքայինց ու ավատականությունից մինչև զարգացած բուրժուական արտադրահարաբերությունները։ Ազգային հարցի լուծման առաջադրանքը ծովումը, այդ պայմաններում կլիներ անհմաստություն, քանի որ տերության մաս կազմող ազգերը պարզապես պատրաստ չեին դրան։

Նոր իշխանությունը որդեգրեց հեռահար նպատակին տանող ճանապարհը՝ ազգերի գալիք ծովան համար նրանց զարգացման անհրաժեշտության հոչակումը։ Պետական մակարդակում ստեղծվեցին ազգային հանրապետություններ, և ԽՍՀՄ-ը իրև այդ հանրապետությունների կամավոր միություն, ազդարարվեց ազգերի բարգավաճ զարգացում։ Դրապարակի վրա դրվեց կոմունիստական կուսակցության ծրագրային հայտնի թեզը՝ ազգերի ծաղկում և մերձեցում։

Պատմական հանգամանքների նման կարգի դասավորությունն էլ թե-

լադրեց, որպեսզի նոր իշխանության հաստատման հենց սկզբից կայսրության ծայրագավառներում տարվեր որոշակի մի քաղաքականություն, որը միտում ուներ արագացնելու ազգերի զարգացումը թե տնտեսական, թե մշակութային մակարդակներում:

Զուգահեռաբար, սակայն, գործնական կյանքում և գաղափարախոսության մակարդակում ծրագրված իրականացվում էր «ազատ», «անկախ» հանրապետությունների իրավագրկության, դասակարգային և կուսակցական սկզբունքի բացարձակեցման գործնթաց: Միաժամանակ և ստեղծվում էին ազգային կեցության ու զարգացման տնտեսական թե հոգևոր մշակութային խարիսխներ ու առարկայական հնարավորություններ, մյուս կողմից համառորեն հետապնդվում էր այդ հաստատություններից ազգային զգացումները և հոգերանությունը աստիճանաբար օտարելու նպատակը: «Ազգերի ժաղկում և մերձեցում» կարգախոսի պարագայում աստիճանաբար շեշտը փոխադրվում էր երկրորդ բաղկացուցչի վլա՛ մերձեցման խողովակով թիրախելով ծովում: Միջազգայնականությունը (ինտերնացիոնալիզմ) հայտարարվեց ԽՍՀՄ բնակչության կեցության իիմնական սկզբունքը, «ազգային հայրենիք» իմացքի փոխարեն շրջանառության մեջ դրվեց «սոցիալիստական մեծ հայրենիքը», ավելի ուշ հայտնագործվեց «խորհրդային ժողովուրդ» ստորոգությունը, որը միտում ուներ նախապատրաստելու այլազան ազգերի պատկանող ժողովուրդների միաձուլումը «խորհրդային ազգ» մի հասկացության մեջ:

Ազգային հարցի սոցիալիստական լուծումը, այլ խոսքով՝ հեռանկարում նրանց լիակատար ծովումը միտող այդ քաղաքականությունը գործնականում դատապարտվեց ծախողության, անմիջապես որ երկրի քաղաքական կյանքում ծլարձակեցին ազատամտությունն ու ժողովրդավարությունը: Դիմնականում հենց ազգային քաղաքականության արմատական սխալներով, անրանական, հասարակական զարգացման օրինաչափությունները քննարարող այդ տևական ժամանակահատվածի հարուցած խոր վերքերի ու անբավարարվածության, վերջին հաշվով՝ այդպես էլ ազգային հարցի չլուծվածության հետևանքով էր, որ ազգային երկպառակությունները ցնցեցին ամբողջ ԽՍՀՄ-ը ութսունական թվականների վերջերին և 90-ականների սկզբներին:

Խորհրդային իշխանության տասնամյակների ընթացքում ստեղծվել էր մի բացառիկ վիճակ, երբ պաշտոնական քաղաքականությունը ազգերի ծովանակ իսկ նպատակով, մանավանդ սկզբնական հատվածում,

որոշակիորեն սահմանափակ շրջանակներում արտօնում, նույնիսկ խրախուսում էր ազգային կեցության աշխուժացումը՝ իբրև անհրաժեշտ հասունացման մի փուլ ազգերի մերձեցման խողովակով նրանց վերջնական վերացման ճանապարհին: Պատահական չէր, որ ԽՍՀՄ բոլոր ազգերը արծանագրեցին հայտնի առաջխաղացում տնտեսական թե մշակութային շինարարության բնագավառում:

Բացառություն չէր նաև Հայաստանը: 80-ականների վերջերին ծայր առաջ քննադատությունը, որով ամբողջովին մերժվում էր կոմունիստական կուսակցության և խորհրդային իշխանությունների ազգային քաղաքականությունը, իրավացի էր սկզբունքի տեսակետից: Անընդունելին, թեկուզ հենց Հայաստանի օրինակով, նիկիլիստական վերաբերմունքն էր իրական գոյություն ունեցող, շոշափելի արդյունքների նկատմամբ: Ստեղծվել էր ազգային դիմագծով տնտեսություն, որ կորնած էր հենց ազգային արտադրողական ուժերի վրա, անուրանալի զարգացում ապրեցին ազգային մշակույթն ու գիտությունը, ստեղծվեց սեփական ազգային կառերի բանակ: Հանրապետությունում արծանագրված անառակելի առաջընթացը սոցիալ-տնտեսական և մշակութային մարդուում թե Հայաստանում, թե Սփյուռքում, սակայն, վեց-յոր տասնամյակ շարունակ ընկալվում էր իբրև բացարձակ երևույթ՝ կտրված կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության ընդհանուր համակից, որի երկրորդ և գլխավոր բաղկացուցիչը, այսինքն հիմնական նպատակը պարզապես մնում էր անհայտ կամ էլ նկատառման չէր արժանանում: Զարմանալի չէ, որ Սփյուռքի շատ ուժեր ուշադրությունը կենտրոնացնում էին հենց առաջինի վրա՝ գրեթե անվերապահ ընդունելով Հայաստանում կատարված ամեն ինչ, իսկ ուրիշներ համենում էին միայն ազգային քաղաքականության թերությունները մատնանշելով՝ նմանապես բացարձակի վերածելով երկրում իրագործվող ազգային քաղաքականության երկրորդ բաղկացուցիչը, թեպետ ամեն ինչ ժիշտելու նախադրույթի բերումով չին հասնում արմատական արատները տեսնելու մակարդակին:

Սփյուռք-Հայրենիք փոխհարաբերությունների հիմքում, սկսած քսանական թվականներից, ընկած էր հենց այս իրողությունը:

4. ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԻ ԳՆԱՐԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

1940-ական թթ. կեսերին Խորհրդային Միությունում կոմկուսի քաղյուրոյի նախաձեռնությամբ ծավալվեց գաղափարախոսական մի վիրխարի արշավ, որն ունեցավ կործանիչ նշանակություն հասարակական մտքի և տարրեր արվեստների հետագա զարգացման տեսակետից ծանր հետևանքներ ունենալով նաև քաղաքական մեղադրանքների ու եզրակացությունների ինաստով։ Կոմկուսի գաղափարախոս Ա. Ժդանովի մատուցմամբ փականքի տակ դրվեց նոր խոսքի իսկ հնարավորությունը, այլազան պիտակավորումներով (ֆորմալիզմ, կոսմոպոլիտիզմ, նացիոնալիզմ, միասնական հոսանք և այլն) զսպաշապիկներ նետվեցին գրականության ու գրականագիտության, արվեստների ու արվեստաբանության, պատմաբանության, փիլիսոփայության և հասարակական մտքի այլազան ուրիշ բնագավառների վրա։

Դոգնոր ասպարեզի ջարդից անմասն չմնաց նաև Հայաստանը։ Հատկապես «միասնական հոսանքի» տեսության քննադատությունը կոչված էր բռնանալու մեր ժողովրդի պատմության վրա՝ ստիպելով մերժելի գտնել ազգային գաղափարաբանությունը, տարանջատել և իրար հակադրել պատմության շղթայի օղակները, ազգի գոյապահպանության պայքարում օտարել ոչ աշխատավորական դասակարգերն ու խավերը՝ դիտելով նրանց իրեն հակառակորդների կամ, լավագույնս, իրեն խոչընդոտողների։ Բնականաբար, նման տրամաբանության թելադրանքով հարվածի առյուծի բաժինը ուղղվեց եկեղեցու, մասնավորապես Հայաստանյաց առաքելական եկեղեցու դեմ, որի միտք բանին էր առավելագույնս նսեմացնել կամ լիովին բացառել եկեղեցու խոշոր դրական դերը հայության, նրա մշակույթի, ավանդույթների, ազգային դիմագծի պահպանության գործում դարերի խորքերից ի վեր։

Դիշատակարժան է, այս առիթով, Դ. Ղենիրճյանի «Վարդանանք» վեպի ստեղծագործական ճակատագիրը։ Առաջին հրատարակությունը դարձավ ուժեղ քննադատության թիրախ այն պատճառով, որ հեղինակը պատմական փաստերի հարազարդ հետևողությամբ վճռական տեղ էր հատկացրել եկեղեցուն, «Վասն Հայրենեաց»—ի կողքին հավասարագոր մատուցել էր «Վասն Հավատոյ» կարգախոսը։

Եկեղեցու, նրա պատմական դերի անհիմն և վարկարեկիչ քննադատությունները հետագայում էլ շարունակվեցին պարբերաբար՝ խրուշ-

չովից մինչև Չեռնենկո ժամանակահատվածում: Իսկ Յայաստանում ծավալվող գաղափարախոսական աշխատանքի վերջին լուրջ քննադատությունը ԽՄԿԿ Կենտկոմի կողմից 80-ական թթ. կեսերին կապված էր հենց հասարակական կյանքում եկեղեցու դերի գնահատության հարցի հետ:

Այս պայմաններում անտեսվել է կամ խիստ թերի է գնահատվել եկեղեցու վիթխարի դերը Սփյուռքի գոյավորման թե զարգացման հոլովութի բոլոր փուլերում:

Եշմարիտ է, եկեղեցու առանձին սպասավորներ երթեմն-երթեմն ծառայել են իրը քաղաքական շահերի ու թելադրանքների գործիք: Ընդսմին, Նման միջոցների դիմել են զույգ հակառակորդ ուժերը հայ իրականության մեջ: Խորհրդային Յայաստանից արտածվող պահանջները, մանավանդ, Սփյուռքի գոյավորման փուլում, հետապնդում էին երկրի քաղաքական վարչակարգի պաշտպանության, առնվազն եկեղեցին այդ վարչակարգի դեմ օգտագործելու հնարավորությունը չեղոքացնելու նպատակը: Յայ հեղափոխական դաշնակցությունը, մանավանդ 50–60-ական թթ.–ից ի վեր, ընդհակառակն, ջանում էր եղեկեցին վերածել հակախորհրդային գործուն պայքարի թեմահարթակի: Յաճախ, առանց կուսակցության տեղական մարզնի կամ Կենտրոնի համաձայնության, եկեղեցական վարչությունները կամ հոգևոր սպասավորները զրկված էին ինքնուրույն քայլեր ծեռնարկելու իրավունքից:

Անկախ այս կողմնակի ազդեցություններից ու ճնշումներից, սակայն, եկեղեցին ամրողջությամբ եղավ Սփյուռքի գոյավորման ու ազգային կեցության հիմնասյունը: Նրա շուրջ ստեղծվեցին ազգային կառույցներից շատերը: Բոլոր երկրներում հենց եկեղեցին ճանաչվեց տեղական իշխանությունների կողմից իրու մեր եթոնիկական փոքրամասնությունը ներկայացնող միակ հաստատությունը: Սփյուռքում եկեղեցին հաջողությամբ շարունակեց իր ազգային–հոգևոր առաքելությունը, որը նրա ուսերին դրել էր պատմությունը դարեր շարունակ ազգային պետականության բացակայության պայմաններում:

Սփյուռքի պատմության զանազան փուլերում ազգային գոյապահպանության, հայակերտության գործին իրենց անգնահատելի լուման թերեցին այնպիսի խոշոր մտավորականներ, ինչպիսիք էին Երուսաղեմի Եղիշե Դուռյան բանաստեղծ–բանաեր պատրիարքը, խոշոր գիտնա-

կան Գարեգին Ղովսեփյանը՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը, որի աշխատությունները նոր է նշանավորեցին հայ մանրանկարչության համապարփակ ուսումնասիրության մեջ:

Ամենայն Դայոց և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունների թեմերի ու վիճակների, Երուսաղեմի և Կոստանդնուպոլիսի պատրիարքարանների բոլոր սերունդների շատ հոգևորականներ անցյալուն թե մեր ժամանակներում անմնացորդ նվիրվածությամբ ջանքեր են ներդրել ոչ միայն հոգևոր, այլ մանավանդ, ազգային գործի կազմակերպական նպատակներով՝ Սփյուռքի տարածքով մեկ։ Այսօր իսկ, թեպետ բավականին թվով համայնքներում նկատվում է եկեղեցուց աշխարհիկ հարցերի օտարման միտում, եկեղեցին մնում է Սփյուռքի ազգային կեցության հիմնական գրավականներից մեկը։

Օտար ավերին հայության գոյապահպանության համար մեր ազգը մեծապես պարտական է եղեկեցուն։ Դայաստանյաց առաքելական եկեղեցին առանձնահատուկ բարձր տեղ ունի Դայրենիք-Սփյուռք փոխադրձ կապերի ստեղծման, ամրապնդման ու զարգացման մարզում։ Եվ եթե այսօր Սփյուռքն ու Դայրենիքը կապված են միմյանց բազմահագար ու բազմազան թելերով, ապա այդ մեծապես հիմնահամանգուցվում է եկեղեցու մեջ ու եկեղեցու խողովակով։

Նշանակալի, ուղղակիորեն պատմական առաքելություն ընկավ այդ մարզում Մայր արքո Սր. Էջմիածնի և նրա զահակալ Վազգեն Ա կաթողիկոսի ուսերին։ Սանավանդ, 60-ական թթ-ից ի վեր Ամենայն հայոց հայրապետի բազմաթիվ այցելությունները Սփյուռքի գրեթե բոլոր համայնքները, նրա կոնդակներն ու ելույթները, ամենօրյա գործուն աշխատանքը, որով արդյունավետ նպաստում էր միմյանց կապելու Սփյուռքը և Դայրենիքը, այդ բոլորը, առանց վարաններու կարելի է արձանագրել, եղան նորագույն շրջանում Սփյուռք-Դայրենիք մերձեցման, հոգևոր-մշակութային ինտեգրացիայի հիմնատաղձեց։

Չենց Վազգեն Ա-ի կոչն էր, որ անհապաղ հնչեց 1988-ի դեկտեմբերին և ուժի համեմ սփյուռքահայությանը՝ Երկրաշարժից ավերված Դայրենիքին օգնություն փութալու համար։

Սփյուռք-Դայրենիք կապերի ամրապնդմանը, հատկապես Երկրաշարժից հետո, իր մեծ նպաստում է թերեւ Դայ ավետարանական եկեղեցին, ինչպես նաև կարելի մասնակցություն է ունեցել Դայ կաթոլիկ եկեղեցին։

ՍՓՅՈՒՌԻ ԳՈՅԱՎՈՐՈՒՄԸ

1. ԼՈԶԱՆԻ ԽՈՐՃՐՈԱԺՈՂՈՎԸ: ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՒՅՍԵՐԻ ՊԱՏՐԱՆԱԹԱՓՈՒՄԸ

Յայրենի տարածքներից բռնագաղթված զանգվածը մեկ անգամից չէ, որ դարձավ սփյուռքահայություն: Սիրիայի, Լիբանանի, Յունաստանի վրանաքաղաքներում, հավաքակայաններում, ճամբարներում թէ այլուր տանիք գտած բազմությունները օր օրի սպասում էին արդարության հաղթանակին և տունդարձին: Արդեն բռնավտարման պահին հազարավոր ընտանիքներ չեին հավատում կատարվածի անշրջելիությանը: Յուշերը վկայում են. շատերն իրենց տների գաղտնարաններում գանձ էին թաքցրել՝ վերադարձին ծեռնունայն չմնալու ակնկալությամբ:

Յուսը և հավատը մեծապես առնչվում էին Առաջին աշխարհամարտում հաղթական մեծ տերությունների ամպագողոգոր հայտարարությունների ու խոստումների, և մանավանդ, 1920-ին Սերում կնքված պայմանագրի հետ: «Յայասիրությունը», որ հայության զգացառատ սրտին խոսում էր իրոն սպեղանի, պետական քաղաքականության մակարդակի վրա արդեն որերորդ անգամ շահերի սակարկության մանր դրամի դեր էր տանում: Յայության կողմից երևութիւն ընքոնումը, սակայն, աճրողացավ ավելի ուշ: Իսկ մինչ այդ հուսյի ու հավատի երփներանգող ծիածանը շղարշել էր աչքերը. չէ որ Սերը խոստանում էր ազատ, ինքնիշխան հայկական պետություն պատմական Յայաստանի մի խոշոր տարածքի վրա (Վիլսոնյան սահմաններով):

Յիասթափությունը իրեն երկար սպասել չտվեց: 1922–1923 թվականներին տեղի ունեցած Լոզանի խորհրդաժողովը եկավ վերջ տալու հայության ռոմանտիկ ծգտումներին:

Լոզանի հաշտության պայմանագիրը ստորագրվեց 1923 թվականի հուլիսի 24-ին: Սերի փաստարություղ զամբյուղ նետվեց: Պատերազմում պարտված Թուրքիան իր կամքը պարտադրեց դաշնակիցներին և հաղ-

բանակով ելավ Լոգանից: Սևրի խոստացած «Ազատ և անկախ» Հայաստանի փոխարեն նույնիսկ «հայ» կամ «Հայաստան» բառերը տեղ չգտան Լոգանի պաշտոնագրերի մեջ:

Լոգանի խորհրդաժողովի նախապատրաստությանը և ընթացքին առնչվող մի շարք հարցեր ամենասերտ աղերս ունեն առհասարակ հայ ժողովրդի պատմության դրամատիկ այդ պահի հետ՝ իրուն պատմական դաս և ուսանելի փորձառություն, մասնավորապես, արդի Սփյուռքի գյուղավորման խնդիրների հետ՝ իրուն մեր թեման շահագրգոռող նյութ:

Սևրի դաշնագրի մեջանը դեռ չեղ չորացել, երբ «Ազատ, անկախ»—ի փոխարեն 1920 թվականի տարեվերջին հրապարակ նետվեց «Ազգային տան» գաղափարը: Այսինքն՝ Թուրքիայի տարածքում ստեղծել հայոց «Ազգային տուն», որպեսզի բռնագաղթածները վերադառնան և ապրեն այնտեղ: Ակզրում միտքն այն էր, թե «Ազգային տունը» պիտի լինի անկախ, հետո, տակավ առ տակավ, «Ազգային տան» գաղափարը փոխակերպվեց «Ազգային օջախի» Թուրքիայի գերիշխանության տակ, և վերջապես դուրս նետվեց առհասարակ:

Ինչո՞ւ հրապարակ նետվեց «Ազգային տան» առաջարկությունը: Գուցե թե հենց Թուրքական դիվանագիտության վարպետության պտուղն էր, որով Սևրի դաշնագրի խափանման մարտավարության առաջին քայլն էր արվում: Կամ գուցե հենց դաշնակիցների ծեռքի գործն էր Թուրքիային չվիրավորելու և բոլշևիկների գիրկը չնետելու միտումով: Նման վարկածների համար որոշ հիմքեր կան: Սանավանդ որ Բրիտանիայի արտաքին գործոց նախարար լորդ Թերգոնը 1922 թ. մի նամակում գրում էր. «**Դաշնակիցները երբեք նպատակ չունեցան Թուրքիո մեջ առանձին անկախ Հայաստան մը ստեղծելու**»:

Դժվար բացատրելին, սակայն, Ազգային պատվիրակության և Ռամկավար կուսակցության համատեղ գործողությունն էր, որով Սևրից ընդամենը մի քանի ամիս անց «Ազգերի լիգային» հղած հուշագրում շոշափում էին «Ազգային տան» ստեղծման հնարավորությունը: Իր դա արվել է, որովհետև առաջարկության հեղինակները կանխազգացել են, որ Ազգերի լիգան պիտի չուզենա մեծացնել Սևրի դաշնագրից հետո ստեղծված Խորհրդային Հայաստանի սպահմանները:

Ինչեւ, արդեն 1921 թվականի գարնանից «Ազգային տան» գաղափարը լայնորեն տարածվում է գաղրահայության մեջ և գտնում ոչ միատեսակ ընդունելություն: Համայնավարական մտայնության և հնչակյան մամուլի տարրեր օրգաններն, օրինակ, դեմ են արտահայտվում:

Արդեն Լոզանի խորհրդաժողովի օրերին հրապարակվեց Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության արևմտյան հատվածի որոշումը, որը սկզբունքորեն մերժում էր խորհրդային Դայաստանից դուրս և նրանից անկախ որևէ «Ազգային օջախի» ստեղծումը, որի նպատակն է, ըստ սույն որոշման, հայ ժողովուրդը դարձնել բուրժուական պետությունների գաղութատիրական քաղաքականության գոհը:

Դետարքորական է արձանագրել, որ քուն խորհրդային Դայաստանի դիրքորոշումը խնդրու առարկա հարցի նկատմամբ տարտամ էր: Էրարթում կարելի էր հանդիպել համակրական ակնարկների և դեմ արտահայտությունների, տիրապետողը, սակայն, լուրջունն էր, երևուրական անտարբերությունը: Բնութագրական է այդ օրերի խորհրդային Դայաստանի դիվանագիտական ծառայության կարևոր դեմքերից մեկի Ալ. Քեկանյանի պատասխանը, որ տվել է Ալեքսանդր Շիրվանզադի հարցումին: «Գալով Սովետական Դայաստանի կառավարությանը, մենք ոչինչ չունենք Ազգային տան դեմ: Բացի այդ, մենք այն կարծիքն ենք, որ բրահայերի դատին խառնվելու ոչ մի իրավունք չունենք, և մենք կը կամենայինք, որ նրանք իրենք վարեն իրենց դատը, ինչպես իրենք են բարվոր համարում»:

Այս վարդագիծը, թերևս, թելադրված էր տակտիկական նկատառումներով: Խորհրդային Դայաստանի համար կենսական անհրաժեշտություն էր խաղաղ դրացիությունը, և այդ առթիվ ու այդ նպատակով նրան թելադրվում էր բարեկամության քաղաքականություն «հեղափոխական» Թուրքիայի աշխատավորության հետ: Պատահական չէ, որ Երկար ու ծիգ տասնամյակների ընթացքում խորհրդային Դայաստանի պաշտոնական քաղաքականությունը գրկված էր թե ԽՄԴՍ տարածքում, թե արտասահմանում սփռված հայ ժողովորդի հատվածների ճակատագրով հետարքրվելու իրավունքից: Պատահական չէ, որ նույնիսկ Սեծ եղեռնի դատապարտման ակտը Դայաստանի պաղամենտն ընդունեց դեպքերից գրեթե երեք քառորդ դար անց:

Սփյուռքի տարրեր գաղթօջախներում, սակայն, կային ոչ քիչ թվով հայ ծախակողմյաններ, որոնք դրսնորում էին Պապից ավելի պապականի եռանդ:

ԱՄՆ-ում 1921 թվականի կեսերից ստեղծվեց «Հայ աշխատավորական դաշնակցություն» հորցորջումով մի կազմակերպություն, որն իր առջև խնդիր էր դրել հայ աշխատավորական տարրերի ընկերավարական սկզբունքներով կազմակերպումը: Առաջինը հենց այս կազմակեր-

պությունն արտահայտվեց «Ազգային տան» գաղափարի դեմ: «Մենք բացարձակորեն դեմ ենք դաշնակից պետություններու, ինչպես և ամերիկյան ու հայկական որոշ շրջանակներու կողմեն առաջ քաշած «Ազգային օջախի» գաղափարին»:

Արդեն, երբ հայտնի էր Լոզանի ծախողանքը, Ամերիկայի հայ բանվորական կուսակցությունը մի մանիֆեստ է ընդունում, որի մեջ ազդարարում է, թե հայ բանվորությունը մերժում է ընդունել «Ազգային օջախի» նման խարուսիկ գաղափարները, դրանք իր համար վնասակար նկատելով:

Ինչո՞ւ, այնուամենայնիվ, ի՞նչ պատճառաբանությամբ: Մանիֆեստն ուղղված է բոլոր երկրների հայ բանվորությանը, և այդ դիմումից ել կարելի է մակաբերել հարցի պատասխանը: «Դու տաճկահայ բանվոր,— կարդում ենք մանիֆեստում,— կտրե նախապաշարումի կաշկանդիչ շղթան, որ կապած է քու գիտակցությունը: Վար դիր իին գենքերդ, որոնք քու գոյությունդ վտանգելե զատ ուրիշ ոչ մի նպատակի չեն ծառայեր: Դուն, հայ բանվոր, տաճիկ բանվորին հետ հետայրութարվոք հարաբերություններ ստեղծելու մասին պիտի մտածես: Այս, դու պիտի հաշտվես այն «դառն» իրականության հետ, որ քու գոյության ապահովության միակ միջոցը քու հարևաններու հետ համերաշխ ապրելն է»:

Դետաքրքրական է արծանագրել, որ Խորհրդային Դայաստանում նույնպես դեկավարվում էին դրացիների հետ բարվոք հարաբերությունների ստեղծման նկատառումներով, սակայն «Ազգային տան» թե առհասարակ գաղթահայությանը հուզող եական հարցերում բազմանշանակ ակնարկում էին իրենց չեզոքությունը, իսկ գաղթահայ ծախակողմյանները շատ ավելի առաջ էին գնում արմատի վրա սրատելով «Ազգային տան» գաղափարը, նույնիսկ Լոզանի խորհրդաժողովի մասնակիցների և, մասնավորապես, Թուրքիայի կողմից այն մերժելուց հետո:

Տարօրինակ չէ, ուրեմն, որ ժամանակի ամենանշանավոր ծախակողմյաններից մեկը՝ Ս. Սնարը, հայ բաղաքական բոլոր ուժերի մտածումները Արևմտահայաստանի ազատագրության վերաբերյալ ենթարկում է ոչնչացնող քննադատության: Եթե հնչակյանները ծրագրել են երկիրն ազատագրել գործով, Դժ դաշնակցությունը արևմտյան տերությունների օգնությամբ ստեղծել Մեծ Դայաստան: Իր իսկ վերագրումները Սնարը ազդարարում է ցնորամիտ: Ցնորամիտ է համարում նաև ռամկավարների «Ազգային օջախի» ծրագիրը: Սնարը մերժում է ոչ թե գործնական

ինարավորությունը, այլ նման գաղափարի իսկ օրինավորությունը: Ուամկավար ազատական կուսակցության որոշ գործիչներ հենց սկզբից էլ տարակուսանք ունեին ու վերապահությանք էին մոտենում Լոզանի ժողովում հայոց աջակցությանը: Լևոն Սկրտչյանը Ալեքսանդրիայի «Արևում» ուղղակի գրում էր, թե հայությունը որևէ հույս պիտի չդնի Լոզանի խորհրդաժողովի վրա:

Այն հանգանանքը, սակայն, որ թե՝ Ազգային պատվիրակությունը, թե՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը խորհրդաժողովին ներկայացած միասնարար՝ տևարար նախապատրաստելով հարցը, ըստ եւթյան կանխորոշում էր թե ՈԱԿ-ի, թե ՀՀ դաշնակցության դիրքորոշումը և հինարավոր ակնկալիքները Լոզանի խորհրդաժողովից: Վատահարար, որևէ մեկը վարդագույն երազանքներ չեր փայփայում: Խոսքն էլ այդ պահին արդեն գնում էր մի չնչին շնորհի մասին, մի փոքրիկ անկյան մասին, որտեղ Թուրքիայից քաղաքական ըստ ամենայնի կախման պայմաններում աշխարհացրիվ հայությունը կարողանար մեկտեղվել: Բայց պատճական հոլովույթի տվյալ փուլում դա վերջին շանսն էր, և վերոհիշյալ մեր քաղաքական ուժերն ուգում էին քանել այդ կապույտ թօնակը: Հատկապես եռանդուն էր ՈԱԿ-ի օրգան «Ապագա» շաբաթաթերթը, որը սկսել էր որոնել ապագա օջախի աշխարհագրականորեն հարմարավետ վայրը: «*Մեր բույնը կը շինվի միայն կիլիկիա, Տավրոսեն Ամանոսի լեռնաշղթային մեջը, Թուրքիո ծայրագոյն մեկ նահանգը ոչ ոքի ծամրուն վրա կիյնա, ոչ ոքի ծրագիրը կը խանգարեն*»,— խանդակառ գրում է Ե. Կարիկյանը: Դաշնակցական գործիչ խատիսյանը առարկել է Ե. Կարիկյանին, թե «Ազգային տունը» պետք է ստեղծել Վանա լճի կողմերը: Առաջարկություններ եղան քազմաթիվ ու քազմազան, որոնք աստիճանաբար խանդակառից մարում-իջնում էին մինչև սառը, դեպքերի ընթացքին գուգընթաց:

1921 թվականի մարտին Լոնդոնում տեղի է ունենում հայրական դաշնակիցների մի ժողով, որը համաձայնություն է ծնոք թերվում հայոց համար Թուրքիայի տարածքում ստեղծելու քացարձակ անկյան «Ազգային տուն»: Դամապատասխանաբար, 1921 թվականի սեպտեմբերի 21-ին Ազգերի լիգան Հայաստանին վերաբերող երեք վճիռներ ընդունեց, որոնցից առաջինում ասված էր. «*Անհրաժեշտ քայլերի դիմել Հայաստանի ապագան ապահովելու համար, մասնավորապես, հայերին հատկացնել Ազգային տուն՝ Օտտոմանյան իշխանությունից ամրողականորեն անկախ*»:

1922 թվականի մարտի 22–26-ին Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի արտաքին գործերի մինիստրները խորհրդակցություն են գումարում Փարիզում ուսումնասիրելու համար Մերձավոր Արևելքում խաղաղությունը վերահսկատելու ուղիները: Մշակված դրույթները պետք է հիմք դառնային Սերի դաշնագրի փոփոխման համար: Դայաստանի առնչությանը ընդունվում է հետևյալ ծավալությունը. «**Դայոց կացությունը առնված է մասնավոր նկատառման, որքան պատերազմի ընթացքին դաշնակից պետությանց կողմեւ եղած հանճնառությանց, նույնքան այս ժողովրդին կրած դառն տառապանքներուն համար:** Ուստի խնդրված է Ազգերի ընկերակցության աջակցությունը, որպեսզի փոքրամասնությանց տրված երաշխավորություններն զատ գոհացում տրվի հայոց ավանդական ազգային իդեորուն և անոնց համար Ազգային Տան մը հաստատմանը»:

Այսպիսով՝ Սերի ազատ անկախ Դայաստանը մեկ տարի անց Լոնդոնում դարձավ բացարձակ անկախ «Ազգային տուն», իսկ Փարիզում մեկ տարի ևս անց վերածվեց Ազգերի լիգային ուղղված խնդրագրի հաշվի առնելու «Ազգային տան» ստեղծման հնարավորությունը: Եյու Յորքում հրատարակվող «Ազատ կարծիք» անկուսակցական պարբերականը ուղղակի գգուշացնում էր, թե Ֆրանսիան հերթական մի թակարդ է դնում հայության առօս: Թիրախսը ընտրված էր հատկապես Ֆրանսիան, որովհետև այդ պետությունն օգտագործեց հայկական կամավորական զինյալ ուժը Թուրքիայի դեմ մղված նարտերում փոխարենը տալով շոայլ խոստումներ ու հավաստիացումներ: «**Ֆրանս-Արմենի ընկերությունը... արքնցեր է հանկարծ,— գրում է թերթը,— ու մատուցեր ֆրանսիական հանրապետության նախագահին հիշատակագիր մը ի նպաստ հայ Ազգային «օջախի»:** Դայերու մեկ հատվածը կը տոնե մեծ ուրախությամբ Ֆրանս-Արմենի ընկերության այս թայլը՝ առանց նշանառել թվելու, թե Ֆրանս-Արմենի կը ժառայէ ֆրանսիական կառավարության թարուն ծրագրերուն: Ֆրանսիա, որ ոգի ի բոյն միշտ աշխատած է մատնել Սերի դաշնագիրը անզորության, կաշխատի կուրացնել կարգ մը հայեր և անոնց Անգլիայի ու Ամերիկայի բարեկամները հայ Ազգային օջախի մը խարուսիկ ծուխովը, որպեսզի ավելի ոյուրավ հաջողի իր դավադրության մեջ»:

Անհիմն չեր հնչակյան գործիչ Մ. Դավիթ-թեսի դառն հեզնանքը. «**Ուր է առաջին հիշատակագրին «Ծովե-ծով» ծրագիրն ու այսօրվան համեստ, մանրադիտական պահանջն, որուն ուրիշ հարմարագույն**

անուն մը չգտնելուն «երդ» (օքախ) հորջորջումը կը տրվի՝ սպասելով անշուշտ, որ այդ «երդն» ալ ուրիշ հավանական նահանջներու բերմամբ, վերածվի «բույնի» ու հետո՝ «բջջի»:

Այս գուշակությունը, տարարախտաբար, արդարացավ: Սեպտեմբերին Ազգերի լիգայի նստաշրջանում հարցը այս անգամ ծևակերպվեց որպես պարզ մի ցանկություն, որպեսզի Թուրքիայի հետ խաղաղության բանակցությունների ժամանակ հայոց «Ազգային տաճ» խնդիրը անուշադրության չմատնվի: Նույնիսկ այդպիսի մի ծևակերպումը պահանջեց 46 պետությունների համաձայնությունը:

Միանգամայն իրավացի նկատում է Գերսան Ահարոնյանը, որ Ազգերի լիգայում հարցի փոխակերպումը սուսկական ցանկության արդեն իսկ նշանակում էր, թե ամբողջ Վիրխարի ջանքը ժամանակի պարզ վատնում էր: «**Եցմարիտ է,— նկատում է նա, — Սփյուռքում այդ ցանկությունը բարձրացրեց մեր էնտուզիազմը որոշ ժամանակի համար, և մեր գրույցների թեման դարձավ Ազգային տունը: Բայց այդ ցանկությունն էլ, որը այլապես մի զուտ խարկանք էր, անիմաստ դարձավ, քանի որ Քեմալը մերժեց այն»:**

Իսկապես, զարմանալ կարելի է, որ շատերը շարունակում էին ակնկալել, թե 1922 տարեվերջին իրավիրվող Լոգանի խորհրդաժողովը կարող էր որևէ դրական պատասխան տալ հայոց ազգային տեխնանընթին: Ըստ երևոյթին խաղը պետք է հասներ իր տրամարանական ավարտին, նույնիսկ հանուն պատմության դաստատանի:

1922 թվականի նոյեմբերի կեսերին սկսվող խորհրդաժողովի նստաշրջանին Ազգային պատվիրակությունը Գարդիել Նորատունկյանի գլխավորությամբ, և Դայաստանի Դանրապետության պատվիրակությունը Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ մի համատեղ հուշագիր ներկայացրին: Եթե կետ էր հանձնվում հայքական դաշնակիցների ու շահորությանը պարտված Թուրքիային պարտադրելու համար. 1. Ստեղծել Դայկական Ազգային տուն և նրա համար ապահովել ելք դեպի ծով: 2. Եթե այդ վճիռը անհնարին նկատվի, Երևանի հանրապետությանը կցել Արևմտյան Դայաստանից մի հողամաս: 3. Թննության առնել Կիլիկիայի որևէ վայրում Դայոց Ազգային տուն ստեղծելու ծրագիրը: Տեղի ունեցավ, սակայն, ճիշտ հակառակը: Պարտված Թուրքիան պարտադրեց իր կամքը հայքականներին:

Խորհրդաժողովից առաջ Լոգանում թուրք պատվիրակներ Խամեր Խնեմյունի և Ռիզա Նուր Բեյի հետ հանդիպումներ են ունենում Ազգային

պատվիրակության ներկայացուցիչներ Գ. Սինապյանը և Լ. Բաշալյանը, այնուհետև նաև պատվիրակության ղեկավար Գ. Նորատունկյանը: Թուրք պատվիրակները հայտարարում են, թե իրենց համար գոյություն չունի Հայոց տուն տրամադրելու խնդիր: Խորհրդաժողովի ընթացքում թուրքերի ղիրքորոշումը անընդիատ ու անընդիատ կարծրանում է, մինչև իսկ հանդուգն դառնում:

Նոյեմբերի վերջերին հայ մամուլը ղետոս լավատեսությամբ է տրամադրված: Ժամանակի ամենահեղինակավոր թերթերից մեկը՝ «Հայատանի կոչնակը», գրեթե վստահ է, որ հայոց խնդիրը դրական լուծում պիտի ստանա: Թեպես ղետոս հայոց մասին պաշտոնական հիշատակություն չկա, արծանագրում է թերթը, բայց մեր հույսն այն է, թե Ամերիկայի և Եվրոպայի բարեկամների ջանքերի շնորհիվ Հայկական «Ազգային տան» խնդիրը պիտի դրվի սեղանի վրա:

Նույն է պնդում «Հայենիք» ամսագիրը: «**Ամբողջ հայության հայցը ուղղված է այսօր Լոգանի խորհրդաժողովի վրա**.— գրում է նա:— Որքան ալ աննպաստ ըլլան միջազգային պայմանները մեր հարցի գոհացուցիչ լուծման համար, որքան ալ աղոտ ու տկար ըլլան խորհրդաժողովին հետ կապված հույսերը, այնուամենայնիվ, ամեն մեկ հայ մը կը սպասե, ավելի ծիշտ՝ կուգե բան մը սպասել Լոգաննեն՝ կատարյալ հուսախարության չը մատնվելու համար»:

Ղեպերն այնուհետև զարգանում են ասես բատերաբեմի վրա: 1922 թվականի նոյեմբերի 29-ին փոքրանասնությունների ենթահանձնաժողովը անպաշտոն կերպով ունկնդրում է բուզարացի, հայ և ասորի պատվիրակներին՝ իր եզրակացությունները Ռազմատարածքային հանձնաժողովին ներկայացնելու համար: Թուրքիայի շահերը ներկայացնող ՈՒզա Նուր Բեյը նոյեմբերի 28-ին հետևյալ նամակն է հղում ենթահանձնաժողովի նախագահ Մոնտանային (Խոտալիա): «**Երեքշաբթի, օրակարգի վրա, որ հաղորդված է ինձ, զարմանքով տեսա, որ բուզար և հայ պատվիրակություններ պիտի լսվին ենթահանձնախումբին կողմե... Ես բուն կերպով կը բողոքեմ, և եթե, հակառակ բուրք պատվիրակության բոնած ընթացքին, այս երկու պատվիրակություններն ընդունվին ենթահանձնախումբին մեջ, չեմ կրնար ընդունել, որ ասիկա ըլլա պաշտոնական նիստի մը պահուն և հիշվի ատենագրության մեջ: Ասպիսի նիստ մը մեր կողմեն չեղյալ պիտի համարվի»:**

Իր հերթին Թուրքիայի պատվիրակության ղեկավար Խմեթ փաշան

ηαշնակից երկրների պատվիրակություններին կտրականապես գգուշացնում է. «Թուրք պատվիրակությունը չի կրնար ընդունել, որ խորհրդառողովին մասնակցին հրավիրված պետություններն դուրս ոչ մեկ պետություն և միություն... Եթե հայ պատվիրակությունը հրավիրվի խոսելու հանուն թրահայոց, ասիկա միջամտություն մըն է, որ բուռն կերպով կը մերժեմ»:

Դեկտեմբերի 12-ին Ուզմատարածքային հանճնաժողովի տասներեցրորդ նիստում բացման ճառով հանդես եկավ Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր լորդ Քերգոնը: Նենց այդ նիստում էլ առաջին անգամ շոշափվեց հայոց խնդիրը: Քերգոնը խմօժիայլոց նաև ասաց. «Այժմ ես պետք է վկայակոչեմ հայտնի պահանջը, որ հայերը և նրանց բարեկամները աշխարհի բոլոր մասերում առաջադրում են հայոց Ազգային տուն կառուցելու վերաբերյալ: Բնավ անբնական չէ, որ այդպիսի ուժեղ անհատականությամբ, այդպիսի ակնառու, թեպետ ողբերգական պատմությամբ և այդպիսի արթուն ազգային ոգով մի ժողովուրդ պետք է տենչա իր սեփական տարածքին: Եթե ինձ պատասխանեն, թե հայերն արդեն ունեն իրենց սեփականը երևանի հանրապետությունում, պատասխանը կլինի հետևյալը, թե այդ տարածքն արդեն իսկ աղքատության ծիրանների մեջ է և հյուծված, և թե այնտեղ հաստատված վարյաձնը շատ հայերի համար ընդունելի չէ:

Այսպես ուրեմն, հարցը դրված է և հաճախակի կրկնված, որ Թուրքիան պետք է հայերի համար իր ասիական տարածքի որևէ մասում կամ հյուսիսարևելյան գավառներում, կամ էլ հարավարևելյան սահմաններում՝ Կիլիկիայի և Սիրիայի միջև, գտնի նրանց համար մի վայր, որպեսզի ապաստանեն և կենտրոնանան այնտեղ, ինչպես որ իրենք ըղծում են:

Իրադարձություններն այժմ թերևս ավելի դժվարացրել են այս հույսի լրումը, քան մի ժամանակ էր: Բայց մենք ուրախ պիտի լինեինք լսելու թուրքական պատվիրակության տեսակետը խնդրո առարկա հարցի շուրջ»:

Ահա այս խոսքն է, որ պատմության մեջ գրանցվել է որպես կարծր, խիստ ճառ: Վերջին նախադասությամբ Քերգոնն, ասես, քաջալերուն է թուրքերի ակնկալվող պատասխանը: Արդյոք պատահական պիտի համարել, որ Փարիզի «Թան» լրագիրը անմիջապես թրքանպաստ մեկնարանություն է տվել Քերգոնի ելույթին: Այդ առթիվ Մ. Վարանոյանը զայ-

բույրով գրում է. «**Ձերզոնի ճառին հաջորդ օրն իսկ փարիզյան «Թանը», Եվրոպայի ամենեն անառակացած ու, սակայն, տարաբախստաբար, հեղինակավոր թերթը, անսովոր փուրեկոտությամբ մը կը հանգստացներ թուրքերը՝ հայտարարելով ի լուր էնկյուրիի և Լոգանի բուրք պատվիրակության, թե անոնց հասցեին ուղղված սպառնալի ճառերը ծերի համար են միայն, և թե հայկական խնդրի պատճառով քոնֆերանսը երբեք պիտի չխզվի, ու նույնիսկ Դայոց հարցը բնակ պիտի չմտնի գալոց դաշնագրին մեջ»:**

Ձերզոնի ճառին ընդարձակ պատասխան է տալիս Խմբեր փաշան փորձելով ապացուցել, թե Օսմանյան կայսրության ամրող պատմության ընթացքում հայերը և բոլոր փոքրամասնությունները հալածանքների չեն ենթարկվել: Խսկ եք պատահել է նման բան, ապա մեղավորը առաջին հերթին ցարական Ոուսաստանն է, ապա հենց իրենք՝ հայերը: «Այսպիսով՝ բոլոր աղետների պատասխանատվությունը, որոնց Օսմանյան կայսրությունում ենթարկվում էր հայկական տարրը, ընկնում է հենց իր՝ նույն տարրի վրա,— պնդում է Խմբերը,— որովհետև կառավարությունն ու բուրք ժողովուրդը առանց բացառության սոսկ այն դեպքերում էին դիմում ռեպրեսիվ միջոցների և փոխանցումների, երբ նրանց համբերությունը իսպառ հատնում էր»:

Թեպետ լորդ Ձերզոնը ծաղրում է Խմբեր փաշային պատմաբանական գրոսանքի առիվ, բայց վերջինս, ըստ Եռթյան, հստակ մատնանշում է բուրք կառավարության ու ժողովրդի,— մանավանդ այս կետը խիստ հետաքրքրական է ժողովրդի,— այլազգիների նկատմամբ ռեպրեսիվ միջոցների, ինաւ հաշվեհարդար տեսնելու կերպը կամ ծեռագիրը, որը նույնն է հիշյալ ժամանակներից ի վեր մինչև այժմ: Եթե հայը այլևս հրաժարվի ստրուկ մնալ և փորձի ազատագրվել, կամ արդիական բառով ասած՝ ինքնորոշվել, ապա նա կստիպի, որ բուրք կառավարության ու ժողովրդի համբերությունը սպառվի: Մնացածն արդեն հասկանալի է:

Սեծապես հետաքրքրական է ԱՍՆ-ի պատվիրակության դիրքորոշումը նկատի առնելով մանավանդ, որ ԱՍՆ-ը մասնակցում էր դիտողի հանգամանքով:

Նեկտենքերի 30-ին ԱՍՆ-ի դեսպան Շայլդը փոքրամասնության Ենթահանձնաժողովին մի ծանուցագիր է հանձնում «իր կառավարության անունից», որի մեջ արձանագրված է, որ եք հայերին Ազգային տուն չտրվի, Փոքր Ասիայի մեջ անկարելի պիտի լինի խաղաղությունը վերահաստատել: Ծանուցագրի մեջ նշվում է նույնիսկ այդ «Տան» տեղը՝ Սի-

Իիհայի հյուսիսային կողմում Կիլիկիայի հողամասում որպես պատվար Թուրքիայի և Սիրիայի միջև: Ավելին, հայտարարված է, թե «Ազգային տաճ» ստեղծնան համար կոնգրեսը պատրաստ է 20 միլիոն դոլարի վարկ քվեարկելու:

Դաջորդ օրը Կաշինգտոնից ստացվում է մի հեռագիր, որը գալիս է ամբողջովին շրջելու Չայլդի ծանուցագիրը: «Ապագա» շաբաթաթերթը այսպես է վերապատճում այդ հեռագիրը. թե իր ամերիկյան կառավարության խնդրանքի վրա չի եղել նման հարցադրում: Դայոց համար «Ազգային տուն» հիմնելու առաջարկը պարզապես ամերիկյան մի շարք մարդասիրական ընկերությունների ցանկությունն է: «Գրեթե ստույգ է, որ կառավարությունը Չայլդի միջոցով ժանուցած է, թե կը փափագի հայերը այս կարգի պաշտպանության առարկա եղած տեսնել, սակայն, այս պաշտպանության առնելիք ծեխն մասին կանխորոշ միտք մը չունի: Այս առթիվ Քոնգրեսին ներկայացուցած ժրագիրները կառավարության ժրագրին մասը չեն կազմեր»:

Դեկտեմբերի 12-ի նիստի հատկանշական երևույթներից մեկն էլ Սերբիայի ներկայացուցիչ Սփալիակովիչի ճառն էր, որի մեջ նա դիտեց, թե Խմեթ փաշան գրադկած էր միայն ցարական Ռուսաստանը մեղադրելով ու Արդուլ Ջամիլ սուլթանին անվերապահ պաշտպանելով: «Իմ խնդիրը չէ պաշտպանել առաջինը կամ հարձակումներ գործել երկրորդի վրա,— ասաց նա,— բայց ես կուգեի մի քանի կարծ նկատառումներով շտկել Խմեթ փաշայի բույլ տված մի խոշոր սխալը:

Օտտոմանյան կայսրության վերջին հարյուրամյակի պատմությունը չի կարելի բացատրել պարզապես թվարկելով Թուրքիայի դեմ Ռուսաստանի և նրա գործակալների հարձակումները: Թուրքիայի անցյալը բնորոշող երկու գործոն կա: Խմեթ փաշան նշեց միայն դրանցից մեկը՝ արտաթինը... Այդ տեսակետից Խմեթ փաշան իրավացի է: Բայց նա սխալվում է, երբ ասում է, թե «վերջին հարյուրամյակի ընթացքում Քալկաններում տեղի ունեցած բոլոր ապստամբությունները հրահրված էին ցարական Ռուսաստանի կողմից»: Նման մի հայտարարությունը ցույց է տալիս, որ Խմեթ փաշան արհամարհում է երկրորդ գործոնը, որը գերակշիռ դեր է խաղացել Օտտոմանյան կայսրության ճակատագրում: Այդ գործոնը զգացումն է Քալկանների քրիստոնյա ազգերի, որոնք անկարող էին մոռանալու իրենց ազգային իդեալները: Այդ ազգերի գգտումներն էլ նրանց ազատագրական պայքարի հիմնական լժակներն էին»:

Սերբիայի ներկայացուցչի խոսքը լուրջ հակահարված էր թուրքական «գիտական» պատմագրության թե պատմության մեկնարաննան պետական պաշտոնական վարկածին, ըստ որի՝ Օտտոնանյան կայսրությունը եղել է տարրեր ազգությունների համար դրախտ, և ամեն մի շարժում հարուցվել է միայն դրսից արմատ չունենալով երկրի ներսը գործող ոչ արտադրական հարաբերությունների, ոչ է կրոնական, ոչ իսկ ազգամիջյան փոխկապակցությունների մեջ:

նիշտ նույն նկատառումներն են հնչում հաջորդ օրը՝ դեկտեմբերի 13-ին լորդ Թերգոնի պատասխան խոսքում: Նա հիշեցնում է, թե ըստ Խ-մեր փաշայի՝ հայերը խիստ երջանիկ են ու գոհ՝ թուրքական կառավարության հայրական զգացումներով շրջապատված, և նրանց տառապանքները շաղկապվում են կամ նրանց սեփական հիմարությունների, կամ էլ ոուսների մեքենայությունների հետ: «Արդյո՞ք այս պատկերը համապատասխանում է փաստերին,— հարցնում է Թերգոնը և շարունակում:— Եթե նման երջանիկ փոխհարաբերություններն են մշտապես տիրել այդ երկու ժողովուրդների միջև, հապա ինչպես պատահեց, որ նախապես Փոքր Ասիայում բնակվող 3 միլիոն հայերի բվաքանակը հասավ 130 հազարի: Արդյո՞ք նրանք ինքնասպան եղան, կամ գուցե կամովին փախան: Ի՞նչ ճնշման հետևանքով է ստացվել այդ նվազումը: Եթե ֆրանսիական գործերը վերջերս պարպեցին Կիլիկիան, ինչո՞ւ այս երջանիկ, գոհունակ ժողովրդից 60-ից 80 հազար մարդ խուճապահար հետևեց ֆրանսիացիներին, որպեսզի ուրիշ վայրերում թշվառական կյանք վարի՝ իրենց ետևում ծգելով սեփական տներն ու ընտանիքները: Ինչո՞ւ այժմ հարյուր հազարավոր հայեր թափառական են աշխարհի բոլոր երկրներում, երբ նրանց անելիքը միայն մեկ բան պիտի լիներ՝ վերադառնալ թուրքական կառավարության սրտառուչ գիրկը: Ինչո՞ւ այս Դայկական հարցը աշխարհի ամենամեծ խայտառակություններից մեկն է»:

Սեկ օր անց՝ դեկտեմբերի 14-ի նիստում, Խամբ փաշան վիճարկում և հերքում է Թերգոնի բրոած փաստերը, միաժամանակ կտրականապես մերժում է հայոց «Ազգային տուն» հատկացնելու զաղափարը: Նա հակառակ առաջարկություն է անում, թե թող ուրիշ պետություններ իրենց հողանասերում նման «Տուն» գտնեն, թուրքերը թուրքիայում ամենուրեք կազմում են մեծամասնություն: Կիլիկիայում մասնավորապես կուվել են օտար նվաճողների դեմ և չեն լրի իրենց տունն ու տեղը:

Միանով հարցը, ըստ երբյան, փակվում է: Այլևս կարևոր չեր որևէ մե-

կի համար ցույց տալու, թե որքան անհիմն էին փաստարկները: Ամեն ինչ սահմանված էր նախապես, և որևէ փաստարկ, սխալ թե ճիշտ, կոչված էր միայն ծնական դեր խաղալու: Արդեն թերզոնի նամակը, որ նա գրել էր իր մի բարեկամին դեռևս գարնանը, և որից մեջքերում արվեց այս էջերում, խոսում էր այդ մասին: Այնուամենայնիվ, հարցի պաշտոնական փակումը խելամիտ է նկատվում կատարել ստորին օդակում: Խնդիրը, այդ պատճառով, հանձնվում է փոքրամասնությունների ենթահանձնաժողովի քննարկմանը:

Մի քանի տարի անց Ալեքսանդր Խատիսյանը այսպես է նկարագրում այդ վերջին արարը:

1923 թ. հունվարի 6-ին հրավիրվում է Ենթահանձնաժողովի նիստ, որը քննարկելու էր Յայկական հարցը քաղաքական հանձնախմբին ներկայացնելու համար,— պատմում է Խատիսյանը:— Ենթախմբի նախագահ Սոնտանան ճառով դիմում է թուրքերին խնդրելով հայերի համար վայր մը հատկացնել, որտեղ նրանք կարողանան կենտրոնանալ՝ երթմնի անկախ ու միացյալ Յայաստանի փոխարեն: Սա թուրքերին ներկայացված վերջին պահանջն էր: Նույն իմաստով ելույթ են ունենում նաև Սեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Յորաս Ռումբոլդտը և Ֆրանսիայի ներկայացուցիչ Դե Լա Կրուան: Վերջինիս խոսքը դեռ չլրացած ուղի է ցատկում Թուրքիայի պատվիրակ Ռիզա Նուր Բեյը, կտրուկ հայտարարում է, թե ինըք չպիտի մասնակցի այնպիսի մի նիստի, ուր քննարկվում է Յայկական հարցը: Ապա իր խորհրդականների հետ զարկում են դրույ և հեռանում: Ահա և վերջ: Լոգանի արծանագրության մեջ չկա նույնիսկ պատիկ հիշողություն անգամ մեր մասին,— դառնությանը նկատում է հեղինակը:

Ա. Խատիսյանը հաղորդում է նաև, թե «Յայաստրերի լիգայի» անդամ Կրաֆտ Բոնարը փորձել է համոզել Ռիզա Բեյին և ստացել է խիստ հատկանշական, գրեթե թուրքական սովորույթների բնազմացականությունը հաստատող պատասխան: «*Լավ իմացեք, որ եթե պատիկ գիքում մը իսկ ընենք հայերուն, մենք չենք կարող այլևս վերադառնալ Թուրքիա: Մեզ կը սպանեն ծանապարհին իսկ*»:

Վերջաբանը անսպասելի չէր, թեև շշմեցուցիչ: Նույնիսկ եվրոպական մասունի շատ օրգաններ չեն կարողանում անտարեր անցնել: «Դերայի» խմբագրապետ Գովենը, օրինակ, արդեն հունվարի 9-ին գրում է: «*Լոգանի խորհրդաժողովին վեց շաբաթ ի վեր մեզի առքած դառնությանց մեջ ամենեն սրտածմլիկը այն կատակերգությունն է, որ կը*

իսաղացվի ի վնաս հայոց: Պատերազմի ընթացքին և անկե վերջ այն-քան հանդիսավոր խոստումներ ընելե և անկախ հայկական պետու-թյան մը գոյությունը ծանչնալե Ետք դաշնակից կառավարություննե-րը հայերը բոլորովին կը թողուն զիրենք հալաժողներուն ձեռքը»:

Լոգանի խորհրդաժողովում քաղաքականի կողքին զանազան տնտե-սական շահերը ըստ երևույթին այնքան ցայտուն են դրսերպվել, որ մա-մուլը (օտար թե հայ) անմիջապես զգացել է այդ հիմնական զարկերակի տրոփյունը: Փարիզի «Ապագան» դեռ դեկտեմբերի սկզբներին նկատում է. «Լոգանի խորհրդաժողովը պահ մը քաղաքական հարցերու լուժ-ման վայր մը ըլլալե ավելի, երևույթը առավ տեսակ մը խաղասեղա-նի, որուն շուրջ հավաքված են տնտեսական ախորժակներ ներկա-յացնող խմբակներ կամ անհատներ՝ մեծտեղ դնելով իրենց ստացա-կան կամ ենթադրական իրավունքներն իբրև խորհրդանիշ»:

Լոգանի խորհրդաժողովին գուգահեռ դեռ 1922 թվականի աշնանից ընթանում էին թուրք-ամերիկյան բանակցություններ, որոնք ավարտվե-ցին համապատասխան մի դաշնագրի կնքումով, ճիշտ նույն Լոգանում 1923 թ. օգոստոսի 6-ին, այսինքն՝ Լոգանի խորհրդաժողովի ավարտից (24 հուլիս) մի քանի օր անց: Թե այդ օրերին, թե հետազայում մարդ-կանց պատկերացումները հաճախ շփորել կամ պարզապես խառնել են այդ երկու արտաքինից տարանջատ, բայց խորքի մեջ իրար սերտորեն առնչվող գործերը: Դա ըստ եռթյան նույն թեմադրության տարբեր փու-լերն են արտահայտում. ամերիկա-թուրքական բանակցություններում նշվում էր հիմնագիծը և կատարվում զվարակությունը: Խորհրդաժողո-վում իրականացվում էր ցուցադրանքը: Ուրեմն միանգամայն տրամա-քանական էր, որ նախապես որոշած լինելով չմասնակցել Լոգանի խոր-հրդաժողովին ԱՄՆ-ը շտապեց փոխել իր մտադրությունը և արոռ գրա-վեց այնտեղ դեսի հանգամանքով: Այդ ամենը դրսերվեց իբրև մի գոր-ծադր, որի պատճությունը, այլապես, մկանել էր դեռ շատ վաղուց:

1895-96 թվականներին սուլթան Շամիլի սանձագերծած կոտորած-ների ընթացքում, որոնց զոհ զնացին 300 հազարից ավելի հայեր, որոշ նյութական վնասներ կրեցին նաև Արևմտյան Շայաստանի տարածքում գործող ամերիկյան միսիոներական կազմակերպությունները: Խիստ «մտահոգվելով» այս կորուստների խնդրով՝ ամերիկյան իշխանություն-

Ըստ 1905 թվականին Պոլսի ջրերն ուղարկեցին «Կենտուկի» գրահանավը դերձովակալ Կոլբի Մ. Չեստըրի հրամանատարությամբ: Նրա խնդիրն էր ստիպել թուրքական կառավարությանը վճարելու համապատասխան փոխհատուցումը:

Սուլթանը դերձովակալին ընդունում է արքայական պատիվներով և ցույց է տալիս, թե որքան մեծ պատեհություններ կան ամերիկյան դրամագլխի համար Փոքր Ասիայում: Դաջորդ տարին Չեստըրը վերադառնում է Պոլիս, որպես արդեն պարզ անհատ, առաջ տանելու համար առևտրական ծրագրեր ճիշտ նրա առջև Դամիդի բացած հեռանկարի հունով: 1909 թվականին Չեստըրը նյու Յորքում հիմնում է Ottoman-American Development Co-ին (Օստանդան-Ամերիկյան զարգացման ընկերություն), որը վերակազմվում է 1921-ին: Լոզանի ժողովի նախօրյակին այս ընկերությունն Անկարայում համաձայնության է գալիս որոշ մենաշնորհների շուրջ: Որանց թվում էր Փոքր Ասիայում 2500 մողոն մի երկարուղու կառուցումը և նրա գույգ կողմերից 20-ական կիլոմետր տարածության վրա նավթահանքերի շահագործումը: Իսկ այդ հանքերը հիմնականում ընկնում էին Սոսուլի և Վիլսոնի նախազծած սահմաններով Դայաստանի հողերի վրա:

Ենթադրվում էր, որ այս մենաշնորհների հարցը պիտի արծարծվեր Լոզանի խորհրդաժողովում, մանավանդ որ հիշյալ հանքավայրերի վրա հավակնում էին նաև Անգլիան ու Ֆրանսիան: Թուրքերը բնակ չեին քաքցնում ԱՄՆ-ին գերադասություն տալու իրենց տրամադրությունը, քանի որ դրանով ակնկալում էին Լոզանի խորհրդաժողովում ամերիկյան դիվանագիտական պաշտպանությունը, ինչպես նաև ուզում էին մի խոշոր փոխառություն ծեռք թերել:

Չեստըրի խումբը ամենազորժուն պոռպազմության էր թուրքական ծրագրերի: Ուշադրության արժանի է, օրինակ, նույն ինքը Կոլբի Չեստըրի հոդվածը ամերիկյան «Current History» ամսագրի 1922 թվականի սեպտեմբերյան համարում «Թուրքիան վերամեկնարանված» խոսուն խորագրի տակ: Ահա թե ինչպես է վերամեկնարանում 1915 թվականի դեպքերը հանգստյան կոչված դերձովակալը:

«Այդ ժամանակ զանգվածային տեղահանությունները կատարվեցան, որովհետև թուրքերը կը վախնային, որ եթե այդ օտարական ժողովրդին (հայոց) ընթացքը անընդհատորեն շարունակվի, խոռվարարները (հայերը) իրոք պիտի մատնվեն փորձանքի: Թուրքերը չեին ուզեր այդ տեսակ միջադեպեր պատահին, թեև բնականարար

անոնց անհածո էր հայոց միջամտությունը Թուրքիո գործերուն՝ քաղաքական, կրոնական և ներքին: Ուստի հայերը փոխադրվեցան այդ անհյուրընկալ հողամասերեն, ուր չէին սիրվեր և չէին ալ կրնալ զարգանալ, տարվեցան Սուրիո ամենեն քաղցրահածո և ամենեն բարերեր վայրերը:

Ետոնաբնակները տարվեցան Միջագետք, ուր կլիման այնչափ առողջարար է, որչափ որ են Ֆլորիդա և Կալիֆոռնիա, ուր Նյու Յորքի միլիոնատերերն ամեն տարի կերպան առողջություն և զվարքություն գտնելու համար: Այս ամենը կատարվեցավ շատ ժախրով և մեծ աշխատությամբ»:

Կերոսի, թե դերձովակալը գուրկ չի եղել հումորի գգացումից, այլապես պետք էր խղճալ Նյու Յորքի այդ թշվառ միլիոնատերերին, որոնք տարվա մեջ միայն որոշ ժամանակ կարող էին վայելել երկրային դրախտը, իսկ Միջագետք «փոխադրված» հայերը կլոր տարին:

Ինչեւ, պրոպագանիզ նախապատրաստեց այն հողը, որի վրա Միացյալ Նահանգների կառավարությունը կտրուկ շրջադարձ կատարեց և որոշեց դիտորդի հանգամանքով մասնակցել Լոզանի խորհրդաժողովին: «Ահա թե ինչպես,— գրում է հարցի ուսումնասիրող Շահանը, — Միացյալ Նահանգները, Դյուզի (պետական քարտուղար՝ 4. Դ.) նախարարության միջոցով խցեց իր մեկուսացումը, բոյկոտը, թեկուց «դիտորդի» դիմակին տակ և եկավ Լոզան, ուր թուրք ներկայացուցիչները «Ստանդարտ Օյլի» թելադրանքով, թերեր էին կուժ մը նավք իրը նմուշ: Իսկ Դյուզի հոգին, որի համար նավքի հոտեն քաղցր ոչինչ կա, ինչպես կրնար հետու մնալ նավքի լոգանքեն, չէ՞ որ այդ պիտի ըլար ժխտում մը այլևս առածի կարգ անցած հյուզյան փառապսակին, թե «ցույց տվեթ նավքի հոր մը, Դյուզ ցույց կուտա նավքի քաղաքականություն մը»:

Բայց չէ որ Դյուզը ժամանակի ամենից շատ կուրծք ծեծած «հայսերներից» մեկն էր:

Շահանը ապացուցում է, թե քաղաքական գործի «հայասիրությունը» խսպառ ավարտվում է այն պահին, երբ իր պետության քաղաքական շահը ուրիշ բան է պահանջում:

Ֆրանսիայի պառլամենտը 1924 թվականի օգոստոսի 27-ին վավերացրեց Լոզանի դաշնագիրը, որը մինչ այդ վավերացում էր ստացել նաև Անգլիայի և Իտալիայի կողմից:

Ավարտվեց պատմական մի ամբողջ ժամանակահատված:

Այլս պետք է քակվեին ճամպրուկներն ու ծրարները, հայը պետք է փնտորեր ու գտներ իր մշտական ֆիզիկական թե ազգային կեցության ծեսերն ու կերպերը հենց նույն տարագրության մեջ, օտար երկինքների տակ: Կերծնականապես սկսում է ծնավորվել հայության որակական մի նոր վիճակը, որը հետագայում ստացավ Սփյուռք անվանումը:

2. ՍՓՅՈՒՐՔԱՑՄԱՆ ՇԱՐԺԵՆԹԱՑԸ

«Սփյուռք» բառը թեպետ «Պայկազեան բառարանում» տեղ էր գտել դիւնս նախորդ հարյուրամյակում, բայց իրև արտահայության նոր կացությունը անվանակոչող եղր, շրջանառության մեջ սկսեց որպես 1931–32 թվականներից: Խսկապես էլ, Լոգանից հետո շուրջ մեկ տասնամյակ տևեց հայ գաղթականության սփյուռքացնան, այսինքն օտար հորիզոններում սեփական բույն հյուսելու, գործ հայթայթելու, սերունդ հասցնելու, ազգային հավաքական կեցության խարիսխները ստեղծելու, մանավանդ, հոգեբանորեն հարմարվելու ժանր ու դրամատիկ պրոցեսը: Եթե Լոգանը վերջ էր դրել պատմության այս ժամանակահատվածում Արևնտյան Յայաստան վերադառնալու հոլուսերին, ապա քաղաքական հստակ գունավորումով մի ստվար զանգված դեռ ակնկալում էր վերադառնալ Արևնեյան Յայաստան տիրող վարչակարգի վերացման հետևանքով: Այդ ակնկալությունը, սակայն, հակադարձ համեմատական էր ԽՍԴԽ միջազգային ճանաչման ընթացքին: Եվ, բնականաբար, աստիճանաբար նվազում էր ու ամբողջովին մարեց 1933–ին, Ուլուզկելտի նոր քաղաքականության թերումով, որով ԱՄՆ-ը, խոշոր պետություններից վերջինը, ճանաչեց ԽՍԴԽ-ը: Այսպիսով՝ բոլոր կարգի հոլուսերի ու ակնկալությունների խորտակման վերջին սահմանը, կարծես, փակվում է 1933 թվականով:

Լոգանի ծախողանքը շփոթություն և նույնիսկ խուճապ պատճառեց գաղթահայ հասարակական օղակներին, միաժամանակ ասես խթանեց ազգի հետագա կեցության տարրեր ուղիների որոնումները: Ստեղծված կացության գնահատականները և նոր ուղիների մատնանշումները ոչ միայն միանշանակ չեին, այլ երբեմն տրամադրութեն հակառակ ընթացք էին թելադրում:

Կային մարդիկ և խմբավորումներ, որոնք անստույգ և սգավոր վախ-

ճան էին գուշակում նոր սերնդի համար, ինչպես, օրինակ, բանաստեղծ-ներ Պետրոս Զարոյանը և Զարեհ Որբունին: Նրանցից հեռու չեն ուրիշ-ներ, որ Լոզանի հետ փակված տեսան ազգային-ազատագրական պայ-քարի ամբողջ մի շրջանի պատմությունը և հետայնու սկսվող «նոր բա-նը», «նոր ժամանակը» տեսնում էին մշուշապատ և իր մոայլ անորոշու-թյամբ ահարկու: Կային, որ պահանջում էին աննիջականորեն գործի անցնել, արմատներ նետել, ազգային կյանք ստեղծել իրենց ապրած օ-տար, բայց հյուրընկալ միջավայրի մեջ, բացել ակումբներ, ընթերցարան-ներ, ժողովատեղիներ, թատրոն, վարժարան, մամուլ, եկեղեցի և այլն:

«Ուրեմն մի բան կը մնա մեզի:— գրում էր ամերիկահայ թերթերից մեզը 1924-ին,— այն է՝ հաստատվել Ամերիկայի մեջ: Արդ բանի որ կացությունը այսպես է, և մենք ստիպված ենք հոս հաստատվել, կարծե մտածել, թե ինչ կարելի է ընել հայ կյանքն ավելի հայկա-կան ու հաճելի դարձնելու»:

Բազմազան էր տարրեր գաղութեների հայության սոցիալական կազ-մը: Ստույգ տվյալները շատ քիչ են: Դալեափի գաղթակայանում կուտակ-ված հայությունը, օրինակ, հետևյալ պատկերն ուներ. արհեստավորներ՝ 15600, սևագործ բանվորներ՝ 6000, ծառայողներ՝ 360, առևտրականներ՝ 1125, ազատ ասպարեզի մարդիկ՝ 127: Պատկերը, թերևս, նույնն էր Սեր-ծավոր Արևելքի և Հունաստանի ուրիշ գաղթակայաններում: Արհեստա-վորական խավի գերակշռությունը քնավ էլ չէր նշանակում համապա-տասխան սոցիալական մակարդակի առկայություն: Աշխատանք հայ-թայթելը դարձել էր դժվարլութելի մի բնօւկ: Մրան ավելացնելիք է տասնյակ հազարավոր որբերի առկայությունը, որոնց մի մասը նույնիսկ գյուղատնտեսական աշխատանքների վաճառվեց Ֆրանսիա և Կանա-դա:

Տակավ առ տակավ ավելացավ հոսքը դեպի Եվրոպա և Ամերիկա: Ա-շոտ Մալաթյանի (Անրի Վեոնոյ) «Մայրիկ» վիպակը, որ արվեստագետը նկարահանել է ժապավենի վրա, հարազատորեն ներկայացնում է Ֆրանսիա ընկած հայության սոցիալական և հասարակական կացու-թյունը, վիճակի աստիճանական փոփոխությունը: Դայ տղամարդիկ, անկախ մասնագիտությունից, հիմնականում սկսում էին ստորերկրյա հանքախորշերից: Կանայք գործ էին ճարում սպասարկման ոլորտում, մասնավորապես լվացքատներում, կարուծելի մարզում: Դանքախորշե-րում կամ սպասարկման ոլորտում ընդգրկված այդ էժանագին աշխա-տումն էլ հաճախ կորցնում էր ապրուստի աղբյուրները:

Հատկապես ճգնաժամային տարիներին աշխատանքի իրավունքի համար գրեթե վճռական նշանակություն էր ստանում երկրի քաղաքացիությունը: Իսկ հայերի մեծամասնությունը չուներ քաղաքացիություն, կամ Նանսենյան անձնագրերով էր: 1929–1933 թվականների ճգնաժամը ապրուստի միջոցներից գրկեց տասնյակ հազարավոր օտարահպատակ ընտանիքների, այդ թվում և բազմաթիվ հայերի: 1931 թվականի որոշ կցկուուր տվյալները այնուամենայնիվ խոսուն են. Սեն Շամոնի Բոնսուլի երկարի գործարանը մեկ շաբաթվա մեջ դուրս է նետել 200 բանվոր, որոնցից 75-ը հայ, այսինքն՝ 35 տոկոսը: Գրենորլի վագոնի գործարանի 90 հայ բանվորներից մնացել են 40, Կալանսում 150-ից մնացել է 8–10 մարդ: Բրիանսոնի արհեստական մետաքսի գործարանից դուրս են ծագել 30 հայ ընտանիքներ:

«Օտարականները գրեթե ամբողջությամբ արծակված են Իգերի շրջանին Պուտես և Պուրկուան գյուղաքաղաքներուն մեջ, ուր բավականին թվով հայ բանվորներ կրցեր էին գործ գտնել, նույնիսկ ամենացածր գործերը», — հաղորդում է հայ մանուլը:

Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցությունը նախագիծ է նացորել խորհրդարան, որով արգելվում էր օտար բանվորների մուտքը Ֆրանսիա, իսկ Ֆրանսիայում բնակվող օտարներին մերժվում էր աշխատանքի իրավունքը, եթե տվյալ ծեռնարկությունում արդեն իսկ 10 տոկոսը օտար էր:

Ֆրանսահայությունը գործազրկությունը համարում է համագային աղետ: Որոշ մտավորականներ և գործիչներ (Ա. Սիարոնյան, Ս. Վրացյան, Շ. Միսաքյան և այլն) նույնիսկ դիմում են ֆրանսահայությանը այդ աղետի վերքերը դարձանելու համար տարեկան հինգական ֆրանկ մուծելու առաջարկությամբ (տոնական ծախսերից խնայելու ճանապարհով):

Փարիզի «Յառաջի» խմբագրապետ Շավարշ Միսաքյանի հաղորդման համաձայն (1929) սփյուռքահայության գրեթե 80 տոկոսը բանվորներ և գյուղացիներ էին:

Երեսնական թվականների կեսերին արդեն պատկերն ուրիշ էր: Գյուղացիական գանգվածը, որ առանց այն էլ մեծ չէր, մնում է հիմնականում Երանում և Սիրիայում նախկին համամասնության չափերով, իսկ Ամերիկայում, Կանադայում, Ֆրանսիայում աստիճանաբար նվազում է: Սերծավոր Արևելքում, Ամերիկայում թե Եվրոպայում ճնշող գերակշռություն է ստանում սեփական փոքրիկ գործի տեր (մանր արհեստա-

վոր-առևտրական) տարրը: Սոցիոլոգիական բոլոր կարգի տեսություններով չնախատեսված մի կացություն, երբ ճգնաժամի բերումով փողոց նետվածք կարողանում է հայտնվել սոցիալական մի նոր, համեմատաբար ավելի բարեկեցիկ աստիճանի վրա: Դա հենց «Մայրիկների» տասնամյա քրտնաշան աշխատանքի արդյունքն էր: Հայության սոցիալական կացության մեջ տեղի էր ունենում մի զարմանահրաշ երևույթ, ընտանիքի արական կազմը դուրս էր գալիս հանգախորշերից ու գործարանների բունավոր արտադրամասերից, իր ծեղզը վերցնում ընտանիքի իզական կազմի նախաձեռնությունը, ընդլայնում գործը, ծեղոնարկում նորերի: Սամիկների մի կատարյալ հեղափոխություն, որը վարպետորեն արտացոլել է Անրի Վեռոնյը:

Գաղրահայության նյութական վիճակի աստիճանական բարվորումը, բնականաբար, նրա ֆիզիկական գոյապահպանության առաջին պայմանն էր: Սոցիալական խնդրի դրական լուծնան միտումին գուգահեռ անընդհատ ավելանում էին հայության իրու երնիկական փորբամասնության, հավաքական գոյապահպանության մեխանիզմի նյութական խարսխի հնարավորությունները: Քսանական-երեսնական թվականներին ոչ միայն պահպանվեցին արդեն իսկ եղածները, այլև ստեղծվեցին նոր եկեղեցական թեմեր, եկեղեցիներ, մամուլի օրգաններ, գրահրատարակչական գործը, կրթական ցանցը, բարեսիրական, հայրենակցական միություններ, մտավորական ու մշակութային միավորումներ: Դրվեց Սփյուռքի ազգային կեցության հիմքը:

Սփյուռքի պատմությունը կարելի է, թերևս, բաժանել մի քանի փուլերի՝ գոյավորման փուլ, ինքնահաստատման փուլ, զարդումի փուլ:

Սուածին փուլ՝ Սփյուռքի գոյավորման շրջանի պատմությունն ու սումնասիրելը հատկապես անհրաժեշտ է, որովհետև հենց այդ ժամանակահատվածի մեջ են սաղմնավորվում և զարգանում բոլոր պրոցեսները, որոնք այսօր իսկ գործուն ազդեցություն ունեն զարդաշխարհի հավաքական թե առանձին համայնքների հանրային կյանքի վրա: Դենց այնտեղ են գտնվում հայ ազգի արդի շրջանի քաղաքական կյանքն ալեկոծող այլազան հարցերի արմատները: Ժամանակաշրջանների նմանությունը թե՛ քսանական թվականներին, թե՛ հետագայում իննաւունական թվականներին, երբ ազգը կանգնած էր, իր հետագա ճակատագրի առումով, թեկումնային մի ճամփարաժամի առջև, հաճախ առաջադրում էր ոչ միայն նույնատիպ հարցեր, այլև նույնատիպ տրամարանություն ու վերլուծություն, նույնատիպ առաջարկություններ ու լուծումներ:

Պատմության անթեկանելի, այլև ցավալի բերումով Սփյուռքի գոյավորման պրոցեսն ընթացավ քաղաքական անհաջող պայքարի պայմաններում, երբ կողմերը, միշտ խոսելով հայ ժողովորի հավաքական շահերի անունից, գործնականում գրեթե միշտ հետապնդում էին կուսակցական քաղաքական շահեր, ծգտում մենատիրության Սփյուռքի համայնքներում կամ նրա ամբողջ տարածքով մեկ: Այդ պայքարը, ինչպես առաջին գլխում ենք նշել, պաշտպանվում, հրահրվում, թեժ էր պահվում Խորհրդային Հայաստանի պաշտոնական քաղաքականության և քարոզության միջոցներով: Ժողովորի պատմության վերջին հարյուրամյակի, առնվազն Մեծ Եղեռնի հրամայական թելադրանքն էր ազգային միասնությունը: Սփյուռքահայությունը, սակայն, կանգնեց խոր պակտման Եղելության առջև:

Դիմնահարցը, բնականարար, գաղթահայության ազգային կեցության ուղիների որոնման խնդիրն էր, որն իր հերթին Ենթադրում էր գտնել օրվա ամենահրատապ հարցերի պատասխանները. Վերաբերմունքը դեպի Խորհրդային Հայաստանը, ԽՍՀՄ-ը (Ռուսաստանը), Թուրքիան, Հայ դաստի ընկալման և հետապնդման կերպերը, մշակութային ինտեգրացիան և ապամշակութացման երևույթները և այլն:

Բոլոր այդ հարցերը կարոտ են հիմնական լուսաբանության:

Արդեն 1920-ի ուշ աշնանից գաղթահայության հայացքը սկսել էր հառվել Խորհրդային Հայաստանին: Լոզանի ծախողումից հետո ուշադրությունն ավելի սեռովեց նորաստեղծ հանրապետության վրա՝ իր նույնականության վերքի: Հարցը միայն այն չէր, թե երկիրը պիտի կարողանա՞ր արդյոք ընդունել բռնագաղթած հայությանը կամ գեր տասնյակ հազարավոր որբերին: Պարզապես հայությամբ բնակեցված և հայությամբ կառավարվող հայրենի հայկական հողամասի գոյության իսկ վիճակը ազգային կեցության ամենակարևոր կովաններից մեկն էր օտար ափերին կառչած հայ մարդու համար:

Խորհրդային վարչակարգը, որ գաղափարախոսական հանգանակի տրամաբանությամբ մերժում էր ազգային գետնի վրա միասնության գաղափարը, ավելին, ջանում էր հասնել գաղթահայության դասակարգային շերտավորման, փորձ իսկ չարեց ընդառաջելու Լոզանի ծախողանքով ստեղծված Խորհրդային Հայաստանին մերձենալու գաղթահայ զանգվածի գրեթե համընդիանուր հոգեբանական պատրաստակամությանը:

Ըստ Էւրիյան, դա պատմական տարրողության մի խոշոր վրիպում էր,

որի պատճառով շատ ավելի դժվարին ու ծանր ուղի անցավ սփյուռքահայությունը թե՝ գոյավորման, թե՝ ինքնահաստատման փուլերում:

Դեռևս 1924 թվականին պատմաբան Արշակ Ալպոյանցին գրում էր. «Դժբախտաբար Հայաստանի վարիչները բավականաչափ հասունություն չունեցան այս բացառիկ հոգեբանական պահեն օգտվելու կամ առաջադրված սխալ տեղեկություններեւ կամ բոլորովին կամքեանկախ պատճառներով,— ամրապնդելու համար խորհրդային Հայաստանի դիրքը, եթե ոչ իր քաղաքական հոգանավորող ուժը Հայաստանի անձուկ սահմաններեն դուրս հայց, այլ գեր իր անոնց բարոյական առաջնորդը, և Երևանը դարձնել ազգային ընդհանուր միության կեդրոն մը»:

3. ԶԱՆԱՉԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ

ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒԵՇՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Քսանական թվականների սկզբների գաղթահայ քաղաքական ուժերից միայն ՀՀ դաշնակցությունը չէր համակերպվում հոգեբանական այդ պատրաստականության հետ: Իրու պահի մարտավարություն (տակտիկա) նա ընտրել էր քարոզչության մի թիրախ, որով անընդհատ ազդարարում էր խորհրդային իշխանության շուտափութ անկումը: Մարտավարական այս հնարանքը, սակայն, կոչված էր քողածածկելու ռազմավարական (ստրատեգիական) մակարդակով տեղի ունեցող արմատական փոփոխությունը, որին ծեռնարկել էր կուսակցության դեկավար կորիգի մի մասը:

Ըստ Էռլթյան, տեղի էր ունենում կողմնորոշման վերատեսչություն ռուսականից դեպի թուրքական:

1923 թվականին Վիեննայում ՀՀԴ խորհրդաժողովը շրջաբերական ուղարկեց տեղերին, որի մեջ բացակայում էր հակաթուրքական որևէ գրառում: Ռ. Դարբինյանի գնահատությամբ՝ այդ ժողովը ընդունել էր հակառակ արևելյան (օրիենտացիա): Լոզանի ծախողանքից հետո հայ զանգվածի ակնհայտ հակումը դեպի խորհրդային Հայաստան Ռ. Դարբինյանն անվանում է «ստրուկներու հոգեբանություն», խնդիր է

դուստր պատմության մեջ մեր ժողովրդի տարերային ռուսասիրության պողոքումները», մեջքը դարձնել Ռուսաստանին և բարեկամանալ Թուրքիայի հետ։ Ըստ նրա՝ հայությունը ուրիշ ելք չուներ։

Ստրատեգիան այդպես ոյուրին և բացահայտ փոխել, սակայն, այդ պահին անհնարին էր։

ՀՅ դաշնակցության մեջ բավականին գորեք էր նաև ռուսական արևելումին հարող հեղինակավոր գործիչների խումբը։ Դարբինյանի և իր տեսակետը պաշտպանող ուրիշների դեմ ծայր առաջ բավականին լուրջ քննադատության պայմաններում (Մ. Վանարյան, Վ. Նավասարդյան), 1924 թվականի փետրվարին 2-րդ Միջազգայնականի (Ինտերնացիոնալի) բանաձևի մեջ ՀՅԴ պատվիրակության առաջարկով հարց չի դրվում ոչ բոլշևիկյան վարչածես տապալելու, ոչ էլ Դայաստանից ռուսական գործը դուրս բերելու մասին։ Դատկանշական է Դրոյի կարծիքը (1925 թ.)։ «**Դայ ժողովուրդը, — ասում է նա, — և անոր ամենեն հակառակնեկ տարրն անգամ չի բաղձար, որ ներկա պայմաններուն մեջ Կարմիր բանակը հեռանա Դայաստանի սահմաններեն»։**

1924-ի վերջերին կայացած 10-րդ համագումարը որոշակի սրբագրեց Վիեննայում ընդունված բանաձևը։ Թուրքիայի նկատմամբ հայտարարվում է աննկուն կեցվածք, Ռուսաստանի ճակատում՝ գաղափարական անհաջող պայքար, Խորհրդային Դայաստանի հարցում՝ գաղափարական նույնպիսի պայքար, բայց, միաժամանակ, պատրաստակամություն սատարելու երկրի տնտեսական զարգացմանը։

Դամագումարն ընտրեց դեկավար մարմին՝ ՀՅԴ բյուրո, որի հիմնական կազմը գորեք անմիջապես մեկ կողմ դրեց կուսակցության հավաքական կամքը՝ 10-րդ համագումարի որոշումը, և գործնականում անցավ բուրժամետ ռազմավարության իրականացմանը։ Դայ դատի դասկան բովանդակությունը շարունակվեց աստիճանաբար փոխակերպվել։ Ա. Վրացյանը, Ռ. Տեր-Մինասյանը, Ա. Զամայանը, Ռ. Դարբինյանը և ուրիշներ մինչև երեսնական թվականների կեսերը հաջողեցրին փոխել Դայ դատի առարկան։ Դայ ազգի հիմնական թշնամին այլևս համարվում էր խորհրդային վարչակարգը, ազատ և անկախ Դայաստան ասելով այլևս հասկացվում էր ոչ թե պատմական Դայաստանի կորցված տարածքների վերադարձը, այլ Արևելյան Դայաստանի ազատագրումը բոլշևիկյան լծից։ Մյուս կողմից բավականին հետևողական համառությամբ մամուլում հրապարակվում էին նյութեր, որոնք կոչված էին ապացուցելու, թե Թուրքիան կանգնած է քաղաքական, ժողովրդագրական,

տնտեսական և մշակութային քայլայման եզրին, թե նա որևէ վտանգ չի կարող այլև ներկայացնել, քանի որ բուրք ազգը անկարող է առաջադիմության և ապրում է բարոյալքության անկասելի շարժընթաց:

10–րդ համագումարը, իբրև խոչընդոտ, շրջանցվեց:

Կովկասյան ազգերի հակախորհրդային պայքարի («Պրոմեթե») կազմակերպական (ոչ գինված) օդակների հետ շփումները դարձան իրողություն: ՀՀԴ բյուրոյի հինգ անդամներից չորսը 1926 թվականին արտահայտվեց «Պրոմեթե» կազմակերպության կենտրոնական կոմիտեին անհատապես անդամակցելու օգտին:

Արդեն ՀՀԴ հաջորդ՝ 11–րդ համագումարը (1929) ընդունեց բյուրոյի առաջադրած ռազմավարությունը՝ գուգահեռաբար հայտարարելով, թե կուսակցությունը դեմ է խորհրդային Դայաստանի նկատմամբ գինված գործողություններին: Թիվ մեկ քշնամին, սակայն, ազդարարվեց խորհրդային վարչակարգը: Խոր չորս տարի հետո (1933) գումարված 12–րդ համագումարի հրապարակած պաշտոնական հայտարարության մեջ առհասարակ չեն հիշատակվում «Թուրքիա» և «Բուրք» բառերը:

Կատարվող արմատական շրջադարձը հենց կուսակցության խոր ներսում առաջացրեց բուռն դժգոհության ալիք, որը միտում էր վերադարձնել կուսակցությանը դասական, առողջ դիրքերին ու կոչումին: Ընդդիմադիրների գնահատությամբ՝ կուսակցությունը «հիվանդացել» էր, շենքել ազգային–ազատագրական պայքարի դեկավարի իր առաքելությունից, որի համար և նա ծնվել էր: «Դիվանդության» մեղավորը, ըստ նրանց, դեկավար կորիզն էր, ուրեմն և առաջարկվող դեղատոմսը՝ բյուրոյի հրաժարեցումը: Ստեղծվեց նույնիսկ մի նոր հասկացություն՝ «Բյուրոյական դաշնակցություն», որը երկար տարիներ մնաց շրջանառության մեջ:

Դժգոհությունը, թեպետ դեռևս անմոռւնչ, ծայր էր առել հենց քսանական թվականների սկզբներից, երբ Թավրիզում տեղի ունեցավ (1922–ին) ապագա «Պրոմեթե»–ի կազմավորման խորհրդակցություն, որին մասնակցեցին Ս. Վրացյանը, Ռ. Տեր–Մինասյանը և Ռ. Դարբինյանը՝ հանդիպում ունենալով մուսավարական լիդերներից մեկի՝ Սուլթանվի հետ:

Խորհրդակցությունը հանգում է մի եզրակացության, որով անհրաժեշտ է համարվում կովկասյան ժողովուրդների համագործակցությունը՝ ընդիմ բոլշևիկյան Ռուսաստանի: Ընդմին, Թուրքիան պետք է կատարեր ամուր թիկունքի դերը: Պատահական չէ, որ քսանական թվականնե-

րին մեկը նյութի հետևից սկսեցին լույս տեսնել Ռ. Դարբինյանի «Դայ քաղաքական մտքի դեգերումները», Ա. Վրացյանի «Խարիսափումներ», Ռ. Տեր-Սինասյանի «Դայ-թուրքական կնճիռ» ժավալուն գրությունները, որոնք բոլորը հարց էին դնում թուրքերի հետ համագործակցության մասին ընդդեմ խորհրդային իշխանության: Պատահական չեն նաև, որ «Պրոմեթ»-ի Կենտկոմը կազմվեց Պոլսում թուրքական հովանավորությամբ, որի մեջ մտան Սուլթանովը և Ռասուլզադեն (Ադրբեյջան), Ռամիշ-Վիլին և Գվազավան (Վրաստան), Բամմատը (Ղաղստան): Ընդունին ազատ տեղեր վերապահեցին ՀՀԴ ներկայացուցիչների համար:

1923 թ. Վիեննայի խորհրդաժողովում Յովի Թաջազնունու ելույթը, որը հայտնի դարձավ «Դաշնակցությունն այլևս անելիք չունի» խորագրով և հատկապես նրա «Ուսասատա՞ն, թե՝ Թուրքիա» գրությունը, շատ կետերում այդ ուղացող դժգոհության արտահայտության արդյունք էին:

1926 թ., երբ բյուրոյի չորս անդամներ, ինչպես տեսանք վերը, արտահայտվեցին «Պրոմեթ»-ի օգտին, իննօքերորդ անդամը Շահան Նաթալին, հրաժարական տվեց: Նա Փարիզում ծեսնամուլս եղավ «Ազատամարտ» տիտղոսով թերթի հրատարակմանը, որն ամբողջովին ուղղված էր թրքանետ քաղաքականության քննադատությանը: Թերթը ընդգրկում է դժգոհների քավականին լայն շրջանակ, Գ. Նժենելը այդ թվում: Թրքական արևելումի ջատագովությունը նա համարում է «ամենավտանգավորը»: «Պիտի ներել թրքության և մոտենալ նրան, քանզի մեզ ծակատագրված է նրա անմիջական դրկիցը լինել, տկար հարևանը,— վերաշարադրում է Նժենելը ջատագովի մտքերը և պատասխանում:— Իսկ եթե՝ թրքությունը, հայ պարտվողական, կարիք չգտաց քո ներումի ստրկական արտահայտության և թթեց քո և քո ներումի երեսին»:

11-րդ համագումարից գրեթե անմիջապես հետո սկսում է ծնավորվել մի լուրջ շարժում, որը ի հայտ եկավ ու զանգվածային բնույթ ստացավ 1932 թվականի ամառվանից և իր հրատարակած թերթի անունով կոչվեց «Մարտկոցական շարժում»: Շարժման նախաձեռնողը ՀՀԴ Եվրոպայի շրջանի Կենտրոնական կոմիտեն էր, որ լուծարվեց բյուրոյի կողմից, և նրա հինգ անդամները (այդ թվում և հայտնի գրող Վազգեն Շուշանյանը) վտարվեցին կուսակցությունից:

«Մարտկոցականությունը» ունեցավ երկակի բնույթ: Ա) Եղավ բյուրոյի քաղաքականության գորեղ ու խոր քննադատ: Բ) Դրսնորվեց իրուն

առհասարակ Սփյուռքի նոր սերնդի հասարակականորեն արթնացման, նոր մտածելակերպի և նոր հոգեբանության լինելիության պրոցեսի մի օղակը: Եթե «Ա» կետում նրան հաջողվեց գրեթե սպառիչ կերպով արտահայտվել, Դայ դատի առարկայի փոփոխության ցուցադրություն, հակախորհրդային, հակառուս և թրքամետ քաղաքականության քննադատություն, Խորհրդային Դայաստանի հանդեպ բարի կամք, ապա «Բ» կետի թիւ թե շատ բացազատման, ծրագրի մշակման, ուժերի ներգրավման համար «Մարտկոցին» չբավարարեց ընդամենը շուրջ մեկուկես տարվա կարճատև ժամանակահատվածը:

«Մարտկոցին» փոխարինելու եկավ «Ամրոցը», իսկ «Մարտկոցականության» դադարումով հիմնվեց «Արևմտահայ ազատագրական ուխտը», որը, Շահան Նաբալիի հումկու ազդեցությամբ, շարունակեց միայն «Մարտկոցի» «Ա» կետը՝ երևույթին հաճախ տալով այլամերժութեն ծայրահեղ քնույթ:

«Մարտկոցը» ստվար թվերով կողմնակիցներ ունեցավ սփյուռքահայ տարրեր գաղութներում, տարրեր քաղաքական դավանանքի ու չեզոք մարդկանց շրջանում: «Մարտկոցականությունը» ողջունեց և իր համերաշխությունը նրա հետ հայտնեց Սոլոմոն Թեհլերյանը: «Մարտկոցի» համեմատական ազատամտությունը, հարցադրումների թարմությունը գրավում էր երիտասարդությանը: «Մարտկոցին» Ռումինիայից աշխատակցում էր ուսանող Կարապետ Պալճյանը (ապագա Ամենայն Դայոց կաթողիկոս Վազգեն Ա):

ԴՐՈ բյուրոն անշուշտ պայքար էր կազմակերպում ընդվզումների դեմ: Դաջողվեց, օրինակ, վարկարեկել «Մարտկոցը» (հետևաբար և շարժումը) իրև խորհրդային ՊԱԿ-ի (Չեկայի) հետ առնչվողի: Մյուս կողմից «Մարտկոցը» և շարժումը սվիններով ընդունեցին Փարիզի հայ ծախակողմյանները, որոնք ակնկալում էին դաշնակցության կործանումը, այնինչ «Մարտկոցի» նշանաբանն էր դաշնակցության կատարելագործումը նրան սխալ դեկավարությունից ազատագրելու ճանապարհով:

Քսանական թվականների վերջերին և երեսնական թվականների լուրջ տեսական ու գործնական աշխատանք ծավալեց Գարեգին Նժդեհը: Նրան մտահոգող հայության հետագա ճակատագիրն էր: Սփյուռքահայ մամուլի որոշ օրգաններում նա հրապարակեց մի շարք հոդվածներ, որոնց ընդհանուր էռթյունը ցեղակրոնության տեսության քարոզն էր: Դայության հետագա կյանքի ապահովությունը նա տեսնում էր զուտ

ցեղական արմատներին վերադարձի, օտարամութությունը ներժելու, ցեղային անհավատարմությունը կամ «ցեղային տականքը» ոչնչացնելու, ռազմականացած կամ կիսառազմականացած խմբերով ապրելու, ինչպես ինքն էր ասում «ցեղվելու» մեջ: ՀՀԴ XI համագումարի (1929 թ.) որոշումով 4) Նժդեհը մեկնեց ԱԱԾ, որտեղ կարողացավ նարտական ջոկատներ ստեղծել տեղում արդեն իսկ գոյություն ունեցող հայորոյաց խմբերից: ճիշտ նույն ժամանակներում Խտալիայում և Գերմանիայում տարածվում էր ռասիստական (ցեղապահական) գաղափարախոսությունը, որը բացասական արձագանքներ էր գտնում լայն հասարակական կարծիքի մոտ: ՀՀԴ ղեկավարությունը հարմար չտեսավ իր հետագա գործակցությունը 4) Նժդեհի հետ:

Տարածում չգտավ նաև «Տարոնականություն» ամունը ստացած համահայկական շարժում ստեղծելու փորձը, որին Նժդեհը ծեռնարկել էր իր աշխատակից Յայկ Ասատուրյանի հետ միասին:

Բ. ՍՈՑԻԱԼ-ՂԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Դեռ Լոգանից առաջ կողմնորոշման խնդիրները հուզում էին նաև Սոցիալ-ղեմոկրատ հնչակյան կուսակցությանը: Նրա մամուլում էլ երևում են բազմազան հարցադրումներ, այդ թվում քննարկման է դրվում թուրքական կողմնորոշման վարկածը մի խմբագրությամբ, որը արմատից մերժում էր նաև հնարավորությունը: Առաջարկվում էր երեք ճանապարհ: Ա) Գործիք դառնալ Եվրոպայի կապիտալիստական պետությունների ծեղքին, կատարել նրանց շահի պահանջածը և գոհանալ այն փշրանքներով, ինչ որ մեզ նրանք կտան դրա դիմաց: Բ) Ընդունել բուրքական կողմնորոշում և ամճիջապես անձնատուր լինել Թուրքիայի կամքին հրաժարվելով անկախության և ազատության բաղձանքներից: Գ) Դաշնակցել Խորհրդային Ռուսաստանի հետ, ընդունել ռուսական կողմնորոշում և մի կողմից լծվելով վերաշինության աշխատանքին, մյուս կողմից գեր երևութապես լրել ազգային ատելությունները, այսօր անճիջապես անիրականալի ազգային ծրագիրները:

Անվարան ընդունվում է վերջին տարրերակը: Անշուշտ, գիտակցվում է, որ կանգնելով Խորհրդային Յայաստանի, ուրեմն և Խորհրդային Ռուսաստանի քաղաքական դիրքերում, պետք է, հանուն երկրի խաղաղ վերաշինության, հրաժարվել «ազգային ատելությունից» և Յայոց հարցի

լուծման մոտակա հեռանկարներից: Յենց այդ առումով էլ խիստ հատկանշական է ակնարկը «գեր երևութապես»—ին կամ «այսօր անմիջապես անիրականալի»—ին:

ՄԴՀ կուսակցությունը առաջինն էր, որ Յայաստանում խորհրդային իշխանության հաստատման գրեթե հաջորդ օրը իր մամուլում պաշտպանեց նորաստեղծ խորհրդային հանրապետությունը:

Կուսակցության տեսաբաններից մեկը Ս. Սապահ-Գուզյանը, գրեց. «Մեր թեզերը պիտի լինին որպես իրականության բաժին, որ կա հայ պետություն, նա անկախ է, ունի իր սովորական ձևը, գտնվում է ոռոսական օրիենտացիայի մեջ... Մեր ոդրքը պիտի լինի հայ պետությունը, հայ սոցիալիստ կառավարությունը, իր որոշյալ սոցիալիստական հաստատություններով՝ պաշտպանել, նրան գորավիճ հանդիսանալ, միշտ լավի տեղ լավագույնը բերելու մտադրությամբ»:

Արդեն Լոգանից հետո՝ 1924 թվականի հոկտեմբերին ՄԴՀ կուսակցության ընդհանուր պատգամավորական ժողովը հաստատեց որդեգրված քաղաքական գիծը՝ անվերապահորեն կանգնելով խորհրդային Յայաստանի կողմին, սատարելու համար նրա քարգավաճնան ու վերաշինությանը, կապելու համար գաղութահայ աշխատավորությանը մայր հայրենիքի հետ «քարոյական, գաղափարական և տնտեսական կապերով»:

Քսանական թվականները ՄԴՀ կուսակցության, ինչպես և գաղթաշխարհի որևէ ուրիշ քաղաքական ուժի համար եղան կուսակցական քաղաքական-գաղափարական և հասարակական մտքի զարգացման առումով դժվարին վերիվայրումների տարիներ:

Խորհրդային Յայաստանի քաղաքական պաշտպանությունը դառնում է կուսակցության տարբեր կազմակերպությունների կարևորագույն առաքելություններից մեկը: Մանավանդ առաջին տարիներին երիտասարդ հանրապետության մասին ճշմարիտ լուրերի տարածումը կենսական նշանակություն ուներ սփյուռքահայության իսկ համար, և այդ գործը սիստեմատիկաբար կատարում էր նաև հնչակյան մամուլը:

Արդեն 1921 թվականից սկսած թափ է առնում երկու ճակատի վրա՝ Յայ հեղափոխական դաշնակցության և ՌՍ կուսակցության դեմ պայքարը: Յարձակումների թիրախն է դառնում Ազգային պատվիրակությունը: 1923 թ. վերջերին հրապարակվում է կուսակցության արևմտյան հատվածի բանաձևը, որի մեջ կա հետևյալ ձևակերպումը:

«Գաղութահայ իրականության մեջ գործող Դաշնակցական և

Ոամկավար կուսակցությանց հետ ծրագրային մոտեցնող որևէ գիծ չլուսնալով, գաղափարական գետնի վրա անհաշտելի հակառակորդներ կը մնանք»:

Պայքարի նույն ոգին 1924 թվականի վերջերից տարածվում է նաև գաղթահայ համայնավարների նկատմամբ: Եվ, եթե շեշտենք, թե բոլոր այս պայքարները փոխադարձ էին, թե տարրեր փուլերում բոլոր չորսը այս կամ այն պահին կռվում էին միմյանց դեմ կամ յուրաքանչյուրը առանձին-առանձին բոլորի դեմ, ապա քաղաքական իրավիճակի ընդհանուր պատկերը գեր մոտավոր կերպով գծած կլինենք:

1921 թվականի հունիսից սկսվում է հրատարակվել ՍԴՀ կուսակցության Աներիկայի շրջանի տեսական ամսագիր «Սոցիալիստական հեղափոխությունը», որը ելուստ է այն դրույթից, թե սոցիալիստական հեղափոխությունը շուտով հաղթելու է ամբողջ աշխարհում: Նրա խնճագրականներից մեկում կարդում ենք. «Կույրերուն իսկ տեսանելի է, մենք ընկերային հեղափոխության առջև ենք: Նեղափոխությունը իր թերուվ գրկած է Ռուսաստանը և պիտի քալե նաև Յարավ, ապա Արևելք՝ դառնալու համար դեպի Արևմուտք»: Բնականաբար, հավատը այդ հնարավորության նկատմամբ քաղաքական երանգ էր տալիս կուսակցության գաղափարական-իմացական գործունեությանը:

Անվերապահորեն պաշտպանելով Խորհրդային Յայաստանը՝ ՍԴՀ հնչակյան կուսակցությունը, սակայն, իր մոտեցման մեջ որոշ նրբություն էր Ենթիուսում, որը չէր հաճընկում հանրապետության պաշտոնական քաղաքականությանը: Կուսակցության ռահվիրաններից մեկը՝ Ա. Նազարեևը, 1922 թ. գրում է, թե Խորհրդային Յայաստանը միակ հեղինակությունը և ուժն է, որ պատմականորեն կոչված է և իրականում էլ կարող է ազատագրել իր բրձահայ Եղբայրներին: Ծիշտ է, անմիջապես ավելացնում է, թե Խորհրդային Յայաստանը դա պետք է անի՞ օգտագործելով բարենպաստ րոպեն, հեղափոխական մեթոդով լուծելու համար: «Եվ բոդ բրձահայ աշխատավորությունը հայ աշխատավորական հանրապետության հետ միասին ինքն առնե իր ծեռքը իր փրկության գործի դեկը, և ինքը ազատագրե իրան»:

Սա ինչ-որ տեղ ընդհանրանում էր Ա. Մյասնիկյանի հայացքների հետ (հեղափոխական լուծում) և ինչ-որ տեղ տարանջատվում (ինքն ազատագրի իրեն): Կենց այդ տարրերակիչ հանգամանքն էլ պայմանավորում էր հնչակյանների կապը ազգային սկզբունքի հետ:

Ազգային սկզբունքների հետ կապը վերջին հաշվով վճռական եղավ

ՍԴՀ կուսակցության գործունեության հիմնական ուղղությունների համար քանական թվականներին, նույնիսկ այն պարագայում, երբ առանձին կարևոր գործիչներ, ինչպես, օրինակ, Նազարետը, ուրիշ դիրքորոշումներ ունեցան:

Դեմք այդ երևույթի հետ են կապվում կուսակցության 8-րդ (1924) պատգամավորական ժողովի (Արենք) ընդունած որոշումները թե Խորհրդային Դայաստանի նկատմամբ վերաբերմունքի, թե Գ. Միջազգայնականին միանալու առաջարկության վերաբերյալ:

1924 թվականի հոկտեմբերին Խորհրդային Դայաստանի վերաբերյալ ընդունած քանածը հետևյալն է.

«Նկատելով, որ Խ. Դայաստանը մեր կուսակցության 38 տարիների ի վեր հետապնդած նպատակի իրականացումն է, որ ան կը կազմե գլխավոր կովանը մեր բոլոր հույսերուն, ցանկություններուն և առաջարկություններուն և իրական ու պաշտոնական ներկայացուցիչն է հայ աշխատավորության հավաքականության, ՍԴՀ նշակյան կուսակցությունը անվերապահորեն կը կանգնի Խ. Դայաստանի կողքին, կը ջանա ամեն միջոցով ու եղանակով սատարել անոր բարգավաճումին ու վերաշինությանը և կապել գաղութահայ աշխատավորությունը բարոյական, գաղափարական ու տնտեսական կապերով մայր հայրենիքին»:

Ինչ վերաբերում է երկրորդ որոշմանը, ապա նրա ընդունումը կապված էր որոշ նախապատմության հետ, որը նույնպես ցից դեռ շնորհած հնչակյան-համայնավար հարաբերություններում:

Քանական թվականների սկզբներին պարարտ հող գոյացավ Ամերիկայի հայ քանվորական կուսակցության և տեղի ՍԴՀ նշակյան կազմակերպության միավորման համար, Ամերիկայի Worker's party-ին համատեղ անդամակցելու միտումով: Միավորումը տեղի ունեցավ 1923-ի ամռանը, սակայն մի քանի ամիս անց տրոհման պատճառով կողմերը վերադարձան իրենց նախկին դիրքերին: Նշակյան խումբը առաջարկություն էր բերել իր անվանումը, այսինքն ինքնավարությունը պահպանելու մասին, և դա մերժվել էր կուսակցության դեկավարության կողմից:

Դամառոտակի, խնդրի եռթյունը հետևյալն էր: Սոցիալիստական գիտակցություն ունեցող հայ քանվորը ցանկություն ունի օգտակար լինելու իր սոցիալիստական հայրենիքին Խորհրդային Դայաստանին: Գ. Միջազգայնականը, սակայն, նրան առաջարկում է լուծվել ամերիկյան քանվորական շարժման մեջ: ՍԴՀ կուսակցությունը գտնում է, որ

ηα δήιχτι չէ: Նրա կարծիքով՝ հայ բանվորը պետք է իր ուժերը բերի համաշխարհային հեղափոխական շարժմանը միայն խորհրդային Դայաստանի միջոցով: Գ. Միջազգայնականը հակառակն է պնդում հայ բանվորը իր ուժերը պիտի բերի համաշխարհային հեղափոխական շարժմանը, որը օգտակար է նաև Խորհրդային Դայաստանին: ՄԴԴ կուսակցությունը նույնիսկ ցանկություն է հայտնում ձուլվելու Գ. Միջազգայնականին, բայց ոչ թե Ամերրանկուսի միջոցով, այլ Դայկոնկուսի խողովակով:

Գրեթե մեկ տարի տևող տար քննարկումներից հետո Արենքի համագումարը հետևյալ բանաձևն է ընդունում:

«ՄԴ Դնչակյան կուսակցությունը՝ հավատարիմ ու հետևողական իր ՅԵ տարիներե ի վեր որդեգրած ու հետապնդած հեղափոխական-մարքսիստական սկզբունքներուն և գաղափարաբանության, անվերապահ համակրողի դիրք մը կը բռնե հանդեպ Գ. Միջազգայնականի: Եվ, սակայն, նկատի ունենալով հայ ժողովրդին մեկ զանգվածին եղերական ու հալածական վիճակը, իր ապրած օտար երկիրներու մեջ նույնիսկ քաղաքացիական տարրական իրավունքներեն զրկված ըլլալու հանգամանքը, այդ երկրներեն արտաքսվելու սպառնալիքն ու վտանգը և ապաստարան մը չգտնելու պարագան, և նկատի ունենալով գաղութներու հայ աշխատավորությունը՝ որպես ամբողջություն անդեկավար չձգելու և անոնց մեջ ազգայնական կուսակցություններու կողմեն Խ. Դայաստանի դեմ ըլլալիք ձեռնարկներու խմբումներուն դեմ արգելք հանդիսանալու անհրաժեշտությունը, ՄԴ Դնչակյան կուսակցությունը կը պահե իր հավաքական կազմն ու գոյությունը և ազգամիջյան կազմակերպչական դրությունը, կը գործէ որևէ երկրի մեջ լեգալ հողի վրա և իր գործունեությունը կը կերտոնացնե հայ աշխատավորության մեջ մարքսիստական գաղափարները տարածելու, համաշխարհային ընկերային հեղափոխության կենդանի մեկ թևը եղող Խ. Դայաստանը ամեն կերպ գորացնելու և այս կերպով միջազգային ընկերային հեղափոխության հաղթանակին իր գոհողության ու պարտականության բաժինը բերելու աշխատանքին մեջ»:

Արենքի ժողովից հետո Նազարեկը հանդես եկավ նրա որոշումների դեմ բացահայտ հակառակվելով ընդունված տակտիկական գծին: «Արենքում.— գրում է Նազարեկը, — Դնչակյան կուսակցության պատգամավորական ընդհանուր ժողովը իր հակահեղափոխական որոշումներով կատարեց պատմական հանցանք և ոճիր ընդդեմ սո-

ցիալիզմի և հնչակյան մասսայի, և այսօր այդ կուսակցությունն այլևս գոյության իրավունք չունի»: Մեկ ամիս չանցած՝ հնչակյան մամուլի օրգաններում լուր իրատարկվեց, թէ ՄԴ Դնչակյան կուսակցության Ամերիկայի շրջանային 40-րդ պատգամավորական ժողովը պախարակման վճիռ է կայացրել Ավ. Նազարբեկի նկատմամբ, որից հետո նա հրապարակել է իր հրաժարականը:

ՄԴԴ կուսակցությունը, բաժանելով սոցիալիզմի գաղափարները, միշտ կարևոր ու սկզբունքային խնդիրներում չեր բաժանում արդեն իսկ քարացած դոգմաները և առաջարկում էր հնարավոր երկնտրամբներ. Առաջին համաշխարհային պատերազմի պարագայում իմպերիալիստական նկրտումների դատապարտման կողքին հայ ժողովոյի ազատագրական պայքարի պաշտպանություն. Գ. Միջազգայնականի սկզբունքային գաղափարների ընդունան կողքին անկախարար նրան մասնակցելու հնարավորություն և աշխարհացրիվ Սփյուռքի պահպանություն. դրացիների հետ խորհրդային Հայաստանի խաղաղ գոյակցության քաղաքականության պաշտպանության կողքին թրքահայ դատը ժողովորական գիտակցության մեջ արձարձելու մարտավարություն և այլն:

Արենքի պատգամավորականի որոշումները եթե մի կողմից առաջարին ծախակողմյանների դժգոհությունը (Ա. Նազարբեկ), մյուս կողմից, ասես, առարկայական գետին հարթեցին աջակողմյան թիվ ընդուտ ցատկման համար, մանավանդ, որ Կենտրոնը իր մեջ ուժ չգտավ ժամանակին հրավիրելու նրանց պատգամավորականի որոշումների սահմաններում գործելու համար:

«Արձագանք Փարիզի» թերթում հնչակյան երկու դեկավար դեմքեր՝ Աստողունին և Վարագողատը ըստ եռթյան անցել էին քացահայտ հակախորհրդային վարկարեկիչ պայքարի: Այդ գժին ամբողջովին անցավ Փարիզի կազմակերպությունը, որ 1926 թվականի մայիսից սկսեց հրապարակել «Նոր երկիր» շարաթաթերթը: Կազմակերպությունը և թերթը վարում էր Վարագողատը (Դակոր Թյուրապյան): Պետք է նշել նաև, որ այսպիսի դիրքորոշմանը առարկայականորեն մեծ նպաստ թերթեց նաև ՀՕԿ-ի առթիվ Հայաստանում որոխգոված նոր քաղաքականությունը:

Տայտուն է բնութագրում թերթին հետևյալ մեջբերումը. «**Դաշնակ-Պոլչնիկ կատաղի ալիքները թող անգամ մըն ալ զարնվին Դնչակյան ժայռին, ան պիտի մնա անսասան, ինչպես մնացած է ցարդ: Իսկ լեռնանման ալիքներեն պիտի մնա... փրփուրներ միայն»:** Տարաբախտարար, քսանական թվականների համար, ասենք,

հետագայում էլ ոչ միայն այս թերթին, նույնիսկ և ուրիշ ուղղությունների շատ օգանների հատուկ է պոռուտախոսությունը:

1929 թվականին ՄԴՀ կուսակցությունը պաշտոնական դատապարտում է Փարիզի կազմակերպության ընթացքը, թեպետ «Նոր երկիրը» դրանից հետո էլ շարունակում է նույն գիծը:

4. ՌԱՄԿԱԿԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԿԵՑՈՒԹՅՈՒՆ

Լոգանի խորհրդաժողովը դեռ չափարտված հայ ժողովորի հետագա գոյապահպանության հարցը դառնում է Ռամկավար ազատական կուսակցության շրջանակների քննության առարկա: Որոշ գործիքներ դնում են «Դայ և թուր մերձեցումի մը հարցը»: Այդ հարցադրումը, սակայն, տարբերվում է ՀՀԴ դեկավար կորիզի դիրքորոշումից և ավելի մոտ է Անցիալ-դեմոկրատ հնչակյան տարբերակին:

Մերձեցումը կամ «դրացի իսլամ ժողովուրդների հետ նոր քարեկամությունների» հնարավորությունը քննարկվում է ոչ թե որպես քացարձակ շրջադարձ, այլ պարզապես իրեն խորհրդային Դայաստանի պետական քաղաքականությանը նպաստելու, աջակցելու ծե: ՌԱԿ-ը հստակ մշակված տակտիկա ընդունում է միայն 1924 թվականի համագումարում: Մինչ այդ ընդհանուր գծերի մեջ նույնանալով, այնուամենայնիվ, տարբեր հեղինակավոր գործիքներ, տարբեր վարկածներ են առաջարկում:

Քանաստեղծ Վահան Մալեզյանը, որ եղավ Դայ քարեզրոժական ընդհանուր միության գործնական պատասխանատուն, առաջարկում էր եռամիասնական մի ծրագիր. Ա) Դանգիստ թողնել թրքահայությանը, որպեսզի ինքը տնօրինի իր քախտը, Բ) Արտասահմանի հայությունը պիտի ծեռապահ մնա թուրքերին գրգռելու արարթներից, որպեսզի պատանեների (Թուրքիայում մնացած հայերի – Կ.Դ.) կյանքը չվտանգի, Գ) «Քացեիրաց մշակել Ռուսիո քարեկամությունը, այն քացարձակ համոզումով, որ եթե ոչ այսօրվան, անշուշտ վաղվաճ Ռուսիան է, որ պիտի լուծե Արևման խնդիրը, որով և անխուսափելիորեն՝ թրքահայ դատը»:

Իր հերթին Վահանի «Լուսարձակ» շաբաթաթերթը գիտակցում է Ռուսաստանի պատմական դերը Դայ դատի լուծման հարցում, քայլ դատեսնում է ոչ թե «Դայասիրության» տրորված և սպառված կածանների վրա, այլ քաղաքական շահերի համընկնման փոխադարձ ուղիներում:

Գործնական մոտեցումը բնութագրական է և նոն Սկրտչյանի համար: Դայաստանում թե Թուրքիայում, ըստ նրա, հայությունը միայն մեկ քան է անում պահպանում է իր բեկորները: Ուրեմն արտասահմանում էլ պետք է նույն գործին լծվի: Դենք նա էլ զգուշացնում է անկշողադատ, զգացական պահի կամ դառնության բովածի ազդեցությանը ժողովուրդը սխալ առաջնորդելու գայթակղությունից: «**Դիշելու ենք մանավանդ, թե ազգը մեր սեփական կալվածը չէ, որ իրավունք ունենանք ու գածներուս պես գործածելու»:**

Ինչպես նկատելի է անզեն աչքով, բոլոր այս գործիչների կողմնորոշումը ամեն պարագայում անվերապահ է մեկ կետում՝ դեպի Ռուսաստան: Այդ պահին «Ռուսիո հետ ամեն կապ խզելու» որևէ փորձ նրանք համարում են «հրեշային արկածախնդրություն»: «Արևի» խմբագրականներից մեկում, որ կրում է «Պայքար Ռուսիո դեմ» խորագիրը, ազգային տեսակետից ծայրահեղ վճասակար է համարվում նման պայքարը: «**Չկա հայ անհատ մը,— գրված է խմբագրական հողվածում,— որ ուրանա այն փաստը, թե, եթե ռուսական Կարմիր բանակները այսօր հեռանան Անդրկովկասեն, աննախընթաց խովությանց թատերավայր մը պիտի հանդիսանա այդ երկրամասը և Դայաստանը դառնա ահավոր սպանդանոց»:**

Կողմնորոշումը դեպի խորհրդային Ռուսաստանը, բնականաբար, ելնում էր խորհրդային Դայաստանի նկատմամբ բռնած և բռնելիք դիրքից: ՌԱ կուսակցությունը թե իր համագումարների որոշումներում, թե իր մամուլի էջերում զանազան առիթներով հայտարարել է, որ չի բաժանում խորհրդային Դայաստանում տիրապետող գաղափարաբանությունը: Քաղաքական գետնի վրա, սակայն, ՌԱԿ-ը հանդես է եկել խորհրդային Դայաստանի պաշտպանությամբ: Եվ արդեն Լոզանից հետո կուսակցությունը ոչ միայն ջանում է, որպեսզի Դայաստանում կենտրոնանան հայ ժողովրդի ուժն ու հույսը, մտավորական արժեքները և տնտեսական զորությունը, այլև «անոր ներկա կառավարության ու կարգերուն դեմ պայքարը» համարում էր սխալ:

Ռամկավար ազատական կուսակցությունը քանական թվականների սկզբներին հայ իրականության մեջ փաստորեն միակ քաղաքական հավաքական միտքն էր, որ իր պլատֆորմով գեր մասնակիորեն հնարավորություն էր ընծեռում հակադարձ մտայնությունների պյուրալիստական գոյակցության: Նրա հանդուրժողական ոգի պարունակող «Եվ այս և այն» բանաձևումը դրականապես զանազանվում և տարանջատվում էր

թե համայնավարների, թե քաղաքական մյուս խմբակցությունների «կամ... կամ» տարամերժ հավատամքից:

Բնականաբար, ռամկավարների այդ կարգի դիրքորոշումը իր հիմքում ուներ իրերի և փաստերի լուրջ ուսումնասիրությունը: Բանական թվականների սկզբներին արդեն իսկ նկատելի էր, թե նորաստեղծ Խորհրդային Հայաստանը հայության ֆիզիկական գոյության հիմնական խարիսխն է: ՈԱԿ-ի քաղաքականության անկյունաքարզ հենց հայ ժողովոյի գոյատևության հնարավորության հարցն էր, և խորհրդային վարչածի քաղաքական ճանաչումն ու պաշտպանությունն էլ ռամկավարների կողմից պայմանավորված էր նրանով, որ նոր իշխանությունը երաշխավորում էր այդ գոյատևությունը:

Այնուամենայնիվ, միայն Լոգանի խորհրդաժողովից հետո ՈԱԿ-ի վերաբերմունքը դեպի Խորհրդային Հայաստան վեր է ածվում հաստատում քաղաքական գծի: Դատակ է լինում, որ բնակ չքաժանելով վարչածի գաղափարախոսական երևույթը՝ ռամկավարները քաղաքական գետնի վրա պաշտպանում և սատար են կանգնում Խորհրդային Հայաստանին՝ նրա գոյության պայմանը տեսնելով Ուլսաստանի հետ բարեկամության մեջ, տվյալ պարագայում՝ ԽՍԴԻ-ի կազմում:

1924 թ. փետրվարին տեղի ունեցած ՈԱԿ-ի Բ ընդիանուր պատգանավորական ժողովը գծեց ըստ Եռլյան ստրատեգիական մի հիմնությի, որը սկզբունքային նշանակություն ունեցավ կուսակցության հետագա ամբողջ գործունեության համար տասնյակ ու տասնյակ տարիներ շարունակ: Դաշտույած հերթական բոլոր ժողովներն էլ հենվել են Բ պատգամավորականի հիմնադրույթների վրա և մեկնել նրանցից: Բանաձեռում ասված է. «Ընդունիլ այն բնական հանգամանքը, որ Հայաստանի կառավարությունը կը դասե Անդրկովկասյան և ընդհանուր սովետական պետականության մեջ, նկատելով, որ սովետական երկիրներու հետ կապակցությունը և Արևելքի բոլոր ժողովուրդներուն հանդեպ խաղաղասիրական քաղաքականության հետապնդումը բնական հետևանքն է մեր աշխարհագրական դիրքին և տնտեսական ու քաղաքական պահանջներուն: Ընդունիլ թե միջազգային ըմբռնումներու և փոխհարաբերություններու ներկա վիճակին մեջ ատիկա կը ներկայացնե միակ երաշխիքը, որ Հայաստանի ժողովուրդը վայելե ներքնապես խաղաղ ու ազատ աշխատանքի պատեհություն և ֆիզիկական ապահովության երաշխիք: Այս ըմբռնումով ալ Հայ կառավարության ընծեռել հնարավոր ամեն

օժանդակություն, դյուրացնելու համար կառավարության պարտականություններու կատարումը»:

Սկզբունքային նշանակության էր Խորհրդային Հայաստանի քաղաքական, տնտեսական, քարոյական պաշտպանության մասին եղանականությունը հատկապես մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ Խորհրդային Միությունը գրեթե ամբողջական քաղաքական-դիվանագիտական մեկուսացման մեջ էր, իսկ Արևմուտքի մամուլը ամեն օր գումարում էր այդ իշխանության շուտափույթ անկումը: Երբ ՍԴ հնչակյան կուսակցությունը անմիջապես կանգնեց Խորհրդային Հայաստանի ճանաչման ու պաշտպանության դիրքերում, դա միանգամայն օրինաչափորեն բխում էր նրա գաղափարաբանությունից: Բայց երբ ՌԱ կուսակցությունը կատարեց նույնը միջազգային անստույգ կացության մեջ, դա հայ ժողովողի գոյատնության մտահոգությամբ իրապաշտ քայլ էր, քաղաքական հեռատեսության, ավելին՝ որոշ առումով՝ խիզախության արգասիք էր:

Խորհրդային Հայաստանի քաղաքական պաշտպանությունը եղավ կուսակցության ստրատեգիական հիմնուղին, որի թելադրանքով էլ ՌԱԿ-ի տարրեր ժամանակների գործիչներ ու մտավորականներ զանագան աղիքներով արտահայտվել են ԽՄԴՍ կազմից Հայաստանի դուրս գալու անընդունելիության առումով, թեպետ երկրի սահմանադրությունը նման տեսական հնարավորություն նախատեսում էր:

ՌԱ կուսակցության 2-րդ համագումարի բանաձևում արտացոլում չեն գտել Հայ դասի հետապնդման հետագա խնդիրները: Խիստ տարտամ ու մըին մի բանաձևումով պարզապես պահանջ է դրվում գգույց լինել և չըոնվել միջազգային քաղաքականության նոր խաղերի մեջ: Դա սուսական վրիպանք համարել չի կարելի: Լոգանի ծախողանքից հետո քարոյական հարվածը այնքան ուժեղ էր, որ անհնարին պիտի լիներ «ճարպկորեն» շրջանցել խնդիրը: Նույն կացության առջև կանգնած ՀՀԴ-ն իր համագումարում ընդունեց Թուրքիայի դեմ աննկուն կեցվածքի որոշում, թեպետ, ինչպես տեսանք, կուսակցության դեկավար տարրը ուրիշ ռազմավարության էր հետևում: Մնում է մեկ քացատրություն: Խորհրդային Հայաստանի առարկայական պայմանների թելադրանքը: Երկրում գլխավորը և հիմնականը ժողովողի խաղաղ կյանքի պայմանների ապահովման, վերաշնուրական խոնդիրներն էին, և այդ պահին, ըստ ուսմկավարների, Հայ դասի արժարժումը նպատակահարմար չէր համարվում: Պատահական չէ, որ նույն համագումարում որոշում ընդունվեց Ազգային պատվիրակությունը վերացնելու մասին:

Կա նաև ենթակայական կողմը: Դայաստանի դեկավարությունը ազդարարել էր, թե այլևս լուծված է Դայ դատը, ավելին, Մեծ Եղիշևի ստիպողական մոռացումն էր պարտադրվում ժողովրդին: Սփյուռքի ձախակողմյան ուժերը ավելի եռանդուն, ինչպես կտեսնենք ստորև, քարոզում էին հայ և բուրք աշխատավորների դասակարգային համերաշխությունը: Այս պայմաններում, ըստ երևույթին, իր դերը խաղացել է նաև բարոյական ահարեկչությունը:

Այսպիսով՝ 1924 թվականի ընթացքում հայ ազգային երեք կուսակցություններն էլ իրենց համագումարների (ՀՀԴ 10-րդ համագումարը ավարտվեց 1925-ի հունվարին) մակարդակով ճշտեցին սեփական դիրքերը Խորհրդային Դայաստանի նկատմամբ: Դաշնակցությունն ընդունեց երկակի մոտեցման սկզբունք: Գաղափարական անհաջող պայքարի կողքին պատրաստակամություն հայտնեց սատարելու Խորհրդային Դայաստանի տնտեսական գարգացմանը: Դնչակյանության վերաբերմունքը անվերապահ սատարումն էր: Ռամկավարությունը հայտարարեց գաղափարական անհամատեղելիության մասին, բայց միաժամանակ գտավ, որ Խորհրդային Դայաստանը քաղաքական գետնի վրա հայ ժողովրդի ֆիզիկական գոյության և բարգավաճման ամենակենսական գրավականն էր:

Վերաբերմունք էր ճշտվում նաև Թուրքիայի նկատմամբ: Դաշնակցության առանձին օդակներ ու գործիչներ մտածում էին թուրքերի հետ ուղղակի գործակցության մասին՝ նման մի դաշինքը հնարավոր հակախորհրդային ճակատում օգտագործելու նպատակով: Պաշտպանելով Խորհրդային Դայաստանի քաղաքականությունը դրացիների հետ հաշտ ու խաղաղ ապրելու վերաբերյալ (որը երկրի վերաշինության կարևորագույն պայմաններից մեկն էր) թե՛ հնչակյանները, թե՛ ռամկավարները ըստ եռթյան դադարեցնում էին հակարութքական քարոզչությունը: Այսպիսով՝ ազգային երեք կուսակցություններն էլ, թեպետ նրանք հաճախ արել են հակառակը պնդող հայտարարություններ, փաստորեն օրակարգից երկար ժամանակով դուրս են թողել Դայկական դատը, ցեղասպանության դատարապարտման խնդիրը: Պատահական չէ, որ հնչակյանների մոտ հնչում էին «գեք երևութապես» կամ «այսօր անմիջապես անիրականալի» ծնակերպումները, իսկ ռամկավարների մոտ՝ «ոյուրացնելու համար կառավարության պարտականությունները» սահմանումները:

Դայ ժողովրդի հիմնական զանգվածի Խորհրդային Դայաստանի հայ

ազգաբնակչության, ինչպես նաև Թուրքիայի իշխանության տակ մնացած հայության ֆիզիկական գոյատության կենսական անհրաժեշտության բերումով մշակվեց ժամանակավոր թվացող, բայց իրականում բազում տարիներ տևած մի տակտիկա, որի մեջ էլ, հավանաբար պետք է փնտրել արմատները այն հարցի, թե ինչու մինչև Երկրորդ աշխարհամարտի վերջը, իսկ ավելի գործում՝ մինչև Մեծ Եղեռնի 50-ամյակը, մինչև Վաթունական թվականների կեսերը, Յայկական դատի, ցեղապահության խնդիրները ըստ Եղեռնի չեն գրավում ազգային կյանքի կարևոր, առաջատար դիրքերը:

Սիանգամայն իրավացի էր Գերսամ Ահարոնյանը, երբ նկատում էր, թե «*Լոգանի դաշնագիրը մարդկությանը տալուց և իրենց կեղտուտ գործը ավարտելուց հետո կառավարություններից և ոչ մեկը չխոսեց Յայկական հարցի մասին: Մի ամբողջ քառորդ դար ոչ մի պետություն չի ետաքրքրվեց մեր դատով... նրանք միտումնավոր մոռացան մեր նահատակությունը, մեր դատը և մեր իրավունքները»: Այս ճշմարտության կողքին, նույնքան ճշմարիտ է նաև, որ մեր իսկ ընտրած տակտիկան առարկայականորեն խրախուսում էր նման քաղաքականությունը:*

Մրան գրեթե վճռաբար նպաստում էր իննոց խորհրդային Յայաստանի պաշտոնական դիրքորոշումը, որի տեսակետից առաջնային նշանակություն էր ստանում դաշինքն ու համերաշխությունը թուրք աշխատավորության հետ: Բնականաբար, քարոզության բոլոր միջոցների քառապաշարից ու զինարանից հանվում էին Մեծ Եղեռնի հիշատակումն անգամ, հայոց հողային, նյութական թե քարոյական պահանջատիրությունը հիշեցնող արտահայտությունները: Ավելին, ընթանալով ճիշտ թուրքական քարոզության հունով, դարասկզբին տեղի ունեցած ողբերգությունների մեջքը բարդվել է մեր իսկ ուսերին:

Արտաշես Կարինյանը գրում էր «Խորհրդային Յայաստան» օրաթերթում. «*Մի թե նույնը չի կատարվել Տաճկաստանում, ուր հայ արկածախնդիր խմբերը, միացած հույն և ասորի խմբերի հետ, օժանդակ տարր են հանդիսացել իմպերիալիզմի համար և դրանով էլ ժանր վիճակ են ստեղծել Տաճկաստանի խաղաղ և միամիտ շինականների համար»: Նման ֆոնի վրա թերևս բնական է, որ Լոգանի խորհրդատողովի օրերին Յայաստանում հրատարակվող մամուլը գրեթե լուսաբար էր անցնում այդ երևույթի կողքից, կամ էլ շոշափելով մողովի նյութը, «մոռանում» էր հիշատակել հայոց շահերը, հայկական հարցերը:*

Զարմանալի չէ, ուրեմն, որ Սփյուռքի գանազան վայրերում գործող հայ համայնավարներից շատերը պարզապես ծայնակցում էին Հայաստանից արտածվող իիմնադրույթներին: Ամերիկայի հայ բանվորական կուսակցության օրգան «Բանվոր» շաբաթաթերթը, օրինակ, հայ ժողովորի ու նրա խորհրդային պետության գոյատևության միակ քաղաքական պայմանն էր համարում այնպիսի վիճակը, երբ հայերը բացարձակ, մոռանան, թե ով և ինչպես է իրականացրել Սեծ եղենը: Իսկ այդ ուղղության հայտնի գործիչ Ս. Սնարը ուղղակի հայտարարում էր, թե «այլս չկա տաճկահայ դատ»:

Դ. ՀԱՅ ԿԱՄԱՅՆԱՎԱՐՆԵՐ

Քսանական թվականների սկզբներին քիչ թե շատ լուրջ ուժ ներկայացնում էին հայ կոմունիստները Ամերիկայի Սիացյալ Խահանգներում: 1922 թվականին նախկին կոմունիստական խմբավորումների հիման վրա ստեղծվել էր Ամերիկայի հայ բանվորական կուսակցությունը՝ իր անդամ Ամերիկայի բանվորական կուսակցության (Worker's Party), լույս էին տեսնում «Բանվոր» և «Գործավոր» թերթերը, ապա դրանց միավորումով՝ «Պրոլետար» լրագիրը, որը վերանվանվեց «Նոր աշխարհ», ինչպես նաև՝ «Նոր Շավիդ» կիսամսյա հանդեսը:

Հայաստանում խորհրդային իշխանության առաջին իսկ տարիներին նման մի կազմակերպության գոյությունը գաղթաշխարհում, թե հաշվի առնենք մանավանդ, որ Մերձավոր Արևելքում և Եվրոպայում հայ համայնավարական շարժումն ավելի ուշ պիտի հրապարակ գար, լուրջ քաղաքական խողովակ եղավ նորաստեղծ իշխանության ծրագրերը Սփյուռքում պարզաբանելու և պրոպագանդելու համար: Երկրի վիճակի մասին առարկայական լրատվությունը, որին լծվեցին ծախսակողմյան կազմակերպություններն ու մամուլը, կարևոր դեր կատարեց դեպի Խորհրդային Հայաստան սփյուռքահայ զանգվածի տակավ առ տակավ կողմնորոշման հարցում:

Նույն այդ տարիներին ամբողջ համաշխարհային կոմունիստական շարժմանը զանազան վայրերում զանազան աստիճաններով, բայց հիմնականում ընդհանուրին բնորոշ էր ծախս ու տոպիֆիական զաղափարները իրական կյանքում կենսագործելու հավատը, ծգտումը և նույնիսկ ջանքը, որը մեծապես վնասում էր բուն իսկ շարժմանը, հիմնովին խաթ-

րում գաղափարը: Լենինը այդ երևությունը անվանել է «Չախության մանկական հիվանդություն»: Բայց տարիքը առնելու հետ հիվանդությունը չվերացավ, ավելի խորացավ: Ստալինյան քոնապետությունը հոգ տարավ, որպեսզի խաթարված ու եղծված մարքսիզմն ու սոցիալիզմը տիրեն իրականությանը:

Տարաբախութարար, հայությունը ևս տվեց տուրքի իր վիթխարի բաժինը այդ այլս ոչ մանկական ախտին: Եվ տվեց այդ տուրքը Սփյուռքուն հաճախ Պապից ավելի պապական կերպով, քան նույնիսկ Դայաստանում: Խոսքն, առաջին հերթին, անշուշտ, վերաբերում է դասակարգայնության բացարձակեցմանը, դասակարգային շահի գերադասությանը, «Դայրենիք», «ազգ» ինացքների եղծնանը:

Ահա, օրինակ, թե ինչ էր գրում «Բանվորը» 1923-ի ապրիլին: «Կապիտալիզմը, դիմակավորված ազգային գգացումներով, զանոնք ի նպաստ տիրապետական ծգտումներուն կը գործածե շահագործելով և սպառելով պրոլետարիատի ուժը: Եվ որպեսզի այս պայքարը կարողանա շարունակել, հասկանալի է, որ շարունակաբար պիտի արժարծե ու վառ պահե «հայրենիքի» և «ազգության» գգացումները, որոնց տկարացումով մարդիկ ավելի շուտ կրնան եղայրանալ: Զանոնք իրարմե բաժնող, իրարու հանդեպ թշնամորեն տրամադրող գլխավոր ազդակներեն մին կը վերանա»:

«Դայրենիքի» և «ազգության» ինացքների հակադրումը մարդկային եղայրությանը, ավելին դրանք մարդկանց միմյանց թշնամացնող գլխավոր ազդակ հանարելը ճիշտ համապատասխանում էր տոտայիտար սոցիալիզմի կառուցման կաղապարին, որը հետապնդում էր ազգերի և ազգությունների ուժացման հնարավորին չափ արագացման, ազգային հայրենիքների վերացման թիրախը: Մտայնության այդ մայրությին, սակայն, որևէ կապ չունի մարդկային իրապաշտ բանականության հետ: Այսօր արդեն հստակ է, որ քսանական թվականներին կոմունիստական շարժումը, ազգային գգացումների վիթխարի, հարուստ ու լայն դաշտը լրելով, ավելին, այդ գգացումները դիտելով իրեն խոչընդոտ, ըստ եղթյան, անդառնալի հեռացել էր իր տեսության կարևոր հիմնադրույթներից մեկից, որի համաձայն՝ ազգային-ազատագրական շարժումները սոցիալիստական հեղափոխության դաշնակիցներն են: Դոկտեմբերով չեր ավարտվում, այլ սկսվում էր հեղափոխությունը, որի պարտըն եր նաև ազգային հարաբերությունների բնագավառում իր լրումին հանգեցնել այն ամենը, ինչ չեր հասցրել իրականացնել բուրժուազիան, ազ-

գային-ազատագրական պայքարի դրական լուծում, ազգային պետականության, ազգային հայրենիքի ստեղծում իր ազգային շուկայով, իր սոցիալ-մշակութային-իրավական վերնաշենքով:

Խորհրդային իշխանությունը, ինչպես նշեցինք առաջին գլխում, գործնականում ծեռնամուխ եղավ այս հարցերի լուծմանը իրեն ընդհանուր ազգային քաղաքականության մի մասի, թեպետ ոչ լրիվ համայիրով ու երթմն կիսատ-պրատ, այնուամենայնիվ, առաջին արդյունքները եղան դրական: Դենց ազգային հայրենիքի կառուցման այդ առաջին արդյունքներն ել մագնիսի ուժով իրենց գրավեցին սփյուռքահայ զանգվածի ուշադրությունը: Դասարակական գիտակցության բնագավառում, սակայն, կատարվեց հակառակը: Սոցիալիստական հեղափոխության դաշնակիցը ազգայինը, հայտարարվեց թշնամի: Խորհրդային իշխանության «նվիրյալները» անհաջող պայքար սանձագերծեցին բոլոր նրանց նկատմամբ, ովքեր իրենց սրտում կրում էին և փայփայում հայրենիքի և ազգության զգացումները:

Թիրախ դարձան բոլորն անխստիր: Ամերիկայի քանվորական կուսակցության հայկական հատվածը ՄԴ հնչակյան կուսակցությանը վերագրում էր մի հանցանք, ըստ որի՝ նա խոչընդոտել է հայ պրոլետարիատին միանալու ընդհանուր պրոլետարական շարժմանը, ինչպես նաև, հետևելով եվրոպական բուրժուազիայի ոճրագործ քաղաքականությանը, դարձել է բրդահայ «ազգայնական դժբախտ» շարժման հեղինակը:

Փաստը մնում է փաստ, որ հայ համայնավարական շարժումը կամովին հրաժարվել էր «ազգային» իմացքից, ավելին, անհաջող կորիվ էր հայտարարել նրա կրողներին:

Ի՞նչ արժե, օրինակ, տեսական «ծախլիկության» այս գոհարը. «Ոչ, պարուն խմբագիր, մի նեղվեք, ոչ Ֆրանսիայի կոմունիստ կուսակցության հայ աշխատանքի խումբը և ոչ ալ Ամերիկայի քանվորական կուսակցության հայ հատվածը հայ ազգի անունով չեն խոսիր: Ազգի անունով խոսիլը մենք կը բողունք Ռամկավար Ազատական կուսակցության և Դաշնակցության: Մեր գործը ձեր գործը չէ»:

Պայքարը նշվում էր երեք ճակատների վրա: Ամերիկյան համայնավարները, անշուշտ, տարբերակում էին հայ ազգային քաղաքական հոսանքները և ուժերը, այլազան; այն ժամանակների համար փոխադարձ գոեհկարանության ոճին հատուկ պիտակավորումներ էին տալիս նրանց, բայց երբեք ու ոչ մի տրամադրություն չէին դրսնորում նույնիսկ

հանուն հայրենիքի շահերի որոշ փոխգիծումների կամ երկխոսությունների:

Գործում էր փոխգիծումների բացասաման «օրենքը»՝ «ոչ մի կոմպոզիտիս» հայտնի կարգախոսի տակ: Նման հարցադրումը գործնական կյանքում հաճախ առաջնորդում էր անելի, քանի որ հասարակական հարաբերությունների մեջ գոյություն ունեցող հանգույցների լուծման միայն մեկ ճանապարհ էր ճանաչվում: «կամ ամրողը, կամ ոչինչ», և միայն մեկ կողմի իրավունքն էր ընդունվում: «կամ ես կամ նա» տարածք բանաձևումներով:

«Կոմունիստական կուսակցությունները միշտ հայտարարում են, թե մենք ուխտյալ թշնամի ենք ներկա կարգերին, ոչ մի կերպ կարող չենք «լոյալ» դիրք ունենալ նրանց հանդեպ,— գրում էր «Պրոլետար» շաբաթաթերթը:— Կամ մենք, կամ նրանք. ահա կենսունակություն ունեցող կուսակցության մը թեզը: Դայ կոմունիստները ոչ մի առիթ չեն փախցրել հայտարարելու, թե մեր և հայ ազգայնական կուսակցությանց միջև մերձեցման ուժ եղը չի կարելի ստեղծել և ուժ լոյալիզմ գոյություն չի կարող ունենալ, թեկուզ այդ պայքարը շատ ժամը նստի հայ ժողովրդին»:

Դայ ժողովրդի հաշվին այսպես ոյուրավ հերոսացող թերթը, քնականարար, չէր հարցրել հայ ժողովրդի իսկ կարծիքը: Նման արկածախնդրությունը իրոք որ ծանր էր նստում հայ ժողովրդին ջլատելով նրա առանց այն էլ փոքրաթիվ կենսական ուժերը: Զարմանալի է, քայ փաստ, որ «ամեն ինչ կամ ոչինչ» մաքսիմալիստական կարգախոսի թերումով, հայ համայնավարները կտրականապես մերժում էին բռնել նույնիսկ այն դաշնակից տարրերի ծեռօք, որոնք, չքաժանելով կոմունիստական աշխարհայացքը, այնուամենայնիվ, քաղաքական հողի վրա ընդունում և պաշտպանում էին Խորհրդային Դայաստանի իրականությունը:

Նույնքան պարզունակ և ուղղագիծ էր ֆրանսահայ համայնավարական շարժման տակտիկան: Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության հայ աշխատանքի խմբերի կենտրոնական գործադիր կոմիտեն 1926-ի սկզբներից հրատարակում էր «Վերելք» ամսագիրը, որը փոխարինել էր «Բանվոր Պարիզին»: Նրա պայքարի հիմնական թիրախներն էին հայությունից դուրս՝ սոցիալ-դեմոկրատիան ու ֆաշիզմը, հայությունից ներս՝ «հայ նացիոնալիզմը», իմա՞ հնչակյանները, դաշնակցականները և ռամկավարները: 1924 թվականին շարժման անդամների թիվը, համակրողները չհաշված, 38 մարդ էր:

«Վերելքականների» կետ նպատակին էր հայ աշխատավորությանը ամբողջությամբ ներքաշել ֆրանսիական կոմունիստական շարժման մեջ, քանի որ նրանք հավատում էին, թե մոտ էր միջազգային կոմունիզմի հաղթանակը: Ռամկավարները այդ առթիվ նկատել էին, թե հայերի ծեղով նվաճված կոմունիզմը Դայաստանում դեռ հասկանալի է, բայց նույնը հայերի ծեղով Ֆրանսիայում անհասկանալի:

1926 թվականին տեղի ունեցավ հայ աշխատանքի խմբերի առաջին պատգամավորական ժողովը, որն ազդարարեց, թե շարժումը ոչ թե ազգային, այլ միջազգային ազդակ է: Այսպիսով հենց սկզբներից համադրության փոխարեն շարժումը զինվեց հակառակության տակտիկայով: Դետաքրքրական է նշել, որ հակառակություն որդեգրվեց ոչ միայն Ֆրանսիայում գործող հայ ազգային ուժերի նկատմամբ, այլև որոշակի սահմաններում Դայաստանի կոմունիստական կուսակցության նկատմամբ: Ժողովը սխալ համարեց Երևանի կուսակցական Կենտրոնի հետ կապվելու գգտումը:

«Անոնք, որ այս երկրի մեջ ազգային շրջանակներու մեջ պարփակվելով այս երկրի համայնավարական կուսակցություննեն անկախ և ինքնուրույն համայնավար կուսակցության մասին կրնան մտածել, աստոնք մինակ մեկ բան կապացուցանեն, որ իրենք տակավին չեն կորպած «իրենց ազգին» պորտեն և վճռականություն չունին իրական միջազգայնականության գաղափարական ու գործնական պայքարի հողի վրա կանգնելու», — կարողուն ենք ժողովի բանաձևում:

Պատգամավորականը նախագգուշացրեց Երկու թեքումի դեմ, որոնցից առաջինը «ազգային-կոմունիստական հայաստանիականն է»: Այս անճողությունը ծավակ կոտրելու տեսության մեջ կուսակցականության սկզբունքի անհմաստ բացարձակեցման բոլոր մրցանիշները: Ոչ թե կուսակցությունն էր կոչվում ծառայելու ժողովրդին, այլ ընդհակառակն, ժողովրդի շահը ամբողջովին ստորադասվում էր կուսակցությանը: Նման դիրքորոշումը ի գորու էր տասնյակ տարիներ: Ավելին՝ Երկրորդ աշխարհամարտից էլ հետո Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության առանձին հայ անդամներ նույնիսկ Դայաստանի հետ շփումների մեջ ծգտում էին ապահովել ոչ թե գաղութի և Մայր Դայրենիքի կապերը, այլ սոսկ ֆրանսկոմկուսի շահագրգռությունները:

Երկրորդ թեքումը «գտարյուն միջազգայնականությունն» էր: Այսինքն՝ պատգամավորականը հարմար էր նկատում հանդիս գալ այն

մարդկանց դեմ, ովքեր առհասարակ կոչ էին անում հրաժարվել գաղութից ներս տարվող աշխատանքից: Ավելին, պատգամավորականը անհրաժեշտ էր գտնում հայ զանգվածը թերել դեպի Խորհրդային Դայաստան: Բայց ինչո՞ւ: Չէ՝ որ նման պահանջը հակասում էր առաջին թերման դեմ պայքարի շահերին: Դարդի պատասխանը տրված է բանաձևի մեջ:

«Այն գործավորը, որ Խորհրդային Դայաստանի բարեկամ է դարձած մեր քարոզի շնորհիվ, արդեն թեկնածու է համայնավարության և այդ ուղղությամբ առաջին քայլերը առեր է արդեն: Խորհրդային Դայաստանյան պրոպագանդը, այսպիսով, ոչ թե վերջնական նպատակ մըն է, այլ կարևոր միջոցներեն մեկը համայնավարական նվաճումի, որ մեր գերագույն նպատակը կը հանդիսանա»: Մնում է ավելացնել, որ ընդգծված է հենց խմբագրության կողմից: Ժամանակահատվածի ամենաչարչարված բառը թերևս «աշխատավորությունն» է: Այն լայնորեն գործածվել է Խորհրդային Դայաստանում թե գաղթաշխարհում, բայց երեք չի տրվել նրա սահմանումը: Ի՞նչ է նշանակում «աշխատավորություն», ի՞նչ խավեր է նա ընդգրկում: «Կերելքականները» նույնպես գործածում են այդ բառը՝ որոշելու համար իրենց գործունեության դաշտը: Եվ պարզվում է, որ դա խիստ անձուկ է, սահմանափակ: «Կերելքականները» գաղութում վճռական պայքար են հայտարարում բոլորին «ազգային» կոչված միություններին, կաթողիկոսական պատվիրակին, կղերական, բուրժուա-ազգայինական, «ֆաշիստական» հասարակական կազմակերպություններին: Փանջունիական այս «վճռականությունը» պիտի հանգեցներ թե հայ ազգային-ազատագրական պայքարուների դատապարտման, թե հայ ազգային որևէ արժեքի հերթանակ: Պատահական չէ, որ նման ելակետից նրանք հրաժարվում են մասնակցել ապրիլի 24-ի ծեսնարկումներին:

Ե. «ՉԵՇՈՔՆԵՐԸ»

Ինչպես միշտ, քանական թվականներին գաղութահայության մի զգալի զանգվածը դուրս էր կուսակցությունների և քաղաքական այլ հավաքականությունների աղեցության ոլորտից: Իրերի հարաբերակցության առարկայական վիճակի տրամաբանությամբ՝ «չեզոք» տարրերը ևս, վերջին հաշվով, ուշադրության կենտրոնում ունեն հայ ժողովունակությունը և ազգային հայությունը:

դի հետագա գոյատևության հարցերը և, դրանց առնչությամբ, Խորհրդային Հայաստանի նկատմամբ վերաբերմունքի, ինչպես նաև Սփյուռքը հուզող բոլոր խնդիրները:

Արդեն իսկ չեզոքության հանգամանքը խոսում էր կարծիքների ու տեսակետների հնարավոր բազմազանության մասին: Բոլորի համար միատեսակ բնութագրականը միայն հայ ժողովողի գոյատևության մտահոգությունն էր: Այդ ժիրի մեջ առկա էին թե ամբողջովին հակախորհրդային դիրքորոշումներ, ինչպիսին տարիներ շարունակ ունեցավ «Կավոշ» երգիծաբերքը՝ Ատամրուլում (մինչև Փարիզ փոխադրվելը) մասնավորապես, թե չափավոր ու հավասարակշոված մոտեցում, որ մամուլի մեջ մասի վարօքագիծն էր:

Գաղութահայության ազգային կեցությունը Խորհրդային Հայաստանի հետ սերտորեն կապակցված դիտելու և քննարկելու միտումը չեզոք թե կուսակցական ուղղությունների համար ակնհայտ անհրաժեշտություն դարձավ հիմնականում 1923–1924 թվականների սահմանագծում, այսինքն՝ Լոզանի ծախողանքից հետո:

Արդեն խորհրդաժողովի ավարտից հետո «Հայաստանի կոչնակ» չեզոք թերթը շեշտում էր այդ ծախողանքի միակ դրականը: «Այս քստմնելի դավաճանությունը, սակայն,— գրված է խմբագրականներից մեկում, — առաջ թերավ մեր մեջ առողջ հակագործոցություն մը: Թրքահայությունը, որ ասկե առաջ երթեք իր ապագան չեր անքատած Արևելյան Հայաստաննեն, հիմա սկսավ ավելի լրջորեն զայն փնտրել այդ հողամասին մեջ»:

«Հայաստանի կոչնակի» կողմին ժամանակաշրջանի ամենահեղինակավոր հրատարակություններից մեկը թեոդիկի «Ամենույն տարեցույցն» էր, որի խոսքը իրոք փնտրված էր և ազդեցիկ: Մանավանդ կարսոր տեղ էին գրավում Արշակ Ալպոյանյանի ամենամյա վերլուծությունները, որ աչքի էին ընկալում պատմաբանի խորաբափանցությամբ և առարկայական նյութը ընդհանրացնելու հեղինակի հմտությամբ: Ի մի թերելով մեկ տարվա՝ 1922 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1923 թ. սեպտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածի եական եղելությունները՝ Ա. Ալպոյանյանը դիտում է հանրային կյանքի հիմնական հատկանշականը: Նա նշում է, թե Հայաստանից դուրս ապրող հայությունը, «իր կրած մեծ հուսախարության հետևանոք, Արարատյան Հանրապետությունը նկատել սկսավ միակ կովանք և խարիսխը, որուն վրա կրնա ասկե հետո խորիիլ հայ ազգը, իր գոյությունը պահպանելու համար»:

Միքան է, սակայն, նկատել «միակ կովանը», մի ուրիշ բան, երբ գաղթահայության կյանքի ալֆան ու օմեգան հայտարարվում է հենց այդ կովանը: Դասարակական մտքի մի ամրող ուղղություն, Խորհրդային Դայաստանի մեջ իրավացիորեն տեսնելով հայ ժողովոյի ֆիզիկական գոյատևության հնարավորություն, ըստ եռթյան մերժում էր նրա թելադրանքին ենթարկվելուց զատ որևէ ուրիշ ճանապարհ: Այդ ոգով, օրինակ, հանդես էր գալիս Լառնակայի (Կիպրոս) «Արագոս» թերթը, երբ «զգուշացնում էր բոլոր գոյություն ունեցող թե չունեցող քաղաքական խմբակցություններին», որ հայ ժողովուրդը անվերապահորեն ճանաչում է միայն Խորհրդային Դայաստանը՝ իբրև բովանդակ հայության գերագույն և անվիճելի իշխանություն: Նույնը կարելի է տեսնել Թեհրանի «Գաղափար» եռօրյայի էջերում, երբ ՀՀ դաշնակցության շարքերից հեռացած թժիշկ Ա. Ղազարյանը հայտարարում էր, թե կան միայն երկու ուժեր՝ Խորհրդային Դայաստանի շահերը պաշտպանող և նրան դեմ:

Քսանական-երեսնական թվականներին խորհրդային պաշտոնական քաղաքականության «կամ-կամ» բանաձևումը, որ այլամերժորեն սահմանագիծ էր քաշում այս կամ այն խմբակցությանը չհարող քազմական ու քազմաթիվ ուրիշ ուժերի առջև, լրջորեն վարակել էր նաև գաղթահայության չեզոք մտքի այլազան շերտերը: Ենթակայականորեն դրական նախատակ թիրախնելով՝ նման մտայնությունը առարկայականորեն վնասաբեր էր նույն ինքն Խորհրդային Դայաստանի համար, ջլատում էր Սփյուռքի գաղութներում Դայրենիքի հետ հարաբերակցության լայն դեմոկրատական գետինը:

Դասարակական մտքի այս ծայրահեղ թևեռների արանքում, սակայն, քավականին ծանրակշիռ դեր ուներ ավելի չափավոր հայացքը, որին հաստուկ էր Խորհրդային Դայաստանի իրականության բարեկամական, այլև սրափ-առարկայական դիրքերից գնահատությունը:

Բեյրութի «Դայ կյանքի» արտոնատեր և պատասխանատու-տնօրեն Միքայել Շամտանջյանը, օրինակ, ասես վիճարաննելով Դայաստանի դեկավարության և զաղթահայ համայնավարների պաշտոնական ոչ ազգանպաստ հայտարարությունների հետ, 1925 թվականին միանգամայն արդարացի դիտում էր, թե երկիրն ընթանում է դեպի ազգային հստակ դիմագիծը: «Կրնան Ժայրահեղություններ ըլլալ կատարված աշխատություններուն մեջ, օրվան իշխանության քաղաքական ետին մտքեր կը ընան որոշ սահմանափակումներ և արգելքներ եղած ըլլալ հայ հոգեկան ազատ քոյշքին համար, քայց սա քացարձակ

որոշ է, որ ինչ քայլերով ալ եղած ըլլա, հայ ժողովուրդը Դայաստանի մեջ կը քալե դեպի նյութական բարգավաճում, դեպի հայ քաղաքակրթություն մը»:

Կաթոլիկ համայնքի դիրքորոշումը յուրովի ցուցադրեց «Գեղունի» տարեգիրքը, որն առատորին լուրեր տպագրեց Խորհրդային Դայաստանի տնտեսական շինարարության ու մշակութային կյանքի վերաբերյալ: Հանդես գալով այստեղ է. Փեշիկյանը նույնպես գտնում է, որ նորածին Դայաստանը մեր ժողովորդի գոյության և զարգացման միակ նեցուկն է ու առաջարկատյան, բայց, միաժամանակ, անում է որոշ վերապահություններ: «Կը ցավինք ըսելու, — գրում է նա, — որ տարապայման հոխորտանք, ուղղագրական խնդիր, մամուլի ճնշում, կրոնական հալածանք մեծապես վնասեցին, որով գաղութի հայության լուրջ և անշահախնդիր մասն ալ առանց կանխակալիքի խրտչեցավ ու վերապահ մնաց Դայաստանի գրականության հանդեպ»: «Գրականություն» բաօք հայր Փեշիկյանը կարող էր շատ հանգիստ փոխարինել «իրականություն» բառով, և դա ավելի ճշմարիտ կլիներ, թեպետ հեղինակը գրում էր հենց գրականության մասին:

Խորհրդային Դայաստանի նկատմամբ համակրանքի նման ցույցը քանական թվականներին համարվում էր սահմանափակ բուրժուական դրսեսորում և մերժվում էր հենց նախաշեմից: Ոչ մի կերպ ընդունելի չէր, օրինակ, այնպիսի համակրական արտահայտություն, ինչպիսին Բրյուսելի ազգային և հասարակական անկախ պարբերաբերք «Լրագիրն» էր տպագրել. «Պիտի սիրենք ու սիրցնենք Դայաստանը, որ կուսակցության կողմե ալ կառավարված ըլլա ան»: Անշուշտ, Խորհրդային Դայաստանի կողմից փոխադարձության բացակայությունը չէր նպաստում համակրանքի տարածմանը: Էականը, սակայն, այդ համակրական վերաբերմունքի առարկայական գոյությունն էր գաղթաշխարհում, որը անհրաժեշտ լինելով Խորհրդային Դայաստանին, նույնքան էլ անհրաժեշտ էր աստանոյական հայությանը մեծապես սատարելով նրա ազգային կեցության դժվարին գործին հատկապես քանակական թվականներին, երբ ինքը Սփյուռքը, դեռ նոր ծնավորման ընթացքի մեջ էր:

Դետնաբար, կրկնակ առաքելություն էր ստանում Դայրենիքից ստացվող առարակայական տեղեկատվության տարածումը ոչ կուսակցական խողովակով, քանի որ այդ մամուլի ընթերցողների թիվը բնակ էլ չէր զիջում քաղաքականորեն մականված մամուլի ընթերցողների թվին: «Լիրանան» անկախ հայաբերքը, Խորհրդային Դայաստանը ներկա-

յացնելով իրև ազգային ցանկությունների և իրավունքների կորիգ, այնտեղ կատարվող իր ընթերցողներին մատուցում էր որպես ամենամեծ պաշտոնյայի և ամենաետին գյուղացու համատեղ մրջնային աշխատանք: Այս պարզունակ հաղորդումը, որ, այնուամենայնիվ, առարկայական ճշմարտություն էր պարունակում, իրոք ատակ էր որոշակի ազգային լիցք տալու դեռևս նույնիսկ վրանաքաղաքներում ապրող Սիրիա-Լիբանանյան հայությանը:

Նույն կարգի լրատվությունը, սակայն, արժանանում էր սուր քննադատության Խորհրդային Դայաստանում: Եվ միանգամայն բնական էր, որ Սփյուռքի մամուլը բազմիցս անդրադառնում էր ննան անհանդուրժողականությանը. իր անհանաձայնությունը, իսկ երբեմն էլ կշտամբանքը հայտնում այդ առիթներով: Խնդիրը լուսաբանելու համար կարելի է հիշատակել Մարտելի «Դայ սիրու» շաբաթաթերթի մի ելույթը (1925 թ.): «**Զրկված ու խարված, երբ մեր հայությունն անգամ շատ կը տեսնվի օտար հորիզոններու տակ, մենք ինքնաքերաբար մեր սրտերը կը բանանք Դայաստանին: Նա պետք է ըմբռնե մեր հույսն ու տառապանքը և ոչ թե օտարներու հեգնության ի տես ինքն ալ քրքան իր հարազատ զավակներու խեղճության վրա: Իսկ արտասահմանի հայերը ևս պետք է քիչ մավելի անվերապահ ու անկեղծ վերաբերում մը ցույց տան Դայաստանին առանց քաղաքական նկատառումներու»:**

Արտասահմանի հայերի առջև Դայաստանը այդ պահին մեկ հիմնական խնդիր էր դնում նյութական օգնության խնդիրը, և ինչպես առիթ ունեցանք տեսնելու, երկրի դեկավարները լրջորեն դժգոհ էին օգնության չնշին քանակությունից: Դասարակական ուժերը, սակայն, իրենց առավելագույնն էին անում, որպեսզի Դայաստանին օգնության խնդիրը տևաբար մնար զաղբահայության ուշադրության կենտրոնում: Այդ գործին հավասարաշափ լծված էր և չեզոք տարրը: Դամապատասխան նյութեր կարելի է գտնել թե հեռավոր Բըրքլիում լույս տեսնող «Լույս» ամսաթերթում, թե Ալեքսանդրիայի «Սֆինքս» շաբաթաթերթում, թե Աթենքի «Դադրանակ» օրաբերքում և թե մյուս օրգաններում: Իսկ Ֆրեզնոյի «Մշակ» անկախ հայաթերքը հարցն այսպես էր նատուրալ մատուցում (1926 թ.): «**Երբ գիտցանք հիսուս երկար տարիներ մեր ուժերը կեղրոնացնել ցեղի ազատագրական պայքարին համար, գոնե տասը տարի ալ ազգովին նվիրվենք և նվիրենք մեր ուժերը հայրենիքի տնտեսական և մտավոր վերածնության պայքարին»:**

Չեզոք մտածողության համար քսանական թվականներին, ասենք

հետագայում էլ, բնութագրական էր կուսակցությունների գործունեության առանձին կողմերի քննադատությունը, մինչև իսկ նրանց գոյության իրավունքի մերժումը: Դաճախ նման քննադատությունն ուներ ենթակայական ելակետ, հաճախ էլ հրապարակ էր հանվում առանց գոյություն ունեցող իրականության լուրջ վերլուծության: Մեկ կետում, սակայն, այդ քննադատությունը գրեթե միշտ իրավացի էր, դա կուսակցական բանակովի ոճի մերժումն էր: Լուսարանության համար կարելի է քաղվածարար բերել «Աֆինքսի» արդարացի զայրույթն առաջացրած քաղաքական վայրախոսության հավաքածուն: Թերթում կարդում ենք. «Անվանարկություն... Մատնիշ, դավաճան, սրիկա, Սոսկվայի գործակալ, պոլշնիկ, տեռորիստ, ահարենիչ: Ահավասիկ փաղաքշական բառերը, որոնք կը գործածվին իրարու հանդեպ թեմերեն և կուսակցական մամուլին մեջ»:

Ոիտումը այն մասին, թե Լոգանի խորհրդաժողովից հետո Դայկական դատը քավականին տևական ժամանակով դուրս եկավ օրակարգից, հաստատվում է նաև քսանական թվականների երկրորդ կեսին գաղթահայ իրականության մեջ գործող չեզոք մանուկի վարժագծով: Ամիսներ ու նույնիսկ տարիներ շարունակ խնդիրը չի արծարծվում իրըն քաղաքական մտքի և գործունեության առարկա՝ ասպարեզը ծգելով միայն գրականագիտական մտքին ու գրականությանը: Եվ նույնիսկ, որքան էլ դա այսօր տարօրինակ հնչի, Դայ դատի հետապնդումը երթեմն համարվել է վնասակար:

Կահիրեի «Լուսարձակ» շաբաթաթերթը 1928 թվականին «Դայկական հարց» վերտառությամբ խմբագրականում գրում էր. «Մի հավատաք, երբ հոս ու հոն մերթ պատուհան մը կը բացվի ու անկե Դայկական հարցի մը կենդանության ծայները մեզ լսել տալ կը փորձվի, ան գոյություն չունի ոչ Ամերիկայի, ոչ Եվրոպայի և ոչ իսկ հայ գաղութներու մեջ: Ոչ միայն ավելորդ, այլ վնասակար է նույնիսկ, որ գաղութները անով գրադին, և բույլատրեն, որ մանավանդ ուրիշներ ալ անով գրադին մեր անունով»:

Թերթը, այնուհետև, խոսում է Ռուսաստանի, Դայաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի միջյանց կողք կողդի գոյության մասին, ըստ երևույթին գտնելով, թե ստատուս քվոն խախտել անհնարին է, ուստի և «ավելորդ ու վնասակար» է գտնում հայության շեղելը իր առտնին և առօրյա խնդիրներից: Դայությունը, ըստ խմբագրության, «գրադվելու է միայն այն խնդիրներով, որոնք իր գոյության պահպանման հետ

առնչություն ունին: Թող աշխատի ան գաղութներու հայության ստվար մասը հայացնելու, թող աշխատի իր գաղութային կեդրոնները կազմակերպելու և անոնց միջև փոխադարձ հասկացողություն, կարգապահություն ու պարտականություն հաստատելու: Աս է անոր համար Դայկական հարցը, որ ներքին հարց մըն է այլևս, գայն դուրսը փնտրելը կամ փնտրել տալը անհմաստ է, տղայական»:

Այս մտայնությունը, որ քանական թվականներին համարվում էր թե երկրի և թե Սփյուռքի որոշակի ուժերի իրապաշտ մոտեցման իմաստուն քաղաքականության արդյունք, ըստ եռթյան, մեկուկես նիլիոն զոհ խլած, ահավոր պարտություն պատճառած վախի ու անօգնականության հոգեբանության դրսնորման ծև էր, երբ գորեք ամրող հայ ազգային ուժերը տակտիկական լուծումները շփորում էին ստրատեգիական խնդիրների հետ, և այդ պատճառով երկրորդը ակամայից կամ գտակցար զոհարերվում էր:

4. ՊԱՅՔԱՐԻ ԲՈՐԲՈՔՈՒԾ

Ա. ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՑ ԽՆԴԻՐԸ

Սփյուռքի և Խորհրդային Դայաստանի քաղաքական ուժերի պայքարի տրամաբանությունը թերեւ մի հանգրվանի, երբ քանական թվականների կեսերին ԴՇ դաշնակցությունը, առանց նույնիսկ լուրջ ճիզ գործադրելու, ծեռք թերեւ վիրխարի նշանակության բարոյական գենք՝ ազգային պետականության խորհրդանշները դառնալով թե՝ մայիսի 28-ի, թե՝ եռագույն դրոշակի մենաշնորհյալ տերը:

Խորհրդային իշխանության հաստատումից հետո կրմունխստական կուսակցությունը տարավ մի քաղաքականություն, որը կոչված էր բնակչության մեջ արհամարհանք մշակելու նախորդած բուրժուական հանրապետությունների դեմ: Նույնը կրկնվեց նաև Մերձբալթյան հանրապետությունների կցումից հետո: Դայաստանում, որտեղ նման պարագաներում արքայից ավելի արքայամեծարումը առածի կարգն է անցել, մանավանդ, 1921 թ. փետրվարյան դեպքերից հետո, արհամարհանքը նախորդող հանրապետության նկատմամբ հասավ ուսեցրած չափե-

րի, պատմական փաստը անպատճառ ներկայացվում էր ոչ իբրև հայ ժողովոդի պետություն, այլ «Դաշնակցական պետություն»: Յայաստանի դեկավարությունը, այսպիսով, կամովին հրաժարվեց թե՝ ազգային պետականության վերականգնման պատմական տարեթվից՝ փոխարենը միշտ ցուցադրելով 1920 թվականի նոյեմբերի 29-ը, թե՝ այդ ազգային պետականությունը խորհրդանշող եռագույն դրոշակից:

Գաղթաշխարհում, սակայն, դյուրավ չեղ ընթացքը:

Դարձի պատմությունը շատ կարծ է: Բասանական թվականների կեսերից դաշնակցությունն սկսեց գործածել զույգ խորհրդանշներն էլ որպես քաղաքական հակադրություն խորհրդային Յայաստանին: Մի քանի տասնյակ տարիների ընթացքում բազմաթիվ եղան այդ ամենի շուրջ ծագած վեճերը, հակադրությունները, առճակատումները, նույնիսկ այնպիսի բախումները, որոնց հետևանքով հայ արյուն էր հոսում:

Դետաքրքրական է, որ դեռ վաղորդայինն խնդիրն արդեն ներկայացվում էր Յայաստանի Դանրապետությունը և կառավարող կուսակցությունը զատորոշելու բնույթով: 1921 թվականին Բռուտում լուս տեսանող ռամկավարական «Պահակ» թերթում հանդիպում ենք այսպիսի մտքի: «... մեզմե ոմանք ալ շփորեցին առժամյա և վաղանցուկ կառավարությունը այն հավիտենական և գերագույն հաստատության՝ Դանրապետության հետ, որ ազգային իշխանության վսեմ խորհուրդը կը մարմնացներ: Դաշնակցության հետ արդար կոիվ ունինք, այնպես ծևացուցին շատեր, ընդ որում և դաշնակցականներ, թե այդ կոիվը Դայաստանի Դանրապետության հետ էր»: Ամերիկայի ռամկավարական օրգանը հանրությանը ի ցույց է դնում մի փաստ, որի հանրահայտությունը ծրագրված անգիտանում էին թե՝ խորհրդային Յայաստանի պաշտոնական շրջաններն ու համապատասխան պրոպագանդը, թե՝ նույնիսկ դաշնակցական շատ զաղափարախոսներ ու գործիչներ, անշուշտ, յուրաքանչյուր կողմը՝ իր աշտարակից դիտելով:

Դետագայում էլ ՈՍԿ-ը, տարբեր առիթներով, ըստ արժանվույն է գնահատել հայ ժողովոդի պետականության վերականգնման ակտը: Միաժամանակ կուսակցության ու նրա կազմակերպությունների դիրքորոշման տեսակետից կարևորություն է ստանում, թե ինչ փաստարկումներով էր, որ ռամկավարությունը դադարեց մասնակցել մայիսի 28-ի նշանը: Պատասխանը տալիս է նրա՝ Փարիզի պաշտոնաթերը «Ապագան» 1924 թվականին:

— Մայիսի 28-ի հայտարարված անկախությունը, — գրում է թեր-

թը,—որքան էլ որ նա ծնված լիներ ուստական հեղափոխության հանգրվաններից և պարտադրված՝ թուրքական քաղաքականությամբ, այսուհանողերծ գուգաղիպում էր հայ ժողովրդի ազատաշիրական տենչերին։ Դենց այդ պատճառով՝ ՈԱԿ-ը միշտ մասնակցել է հանդիսություններին։ Բայց քանի որ նման տոնակատարությունները վեր են ածվում ներկա Դայաստանի դեն քաղաքական ցույցի և նրա վերագրավման ծրագրի տարիողման, ուստի, հենց այդ պատճառով, Ումակավար ազատական կուսակցությունը այլևս չի մասնակցում նման ծեռնարկումներին։

ՄԴ հնչակյան կուսակցության դիրքորոշումը նս ոչ մի կասկած չի թողնում, թե նրանք էլ ի սկզբանե տոնակատարել են մայիսի 28-ը որպես անկախության տոն։ «Երիտասարդ Դայաստանը» 1921 թվականի մայիսին իր խմբագրականներից նեկը անվանել է «Մեր ազատության երրորդ տարելիցը», իսկ, ի տարբերություն ուսմկավարների, «Արձագանք Փարիզին» 1925 թվականին գրում էր, թե մայիսի 28-ը «պետք է տոնվի բովանդակ հայության կողմե, առանց կուսակցական խորության, վասնգի մեր վերածնունդի այդ խնկելի օրը դարբնել է ինքը՝ հայ ժողովուրդը և ոչ թե այս կամ այն կուսակցությունը միայն»։

Անկախ և չեզոք նամուլը քանական թվականներին, սրափ հայացքով դիտելով խնդրո առարկա հարցը, հիմնականում հանգում էր լրջմիտ և ազգօգուտ լուծումների։ 1924 թվականին մայիսի 28-ի առիվ, հավանաբար անհամաձայն գտնվելով այդ օրվա նշնան կոնկրետ ծնի հետ, Կիպրոսի «Արաքս» անհրաժեշտ է գտնում առաջարկություն թերել, որպեսզի տոնակատարվի ոչ թե վարչածնի տարեղարձը, այլ անկախության։ «Վարչածները ժամանակավոր են, — հիմնավորում է իր թեզը խմբագրությունը, — հավիտյանը ժողովուրդն է»։

Եռագույն դրոշակի գործածության խնդիրը գրեթե նույն փաստարկներին ու հիմնավորումներին է արժանանում։ Այնուամենայնիվ մնայուն հետաքրքրություն է ներկայացնում Ֆրեզնոյի «Մշակ» թերթի մի խմբագրականը իր լայնախության տեսակետից։ Թերթը հիմարություն և տափակ մտայնություն է համարում, երբ ումանք, կամովին հրաժարվելով, եռագույնը հանձնում են ՀՀ դաշնակցության։ «Ասիկա մեծ պատիվ մըն է, որ ՀՀ դաշնակցության հակառակորդները անգիտակցարար կը շնորհեն իրենց հակառակորդներուն։ Բայց հայության մեծամասնությունը կազմող գիտակից տարրերը, այս գաղափարին վրա ժիծաղելով, չեն ուզեր Եռագույնին հանդեպ իրենց ունեցած հավաքական անժխտելի իրավունքը իրը նվեր հրամցնել ասոր, անոր։

Վեց հարյուր տարիներու գերություննեն ետք, հայ անկախության սկզբնական օրերուն դրոշակ մը պետք էր մեր Անկախությունը խորհրդանշող, և այդ պատճառով բարձրացված դրոշակը, որ եռագույնն էր, համազային բնույթ ստացավ:

Պարագան այնպես բերավ, որ Դաշնակցությունը գտնվի պետության գլուխը, որը երեք չենթադրեր, թե ազգային դրոշը կը կազմենույն այդ կուսակցության սեփականությունը»:

Այնուամենայնիվ, պատմությունը գնաց հայտնի ընթացքով, նվիրաբերությունը կատարվեց: Դաշնակցությունն էլ իր հերթին, որ քսանական թվականների երկրորդ կեսին ուժեղ առաջատարական քաղաքականության էր հետևում, բնականարար, պատրաստակամությամբ պետք է օգտվեր այդ շենք ընծայից և պիտի ջանար առավելագույնը ստանալ դրա գործադրությունը: Բնական էր նաև, որ կիրառվեին զանազան մեթոդներ, ոնք ու կերպեր մենաշնորհի ամրապնդման և վերջնականացման նպատակով:

Ամեն պարագայում ՀՀ դաշնակցության դեկավարությունը ցուցաբերեց տվյալ հարցուն տակտիկական ճկունություն և հեռատեսություն: Ազգային գաղափարաբանության մակարդակի վրա Դայաստանի պաշտոնական քաղաքականությունը վրիպում վրիպումի հետևից էր բույլ տալիս՝ գուգահեռաբար հրաժարվելով կամ կորցնելով համազային արժեք ներկայացնող հասարակական-պատմական երևույթներ, դեպքեր ու դեմքեր: ՀՀ դաշնակցությունը ծեռնիասորեն և հմուտ օգտագործում էր յուրաքանչյուր աօիթք: Զարմանալի պիտի չըվա, որ երկու տասնամյակի ընթացքում կուսակցության գաղափարախոսական շտեմարանում համազային լուրջ հարստություն կուտակվեց, ազգային ազատագրական պայքարի շատ դրվագներ ու հերոսներ, ինչպես, օրինակ, Սարդարապատի ճակատամարտը և Անդրանիկը, ազգային պետականության հատկացուցիչները, ինքը՝ Դայաստանի Դանրապետությունը, ազգային քայլերը, գինանշանը, դրոշակը, ազգային մշակույթի արժեքավոր էջեր, հերոսական ու հայրենասիրական ամրող երգացանկը, գրականության խոշորագույն դեմքեր, Շաֆֆի, Շանթ, Ահարոնյան և այլն: Նույնիսկ Ե. Չարենցի հիշատակի հովանավորությունը ստանձնեց հավակնելով նրա վաստակի մի լուրջ մասի վրա: Եվ եթե հետագայում այդ արժեքների մեջ մասը վերադրվեց ամրող ազգին, այդ թվում և Խորհրդային Դայաստանի հայությանը, ապա դրանց պահպանման ու պրոպագանդայի հարցում մեծ էր ՀՀ դաշնակցության դերը: Մեծ էր այդ

դերը նաև ուրիշ տեսանկյունից՝ Երևան–Մոսկվա–ՀՀԴ եռանկյունու տրամաբանությամբ, որի մասին խոսել ենք վերը, և որի շնորհիվ շատ դրական բան կատարվեց հենց ՀՀ դաշնակցության «շտեմարանը պարպած լինելու» պատրվակով:

Քաղաքական պայքարը, անշուշտ, ունի իր օրենքներն ու տրամաբանությունը: Բայց, երբ կողմերից մեկն անցնում է դրանց հասարակականորեն ընդունված սահմանները, վերահասու աղետը իրեն երկար սպասել չի տալիս: Դենց նման կարգի երևույթներ տեղի ունեցան դրոշակի պարագայում:

Ինչ—որ մի կարծ շրջանում ՀՀ դաշնակցությունը դրոշակի գործոնն օգտագործում էր բանականության սահմաններում և բավականին հաջողությամբ: Երեսնական թվականներին, սակայն, ՀՀ դաշնակցությունն անցավ բարոյական ահաբեկչության քաղաքականության ձգտելով դրոշակի գործոնից քամել առավելագույն արդյունքը, հակառակորդին բարոյապես ճնշելու, ոչնչացնելու ակնկալությամբ: Եռագույնը սկսեցին պարտադրել ամենուրեք դպրոցներում ու մշակույթի թե մարզական օջախներում, հանդիսարահներում թե ժողովատներում, քայլարշավմերի թե դաշտագնացության ժամանակ, մանկապարտեզի երեխաններին թե մեծերին, աշխարհականներին թե հոգևորականներին: Դրոշակը պարտադրվեց նույնիսկ եկեղեցիներին:

Դակադարձությունը ուժին էր նույնքան: Դրոշակը, որ ընդամենը միջկուսակցական պայքարի գործիք էր, ըստ եռթյան, դարձավ թիրախ: Պայքարի արտահայտչածնը փոխակերպվեց բովանդակության: Մարդիկ, ասես, մոռացել էին, թե իրականում որն է պայքարի եռթյունը, թե ինչ ունեն կուսակցությունները միմյանց դեմ և կովում էին դրոշակի դեմ կամ փոխադարձվում դարձյալ հանուն դրոշակի: Եղան հակառակորդներ, որ դրոշակը հրապարակավ անվանեցին «քուրքի կտոր»: Տեղի ունեցան արյունոտ միջադեպեր, եղան զոհեր: 1932-ին արդեն պայքարը այն աստիճան շիկացած էր, որ Փարիզի «Յառաջը» երևույթը կոչեց «Դրոշամարտ»:

«Դրոշամարտ» իր գագաթնակետին հասավ 1933-ի տարեվերջին ունենալով ողբերգական վախճան: Դրոշակի գործածումը եկեղեցում արգելվու համար սպանվեց Ամերիկայի թեմի առաջնորդ Ղևոնդ արքեպիսկոպոս Շուրյանը: Այդ հանցագործ ակտը ՀՀ դաշնակցության քաղաքական վրիպումն էր, որը մեծապես վնասեց նրա վարկին, նույնիսկ համակիրների շրջանում:

Ավիյութքահայության մի զգալի մասի մոտ դեռևս հաղթահարված չէ դրոշակի նկատմամբ գոյացած հոգեբանական բարդույթը: Դրանով պետք է բացատրել լուրջ դիմադրությունը, որով Սփյուռքի այլազան հատվածներ և անհատներ ընդունեցին Հայաստանի Գերագույն խորհրդի 1989 թվականի որոշումը Եռագույնը ազգային դրոշ ազդարարելու մասին:

Այս ամենի կողքին պետք է շեշտել, սակայն, որ Սփյուռքում գտնվել են ուժեր, որոնք խորհրդանշիշների խնդրին մոտեցել են ավելի սրափ, առողջ դիրքերից: Հատկապես շեշտելի է գրող-հրապարակախոս Անդրանիկ Շառուվյանի դիրքորոշումը: Նա խորաբափանց տեսնում էր հարցի ամբողջ բովանդակությունը: Նրա հայեցակետում ընդունելի չեղ Առաջին և Երկրորդ համբաւությունների խորհրդանշիշների հակադրությունը, որի մեջ նա ընկալում էր հայոց երկու պետությունների հակադրության միանգամայն մերժելի երևույթը: Մեր գույգ հանրապետությունները նրա աչքում նույն շենքի տարրեր հարկաբաժիններն էին: Առաջինը ներկված էր Եռագույն, Երկրորդը՝ կարմիր: Եվ նոյեմբերի 29-ը, հետևաբար, մայիսի 28-ի շարունակությունն էր: Հայոց պետականությունը նա դիտարկում էր իրեն միասնական կառույց:

Բ. ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Ազգային գաղափարաբանության հիմնայումը, թերևս, «ազգային միասնություն» ստորոգությունն է (կատեգորիան): Ազգային գաղափարաբանությունը վերջին հաշվով թիրախում է ազգի ազատ, անկախ պետականությունը, իր ազգային տարածքով, ազգային շուկայով: Ժամանակակից բոլոր ազգերը, որոնք այսօր ներկայացնում են աշխարհի քաղաքական քարտեզը, իրենց ազգային գաղափարաբանության իրացմանը հասել են ազգային կոնսուլիդացիայի (միասնության) հիման վրա:

Սփյուռքը, բնականաբար, չեղ կարող հետապնդել օտար ափերի վրա սեփական պետականության ստեղծման նպատակը: Ազգային գաղափարաբանությունը, սակայն, իրև իդեալ, եղավ նրա ազգային կեցության խարիսխը: Եվ ուսումնասիրողի, թե պարզ հետաքրքրվողի առջև անմիջապես հարց է ծագում. ստեղծվեց, արդյոք, Սփյուռքում ազգային միասնություն, այն հիմնայունը, որի վրա կարող էր խարսխվել ազգապահպանության ամբողջ մեխանիզմը: Պատասխանը միամշանակ է. ոչ, չստեղծվեց:

Պատճառները բազմազան են: Նախ հոգեբանականը: Ազգային գաղափարախոսությունը Սփյուռքի պայմաններում հանդես էր գալիս խիստ եթերային վիճակով, քանի որ իհմնական ու վերջնական թիրախը թվում էր անհասանելի: Բնականաբար, նման բուլությունը և սահմանափակ դրսորումը առում էր հոգեբանական բարդույթներ, որոնց հետևանքով շատերը զանգվածաբար բավարարվում էին առտնին հայկականությամբ (լեզվի ուսուցում, կենցաղ, որոշ ավանդական բարքեր, բաղական եկեղեցի): Պատահական չէ, որ Արևմուտքի երկրներում հայության գերակշռող մասը բացարձակորեն դուրս է մնում ազգային կուսակցությունների և միությունների ազդեցության ոլորտից (որոշ տվյալներով՝ մինչև 80 տոկոսը):

Դիմնականը, սակայն, պայքարի անհանդուրժելի մթնոլորտն էր, որի պայմաններում չափազանցվում էին կրքերը, անճոռնի ու խեղված դրսորվում էին հաճախ նույնիսկ պարզ մարդկային հարաբերությունները: ԱՄՆ-ում, օրինակ, երբ եկեղեցական տագնապի բերումով ստեղծվեցին Հայաստանյաց եկեղեցու գուգահեռ հաստատությունները, հանգործություն էր համարվում գույզ հայորդիների պատճ, եթե նրանցից մեկն ու մեկը «հակառակորդ» եկեղեցու գավակ էր: Մինչև օրս թիւ չեն դեպքերը, երբ այս կամ այն քաղաքական կազմակերպության կամ մշակութային միության անդամներն իրենցից դուրս ուրիշ հայության գոյությունը չեն ճանաչում: Տասնյակ տարիների ընթացքում այլազան մշակութային, մարզական միությունները կազմակերպել են բազմաթիվ փառատոններ, նավասարդյան խաղեր, և հազվադեպ է եղել, որ նման ծեռնարկումներին հրավիրեին կամ մասնակցեին մյուս միավորումների համապատասխան խմբերը: Իսկ վարսուն-ուրսունական թվականներին Հայաստանից Սփյուռք մեկնած մշակութային խմբերի ելույթները երբեմն ծախողվել են պարզապես այն պատճառով, որ հրավիրողին ի հեճուկս, մյուս միությունները խաչածել են միջոցառումը, կամ կազմակերպել են բոյկոտ: Եվ սա բացառություն չէ որևէ քաղաքական խմբակցության համար:

Ազգային միասնություն ծեռք բերելու, համագաղութային և համագույն մարմիններ ստեղծելու փորձեր, անշուշտ, կատարվել են:

Արդեն Սփյուռքի գոյավորման հենց արշալույսին, մանավանդ Լոզանի ծախողանքին իրու հակառածություն, քաղաքական գրեթե բոլոր և չեզոք շատ կողմերից առաջարկություններ էին լսվում Համագաղութա-

յին համագումար հրավիրելու մասին: Երբ ժողովուրդը կանգնում է պատմության խաչմերուկում, և անհրաժեշտ է լինում մտածել հետագա ուղիների մասին, գրեթե միշտ առաջադրվող ծրագրերին համազգային գունավորում է տրվում: Այսպես ծագեց և համագումարի գաղափարը: Թեպես չկար հստակ ծրագիր, մի քան պարզ էր, որ նման համագումարը պիտի հոգար գաղութահայության հետագա ազգային կեցության հոգսերը:

Դարձը արծարծվեց նաև ՌՍԿ-ի Բ պատգամավորական ժողովում 1924 թվականին: Ռամկավարները, սկզբունքորեն ընդունելով նման համագումարի անհրաժեշտությունը, գործնականում ապագային բողեցին հարցը, քանի որ Դայաստանի Դանրապետության պատվիրակությունը մտադրություն չուներ «ծեռնթափ ըլլալու», իսկ նրան օժանդակող կուսակցությունը, այսինքն ՀՀԴ-ը, շարունակում էր Դայաստանի հանդեպ իր բացասական դիրքն ու արտահայտությունները: «Երբ պատճառ կա մտածելու, թե համագումարի մը ետքն ալ պիտի շարունակվի մարմնի մը քաղաքական անջատ ու անպատճախանատու գործունեությունը և կուսակցության մը թշնամական պրոպագանդը մաս մը ժողովուրդ հեռու պիտի պահե հավաքական ու կեղրոնացյալ ծրագրեն, և Դամագումարը, եթե տեղի ունենա այդ հանգամանքներուն մեջ, մասամբ պիտի վրիպի իր կոչումեն»,— ասված է Պատգամավորականի քանածում:

Դարձը, սակայն, օրակարգից դուրս չեկավ: Ամբողջ տասնամյակի ընթացքում բազմիցս և պարբերաբար մամուլում դրվել ու քննարկվել է համասփյուռքյան միասնական կառույց ստեղծելու խնդիրը: Առավել ուժգնապես սկսեց հնչել պահանջը 1929–1934 թվականների ժամանակահատվածում, երբ հստակ եղավ այլնս, որ Լոզանի ճախողանքից հետո Սփյուռքը իր ամբողջություն և այլազան երկրներում ցրված համայնքները դեռևս չեին կարողացել գտնել ազգային կեցությունը ապահովող և ուժացնան դեմ արդյունավետ պայքարի միջոցները: Ընդհակառակն, էլ ավելի ցայտուն էր դարձել խառնաշփոր վիճակը, աստիճանաբար նակարդվում էին միջգաղութային կապերը: Կարո Սասունին կացությունը անվանեց (1929–ին) «ազգային քառս», մի բնորոշում, որ հարազատորնեն թարգմանում էր իրողությունը:

Իրերն այնպես էին դասավորել, որ «Արևմտահայ համագումարի» հրավիրման, միջգաղութային կենտրոնական մարմնի ստեղծնան առաջարկություններով հանդես էր գալիս ՀՀ դաշնակցությունը, իսկ հակա-

ռակորդ ճակատը, պատասխանների մեջ երանգների տարրերությամբ հանդերձ, մերժում էր: Այս երևույթը, ինքնըստինքյան, ցուցադրում էր առհասարակ քաղաքական ուժերի համեմատական հարաբերակցությունը: Նախաձեռնողը վստահ էր իր առավելության նկատմամբ, հակառակորդները նույնքան վստահ էին, որ ապագա համասփյության մարմնում պիտի գրավեն ընդդիմադիրների աթոռները: «Պատահական չէ, որ նախաձեռնողը իր ծրագրին տալիս էր համասփյության շահի գումավորում, և դա անում էր նիհանգամայն իրավացիորեն, քանի նման մարմնի գոյությունը իրոք կարող էր նպաստավորել գաղութահայության ազգային կեցությունը»:

ՀՅԴ բյուրոյի անդամ Շ. Միսաքյանը իր թերթի «Յառաջի» էջերում ժամանակի գաղթահայության կյանքի բոլոր դժվարությունները, սխալներն ու ախտերը կապում էր կենտրոնական մարմնի բացակայության հետ: «Յառաջին» է պատկանում «**Յայեր բոլոր երկրների, միացե՛ք**» կարգախոսը: Նա գտնում էր, որ հայությունը պետք է հստակ ծրագրեր ունենա, թե որոշակի ինչ քաղաքականություն տանել, օրինակ, Բալկանյան երկրներում, Լիբանանում, Սիրիայում, Սիցազետքում կամ Պարսկաստանում: Բայց չունի կենտրոնացված մարմնի բացակայության պատճառով: Եվ, եթե չստեղծվի նման մարմին, Շ. Միսաքյանը հոգեստսությամբ փլուզում էր գուշակում Սփյուռքի հանրային կյանքի համար հաջորդ տասնամյակի ընթացքում:

ՈՎ կուսակցությունը չէր առարկում գաղութեներում տիրող ընդիանուր վիճակի գնահատությանը: Նա էլ անհրաժեշտ էր գտնում կազմակերպական ինչ—որ կերպի ստեղծումը: Բայց, քանի որ նա տվյալ հարցում բացառում էր միջկուսակցական գործակցությունը, հրապարակի վրա դրեց «Մեկ անձի իշխանություն» գաղափարը: Այսինքն Սփյուռքի տարածքով մեկ գտնել մի եզակի հեղինակություն, որին բոլոր կողմները համաձայնեին ենթարկվել: Այս գաղափարը, որ երևացել էր «Արևում» (Եգիպտոս), պաշտպանություն չգտնելով մյուս ուժերի մոտ և ռածկավար ուրիշ շրջանակներում, մարեց, և 1929 թվականին գումարված հերթական պատգամավորական ժողովը նիհանշանակ մերժեց խնդիրը համագաղութային մարմնի ստեղծումը գտնելով «անզործնական» և «անկարելի»:

Զախակողմյանները, որոնք արդեն իսկ խիստ գոհ և հպարտ էին Սփյուռքի պառակտված վիճակով, հարցը մերժում էին ինոց արմատի վրա: Փարիզի «Դարբնոցը» (1932—ին) դեռ չծնված կենտրոնական մար-

մինը, որ հնարավոր է թե լիներ «ազգային խորհրդարան», անմիջապես կոչեց «ազգային ծիվաղարան»։ Դիմնական մտահոգությունը, սակայն, հայտնեց «Արշավը», որն արտահայտվեց արևմտահայ համագումարի դեմ (1932-ին)։ Ըստ նրա՝ նման ծեռնարկումը հայ բուրժուազիայի միացյալ ճակատ, գաղութային անհայրենիք պետություն ստեղծելու ծրագիր էր։ Կարծիք է անվարան ասել, թե այդ մտահոգությունը հարազատորեն թարգմանում էր խորհրդային Հայաստանի իշխանությունների հայացքները տվյալ հարցի վրա, եթե, անշուշտ, ուղղակիորեն թելադրված չեր հենց նույն իշխանությունների կողմից։

«Մարտկոցական» շարժումը վերարձարձեց խնդիրը, բայց արդեն ուրիշ տեսանկյունից։ Նա գտնում էր, որ ՀՀԴ դեկավարությունը դավաճանել է Հայ դատին և «Արևմտահայ համագումար» էր պահանջում արդարության վերականգնման համար։ «Մարտկոցի» որոշ առումով հետնորդ «Ամրոցը», սլաքները նույնպես ուղղելով ՀՀԴ դեկավարության դեմ, համագումար էր պահանջում, որպեսզի ընտրված կենտրոնական մարմինը («Սփյուռքը պետք է գլուխ ունենա») կանխեր այնպիսի չարագործությունները, ինչպիսին Ղևոնդ արք, Դուրյանի սպանությունն էր։

4. ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԸ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԹԻՐԱԽ

Խնդրո առարկա տարիներին գաղութահայության մեջ տիրող ընդհանուր մթնոլորտի վավերական վկայություն կարող է ծառայել Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՍ) շուրջ ծագած քաղաքական քաշբշուկը։ Այդ ժամանակներում, երբ վեճի մեջ ներքաշված էին լինում քաղաքական կուսակցությունները, վաստահարար նրանցից յուրաքանչյուրը խոսում էր ամբողջ հայ ժողովորդի անունից, թերևս անկեղծորեն հավատում էլ էր, թե իրոք հենց միայն ինքն է, որ մարմնավորում է ժողովորդի կամքը, գործնականում, սակայն, իր քաղաքական կուսակցական ազդեցության գոտին էր ընդլայնում կամ շահն էր հետապնդում։

Ռամկավարները, որ ՀԲԸՍ-ի ստեղծման (1906 թ.) օրերից սերտաճել են Բարեգործականի կառուցյների հետ՝ նրա կառավարման համակարգի բոլոր մակարդակներում, կարողացան հաջողությամբ փակել ՀԲԸՍ-ի, գեր նրա դեկավար մարմինների դռները քաղաքական մյուս հոսանքների առջև, մինչև օրս էլ պահպանել են այդ մենաշնորհը։ ՈԱԿ-ը միշտ գործում, աշխատանքային կարգով շտկել է ՀԲԸՍ-ի թերու-

թյունները, կատարելագործել նրա կառավարումը, որոշել նրա ընդգրկման դաշտը՝ իրապարակավ, իրու կանոն, դիտողություն կամ կշտամբանքի խոսք թույլ չտալով Բարեգործականի հասցեին:

Բանական թվականների երկրորդ կեսից ՀԲԸ-ն դարձավ Խորհրդային Հայաստանի պաշտոնական իշխանությունների, Սփյուռքի հայ համայնավարների և ՀՅ դաշնակցության քննադատության հիմնական թիրախներից մեկը: Նետաքրքրական է նշել, որ ՀՅՇ-ի և հայ համայնավարների քննադատության սոցիալական բովանդակությունը հաճախ նույնանում էր, ստանում «հարուստներից» «աշխատավորական» դասակարգային պահանջի բնույթ:

Ալ. Մյասնիկյանը, Ա. Շովիաննիսյանը և ուրիշներ դժգոհ էին Հայաստանին տրամադրվող նյութական միջոցների ծավալից, և ՀԲԸ-ն, ՈԱԿ-ի հետ մեկտեղ կոչեցին Հայաստանի «կեղծ բարեկամներ»: ԶՕԿ-ը ըստ էության, իրաժարվեց ՀԲԸ-ի հետ ունեցած մշտական գործակցությունից և Սփյուռքում ստեղծեց սեփական մասնաճյուղերը, որոնց մեջ մասից օտարվեցին «կեղծ բարեկամները»: ԶՕԿ-ը և Հայաստանի Կարմիր խաչը կազմակերպեցին արտասահմանում «Հայ ժողովրդական հարստությունների» ուսումնասիրություն, որի եզրակացությունն էր, թե կտակված կամ ժողովված գումարներն անցնում են մեկ տասնյակ միլիոն ռուբլուց: Իշխանությունները պահանջում էին բոլոր միջոցները, այդ բվում և Բարեգործականի տնօրինության տակ եղածները, ամրողացվին փոխանցել Հայաստանին, առանց որևէ ցենտ ծախսելու Սփյուռքի կարիքների համար (որրանցներ, դպրոցներ և այլն):

ՀՅ դաշնակցությունը դժգոհ էր ՈԱԿ-ի մենատիրությունից և ծգտում էր Բարեգործականի միջոցներից շոշափելի բաժին հանել նաև իր մականի տակ գործող միավորումների օգտին: ՀՅ դաշնակցության քննադատությունը, երբեմն բուռն, երբեմն խաղաղ, երբեք, սակայն, շղադարեց: Բուռն հարձակումների ոգին բնութագրում է, օրինակ, Շունաստանի «Շորիզոն» օրաթերթի մի խմբագրականը (1936), որի մեջ ասված է. «**Մեզի կը մնա մեկ ուղեգիծ, ուրկե կ'ընթանանք արդեն՝ պայքար և կատաղի պայքար բարեգործականի դեմ...** Շեշտակի հարված՝ ուղիղ ծակատին, ուղիղ սրտին: **Առանց վարանումի...** կամ անիկա տեղի պիտի տա Դաշնակցության և անոր համակիր գանգվածի գերազանց ուժին, և կամ պայքարը պիտի շարունակվի երկար ժամանակ և ամենայն սաստկությամբ: **Միջին ծամփա չկա:**»

ՀԲԸ-ի դեմ պայքարի յուրատեսակ գագաթնակետ եղավ Հայկոմկու-

սի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանի հայտարարությունը 1931 թ. աշնանը, որով ՀԲԸՍ-Ը և նրա նախագահ Գալուստ Կյուլպենկյանը լրջորեն մեղադրվում էին Սիրիայի հողանասում հայկական «Ազգային օջախ» ստեղծելու մեջ: Այդ մասին վերն արդեն հիշատակվել է: Պետք է ավելացնել միայն, որ հարցը Հայաստանի կողմից ներկայացվեց իրև քաղաքական գործողություն: Լոգանի խորհրդաժողովում շրջանառության մեջ եղած «Հայկական օջախը» մեխանիկորեն վերագրվեց հիշյալ մի քանի գյուղերին: «Հայկական ազգային օջախ» հասկացությունը անցած տասը տարիների ընթացքում Հայաստանում ստացել էր քաղաքական խրտվիլակի տեսք, որով սաստում և սանձում էին բոլոր «Նացիոնալիստներին»: «Նացիոնալիզմի» այդ մղմավաճի դեմ պայքարը միշտ օրակարգում էր նաև Սփյուռքի «ճախակողմյանների» համար: Պատահական չէ, որ Յունաստանի «Նոր շարժում» շաբաթաթերթը շտապեց «մերկացնել» Բարեգործականի ծեռնարկումը իրև «դաշնակցական իմպերիալիստական ծրագիր», իրև հակախորհրդային «քուրդ-հայկական շեյխական, խմբապետական ամեկախ պետություն» ստեղծելու ծրագիր:

Հայաստանում փակվեց Բարեգործականի գրասենյակը, որ քացվել էր «Նուրարաշենի» կառուցմանը նպաստելու նպատակով: Գ. Կյուլպենկյանի ցավալի հրաժարականով, սակայն, բարեբախտաբար, ՀԲԸՍ-ի կապերը հայրենիքի հետ շխզվեցին: Ենց ինքը՝ Գ. Կյուլպենկյանը, հրաժարականի մեջ հեռատեսորեն նշել էր կապերի շարունակման անհրաժեշտությունը:

5. ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՍՏԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ

Ինչպես տեսնում ենք, Սփյուռքի գոյավորման փուլի կենսական հարցը ազգապահպանության մեխանիզմի որոնումն էր: Անշուշտ, Եկեղեցին, կրթական-մշակութային հաստատությունների ցանցը առաջին անհրաժեշտության խնդիրներ էին, որոնց ստեղծմանը գրեթե անմիջապես ծեռնամուխ Եղավ գաղթահայությունը, և որոնց դարձան լուրջ ու կայուն խարիսխներ արդեն հաջորդ տասնամյակից սկսած՝ ինքնահաստատման փուլում: Կար, սակայն, մի քննուկ, որը քննարկվում էր առավելաբար տեսական մակարդակի վրա, թեպետ ուներ խիստ գործնական նշանակություն: Ինչպիսի՞ն պետք է լիներ ընդունող հասարակու-

թյան մեջ գաղթահայության ինտեգրացիայի պրոցեսը: “Պետք էր, արդյոք, ներփակվել սեփական պատյանի մեջ՝ համայնքից ներս չթողնելով որևէ ազդեցություն, որ իր հետ անխուսափելիորեն բերելու էր ուժացման վտանգը, թե, ընդհակառակն, բացվել աշխարհին՝ այս պարագայում ընդունող հասարակությանը:

Ընդ որում, հարցը բնակ միանշանակ չէր: Ընդգրկման սահմանները շատ լայն էին՝ ներառելով թե՝ արտադրության ոլորտի ենթաշերտերը՝ համապատասխան աշխատանքային ու հասարակական–սոցիալական հարաբերություններով, թե՝ հոգևոր ոլորտի վերնահարկերը՝ համապատասխան մշակութային հարաբերություններով ու հասարակական–քարոյական հանգանակներով:

Պատասխանը նույնպես միանշանակ չէր: Եթե մնացած բոլոր պարագաներում հասարակական հարաբերությունները, պայքարները, առճակատումները թե միասնությունը տեղի էին ունենում նույն ազգի սահմաններից ներս, այս պարագայում գաղթահայությունը, ուզեր այդ թե ոչ, պարտավոր էր իրեն դիտել որպես ընդունող հասարակության, երկրի, պետության մի մասնիկը՝ համապատասխանաբար որոշելով իր վարքը, սահմաննելով իր դերը երկրի կյանքում:

Այս կետը խիստ կարևոր է նկատի ունենալ թե՝ առհասարակ սփյուռքահայության պատմությունը ուսումնասիրելիս, թե՝ արդի Սփյուռքի հետ Դայրենիքի գործնական փոխհարաբերություններում: Սփյուռքի մասին գիտական հետազոտությունների մեջ, ինչպես նաև գործակցության պրոցեսներում մինչև օրս զգացվում է այդ տարրական, բայց եական գործոնը պարզապես անգիտանալու, արհամարիելու կամ հաշվի չառնելու միտումը:

Դայաստանցիների պատկերացումները Սփյուռքի մասին միշտ եղել են սահմանափակ հիմնականում նաև հենց այդ տեսակետից: Դարձավ, մենք գիտենք, որ «Սփյուռք» ասածը առանձին մի պետություն չէ, այնուեղ չկա ազգային կապիտալ, չկա ազգային բուրժուազիա, ինչպես և քանվոր դասակարգ, որ եղած կապիտալը տվյալ երկրի կապիտալի մասն է, որ դրամատերերը նրա բուրժուազիայի բաղկացուցիչն են, որ քանվորները ընդհանուր դասակարգի անդամներ են: Բայց այս նախնական գիտելիքները պարզապես ենթադրուական մակարդակի վրա են պահպանվում: Գործնականում, հոգեբանական մի բարդություն, մեր պատկերացումներում Սփյուռքը գրեթե միշտ անցատում ենք տիրող իրականությունից:

Անշուշտ, Սփյուռքը իրապես էլ ունի հարաբերական ամբողջականություն: Դա, մանավանդ, նկատելի է ազգային կյանքում: Մշակույթի ասպարեզում, էլ չխոսելով արդեն կյանքի մյուս բնագավառների մասին, յուրաքանչյուր համայնք հարուրավոր ու հազարավոր թելերով կապված է ընդունող հասարակության հետ, ենթակա է քազմական ազդեցությունների, տեղատվությունների ու մակընթացությունների:

Մինչև օրս էլ խոր լուսարանությունների կարոտ են ընդունող երկրի սոցիալ-քաղաքական շարժումներին սփյուռքահայության մասնակցության հարցերը, օրինակ՝ քսանական թվականների կեսերին Սիրիայում դուրզիների ապստամբության և հայության հարաբերակցության խնդիրները: Սասնագիտական հետազոտությունների են սպասում միջկուսակցական կապերը. օրինակ՝ ՄԴ հնչալյան և Զումբլաթի սոցիալիստական կուսակցությունների Լիբանանում, ՀՀ դաշնակցության և Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության, առհասարակ, ՀՀ դաշնակցության և Բ. Սիրազգայինի փոխհարաբերությունները և այլն: Լուրջ քննության կարոտ է գրականության և արվեստի փոխազդեցությունների ոլորտը սփյուռքահայ այլազան համայնքների և Արևելքի ու Արևմուտքի երկրների մշակութային մակարդակների միջև: Ահա հարցերի այս քարտ կծիկի միայն մի քանի հանգույցներն արդեն Սփյուռքի գոյավորման պրոցեսում պահանջում էին իրենց լուծումները:

ԱՐՏԱՂՐՈՒԹՅԱՆ ՈՒՂՐԸ

Ալ. Սյասնիկյանը ուղղակի կոչ էր անում գաղթաշխարհի հայ քանվորներին, աշխատավորներին՝ միանալ օտարազգի քանվորներին ու զյուղացիներին, նրանց հետ կողք կողքի, միացյալ ուժերով կռվել կապիտալի դեմ: Այս կոչը յուրովի պատասխան էր մի հարցի, որը հասնել էր բոլոր գաղութներում և բոլոր քաղաքական հոսանքների և ուժերի առջև: Ինչպիսի՞ն պետք է լինի հայության վարչագիծը իր ապաստանած երկրի ներքին կյանքում: Դարձը խիստ քարտ էր, քանի որ հայության իսկ սոցիալ-քաղաքական կարգավիճակը միատեսակ չէր հենց նույն երկրում: Դարձը մեծապես կախված էր նրանից, թե որն էր քաղաքական կյանքի պայքարի թիրախը՝ համադեմոկրատական շարժումը, հեղափոխական ելույթները, դասակարգային կորի՞վը, պատերազմը օտար գորավնան և ֆաշիզմի դեմ: Կերպին պարագայում, օրինակ, սփյուռ-

քահայության գերակշռող մեծամասնությունը բերեց իր մասնակցությունը, և ոչ մի քաղաքական հոսանքի մտքով իսկ չանցավ դատապարտել այդ երևույթը:

Դարձը իրոք բարդ էր, փաստական պատասխանները, սակայն, հաճախ ուղղագիծ էին, քանի որ խնդիրը, բնականաբար, վերաբերում էր սփյուռքահայության ճակատագրին:

Բսանական թվականների սկզբներին ՄԴ հնչակյան կուսակցությունը, գեր այն կազմակերպությունները, որոնց հայացքների արտահայտիչը «Երիտասարդ Դայաստան» երկօրյա թերթն էր, գտնում էր, որ ամերիկահայ աշխատավորությունը պետք է ամբողջությամբ ներգրավվի իր ապրած միջավայրի դասակարգային կովին: Նրանք առաջնորդվում էին «Պրոլետարները հայրենիք չեն ճանչնար» թևավոր խոսքով և կտրականապես դեմ դուրս եկան այդ ժամանակներում տարածված մտայնությանը, թե իր հայերը «դրսեցի» են, «հյուր» են և պիտի չխառնվեն տեղի գործերին:

Երկու տարի անց, սակայն, կուսակցության Արևմտյան հատվածը ընդունում է պաշտոնական մի որոշում, ուր կարդում ենք. «... արևմտյան հատվածը իր շրջաններու մեջ տեղական քաղաքական պայքարներու հանդեպ կը մնա վերապահ, բայց առանց քաղաքակրթական և ցեղային խտրության կաշխատի զանգվածներու դասակարգային գիտակցությանը սատարել»: Սա նշանակում է, որ գործնական պայքարին մասնակցելուց մնացել են ծեռնպահ, բայց իրենց պարտականությունն են սեպել նաև նաև պահանջման պարտական-դաստիարակչական աշխատանքին:

Դժ դաշնակցության համար նս հարցը խիստ պարզ էր՝ հեռու մնալ օտար երկրների շահագործվող դասակարգերի քաղաքական պայքարից: Այս միանշանակ պատասխանը, սակայն, կազմվում էր միմյանցից տրամագծորեն տարրերվող ելակետերից: Մի թեր դեմ էր, որովհետև առհասարակ դեմ էր սոցիալական խնդիրները ազգային խնդիրներին խառնելուն: Ուրեմն Դարբինյանն, օրինակ, գտնում էր, որ հայությունը գաղութեներում պիտի չտրվի տվյալ երկրի հոգսերին (դասակարգային պայքար և այլն), պիտի չհետևի սոցիալական ազատագրության ճանապարհով գնացող ուրիշ ժողովուրդների, քանի որ մենք փոքր ենք ու թույլ և պարտավոր ենք միասնական լինել:

Ուրիշները դեմ էին արտահայտվում պարզապես, որովհետև, իրենց կարծիքով, առանձին հայերի մասնակցությունը անվանարկում կամ

վտանգում էր ամբողջ գաղութը: Նենց այդ դիրքերից Եգիպտոսի «Յուսարերը», օրինակ, դիտողություն արեց «Բանվոր Պարիզի» թերթին, որ հայ բանվորին կոչ էր անում ֆրանսիական պրոլետարիատի շարքերում կուրծք տալ երկրում գլուխ բարձրացնող ֆաշիզմին: Իբր ձեր ինչ գործն է:

Սուավել հետաքրքրական է, սակայն, կուսակցության տեսարաններից մեկի՝ Մ. Վարանոյանի հայեցակետը: Նա էլ գտնում էր, թե քանի որ մենք պարտական ենք Ֆրանսիային՝ նրա ասպարականության համար, ապա հայ աշխատավորությունը անհատարար թե զանգվածորեն պիտի խուսափեր այնպիսի քայլերից, որոնք ունակ են ծանծրությ և գլխացավանք պատճառել կառավարությանը և հայության դեմ տրամադրել հասրակական կարծիքը:

Ո՞րն է, սակայն, Մ. Վարանոյանի ելակետը: Նա բավականին մատչելի բացատրում է. «Կառավարության համեստ օրինապահ լինելը ըսել չէ, թե հայ աշխատավորները պետք է ստրկի հավատարմությամբ սպասավորեն Ֆրանսիայի գործատերերին, անգամ այն պարագային, երբ ֆրանսիական աշխատավորությունը զանգվածորեն գործադուլ կը հայտարարե՝ պահանջելով գործատերերեն՝ ավելացնել օրապահիկը կամ թե մտցնել ուրիշ կարգի տնտեսական բարենորոգումներ: Այդ պարագաներուն հայ աշխատավորությունը պարտավոր է միանալ իր ֆրանսիացի ընկերներուն»:

Մ. Վարանոյանի հայեցակետը, անշուշտ, լրջորեն տարրերվում է վերը շարադրվածներից: Նա արգելում է քաղաքական պայքարին մասնակցությունը և արտոնում տնտեսականին: Նույն հետևողականությամբ, նա արգելում է հայ բանվորներին մասնակցել կոմունիստական արհմիություններին և արտոնում է նրանց անդամագրվել սոցիալիստականներին: Նա ընդունում է «Ֆրանսիական աշխատավորության հետ և ոչ անոր դեմ» կարգախոսը: Մ. Վարանոյանը հստակ մերժում է Շավարշ Նարդունուն, որը նույն օրերին Փարիզի «Յառաջում» կոչ էր անում հայերին ծեռնպահ մնալ գործադուլներին մասնակցելուց, իբր «թող իմանան գործատերերն ու գործավորները, որ դուք այլս գործիք չեք սա «քաղաքակիրքներուն»: Արտոնելով միայն տնտեսական պայքարին մասնակցելը և սոցիալիստական արհմիություններին անդամագրվելը Մ. Վարանոյանի տեսակետը տեղ էր բողոքում, որպեսզի հայ բանվորները մասնակցեն նաև ազգային կյանքին: Այդ ճանապարհով է, որ նրանք «միաժամանակ կը կազմակերպվեն ազգայնորեն,— գրում է նա,—

կը մնան փարած իրենց ազգ քաղաքական այն կուսակցություններուն, որոնք աշխատավորների դասակարգային շահերը պաշտպանելով հանդերձ, առաջ կը մղեն իրենց գլխավոր նպատակը՝ զարկ տալով հայրենիքի վերածնության ու վերաշնության, վառ պահել աշխատավորության մեջ հայրենիքի սերը, մաքառել օտարացման ու այլասերման վտանգի դեմ և կանգուն պահել Հայաստանի հավատամքը, որ պիտի իրականանա բոլշևիզմի անխուսափելի անկման և Ռուսաստանի գալիք ազատագրման հետ»:

Ս. Վարանյանը փորձ է անում թիչ թե շատ տրանարանական պատասխան տալ Ափյուտքի ծևավորման արշալույսին նրա առջև ծառացած մի կենսական հարցի՝ որո՞նք են ընդունող սոցիալ-քաղաքական-մշակութային կառույցի մեջ ստիպողաբար հայտնված էրնիկական փոքրամասնության ներկյուսման (ինտեգրացիա) ուղիները։ Վարանյանի ոչ միայն պատասխանը, նույնիսկ հարցադրումը հեռավոր անգամ չի ընդգրկում խնդրի անբողջ բարդ հանգույցը։ Այնուամենայնիվ, դա առաջին բանական քայլերից մեկն էր։

Հստակ և ուղղագիծ էին Ռամկավար ազատական կուսակցության տեսակետները։ Ոչ մի մասնակցություն։ Միանգամայն իրավացի քննադատում էին Ալ. Մյասնիկյանի ճակատային հարցադրումները։ «Եվ ահա կրոնական մոլեսանդության հավասար խանդավառությամբ մը փարած իր տեսակետին, իր սկզբունքներին և գորացած իր վարդապետության պաշտամունքով՝ Պ. Մյասնիկյան կանգնած կարմիր գիծեն ներս կը նայի աշխարհին ու կը տեսնե միայն երկու բան՝ պրոլետարն ու բուրժուան, գործավորն ու դրամատերը, դեմ-դեմ երկու թշնամի բանակներ, և իր բանակեն կարծակե սլաքներ՝ առանց գիտակցելու, թե անոնք որու հասցեին կրնան հասնի»։ Թվարկում էին, թե մի շաբաթ երկրներ Ռումինիան, Բուլղարիան, Շունաստանը, ուզում են հայերին վտարել, Ֆրանսիան հանդուրժում է որպես էժան բանվորական ուժ, Ամերիկան նույնիսկ գույնի խնդիր է հարուցել, և այդ պայմաններում Մյասնիկյանը գաղութահայությանը իրավիրում է նետվելու դասակարգային կովի մեջ։ Եվ մերժում էին։

«Քաղաքացիան թերակղզիին մեջ ապրող հայերս, Շունաստան թե այլուր, պետք է չափազանց շրջահայաց ընթացք մը ունենանք և խուսափենք խառնվել այն տեսակ գործերու, որոնք կրնան կառավարությանց կասկածը իրավիրել մեզ վրա,— գրում է Սալոնիկի ռամկավարական ուղղության օրաթերթը 1925 թվականին։— Մենք պետք է

գիտնանք, որ հյուր ենք այս երկրին մեջ և որևէ կերպով իրավունք չունենք մասնակցելու և կամ միջամտելու մեր հարևան եղբայրներուն ներքին կազմակերպությանց և կամ քաղաքական գործունեությանց»: Նման ուղղագիծ հարցադրումը, բնականաբար, միայն մեկ կողմից ակնկալվող պատասխան էր: Իսկ ինչպես ապրել և ինչպես շտկել հասարակական հարաբերությունները տվյալ երկրի ու ժողովրդի հետ, ո՞րն է այն սահմանը, որից այն կողմ արգելված էր անցնել:

Անշուշտ, կյանքն ինքը ամեն ինչ հարդարում էր: Այսօր արդեն մեծ թիվ են կազմում զանազան երկրներում պետական խոշոր պաշտոնյաներ, երեսփոխաններ, քաղաքապետներ, դեսպաններ, հասարակական վերնաշխնքի տարրեր հարկաբաժիններում լուրջ դիրքեր գրավող հայերը: Բնականաբար, դա տոհմիկ պատյանից ներս քաշվելու արդյունքը չէ, ընդհակառակն, աշխարհին բացվելու, ներկայութելու կարողության հետևանք է:

ՀՐԱՄԱՆԱԿԱՆ ՎՐԱՅԻ ԱՌԱՋԱԿԱՆ ԱՌԱՋԱԿԱՆ ՎՐԱՅԻ ԱՌԱՋԱԿԱՆ
ՀՐԱՄԱՆԱԿԱՆ ՎՐԱՅԻ ԱՌԱՋԱԿԱՆ ԱՌԱՋԱԿԱՆ ՎՐԱՅԻ ԱՌԱՋԱԿԱՆ
ՀՐԳԵՎՈՐ ՈՒՂՈՐԾ

Ազգապահպան մեխանիզմի այս ոլորտը քսանական թվականների սկզբներին դրսերեց ազգի «տոհմիկ պատյանների մեջ» ներփակվելու միտում, որը առարկայականորեն բխում էր ժամանակահատվածի շփոթ, անստույգ կացությունից: Երևույթը առավելաբար նկատելի էր գրականության մարզում, քանի որ հենց գրականությունն էր ժողովրդի հասարակական գիտակցության ավանդական առաջատար ուժերից մեկը դեռ նախորդ հարյուրամյակից սկսած:

Դրապարակավ դրվեց «տոհմիկ գրականության» ստեղծման հարցը, որը կոչված էր բօնագաղբած զանգվածին ամուր կառչած պահելու իր արմատներին, կորցրած հողին, ավանդություններին, սովորույթներին: «Տոհմիկ գրականության» խողովակով Արևելքի թե Արևմուտքի օտար շրջապատում աշխատող-շփոթ հայ մարդը պետք է զերծ մնար նույն շրջապատի ուժացնող ազդեցություններից: Գրականությունը նպատակամվում էր հասարակականորեն օգտապաշտ, կառավարելի, բարոյապաշտ ուղի, որի միտումն էր հենց բուն իսկ գրականությունը զերծ պահել ընդունող մշակույթի հետ առնչություններից: Ծրագրի առաջադրույթ եղավ Կահիրեի «Նոր շարժում» հանդեսը (1923 թ.):

Քսանական թվականների գրականությունը, որ պատմագրության

մեջ իրավացիորեն ստացել է «Կարուտի գրականություն» անվանումը, և որի մեջ արձանագրվեցին իրոք բարձրարվեստ մի շարք նվաճումներ, այդ թվում՝ Դամաստեղի ստեղծագործական վաստակը, սովորույթի ուժով վերագրվում է արևմտահայ գրականությանը՝ իբրև նրա օրգանական շարունակությունը։ Անշուշտ, ճշմարտության բաժին կա նման հաստատման մեջ։ Արդեն չուսումնասիրված գետին է արևմտահայ և սփյուռքահայ համեմատական գրականագիտությունը։ Բայց, ամեն պարագայում, «Կարուտի գրականությունը» հենց սփյուռքահայ գրականություն էր, օտար հորիզոններում բույն հյուսած հասարակական պահանջի, նրա կեցության և գոյավորման առաջին փուլի արոյունք։ Ուրիշ խնդիր է, որ այդ գրականությունը ժամանակագրական առումով ելավ փուլի սահմաններից։ Մի երևույթ, որ սովորական է գրականության ու արվեստի բնագավառների համար։

Քսանական թվականների կեսերից, սակայն, սկսեցին հնչել քննադատական ծայներ, որոնք փորձում էին փոխել գաղթաշխարհում արտադրվող մշակույթի առարկան։ Առաջիններից մեկը ժամանակի լուրջ գրականագետ և մտածող Նշան Տեստեկուլը առաջադրեց նոր նտածելակերպի խնդիրը։ Ոչ թե պարփակվել տոհմային պատշաճից ներս, այլ ընդհակառակն, հաղորդակցվել համաշխարհային մշակույթի հետ, ծգտել յուրացնել և հասնել արևմտյան հոգևոր ձեռքբերումների մակարդակին։ Իր հայացքները նա շարադրեց «Տիրոջը այգիին մեջ» խորհրդանշական տիտղոսով մի ընդարձակ հոդվածաշարում, որը հրատարակվեց Բոստոնի «Դայրենիք» ամսագրում։

1926-ին Փարիզում ստեղծվեց «Յարդգող» գրական միավորումը։ Դենց անվանումը, ասես, նշում էր հոգևոր մակարդակի վրա ժողովրուին առաջարկվող հիմնությին կարնածիրը. գիտակցել, վերջապես, հոգեբանութեն ընդունել իր նոր կացությունը, ոչ թե փակվել, այլ բացվել աշխարհին, ազգային համարել ոչ միայն տոհմիկ բարքերն ու սովորույթները, Դայաստան աշխարհի բնությունն ու հմայքը վերարտադրողը, այլև նոր գրականությունը, որը արտահայտելու է կոչված օտար երկինքների տակ ապրող հայության ուրախություններն ու հուսաբեկությունները, Բեյրութի, Փարիզի, Նյու Յորքի, թե այլ վայրերի փողոցների, սալոնների ու գետնախորշերի իրականությունը, որի մեջ ամեն օր ու ամեն ժամ ապրում էր հայը։

Սկսվեց հոգևոր-մշակութային մի նոր շարժում, որը հենց այս միտումներն էր թիրախում։ Լույս աշխարհ եկան նոր միավորումներ, ա-

կումբներ, «Զուարթնոց», «Մենք», «Զանք» և ուրիշ համդեսներ: Շարժումը արձագանքվեց նաև քաղաքականության բնագավառում, ընդունեց նոր սերնդի ընդգումի ծն հին սերնդի նկատմամբ: «Նորերի» և «հների» պայքարը առավել քաղաքական բնույթի էր, որով «նորեր» մերժում էին հին մտածելակերպը, հետևաբար՝ նաև գործելակերպը: Նույնիսկ ՀՅ դաշնակցության մականի տակ ստեղծված «Զափահաս երկսեռ որբերի միությունը» ծգտում էր «մեյ մը» ազատագրվել կուսակցական ղեկավարության հովանակորությունից: Շարժման գաղափարաբանությունը որդեգրեց նաև «Մարտկոցը» (վերը ակնարկելով «մարտկոցականների» ավելի լայն ծրագրին՝ հենց դա նկատի ունեինք):

Շարժումը, հիմնական գծերով, պաշտպանություն գտավ նաև ծախակողմյանների մոտ: Արդեն նրանց թվից մի քանի կարևոր գործիչներ այս կամ այն կերպ անձնապես ներգրավված էին հոսանքի մեջ: Զախակողմյան դիրքերից դիտած «հների» ծգտումը՝ պահպանելու ազգային պատյանի մեջ ներփակվածության վիճակը, բնավ էլ սեփական լեզուն և կրոնը պաշտպանելու համար չեր արվում, այլ հետապնդում էր քաղաքական նպատակ՝ անաղարտ պահել այն միջավայրը, որի պայմաններում անցյալի գործիչները կարող էին նույն ոգով և նույն հաջողությամբ շարունակել իրենց «անպատիժ մնացած» վարքը, պահպանել այդ միջավայրը իրքն «ոյուրին շուկա և շահաստան»: Ֆիշտ այդ ոգով 1932-ին հանդես եկավ, օրինակ, արդեն բազմավաստակ Զապել Եսայանը:

Այդ հին, կուսակցականորեն սահմանափակված, պահպանողականորեն պատյանավորված միջավայրի կամ «ոյուրին շուկայի» դարպանները դեպի արտաքին աշխարհը լայն բացելու պահանջը ըստ եռթյան վեր էր ածվել հին մտածելակերպի, պահպանողական ղեկավարության դեմ ընդգննան երևույթի, որի միտք-բանին էր հայապահպանության նոր միջոցներ գտնել ոչ թե իր դարն ապրած կաղապարների խողովակով, այլ նոր միջավայրի թելադրած նոր ուղիների վրա:

Նման կարգի փորձեր քանական բվականների երկրորդ կեսերին տեղի ունեցան գաղթաշխարհի այլևայլ վայրերում ունենալով մի խոշոր թերություն միմյանցից անտեղյակ լինելը:

ԱԱՆ-ում, օրինակ, ստեղծվեց «Որդիք Յայաստանյաց» ամունով մի ընկերակցություն, որը ըստ եռթյան երիտասարդական ապակուսակցական միություն էր և ծգտում էր ստեղծել անհրաժեշտ խարիսխներ հայեցի կրթության ու դաստիարակության համար: Նա ծրագրում էր թե հայ հասարակության հետ հարաբերվելը, թե օտար շրջանակների ու գա-

ղափարների նկատմամբ լայնամտությունը, թե բարոյական մաքրությունը, թե ֆիզիկական առողջությունը: Ընկերակցության կարգախոսն էր «Սովոր սովորեցրու»: Ընկերակցությունն երկար կյանք չունեցավ և մարեց արդեն երեսնական թվականների սկզբներին: Դենց այս կազմակերպության բազայի վրա էր, որ Գ. Նժդեհը տարածեց իր «ցեղակրոն ու իստերը» Աներիկայում երեսնական թվականների սկզբներին:

«Նորերի» շարժումը առավելաբար փարիզյան էր իր ծննդավայրով, բայց հաճախաբիության տարրողություն ուներ: Նրա մեջ ներգրավված էին ժամանակի կարող երիտասարդ գրեթե բոլոր ուժերը Շահան Շահնուր, Վազգեն Շուշանյան, Գեղամ Աթմաճյան, Նշան Պեշիկրաշլամ, Դրաչ Սարգսյան, Շավարշ Նարդունի, Բյուզանդ Թոփայլան, Միսար Սանուշյան, Փայլակ Միքայելյան, Դարություն Ֆրենկյան, Նիկողոս Սարաֆյան, Զարեհ Որբունի, Արշամ Տատրյան, Ուաֆայել Զարդարյան, Դրանտ Բալույան, Լաս, Մեսրոպ Գույումճյան և շատ ուրիշներ, որոնք մասնակցում էին տարբեր խմբակցությունների: Այդ խմբակցությունները և անհատները հաճախ միմյանց դեմ պայքարում էին, թշնամնների դիրքերից նույնիսկ միմյանց ամբաստանում, բայց հիմնուղին նույնն էր հեղափոխություն կատարել ազգի հոգեսոր կեցության մեջ:

Շարժման մշակութային եւրպունը դիպուկ բնորոշել է Շավարշ Նարդունին: «Ի՞նչ է մեր նպատակը — գծել ետպատերազմյան սերունդի մը պատկերը, պատրաստել գրական հեղափոխության մը նախատարերը, փոխել հոգին, ավանդությունները, ծեերը, որ կը տիրապետեն մեր գրական աշխարհին մեջ... Դուրս արվեստի բոլոր մակաբույժները և հտպիտները: Աստեն է տաղանդ և հմտություն պահանջել բոլորեն: Աստեն է արու շեշտ մը դնել հայ գրական խոսքի մեջ, քանդելով պշրուն ծեերը»:

Շավարշ Միսարյանը այդ երիտասարդությանը կնքեց «Փարիզի տղաքը» անունով: Նա էլ իր «Յառաջում» առարկայականորեն խրախուսեց «Փարիզի տղաքի» աճը: Պատահական չէ, որ 1929 թվականին հենց այդ օրաբերի մեջ հրապարակվեց Շահան Շահնուրի նշանավոր «Նահանջ առանց երգի» վեպը, որը նոր ժամանակաշրջան էր նշանավորում սփյուռքահայ գրականության, առհասարակ մշակույթի մեջ:

Ի՞նչն էր Շահնուրի վեպի առարկան: Դակիրճ ծնակերպումով՝ մշակութային բախումը: Այսինքն գաղթահայության տագնապը ընդունող հզոր մշակույթի դեմ հանդիման: Եղեռնից մազապուրծ գյուղացիական զանգվածը հայտնվեց Արևմտյան քաղաքակրթության իրականության

մեջ: Սեփական դարավոր մշակույթի գոյության մասին տարրական գիտելիքների պարզունակ և աղքատիկ պաշարով, քանի որ դարի Արևմուտքի տեխնիկական, գիտական ու մշակութային շքեղությունից բացարձակապես անտեղյակ, հոգեբանորեն դնուս ավատական շրջանների ավանդական բարի ու պահպանողական բարդույթներով գերեզնված կիլիկիացի, սասունցի կամ մշեցի գեղջուկը, ինչու չեն, նաև պոլսեցի կամ զմյուռնեցի արհեստավորը, իրեն գտավ մի իրականության մեջ, որտեղ ամեն ինչ շշմեցնող էր, ճնշիչ, ազգայնորեն սպասնալի, ուրեմն և մերժելի:

Դանդիպել էին տարրեր դարերը: Ընդունող մշակույթը պարզապես նվաստացնում էր եկվորին, որի աչքին սեփականը երևում էր չնչին, անգոր ու անպաշտպան: Ծայր էր աօնում ակուլտուրացիայի՝ ապամշակութացման պրոցեսը, որի ընթացքում, աստիճանաբար զրկվելով սեփական ներահողից, հայության, մանավանդ նրա նոր սերնդի զգալի շերտերը ընդունում էին տիրող մշակույթը ոչ այնքան իր բարձրագույն և ազնվացնող դրսնորումների ծնով, որքան երևույթի մակերեսին սփոված հորի բարեբերի ու հարաբերությունների տեսքով: Ակսվում էր ուժացումը, որը սկիյուռքահայ մամուլը կոչեց «սպիտակ ջարդ», իսկ վիպասանը անվանեց տիտոր «նահանջ»*:

Դե՞տք էր զրականության և արվեստի միջոցներով հայությանը գուցադրել իր իրական կյանքը, հյուծիչ առօրյան, թե անգիտանալ այդ ամենը և մատուցել նրան իին օրերի գեղեցիկ, բայց այլևս գոյություն չունեցող պատկերները: Հարժումն ընդունեց առաջին ճանապարհը, քանի որ այդ միջոցով միայն կարելի էր իրականում նպաստել ազգապահպան մեխանիզմի գործունեությանը: Ընդ որում, դրեց կատարյալ, բարձր արվեստի պահանջը, առանց որ զիջումներ արվեն հայրենասիրական, հայրենաբաղծական կամ սոցիալական թեմաների հաշվով: Շահնուրի վեպը այս առումով է նոր որակ էր նշանավորում:

Հարժումը, սակայն, միօրինակ հաջողություն չարձանագրեց: Քաղաքականության մեջ հոսանքը շուտով մակարդվեց, իսկ գրականության ու արվեստի մեջ եղավ ավելի հաջողակ: Նոր ոգին արձանագրեց մի շարք լուրջ նվաճումներ հետագա տասնամյակների ընթացքում: Ունեցանք և ունենք բանաստեղծների, արձակագիրների, նկարիչների, երաժշական բուռնորդ զննելու նախադիմակառանուն և ողձօվառանուն անոնք:

* Մերձավոր Արևմերի հայությանը մշակութային այդ տագնապը, ինչպես նշել ենք առաջին գլխում, լուրջ կերպով չէր սպասում:

ժիշտների մի ամբողջ հույլ, որոնք արվեստի ու գրականության ժամանակակից պահանջների մակարդակով են շունչ ու մարմին տալիս իրենց ստեղծագործություններին:

Պայքարը, այնուամենայնիվ, դեռ չի մարել: Ինչպես դարասկզբին Պոլսի հայ գրականությունը օտարվում էր ազգային տիրություններից, այսօր էլ, ավանդույթի ուժով, հաճախ ազգային է համարվում «զուտ ազգային միջավայրը» արտացոլող գրականությունը, որը անդիտանում է, թե սփյուռքահայությունը ապրում է ոչ թե օտար միջավայրին կից, այլ իրենց այդ օտար միջավայրի մեջ:

Միանգամայն ահազանգոր էր և օրինաչափ, այդ իսկ իմաստով, ժամանակակից սփյուռքահայ նշանավոր գրող Կարապենցի ելույթը 1978 թվականին ամերիկահայ գրողների համագումարում: Նա արձանագրեց, թե սփյուռքահայ արդի գրողը տակավին կառչած է մնում իր հարազատ տան հին տեսիլներին, իր սիրային երկրորդական հույզերին և իրենից բնավ չծերրազատվող անցյալի հուշերին: Անընդհատ փոխվում է Սփյուռքի մարդը՝ փոփոխվող աշխարհի այդ անբաժանելի մասը: Ուրեմն, իրենց այդ փոփոխվող աշխարհում ապրող, փոփոխված ու փոփոխվող հայ մարդու մասին գրելն է ազգային գրականությունը: Կարապենցը դիմում է, որ սփյուռքահայ գրողը հեռու է մնացել զանգվածի նոր որակի հատկացուցիչները արտացոլելու գործից, նա դեռ չի երգել տագնապումից լիքրազերծվող սփյուռքահայ մարդու տագնապը, չի պատկերել նրա գույզ, երբեմն եռյակ ինքնությունները, չի խորացել նրա բարդ հոգեբանական կառույցի մեջ, չի մատնանշել նրա լինելիության մեկնակետը, ուժացման և հարատևության դրդապատճառները, նրա առօրյան ու ընտանիքը, համայնքն ու հասարակությունը, նրա ներքին իրարամերժ ողիսականը, նրա իրական ու վերացական հայրենարադությունը, նրա սերն ու կարոտը, տոհմիկ ու ստացական բարքերը, նրա հիվանդագին օտարահմայվածությունը, նրա անցյալն ու ներկան, հատկապես ապագան:

«Պետք է դուրս գալ գավառային նեղլիկ մեր շրջագժից,— ասում է Հակոբ Կարապենցը,— և միրօնի կյանքի մեջ՝ քայլ պահելով օրվա իրատապ հարցերի հետ, ուսումնասիրելով արդի քաղաքական վարդապետությունները, ընկերային հարափոփոխ երևույթներն ու իմաստասիրական միմյանց հրմշտող հոսանքներն ու տեսությունները՝ փորձելով մեր տեղը գտնել աշխարհում: Քավական են հանուն ազգապահպանման մեր հինգած գր-

քունակ մարզանքները, որոնք լավագույն դեպքում ինքնագովության գաղց թմբիր են պատճառում:

... Կեղաշրջումը կյանքի բնական օրենք է: Նոր պայմանները դիմագրավելու համար անհրաժեշտ են նոր միջոցներ, նոր ձևեր ու մեթոդներ... Եվ հեղաշրջման այս հոլովույքի առաջին գծի վրա պետք է լինի սփյուռքահայ գրողը՝ ուղղություն տալու զանգվածներին և արտացոլելու սփյուռքահայ կյանքը և այդպիսով ազգային ինքնուրբյուն պարգևելու նրան՝ որպես ամբողջական հայության յուրահատուկ, սակայն բաղկացուցիչ միավորի»:

ՍՓՅՈՒՌԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹԸ

Դասը առաջ գոր մուսալու վեպություն տայ նախօքաբաժնին է ողմակաց և նշանակած ընթացք այսու նախօքալու պրոդրուտին զնուած առնացն նկարություն և դժուար չափազանական տարրերուն

Դայ Սփյուռքի պատմության առաջին փուլին՝ գոյավորման շրջանին հանգամանորեն անդրադառնալը խիստ անհրաժեշտ էր, որովհետև ինոն այդ փուլում ծնավորվեցին բոլոր հիմնական խարիսխներն, ու բացվեցին արահետները, որոնց վրա հետագա փուլերում պիտի բարձրանար Սփյուռքի բազմանկյուն կառույցը, և որոնցով պիտի ընթանար նրա բազմաժամն հավաքական կյանքը: Ընդ որում, տարրեր փուլերի շատ տարրեր սկսում են գոյավորել արդեն նախորդող փուլի ընդերքում: Այնպէս որ փուլերի ժամանակագրական սահմանագծումը խիստ պայմանական է, ունի առավելապես կողմնորոշիչ իմաստ:

Երեսնական թվականների կեսերից Սփյուռքը թևակոյսում է իր զարգացման մի նոր շրջանը, երբ գրեթե ամրողցովին խզված Մայր Դայը նիֆից, գուրկ կրթական-մշակութային, հաճախ նաև հոգևոր ամենատարրական աջակցությունից, կտրված Խորհրդային Դայաստանի մասին նույնիսկ լրատվական աղբյուրներից, Սփյուռքը գոյատևում է սեփական ուժերին ապավինած: Սփյուռքի զարգացման այդ երկրորդ փուլն էլ մենք կոչեցինք ինքնահաստատման փուլ:

1. ԻՆՔԱՐԱՍՏԱՏՄԱՆ ՓՈԽ

Դամաշխարհային տնտեսական ճգնաժամից հետո հաստատված տնտեսական կայունությունը բնութագրական եղավ նաև սփյուռքահայության համար: 20–25 տարվա ընթացքում Երկրորդ համաշխարհային պատերազմի պատճառած ժամանակավոր դժվարությունները նույնիսկ նկատի առնելով՝ Մերձավոր Արևելքում, Եվրոպայում և Ամերիկայում խոշոր, երբեմն արմատական փոփոխություններ տեղի ունեցան հայ ազգարնակչության սոցիալական կազմի մեջ: Գերակշռող դարձավ

մանր սեփականատերերի խավը՝ արհեստավորներ, արհեստավորներ-վաճառականներ, մանր ծեռնարկատերեր՝ թերև և սպանդի արդյունաբերության, կենցաղի ոլորտներում և այլն: Ավելացավ թժիշկների, իրավաբանների, ինժեներների, բարձրագույն կրթության ուրիշ մասնագիտությունների տեր մարդկանց տեսակարար կշիօթ:

Երեսնական-հիմնական թվականներից սկսեց ծնավորվել և հետագայում ուղարկան հայազգի ծեռնարկատերերի պատկանող խոշոր կապիտալը: Օրինակ ԱՄՆ-ում Գերը Գիրքորյանի (Խաղատնային թիզնես, տրանսպորտ, կինոարդյունաբերություն, տուրիզմ), Ալեք Մանուկյանի («Մասկո» ընկերություն), Ֆրանսիայում Խապուեն Բուլությանի (ալաստմասսայի ծեռնարկություններ) հիմնական դրամագլուխը գնահատվում էր մի քանի միլիարդ դոլարի: Ա. Մանուկյանը 1953 թ-ից ի վեր զիսավորում էր Դայ բարեգործական ընդհանուր միությունը: Ազգային կեցությունը սատարելու կոչված նրա ընտանեկան հիմնադրամը, որ ստեղծվել էր համեմատաբար ավելի ուշ և կրում էր իր անունը «Ալեք Մանուկյանի մշակութային հիմնադրամ», մեծապես օգտակար եղավ Սփյուռքի մշակութային կյանքին: Գ. Գիրքորյանը իր լուրջ օգնությունը հասցրեց երկրաշարժից տուժած Դայաստանին, ինչպես նաև հետագա տարիներին՝ անկախ Դայաստանի Դանրապետության կայացմանը սատարելով:

Տնտեսական կայունացման և զարգացման շարժմանթացը հատկապես նշանակալիորեն արդյունավետ եղավ լիբանանահայության համար: 1960-ական թվականների տվյալներով՝ երկրի ազգային արդյունաբերության մեջ արված 375 մլն լիրա ներդրումներից հայազգի ծեռնարկատերերին բաժին էր ընկնում 125 մլն-ը, այսինքն՝ մեկ երրորդը:

Տնտեսական կայունացման և զարգացման միտումները նկատելի էին հայաշատ բոլոր երկրներում, թեպետ առևա էին շարժմանթացը դժվարացնող գործոններ: «Պարսկաստանում, օրինակ, տնտեսական կայունացումն ընթանում էր հայ գյուղացիական բնակչության գրեթե խսպա վերացման շարժմանցի ֆոնի վրա: Այստեղ երեսնական թվականներին հայ բնակչության գրեթե 50 տոկոսը կազմող հայ գյուղացիությունն արդեն 60-ական թվականների վերջերին հազիվ հինգ տոկոս էր:»

Եղիպատուում շատ ավելի բարդ կացություն ստեղծվեց քաղաքացիության մասին օրենքի առնչությամբ, որով երեսնական թվականների կեսերին արդեն դժվարություններ հարուցվեցին հայ (մասնավանդ նախկին թրահպատակ) զանգվածների առջև, իսկ «ոչ ազգային դրամա-

գլխի» դեմ տարվող ավանդական քաղաքականությունը (հայազգի ծեռնարկատերերի դրամագլուխը նույնպես համարվում էր «ոչ ազգային») խիստ սահմանափակում էր տնտեսական զարգացման հնարավորությունները: Դիմական թվականների հենց սկզբներից Նասերի հեղափոխությունը արմատախիլ արեց խոշոր ծեռնարկատիրությունը, և աշխատանքի նոր օրենքի հետևանքով հայությունը երբեմն անհաղթահարելի պատնեշների առջև կանգնեց: Դայության ազգային կեցության հիմքը Եգիպտոսում խաթարվեց: Այնուամենայնիվ, ազգային կյանքը, թեպետ խիստ սահմանափակված, չդադարեց: Դա առավելապես բացատրվում է գաղութի ավանդական վիրխարի ներուժով, որը գալիս էր դեռ XIX դարից, երբ Եգիպտահայությունը շատ բարձր դիրքեր ուներ Եգիպտոսի թե տնտեսական, թե քաղաքական կյանքում:

Դայության տնտեսական կայունացման ու բարգավաճման գործը Եվրոպայի և Ամերիկայի երկրներում զուգորդվում էր քաղաքացիության հարցի դրական լուծման պրոցեսների հետ, որը բնականաբար, առավել նպաստում էր հայ ազգարնակչության ապահով գոյությանը և խրախուսումն նրա արնատակալումը: Ամենուրեք գրեթե միատեսակ ընթացքով հայությունը կենտրոնանում էր առավելապես թերեւ, սննդի արդյունաբերության, կենցաղի ու սպասարկման ոլորտի ինֆրակառուցվածք ունեցող խոշոր ու միջին քաղաքներում, ապրում էր հավաքաբար, հոծ քաղամասերով: Դատկանշական է, որ ճիշտ այդ տարիներին ընտանիքների գերակշռող մասին հաջողվեց ծեռք թերեւ սեփական առանձնատներ՝ փոքրիկ հողանասերով, կամ առանձին բնակարաններ: Այս—օգ՛օ՛ Հայ Սյութական կայուն և ապահով խարսխի վրա էլ տակավ առ տակավ սկսեց աճրանալ ազգային կեցության կառույցը: ճշմարիտ է, նյութական խարիսխը միակ պայմանը չէր, կային ոչ պակաս կարևոր ուրիշ գործոններ, ինչպես քաղաքական կացությունը, որի աննպաստավոր դասավորությամբ, Ուսմինիայում, օրինակ, հիմնական թվականներին ազգային կյանքը սկսեց գրեթե նարեւ, կամ ընդունող մշակույթի առարկայական հզոր ճնշման գործոնը, որի պայմաններում, ասենք, ԱՄՆ-ում կամ Ֆրանսիայում, ինքնահաստատման փուլում չլուծվեց կամ խիստ անքավարար լուծվեց դպրոցական կրթության գործը: Ի դեպ, Ֆրանսիայում մինչ օրս էլ մնում է նույն անմիտրարական վիճակում:

Բոլոր նպաստավոր գործոնների համրագումարի տրամաբանությամբ և, մանավանդ, տնտեսական խարսխի առկայության պայմաններում հետպատերազմյան շրջանում Լիբանանը, ավելի ստույգ՝ Բեյրութ

բաղաքը, աստիճանաբար դարձավ ամբողջ Սփյուռքի ոչ պաշտոնական, բայց բոլորի կողմից ճանաչված կենտրոնը: Այդ դերը Սփյուռքի գոյավորման փուլում և մինչև պատերազմը բաժին էր ընկել Փարիզին:

Սա պարզ փոխատեղում չէր: Տեղի էր ունենում խոր տարրողության մի շարժներաց, որը մակերեսի երևութականով թերևս բվար տարերային, սակայն, վարդի ենթաշրտություն տիրապետողը ազգային գիտակցության թելադրանքն էր:

Այդ փոխատեղումը իրականություն դարձավ սփյուռքահայության առջև ծառացած հիմնահարցի փոփոխության հետևանքով: Բանական թվականների հիմնահարցը քաղաքական էր: Այսինքն՝ սփյուռքահայությունը ակնկալում էր, որ պետք է դրական որոշվեր հայրենի տարածքներ վերադառնալու խնդիրը՝ աշխարհիս մեծերի քաղաքական լուծման շնորհիվ: Խոկ ՀՀ դարասկզբին բոլոր կարգի քաղաքական խնդիրների խաչմեռուկը Փարիզն էր կամ նրան շատ մերձավոր վայրեր: Դեռևսար, այստեղ էլ կենտրոնացավ հայ քաղաքական միտքը, առհասարակ մտավորական ընտրանին: Եվ, բնականաբար, Փարիզի հայկական կենտրոններին էին դիմում բոլորը, նույնիսկ ամենահեռավոր գաղթօջախները՝ որևէ բարդ խնդիր լուծելու համար:

1933 թ. ԱՄՆ դիվանագիտական ճանաչումով, վերացավ ԽՍՀՄ-ի միջազգային մեկուսացումը, հետևաբար վերացավ նաև Դայրենիք Արևելյան Դայաստան, վերադառնալու վերջին հույսը, որը դեռևս փայփայում էր սփյուռքահայ քաղաքական ուժերի մի հատվածը: Այսինքն՝ 30-ական թվականների առաջին կեսի սահմանագծում սպառվեցին սփյուռքահայության առջև ծառացած հիմնահարցի քաղաքական լուծման հնարավորությունները:

Անմիջապես, կյանքի առարկայական ընթացքով խոկ առաջին բնագիծ մղվեց նի ուրիշ հիմնահարց՝ ազգային երնիկական ինքնության պահպանության խնդիրը: Խոկ դրա արդյունավետ իրականացման համար լավագույն պայմանները ստեղծվել էին Սերծավոր Արևելքում, մասնավորապես, Քեյրուր քաղաքում:

Սաեւ կախարդական փայտիկի գորությամբ, գրեթե անմիջապես սկսեց պարապվել Փարիզը հայկական քաղաքական ներկայությունից: Քեյրուրում, ընդհակառակն, կենտրոնացան թե հայ քաղաքական, թե կրթամշակութային ու մարզական կազմակերպությունների համասփյության դեկավար մարմինները նամուլի իրենց բազմաշատ օրգաններով և անհրաժեշտ ինֆրակառույցներով հանդերձ:

Միաժամանակ, հատկանշական էր մի ուրիշ երևույթ: Սփյուռքը իր կենտրոնը, իր հավաքական միտքն ու կամքը մերձեցնում էր բուն Դայաստանին: Երկրորդ աշխարհամարտի վերջավորության ԽՍՀՄ իշխանությունների տրամադրությունը հստակ ցուցադրեց, որ հայոց տարածքների խնդիրը բնակ էլ չի մոռացված, որ պատեհ առիթով պիտի առնվազն պահանջվեն Ռուսական կայսրության 1914 թ-ի սահմանները:

Դայոց ազգային հոգերանությունը չհամեցավ տվյալ պահին խնդրի ծախողման փաստի վրա: Կարևոր և եական ընկալումն էր, թե հարցը չի մոռացված և չի մոռացվելու:

Բեյրութում կենտրոնացան ՍԴ հնչայան կուսակցության, ԴՅ դաշնակցության և Ռամկավար ազատական կուսակցության վերին մարմինները, այնտեղ էին գտնվում Մեծի Տան Կիլիկիո կաթողիկոսությունը (բեյրութամերձ Անթիլիաս գյուղում), կաթոլիկ հայության կաթողիկոսությունը, Դայ ավետարանական եկեղեցիների միության կենտրոնատեղին: Բեյրութը կենտրոնն էր «Դամազգային», «Թեքեյան», «Նոր սերունդ» մշակութային միությունների, ԴՍՍ և ԴՍԸ մարզական միությունների, Շեշ կազմակերպության: Բոլոր այս միություններն ունեին համասփյության նշանակություն: Բեյրութն ամբողջ Սփյուռքի համար հանրային գործունեության կադրերի պատրաստման վառարանն էր:

1962 թ. ամերիկահայ գրող Անդր. Անդրեասյանը գրում էր. «Եվ բացահայտ ընդունված իրողություն դարձեր է, որ ոչ միայն հեռավոր գաղութներ, այլ նաև Մերձավոր Արևելքի դրացի համայնքներ, իրենց տարեց մեկ պաշտոնյան երիտասարդ հայ մտավորականով մը փոխարինելու հարկին հանդեպ՝ բովանդակ արտասահմանի մեջ միակ վայրի մը կը հառին, միակ աղբյուրի մը կը դիմեն,— Բեյրութին: Նույնիսկ, երբ մոտակա կեդրոններու հայ վարժարաններեն շրջանավարտ պատանիները ընդունակ ու հոժար են Սփյուռքի հասարակական աշխատանքի ասպարեզին՝ անհրաժեշտ է, որ փորձի և կազմության շրջան մը անցնին Բեյրութի մեջ, անոր հայկական կենսալի միջավայրի և հարաշարժ բովեն թրծվելու, ոգեշնչվելու համար»:

Բեյրութի առանցքային դերը նկատի առնելով, թերևս, պետք է դիտարկել յոթանասնական—ութանական թվականների Լիբանանի հայաբանման գործը իրու թուրքական «ծրագրված նպատակ», ինչպես նշել ենք առաջին գլխում, որի իրականացմանը ամենագործուն «հոգատար» մասնակցություն բերեցին ԽԱԾՕ-ի նրա դաշնակիցները, մասնավորապես ԱՄՆ-ը:

Ինքնահաստատման փուլը նշանավորվեց ազգային կառույցի բոլոր հարկարաժինների առավել ամրացմամբ և գործունեության աշխուժացմամբ: Դա վերաբերում է թե՝ մշակութային, կրթական, թե՝ եկեղեցական, քարենիրական, թե՝ հայրենակցական միությունների աշխատանքներին, թե՝ քաղաքական կյանքին, ասենք, այս վերջին մարզում նախորդ փուլը նվազ թեժ չէր: Թեպես ծախողվեց համասփյության կենտրոնական մարմնի ստեղծումը, բայց առաջացան քաղաքական կուսակցությունների ներքո համասփյության մարմիններ մշակույթի և կրթության բնագավառում: Կազմավորվեցին հայրենակցական միություններ, որ մասնացյութեր ունեցան մեկից ավելի երկրների համայնքներում: Վերջնականապես ծնավորվեց նաև գաղութների կազմակերպման գործը: Սակավարիվ որոշ համայնքներում հաջողվեց ստեղծել միասնական կառավարման կարգ: Դիմնականում, սակայն, կուսակցական բաժանումը պատճենահանվեց հասարակական կյանքի կառավարման սկզբունքների մեջ: Յուրաքանչյուր միություն հոգաց իր սահմաններից ներս մշակութային, կրթական, երիտասարդական, մարզական և ուրիշ գործերը: Երեսնական թվականների վերջերից մինչև քառասնական թվականների վերջը տարբեր համայնքներում (ԱՄՆ, Ֆրանսիա, Լիբանան, Չունաստան և այլն) կարճատև, բայց բուռն հասարակական կյանք ունեցան «Ազգային ճակատների» կամ «Ազգային խորհուրդների» տիպի կազմակերպությունները: Մրանք քաղաքական շերտավորման սկզբունքով առաջացած միավորումներ էին, որ այլապես կոչվում էին նաև «հայրենասիրական ճակատներ», այսինքն՝ Խորհրդային Շայաստանը ջատագովող և պաշտպանող կազմակորումներ: Բնականաբար, ՀՀ դաշնակցությունը, Երան համակրող կազմակերպությունները դուրս էին մնում այդ կազմավորումներից: «Ազգային խորհուրդները» կամ «ճակատները» նույնպես իրականացնում էին համայնքի գործերի կառավարման որոշ առաքելություններ: Դրանց թե՝ գոյավորումը, թե՝ շուտափույթ վերացումը սերտորեն աղերսվում էր քաղաքական կոնյունկտուրայի հետ: Կյանքի կոչվեցին ֆաշիզմի դեմ պայքարի ընդհանուր շարժման անհրաժեշտության տրամարանությամբ, երբ տվյալ երկրների ժողովրդավարական իշխանությունները պաշտպանում և խրախուսում էին նման շարժումը և վերացան ֆաշիզմի ջախջախումից հետո նախկին դաշնակիցների միջև տեղ գտած անհաշտելի պառակտման ֆոնի վրա, երբ «սաօք պատերազմը» այլնս գործող իրականություն էր:

Կարծ համայնքների կազմակերպումով կազմակերպվեց հայապահպանության ու հայակերտության գործը:

Վիրխսարի խնդիրը, որ Ենթակայական ծրագրված մղումով թե առարկայական արդյունքով, կատարեցին ՍԴ ինչական, ՀՀ դաշնակցություն և Ռամկավար ազատական կուսակցությունները, բոլոր քաղաքական հոսանքներն անխսիր, թեպետ տարանջատ, բայց յուրաքանչյուրն իր հնարավորությունների ու կարողությունների առավելագույն չափով, բոլոր կրոնաեկեղեցական, մշակութային, կրթական, երիտասարդական, քարեսիրական, հայրենակցական միություններն ու կազմակերպությունները, հաճախ անցնելով կարելի սահմանները, Սփյուռքի պայմաններում հայապահպանության գործը գլուխ թերելու համար հերոսության և հաճագոր: Դայապահպանություն հայրենագույրկ վիճակի մեջ, համախումք կյանքի և հայեցի մրնուրութի կերտում ուժացնող շրջապատի, աշխարհով մեկ, նույնիսկ մեկ երկրի սահմաններում ցրվածության, քաղաքական–քաղաքացիական, տնտեսական, կենցաղային անլուր դժվարությունների, խոշընդուների պայմաններում, հոգեբանորեն անհեռանկար ընկալվող իրականության հորիզոնով: Մեր ազգի պատմությունը պարտավոր և արձանագրել այս էօթ ի շարս այլնայլ քայլուրոց ճակատամարտերի:

Սփյուռքահայության գոյատնության և ազգային կեցության ապահովման գործին իրենց մասնակցությունը թերեցին և այսօր էլ թերում են համասփյուռքյան նշանակության մի շարք կազմակերպություններ:

Արդեն Սփյուռքի գոյավորման արշալույսին Սոցիալ-դեմոկրատ ինչական կուսակցության հովանու տակ կազմակերպվեցին «Նոր սերունդ» մշակութային և «Դայ մարմնանարզական միություն» (ԴՄՄ) կազմակերպությունները, որոնք նախապես սկսեցին գործել Սիրիայում և Լիբանանում, իսկ տարիների ընթացքում տարածվեցին նաև Եվրոպայի ու Ամերիկայի մի շարք երկրներում: Առանձին վայրերում տեղական մարմինները գործում էին ուրիշ անվանումների տակ, թեպետ պատկանում էին նույն համակարգին: Դարավային Ամերիկայում, օրինակ, այդ առաքելությունները տանում էր «Չարժում» մշակութային միությունը:

Դատկապես նշանակալից է ԴՄՄ-ի վաստակը: Սկիզբ առնելով 1921-ի Դալեպում միությունը իր առջև նպատակ դրեց նոր սերնդի առողջ հոգու, առողջ մտքի և առողջ մարմնի դաստիարակությունը: ՍԴ ինչական «Մասիս» թերթը դիտել է: «Դայ ժողովուրդը կը կարուի երիտասարդության մը, որ ունենա մաքուր նկարագիր, մշակված

միտք, առողջ մարմին և ազգային հասարակական գործերու պատրաստակամություն: ՀՍՍ-ականը ահավասիկ բոլոր գաղութներու մեջ ալ կաշխատի ստեղծել նման տիպարներ»: Դատկանշական է, որ ՀՍՍ-ն ունեցել է կանանց բաժիններ:

Նախնական շրջանում ՀՍՍ-ն միավորում էր Այնթափի «Արարատ» ֆուտբոլային թիմը և մի քանի երիտասարդական կազմակերպություններ: Բայց շուտով ընդլայնվեց մարզաձևերի ցանկը: Կազմակերպությունն ունեցավ բասկետբոլի, հեծանվի, մարմնակրթանքի, սեղանի թենիսի և ուրիշ բաժիններ: ՀՍՍ-ի Լիրանանի թիմը երկրի ֆուտբոլի առաջնության մեջ 1949-ից ի վեր մի քանի անգամ եղել է հաղթող և տիրացել գավարին: ՀՍՍ-ի գործունեության մեջ կարևոր տեղ էր գրավում սկաուտական շարժումը:

Դայրենիքի հետ մարզական կապերը ՀՍՍ-ն սկսել է դեռ քանական թվականներից: Առաջին անգամ նրա հրավերով Դայաստանի ֆուտբոլի թիմը («Սպարտակ») դեռևս 1959 թ-ին այցելեց Սիրիա և Լիբանան, մի շարք հանդիպումներ ունեցավ հայկական և արարական խմբերի հետ:

ՍԴ հնչակյան կուսակցությունը ծրագրել էր ավելի լայն տարածում տալ մշակութային և մարզական գործունեությանը: Խյուրական միջոցները հոգալու համար 1991 թ-ին նա հիմնադրեց բարեգործական կազմակերպություն:

20-ական թվականների վերջերից, ՀՀ դաշնակցության ԺԲ համագումարի որոշումով, սկսեց գործել «Դամագային» մշակութային միությունը, որը վճռական դեր խաղաց սփյուռքահայ աճող սերնդի մի նշանակալի հատվածի հայեցի կրության կազմակերպման գործում: Միության «Նշան Փալանջյան» (Քեյրութ) ճեմարանի սաները տարիներ շարունակ հանձնում էին ազգային կեցության գործի համար անհրաժեշտ կադրերի բանակը: Միության հովանու ներքո գործում էին բազմաթիվ դպրոցներ, գեղարվեստական խմբեր, ակումբներ և այլ մշակութային օջախներ Սփյուռքի տարածքով մեկ:

1919 թ-ից Սփյուռքում գործում էր «Դայ մարմնակրթական ընդհանուր միությունը» (ՀՄԸԸ), որի բազմաթիվ մասնաճյուղերը 1974 թ. պատգամավորական ընդհանուր ժողովի միջոցով ստեղծեցին կենտրոնական վարչություն:

Միության նպատակները սեղմ շարադրված են նրա հրատարակած առաջին կոչի մեջ: ՀՄԸԸ-ն մտադրվել էր օգնել Սեծ եղենից մազապուրծ հայությանը ուժի կանգնելու բարոյապես: Նա անհրաժեշտ

գտավ «սովորեցնել անոր (իայ անհատին – Կ. Դ.) ըլլալ չառքաշ և արի, ազգասեր և հայրենասեր, օրինապահ, զարգացնել անոր մեջ պարտականության և պատվի զգացումները, համերաշխության և փոխադարձ օգնության ոգին: Պատրաստել ֆիզիկապես տոկուն, իմացական և հոգեկան բարձր արժեքների տեր հայեր և տիպար բաղաքացիներ»: Միության նշանաբանն էր՝ «Բարձրացիր բարձրացրու»:

ՀՍԸՍ-Ծ կազմակերպել է օլիմպիական խաղեր 1919, 1920, 1921 թվականներին, որոնք բարոյական մեծ կովան եղան պոլսահայության համար: Կազմակերպել է նաև բասկետբոլի համագաղութային մրցաշարեր (1981-ին՝ Կանադայում, 1990-ին՝ Ֆրանսիայում), ֆուտբոլի համագային մրցաշար (1985-ին՝ Լու Անգլելեսում):

Նշանակալից էր ՀՍԸՍ-ի գործունեությունը սկաուտական շարժման կազմակերպման տեսակետից: Յազարավոր արիներ և արենուշներ աճել են պատանեկան այդ կազմավորումների մեջ: Միությունն անց է կացրել սկաուտական համագաղութային բանակումներ (1978-ին՝ Շունաստանում, 1980-ին՝ Ֆրանսիայում, 1986-ին՝ Անգլիայում, 1990-ին՝ Շունաստանում), որոնց մասնակցել են բազմաթիվ երկրներից ժամանած հարյուրավոր պատանիներ ու աղջիկներ: XXI դարի սկզբներին միությունն ուներ 60-ից ավելի մասնաճյուղեր, այդ թվում և Յայաստանում (Երևանում և Արովյանում):

ՀՀ դաշնակցության հովանու տակ գործող կազմակերպությունների համակարգում առաջնակարգ նշանակություն ուներ «Դայ օգնության միությունը» (ԶՕՍ), որը ստեղծվել էր 1910 թ. իրևս կանանց միավորում: Կոչվել է ՀՀԴ-ի «Կարմիր խաչ»: Նրա շուրջ քառասուն մասնաճյուղերը գոյություն ունեին Սփյուռքի տարածով մեկ: Եվրոպայում հայտնի է «Կապույտ խաչ» անունով: ԶՕՍ-ը իր ներկա անվանումը ստացել է 1946-ին: Նրա հիմնական նպատակն էր դպրոցաշինությունը, ազգային կրթությունը և դաստիարակությունը: ԶՕՍ-ը հանդիս էր գալիս իրևս անկախ միավորում, անդամակցում էր Միավորված ազգերի կազմակերպության ոչ կառավարական կազմակերպությունների համրային տեղեկատվության բաժանմունքին: Անդամությունների թիվը շուրջ 20 հազար էր: Նյութական օժանդակություն էր ցույց տալիս 150-ից ավելի ամենօրյա և միօրյա վարժարանների: Յայաստանին պատահած տարերային աղետի հետևանքները վերացնելու գործին ԶՕՍ-ը բերեց իր կարելի նպաստը: Այդ նպատակով գրասենյակ հիմնեց Երևանում:

Սկզբունքի ամենատարածված և հեղինակավոր կազմակերպություններից մեկը «Թեքեյան մշակութային միությունն» էր (ԹՄՄ), որը գործում էր Ռամկավար ազատական կուսակցության դեկավարության ներքո: Ստեղծվել էր 1947 թ-ին: Նրա հիմնադիրներից պրոֆեսոր Բ. Թովմասյանը և մեր Հ. Սեղորակյանը-ԹՄՄ-ի գոյության իմաստը տեսնում էին հետևյալ նպատակի մեջ. «**Ծառայել հայ մշակույթին, որուն միջոցով գորացնել հայապահպանման արմատները և օտար հորձանությին դիմաց հայ երիտասարդին ջամբել իր ինքնության դիմագիծը պահելու անխորտակելի կամք ու գայն օժտել ազգային պահանջատիրական անմար գիտակցությամբ»:**

ԹՄՄ-ն ուներ քառասուն մասնայուղ Սկզբունքի տարածքով մեկ, դպրոցներ, ակումբներ, մշակութային կենտրոններ, գեղարվեստական, ազգագրական խմբեր, երիտասարդական, պատանեկան, մշակութային ու հրատարակչական իրագործություններ, ուղղիո-հեռուստատեսային ծրագրեր, մրցանակներ: 1986-ին ստեղծվել է ԹՄՄ-ի հիմնադրամ: Երբև միության նշանաբան է ծառայել քանաստեղծ Վահան Թեքեյանի (որի անունով էլ կոչված է միությունը) «**օդի, ջուրի, հացի նման մենք պետք ունինք հպարտության**» ասուլքը:

ԹՄՄ-ն լայն կապեր էր պահպանում Պայաստանի հետ, որտեղ 1990 թ-ին նույնպես հիմնադրվեց համանուն միություն, իսկ 1997 թվականին բացվեց «Թեքեյան» կենտրոն:

Դայ քարեզմական ընդհանուր միության (ԴԲԸ) ղերը Սկզբունքի գոյության ամբողջ տևողության ընթացքում դժվար է գերազանահատել: Արդեն քսանական թվականներին, երբ համասփյուռքյան տարողության բարեխրական ուրիշ մարմիններ գրեթե գոյություն չունեին, Բարեզզործականի ուսերին ծանրացավ Մերձավոր և Սիցին Արևելքի ու Հունաստանի տարեր ճամբարներում կուտակված հազարավոր հայության ճակատագիրը տնօրինելու հոգած: Նույն տարիներին Բարեզզործականն էր, որ վճռականորեն նպաստեց Պայաստանի օգնության կոմիտեի (ՔՕԿ) գործունեությանը Սկզբունքում իր սուր միջոցների մի մասն ուղղելով հայրենիքի վերաշինման նպատակներին: 1926 թ. ԴԲԸ-ի նախաձեռնությամբ որոշվեց Երևանի հարավարևելյան մերձակա տարածքում ստեղծել «Նուրարաշեն» ավանը:

Բարեզզործականն իր ժամրակշիռ մասնակցությունը թերեց հայրենադարձության կազմակերպման գործին 20–30-ական թվականներին, պատերազմի տարիներին խորհրդային բանակում «Սասունցի Ղավիր»

և «Գեներալ Բաղրամյան» տանկային զորասյուների կազմավորման նպատակով Սփյուռքում ծավալված դրամահավաքին, պատերազմից անմիջապես հետո ծայր առաջ գանգվածային հայրենադարձության իրականացմանը:

ԴԲԸ-ի գործունեությունը նոր, լայն դաշտ ելավ, երբ 1953 թ-ին նրա նախագահ Շնորվեց Ալեք Մանուկյանը՝ Դիտրոյտի «Մասկո» ընկերության պրեզիդենտը: Ա. Մանուկյանը խորաքափանց, հավասարակշիռ, գործունյա գործիչ էր, որը կարողացավ վերակառուցել կենտրոնական վարչության և տեղական մասնաճյուղերի աշխատանքը, մեծապես վերափոխել դիվանակալական ոճը, նպաստել Սփյուռքի համայնքների հայեցի կեցության խարիսխների ամրապնդմանն ու ընդալյանմանը: XXI դարի սկզբներին Բարեգործական ուներ մասնաճյուղեր գրեթե բոլոր հայաշատ վայրերում, անմիջականորեն հոգում էր շուրջ 20 վարժարանների նյութական պետքերը, նպաստներ էր հատկացնում ուրիշ շատ կրթական օջախների, հայագիտական, մշակութային, մարզական, թժկական հաստատությունների: Խոշոր գումարներ հատկացվում էին նաև «Ալ. Մանուկյան» մշակութային հիմնադրամից: ԴԲԸ-ի դրամագլուխն անցել է շուրջ 100 մլն դոլարից: Նրա ծառայությունները գնահատելով՝ 1970 թ. ԴԲԸ-ի ընդհանուր ժողովը Ալ. Մանուկյանին ընտրեց միության ցկյանս նախագահ: Խակ 1989 թ., նկատի առնելով Ալ. Մանուկյանի հառաջացած տարիքը, ընդհանուր ժողովը նրան ընտրեց միության պատվո նախագահ՝ գործնական նախագահի պաշտոնը վստահելով նրա դուստր Լուիզ Սիմոն-Մանուկյանին, որը մինչ այդ փոխնախագահ էր:

Լուիզ Սիմոնը ամերիկածին սերնդի գործիչ էր: Երկրաշարժից անմիջապես հետո նրա ծավալած բուռն գործունեությունը (Գյումրիում խոշոր սառնարանի կառուցումը, Դայաստանում Ամերիկյան համալսարանի հիմնման նախաձեռնությունը և վերականգնողական վիրաբուժության հիվանդանոցի ստեղծումը և այլն) դրականապես գնահատվեց Դայաստանում: Լ. Սիմոնի հանգստի անցնելուց հետո ԴԲԸ նախագահ է ընտրվել իրավաբան Պերճ Սեղրակյանը:

50-ական թվականների կեսերից ԴԲԸ միության կենտրոնատեղին փոխադրվեց ԱՍՍ (Խյու Զերսի, այնուհետև՝ Խյու Ցորը): Ակսված նոր շրջանի համար բնութագրական էր կենտրոնական վարչության քաղաքականությունը, որով հետամտում էր տարրեր երկրներում եղած նյութական միջոցները ենթարկել կենտրոնին, միաժամանակ խրախուսել մասնաճյուղերի ինքնուրույն գործունեությունը դրամական և

նյութական միջոցներ հայթայթելու՝ տեղական հոգսերը ինչ-որ չափով հոգալու համար:

Այս քաղաքականությունն ուներ դրական և բացասական կողմեր: Մի կողմից ապահովագրում էր ՀԲԸՍ-ի նյութական կարողությունը որևէ երկրում թե համայնքի ներսում քաղաքական աննպաստավոր վերիվայրումների պարագայում, և կենտրոնացված միջոցներով ավելի ոյուրին լուծելու համար այս կամ այն համայնքի մեջ ծախսումներ նախատեսող ծրագրերը, մյուս կողմից՝ միության ամրող կարողությունը որվում էր ամերիկյան իշխանությունների հակակշռի տակ, որը որոշ քաղաքական պարագաներում կարող էր խիստ աննպատակահարմար լինել՝ հենց նույն այս կամ այն համայնքին տրամադրվելիք նպաստների իրականացման առումով:

ՀԲԸ միության բնույթի և կոչումի մասին բավականին թյուր պատկերացումներ կան Դայաստանում թե Սփյուռքում՝ ժողովրդական զանգվածի մակարդակով: Միությունը աղքատախնամ կազմակերպություն չէ, և անհատական օգնություն չի տրամադրում: Նրա բոլոր միջոցները, մինչև վերջին ստակը, յուրաքանչյուր տարի նախապես սահմանված կարգով բաշխվում են ըստ կրթական, մշակութային, գիտական, առողջապահական, մարզական ծրագրերի: 1989-ից ի վեր այս ծրագրերին ավելացավ նաև Դայ դատի գծով լայն քարոզչական աշխատանքը, որի համար ՀԲԸ միությունը ստացավ Միավորված ազգերի կազմակերպության մոտ ոչ կառավարական գրասենյակ բացելու արտոնությունը:

ՀԲԸ միությունը հրատարակում է «Դուշարար միություն» և «Դուշարար» ու «Արարատ» (անգլերեն լեզվով) ամսագրերը:

1933-ից ի վեր ՀԲԸՍ-ի հովանու տակ գործում է Դայ երիտասարդաց ընկերակցությունը (ԴԵԸ), որը հիմնվել է Բեյրութում 1931 թ.: ԴԵԸ-ն բավականին ծավալում և լուրջ աշխատանքներ տարել է հիմնականում Լիբանանի և Սիրիայի համայնքներում, թեպետ քարեզործականի դեկավարությունը մտադրություն է ունեցել մասնաճյուղեր ստեղծել նաև Եվրոպայի ու Ամերիկայի հայության մեջ: ԴԵԸ-ն բարեգործականի մշակութային և մարզական միավորումն էր, որը գործում էր անկուսակցական, ապաքաղաքական սկզբունքով, «առողջ միտքը առողջ մարմնում» կարգախոսով: Լայն էին նրա ներգրավման սահմանները՝ կրտսեր հասակներից մինչև պատանիներ և աղջիկներ, մինչև համալսարանական ուսանողություն: Դամապատախնարար, գործում էին սկաուտական և արենուշական շարժումները, համալսարանականների միությունը: Չափա-

հասները, որ նախկինում անդամակցել են ՀԵԸ-ին, ստեղծել էին նույն միավորնան ասպետների կազմակերպություն՝ նյութապես ու քարոյապես սատրելու համար ընկերակցությանը անդամակցող նոր սերնդին:

Լայն է նաև նրա գործունեության դաշտը, զեղարվեստական ինքնագործունեությունը իր գրեթե բոլոր ժանրերով՝ պար, երգ, արտասանություն, նվագ, թատերական խմբեր: Ի դեպ, թատրոնի բնագավառում երեսն նույնիսկ խոշոր նվաճումներ են արձանագրվել, ինչպես, օրինակ, «Անուշ» օպերայի բեմադրությունը Դալեպում: Դանրային մտքի կրությունը գրադարանների ստեղծում, դասախոսություններ պատմության, մշակույթի, հասարակական կյանքի հարցերի շուրջ, պատմության, արվեստագիտական, գրականագիտական վեճեր, բանավեճեր, հրապարակային վերլուծություններ: Ֆիզկուլտուրայի մասսայականությունը սպորտ՝ ամենարազմազան խմբերի ու խմբակների ստեղծում՝ ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, թենիս, սեղանի թենիս, ալպինիզմ (նույնիսկ ծյունագնացություն), շախմատ և այլն, Նավասարդյան խաղերի կազմակերպություն: ՀԵԸ-ն մասնաճյուղեր ուներ Սիրիայի և Լիբանանի բոլոր հայրենակ վայրերում:

Վեց տասնամյակ շարունակ ամենահրաժեշտ մասնակցությունը բերելով Մերձավոր Արևելքում ամբողջ Սփյուռքի համար կաղըերի պատրաստման հայրենասիրական գործին՝ Դայ երիտասարդաց ընկերակցությունը տանում էր համասփյուռքյան տարրողության աշխատանք:

Երկրորդ փուլը եկավ իր հանրագումարի մեջ լիուլի հավաստելու, որ Սփյուռքում թեպետ ուժացման շարժմանթացը առկա էր, բայց ոչ միայն երկրորդ, այլև երրորդ ու չորրորդ սերունդների հայություն կար և պիտի գոյատևեր իբրև երմիկական-ազգային հավաքականություն՝ դրանով իսկ հերքելով 20-ական թվականների մոայլ կոահումները և հիմք ստեղծելով հայեցի կեցության պոտենցիալ հնարավորությունների բացահայտման համար: Սա արդեն երրորդ փուլին վիճակված առաքելությունն էր:

2. ԶԱՐԹՈՒԹԻ ՓՈԽ

Իր ժամանակագրական սահմանների առումով փուլն ընդգրկում է 60-ական թվականները և հետագա ամբողջ ժամանակահատվածը, որի ընթացքում Սփյուռքում ծեղոք բերվեց ազգային կեցության և ազգային

ինքնագիտակցության մի նոր մակարդակ: Երևույթը բացատրվում է մի քանի եական գործոններով:

Ա) Խորոշովյան ծննդայի պայմաններում խորհրդային Հայաստանից Սփյուռք արտածվող նոր քաղաքականության շնորհիվ անհամեմատ լայն բացվեցին դուները: Յայրենիքը, որ ավելի քան քառորդ դար Սփյուռքում ընկալվում էր իրև խորհրդանիշ, դարձավ շոշափելի իրողություն: Աստիճանաբար ընդլայնվեցին փոխադարձ շփումները: Սփյուռքի ազգային կեցության մեխանիզմի մշտական և հիմնական վառելանյութը, որ ազգային մշակույթն է, սկսեց անընդհատ հոսել մայր գարկերակից դեպի համահայկական մարմնի տարրեր մասերը Յայրենիք-Սփյուռք այլևս չխցանվող խողովակով:

Կարևոր է նշել, որ քաղաքական գետնի վրա խորական վերաբերմունքը բնավ չվերացավ, ինչպես արդեն տեսել ենք դա առաջին գլխում: Ընդհակառակն, երբեմն նույնիսկ ավելի էր շեշտվում հակադաշնակցական քարոզչությունը: Միաժամանակ, մշակույրի գետնի վրա ՀՀ դաշնակցության հովանու ներքո գտնվող միավորումները ևս ուղղակի թե միջնորդված սկսում էին սնվել նույն խողովակից:

Սփյուռքի կրթական գործը լրջորեն սատարվեց Հայաստանի կողմից: Գիր ու գրականություն, դասագրքեր առաքվեցին, կազմակերպվեց ուսանողների ընդունումը հայրենի բարձրագույն հաստատություններում և նրանց նաև մասնագիտական պատրաստումը, որը նպաստեց Սփյուռքի շատ համայնքներում կադրերի պակասի լրացմանը և, առհասարակ, սփյուռքահայ հանրային մտքի մակարդակի բարձրացմանը: Տե՛ս նրանց ընդհանուր թիվը 1500-ից ավելին էր: Նույն նպաստակի համար բարձր որակավորում ունեցող հայագետներ գործուղվեցին Հայաստանից Սփյուռք տեսական աշխատանքի համար այնպիսի կրթօջախներում, ինչպիսին են «Երվանդ Յուսիսյան» ուսուցիչների վերապատրաստման հաստատությունը և «Յայկազյան» քոլեջը Բնյութում, ԼաՎեոնի Յայագիտական միջազգային քոլեջը Կալիֆոռնիայում, «Մելքոնյան» վարժարանը Կիպրոսում և այլն: Իրողություն դարձան գրեթե 30 տարի շարունակվող ամենամյա ուսուցչական դասընթացները Երևանում, որոնց յուրաքանչյուր տարի մասնակցել են 30–50 սփյուռքահայ մանկավարժներ, այսինքն՝ շուրջ 1000 ուսուցիչներ և տնօրեններ վերապատրաստվել են հայրենիքում: Տարեկան 100–120 աշակերտներ մեկական ամիս հանգստացան Հայաստանի իրենց հասակավիցների հետ ամառային ճամբարներում, այսինքն՝ ավելի քան 2,5 հազար սփյուռքա-

հայ պատանիներ ու աղջիկներ շփվեցին իրենց հայրերի ու պապիկների հայրենի հողի հետ, հոգեպս հյուսվեցին իրենց ազգային արմատներին: Բազմաթիվ եղան Դայաստանում պատրաստված ստաժորները և ասպիրանտները, գիտության թեկնածուի և գիտության դոկտորի աստիճաններ պաշտպանած սփյուռքահայերը:

60–80–ական թվականները եղան Սփյուռքի բոլոր հայաշատ վայրերում գեղարվեստական ինքնագործունեության աննախընթաց ծաղկման տարիները: Զերծ մի միություն, մի կրթօջախ, մի ակումբ, որ չունենալի մեկից ավելի երգի, պարի համույրները, երգչախմբերը, անհատ կատարողները: Եվ եթե ուշադիր գննելու լինենք հայտագիրը, պիտի արձանագրենք, որ արևմտահայ և ժամանակակից սփյուռքահայ երգի ու քանաստեղծության կողմին գերակշռող էր հայրենի երգն ու երաժշտությունը, քանաստեղծությունը: Գրեթե իսպան վերացել էին 20–30–ական թվականներին ազգային աղետի նման տարածված «Մոլլա Նասրեդդինի» պատմություններն ու «Արշին Սալալանները»:

Սփյուռքն էլ իր հերթին, վառ պահելով հայրենասիրական, ֆիդայական պայքարը ջատագովող երգը, այն վերադարձրեց հայրենիքին սատարելով 1988–ից ի վեր նրա ազատության և անկախության համար պայքարում:

Մշակութային–կրթական ներարկումը հիմնովին ամրապնդեց ազգային կեցության խարիսխները Սփյուռքի տարածքով մեկ, իսկ որոշ համայնքների ազգային վերածննդի հարցում ունեցավ վճռական նշանակություն: Դարավամերիկյան հայության ազգային կատարյալ զարթումը, օրինակ, վերջին երեք տասնյակ տարիների ընթացքում, իրական հայկական մքնուրուտի ստեղծումը Արգենտինայում, Բրազիլիայում և Ուրուգվայում հիմնականում նաև այդ երևույթի հետևանք է: Ակուլտուրացիայի պրոցեսը, որը ընդունող մշակույթի ճնշման տակ տեղ էր գտնում երիտասարդ և միջին սերնդի հայության մեջ հոգերանական մակարդակով, երբ արգենտինարազիլական երգի ու պարի անդիմադրելի օիքմն ու կշռույթը, թովիչ մեղեդին ընդունվում և փայփայվում էին իրեն սեփականը, հարազատը, աստիճանաբար հապաղեց, և իրոք հարազատը, սեփական ազգային մշակույթը սկսեց նվաճել ու ետ նվաճել հոգիները:

Բ) 20–30–ական թվականների սահմանագործում Ֆրանսիայում սկսված շարժումը, որի իրագործողները եղան «Փարիզի տղաքը», ըստ եւրյան հետապնդում էր շրջապատող հասարակության հետ հայության

ինտեգրացիայի նպատակը: Նրանք գիտակցել էին պատմական զարգացման օրինաչափությունը, որը թելադրում էր, թե հայ երնկական փոքրամասնության գոյապահպանությունը արևմտյան քաղաքակրթությունների մեջ հնարավոր է ոչ այնքան սեփական կեղևի մեջ ներփակվելով, որքան լայնորեն բացվելով շրջապատին և հենց այդ ճամապարհով ինքնահաստատվելով այդ իրականության մեջ:

Հարժումը, սակայն, ընթացավ հասարակական գիտակցության գրեթե բացառապես մի բնագավառում գրականության: «Մարտկոցական-ները» փորձ արեցին ներգրավել նաև քաղաքական գիտակցությունը, բայց ծախողվեցին:

Օրինաչափությունը աստիճանաբար դրսնորվում էր կյանքում աշխատանքի և կապիտալի մարզերում, սակայն պահանջվեց երեքից չորս տասնամյակ, մինչև որ ընդիհանրապես հասարակական գիտակցության մեջ լիովին ծնավորվեց շրջապատող իրականության հետ ինտեգրացիայի գաղափարը իբրև ազգապահպանության մեխանիզմի կարևոր օդակ: 60–70–ական թվականները սկիզբ դրեցին այդ գաղափարի կազմակերպչական մարմնավորմանը: Ըստ որում, պրոցեսը տարրեր համայնքներում ընդունեց այլազան կերպեր: Լիբանանում արտահայտվեց հայ քաղաքական կուսակցությունների և հոսանքների արդեն իսկ եղած գործակցության խորացման ծնով համապատասխան արարական ուժերի հետ: Արարական երկրներում, Հունաստանում, Կիպրոսում տեղական ուժերի և պահեստինյան ու քրդական ազատագրական շարժումների հետ հայ ազատագրական նորոգ շարժման գործակցելու կերպով: ԱՍԽ–ում, Ֆրանսիայում, Դարավային Ան্তառիկայում և մյուս երկրներում մշակութային ներթափանցման և օտար հանրային կարծիքը Դայ դատի օգտին գորահավաքելու փորձերի տեսքով: Ան্তառիկայի Միացյալ Նահանգներում երկրի կառավարման համակարգի մեջ ուղղակի ներդրուման ճամապարհով և այլն:

Պրոցեսին այս կամ այն չափով, գիտակցված թե տարերային կերպով իրենց մասնակցությունը թերեցին հայ քաղաքական կուսակցությունները, ՔԲԸ–ը, ՔՕՄ–ը, մշակութային միությունները, ինչպես նաև տվյալ ժամանակաշրջանում նորաստեղծ այնպիսի միավորումներ, ինչպիսին են Դայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը (ԱՍԱԼԱ), Դայ դատի հանձնախմբերը, Ան্তառիկայի հայկական համաժողովը, հարավամերիկյան պրոֆեսիոնալների և միջմիութենական կազմակերպությունները և այլն:

Ա) և Բ) կետերում շարադրված գործոնները առաջին հայացքից հակոտնյա միտումներ են պարունակում, բայց ըստ եռթյան նույն գործի հայապահպանության խնդրի կենսական կողմերն են: Արդիական ժամանակներում անհնարին է խնդրի արդյունավետ լուծումը առանց զույգ գործոնների միասնական գործողության:

Գ) 60-ական թվականներին Հայաստանում որդեգրված քաղաքական շերտավորման քաղաքականության շնորհիվ անհամեմատ լայնորեն բացվեցին դօները սփյուռքահայ քաղաքական ուժերից որոշ մասի առօք: ՍԴ հնչալյան, Ռամկավար ազատական կուսակցությունները, թե հայ համայնավարները (որոնց ներքափականումը Հայաստան նույնպես խոչընդոտվում էր նախկինում) աստիճանաբար ավելի ու ավելի լայն շփումների հնարավորություններ ունեցան կուսակցական, պետական մակարդակների վրա, մշակութային, մտավորական շրջանակների հետ, աշխատանքային և կենցաղային իրականության մեջ: Հայաստանում արտոնվեց (ծիշտ է ետքարենության) նրանց մամուլի ազատ վաճառքը: Սփյուռքի բազմաթիվ գրողների գրքեր հրատարակվեցին Երևանում և նույնիսկ Մոսկվայում ուստեղն լեզվով: Լույս տեսան նաև Համաստեղի և Շամբի գրութերը (այդ մեծ գրողների անունները, ՀՀ դաշնակցության նրանց պատկանելիության պատճառով, առհասարակ արգելված էին մինչ այդ): Երևանի բուհերի սփյուռքահայ ուսանողության թվում քիչ չեն ՀՀ դաշնակցությանը անդամակցող երիտասարդները: Նույնը կարելի է ասել և մանկավարժական ամենամյա դասընթացներին մասնակցող ուսուցիչների կազմի մասին: Բոլոր այս շփումները մեծապես ազդում էին Սփյուռքի ազգային կյանքի զարթոնքի վրա դրական իմաստով:

Այսուամենայնիվ, քաղաքական պայքարը Խորհրդային Հայաստանի պաշտոնական շրջանակների և ՀՀ դաշնակցության միջև առավելագույնս սրվեց հասնելով իր գագարնակետին: Դա ուներ իր երկու հիմնական պատճառները:

Նախ՝ Հայկոմկուսի շարժադիրները:

Ելնելով դավանաբանական սկզբունքներից՝ նա այդ շրջանում տարանցատում էր ազգայինը և ազգայնամոլականը, և, անշուշտ, կտրականապես ներժում էր երկրորդը: ՀՀ դաշնակցության գաղափարականի մեջ Հայկոմկուսը տեսնում էր երկրորդը իրեն գերակշռող տարր և, բնականաբար, պայքարի թիրախն էր դարձնում այն: Բայց հարցն ունի մի ուրիշ, թերևս ավելի վճռական, գործնական կողմ: Առաջին գլխում մենք արդեն խոսել ենք Կենտրոնի հետ Հայաստանի հարաբերության բարդ

պյուղեսում երրորդ, աներևույթ կողմի գոյության մասին: Ըստ Էռլյան, գործուն էր Երևան-Մոսկվա-ՀՀ դաշնակցություն եռանկյունին: Եվ ՀՀ դաշնակցության դեմ պայքարի սրումն էլ, ըստ Էռլյան, այն գինն էր, որ պետք է վճարվեր 60-ական թվականներին մուտք գործած ազատամտության տվյալ դոգայի դիմաց: Դետագայում էլ մի շարք խոշոր ծեռնարկումներ, ինչպիսին էր Դայոց եղեռնի 50-ամյա և հետայնու մյուս տարելիցների նշումը, Ծիծեռնակաբերդի Սեծ եղեռնի հուշարձանի կառուցումը, պատմագրության մեջ ազգային-ազատագրական պայքարի հերոսների մուտք-վերադարձը, Մուսա Լեռան, Սարդարապատի և մյուս հերոսամարտերի մեծարումը և այլն հայ ժողովորի ու մատավորականության տիրական պահանջի շնորհիվ իրականացան, քայլ նաև՝ Կենտրոնի առջև այդ ամենը «դաշնակցության ծեռքից խլելու» հիմնավորման հետևանքով:

Ապա, ՀՀ դաշնակցությունն ինքը նոր թափ հաղորդեց պայքարին թե Սփյուռքի համայնքներում և թե հակախորհրդային դաշտում: Դայաստանյաց առաքելական եկեղեցու ներսում ծայր առած տագնապը, որ մինչև այսօր իսկ շարունակվում է, բնավ կրոնակեղեցական կամ դավանական-կանոնական բնույթ չուներ: Իր հիմքում դա քաղաքական անհաշտ պայքարի արդյունք էր, որը ՀՀ դաշնակցությունը ժրագրված թիրախում էր դեռ 20-ական թվականներից: Այս հարցին թիւ հետո կանդրադառնանք ավելի մանրամասն:

70-ական թվականներից ի վեր ՀՀ դաշնակցությունն անցավ առհասարակ Սփյուռքի, և մասնավորապես, իր մականի տակ գտնվող կազմակերպությունների ու զանգվածների «քաղաքականացման» քաղաքականությանը, որի կենտրոնական միտքն էր «Ազատ, անկախ Դայաստանի» գաղափարի յուրացումը իր շարքերի, համակիրների, երիտասարդության ու նոր սերնդի կողմից:

Դայ դատի հետապնդան, Դայոց ցեղասպանության ճանաչման կողքին «Ազատ և անկախ Դայաստանը» թերևս առանցքային նշանակության այն գաղափարներն են, որոնք բնութագրական էին «Զարթոնքի» փուլին: 1988-ից ի վեր Դայաստանում ծայր առած ժողովրդավարական շարժումները որդեգրեցին «Ազատ, անկախ Դայաստանի» գաղափարները, ՀՀ դաշնակցության կարգախոսներից շատերը: Ազգային գաղափարաբանության հիմնահարցը ժողովորի, զանգվածների գիտակցության և հոգեբանության մեջ վառ պահելը եղավ «քաղաքականացման» քաղաքականության խոշոր արդյունքը, որը լուրջ նպաստ թերեց Դա-

յաստանի Յանրապետության հաստատման և նրա անկախության հռչակման գործին:

«Քաղաքականացման» քաղաքականությունը, սակայն, իրականացվում էր երկուստեք սուր պայքարի ուղեկցությամբ: Մերողները և կերպերը մնացել էին գրեթե անփոփոխ, ինչպես որ 20–30–ական թվականներին էին ծայրահեղ, այլամերժ: Դարձյալ ծայր առավ «դրոշամարտը», պայքարը խորհրդանիշների շուրջ, մամուլի որոշ նյութերում կոտրվեցին գոեհկաքանությունների մրցանիշները:

Պարագոքսալ է, քայց փաստ, որ ոչ միայն Յայաստանի հետ հարաբերությունների աննախընթաց որակով ու քանակով, այլև ՀՀ դաշնակցության ուժեղ քննադատությամբ և օտարումով ՀՀ դաշնակցության և Սփյուռքի մյուս ուժերի միջև պայքարի նոր, թեժ բռնկումով հավելյալ ու լուրջ սնունդ ստացավ ասես «թմրիրից» հառնող սփյուռքահայ կյանքը:

Դ) Սփյուռքահայ և, ինչու չէ, Յայաստանի հայության ազգային զարթոնքի ամենազորեղ խթաններից մեկը եղավ Յայ դատի վերակենդանացումը: Այս եզրը չենք վարանում գործածել, քանի որ Լոգանի ծախուններից ի վեր, ըստ եռության, ծրագրված գործնական պայքար Յայ դատը, Յայոց ցեղասպանությունը ճանաչել տալու համար չկար գրեթե ամբողջ 40 տարի:

Եիշտ է, Փարիզում 20–ական թվականների վերջերին երևաց «Ազատամարտ» թերթը, 30–ականների սկզբներին «Մարտկոցական» շարժումը և «Արևմտահայ ազատագրական ուխտը», որոնք բարձրացնում էին Յայ դատի խնդիրները, քայց դրանք վերջիվերջո հանգեցին ՀՀ դաշնակցության դեկավար մարմինների դեմ ուղղված պայքարի: Եիշտ է նաև, որ 1945–ից հետո մի քանի տարի Ամերիկայի, Ֆրանսիայի և մի շարք ուրիշ համայնքներում ստեղծված Ազգային խորհրդունները դիմումներ կատարեցին ՄԱԿ–ին, նույնիսկ «Յանահայլական» համագումար և տարբեր ժողովներ հրավիրեցին Յայ դատի հետապնդման նպատակով, քայց դրանք ել կոչված էին ծառայելու ԽՍՀՄ արտաքին քաղաքանության այդ պահի միտումին:

1965 թ. Մեծ եղեռնի 50–րդ տարելիցը եղավ բեկումնային: Շարժվեց ամբողջ հայ ժողովուրդը: Շարժվեց Սփյուռքը: Շարժվեց, վերջապես, նաև համաշխարհային հանրային կարծիքը: Այս խնդիրներից մի քանի եական կետերի կանորադառնանք առանձին: Այստեղ անհրաժեշտ է շեշտել, որ Յայ դատի հետապնդման գործը բազմաթիվ մարդկանց, որոնք կարծես վաղուց ուժացել էին, վերադարձրեց իրենց ազգային ար-

մատներին, դարձավ Սփյուռքի ազգային գոյապահպանության և ազգային կեցության խթանիչ ու երաշխիք՝ միաժամանակ:

Ե) Սփյուռքահայության իրական գարբոնքի ամենակենսական ազդակը սկսում է գործել Հայաստանի Հանրապետության անկախության հոչակումով։ Պաշտոնապես, պետական քաղաքականության մակարդակով Սփյուռք-Հայրենիք հարաբերությունների մեջ վերանում են բոլոր կարգի քաղաքական խոչընդուները. իրական հնարավորություններ են ստեղծվում, որպեսզի կենսագործվի «Մեկ ազգ, մեկ հայրենիք» կարգախոսը, իրողություն դառնա Սփյուռք-Հայրենիք բարոյամշակութային, ինչպես նաև որոշ սահմանների մեջ՝ տնտեսական ինտեգրացիան։

Այժմ անցնենք ժամանակահատվածի մի քանի եական խնդիրների դիտարկմանը։

Ա. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ

Քաղաքական պայքարը, ինչպես ասացինք, իր ամենաբրուն արտահայտությունը գտավ Հայաստանյայց առաքելական եկեղեցուց ներս հարուցված սուր տագնապի ձևով։ ՀՅ դաշնակցության ղեկավարներից մեկը՝ Հրաչ Տանապետյանը, հանրագումարի թերելով կուսակցության անցած ուղին, նշում է, թե 20-ական թվականներից ի վեր «Դաշնակցության վճռական կեցվածքն էր, որ արգելվ հանդիսացավ Հայաստանյայց եկեղեցին արտասահմանի մեջ ևս միակ հոսանքի մը ամբողջական ազդեցության ենթարկելու ծգոտող աշխատանքներու հաջողության»։ Այլ խոսքով, Մայր աթոռ Ս. Էջմիածնի որևէ գործողությունը ընկալվում էր իրքն բոլշևիկյան ներթափանցման կերպ, և ՀՅ դաշնակցության վճռական կեցվածքի շնորհիվ Մայր աթոռի ամբողջական ազդեցությունը արտասահմանի մեջ խափանվեց։

3. Տանապետյանը, որ լրջմիտ մտավորական էր ու հավասարակշռված քաղաքական գործիչ, իրավացի էր։ Խնդրին ծեռնարկելով դեռևս 20-ական թվականներին՝ արդեն 50-ական թվականների երկրորդ կեսից ի վեր ՀՅ դաշնակցությունը չեղոքացրեց Ամենայն Հայոց կաթողիկոսության գործնական ազդեցությունը Սփյուռքի հայ եկեղեցու մի ստվար հատվածի վրա։

20-ական թվականների երկրորդ կեսում շատ վայրերում եկեղեցական թեմերը սկսեցին գործածվել քաղաքական ելույթների համար։

Նկատի ունենալով Ասրպատականի թեմի օրինակը, որտեղ այդ պահին ակնառու կերպով եկեղեցին օգտագործվում էր իրքև քաղաքական պայքարի միջոց ու հենարան, Մայր աթոռը 1929 թ. հունիսին շրջաբերական հետեւ Սփյուռքի եկեղեցիներին, որի մեջ պահանջեց եկեղեցին հեռու պահել կուսակցական ու քաղաքական պայքարից: Փաստաբություն, որի տակ կար Գերագույն հոգևոր խորհրդի անունից Գնորդ արքեպիսկոպոս Չորեցյանի ստորագրությունը, դարձավ սուր քննադատության և ծաղրանքի թիրախ:

Եռագույն դրոշը, որ 30-ական թվականների սկզբներին այլևս ընկալվում էր իրքև միայն կուսակցական, հակախորհրդային պայքարի խորհրդանիշ, ՀՀ դաշնակցությունը սկսեց պարտադրել նաև եկեղեցիներին: Ամերիկայի թեմի առաջնորդ Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանը կորականապես հրաժարվեց ենթարկվել այդ պարտադրանքին: Անհներ շարունակ նրա դեմ հալածանք կազմակերպվեց, որին մասնակցեցին դաշնակցության բոլոր թերթերն անխստիր Սփյուռքի գանազան համայնքներում, և որն ավարտվեց առաջնորդի սպանությամբ Նյու Յորքի Սուլը Խաչ եկեղեցու խորանի առջև 1933 թ. դեկտեմբերի 24-ին: Այդ պահից ի վեր Ամերիկայի մի շարք եկեղեցիներ դուրս եկան Մայր աթոռուի իրավասությունից:

Նույն 20-30-ական թվականների սահմանագծում գանազան մակարդակներում գաղափարներ էին արձարձվում Մայր աթոռը Եջմիածնից Երուսաղեմ կամ մի ուրիշ վայր փոխադրելու նասին, որ, սակայն, չունեցավ կազմակերպական հետևանքներ:

Ս. Եջմիածնի «ամբողջական ազդեցության» ոլորտը սահմանափակելու ծրագիրը իր լրումին հասավ 50-60-ական թվականներին, երբ ՀՀ դաշնակցությանը հաջողվեց Ամենայն Դայոց կաթողիկոսությանը հակադրել Սեծի Տաճն Կիլիկիո կաթողիկոսությունը: Անրիլիասի արռօհն կցվեցին պարսկահայ Երեք թեմերը, հունահայ թեմը, նոր թեմեր կամ վիճակներ ստեղծվեցին նրա իրավասության ներքո ԱՍՍ-ում, Վենեսուելայում, Պարսկական ծոցի Երկրներում: Եջմիածնի Մայր աթոռը այս ամենը դիտեց իրքև զավթում կամ ապօրինություն: Անրիլիասի արռօհ ավելի առաջ գնաց իր կանոնադրության 32 և 33 հոդվածների մեջ վավերացնելով կատարվածը և իրավունք վերապահելով նոր թեմեր ու վիճակներ իրեն կցելու կամ ստեղծելու Սփյուռքի տարածքով մեկ:

1963 թ. աշնանը Երուսաղեմում տեղի ունեցավ Ամենայն Դայոց Վազգեն Ա և Սեծի Տաճն Կիլիկիո խորեն Ա. Բարոյան կաթողիկոսների հան-

դիպումը, որը ստացավ «ողջագուրում» անվանումը: «Ողջագուրումը», սակայն, չհանգեց որևէ դրական փոփոխության: Անթիլիասը դրանից գրեթե անմիջապես հետո ինքնակամ կերպով Մարսել իրևս թեմակալ առաջնորդ ուղարկեց իր եպիսկոպոսին: Պայքարը երկու արուների իրավասությունների շուրջ բռնկվեց նոր ուժով: Բաղաքական կողմերը բյուրեղացան, մի կողմից՝ ՀՀԴ–ը, մյուսից՝ հիմնականում ՌԱԿ–ը: Մարսել ուղարկված Արտավազդ եպիսկոպոս Դրդոյանը ետ կանչվեց: Պայքարի ընթացքում իրապարակ նետվեց մի բանաձև, որը հնչում էր այսպես: «Ամենայն Հայոց Սեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն», պաշտոնապես ազդարարվեց Եջմիածնի և Անթիլիասի արուների «հավասարագործության» թեզը, համաշխարհային միջեւելեցական ժողովներին Անթիլիասը սկսեց մասնակցել առանձին, անկախ պատվիրակություններով:

Այս ամենը Անթիլիասը իրագործեց առանց որևէ օրինական հիմքի: XV դարի կեսերից ի վեր գործող Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունն առաջացել է իրևս տեղական իրավասության արող և միշտ մնացել է այդ կարգավիճակում, թեպետ երբեմն–երբեմն իրավասությունների խնդիր է հարուցել: 1920–ական թվականներին միայն Ամենայն Հայոց կաթողիկոսության հոգատարության շնորհիվ Կիլիկյան արողը կարողացավ շարունակել իր գործունեությունը, երբ ստիպված էր հեռանալ Սսից՝ Կիլիկիայում այլևս հայություն չմնալու պատճառով:

1928 թ. մայիսի 22-ի թվակիր նամակով Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Սահակ Խապայանը դիմում է Մայր աթոռին, որպեսզի որոշ եկեղեցական վիճակներ հատկացվեն Կիլիկյան արողին «ընդհանրական Հայրապետի հաւանութեամբ»: Հատկանշական է Մայր աթոռի պատասխանը՝ Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետի ստորագրությամբ. 1929 թ. օգոստոսի 12 թվակիր:

«Նորին Սրբության՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի ի սրտե քարեմաղրությունն է և ցանկությունը Արողի հարատևությունը և օժանդակ գործակցությունը ընդհանրական Հայրապետին (ընդգծումը իմն է Կ. Դ.): Այս մտքով եր, որ... հածել էր անցյալ դեկտեմբեր 25 թվակիր թ. 646 գրությամբ դիմել Երուսաղեմի Ամենապատիվ պատրիարքին՝ առաջարկելով Լիբանանի և Սուրբու մեջ երկու թեմ կազմելու նպատակով Պեյրութի մատուցը և Դամասկոսի եկեղեցին առամապես Զեզ հանճնելու և Ֆրանսական հովանավորության ներքո գտնվող Դամասկոսի, Պեյրութի և Լավողիկեի հոգևոր տեսչություններն իրենց եկեղեցիներով Զեր իրավասության ենթարկելու

հարցերը խոհական քննության ենթարկելու և հետևանքի մասին գեկուցանել իրեն, ակնարկելով նաև, որ վերոհիշյալ խնդիրներին դրական լուծումը կը լիներ իր կամքի արտահայտությունը:

Գերագույն հոգևոր խորհուրդը պատիվն ունի հայտնելու, որ Նորին վեհափառությունը ուրախ է, որ իր առաջարկը դրական լուծում է ստացել և Սուրբ սաղիմական իրավունքները փոխանցվել են Կիլիկիո կաթողիկոսության»:

Այսպիսով՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի հրահանգով և հավանությամբ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության իրավասության տակ գտնվում են միայն ու միայն Հալեպի, Դամասկոսի, Կիպրոսի և Լիբանանի թեմերը: Այսպիսին է օրինական պատկերը:

80-ական թվականների երկրորդ կեսին Ամենայն Հայոց կաթողիկոսությունը ծեռնարկեց Հայաստանյաց Եկեղեցու միասնական կանոնադրության ստեղծմանը՝ իրավիրելով Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը թերել իր մասնակցությունը: Գաղափարը դարձավ ՀՅ դաշնակցության մանուլի ամենասուր քննադատության առարկա: Հատկապես «Հայրենիք» օրաթերթը մերժեց միասնական կառույցի նույնիսկ տեսական հնարավորությունը:

1988 թ. պատահած ազգային աղետից երկրաշարժից հետո և Հայաստանում ծայր առած ազգային-ազատագրական ու ժողովրդավարական շարժումների ֆոնի վրա Ամենայն Հայոց Վազգեն Ա և Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսների միջև ստեղծվեցին բնականոն հարաբերություններ, որոնք, սակայն, արձագանք չգտան ավելի ստորին մակարդակներում: Հայաստանյաց Եկեղեցու ներքին պառակտումը այսօր իսկ գոյություն ունեցող իրողություն է, թեպետ քիչ ավելի ուշ էջմիածնի գահի վրա կաթողիկոս ընտրվեց նույն Անթիլիասի կաթողիկոսը: Միասնական կանոնադրության խնդիրը մինչև այժմ էլ՝ 2003 թ., մնում է չլուծված:

Ետոնարկելով Եկեղեցու խողովակով բոլշևիկյան ներթափանցման չեզոքացման տակտիկական խնդրին՝ ՀՅ դաշնակցությունը, ըստ եռյան, ստեղծեց ստրատեգիական հեռամկարային տարրության մի նախադաս: Անթիլիասը հայտարարեց իր հավասարազորությունը էջմիածնի հետ, իր հրավասությունը՝ Ելմելու պատմականորեն հաստատված Սիրիայի, Լիբանանի և Կիպրոսի թեմերի սահմաններից և դառնալու Ամենայն Հայոց կաթողիկոսական հակաբոռ, մերժելու իր մասնակցությունը Հայաստանյաց Եկեղեցու ամբողջության մեջ՝ միասնական կա-

նոնադրության շրջանակներում: Պատահական չէ, որ խորիրդային կարգերի վերացումից հետո էլ, թեպետ ՀՀԴ-ն 90-ական թվականների վերջերից մաս կազմեց Հայաստանի Հանրապետության իշխանության կառուցների, բայց Հայաստանյայց եկեղեցու տագնապի մեջ ոչ մի փոփոխություն չկատարվեց:

Եթե նույնիսկ իրականանար Մայր արքոօք էջմիածնից փոխադրելու գաղափարը, դա կստանար միայն քաղաքական իմաստ, ինչպես եղել էր դարեր առաջ, և չեղ հանգի Հայաստանյայց եկեղեցու երկփեղլիմանը, բազմագլխությանը: Այն, ինչ կատարվեց, սակայն, դուրս եկավ քաղաքական առժամյա նպատակների սահմաններից: Արդեն XXI դարում ենք, և, ցավոք, ըստ երթյան, գործում է Հայաստանյայց առաքելական երկու՝ եկեղեցի՝ դավանածիսական նույն սկզբունքների հիման վրա: Կաղը, հետևելով ճիշտ նույն նախադեպի տրամարանությանը, որևէ ուրիշ քաղաքական հարկի դեպքուն Հայաստանյայց եկեղեցին կարող է ենթարկվել նորանոր պատակտունների, նորանոր «հավասարագոր» գլուխների ստեղծմանը:

Կոմունիստական վարչածես այլևս գոյություն չունի: Հայաստանի Հանրապետությունը հոչակել է իր լիակատար անկախությունը: Ազգային միասնությունը, միաբանությունը այսօր ոչ միայն քաղաքական կարգախոս է, որը ազդարարում են անխտիր բոլոր քաղաքական կուսակցություններն ու հոսանքները, այլև ազգային անկախությունը պահպանելու, գոյատևելու, զարգանալու, ներկա աշխարհի մեջ ինքնահաստատվելու միակ իրապաշտ ճանապարհն է:

Որքանո՞վ կարող է դրան նպաստել եկեղեցու մեջ գոյություն ունեցող տագնապը, Անքիլիասի արօոի գործող կանոնադրությունը՝ իր 32 և 33 հոդվածներով, «հավասարագորության» ստորոգությամբ, մոտիկ ապագան կպատասխանի:

Բ. ՀԱՅ ԴԱՏԻ ՀԵՏԱՊՆՈՒՄԸ

Սփյուռքի ազգային զարթոնքի ամենազորեղ գործոններից մեկը եղավ 60-ական թվականների կեսերից ի վեր Հայոց ցեղասպանությանը, Հայ դատի ճանաչմանն ի նպաստ համաժողովրդական շարժման նոր ալիքը, որը սկիզբ առավ Մեծ Եղեռնի կեսդարյա տարելիցի ոգեկոչման առիթով:

1965-ի տարեսկզբին Հայաստանի Հանրապետության պատվիրակության անունից ՀՀ դաշնակցության բյուրոն մի հուշագիր է ներկայացնում ՄԱԿ-ի անդամ երկրներին, որի մեջ շեշտում է, թե Հայկական հարցի լուծումը ազատ և անկախ Հայաստանի ստեղծումն է: Հուշագրի մեջ հիմնավորվում է, թե միայն այդ միջոցով հակասարակշություն կգոյանա Ռուսաստանի և Թուրքիայի միջև, և երաշխիք կատեղծվի Միջին Արևելքի խաղաղության համար:

1965 թ. ապրիլի 24-ին Խորհրդային Հայաստանում, առաջին անգամ լինելով, պաշտոնապես սգահանդես կատարվեց հանրապետության բարձրագույն իշխանության մակարդակով: Երևանում և այլուր տեղի ունեցած ժողովրդական ցույցերը ցնցեցին անբողջ հայությունը՝ աշխարհով մեկ: Հենց այդ իրողությունն էլ յուրատեսակ մի ազդանշան ծառայեց Հայ դատի հետապնդման աշխատանքի վերածննդին: Հետագա ընթացքը ունեցավ միմյանց սերտորեն կապակցված երկու հուն, մի կողմից՝ ժողովրդական ցույցեր, դիմումներ աշխարհի կառավարություններին, քարոզչական լայն ու տարածուն գործունեություն, մյուս կողմից՝ մի նոր շարժման ծնունդ, որի նպատակն էր քաղաքական արտակարգ միջոցներով, այդ թվում և ահարեւկությամբ, արթնացնել աշխարհի հասարակական կարծիքը:

1973 թ. հունվարի 27-ին Գուրգեն Յանիկյանը, 77-ամյա մի ծերունի հայ, Կալիֆոռնիայի պանդոկներից մեկում զնդակահարեց թուրքական հյուպատոսին և նրա օգնականին: Նախապես մի նամակ էր ուղարկել տեղական մամուլին՝ բացատրելով իր արարքի շարժափները: Նա պատմում էր, թե ինչպես Սեծ եղենին զոհ էր գնացել հայ ժողովուրդը, իր ընտանիքի 26 անդամները, և հայտարարում, որ այդ միջոցով ձգտում էր խորտակել Հայ դատի շուրջ տասնյակ տարիներ տիրող դատապարտելի լուրջունը:

Ֆիշտ նույն թվականի գարնանամուտին քարոզչական-քաղաքական հունով ևս մի կարևոր գործողություն կատարվեց: Մարսելում բացվեց Սեծ եղենի նահատակների հուշարձանը, որի առիթով Թուրքիան, իրըն բողոքի նշան, Ֆրանսիայից ետ կանչեց իր դեսպանին:

Աշխատանքն, այնուհետև, անընդհատ ուժգնանալով, զնաց գույց հունով: Բացվեցին հուշարձաններ, մամուլը (այդ թվում և օտար) հեղեղվեց նյութերով, իրատարակվեց գիտական և իրապարակախոսական գրականություն, ստեղծվեցին Հայ դատի հանձնախմբեր, դիմումներ կատարվեցին ազդեցիկ կառավարությունների մոտ, ՄԱԿ-ի, նրա ենթա-

բաժինների, տարրեր Երկրների խորհրդարանների, ոչ կառավարական այլազան կազմակերպությունների և մարմինների նիստերում մեկից ավելի անգամ քննության առարկա դարձավ Հայոց ցեղասպանության, Դայ դատի ճանաչման խնդիրը: Չեավորվեց ԱՍՍԼԱ-Ծ՝ Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը, որն իրականացրեց մի շարք ահաբեկչական գործողություններ իիմնականում թուրքական դիվանագիտական անձնակազմի դեմ:

Երկու պարագայում էլ Դայ դատի հետապնդման լայնատարած աշխատանքը 60-ական թվականներից ի վեր եղավ Սփյուռքի հայեցի կեցության հիմնախարիսխներից մեկը:

Թեպետ գույգ հունով ընթացող գործողությունները հաճախ խաչածներ են, հարստացրել ընդհանուր նպատակը հետապնդող հոսանքը, ավելի հստակ ընկալելու համար, սակայն, եղելությունը, անհրաժեշտ է դրանք դիտարկել գատ-գատ:

Քաղաքական-քարոզչական գործն ուղղված էր ոչ միայն հայության իսկ հիշողության արբնացնանը, այլև առավելապես օտար հասարակական կարծիքը, պետությունների և միջային մարմինների ուշադրությունը Հայոց հարցի վրա թևեռնու նպատակին:

Լոգանի խորհրդաժողովից ծիշտ կես դար անց Հայոց ցեղասպանությունը հիշատակման առարկա է դառնում Միավորված ազգերի կազմակերպության համակարգում: Եվ անմիջապես սկսվում է մի նոր (քայլ միշտ նույն հին) պայքար մուրքիայի կողմից, որի հետևանքով հարցը ծգձգվում է տարիներ շարունակ:

1973 թ. սեպտեմբերի 16-ին ժննում տեղի է ունենում ՍԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի ազգային փոքրամասնությունների հանդեպ կիրառվող խորականության կանխնան և պաշտպանության ենթահանձնախմբի 26-րդ նստաշրջանը, որը քննարկում է Ուուանդայի ներկայացուցիչ Նիկողեմ Ուլյաշշիանկիկոյի գեկուցումը՝ ցեղասպանությունը կանխելու և դրա համար պատժելու հարցի շուրջ: Դանձնախումբը միաձայնությամբ ընդունում է գեկուցման առաջին բաժինը, որի 30-րդ կետում արձանագրված է հետևյալը:

«Անցնելով արդի փուլին՝ կարելի է հիշել բավականին առատ վկայությունների գոյությունը, որոնք ապացուցում են հայերի կոտորածը, որը նկատվում է XX դարի առաջին ցեղասպանությունը»:

Սեղավորի ամունը նույնիսկ չի հիշատակված: Բայց այսքանը բավական էր, որպեսզի Թուրքիան անմիջապես պահանջեր սույն կետի ջնջումը:

Նույն գեկուցումը քննարկվեց մեկ տարի անց, այս անգամ արդեն Սարդու իրավունքների հանձնաժողովում (30-րդ նստաշրջանում): Թուրքիայի ճնշման տակ գեկուցումը վերադարձվեց հեղինակին՝ վերամշակման համար: Նույն հանձնաժողովի 31-րդ նստաշրջանում, որը տևելի ունեցավ 1978 թ. Ուլիսաշիանկիկոն իր գեկուցումից ամբողջովին սղել էր պատմական մասը, Դայոց ցեղասպանությունը հիշատակող կետի հետ միասին:

Մեկ տարի անց՝ 1979-ին, հանձնաժողովի հերթական նստաշրջանը, սակայն, ձայների մեծամասնությամբ որոշում է վերականգնել 30-րդ կետը: Բայց Թուրքիան չի ընդունում եղելությունը: Ուլիսաշիանկիկոյի փոխարեն գեկուցում ներկայացնելու հանձնարարությունը տրվում է Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչ Բենջամեն Ուայթերին:

Դարձը նորից վերադառնում է ենթահանձնախումը, որի 38-րդ նստաշրջանում (1985 թ.) ընդունվում է Ուայթերի գեկուցագրի 24-րդ ենթակետը: Ըստ նրա բանաձևումի՝ «1915-16 թթ. հայերի օսմանյան ջարդը» որակվում է իրուս ցեղասպանության օրինակ: Ի դեպ, ենթահանձնախմբի ԽՍՀՄ-ի նշանակած փորձագետը՝ Սոֆինսկին, քվեարկում է գեկուցագրի դեմ, «ցեղասպանություն» հասկացության սահմանամասն հետ համաձայն չի հնելով, բայց դրանով իսկ դեմ է եղում նաև 24-րդ ենթակետին:

1965 թ. ի վեր Դայոց ցեղասպանությանը անդրադարձել են մի շարք երկրների պառականությունը:

1975 թ. ԱՄՆ-ի կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը ընդունեց N148 բանաձևը, որի համաձայն՝ 1975 թ. ապրիլի 24-ը հայտարարվելու էր «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր»: 1984 թ. նույն Ներկայացուցիչների պալատն ընդունեց N 247 բանաձևը, որով կառավարությունից պահանջում էր 1985 թ. ապրիլի 24-ը հայտարարել «Մարդու կողմից մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի հիշատակման ազգային օր»: 1984 թ. Սենատ ներկայացվեց N 214 բանաձևը, որը կառավարությանը կոչ էր անում արտաքին քաղաքականության ծրագրման և իրականացման ընթացքում նկատի առնել Դայոց ցեղասպանության փաստը: Արտաքին գործերի հանձնաժողովը քննարկեց և ընդունեց բանաձևը, սակայն, որոշ միջոց անց այդ բանաձևը ևս սատեցվեց կառավարության ճնշման տակ:

Այնուհետև դեպքերն ընթացան նույն տրամաբանությամբ: 1985 թ.

Ներկայացուցիչների պալատը դարձյալ անդրադարձավ «Մարդու կողմից մարդու նկատմամբ...» բանաձևին (N192), և այս անգամ հենց ինքը ներժեց ծայների մեծամասնությամբ: Նույն թվին Սենատ մտցվեց N 102 բանաձևը ճիշտ նմանատիպ առաջադրությամբ և մերժվեց: 1987 թ. Ներկայացուցիչների պալատը մեկ անգամ ևս մերժեց N 247 բանաձևը, իսկ Սենատը մերժեց N 241 բանաձևը: Նման ճակատագրի արժանացավ մի նախագիծ ևս, որը մերժվեց 2001 թ. նախագահ Քիմրոնի ննշման տակ: Դասկանալի է, որ այդ մերժումների թիկունքում գործող գործում էր իր դաշնակից Թուրքիայի հետ հարաբերությունները չփչացնելու ԱԱԾ-ի պետական շահը: Այդ մասին բացահայտ հայտարարեց պետական քարտուղար Շուլզը ՀԲԸՍ-ի նախագահ Ալեք Մանուկյանին գրված պատասխան նամակում 1987 թ.:

Արգենտինայում և Ուրուգվայում, սակայն, հարցը նպաստավոր լուծում ստացավ: Արգենտինայի Ազգային կոնգրեսը, ինչպես նաև Ուրուգվայի պառլամենտը, 1985 թ. ընդունեցին հայերի ցեղասպանությունը դատապարտող որոշումներ: Արգենտինայի արտաքին գործերի նախարարությանը՝ հանձնարարվեց միջազգային ասպարեզում նպաստել հայկական ցեղասպանության դատապարտման և միջազգային ծանաչման գործին: Այդ նպատակով առանձնացվեց հատուկ մի դիվանագետ՝ պրո Ղեսպուին, արտակարգ և լիազոր դեսպանի հանգանքով:

Վերջին տարիներս Պայոց ցեղասպանությունը դատապարտող որոշումները ընդունեցին նաև Ուսւաստանի Պետական դուման, Սերբիայի, Խոտալիայի, Շվեյչայի, Լիբանանի, Կանադայի, Շունաստանի, Բելգիայի Շվեյցարիայի պառլամենտները: Իսկ Ֆրանսիայի Ազգային ժողովը կատարեց աննախաղեաք քայլ. ընդունեց օրենք:

Բոլոր դեպքում էլ հստակ դատապարտվում է ցեղասպանությունը գործադրող Թուրքիան: Շունաստանի պառլամենտում քննարկումներն ամբողջովին շաղկապվեցին արդի ժամանակներում թուրքական քաղաքականության հետ, որով հետապնդվում է հելլենականության բնաջնջումը Եգեյան ծովի ավագանում թե իրու ազգաբնակչություն, թե իրու մշակութային ժառանգություն և եղելություն: Ուսւական հասարակայնությանը անհանգստություն է պատճառում ոչ միայն ահավոր հանցագործության քաղաքական գնահատականի բացակայությունը, այլև արդի ժամանակաշրջանում Թուրքիայի ժավալապաշտական գգտումները Անդրկովկասի և Միջին Ասիայի նկատմամբ: Իսկ Ֆրանսիայում օ-

րենքի առջև պատասխան կտան բոլոր նրանք, ովքեր կիամարձակվեն հերքել ցեղասպանության փաստը:

1998 թվականին Բելգիայի Սենատի և Ֆրանսիայի Ազգային ժողովի Պայոց ցեղասպանությունը դատապարտելու մասին որոշումների ընդունմանը հետևեց բուրքական կառավարության «բուռն բողոք»: Թուրքական «բուռն» հակադարձություն եղավ նաև Շվեյցարիայի դեմ 2003 թվականին:

Եվրախորհրդարանը նույնագիր ունեցավ դրական մոտեցում: Դարձը քննարկման առարկա դարձավ 1983 թվականից ի վեր, և 1987 թվականին ընդունվեց «Պայկական հարցի քաղաքական լուծման մասին» որոշումը, որով ազգերի եվրոպական համագործակցությանը Թուրքիայի անդամակցելու պայման էր դրվել Պայոց ցեղասպանության ճանաչումը նրա կողմից¹:

Պարցին անդրադարձել են նաև հասարակական (ոչ կառավարական) որոշ հեղինակավոր միջազգային մարմիններ:

1984 թ. Փարիզում տեղի ունեցավ ժողովուրդների մշտական դատական ասոյանի հատուկ մի նստաշրջան, որը նվիրված էր Պայոց ցեղասպանությանը: Ասոյանի որոշումը միանշանակ դատապարտում է Պայոց ցեղասպանությունը:

1989 թ. Սան Անտոնիում կայացած Եկեղեցիների համաշխարհային խորհրդի համագումարն ընդունեց հատուկ որոշում, որի մեջ կոչ է արվում ԵՀՆ-ի բոլոր անդամներին «դիմել իրենց կառավարություններին ճնշում գործադրելու համար Թուրքիայի վրա հայերի ցեղասպանության փաստը ճանաչել տալու նպատակով»:

80–90-ական թվականներին տեղի ունեցան մի շարք միջազգային գիտաժողովներ, որոնց օրակարգերում դրված էր Պայոց ցեղասպանությունը ուղղակի, կամ էլ այդ հարցը գրավում էր դրանց աշխատանքների կարևոր բաժինը:

1982 թ. Թել Ավիվում կայացավ «Բնաջնջման և ցեղասպանության միջազգային կոնֆերանս», 1987 թ. Աթենքում «Պայկական հարցը և

¹ Իբրև պատմական տարրողության կարևոր փաստաթուղթ՝ այդ որոշման տեքստը ամբողջությամբ թերում ենք սույն գլխին կից հավելվածում (N 1):

² Փաստաթուղթը բաղկացած է նախարանից, պատմական տեղեկանքից, որի մեջ թերվում են հայկական կողմից փաստերն ու վկայությունները և բուրքական կողմից փաստարկները, հայ ժողովողի իրավունքները հաստատող և ցեղասպանության համար պատասխանատվությունը մեկնարանող գլխից և բուն որոշումից (Վերջինիս տեքստը թերում ենք սույն գլխի 2-րդ հավելվածում):

բուրքական ծավալապաշտությունը», 1988 թ. Օքսֆորդում գիտնականների միջազգային կոնֆերանս «Դիշել հանուն ապագայի» խորագրով, 1989 թ. Կալիֆոռնիայի համալսարանում միջազգային սիմպոզիում «Դայերի ցեղասպանություն, պատմություն, քաղաքականություն, բարոյագիտություն» թեմաներով, 1990 թ. Երևանում «Դայերի ցեղասպանություն, պատմություն, տեսություն, քաղաքական պատասխանատվություն» օրակարգով, 1995 թ. միջազգային գիտաժողով դարձյալ Երևանում և այլն:

Անհրաժեշտ է, անշուշտ, շեշտել, որ բոլոր վերոհիշյալ պարագաներում պետությունների, հասարակական թե գիտական մակարդակներով քննարկումների նախապատրաստական աշխատանքներին առավելագույն մասնակցություն են բերել Սփյուռքի կազմակերպությունները՝ կուսակցություններն ու քաղաքական հոսանքները, միջնիութենական մարմինները. Դայ դատի հանձնախմբերը, հայագիտական հաստատությունները և անհատ գիտնականները. ԴԲԸ-ն, Ամերիկայի հայկական համաժողովը: Խոկ 1987 թ. Արենքում հրավիրված գիտաժողովի հիմնական նախաձեռնողը եղավ «ԱՍՍԼՍ – հեղափոխական շարժում» կազմակերպությունը:

ԱՍՍԼՍ-ի (Դայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ – ԴԱՀԳԲ) գործունեության առարկայական արդյունքը ունեցավ Երկակի բնույթ: Մի կողմից՝ շարժեց համաշխարհային հասարակական կարծիքը, որ կարծես ամբողջովին մոռացել էր Դայ դատը 1923 թվականներից ի վեր: Մյուս կողմից՝ հզոր ազդակ եղավ, որպեսզի սփյուռքահայությունը, մասնավորապես, նրա նոր սերումները, որ ծնվել էին օտար ափերում և, թվում էր, թե գրեթե ուժացել էին, վառ պահեն իրենց պատմական հիշողությունը, վերընծծութեն հայեցի կեցության ծառը Սփյուռքի պայմաններում:

ԴԱՀԳԲ-ի առաջին գործնական քայլերն արվեցին 1975 թ. Խունվարին: Դրանք ահարեկչական գործողություններ էին Եկեղեցիների համաշխարհային խորհրդի և «ԱՆՇԱ» կազմակերպության Բեյրութի գրասենյակների դեմ: Խնդիրն այն է, որ գույգ կազմակերպություններն էլ ջանքեր էին գործադրում Լիբանանից Ամերիկա մեկնող հայությանը նյութական օժանդակություն ցույց տալու ուղղությամբ: Այս «հայասիրական» քաղաքականության մեջ գաղտնի բանակը դիտեց Լիբանանը հայարափ անելու, իսկ ավելի հեռուն նայելով՝ բուն պատմական Դայաստանի մերձակա տարածքներից հայությանը հեռացնելու նպատա-

կը, որը այլ կերպ չէր կարող իրականանալ, եթե ոչ Թուրքիայի թելադրանքով և ԱՄՆ-ի իշխանությունների համաձայնությամբ:

Իրականում գոյություն ունի՝ առողջօք թուրք—ամերիկյան նման մի ծրագիր, պատմությունը հետազայում միայն հստակ պատասխան կտա: Եվ, արդյո՞ք, Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը կամ «ԱՆԴԱ»-ն (Անտուն հայերին նպաստացույց ամերիկյան կոմիտե) առնչություն ունեին այդ ծրագրի հետ, թե պարզ կույր գործիք էին իրենց մարդասիրական կամ հայասիրական մղումների թերումով: Ամեն պարագայում ՀԱՇԳԲ-ի կամիսազգացումն ուներ իրական հող: Ինչպես վերը տեսանք, վերջին վեց—յոր տասնամյակները Եղան Թուրքիան շրջապատող բոլոր երկրներից անընդհատ աճող տեմպերով հայության հեռացման տարիները: Ուրեմն և պատմականորեն արդարացի էր գաղտնի բանակի ահազանգը, որն ընդունեց ահարեկչական գործողության տեսք:

1975 թվականից ի վեր ՀԱՇԳԲ-ն իրագործեց բազմաթիվ ահարեկչական քայլեր, որոնք հիմնականում ուղղված էին Թուրքիայի դիվանագիտական հաստատությունների և անձնակազմի դեմ աշխարհի տարբեր երկրներում և քաղաքներում: Եղան նաև ցավալի գոհեր օտար բնակչության թվից:

Դանաշխարհային մամուլը բազմիցս անդրադարձել է ՀԱՇԳԲ-ի գործունեությանը: Դանրային կարծիքի մոտ փորձում են տպավորություն ստեղծել, թե գաղտնի բանակը հետապնդում է սոսկ Վրեժինդրական նպատակներ: Առարկայական դիտած, Վրեժինդրությունը, սակայն, որևէ եական նշանակություն չունի:

ՀԱՇԳԲ-ն կյանքի կոչվեց, որովհետև սփյուռքահայ երիտասարդության մի ստվար գանգվածը հիասքափակած էր Յայ դատի հետապնդման հարցում հայ քաղաքական հոսանքների գործունեությունից Մեծ Եղեռնից ի վեր անցած տասնամյակների հոլովույթում, երբ դասական դիվանագիտական—քաղաքական մերողները չիհանգեցրին շոշափելի դրական ծեղբերումների: Ոչ թե Վրեժինդրությունն էր նպատակը, այլ զինյալ—քաղաքական պայքարի նոր ռազմավարության անցնելը ազգային—ազատագրական շարժման ներկա փուլում թիրախ ունենալով անմիջականորեն Թուրքիայի տարածքում գործողությունները ծավալելու և տարածելու խնդիրը: Պատահական չէ, որ թեպետ ահարեկչական գործողությունների մեթոդը բնակ է խանդավառություն չի առաջացնում հանրային կարծիքի մոտ, շարժման շարքերը համառորեն համալրվում էին հայ երիտասարդության նորանոր խմբերով, որոնք զինյալ—քա-

դաքանական պայքարի ճանապարհով պատմական Հայաստանի ազատագրության ռազմավարության մեջ տեսնում էին իրենց կյանքի կետնպատակին:

ՀԱՅԳԲ-ի հանգանակը խիստ մատչելի էր: Իբրև թշնամի նա տեսնում էր Թուրքիան, որը բօնագրավել է հայկական հողերը: Հակառակորդների թվին նա դասում էր Թուրքիային բարեկամ կամ դաշնակից բոլոր պետությունները և ուժերը: Իր հերթին գաղտնի բանակը պատրաստ էր դաշնակցելու պաղեստինյան, քրդական, կիպրուական և ուրիշ ազգային-ազատագրական պայքարի ուժերի հետ: Գործակցել կարող էր նաև բուրքական հեղափոխական կուսակցությունների հետ:

ՀԱՅԳԲ-Ծ ԽՄԴՄ-ի նկատմամբ ուներ համակրուական դիրքորոշում, սակայն, նրան դաշնակից չէր համարում: Խորհրդային Հայաստանը համարում էր հայկական պետականություն և անհրաժեշտ էր նկատում հանրապետության տնտեսական-քաղաքական-մշակութային զորացումը: Ի դեպ, արտասահմանյան մամուլի այլազան օրգաններ անհիմն կերպով հաճախ նշել են, թե իբր Խորհրդային Հայաստանը ՀԱՅԳԲ-ի նարտիկների պատրաստման բազան էր և գենքի մատակարարը: Եթե ոչ, ինչո՞ւ ահարեկչական գործողությունները դատապարտող հայտարարություն չի արվել: Իրոք, Խորհրդային Հայաստանից որևէ պաշտոնական հայտարարություն չի արվել ՀԱՅԳԲ-ի գործունեության առթիվ:

«ՀԱՅԳԲ – հեղափոխական շարժում» կազմակերպությունը Արցախի հայության ազգային-ազատագրական պայքարի մեջ տեսավ իր իդեալ-ների մարմնավորման կերպը: Գաղտնի բանակը ողջունեց Հայաստանի Հանրապետության ստեղծումը և անկախության հռչակումը:

Թե նոր փուլում սփյուռքահայության զարթոնքը, որին մեծապես աջակցեց ՀԱՅԳԲ-ի շարժումը, թե հայրենի տարածքները զինյալ մեթոդներով անմիջականորեն ազատագրելու ռազմավարությունը, որը հենց նրա բուն կոչումն է, իրենց պատմական տարրողությամբ նշանավորում են համազգային արժեքներ, որոնց իրական ինաստը սեփական ուժերով հայության բախսի տնօրինման գաղափարն է: Դեպքերի հետագա ընթացքը, մանավանդ արցախահայության ինքնորոշման իրավունքի և ինքնապաշտպանության համար մղվող պայքարը, եկավ մեկից ավելի անգամներ ապացուցելու այդ ճշմարտությունը:

80-ական թթ. կեսերին ՀԱՅԳԲ-ն պառակտվեց:

Երիտասարդության մի մասը չէր կարող հաշտվել դեկավարության կողմից շարունակվող համատարած ահարեկչական գործողություննե-

րի մարտավարության հետ, մանավանդ, երբ սպանություններ գործադրվեցին թե շարժմանը մասնակից այլախող մարտիկների, թե հայքաղաքական կուսակցությունների առանձին դեկավար անձանց նկատմամբ: 1983 թ. հիմնվեց «ՀԱՐԳԲ – հեղափոխական շարժում» կազմակերպությունը, որը, հավատարիմ մնալով առանցքային ու ազգավարությանը, նախընտրում է նախապատրաստական քաղաքական գործողությունների մարտավարությունը:

ՀԱՐԳԲ-ն հրատարակել է «Հայաստան–Արմենիա» պաշտոնաթերթը հայերեն, արաբերեն, անգլերեն, ֆրանսերեն, երեմն գերմաներեն, իտալերեն, ռուսերեն և նույնիսկ ճապոներեն լեզուներով: 1984–ից սկսած Արենքում լույս էր տեսնում «Հայաստանը» հայերեն լեզվով: Բեյրութում հրատարակվում էին «Երկար շերեփ», «Սփյուռք», ԱՄՆ-ում «Նոր սերունդ» պարբերականները:

Դայ Սփյուռքի տարրեր համայնքներում ստեղծվել են բազմաթիվ խմբեր, որոնք որդեգրել են ՀԱՐԳԲ-ի կարգախոսները, կամ ինքնուրույն պայքարել են նույն նպատակների համար՝ գործադրելով նմանատիպ մերոդներ:

4. ՀԱՅԱՏԱԼԻ ԺՈՂՈՎՐԴՎԱՐԱԿԱՆ ԾԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՍՓՅՈՒՌԻ ԱՅԼԱԶԱՆ ՈՒԺԵՐԻ ԸՆԿԱԼՍԱՐ

Արդեն շեշտեցինք, որ սփյուռքահայության գարքոնքի ամենազորեղ խթանիչը անկախ Հայաստանի Հանրապետության ստեղծումն է: Միանշանակ չեր, սակայն, Սփյուռքի այլազան ուժերի վերաբերմունքը Հայաստանում 1988–1991 թվականներին ծավալվող իրադարձությունների նկատմամբ:

1988–ի տարեվերջի երկրաշարժը ցնցեց ամբողջ մարդկությանը՝ մարդասիրության, կարեւկցանքի, հոգեկան ջերմության նոր շերտեր հայտնաբերելով XX դարի այլևս, ասես, որոտիզացված եսապաշտ հոգիների մեջ: Ցնցվեց նաև Սփյուռքը: Երկրաշարժի պատճառած վերքերի բուժմանը գորահավաքվեց ամբողջ հայությունը, նույնիսկ շատ–շատերը, որոնք վաղուց ի վեր որևէ կապ չունեին ազգային թելերի հետ: Բնական աղետը դարձավ հոգեկան միասնությունը ամուր կաղապարող գործոն: Բայց միայն հոգեկան միասնությունը:

Եթե փոքրաթիվ շատ համայնքներում հնարավոր դարձավ դրամա-

հավաքը իրագործել մի ընդհանուր գանձանակի մեջ, ապա ԱՄՆ-ի, Ֆրանսիայի նման հաճայնքներում նույնիսկ երկրաշարժի պատճառած տարերային դժբախտության առթիվ հնարավոր չեղավ հասնել միջոցների կուտակնան և ծախսնան միասնական գործողությունների: Ել չխստելով արդեն, որ, առհասարակ, անհասանելի գործ էր, ամբողջ Սփյուռքի հանգանակած միջոցների մեկտեղումը՝ Դայաստանի խոշոր կարիքները հոգալու նպատակով:

Միջոցների մեկտեղումը հնարավոր չդարձավ ոչ միայն քաղաքական տարանջատվածության, այլև տարբեր հարանվանությունների անզիջող կեցվածքի պատճառով: Երկրաշարժից տուժածներին օգնություն հասցնելուն գուգահեռ, հարանվանական առանձին միավորումներ ջանացին ծեռնարկել Դայաստանում սեփական հավատը տարածելու գործին: 1991 թ. հրապարակված Ամենայն Դայոց կաթողիկոսի կոնդակով Մայր աթոռ Արք. Էջմիածինը անհանգստություն ցուցադրեց կրոնաեկեղեցական մարդորատության երևոյթի նորօրյա դրսորումների առիթով:

Սփյուռքը միահամուռ և խանողավառ պաշտպանեց Արցախյան շարժումը: Երևոյթի նկատմամբ հայացքների տարբերությունները աննշան էին և վերաբերում էին, բացառաբար, պայքարի վարման կերպերին:

Դայաստանում ծայր առած ժողովրդավարական շարժումը ևս սկզբունքուն գտավ բոլոր ուժերի և հոսանքների պաշտպանությունը: Վիճելի կետերը, սակայն, մեկից ավելի էին, հատկապես ժողովրդավարական ճակատի առաջատար ուժի Դայոց համազգային շարժման ծրագրի և նրա գործիչների ելույթների շուրջ:

ՄԴ հնչակյան և Ռամկավար ազատական կուսակցությունները բռնեցին վերապահ դիրք, իսկ ՀՅ դաշնակցությունը անընդունելի գտավ արևելումի (օրիենտացիայի) նոր առանցքագաղափարը և ԽՄԴՄ կազմից անհապաղ դուրս գալու նպատակադրումը: Ընդունելով սեփական ուժերին ապավինելու, թուրքիայի և դրացի պետությունների հետ տնտեսական գործակցության անհրաժեշտության թեզերը՝ դաշնակցության մամուլը, ինչպես նաև սփյուռքահայ մամուլի այլազան օրգաններ, մերժեցին «Երրորդ ուժի բացառման» հիմնադրույթը, որը նրանք ընկալում էին իրեն Ռուսաստանի հետ խզվելու ռազմավարություն:

Դայաստանի Դանրապետության հոչակումից հետո ՌԱ կուսակցությունը 1991 թ. ամռանը հայտարարեց, որ ՀՅ-ի և իր հարցադրումների միջև սկզբունքային տարածայնություններ չինելու թերումով ՌԱԿ-ը պատրաստ է նրա հետ համագործակցության: Գործակցությունը Դա-

յաստանի Յանրապետության իշխանությունների և ՌԱԿ-ի միջև տեղ գտավ թե քաղաքական, թե տնտեսական գետինների վրա և շարունակվեց նաև 2000-ական թվականներին:

ՀՀ դաշնակցության մամուլը Յայաստանի Յանրապետության հոչակումից հետո ել համոզված ու հետևողական պնդում էր, որ նորահաստատ իշխանությունը պարտավոր էր ստորագրել ԽՍՀՄ դաշնակցական պայմանագիրը, իսկ անկախության ակտից հետո ողջունեց Յայաստանի դեկավարության քայլերը նախկին ԽՍՀՄ-ի հանրապետությունների միջև տնտեսական պայմանագիր կնքելու ուղղությամբ: Նա գտնում էր, որ Յայաստանի Յանրապետության գոյության գրավականը Ուլսաստանի հետ ռազմական դաշնագիրն է: ՀՀԴ-ն ևս XX դարավերջից ի վեր սերտորեն գործակցում է Յայաստանի Յանրապետության իշխանությունների հետ:

Արդի Սփյուռքի քաղաքական պատկերն ունի հստակ արտահայտված երկու դիմագիծ:

Ա) Սի խոշոր զանգվածը 90-ական թվականներին անվերապահ ընդունում և պաշտպանում էր Յայաստանի Յանրապետության իշխանությունների ներքին և արտաքին քաղաքականությունը:

Բ) Սի ուրիշ հատվածը շատ հարցերում վերապահ էր, կամ ուներ շեշտ դրսնորվող քննադատական մոտեցում: Եթե այս հողի վրա ել Սփյուռքի քաղաքական պառակտումը շարունակում էր իրողություն լինել, իսկ երբեմն՝ երբեմն էլ ավելի սուր էր արտահայտվում: Յատկապես այն շրջանում, երբ Յայաստանի իշխանությունները երկրից օտարեցին ՀՀ դաշնակցությանը բացարձակապես անհիմն և դատապարտելի մի քայլով:

Սկզբունքային տարրության ամենաեական խնդրում, սակայն, Սփյուռքը դրսնորեց միասնական կամք: Քաղաքական ուժերը, հասարակական խմբակցությունները, գրեթե բոլոր սփյուռքահայերը անվերապահորեն ողջունեցին և պաշտպանեցին Յայաստանի և Ուլսաստանի Յանրապետությունների միջև 1997 թ. օգոստոսին, իսկ հետագայում նաև 2003 թ. կնքված պայմանագիրը, որը հետամտում է փոխգործակցություն, բարեկամություն և փոխօգնություն:

Յայաստանի Յանրապետության անկախության միջազգային ճանաչումով և ամրապնդումով, նրա դիվանագիտական ցանցի տարածումով ստեղծվել են բոլոր քաղաքական հիմքերը, որպեսզի օրեցօր ավելի ու ավելի սերտանան Յայրենիք-Սփյուռք կապերը, որոնց առջև այլևս ոչ

մի խոչընդութ սկզբունքորեն լինել չի կարող: Սփյուռքի ազգային կեցության գործը կստանա ամենօրյա սնունդ ։ Յայուենիքից, կինտեգրացվեն, կմիահյուսվեն, ընդհանրական հոգսի առարկա կդառնան մշակույթը, կրթական ցանցը, մարզական կյանքն ու առողջապահությունը, ազգային կաղորերի պատրաստումը: Որոշ աստիճանի վրա կիրականանա նաև տնտեսական ամբողջացումը: Կը ուժի սփյուռքահայ մարդու քաղաքացիական կարգավիճակի, իրավունքների և պարտականությունների խնդիրը Յայաստանի Հանրապետությունում:

Կարծ կստեղծվեն անհրաժեշտ պայմանները Սփյուռքի ազգային կյանքի որակական մի նոր մակարդակի հանար, որը կապահովի սփյուռքահայության հարատև գոյությունը Յայաստանի Հանրապետության հետ միասին, նրա մեջ ու նրա կողքին:

Զարդումքի փուլին փոխարինելու կամ ինտեգրացիայի փուլը:

Յանապատասխան տրամադրություններ հստակ դրսերկացին XX դարավերջին և XXI դարի սկզբներին գումարված «Յայաստան-Սփյուռք» ժողովների ընթացքում: Փաստորեն, տեղի ունեցավ երկխոսություն հայ ժողովողի երկու կիմնական հատվածների միջև, ընդորում ոչ թե ուղղաձիգ մերոդի կիրառմանը, որին հակված էր Յայաստանի Հանրապետության իշխանությունը 90-ական թվականներին, այլ հորիզոնական մակարույակով:

Խորացելու աղուտակը՝ ուշագույն աշխարհությունում հայության առաջընթացը ու արագացումը կապահպակված է առաջարկությունում:

Ը Խորացելու աղուտակը՝ ուշագույն աշխարհությունում հայության առաջընթացը կապահպակված է առաջարկությունում:

Ը Խորացելու աղուտակը՝ ուշագույն աշխարհությունում հայության առաջընթացը կապահպակված է առաջարկությունում:

Յավելված N 1

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՍՄԵՆՏ: 18 հունիսի, 1987 թ.

ԲԱՆԱԶԵԿ

ՅԱՅԿԱԿԱՆ ԴԱՐՁԻ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Եվրոպական պառամենտը նկատի ունենալով՝

- Սոցիալիստների խմբի անունից պր. Սարիի և մյուսների ներկայացրած առաջարկությունը Յայկական հարցի քաղաքական լուժման մասին (փաստաթուղթ 2 - 737/84թ.)
- Պր. Կոլոկոտրոնիսի ներկայացրած առաջարկությունը Յայկական հարցի և ապրիլի 24-ը հայկական ցեղասպանության հիշատակի օր հայտարարելու մասին (փաստ. 2 - 360/85թ.)
- Եվրոպական պառամենտի քաղաքական հանձնաժողովի գեկուցագիրը (փաստ. 2-33/87թ.)

Յաշվի առնելով՝

Ա) - Պր. Ժակեի և նրա համախոհների ներկայացրած առաջարկությունը հայ ժողովողի կացության մասին (փաստ. 1-782/81թ.)

- Սոցիալիստների խմբի անունից տիկ. Դյուպորի և պրն. Գլինի ներկայացրած առաջարկությունը Յայկական հարցի քաղաքական լուժման մասին (փաստ. 1-735/83թ.)

- Տիկ. Դյուպորի գրավոր հարցումը Յայկական հարցի մասին
- Եվրոպական խորհրդի մշակութային գործերի մինիստրների խորհրդակցության 1986 թ. նոյեմբերի 13-ին ընդունած որոշումը, որը վերաբերում է Եվրոպական ճարտարապետական ժառանգության պահպանությանը՝ ներառյալ ԵՏՀ (Եվրոպական տնտեսական համագործակցության երկրների) տարածքից դուրս գտնվող հուշարձանները.

թ) Դամոգմունք հայտնելով, որ Թուրքիայում բնակվող հայ ժողովոյի պատմության ճանաչումն իսկ Ենթադրում է նրա ճանաչումը որպես ինքնատիպ էթնիկական, մշակութային, լեզվական և կրոնական փոքրամասնություն.

Գ) Նկատի ունենալով, որ հայերը այդ իրադարձությունները (1915 թ. կոտորածները) որպես են որպես կազմակերպված ցեղասպանություն՝ համաձայն ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայի.

Դ) Նկատի ունենալով, որ թուրքական պետությունը մերժում է ցեղասպանության մեղադրանքը որպես անհիմն.

Ե) Դաստատելով, որ թուրքական կառավարությունը, մերժելով մինչև օրս ճանաչել 1915 թ. ցեղասպանությունը, շարունակում է այդպիսով գրկել հայ ժողովրդին իր սեփական պատմության իրավունքից.

Զ) Նկատի ունենալով, որ պատմականորեն ապացուցված հայկական ցեղասպանությունը մինչև այժմ ոչ ենթարկվել է քաղաքական դատապարտման և ոչ էլ ստացել է համապատասխան հատուցում.

Է) Նկատի ունենալով, որ Թուրքիայի կողմից հայկական ցեղասպանության ճանաչումը այսուհետև կդիտվի որպես հայերի նկատմամբ բարոյական իրավունքի վերականգնման խորապես մարդկային ակտ, որը միայն պատիվ կարող է բերել թուրքական կառավարությանը.

Ը) Խորապես ափսոսանք հայտնելով և դատապարտելով 1973–1986 թթ. ընթացքում հայկական խմբավորումների անհմաստ ահաբեկչությունը, ինչպես նաև բազմաթիվ մահավորձեր, որոնց հետևանքով գոհվեցին կամ վիրավորվեցին բազմաթիվ անմեղ մարդիկ, ինչը դատապարտվեց հայ ժողովրդի ծնշող մեծամասնության կողմից.

Թ) Նկատի ունենալով, որ բոլոր իրարահաջորդ թուրքական կառավարությունների անհաջող դիրքորոշումը Դայկական հարցի նկատմամբ ոչ մի կերպ չի նպաստել լարվածության թուլացմանը.

1. Այն կարծիքն է հայտնում, որ Դայկական հարցը, ինչպես նաև Թուրքիայում ազգային փոքրամասնությունների հարցը պետք է ընթարկվեն Թուրքիայի և Եվրոպական տնտեսական համագործակցության միջև գոյություն ունեցող հարաբերությունների շրջանակներում, ընդգծում է, որ դեմոկրատիան կարող է արմատապես հաս-

տատվել Երկրում (Թուրքիայում) այն պայմանով միայն, եթե այդ Երկիրը ճանաչի և հարստացնի իր պատմությունը իր էքնիկական և մշակութային այլազանությամբ:

2. Գտնում է, որ ողբերգական իրադարձությունները, որ տեղի ունեցան 1915–1917 թթ. Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ, հանդիսանում են ցեղասպանություն, համաձայն ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատճելու մասին» կոնվենցիայի:

Նշում է միաժամանակ, որ ժամանակակից Թուրքիան պատասխանատու չի կարող համարվել Օսմանյան կայսրության հայ բնակչության ողբերգության համար, և ամենայն հաստատակամությամբ ընդգծում է, որ պատմական այդ իրադարձությունների ժամանակումը որպես ցեղասպանություն առիթ չի կարող հանդիսանալ քաղաքական, իրավական կամ նյութական պահանջի այսօրվա Թուրքիայի նկատմամբ:

3. Պահանջում է (Եվրոպական) խորհրդից ճնշում գործադրել ներկայիս թուրքական կառավարության վրա, որպեսզի վերջինս ճանաչի 1915–1917 թթ. հայերի հանդեպ կազմակերպված ցեղասպանությունը և այդպիսով նպաստի քաղաքական երկխոսության հաստատմանը Թուրքիայի և հայերի լիազոր պատվիրակների միջև:

4. Ենում է նրանից, որ հայ ժողովրդի դեմ անցյալում երիտրուրքական կառավարության գործադրած ցեղասպանության ներկայիս ճանաչումից հրաժարումը թուրքական կառավարության կողմից, Չունաստանի հետ գոյություն ունեցող վիճելի հարցերում միջազգային իրավական նորմերի կիրառումից հրաժարումը, Կիպրոսում թուրքական օկուպացիոն գործերի պահպանումը, ինչպես նաև քրդական իրադարձությունների ժխտումը, այդ երկրում (Թուրքիայում) իսկական պառամենտական դեմոկրատիայի բացակայությունը անհատական, հասարակական ու հատկապես կրոնական ազատությունների ուժակարումը՝ այս ամենը հանդիսանում են անհաղթահարելի արգելքներ Եվրոպական տնտեսական համագործակցության կազմի մեջ Թուրքիայի հնարավոր ընդունման հարցի քննարկման համար:

5. Նկատի ունեցած (հայ ժողովրդի) ողբերգությունը միանում է

ազգային ինքնատիպությունը զարգացնելու նրա ցանկությանը՝ երաշխավորելու իր իրավունքները որպես փոքրամասնություն և անարգել օգտվելու մարդու և քաղաքացիների իրավունքներից, ինչպես որ դրանք սահմանված են Սարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի դրույթներում ու նրա համապատասխան արձանագրություններում:

6. Վճռականորեն պահանջում է, որ Թուրքիայում ապրող հայ փոքրամասնության ազգային ինքնության, նրա լեզվի, կրոնի, մշակույթի և կրորության համակարգի նկատմամբ ցուցաբերվի արդար վերաբերմունք, նաև հաստատակամորեն հանդես է գալիս (պատմական) հուշարձանների պահպանության գործի բարելավման, այդ բվում նաև թուրքահայերի կրոնական-ճարտարապետական ժառանգության պահպանման ու կոնսերվացման օգտին և ցանկություն է հայտնում, որպեսզի Եվրոպական տնտեսական համագործակցությունն ուսումնասիրի այդ նպատակին օժանդակող հնարավոր միջոցներ ծեռնարկելու հարցը:

7. Այս կապակցությամբ կոչ է անում Թուրքիային անշեղորեն պահպանել իր երկրում ոչ մահմեղական փոքրամասնությունների իրավունքը, ինչպես որ այդ պարտադրում են նրան 1923 թ. Լոգանի պայմանագրի 37–45-րդ հոդվածները՝ ստորագրված Եվրոպական տնտեսական համագործակցության անդամ պետությունների մեջամասնության կողմից:

8. Դամարում է, որ հուշարձանների պահպանությունը, ինչպես նաև թուրքահայերի կրոնական ճարտարապետական ժառանգության պահպանումն ու կոնսերվացումը պետք է դիտել որպես ժամանակակից Թուրքիայի տարածքում դարերի ընթացքում զարգացում ապրած բոլոր քաղաքակրթությունների՝ մասնավորապես Օսմանյան կայսրության մաս կազմած քրիստոնյա փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված լայն քաղաքականության քաղկացուցիչ մաս:

9. Կոչ է անում, այսպիսով, Եվրոպական համագործակցությանը՝ տարածել Թուրքիայի հետ համագործակցության համաձայնությունը նաև մշակութային ասպարեզի՝ այդ երկրում քրիստոնեական կամ այլ, ինչպես, օրինակ՝ դասական անտիկ շրջանի, խերական, օսմանյան և այլ քաղաքակրթությունների ժառանգությունը պահպանելու նպատակով:

10. Իր մտահոգությունն է հայտնում այն դժվարությունների առիվ, որոնց առնչվում է իրանի հայ համայնքը մայրենի լեզվի գործածության ու կրոնական կանոններին համապատասխան կրության գործը կազմակերպելու հարցերում:

11. Դանդես է գալիս ընդուեմ Սովետական Միուրյունում հայ ազգաբնակչության անհատական ազատությունների խախտումների:

12. Վճռականորեն դատապարտում է առանձին կազմակերպությունների կողմից ի գործ որովով բոլոր բնի գործողություններն ու ահարեւշական ծերոք, որոնք հատկանշական չեն հայ ժողովրդի համար, և հաշտության կոչ է անում հայերին ու թուրքերին:

13. Կոչ է անում Եվրոպական տնտեսական համագործակցության անդամ Երկրներին՝ հոչակելու «20-րդ դարում գործադրված ցեղասպանությունների և մարդկության դեմ ոճրագործությունների հիշատակի օր», մասնավորապես, այն ոճրագործությունների, որոնց գոհ գնացին հայերն ու հրեաները:

Կավերացնում է իր պարտավորությունը՝ իրավես նպաստելու հայ և թուրք ժողովուրդների միջև բանակցությունների իրականացման նպատակը հետապնդող նախաձեռնություններին:

14. Դանձնարարում է իր նախագահին՝ սույն բանաձեռ փոխանցելու (Եվրոպական պատամենտի քաղաքական) հանձնաժողովին, Եվրոպական խորհրդին, Եվրոպական տնտեսական համագործակցության անդամ Երկրների արտաքին գործերի մինիստրների խորհրդակցությանը, «ԵՏԴ-Թուրքիա» ընկերակցության խորհրդին, ինչպես նաև թուրքական, իրանական և սովետական կառավարություններին և ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին:

5. Եվագր տեսակ (իսյ ժողովրդի կամացական պահմանման)

Յավելված N 2

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՌԱՅՈՒՍ

ՄՇՏԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՏՅԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Փարիզ, 16 ապրիլի, 1984

... Ատյանը գտնում է, որ,

1. Նայ ազգաբնակչությունը կազմել է և կազմում է մի ժողովուրդ, որի հիմնարար իրավունքները՝ թե՝ անհատական, թե՝ հավաքական, պետք է հարգվեին և պետք է հարգվեն միջազգային իրավունքին համապատասխան:

2. Նայ ազգաբնակչության խմբերի բնաջնջումը բռնավտարման և զանգվածային ջարդերի ճանապարհով հանդիսանում է ցեղասպանության հանցագործություն՝ ոչ ենթակա ցեղասպանությունը կանխելու և պատժելու մասին 1948 թ. Եկտեմբերի 9-ի կոնվենցիայի կարգադրի սահմանումների շրջանակների: Սույն հանցագործությունը դատապարտելու առումով վերը հիշատակված կոնվենցիան նկատի ունի այդ պահին գործող օրենքը և հաշվի է առնում նախկինում ուժի մեջ եղող կանոնները, որոնք գոյություն ունեն ամբաստանվոր հանցագործ ակտերի կատարման ժամանակ:

3. Երիտրութերի կառավարությունը մեղավոր է այս ցեղասպանության համար՝ նկատի ունենալով 1915–1917 թթ. ընթացքում կատարվածը:

4. Նայերի ցեղասպանությունը նաև «միջազգային հանցագործություն» է, որի համար պետք է պատասխանատվություն կրի թուրքական պետությունը՝ առանց պատրվակելու այն հանգամանքը, թե նախկին ու ներկա պետությունների միջև հաջորդականություն չկա՝ պատասխանատվությունից խուսափելու համար:

5. Այդ պատասխանատվությունը առաջին հերթին պահանջում է պաշտոնապես ճանաչել ցեղասպանության իրողությունը և հայ ժողովուրդի կրած համապատասխան կորուստները:

6. Միավորված ազգերի կազմակերպությունը և նրա յուրաքանչյուր անդամն իրավունք ունի պահանջելու այս ճանաչումը և դրանում աջակցելու հայ ժողովորդին:

ՍՓՅՈՒՌԱՎԱՅՐԱՎԱՐՈՎԱԿԱՆԵՐԸ

Հայության համար մասնակի գործությունը առաջ դրվագայի առաջնային պատճեններից է հայության պահպանությունը և առաջնային հայության առաջնային պահպանությունը:

Դայեր ապրում են աշխարհի շատ երկրներում: Բայց բոլորում չեն, որ գոյություն ունի կազմակերպված ազգային կյանք: Կան երկրներ էլ, որոնցում դեռ մինչև վերջերս գոյություն ուներ կազմակերպված ազգային կյանք, բայց մեր օրերում այլևս այդ մասին խոսել հնարավոր չէ: Չի նաստանում, օրինակ, նույնիսկ 1930-ական թվականներին դեռևս գործում էր Դայ առաքելական եկեղեցու թեմ: Մինչապարունակ երկայում ապրում է մի քանի տասնյակ հայ ընտանիք, գոյություն ունի եկեղեցու շենք, կա նույնիսկ հայկական գերեզմանոց, բայց ազգային կազմակերպված կյանքը բացակայում է: Նույնը կարելի է ասել Եմենի, Շիլիի, Աֆրիկայի որոշ երկրներում ապրող հայության վերաբերյալ: Դունզարիայում գործում է հայ կարողիկ եկեղեցի, իսկ Լեհաստանում փորձեր են արվում վերընծյուղելու հայկական կյանքը՝ վերջին տարիներս այնտեղ ապաստանող մեծ թվով հայերի ջանքերի շնորհիվ:

Ստորև խոսք կգնա միայն այն գաղթօջախների մասին, որոնցում թիւ թե շատ աշխատյած տրոփում է հայկական ազգային կյանքի գարկերակը: Բոլոր այդ գաղթօջախների համար բնութագրականը հայության ազգային-էթնիկական նկարագրի պահպանման համար պայքարն է:

ՈՂԻՄԱՍՏԱՆ ԵՎ ՆԱԽԿԻՆ ԽՈՐՄ ԴԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սփյուռքի պատմության սույն թեմայի առթիվ ուսումնասիրողի առջև հառնում է գրեթե անհաղթահարելի մի քարտույք: Այս տարածքների բոլոր հայերը մինչև 90-ական թվականները ապրել են նույն պետության սահմաններում, և այսօր խիստ տարօրինակ է հնչում, օրինակ, մարշալ Բաղրամյանին, մեծն Արամ Խաչատրյանին, Օրբելի Եղբայրներին, Անաստաս Միկոյանին և բազմաթիվ ու բազմաթիվ անվանի մարդկանց, ո-

րոնք եղել են խորհրդային պետական ու զորական անձնակազմի, գիտության ու տնտեսության, կրթական գործի և արվեստների, մի խորը կենսագործունեության բոլոր մարզերի ու ճյուղերի գործիչներ, կոչել սփյուռքահայեր: Դա պարզապես ճիշտ չէր լինի, որովհետև նրանք բոլորը, հայաստանցիների հետ մեկտեղ նույն երկրի քաղաքացիներ էին: Կամ էլ գրեթե անհավանական պիտի հնչի Սփյուռք անվանել Զավախսի հայությանը, որն ավելի քան երկու հազար տարի ապրում է իր հարազատ հոր ու ջրի վրա: Այնտեղ իրոք կա կազմակերպված հայկական կյանք, գործում են դպրոցներ, գեղարվեստական ինքնագործունեություն, եկեղեցի, մամուլ: Բայց ինչպես դա կոչես Սփյուռք, թեպես տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս:

Ուստի Ուստաստանի Դաշնության Հանրապետության և նախկին ԽՍՀՄ հանրապետություններում բնակվող սփյուռքահայերի մասին պատումը պետք է միշտ ընդունել որոշ վերապահությամբ:

Ուստաստանում, Ուկրաինայում և Միջին Ասիայի հանրապետություններում հայերը բնակություն են հաստատել դեռևս միջին դարերից: Այդ տարածքները փոխադրվելու և արմատակալելու հիմնական շարժառիթը եղել է տնտեսական գործունեությունը: Շատ վայրերում հիմնադրվել են գյուղեր, քաղաքներ, նույնիսկ առանձին շրջաններ: Խորհրդային իշխանության տարիներին թեպես շարունակվեց տնտեսական դրդապատճաններով ելքը դեպի հիշատակված վայրերը, օրինակ, Աղրբեջանական ԽՍՀ տարածքից դեպի Միջին Ասիա, այնուամենայնիվ, աստիճանաբար առաջնակարգ նշանակություն ստացավ մտավորական գործունեությունը: Հայության բվաքանակը այդ երկրներում աճի միտում ունի, բայց հիմնականում մեխանիկական ճանապարհով:

Գրեթե միշտ գործել են և մեր օրերում էլ գործում են հայկական դպրոցներ Կրասնոդարի երկրամասում, Ռոստովի մարզում, Թրիլիսիում, Սև ծովի արխազական ափին: Ուստաստանում, Վրաստանում գոյություն ունեն Հայ առաքելական եկեղեցու թեմեր, կան բազմաթիվ եկեղեցիներ: Հայերեն և ուստերեն լեզուներով հայկական մամուլ է հրատարակվել և ներկայումս էլ հրատարակվում է Մոսկվայում և Թրիլիսիում: Ազգային նկարագրի պահպաննան գործում խիստ կարևոր դեր է կատարում Թրիլիսիի հայկական թատրոնը:

Լազարյան ճեմարանի շենքը Մոսկվայում վերադարձվել է հայությանը: Այնտեղ գործում է լեզվի ուսուցման դպրոց, կազմակերպվում են ցուցահանդեսներ գրեթե մշտապես:

Կերպին տարիներս խոշոր նվաճում եղավ Ռուսաստանի հայերի միության ստեղծումը, որն արդեն իսկ ժավալել է քազմաճյուղ գործունեություն, սերտացրել է կապերը Հայաստանի հետ, ինչպես նաև նոր կապեր է հաստատել ուրիշ սփյուռքահայ գաղթօջախների հետ: Ռուսաստանի հայերի միությունն ունի 200-ից ավելի մասնաճյուղեր Երկրի տարբեր քաղաքներում: Հայերի միություններ են ստեղծվել նաև Ռւկրաինայում, Մոլդովայում, Սիրիայի և Սերբալբյան հանրապետություններում: Ռուսաստանի հայերի միությունը նախաձեռնել է Համաշխարհային հայկական կազմակերպություն հիմնադրելու գործը: Այդ նպատակով առաջին համաժողով գումարվեց 2003 թ. աշնանը Մոսկվայում:

ՄԻՐԻԱ

Արդի համայնքի կազմավորումը անցել է քարդ ու դրամատիկ մի պրոցես: Սիրիայի տարածքը առաջին հանգրվանն էր, ուր հասնում էին հայ բնագաղբած զանգվածները: Բազմաթիվ էին ժամանակավոր վրանաքաղաքները: Անընդհատ հավաքվում էին որբերը: Այնուհետև մի մասը զանգվածաբար վերադարձավ Կիլիկիա, երբ Թուրքիան պարտվեց Արարա լեռան մոտ, Սիրիա-պաղեստինյան ռազմաճակատում 1918-ի աշնանը: Ի դեպ, Կիլիկիա հայության վերադարձին նպաստեց հայկական Արևելյան լեգեոնի հաղթական մասնակցությունը Արարայի ճակատամարտին: Հայությունը հավատաց դաշնակիցների «խոստմանը» Կիլիկիայում հայկական պետություն ստեղծելու վերաբերյալ, իսկ Արևելյան լեգեոնի թե՝ կազմավորումը, թե հերոսական վարքը հենց այդ «խոստմանը» հավատաց արդյունք էր: Հետո՝ դարձյալ զանգվածային արտագաղթ, ու նորից Սիրիան եղավ առաջին ընդունող կայաններից մեկը: Արդեն քանական թվականների հենց սկզբներից և այնուհետև գուգահեռաբար ընթանում էր Սիրիայի տարածքից դեպի աշխարհի ուրիշ երկրներ հայության արտագաղթի պրոցեսը:

Ըստ Գ. Թոփուզյանի համադրած աշյուսակի՝ 1923–24 թվականներին Սիրիայի հայ բնակչությունը հասնում էր 96 հազարի, որից 16 հազարը հին բնակիչներ էին, իսկ 80 հազարը Մեծ Եղեռնից մազապուրծ զանգվածն էր: Ի դեպ, նույն առյուղի վրա հենվելով, կարելի է ցուցադրել հայության ժողովրդագրական մակընթացություններն ու տեղատ-

վուրյունները, օրինակ, Դաշտախին վերաբերող տվյալներով: 1918 թվականին քաղաքում կար 60 հազար հայ, 1919–20 թվականներին 35 հազար, 1921–22–ին՝ 75 հազար, 1923–24 թվականներին՝ 48 հազար:

Ժողովրդագրական այս տեղաշարժերը վկայում են նաև մի ուրիշ երևույթի առկայությունը՝ հայ զանգվածը, որ արդեն իսկ հասել էր թշվառության եզրին, նույնիսկ այդ պայմանների մեջ օգտագործվում էր դաշնակիցների, մասնավորապես, Ֆրանսիայի դիվանագիտության ծեռքում իրեն մանր դրամ Թուրքիայի հետ նրանց հարաբերությունների մեջ: Զուգահեռաբար, Սիրիայի մանդատը ստացած Ֆրանսիան ջանում էր օգտագործել նույն զանգվածը՝ որպես սիրիական ժողովրդի ազգային–ազատագրական շարժման դեմ ուղղված գործոնի: Միայն հայության ողջամիտ կեցվածքը հնարավորություն տվեց վիմեցնել նման ծրագրերը:

Զբաղմունքի տեսակետից հայության մեծամասնությունը արիեստավորություն էր: Գրեթե մենաշնորհիային դիրք ունեին ալաջա գործվածքի, ասեղնագործության, գորգագործության, մետաքսագործական, ծուլագործական, պղնձագործական, մեթենամերի վերանորոգման, կոշկակարության, կաշեգործական արիեստանոցները:

Գյուղատնտեսության մեջ զբաղվողների տեսակարար կշիռը ընդհանուր քանորդում խիստ նվազ էր: Կիլիկիայի հարավարևելյան որոշ լանջերին հայ գյուղացին վարում էր (այսօր իսկ շարունակում է) տնտեսություն մի քանի գյուղերում: Բայց դա Սփյուտը մաս կարելի է համարել պայմանականորեն, դա բուն պատճական Դայաստանի հարազատ ու հայրենի հողն է: Փոքրարիկ գյուղացիություն կար նաև մի քանի ուրիշ շրջաններում:

Դամայնքի գյոյավորման սկզբնական շրջանում ուժեղ չեր նաև առևտորվ զբաղվողների կազմը, քանի դեռ չեր կուտակված թիւ թե շատ բավարար դրամագլուխ: Բայց շուտով պատկերը սկսում է փոխվել և առևտորվ զբաղվողներն ավելի ու ավելի լուրջ տեսակարար կշիռ են ստանում համայնքում: 30–ական թվականներին արդեն ծեռք է բերվում Ծյութական ինքնարավություն, համայնքը ստեղծում է տնտեսական անհրաժեշտ խարիսխներ, որոնց վեա էլ հենվում է ազգային կեցության ինքնահաստատման շարժմներացը:

Արդի սիրիահայ համայնքի գյոյավորման հենց սկզբներից հայ ազգային բոլոր կուտակցությունները ծավալել են իրենց գործունեությունը: 20–ական թվականների կեսերից ի վեր լուրջ ուժ են ներկայացրել նաև

Սիրիա-լիբանանյան կոմունիստական կուսակցության հայազգի անդամները, որոնք հանդես էին գալիս կոմկուսի «հայկական սեկցիայի» անվան տակ: Թաղաքական առումով համայնքը միշտ եղել է Երևանի կուսակցության մեջ առաջատար ուժություն ունեցող կուսակցություն:

1936 թվականին ստեղծվեց «Սիրիահայ ժողովրդական ճակատը», որն ունեցավ մի քանի տարվա կյանք, իսկ 1945 թվականին «Սիրիայի և Լիբանանի հայ ազգային խորհուրդը», որը նույնպես Երևան չտևեց: Երկու դեպքում էլ այդ միավորումների մեջ համախմբվեցին, ՅՅ դաշնակցությունից գատ, մնացած բոլոր քաղաքական հոսանքները, չեզոք շատ կազմակերպություններ:

Թե «ճակատն» ու «խորհուրդը» մի կողմից, թե ՅՅ դաշնակցությունը մյուսից, որոնում էին արարական շրջապատի կոմկրետ պայմանների մեջ հայ տարրի ինտեգրացիայի ուղիները, նրա ազգային կեցության ապահովմանը սատարող միջոցները: Առաջինները ծգտում էին իրենց գործունեությանը տալ ավելի հակամապերիալիստական երանգավորում ելնելով խորհրդային Դայաստանի հետ կապի տրամարանությունից, և գործակցելով Երևանի ազգային-ազատագրական շարժման ձախակողմյան ուժերի հետ: Երկրորդը հետապնդում էր քաղաքական ճկունության մարտավարությունը ծգտելով խուսանավել թե մանդատատեր Ֆրանսիայի, թե Սիրիայի անկախության ուժերի միջև:

Պատկերը նույն էր և Լիբանանի պարագայում: Սիրիան և Լիբանանը, թեպետ գոյություն ունեին իրեն առանձին պետություններ, բայց հասարակական զարգացման շատ կետերում համանման, ավելին միաձույլ շարժընթաց էին ապրում, քանի որ գտնվում էին Ֆրանսիայի (որպես այդ երկրների մանդատատիրոջ) հովանու ներքո: Ուստի և գոյաց երկրների հայկական համայնքների քաղաքական պատմությունը մինչև 50-ական թվականները ընթանում էր միահյուսված կամ, առնվազն, գուգահեռարար:

Դամայնքի գոյության ամբողջ ընթացքում քաղաքական պայքարը Երևու խմբավորումների միջև երթեք չի դադարել, երթեմն, սակայն, ուժգնացել է, հասնելով մինչև իսկ արյունոտ քայլումների. իսկ ավելի հաճախ կրել է քարոզչական առճակատման բնույթը: Երկու ուժերն էլ գութե միշտ հանդես են եկել համայնքի ներսում ազգային ներդաշնակություն և միասնություն ստեղծելու կարգախոսով, բայց նպատակը թիրախել են հակառակորդին բացառելու ճանապարհով:

«Դայ ազգային խորհուրդը» ուներ նաև մի հիմնական, իր ծրագրի

մեջ թիվ 1 կետը. Ամերիկայի հայ ազգային խորհրդի օրինակով դիմումներ անել ՍՍԿ-ին և մեծ տերություններին հայոց հողային պահանջատիրության ոգով: ՀՀ դաշնակցությունը, ինչպես գիտենք, այդ գործողությունները դիտելով իրեն ԽՍՀՄ քաղաքական շահերին նպաստող, շնասնակցեց ծեռնարկված քայլերին:

Քաղաքական սուր պայքարի դաշտ եղավ համայնքային մարմիններում տիրապետության խնդիրը: Սիրիայում Դայաստանյայց առաքելական եկեղեցին ունի երկու թեմ Բերիի (Կենտրոնը Դալեպ) և Դամասկոսի: Ինչպես տեսանք վերը, 20-ական թվականների վերջերին, երբ արդեն որոշ եղավ Մեծի Տաճար Կիլիկիո աթոռի փոխադրումը Սսից և հաստատումը Անթիլիասում, կաթողիկոսության և Երուսաղեմի պատրիարքության միջև գոյացած Ամենայն Դայոց կաթողիկոսության կողմից հաստատված համաձայնագրով Երուսաղեմի պատրիարքությանը պատկանող Դամասկոսի թեմն անցավ Մեծի Տաճար Կիլիկիո կաթողիկոսության իրավասության տակ:

ՀՀ դաշնակցությանը հաջողվեց քաղաքական մենատիրություն հաստատել Բերիի թեմում: Դամասկոսի թեմը, որտեղ ավելի զորեղ էր ՍՊ հնչակյան կուսակցության, հայ համայնավարների և նրանց հարող ուժերի թևը, 1973 թվականից ի վեր իրեն դրել է Ամենայն Դայոց կաթողիկոսության իրավասության ներքո:

1963 թվականին Սիրիայում իշխանության գլուխ անցավ ԲԱԱՍ կուսակցությունը, որը մի շաբաթ ներքին հեղաշրջումներից հետո վերջնականապես հաստատեց Երկրի ներկայիս վարչակարգը: Նոր ընդունված ներքին օրենքների համաձայն հայ ազգաբնակչությանը (ինչպես և մյուս փոքրամասնություններին) արգելված է ունենալ քաղաքական կուսակցություններ և համապատասխան մամուլ:

Ներկայում հայ կուսակցությունների գործունեությունը դրսնորվում է այլազան ազգային-մշակութային միավորումների խողովակով:

ՍՊ հնչակյան կուսակցությունը սիրիահայության մեջ ունի շոշափելի գանգված և քազմաքիլ միավորումներ: Սփյուռքի տարածքով մեկ թերևս ուրիշ ոչ մի տեղ ՍՊԴ-Ը նման գործություն չունի: Նոր մականի տակ գործում են ՀԱՍ (Դայ մարմամարզական միություն) և «Նոր սերունդ» մշակութային միությունը: Դալեպի «Կիլիկյան շրջանակը» խոշորներից մեկն է, որ ունի 500-600 անդամ: Բոլոր այս միավորումները նպաստում են ազգային կեցության տարբեր հարցերի լուծման թե ֆիզիկական և հոգևոր մշակութիւն տարածման, թե կրթական գործի կազ-

մակերպնան ուղղությամբ: Նշանավոր էին ՀՍՍ-ի փողային նվազախումբը, մշակութային միության պարի համույթը: Կերցինս հաջողությամբ շրջագայություն ունեցավ Դայաստանում 1987 թվականին:

ՀՅ դաշնակցության մականի տակ են ՀԲԸՍ (Դայ մարմնակրթական ընդհանուր միություն) և «Դամազգային» մշակութային-կրթական միությունները, որոնք նույնպես տանում էին համայնքի ազգային կեցությունը ապահովող խարիսխների դեր: Միրիայի պառլամենտում միակ պատգամավորական տեղը 1986 թվականի ընտրությունների ժամանակ նվաճեց ՀՅԴ թեկնածուն:

Ումկավար ազատական կուսակցության գործունեության խողովակը «Թեքեյան» մշակութային կազմակերպությունն է, որը սերտորեն գործակցում է ՀԲԸՍ-ի ու նրա երիտասարդական միավորման հետ:

Դայ բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՍ), ըստ երկրի օրենքների, անկախ կազմակերպություն է (իրավունք չունի երկրից որուս ճանաչելու դեկավար կենտրոն), մասնաճյուղեր ունի Դալեպում, Դամակոսում, Ղամիշլիում և Լարաքիայում: ՀԲԸՍ-ի հովանու ներքո գործում է Դալեպի «Սարյան գեղարվեստասիրաց ակադեմիան», որը հիմնադրել է բժիշկ Ռ. ճեպեճյանը:

ԴԵ-Ծ (Դայ երիտասարդաց ընկերակցություն) ՀԲԸՍ-ի երիտասարդական միավորումն է, որի գործունեության դաշտը երիտասարդության շրջանում մշակութային և մարզական աշխատանքն է:

«Ազգային մշակութային միությունը», որի մեջ աշխույժ դեր էին տանում հայ համայնակարները, Դալեպի խոշոր կազմակերպություններից մեկն էր:

Բացառիկ նշանակություն ուներ Դալեպի «Դայ ծերանոցը» իրև իր տեսակի մեջ եզակի երևույթ Միջին Արևելքում: Կառուցվել և պահպանվում է համայնքի համատեղ միջոցներով:

Միրիահայության մեջ գոյություն ունեին նաև ուրիշ միավորումներ, որոնք գործում էին անկուսակցական գետնի վրա: Դրանցից էին Դալեպի, Ղամասկոսի, Ղամիշլիի «Դայաստանի բուհերի շրջանավարտների միությունը», «Ուրֆայի վերածնունդ» հայրենակցական միությունը, «Կրթասիրաց» մշակութային միությունը, «Գերմանիկ-Կասպուրական» մարզամշակութային միությունը և այլն:

1980-ական թվականներին Դալեպում փորձ էր արվել ազգային մշակութային գործունեության որոշ համադրման, ստեղծվել էր «Միջմիութենական մարմին», որի մեջ էին «Ազգային մշակութային միությունը»,

«Նոր սերունդը», «Կիլիկյան շրջանակը», «Թեքեյան–Մահարի» մշակութային միությունը, «Ուրֆայի վերածնունդը», «Գերմանիկ–Կասպուրականը», «Կրթասիրացը», «Դուչըրը», «Դայաստանի բուհերի շրջանավարտների միությունը»:

Սիրիակահայությունը, Դալեպից ու Դամասկոսից զատ, առանձին կղզակներով բնակվում է նաև Լարաքիայում, Ղամիշլիում, Թեսապում, Դոմսում և այլ վայրերում: Ղամիշլիում մեծ թիվ են կազմում քրդախոս հայերը: Բոլոր այս տեղերում գործում էին եկեղեցիներ, դպրոցներ, վերոհիշյալ միավորումների մասնաճյուղեր, տեղական բնույթի ուրիշ կազմակերպություններ: Ռաքիայում, օրինակ, 1982 թվականին եկեղեցուն կից ստեղծվել է «Սեսրոպ Մաշտոց» միությունը:

70–90–ական թվականներին առավել սերտացան կապերը Դայաստանի հետ, մասնավորապես, Դալեպ–Երևան օդային ուղիղ գծի գործարկումից հետո:

Լիբանանի անվերջանալի քաղաքացիական պատերազմի հետևանքով տեղի հանայնքի կրած խոշոր կորուստները նկատի ունենալով սիրիակայ հանայնք 80–ական թվականներին ստացավ մեծ կարևորություն՝ իբրև սփյուռքի ազգային կաղերի պատրաստման դարբնոցի: Դենց այդ ժամանակահատվածում Դայաստանի բուհերն ամեն տարի ընդունվում էին 100–120 սիրիակայ երիտասարդներ: Ընդ որում, հատուկ ուշադրություն էր դարձվում Ղամիշլիի շրջանից երիտասարդություն ներգրավելու հարցին:

Կապերի ընդլայնումը նպաստեց նաև սիրիակահայության կարողիկ և բողոքական հանայնքների գործունեության աշխատմանը: Կարողիկ եկեղեցին ունի իր թեմը:

Սիրիայում բռնագաղթված հայերի այդ առաջին հանգրվանում, կուտակվել են ազգային պատմական ու մշակութային քավականին հարստություններ, ծեռագրեր, հնատիպ գրքեր, հիշատակարաններ, մասունքներ և այլն: Սիրիակահայությունը ազգային հարստությունները կուտակելու և Դայրենից փոխադրելու լավագույն ավանդություն ունի: Դայրենասիրական այդ առաքելությունը տարիներ շարունակ իրականացրել են Վարուժան Սալաբյանը, Գրիգոր Մազլումյանը, Անդրանիկ ծ. Վլոդիկ Այվազյանը, Գրիգոր Բարսեղյանը, Ռոպեր նեպենյանը, Զավեն Առաքելյանը և շատ ուրիշներ:

Բոլոր հարանվանությունների, քաղաքական, մշակութային, հայունակցական, բարեսիրական, մարզական և ուրիշ կազմակերպություննե-

ոի գործունեությունը, այլսայլ ծրագրերի կողքին, հետամտում է մի հիմնական նպատակ, ստեղծել անհրաժեշտ պայմաններ ազգային կեցության ողնասյան՝ կրթական ցանցի գործունեությունը ապահովելու համար:

Դամայնքում գործում է 40-ից ավելի վարժարան երկրորդական կարգի, տարրական թև մեկօրյա: Թեպետ, համաձայն գոյություն ունեցող օրենքների, դպրոցները գտնվում են պետության հակակշռի տակ, ցանցում նշանակված են տեղացի տնօրեններ, բայց արտոնված է հայոց լեզվին, պատությանն ու մշակույթին առնչվող առարկաների դասավանդությունը:

Դամայնքում ազգային կյանքի աշխուժացման վկայություններն են նաև վերջին տարիներս ստեղծված նոր օջախները: 1991 թվականին Դեր-Չորում կառուցվեց մի հուշամատուռ՝ հավերժացնելու համար սիրիական անապատներում գոհված հարյուրհազարավոր անմեղ նահատակների հիշատակը: Բացման արարողությանը ներկա էր Սահի Տան Կիլիկիո Գարեգին Բ կաթողիկոսը: Դաշտավայրը բացվեց «Արամ Մանուկյան» պալատը: Կարենոր քայլեր կատարվեցին Դայ դատի հետապնդման ուղղությամբ: Դիշատակության արժանի է միջազգային իրավունքի մասնագետ Ռուբեն Պողոսյանի ֆրանսերեն լեզվով հրատարակած «Դայ-քուրքական կոնֆլիկտ» հատորը, որով, փաստորեն, առաջին անգամ գիտական մակարդակի վրա հայությունը ներկայացվում է իրև իրավական սուբյեկտ Թուրքիայի հետ ունեցած մեր հարաբերությունների ընթացքում:

Այսպիսով՝ թե՛ հայրենիքի հետ կապերի ամրապնդման, թե՛ ներքին միջոցների առավել արդյունավետ գործադրման շնորհիվ Սիրիայի հայ համայնքում ակնբախ է ազգային կյանքի աշխուժացումը: Այսուամենայնիվ, նույնիսկ այդ կենսապահպաննան գործոնը թեպետ նվազեցնում է, բայց չի պատճեղում համայնքի հայաբափության շարժընթացը: Դատկապես շրջանի քաղաքական անստուգությունը և հարափոփոխ վտանգները, երբ վերջին 25–30 տարիների ընթացքում անընդհատ պատերազմներ են ծագել շրջապատող տարածքներում, իհմը է դառնում, որպեսզի հայությունը աստիճանաբար հեռանա դեպի ուրիշ, ավելի կայուն ափեր: Այսօր արդեն (2003 թ.) համայնքի ազգաբնակչության թիվը գնահատվում է իրև 60–70 հազար:

Արդի համայնքի ծնավորումը սկսվում է 20-ական թվականներից, երբ Կիլիկիայի պարպումով իտավի Լիբանանի ներկա տարածքը գնացին բռնազարքվածների հոսանքները: Դ. Թոփուզյանի համադրած այսուսակի տվյալների համաձայն՝ լիբանանահայության թվաքանակը 1923-24 թվականներին չուրջ 43,0 հազար էր, տեղաբաշխված Բեյրութում, Տրիպոլիում, Զահլեում և մյուս բնակավայրերում: Համայնքի հետագա զարգացման ընթացքում տեղի ունեցան ժողովրդագրական մեծ փոփոխություններ, մի կողմից թվաքանակի շեշտական ավելացումով, որի հետևանքով 70-ական թվականների սկզբներին լիբանանահայությունը զնահատվում էր իբրև չուրջ 150,0 հազար մարդ, մյուս կողմից՝ ներքին տեղաշարժումով, որի արդյունքը եղավ համայնքի կենտրոնացումը հիմնականում Բեյրութ քաղաքում: Չուգահետօքար, 30-40-ական թվականներին, համայնքը հասավ տնտեսական ինքնահաստատման և գրեթե ընդհանուր բնականոն նյութական վիճակի: 60-ական թվականներին արդեն հայազգի ծեռնարկատերերն ունեին հրամայական մի շարք դիրքեր լիբանանի տնտեսության մեջ: 1960 թվականի տվյալներով՝ լիբանանի ազգային արդյունաբերության մեջ արված ընդհանուր ներդրումն մեկ երրորդը քածին էր ննկում հայազգի դրամատերից:

Լիբանանահայության սոցիալական բաժանումն էլ իր համեմատաբար կայուն պատկերին հասավ 30-40-ական թվականներին: Ընդհանուր կազմում գերակշռություն ստացավ արհեստավորությունը: Հետագայում առաջատար դիրքեր գրավեցին նաև մանր ու միջին առևտրականները: Բանվորության թիվը աստիճանաբար նվազման միտում էր ցուցաբերում: Խոկ մտավորականությունը անընդհատ գորանում էր:

70-ական թվականների կեսերից սկսած լիբանանահայության ժողովրդագրական թե սոցիալական պատկերը շեշտակի փոխվում է: Ծայր առաջ և անվերջանալի թվացող քաղաքացիական պատերազմը կործանման եզրին կանգնեցրեց լիբանանը՝ եականորեն հարվածելով նաև հայ համայնքին: 1990 թվականի որոշ տվյալներով՝ հայության թվաքանակը հիշել էր մինչև 50,0 հազարի:

Այն տպավորությունն է ստացվում, թե Երկրից մեկնել են բոլոր նրանք, ովքեր նյութական կարողություն ունեին, ուրեմն և հնարավորություն ուրիշ Երկրներում բացելու սեփական գործը: Լու Անջելեսի կենտ-

րոնական փողոցներից մեկն այսօր վեր է ածվել հիմնականում լիբանա-նահայության ուժերով ստեղծված ուսկերչական իրերի վաճառականա-կան մի մեծ շուկայի, որն իր հայկականությամբ (հայերեն ազդագրերը, խոսակցական լեզուն, բարքերը և այլն) ասես Բեյրութի թաղամաս է հի-շեցնում:

Անհամեմատ վատրարացել է հայության սոցիալական վիճակը լի-բանանյան լիրայի աննախընթաց արժեզորկման հետևանքով: Պատրաս-տի հագուստեղենի արտադրության մեջ աշխատող հայ բանվորութիւնե-րի ամսական աշխատավարձը 1987 թվականին կազմում էր 20–25 ամե-րիկյան դոլար: ՀՀ դաշնակցության ամերիկյան շրջանակի զանազան մարմիններու ու միավորումները վերջին տարիներս անցնողատ դրամա-հավաք էին կազմակերպում, որի նպատակն էր Լիբանանի հայ ազգային վարժարանների յուրաքանչյուր աշակերտի համար ապահովել տարե-կան հարյուր դոլարի գումար:

Լիբանանահայ համայնքը, 1938 թվականին երկրում ընդունված մի օրենքի համաձայն, ոչ միայն ունի կրոնական, վարչական, կրթական, մշակութային որոշակի իրավունքներ, այլև ճանաչված է իրեն պաշտո-նական համայնք, որն իր համապատասխան երեսփոխանական արոռ-ներն ունի երկրի համայնքային սկզբունքի վրա կառուցված պառլա-մենտում: Վեց տեղ հատկացված է հայ առաքելական և հայ կաթոլիկ համայնքներին: Սա նշանակում է, որ հայությունը Լիբանանում լուրջ քաղաքական գործոն է:

1929 թվականին կայացած երկուստեք համաձայնության հիման վրա, որը վավերացվեց Անենայն Դայոց կաթողիկոսության կողմից, Ե-րուսաղեմի պատրիարքությունը Սեծի Տանն Կիլիկիո աթոռին գիտեց Լի-բանանի (Քեյրութ) թեմը: Մինչ այդ արդեն Սեծի Տանն Կիլիկիո կաթողի-կոսությունը ստիպված էր բողնել պատմական աթոռանիստ Սիսը և որոշ դեգերումից (Դալեպ) հետո 1931-ին, վերջնականապես հաստատվեց թերութամերձ Անթիլիաս ծովահայաց գյուղում, այստեղից էլ գործա-ծության մեջ մտած «Անթիլիասի կաթողիկոսություն» արտահայտությու-նը: Սեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության իրավասության տակ գտն-վեցին, այսպիսով, Կիպրոսի, Հայեպի, Անտիոքի, Դամասկոսի և Լիբա-նանի թեմերը, որոնցից միայն առաջին երկուսն էին պատմականորեն ե-ղել նրա ենթակայության տակ, իսկ մյուսները Եղիշե Ոտույան պատ-րիարքի օրոք երուսաղեմի միաբանության սիրահոժար որոշումով ան-ցան կաթողիկոսության հովանու ներք:

Կիլիկիայի ամբողջական պարպումով փաստորեն գրեթե վերացած կարողիկոսությունը վերականգնվեց և տակավ առ տակավ գորացավ հետզիետե ավելի ու ավելի կարևոր դեր խաղալով թե հոգևոր-եկեղեցական կյանքում և թե, մանավանդ, իր իրավասության տակ եղած թեմերի ազգային կեցության ապահովման և կազմակերպման գործում: 1956 թ-ից ի վեր ավելի ընդլայնվեց արողի գործունեության և ընդգույնման ոլորտը. երբ հայ եկեղեցու մեջ ծայր առած սուր տագնապի պայմաններում Կիլիկյան արողի իրավասության տակ վերցվեցին մի շարք ուրիշ թեմեր Սփյուռքի տարրեր կետերում: Այդ հարցը մենք արդեն դիտարկել ենք նախորդ գլխում: Կարողիկոսությունն ուներ դպրեվանք եկեղեցական կաղրերի պատրաստման համար, իրատարակում եր «Դասկ» ամսագիրը:

Լիբանանահայությունը կազմակերպված էր հայ եկեղեցու թեմի մեջ, որն ուներ թեմական այլազան ժողովներ ու մարմիններ: Եկեղեցական իշխանությունները տօնօրինում էին կրոնա-վարչական և մշակութային գործերը, ինչպես նաև հայ անհատների անձնական իրավունքի մի շարք հարցերը (ամուսնություն, ամուսնալուծություն, որդիզգություն, ժառանգություն և այլն):

Լիբանանում մի ստվար զանգված էր ներկայացնում կարողիկ հայերի համայնքը: Բեյրութում էր գտնվում կարողիկ հայության հոգևոր կենտրոնը՝ պատրիարքարանը: Նշանավոր էր կարողիկ միաբանության Զմանի վանքը, որն ուներ հայ մշակույթին և պատմությանը վերաբերող վավերագրերի հազվագյուտ հավաքածու:

Նվազ չեր նաև Դայ ավետարանական եկեղեցու հետևորդների թվաքանակը: Նշանավոր էր նրանց ուժերով պահպող Դայկազյան քուեջը քարձր կարգի ուսումնական հաստատությունը Բեյրութում:

30-ական թվականներից սկսած Սփյուռքի զարգացման ներքին տրամաբանությունը թելադրում էր, որպեսզի ազգային կեցության հիմնախարիսխներն անընդհատ ու անընդհատ մերժենան և կարծրութեն ամրանան Դայրենիքին թե՝ պատմական Դայաստանին, թե՝ Խորհրդային Դայաստանին աշխարհագրականորեն մոտ եզերքներում: Լիբանանը բոլոր գծերով համապատասխանում էր այդ ծգությունին:

Երկրի համայնքային կացութածնը, որի պայմաններում արար ժողովրդի երկփեղկումը գրեթե հավասարազոր համայնքների մուսուլմանական ու քրիստոնեական (մարտոնիքների) քաղաքականորեն որոշակի հավասարակշիռ վիճակ էր ստեղծել, երբ կրոնա-համայնքային հան-

դուրժողությունը վավերացված էր սահմանադրությամբ, օրենքներով և գործնական բազմամյա կյանքի փորձառությամբ. ահա նման կացութածնը բարենպաստ եղավ հայության թե ֆիզիկական գոյապահպանության, թե տնտեսական ինքնահաստատման, թե մտավոր ու մշակութային զարգացման համար: Պատահական չէ, որ հենց այստեղ շատ ավելի ոյուրին լուծվեց հայերի քաղաքացիության հարցը, քան Սփյուռքի որևէ ուրիշ կետում:

Աշխարհագրական դիրքը, որը փաստորեն ապահովում էր Մերձավոր և Միջին Արևելքի նյութական վիրտարի հարստությունների ելքը դեպի Արևմուտք, շատ ավելի կանուխ, քան շրջանի մյուս պետություններում, ստեղծեց տնտեսական բարգավաճման լայն հնարավորություններ, որոնցից կարողացավ օգտվել աշխատասեր ու ծեռներեց հայությունը:

Արդեն 30-ական թվականներին մեկը մյուսի ետևից Լիբանանում հանգրվանեցին ազգային կյանքի կարևորագույն կենտրոնները: Մեծի Տանն Կիլիկիո արքուն, ինչպես տեսանք, հաստատվեց Բեյրութում: Այստեղ սկսեցին գործել ՀՀ դաշնակցության բյուրոն, ՍԴ հնչակյան և Ռամկավար ազատական կուսակցությունների վերին վարիչ մարմինները՝ իրենց պաշտոնաթերթերով: Այստեղ կենտրոնացան կամ ստեղծվեցին ազգային կուսակցությունների մականի տակ գործող մշակութային և մարզական եռյակ միությունների և կազմակերպությունների դեկավար կորիզները:

Բեյրութը, իր հայաշունչ մքնուրսով ու ավանդությունով, իր շուրջ 60 կրթական հաստատություններով, Նայկազյան քոլեջով ու Փալանջյան ճենարանով, Ամերիկյան համալսարանի հայ ուսանողությամբ, քաղաքական անվերջանալի վեճերով, միաժամանակ, ամենասուր, բախտորոշ պահին, ինչպես 70-80-ական թվականների քաղաքացիական պատերազմի օրերին, միասնական կամքի դրսնորման կարողությամբ, եղավ ամբողջ Սփյուռքի համար յուրատեսակ մի կենտրոն, կադրերի պատրաստման վառարան: Այսօր իսկ (2003 թ.) դեռևս հիմնականում Բեյրութն է ամերիկաներին և եվրոպաներին հայթայթում խմբագիր թե լրագրող, ուսուցիչ թե դպրոցի տնօրեն, արվեստաբան թե խմբավար: Բեյրութի կենտրոնական դերը տևեց մինչև վերջին տարիններու: Քաղաքացիական պատերազմի արհավիրքները պարտադրեցին Լիբանանի լուրջ հայաբափությունը: Բեյրութը գրկվեց իր նախկին դիրքից: Սփյուռքն այսօր բազմակենտրոն չէ: Պարզապես անկենտրոն է: Դե-

տաքրոքական է դիտել, որ ամերիկահայ համայնքը իր թվաքանակով գրեթե միշտ զերազանցել է Սփյուռքի մյուս բոլոր համայնքներին, գրեթե միշտ եղել է ամերիկահայերի շոշափելի ծգտումը այնտեղ կենտրոնացնելու ազգային կեցության հիմնախարիսխները, այնտեղից վարելու հիմնահարցերը, բայց սփյուռքահայության քաղաքական թե մտավորական սերուցքը չլրեց Բեյրութը, մինչև որ դա նրան պարտադրեց իրականությունը:

Լիբանանահայ համայնքի ամբողջ պատմությունը ըստ Եռթյան հայեցի կեցությունը ապահովող ճանապարհների որոնման շուրջ քաղաքական պայքարի պատմությունն է: Ինչպես մյուս վայրերում, այստեղ էլ ըստուցումը գնացել է երկու՝ միմյանց հակառի առանցքների շուրջ: Մի կողմից՝ հնչակ–ռամկավար–հայ համայնավար խմբավորումը, մյուսից՝ ՀՅ դաշնակցությունը:

Խմբավորումը Սփյուռքի, ճանապարապես, լիբանանահայության հայեցի կեցության խնդրի ապահովման հիմնախարիսխը տեսնում էր Խորհրդային Դայաստանի վրա հենվելու ճանապարհով: Անշուշտ, խմբավորման խև ներսում միատարր չեր հայացքների համակազմը: Խորհրդային Դայաստանի նկատմամբ վերաբերունքի հարցը թե գաղափարախոսական, թե մարտավարական գետինների վրա լուրջ տարանջատումների տեղիք էր տալիս: Ուամկավարները, որպես կանոն, ընդունում էին Դայաստանը՝ անկախ իր վարչակարգից, հնչայլանությունը, ջատագովելով վարչակարգը, պնդում էր սեփական ազգային դիմագիծը պահպանելու անհրաժեշտության վրա, համայնավարները, որ, ի դեպ, քավականին լուրջ ուժ էին ներկայացնում համայնքում, անվերապահ և անքննադատ մոտեցման սկզբունքը էին դավանում: Ենթաշերտերն ու երանգները, սակայն, չին խաթարում խմբավորման ամրողությունը:

ՀՅ դաշնակցությունը ուրիշ ճանապարհ էր առաջարկում: 20–ական թվականների սկզբներից, մանավանդ՝ Լոզանի ծախողանքից հետո, ՀՅՌ–ն Սփյուռքի ազգային կեցության հիմնախարիսխը սկսեց որոնել «հոգևոր հայրենիքի» գաղափարի իրականացման մեջ: 1924 թվականին Ն. Աղքասյանը առաջ քաշեց Սփյուռքում «տեսակ նը քարոյական պետություն, անհայտնիք պետություն» ստեղծելու միտքը: Դամասփյուռքան միասնական մարմին («անհայրենիք պետություն») ստեղծել չհաջողվեց, բայց հաջողվեց սեփական հիմքի վրա կրթական և մշակութային գործի կազմակերպումը, այսինքն որոշ սահմանների մեջ իրականացավ «հոգևոր հայրենիք» գաղափարը, թեպետ նա քազմարիվ

երևացող ու աներևույթ թելերով կապված էր գոյություն ունեցող երկոի կրթամշակութային կյանքի հետ: Այդ մտահղացման մարմնավորումն իր լավագույն լրումը գտավ լիբանանահայ համայնքում:

Այդպիսով՝ գույգ առանցքներն էլ, վերջին հաշվով, կատարում էին նույն գործը: Եվ լիբանանահայության ազգային նկարագրի կերտումը առարկայականորեն հավասարաչափ արդյունքն էր թե մեկ, թե՝ նյուև ուղղությունների գործունեության, ավելի ստույգ՝ դրանց ամրողության: Պայքարը, սակայն, եղավ անհավատալիորեն տարամերժ, թշնամական: Տարբեր ժամանակահատվածներից վերցված երկու դրվագներ կարող են լույս սփոթել իրավիճակի ծայրահեղ դրսնորման վրա:

Լիբանանահայ թեմի գավառական ժողովի 1926 թվականի նիստերից մեկում բուռն, վայելչության սահմաններն անցնող վիճարանություններից հետո սպանվեց ՀՀԴ երեսփոխան Կահան Վարդապետյանը: Միջոց «արյան վուժի» գոհ գնացին հնչակյան գործիչներ Սարգիս Շիրունին 1929 թվականին և Միհրան Աղազարյանը 1933 թվականին:

1958 թվականին Լիբանանում ազգային ապստամբության օրերին, հայկական թեսացումները, հարելով երկրի ներքին տարրեր ուժերի, փաստորեն քաղաքացիական պատերազմ սկսեցին միմյանց դեմ տալով բազմաթիվ գոհեր:

Պատմությունը թողել է նաև մասնակի կամ ամրողական գործակցության թափականին դրական և հուսադրիչ էօեր: Դրանցից ամենափայլունը, թերևս, 1974 թվականից ի վեր համայնքային հայկական բոլոր ուժերի միասնական որոշումն էր գինյալ չեզոքություն պահպանելու մասին երկրում սկսված քաղաքացիական պատերազմի պայմաններում: Երբ հավաքական ժամքերի արդյունք ստեղծվեց գինված ջոկատ, որի խնդիրն էր պաշտպանել հայկական քաղաքամասերը: Զինյալ չեզոքության քաղաքականության շնորհիվ հայությունը կարողացավ զերծ մնալ շատ ավելի գոհերից ու կորուսաներից, որ այլապես անխուսափելի պիտի լինեին:

Կա նաև մի շատ էական երևույթ: Պայքարների նույնիսկ ամենաքեծ պահերին լիբանանահայ քաղաքական հոսանքների նեկավարությունը միշտ դրսնորել է երկխոսության պատրաստակամություն: Երկխոսությունը դեմ դիմաց ուժերի կամ քառախոսությունը բոլորի միջև հաճախ եղել է արդյունավետ համայնքին խնայելով նոր փորձություններ: Երկխոսությունը (քառախոսությունը) քաղաքական իմաստության դրսնորման արտահայտությունն է, որը, որբան էլ դա զարմանալի է, լրջորեն չի

տարածվել Սփյուռքի մյուս համայնքներում մնալով լիբանանահայ քաղաքական մտքի նվաճումը:

Երբ խոսում ենք երկու թեսուացումների միջև փոխադարձորեն բորբոքվող պայքարների մասին, պետք չէ ենթադրել, թե պայքարող ուժերի ներքին կյանքն անցնում էր հարթ ու խաղաղ, համախմբված պայմաններում: Օրինակներ կարելի է բերել թե Ռամկավար ազատական, թե ՍԴ հնչայյան կուսակցությունների ներքին ծախս և աջ թերի բախումներից: Առավել տարրողունակ էին, սակայն, ՀՀ դաշնակցության և լիբանանահայ համայնավարների ներքին կյանքի խմբումները:

50-ական թվականներին ՀՀ դաշնակցության ղեկավարության ղեմ ընդգման դրոշ պարզեց տաղանդավոր գրող և լրագրող Անդրանիկ Ծառուկյանի «Տարիի» շաբաթաթերթը, որի շուրջ համախմբված էին կուսակցական մի խումբ մտավորականներ: Բուն շարժումը քիչ թե շատ լուրջ վնաս չհասցրեց ՀՀԴ-ին, քայլ ինքնըստինքյան դարձավ ուշագրավ մի երևույթ, նոր մտայնության հարուցիչ: Առանցքագողակարը հետևյալն էր. Դայաստանի Դանրապետությունը և Խորհրդային Դայաստանը հարազատ, միասնական արտահայտություններ են հայ պետականության գաղափարի՝ կազմելով նրա առաջին և հետագա հարկարաժինները: Ըստ եռթյան, սա փոխգիշման ճանապարհով հայ քաղաքական ուժերի միջև իրարիհասկացողություն հաստատելու մի փորձ էր, որը չնոդունվեց կողմերից և ոչ մեկի կողմից:

60-ական թվականների սկզբներին հայ համայնավարների շարքերում կատարվեցին մաքրագործումներ՝ զանազան մտացածին մեղադրանքներով: Կուսակցությունից դուրս դրվեցին նշանավոր երգիծարան Դովիհաննես Աղպաշյանը և մի շարք տաղանդավոր ու խոստումնալից երիտասարդ մտավորականներ: Այս անգամ արդեն կուսակցությունը լրջորեն վնասվեց, և հայ համայնավարական հատվածը այդպես էլ չկարողացավ վերականգնել կորուստը:

Լիբանանահայ համայնքում նրա սկզբնավորումից մինչև օրս գոյություն ունեցող կազմակերպությունների, միավորումների, կրթական և մշակութային օջախների, մամուլի սպասիչ ցանկը կազմելը խիստ դժվար է, այնքան որ շատ են եղել այդ բոլորը:

Սոցիալ-դեմոկրատ հնչայյան կուսակցությունը մշակութային գործունեություն էր ծավալում «Նոր սերունդ» մշակութային միության խողովակով:

ՀՀ դաշնակցության «Դամագային» միությունը լայն գործունեու-

թյուն էր ծավալում մշակութային և կրթական մարզերում: Նրան հաստկանցող գծերից մեկն էլ գրահրատարակչական գործի կազմակերպումն էր:

Ուսմկավար ազատական կուսակցության հիվանու ներքո գործող «Թեքեյան» մշակութային միությունն ուներ լավ կահավորված արդիական շենք, որը ծառայում էր իր հասարակական, մշակութային ծեռնարկումների հավաքատեղի:

Նշանավոր էր «Գրական շրջանակը», որի ղեկավարն էր համայնավար քանաստեղծ, հասարակական գործիչ Գառնիկ Աղդարյանը: Սա համայնքի, թերևս, միակ կազմակերպությունն էր, որի գրական ծեռնարկումներին, քննարկումներին, ասուլիսներին իրենց մասնակցությունն էին թերում համայնքի մտավորականները առանց քաղաքական-կուսակցական հավատանքի և պատկանելիության խորության: «Գրական շրջանակը» գործում էր նաև պատերազմական շրջանում, թեպետ ավելի հավաքածական հավաքներով:

Դանայնքում քիչ չէին նաև անկախ մշակութային միավորումները, որոնցից հիշատակարժան է Կարուժան Խոտշյանի բատերախումքը: Քաղաքական անկախ միավորումների թվին էին պատկանում լիբանանահայ համալսարանավարտների միությունը, Դայ կարողիկ Երիտասարդաց միությունը, Լիբանանահայ գեղարվեստասիրաց միությունը, Երևանի բարձրագույն հաստատությունների շրջանավարտների միությունը և այլն:

Լիբանանահայ արվեստագետներից շատերի անունները լայնորեն հայտնի են թե՝ Ավյուղօքում, թե՝ Դայաստանում: Երգչուիհներ Արփինն Փեղլիվանյանը, Սոնա Ղազարյանը, որոնք Վիեննայի օպերայի աստղեր են (Ս. Ղազարյանը 1990 թվականին նենահամերգով փայլուն համես եկավ Սովորական) համաելուոպական համբավի արվեստագետներ են: Երգահաններ և խմբավարներ Բ. Կանաչյանի, Դ. Բերբերյանի, Օ. Սուրբեցյանի անունները զարդարում են մեր ազգային երաժշտական արվեստը:

Լիբանանահայության մշակութային խոշորագույն նվաճումներից մեկն արծանագրվել է գեղանկարչության ասպարեզում: Թերևս միայն ֆրանսահայությունը կարող է մրցել այս բնագավառում հաշվի առնելով, անշուշտ, որ Լիբանանի հայ նկարիչների մի ստվար խումբ հետագայում բնակություն է հաստատել Ֆրանսիայում:

Արդեն 30–40–ական թվականներից համայնքում լայնորեն հայտնի

Դարություն Կալենցի, ժան Դարթինյանի, Մարտիրոս Ալբունյանի, Տիգրան Աճեմյանի, Պոլ Կիրակոսյանի, Պարզե ճիպնելյանի, ժողեք Թերճանի անունների կողքին ավելի ուշ, մանավանդ 60-ական թվականներին հրապարակին, տիրեցին Կյուլվը (ժորժ Կյուլվերջինյան), Կյուլվտերը (Զոն Կյուլվտերելյանը), Դարություն Թորոսյանը, ժան Գագանճյանը, Ասատրը Պատիկյանը, Գրիգոր Նորիկյանը, Սեղա Մանուկյանը, Դրայր Տիրապեքիրյանը, Օչին Գարագաշյանը, Վահե Պարսումյանը, Զոն Դատիրյանը և շատ ուրիշներ, ընդհանուր թվով շուրջ 50 մարդ:

Ինչպես նշում է Բեյրութի Ամերիկյան համալսարանի դասախոս, արվեստաբան Սեղա Պարսումյան-Տատոյանը, լիբանանահայ նկարչությունը իր հիմքում և էռթյան մեջ ունի ազգի գոյաբանության հանգույցը, այսինքն արտահայտում է Լիբանանում իսկ հայտնված հայ մարդու պատկանելիության շփոթը, ինքնության տագնապը: Սեկ խոսքով՝ դա ծնվեց և զարգացավ Լիբանանի հողի վրա իրու լիբանանահայ արվեստ:

Եվ բնական է երանգների և նորերանգների, շերտերի ու ենթաշերտերի, ոճերի գունազեղ բազմազանությունը, որով շնչում է լիբանանահայ գեղանկարչությունը: Պոլ Կիրակոսյանի խորունկ հումանիզմը երեք չես շփոթի Կյուլի ցավագին ու սիրելի ուրվականային գոյությունների հետ: Կյուլվտերի ինեալիկանին, վսեմին ձգտումը նույնքան խոսում է դիտողի սրտին, որքան Գ. Նորիկյանի ողբերգականորեն վեհ կանացի կերպարները, որոնք կորցրել են իրենց հայրերին, ամուսիններին, շափահաս արու զավակներին: Յայ մարդու հոգու ճիշն են բազմածև արտահայտում Սսատուրի քառսներն ու անեզր մղձավանքը, Դ. Թորոսյանի շղարշուն երազները թե Ս. Մանուկյանի պատկերած միջավայրի բանձրուկը:

Սկյուորքի արդի գրականությունը դժվար է պատկերացնել առանց լիբանանահայ գրողների մուծած խոչոր ավանդի, որոնք, բանաստեղծ Գառնիկ Աղջարյանի բանաձևումով, միշտ եղել են «պատմեշին վրա» ոչ միայն հայապահպանության հայրենանվեր պայքարում, այլ նաև արվեստի նոր բնագծերը նվաճելու մաքառումների մեջ: Բանաստեղծ, արծակագիր, բատերագիր Մուշեղ Խշխանի անունն արդեն իր կենդանության ժամանակ հնչում էր իրու դասական խոր հարգանք հարուցելով ընթերցող լայն շրջանակների սրտերում:

Գրականագիտությունը դեռևս իր ասելիքն ունի հոգեկան ներաշխարհի այնպիսի քննախույզ բանաստեղծի մասին, ինչպիսին ժա-

կորյանն էր: Պետք Սիմոնյանը, Արմեն Ղարյանը, Վեհանուշ Թերեյանը և շատ ուրիշներ նոր բարձ խոսք են բերել սփյուռքահայ ժամանակակից բանաստեղծության ու արծակի անդաստանը:

Ազգային կեցության վիրխարի կառուցքը, որ լիբանանահայության ստեղծածն է, պիտի անընդհատ սնվեր, գորանար հզոր այնպիսի մի ենթակառուցից, ինչպիսին մամուլն է: Ընդամենը յոթ տասնամյակի կարճատև ընթացքում այնտեղ հրատարակվել են շուրջ 150 անուն բերք, ամսագիր և ուրիշ պարբերականներ, որոնցից երեքը՝ ՍԴ հնչակյան կուսակցության «Արարատ», ԴԴ դաշնակցության «Ազդակ» և Ռամկավար ազատական կուսակցության «Զարբոնք» պաշտոնաթերթերը, վաղուց արդեն անցել են կեսոդարյա հոբեյանական եղրագիտերը: Ընդ որում, օրաթերթերի տպաքանակները հաճախ հասել են 15 հազար օրինակի, այսինքն՝ Ավիյուքում հազվադեպ ցուցանիշի: Նշանակալից է եղել «Այգ», «Ազգային մշակույթ», «Նախրի», «Ավիյուք», «Մասիս» և ուրիշ թերթերի գործունեությունը: Միայն վերջին տասնամյակներում հրատարակված «Բագին», «Ծիրակ», «Եցեր գրականության և արվեստի», «Ահելան» գրական պարբերականները, «Դայկագյան հայագիտական հանդեսը» յուրաքանչյուրն իր դիրքերից ու բոլոր մեկտեղ հարստացրել են հայ հասարակական միտքը իրենց նշանակությամբ լայնորեն դուրս գալով համայնքի սահմաններից:

Մամուլը նույնպես կորուստներ ունեցավ քաղաքացիական պատերազմի տարիներին: Բայց այսօր (2003 թ.) էլ շարունակվում են լույս տեսնել հասարակական, քաղաքական, մշակութային ուղղությունների թերթեր ու ամսագրեր:

Լիբանանահայության խոշորագույն նվաճումը ազգային կեցության այնպիսի հիմնակառուցի ստեղծումն էր, ինչպիսին է դպրոցը: Ներ 3–4 տասնյակ տարի առաջ, երբ ամերիկահայությունը, թեպետ թվաքանակի իր գերազանցության, միայն երազում եր հայկական դպրոցի մասին, իսկ ֆրանսահայությունը ունեցած մի քանի վարժարանների նյութականն ապահովելու մշտական հոգսի տակ էր կը եմ. Լիբանանի հայ համայնքն արդեն ուներ շուրջ 60 հայկական վարժարաններ 1000 ուսուցչով և 20 հազար աշակերտությամբ: Այսինքն՝ կարելի է անվարան պնդել, որ դպրոցահասակ գրեթե բոլոր երեխաներն անցնում էին (այս կամ այն մակարդակով) հայեցի կրթության դասարաններով: Իսկ մանկավարժների բվում եղել են մեծանուն L. Շամբը ու Ն. Աղբալյանը, հայտնի հասարակական գործիչ Գ. Ահարոնյանը, քազմափորձ Պ. Ժամկոչյանը

ու Օ. Սարգսյանը և շատ ուրիշ անմնացորդ նվիրյալներ ու երախտավորներ:

Քաղաքացիական պատերազմի ընթացքում մեծապես տուժեց հատկապես դպրոցական գործը: Երկրից հայության շարունակական ելքի հետևանքով խիստ նվազեց աշակերտության թիվը, նոսրացան դասարանները: Որոշ դպրոցներ միացան իրար: Անմխիթարական էր վիճակը հատկապես արևմտյան Բեյրութում, որտեղ կան ազգային նշակութային թե կրթական շենքեր՝ առանց անձնակազմի, քանի որ երթեմնի հոծ հայությունը գրեթե ամբողջովին լրել է թաղամասը:

Դայրենիքի կապը Լիբանանի հետ բավականին աշխույժ է եղել Երկրորդ աշխարհամարտից հետո, հատկապես 60–ական թվականներին: Քաղաքացիական պատերազմը հարվածեց նաև կապին: Այնուամենայնիվ, լիբանանահայությունը միշտ զգացել է, որ իր թիկունքում ունի բարոյական ուժեղ հենարան՝ հանձնին Դայաստանի հասարակայնության ու ժողովողի: 1976 թվականին, երբ Երկրի զանազան ազգայնական ուժեր, աչք ունենալով հայոց ինչքի ու կայքի վրա, փորձեցին լիբանանահայությունը դարձնել բռնկված քաղաքացիական պատերազմում քավության նոխազ: Դայաստանից հնչած համաժողովրդական բուռն բողոքն էր նաև այդ ուժերին զսպող գործոններից մեկը: 70–ական թվականների վերջերին և 1987 թվականին Դայաստանից լուրջ նյութական օգնություն առաքվեց լիբանանահայ դպրոցներին:

Դամայնքում գործում են նաև տասնյակ ու տասնյակ ուրիշ ազգային հաստատություններ: Կան ազգային և անձնական հիմնադարներ, ծերանոց, որբանոց, մեծ թվով առաքելական, կաթոլիկ և ավետարանական եկեղեցիներ: Ակզրնավորության շրջանում աշխույժ, քայլ հետզետե ավելի ու ավելի նվազող (սերնդափոխության հետևանքով) գործունեություն են ցուցաբերել 40-ից ավելի հայրենակցական միությունները. Նրանց մի մասը շարունակում է կապ պահպանել և գործակցել Դայաստանում իրենց ծննդավայրի անուններով կոչվող բնակավայրերի հետ:

Չնայած բզկտված և վիրավոր վիճակին լիբանանահայությունն էլ իր հերթին սատար եղավ Դայրենիքին 1988-ի ոեկտեմբերի Երկրաշարժի առիթով: Դամանակված շուրջ 1 միլիոն ամերիկյան դոլարի միջոցներով Երևանում ստեղծվեց պրոտեզավորման կենտրոն:

Յաճածայն Ա. Բրուկի կազմած «Սշխարհի բնակչությունը» եթողություղագրական տեղեկագրի 1979 թվականին հաճայնիք հայությունը 260 հազար էր: Մեր օրերում (2003 թ.) երկրում բնակչությունը է չուրջ 100–130 հազար հայ: Եթե ընդունենք, որ Բրուկի տվյալները չափազանցված էին, այնուամենայնիվ, ուրիշ աղբյուղների հավաստում են, որ 70–ական թվականների կեսերին հայության թվաքանակը առնվազն 200 հազար էր: Այսպիսով՝ տասնիննական տարրում հայության գործը կեսը հեռացավ իր համար երեք–չորս դար տևած օրրանից:

Այդ ընթացքում տեղի էր ունեցել Իրանի հեղափոխությունը և Խոլամական Հանրապետության հաստատումը, որը սկզբնական շրջանում ամրող բնակչությանը բերեց տնտեսական մարդում կենսանակարդակի աննախընթաց անկում, քաղաքական մարդում անստուգություն և անապահովություն, մանավանդ Իրանա–իրաքյան պատերազմը ստեղծեց անապահովության ճնշչի մթնոլորտ, հասարակական–քարոյական մարդում շրջադարձ դեպի միջնադար: Ազգային փոքրամասնությունների, բնականարար, նաև հայերի վրա այս ամենի ազդեցությունը կրկնակի գորեն էր:

Դայ ազգաբնակչությունը, մանավանդ, երիտասարդությունը նվիրումով մասնակցեց հակաշահական շարժումներին և բռն հեղափոխությանը: Տվեց գոհեր: Թեհրանի ռադիոկայանի պաշտպանության դիրքություն գոհվեց Կարդան Սոաթեյանը: Բավականին բվով երիտասարդ հայ կյանքերի խեց Իրանա–իրաքյան պատերազմը:

Քաղաքականությունը, սակայն, գնաց իր հունով: Ազգային քաղաքականության բնագավառում նոր իշխանությունները որևէ առաջընթաց չարեցին: Դայությունը, ինչպես և նախկինում, շարունակվեց ճանաչվել ոչ թե իրու ազգային միավոր, այլ իրու կրոնականական փոքրամասնություն:

Տեղ գտան որոշ սահմանափակումներ ու սեղմումներ: Դայ մարդիկ միշտ չեն, որ կարող էին պետական իիմնարկներում պատասխանատու պաշտոն վարել: Դայ կանայք պարտավոր էին աշխատավայրերում թե հասարակական շրջապատում կրել գլխածածկոցներ, երկարաք զգեստներ և այլն:

Արդարությունը պահանջում է ասել նաև, որ Խոլամական Հանրապետությունն ընդունեց մի շարք օրենքներ ևս, որոնք, ի տարրերություն

նախորդ վարչակարգի օրենքների, ավելի նպաստավոր էին քրիստոնեության, այդ թվում և հայության համար: Նախ, ըստ Սահմանադրության, շնորհվեց դավանանքի կատարյալ ազատություն: Իրավունք տրվեց քաղաքացիական ակտերի ամուսնության, ապահարզանի, որդեգորումների, կտակի և ժառանգության հարցերում առաջնորդվել ազգային-եկեղեցական օրենքներով: Արտոնվեց ազգային լեզվով մամուլը, գրականության դասավանդումը:

Իրանահայության արագընթաց տեմպերով արտագաղթը, սակայն, այնքան էլ կապ չունի վատ կամ լավ օրենքների, սահմանադրական հավաստումների հետ: Վերջիվերջո հայությունը ապրել է երկրում, գարգացել երեք-չորս հարյուր տարի շատ ավելի վատ օրենքների ու նախորդ սահմանադրության պայմաններում: Վճռականը երկրի քաղաքական անապահովության իրողությունն էր, որի հետևանքով էլ վերջին տասնամյակներում ծայր առավ արտագաղթը:

Իրանահայության ազգային կյանքը կառուցվում է եկեղեցական երեք թեմական վիճակների շուրջ: Կենտրոնական (Թեհրանի թեմ), Յուսիսային (Աստրպատականի թեմ Թավրիզ կենտրոնով), Հարավային (Իրանա-հնդկական թեմ Նոր Ջուղա կենտրոնով): Նոր Ջուղան այժմ մտնում է Սպահան քաղաքի մեջ իբրև նրա 5-րդ քաղամասը:

Դայ առաքելական եկեղեցու Իրանի երեք թեմերն էլ ավանդաբար գտնվում էին Ամենայն Դայոց կարողիկոսության իրավասության տակ և սերտ կապեր են ունեցել նրա հետ: Արդեն քանական թվականների երկրորդ կեսից Դայ դաշնակցությունը սկսում է տանել մի գիծ, որով ձգտում էր Դայաստանյայց եկեղեցին արտասահմանի մեջ ձերբագատել «միակ հոսանքի մը ամբողջական ազդեցությանը ենթարկվելուց»: Այսինքն չեզոքացնել էջմիածնի Մայր աթոռի ազդեցությունը, որը դիտվում էր իրքս «միակ հոսանքի», իմա համայնավարության ազդեցության դրսնորման ձև: Առաջին քայլերը Աստրպատականի թեմի հետ աղերս ունեին:

1956 թվականից հետո, երբ ընդհարումը դարձավ բացահայտ, բոլոր երեք թեմերը կցվեցին Անթիլիասի աթոռին: Ավելի ուշ կցումը «օրինականացվեց» Սեծի Տանն Կիլիկիո կարողիկոսության կանոնադրությամբ: Էջմիածնի աթոռը երեք չի ճանաչել այդ կցումը: Կաթունական թվականներից սկսած, իրանահայության Դայաստանի հետ կապերի խիստ սահմանափակումը ինչ-որ չափով բացատրվում է նաև այդ իրողությամբ:

Կենտրոնական շրջան: Թեհրանի և շրջակայքի հայ բնակչության բուռն աճը սկսվում է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Այլևսայլ պատճառների թվում (իիմնականում հայ գյուղացիության ուրբանիզացիայի պրոցեսը) Թեհրան քաղաքում հայության աճին ականայից նպաստեց 1946–47 թվականներին կատարվող հայրենադարձությունը: Որոշ տվյալներով՝ մինչև 10 հազար մարդ Իրանի տարբեր վայրերից 1947–ի երկրորդ կեսերին հավաքվել էին Թեհրանում արդեն կազմ ու պատրաստ Հայաստան մեկնելու համար: Հայրենադարձության համկարծահաս դադարեցումը, սակայն, նրանց մատնեց անելանելի կացության: Գրեթե բոլորն այդպես էլ մնացին Թեհրանում աստիճանաբար շտկելով իրենց կեցության պայմանները:

Թեհրանի թեմական խորհրդի տվյալներով՝ 1958 թվականին հայ ազգաբնակչության թվաքանակը քաղաքում հասել էր 65,0 հազարի, իսկ համաձայն «Ալիք» թերթի հեղափոխության նախօրյակին արդեն 150,0 հազար էր, այսինքն՝ Երկրի ամբողջ հայության 75 տոկոսը:

Թեհրանի հայության աճի դիմաց խոչոր չափերով կրծատվել, երբեմն էլ խսպա վերացել է շրջակա գյուղերի և քաղաքների հայ ազգաբնակչությունը, ինչպես նաև խիստ նվազել է մյուս շրջանների հայությունը:

Հյուսիսային շրջան: Պրոցեսը գրեթե նույնն էր՝ Թավրիզի հայության աճ ի հաշիվ հիմնականում գյուղացիական և նվազ կարևոր քաղաքների բնակչության: Պարադադում, օրինակ, 1930 թվականին կար 22 հայաբնակ գյուղ: 1970–ին մնացել էր Երկուսը: Մարադայում, Սակուռում, Արդարիլում մնացել էին միայն մի քանի ընտանիքներ, Սալմաստի ամբողջ գավառում՝ մոտ 80 ընտանիք:

Թավրիզում եթե 1923–ին կար 5500 հայ, ապա հեղափոխությունից առաջ (1978) հայության թիվն արդեն կրկնապատկվել էր՝ հասնելով 10,0 հազարի: Խալամական Հանրապետության հաստատումով, սակայն, ինչպես տեսանք, սկսվեց հայաբափման շարժմբացը: Ներկայումս Թավրիզի հանրահայտ Լիլավա թաղամասում հեռացող հայերի տները գնելուց հետո սկսել են տեր ու տնօրեն դառնալ պարսիկները:

Հարավային շրջան: Նոր Զուղան ևս սկսեց աճել իրերի ճիշտ նույն տրամաբանությամբ: 1952–ին այստեղ կար 1600 հայ, 1979–ին, ինչպես վկայում է «Մոնդ» թերթը, հայության թվաքանակն արդեն 10 հազար էր:

Փերիայի գավառը հայաշատ շրջաններից մեկն էր, որը 1940–ական թվականներին ուներ շուրջ 160,0 հազար հայ ազգաբնակչություն: 1967

թվականի տվյալներով՝ արդեն կազմում էր 12,0 հազար, Չարմահալ գավառում արդեն գրեթե հայություն չկա:

Դանայնքի ազգային կյանքը ավանդաբար խարսխվում էր Եկեղեցապետական կառուցվածքի վրա: 1967 թվականին պետությունը ճանաչել է թեմերը իրու կրոնամշակութային, քարեգործական և իրավական մարմիններ: Թեհրանի թեմը ղեկավարվում է 1973 թվականին կիրառության մեջ դրված կոնոնադրությամբ, որի համաձայն՝ պատգամավորական ժողովը հանարվում է թեմի գերագույն իշխանությունը: Թեմական խորհրդը գործադիր իշխանությունն է, որն ընտրվում է պատգամավորական ժողովի կողմից երկու տարի ժամկետով: Թեմական խորհրդի նյութականը հոգալու համար կանոնադրության համաձայն յուրաքանչյուր քաղաքացուց գանձվում էր պարտադիր հարկ, որի չափը որոշվում էր ըստ նրա նյութական կարողության: Թեմական խորհրդի իրավասության տակ էին ազգային կյանքի քացարձակապես բոլոր հարցերը՝ կրթություն, մշակույթ, ընտանիք և այլն: Այլաղավան հայերը չեն կարող մասնակցել թեմի գործունեությանը:

Իրանի հայ համայնքն ուներ երկու պատգամավորական տեղ Իրանի խլամական խորհրդարանում:

Իրանահայության ազգային-քաղաքական կյանքում սկսած քանակական թվականներից գրեթե մենաշնորհ իրավիճակ է ունեցել ՀՀ դաշնակցությունը, որը 1931-ից ի վեր իրատարակում է «Ալիք» թերթը: Դամաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին միայն, երբ Իրան մտան խորհրդային զորքերը, Ալրապատականում և Թեհրանի շրջանում կուսակցությունը քաղաքականապես գտնվեց ոչ նպաստավոր պայմաններում, իսկ չեզոք և առաջադիմական կոչվող ուժերը ցուցադրեցին աննախընթաց աշխուժություն: Դետագայում ՀՀԴ-ն որոշակի կերպով վերականգնեց հավասարակշռությունը, երբ տիրող վարչակարգը հետապնդում էր համայնավարությանը և «առաջադիմական կազմակերպություններին»: Թեմերի կցումը Անթիլիասի աթոռին հենց նման պայմանների արդյունքն էր:

Թառասնական թվականներին և հետագայում, մինչև 1953-ի պալատական հեղաշրջումը, ստեղծվեցին մի շարք երիտասարդական և մշակութային միություններ՝ «Կերելը», «Մշակույթ» միությունները, Նոր Զուղայի մշակութային միությունը, Թավրիզի հայ մշակութային միությունը և այլն: Դրատարակվել սկսեց «Կերածնունդ» թերթը:

Գավառում նս աշխուժացավ գոյություն ունեցող զանազան կազմա-

կերպությունների գործունեությունը՝ ստեղծվեցին նորերը: «Փերիայի կորասիրաց միությունը» իր մասնաճյուղերը հիմնեց հայաշատ գյուղերում: «Փերիայի հայոց հիվանդանոցի միությունը» իր ուսերին վերցրեց հայության առողջապահական գործի բարելավման առաքելությունը: «Չարմահայի հայ ուսումնասիրաց միությունը» ընդլայնեց իր գործունեության սահմանները՝ մասնաճյուղեր հաստատելով ոչ միայն զավառի գյուղերում, այլև Թեհրանում, ուրիշ բնակավայրերում:

Հայրենադարձության դադարեցման հետևանքով Թեհրանում անօթևան մնացած զանգվածի նյութական վիճակը բարելավելուն իր ջանքերը ներդրեց ՀԲԸ Թեհրանի մասնաճյուղը:

Հատուկ ակնածանքով պիտի նշել տիկնանց զանազան միությունների և ընկերակցությունների բարեսիրական գործունեությունը: 1939 թվականին հիմնադրվեց «Հայ կին միությունը», որպեսզի ինչ—որ չափով դարձաներ 1936 թվականին հայկական դպրոցների վերացման մասին պետական կարգադրության կործանիչ հետևանքները: Միության անդամները մանուկներին գաղտնի ուսուցանում էին հայոց լեզու: Խոկ երբ 1946–47–ից հետո հայրենադարձության ծախողման պատճառով Թեհրանում մնացին հազարավոր մարդիկ, միության անդամները նրանց համար դարձյալ պարապմունքներ էին կազմակերպում թե նրանց տներում, թե դպրոցներում: Միությունը կազմակերպեց ցուցահանդեսներ՝ նվիրված հայ կանանց ծեռնարկեստին, պատմական տարագներին, հրատարակեց «Հայութին և իր տարազը» ալբոմը:

Համայնքի ամենազանգվածային ու բազմաբուվանդակ միությունը «Հայ մշակութային «Արարատ»» կազմակերպությունն է, որ ներառում է սկաուտական, մարզական, երաժշտական, թատերական, գրական ուղղություններ, ունի «Արարատ» մարզավաճ: 1964–ից ի վեր կազմակերպել է ամենամյա համահայկական նրգումներ, որոնց մասնակցել են տարբեր մարզակումքների և հայ բնակավայրերի շուրջ 1500–ական մարզիկներ: Մրցություններ է կազմակերպել նաև աշակերտության համար: Զանգվածային ընդգրկում ունի նաև «Հայ մշակութային Սիփան միությունը»:

Կերպին երկու միությունները շարունակում էին իրենց առաքելությունը հեղափոխությունից հետո է: Նրանց կողքին գործում էին:

«Իրանահայ ազգային և մշակութային միությունը» (ստեղծված է 1979 թվականին), որ հրատարակում էր «Փյունիկ» շաբաթաթերթը (այժմ փակված) և «Ծիածան» հանդեսը, ուներ գրական, երաժշտական, մարզական բաժիններ, օժանդակում էր դպրոցների աշխատանքին:

«Երանահայ գրողների միությունը» (1962), որը, բնականաբար, միավորում է հայ գեղարվեստական գրականության մշակութիւն: Նրա կազմում էին Գալուստ Խանենցը, Շովիաննես Սարդը և շատ ուրիշներ: Միության նախաձեռնությանը 1981 թվականին նշվեց քանասեր ու պատմաբան, գրող Արտակ արքեպիսկոպոս Մանուկյանի գրական գործունեության 25-ամյակը:

«Արովյան» մշակութային միությունը, որն ուներ պարի, երաժշտական, գրական խմբեր, նպատակադրել էր իրանահայ դպրոցի համար կազմել հայոց լեզվի և գրականության դասագրքեր:

«Երեբունի» մարզամշակութային միությունը, որն ուներ մարզական տարրեր քաժիններ, գրադարան, քատերախումբ:

Թվարկված միություններից շատերը, նրանց անդամները, հայ ճուավորականները, գրողները, երաժիշտները, նկարիչները, բժիշկները, իրավաբանները, ճարտարապետները և ուրիշ մասնագիտությունների մարդիկ իրև հավաքատեղի ունեին Դայ ակումբը՝ համայնքի ազգային-մշակութային կյանքի հիմնական ու կենտրոնական օջախներից մեկը:

1936 թվականին Իշխանությունները փակեցին հայկական դպրոցները՝ գրավելով նրանց շենքերն ու սեփականություննը: 1942–43-ին դպրոցները վերականգնվեցին, դասավանդումը, սակայն, կատարվում էր պարսկերենով, իսկ հայոց լեզվի ուսուցումը արտոնվեց միայն հիմնական ծրագրից ու դասաժամներից դուրս, որն էլ ընդամենը շաբաթական 12 ժամ էր տարրական դպրոցներում և 6–7 ժամ միջնակարգում: Թափրիգի հայ դպրոցները վերաբացվեցին շատ ավելի ուշ:

Իրանահայ դպրոցի պատմության լավագույն շրջանը, թերևս, վարսունական թվականներն են, երբ դպրոցների թիվը հասավ 50-ի, իսկ աշակերտության թվաքանակը՝ 10,0 հազարի: Ընդ որում շատ դպրոցներ իրենց ընդգրկումով պարզաբան չեն գիտ Խորհրդային Դայաստանի դպրոցներին: «Թուել-Դավթյան», «Մարիամյան», «Թումյան» դպրոցներն, օրինակ, ունեին 1000–ից մինչև 1500 աշակերտ՝ յուրաքանչյուրը: Իրանահայ համայնքի պատմության մեջ մշակութային եզակի նշանակություն ունի Թավրիզի «Մելիք-Թանգյան» թանգարանը (հիմնադրված 1967 թվականին), որն իր ընդարձակ սրահներում ցուցադրում է շուրջ 2000 ցուցանմուշ:

Իրանահայության մաս կազմող համեմատաբար շատ ավելի փոքրաթիվ կաթոլիկ և ավետարանական համայնքները նույնպես ունեն իրենց կրթական հաստատությունները: թիվային՝ ցըսդաբ՝ դիմավլ դամբյու դյարոց

Իրանահայ համայնքը հարուստ ու նշանավոր է իր մշակութային ավանդություններով: Արդեն Շովիաննես Խան Մասեհյանի անունը կարող է ոչ թե միայն մի եզակի համայնքի, մի ամբողջ ժողովրդի հպարտության առարկա լինել: Ծեծսպիրի ստեղծագործությունների դասական թարգմանությունները, որ կատարել է նա, հարստացրել են մեր ազգային մշակույթը, մի ամբողջ քայլ են նշանավորել հայ ժողովրդի կողմից աշխարհի գեղեցկագիտական յուրացման հարատև ընթացքի մեջ:

1935-ին իիմնադրված «Նոր Եջ» գրական միավորումը, որ գոյատևեց շուրջ քառասուն տարի, իրոք որ ծգուում էր նոր Եջ բացել Սփյուռքի գոյավորման և ինքնահաստատման շրջանի ազգային կեցության հոգեկան կովանների որոնման կածանների վրա: Սփյուռքահայության արևելյան հատվածի կյանքում նորէջականները ջանացին անել այն, ինչին քսանականի վերջերին ու երեսնականների սկզբներին նվիրաբերվել էին «Փարիզի տղաքը»: Փույթ չէ, որ երեմն արդյունավետ չէր ճիգը: Գաղափարը ինքը շատ վեհ էր. ամուր խարսխվելով ազգային մշակույթի հողի մեջ գտնել աշխարհի, շրջապատի հետ արվեստի հաղորդակցման նոր մակարդակը, նոր մտածելակերպը, նոր որակը, որով ազգը պետք է հոգնոր հաղթաքուղը ծեղոք թերեր՝ աշխարհին բացազատվելու, ժամանակակից աշխարհի մեջ արդիական կյանքով ապրելու համար:

«Նոր Եջին» անդամակցեցին Ղևը (Մարգար Ղարաբեգյանը), Յրանտ Ֆայանը, Աշոտ Ասլանը, Արա Տեր-Շովիաննիսյանը, Գալուստ Խանենցը, Արշավիր Մկրտիչը, Արմեն Գեսը, Զորայր Միրզոյանը: Այս անունները թիւ թե շատ ժանոր են Սփյուռքին, իսկ Ղևը և Խանենցը համահայկական ճանաչում ունեն: Նրանց մի քանի ժողովածուներ հրատարակվել են թե՝ Սփյուռքում, թե՝ Դայաստանում:

Դայրենիքը քիչ ժանոր է Զորայր Միրզոյանի անվանը, մինչդեռ նրա վաստակը կարող է իր նկատմամբ խոր հարգանք պարտադրել: Բազմակողմանի զարգացած, իին ու նոր մի շարք լեզուների տիրապետող այս գործիչը տաղանդավոր քանաստեղծ էր և արձակագիր, պատմաբան ու գրականագետ, հայ մշակույթի անխոնջ պրոպագանիչ պարսկական շրջապատում և օտար գրական հրաշակերտների հմուտ թարգմանիչ իրև Մասեհյանի ավանդությունների ժառանգորդ: Նրա գրչին են պատկանում թարգմանություններ Դոստուսկուց, Ֆրոյդից, Խայմից, Լորկայից, Էլիոտից, Էլուարիից, Թագորից (որի հետ ուներ անձնական ծանոթություն), Կոկտովիից, Քոլդուելից, գիտական աշխատություններ «Աբուալի Մինայի կյանքը», «Պարսից գրականության պատմություն»,

բազմաթիվ բանաստեղծություններ, արծակ էջեր, հոդվածներ՝ սփոռված մամուլում, «Թաց մայթ» խորագրով բանաստեղծությունների ժողովածուն:

Իրանահայ մշակույթը ներկայացնող միջին սերնդից շատերը տարիներ առաջ անցել են արտասահման՝ լուրջ հաջողությունների հասնելով գրականության ասպարեզում: Իրանահայ միջավայրի ծնունդը է քաղաքական հայացքներով, լեզվաօճական մտածողությամբ, իրերի առօրյա կենցաղային ընկալման կերպով, արծակագիր Հակոբ Կարապենցը, որը փոխադրվեց և մինչև իր կյանքի վերջը ապրեց ԱՄՆ-ում: Յ. Կարապենցը սփյուռքահայ արդի գրականության ամենախոչշոր երևույթներից մեկն է, արծակի արքան: Իր վեպերում ու պատմվածքներում նա քննում-զննում է հասարակության և անհատի փոխհարաբերության հավերժական հարցականը, ժամանակակից հենց այսօրվա սփյուռքահայ մարդու կրկնակի երթենն եռակի ինքնության (իր իսկ կենսագրության պարագայում հայ, պարսկահայ, ամերիկահայ) տագնապը:

Իրանահայ գրականության երիտասարդ սերնդից տաղանդավոր բանաստեղծ Վարանդը (Սուրբիաս Քյուրքյանը) արդեն իր վրա է հրավիրել հասարակայնության ուշադրությունը: 1954 թվականին ծնված այդ հեղինակը հրատարակել է բանաստեղծությունների շուրջ մեկ տասնյակ ժողովածուներ, որոնց մեջ աչքի է գարնում գույնների ու երանգների նորածաշակ, այլև ցայտուն զգացմունքային մանրանկարչությունը: Նրա տեքստերով գրված երգերը տարածում են գտել համայնքում:

Իրանահայ բատրոնի վարպետներ Արամայիս Աղամայլանը, Արմանը (Արման Շովսեփյան), Սամվել Խաչիկյանը խոշոր ներդրում ունեն թե տեղի հայ բատրոնի, թե Իրանի կինոարվեստի զարգացման գործում իրքը թեմադրիչներ և դերասաններ: Արմանը ստեղծել է ավելի քան 50 կինոնկար:

Իրանահայ արվեստագետներ Նիկոլ Գալանտերյանը, որ մի շարք օպերաների և երգերի հեղինակ էր, Համբարձում Գրիգորյանը «Կոմիտաս» երգչախմբի խմբավարը, տասնյակ խմբերգերի, մեներգերի հեղինակը, «Անուշ» երգչախմբի ղեկավար Շովիկ Գասպարյանը, որը հայ երգչախմբին ճանապարհ բացեց ղեպի Իրանի հեռուստատեսություն, Աշոտ Պատմագրյանը, որը հորինել է բազմաթիվ ու բազմաժանր բարձրարվեստ ստեղծագործություններ, լայնորեն ճանաչված են եղել Սփյուռքի տարածքով մեկ և Հայաստանի երաժշտասեր հասարակայնության շրջաններում:

Բավականին ընդարձակ է իրանահայ արվեստագետների, երգահանների, խմբավարների, երաժիշտ-կատարողների, երաժիշտ-մանկավարժների, պարուսույցների ցանկը: Երիտասարդ սերնդից հիշատակարժան է խմբավար Լորիս ճգնավորյանի անունը, որն այսօր համագոյին համբավի անուն դարձավ՝ Յայաստանի սիմֆոնիկ նվազախումբը վեր հանելով համաշխարհային կատարողական արվեստի պատվավոր ու բարձր աստիճանի:

Իրանահայ ժամանակակից գեղանկարչության ծևավորումը տեղի է ունեցել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Բանաստեղծ Ղև Խոչոր նկարիչ էր, թերևս միակը, որ Իրանի լուսավորության նախարարության որոշմամբ արժանացել է արվեստի շքանշանի:

Սորջուղայեցի նկարիչ Երվանդ Նահապետյանը նշանավոր դարձավ հասարակ մարդկանց կերպարների ստեղծումով. Սնբատ Կյուրեղյանը պատկերում էր նույն գավառի գյուղական կյանքը: Թավշիգարբնակ Աշոտ Քոլոյանը ինքնամփոփ մարդկանց դիմանկարների կերտիչն էր, Թեհրանի նկարիչ Էդվարդ Բապոյանը շահեց «Թանաշա» շարաթաթերթի մրցանակը «Բանտարկյալները». Կտավի համար: Ժամանակակից նկարչության այլազան մարզերում լուրջ նվաճումների հասան Մարգո Գրիգորյանը, Յարություն Մինասյանը: Գույների հանադրության վարպետ են Էդվարդ Այվազյանը, Սեդրակ Նազարյանը: Գեղանկարիչների ցանկը նույնպես շատ ծավալուն է: Նրանցից շատերը ցուցադրվել են Եվրոպական կենտրոններում և Յայաստանում, արժանացել բարձր դրվագատանքի:

Վերջապես իրանահայության մշակութային նվաճումների բարձր ցուցանիշների վկայությունն է Նոր Զուղայի մատենադարանը (կառուցվել է 1907 թվականին, 1931-ին հիմնական ծևավորումն է արել սփյուռքահայ անվանի նկարիչ Սարգսի Խաչատրյանը), որը արվեստի մի կատարյալ թանգարան է: Մատենադարանում պահպանվում են շուրջ 10,0 հազար հնատիպ ու նոր գրքեր, որոնցից 6000-ը հայերեն, ինչպես նաև 683 ծեռագրեր, որոնցից 34-ը մագաղաթի վրա:

Իրանահայ մամուլը նույնպես ունի հարուստ ավանդություններ: Մինչև Սփյուռքի գյուղավորման շրջանը հանայնքում հրատարակվել են երկու տասնյակից ավելի թերթեր ու պարբերականներ: Խոկ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում լույս տեսած զանազան պարբերականների թիվն անցնում է հիսունից: Մեր օրերում, սակայն, խիստ նվազել է իրանահայ մամուլի թվաքանակը: Դա բացատրվում է հայության արտագաղթի պատճառով:

ԹՈՒՐՔԻԱ

(ԴԻ-8887 Ծայրական
բոլոր պատճենների համար և պատճենների համար առաջարկված առաջնային գործությունները)

Իրականում Թուրքիայի հայությունը Սփյուռքի մաս դիտելը այնքան էլ բնականոն չէ, որ չխոսելով արդեն պատմական Հայաստանի մասին: Պատմության ընթացքում երբեք Պոլիսը գավառի նկատմամբ արտասահման չի եղել, իսկ պոլսահայությունն էլ բուն Հայաստանի հայության կողմից չի ընկալվել իրքն օտար ափերի հայություն: Նույնքան տարօրինակ է, եթե Քեսապ ես զնում (Սիրիա) և Հայկական Կիլիկիայի հարավային սահմանի գյուղերը, որ առնվազն յոր-ուր հայուր տարի կպած են կանաչ լանջերին, փորձում են դասել Սփյուռքի բնակավայրերի շարքը: Իրականությունն է ստիպում, սակայն, իրքն Սփյուռքը դիտել: Գեր մեր ժամանակակից իրականությունը...

Համայնքի թվաքանակը զնահատվում է իրու 50–60 հազար մարդ: Անընդհատ նկատվում է նվազման միտում: Ըստ այլազան տվյալների, ականատեսների և ճանապարհորդների վկայությունների՝ անշափ մեծ է թիվը լեռների ծերպերին ծվարած հայկական շենքերի ու հայ ազգաբնակչության, որը խւամացած է, քայլ պատեհ առիթով բացահայտում է իր իրական ծագումը, կամ էլ, եթե նույնիսկ հայ է մնացել, բացարձակ կտրված է աշխարհից և գարնանքով է տեղեկանում, որ աշխարհում կա հայկական պետականություն և հայություն:

Հայությունը հիմնականում կենտրոնացած է Պոլսում: Այստեղ է գտնվում Հայ առաքելական եկեղեցու պատրիարքարանը: Պատրիարքարանի իրավասության տակ են 46 եկեղեցիներ (որոնցից 12-ը գավառում): Կաթոլիկ համայնքն ունի 7, իսկ ավետարանականը 5 եկեղեցիներ և աղոթատներ:

Պոլսի հայության կարևոր հաստատություններից է «Սուրբ Փրկիչ» ազգային հիվանդանոցը, որի նյութականը մաս-մաս հոգուն են կառավարությունը, ՀԲԸՍ-ը, Կյուլպենկյան հաստատությունը: Այնուամենայնիվ, հիվանդանոցի բյուջեն դժվարությամբ է բավարարում ծախսերը, և նկատվում է հաստատությունը աստիճանաբար սահմանափակելու միտում հետագայում այն ծերանոցի վերածելու մտադրությամբ:

Հրատարակվում են «Մարմարա», «Ժամանակ», «Ակոս» թերթերը, «Քուլիս» հանդեսը, «Սուրբ Փրկիչ» ամսագիրը:

Թուրքիայում գործում են ցան հայկական վարժարաններ: Բարձրագույն տիպի է ազգային մշակույթի և հանրային գիտակցության զար-

գացմանը իր խոշոր նպաստը բերած «Կեղրոնական վարժարանը» (հիմնադրված 1886-ին):

Երկրի օրենքների համաձայն բուրժական վերջավորություն կրող ազգանուններով երեխաները, ինչպես և նրանք, որ նախկինում սովորել են ուրիշ դպրոցներում, հայկական վարժարաններում, արծանագրվելու իրավունք չունեն: Ուրիշ խոսքով, ուսումնական հաստատությունները աշակերտական կազմով ապահովելու խնդիրը դառնում է հանրային բնույթը:

Դայկական բոլոր վարժարանները ազգայնացված են: Իրականացվում են պետական ծրագրերը, և հենց կառավարությունն էլ վճարում է ուսուցիչների ամսականները: Մի ժամանակ հայկական բարձրագույն տիպի վարժարանների (լիցեյների) շրջանավարտներն իրավունք ունեին հայկական մյուս վարժարաններում ուսուցչական պաշտոններ վարելու:

Թեկնածուն պարտավոր է կրթություն ստանալ նաև պետական վարժապետանոցում,— այդպիսին եր վերջին տարիներին հաստատված կարգը: Ուրիշ խոսքով՝ ուսուցչական-մանկավարժական անձնակազմով ապահովելու խնդիրը նույնպես սկսում է դառնալ հանրային մտահոգության առարկա:

Սփյուռքի ամենազարմանահրաշ երևույթներից մեկը պոլսահայ ժամանակակից գրականությունն է: Ղետոս Երկրորդ համաշխարհային պատերազմի օրերին, բայց հատկապես հետպատերազմյան շրջանում Պոլսում ասպարեզ իջավ բարձրատաղանդ գրողների բանաստեղծների և արծակագիրների մի ամրող հանաստեղություն:

Այդ հույլի փայլուն ներկայացուցիչներից մեկը՝ բանաստեղծ Անդան Եղբերը, երևույթը գնահատում է իրու «կյանքի փիլիսոփայություն»: «Այն կյանքին որուն մեծ կանցնի մեր ամեն մեկ օրը, ոչ թե երազներու աշխարհին կյանքը»: Եվ իրոք, գրականությունը դարձավ հասարակության զարգացման տվյալ փուլում գերլարված սոցիալական կացության գեղարվեստական վերակերտիչը: Ֆիշտ նույն առաքելությունն իր ուսերին տարավ արվեստը հետպատերազմյան Եվրոպայում, և մանավանդ ու հատկապես իտալական կինոն: Դա նեռութայիշմի հայրարշավի շրջանն էր, և պոլսահայ գրականությունը գտնվեց շատ բարձր, երբեմն անհասանելի թվացող գագաթների վրա: Ամեն ինչ նոր էր այստեղ, թե ձև և թե բովանդակություն: Բայց ոչ պշտուն «նորամոլություն», այլ գեղեցիկ ու ներդաշնակ: Մարդկային տառապանքի, գրկված ու զարկված

մարդու գրականությունն էր դա, բայց զվարթ, մի քիչ հումորախառն, կենսատու ժպիտով հունցված:

Դայլկազուն Գալուստյան, Զահրատ, Զարեհ Խորախունի, Զավեն Պիտոյան, Երվանդ Կովեյյան, Ոորեր Յատտենյան և դեռ շատ ուրիշներ այդ նոր գրականության իրքն կարգախոս ընտրեցին. «Ժողովուրդին հետ, ժողովուրդին համար»: Խոկ պոլսահայ արձակի արցաներից մեկը՝ Դակոր Մնծուրին, եղավ «կարոտի գրականության» վերջին մեծ վարպետը:

ԻՐԱՔ

Դամայնքը ծևավորվել է 1915 թվականից հետո, երբ Իրաքի տարածում ստեղծվեցին հավաքակայաններ, որոնց լուծարումից հետո տեղում մնացած հայությունն էլ կազմեց ներկա համայնքի կորիգը: Այստեղ գործում է Դայ առաքելական եկեղեցու թեմ Մայր աթոռ Ս. Էջմիածնի իրավասության ներքո: Մինչև վերջերս էլ քաղաքական անկայունության և անստուգության պատճառով շարունակվում էր հայերի արտագաղթը Իրաքից: 2003 թ. պատերազմից առաջ Իրաքում ապրում էր շուրջ 12,0 հազար հայություն: Դիմնականում մանր սեփականատերեր էին, արհեստավորներ, մանր առևտուականներ: Կային նաև քժիշկներ, ինժեներներ, պետական ծառայության մեջ գտնվող մարդիկ: 1970 թվականից ի վեր Իրաքի հայ մտավորականության շարքերը համալրվում էին նաև Դայաստանի բուհերում կրթություն ստացած երիտասարդության հաշվին:

Դամայնքի ղեկավար մարմինը թեմական խորհուրդն էր, որի ընտրած Կենտրոնական վարչությունը հայության ներկայացուցիչն էր իշխանությունների մոտ: Երկրի օրենքների թերումով, երբ մանավանդ արգելված էին քաղաքական կուսակցությունները, այստեղ եկեղեցապետական կարգը բավականին ամուլ էր: Կենտրոնական վարչության որոշումները ի գորու էին միայն թեմակալ առաջնորդի հաստատումից հետո:

Դամայնքում գործում էին հետևյալ հասարակական միավորումները: ՀԲԸ Բաղրատի մասնաճյուղը հիմնվել էր 1960 թվականին: Նրա ակումբն ուներ երիտասարդական, մարզական, կար ու ծնի, գեղարվեստական, ինքնագործ խմբակներ, կանանց համձնախումբ:

Երիտասարդական ակումբը ստեղծվել է 1962 թվականին, հետապնդում էր մշակութային և մարզական ծրագրեր: Ինչպես արարական մի շարք երկրներում, ուր արգելված է քաղաքական գործումնեությունը,

այստեղ էլ երիտասարդական ակումբը ՀՀ դաշնակցության դրսնորման ծև էր: Ակումբին կից գործում էին «Կոմիտաս» երգչախումբը, թատերական, մարզական խմբակներ, եստրադային նվազախումբ:

«Տիկնանց մշակութային միությունը» միջոցներ էր հայրայրում չքավոր աշակերտներին օգնելու համար՝ կրթարոշակով, սննդով, զգեստով: Կազմակերպում էր դասախոսություններ, ճաշկերույթ-պարահանդեսներ՝ հասույթը տրամադրելով նպատակի իրազործմանը:

Դայ երկսեռ երիտասարդաց միությունը (հիմնադրված՝ 1926-ին) համայնքի ամենազանգվածային, անկուսակցական կազմակերպությունն էր: Ուներ սեփական ակումբ, որը միշտ մարդաշատ էր, կազմակերպում էր համերգներ, գրական երեկույթներ, ասուլիսներ, թատերական ներկայացումներ:

«Դայ մարմնակրթական ընդհանուր միությունը (ԴՄԸՄ) գտնվում էր ՀՀ դաշնակցության հովանավորության ներքո, հաճախ գործակցում էր «Դայ երկսեռ երիտասարդաց միության» հետ: Ուներ սկաուտական, արենուշական և գայլիկյան բաժնանումներ, ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի, սեղանի բենիսի խմբեր:

Իրաքահայ համայնքը թերևս եղակիներից էր, ուր բոլոր կազմակերպությունների միջև տիրում էր փոխադարձ համագործակցության և հարգանքի ոգին:

Դամայնքում գործում էին հինգ դպրոցներ:

Իրաքում ապրում էր նաև 1,5 հազար կարողիկ հայություն, որ համախմբված էր կարողիկ եկեղեցու շուրջ:

Բոլոր այս տեղեկությունները վերաբերում էին մինչև 2003 թ. Իրաքի դեմ սանձազերծված պատերազմը:

ՀՈՐԴԱՆԱ

Փոքրաթիվ այս համայնքը (շուրջ 3,0 հազար մարդ) ծնավորվել սկսել է հիմնականում հիմնական թվականներին, Մերձավոր Արևելքի գանձական երկրներից եկած հայության հաշվին: Բառասնական թվականների վերջերին, Խորայիշի պետության ստեղծմամբ, Հորդանան փոխադրվեց պաղեստինաբնակ հայերի մեծ մասը: Հոգևոր տեսակետից գտնվում էր Երուսաղեմի հայոց պատրիարքարանի իրավասության տակ: Հովհաննես նշանակվում էր պատրիարքի կողմից:

Օտարազգիների քաղաքական կուսակցությունների արգելված լինելու պայմաններում գործում էին երկու մարզական ակումբներ: ԴՄԸՄ-ի ակումբը, ըստ եռթյան, ՀՀ դաշնակցության գործունեության դրսորման կերպն էր, իսկ «Վարանի» ակումբը, որ Ազգային մարզական միության անունով էր հանդիս գալիս, Ռամկավար ազատական կուսակցության գործունեության խորհուվակն էր: Երկու ակումբներն էլ մարզականից զատ Հորդանանի չափանիշներով լայն մշակութային ծրագրեր էին իրականացնում: Դամայնքում, եկեղեցուն կից գործում էր միակ հայկական դպրոցը:

«Վարանի» ակումբը լայն կապեր էր պահպանում Հայութնիքի հետ: Նրա միջնորդությամբ Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորել են շուրջ 100 հորդանանահայեր, որոնց մեծ մասը (թժիկներ, շինարարներ, ինժեներներ և այլն) ազգօգուտ աշխատանք են տանում համայնքում:

ՈՅ Համայնքի մեջ հեղինակավոր էր Յայ օգնության միության մասնաճյուղը, որին անդամակցում էին շուրջ 130 տիկիններ: Երկար տարիներ ՀՕՄ-ը Հորդանանում պահում էր ծերանոց:

Արմաթի հայությունը՝ Պատրիարքական քաջութակության նկատմամբ մ նույնականացնելու համար առաջին առաջարկը կատարվել է Տիգրան Առաքելյանի կողմէ 1947 թվականի մայիսի 1-ին:

ԽՄԲԱՅԵԼ

Սինէ 1948 թ. արարա-հրեական պատերազմը Խորայելում բնակվող հայերի թիվը (Երուսաղեմ, Յաֆա, Հայֆա քաղաքներ) հասել էր 15 հազարի: Շարունակվող արարա-հրեական կոնֆլիկտի, երկրի տնտեսական դրության սրման հետևանքով մեծ քվով հայեր հեռացել են երկրից: Արտազագրել է հատկապես ունեսող հայերի մեծ մասը:

XXI դարի սկզբների տվյալներով՝ Խորայելում ապրում էին մոտ 1500 հայեր: Հայերի ճնշող մեծամասնությունն զբաղվում էր առևտությունում: Նրանք զլիսավորապես կենտրոնացած էին Երուսաղեմի արևելյան մասում: Հայկական թաղամասը գրավում է Յին Երուսաղեմի մեկ չորրորդը:

Գործուն կազմակերպություններ էին ՈԱԿ-ի մականի տակ՝ Յայ Երիտասարդաց միությունը (ՐԵՄ), ՀՀԴ մականի տակ՝ Յայ մարմնակրթական ընդհանուր միությունը, Երուսաղեմի հայ բարեսիրական միությունը: Բոլոր միություններն էլ ունեն իրենց առանձին ակումբները, որտեղ պարբերաբար անց էին կացվում հանդիպումներ, մշակութային միջոցա-

ոռւմներ: Գաղութում գործում էին թատերական, գեղարվեստական ինքնագործ խմբեր, մարզական թիմեր:

Երուսաղեմի հայոց պատրիարքարանը համազգային, համաքրիստոնեական տարրողության հաստատություն է: Յայոց պատրիարքությունը, որը ստեղծվել է մ.թ. VII դարում, Երուսաղեմի 3 պատրիարքություններից մեկն է: Նա հույս և լատին եկեղեցիների հետ իրավատերն է ու պահապանը Երուսաղեմի քրիստոնեական միջազգային սրբավայրերի ու նրանց հավասար իրավունքով պաշտամունքներ է մատուցում Բերլինի Սուլը ծննդյան և Սուլը հարության տաճարների մեջ, Քրիստոնի գերեզմանի վրա, ինչպես նաև մյուս գլխավոր սրբավայրերում: Այդ սեփականությունը և իրավունքները սրբագործված են դարավոր ավանդություններով և վավերացված են միջազգային օրենքներով և հաջորդաբար իշխող կառավարությունների հրովարտակներով: Պատրիարքարանը հրատարակում է «Սին» ամսագիրը: Գործում է ժամանակակից սարքավորումներով հազեցած նոր տպարան, ուր գունավոր տպագրությամբ լույս են տեսնում տարբեր կարգի հրատարակություններ:

Պատրիարքարանի ծեռագրատանը պահպանվում են մոտ 4 հազար հազվագյուտ արժեք ներկայացնող ծեռագրեր: Գ. Կյուլպենկյան գրադարան-մատենադարանը, որը ստանում է Յայաստանում և Ափյուսքում լույս տեսնող գրեթե բոլոր թերթերը և հանդեսները, ունի հարուստ գրքերի ֆոն: Սիարանությունն ունի իր հոգևոր կրթօջախը՝ ժառանգավորաց վարժարանը, ուր տարբեր հայկական համայնքներից սովորում է 40 սան:

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Յամայնքը կենտրոնացած է Կալկաթայում և ներկայումս բաղկացած է շուրջ 150 մարդուց: Ունի եկեղեցի: Մադրասի հայկական եկեղեցին փակ է:

Յնդկահայ գաղթօջախի ազգային մարմինը եկեղեցական վարչությունն է, որը ղեկավարում է եկեղեցական և ազգային կալվածները:

Յայկական ընկերակցությունը վերակազմվել է 1960-ին: Ծնկերակցության շնորհիվ երկար տարիների պայքարից հետո դատական միջնորդությամբ գաղութի հայությանը վերադարձվեցին Մադրասի եկեղեցու կալվածները, որոնք 1966 թվականից գտնվում էին ուրիշների ծեռքում: Այդ կալվածներից ստացված հասույթներով ֆինանսավորվում են

Եկեղեցին ու վարժարանը: Ընկերակցության գլխավոր նպատակն է ազգային իրավունքների պահպանումը Հնդկաստանի մեջ:

Հնդկաստանում մինչև 1980 թ. գոյություն են ունեցել Հայկական ակումբ, Հայկական մարզական ակումբը. Տիկնանց բարեգործական, Վարժարանի Սանուց միությունները, որոնք այժմ չեն գործում:

Մարդասիրական ծեմարանը համայնքի միակ գործող վարժարանն է: Աշակերտները հիմնականում պարսկահայեր են:

ՊԱՐՍԻՑ ՇՈՑԻ ԵՐԿՐՆԵՐ

Քուվեյթում և Արաբական Էմիրություններում հայերն աստիճանաբար կուտակվել սկսել են XX դարի երկրորդ կեսերին: Դատկապես Հայաստանի Հանրապետության հոչակումից հետո ազատական շուկայի առաջադրած պահանջարկի բերումով անընդհատ ավելի ու ավելի սերտածում են տնտեսական կապերը Պարսից ծոցի երկրների, մասնավորապես, Ռուբայ, Արու Շաբահ քաղաքների հետ:

Տարածաշրջանում ստեղծվել է Հայ առաքելական եկեղեցու թեմ, որը գտնվում է Սեձի Տամն Կիլիկիո կաթողիկոսության իրավասության տակ: Թե՛ Քուվեյթում և թե՛ Եօհրություններում հայերի զանգվածը հիմնականում փոխադրվել է Սիրիայից, Լիբանանից, Իրաքից և Իրանից: Գաղթօջախը, իրը կանոն, նյուրապես բարեկեցիկ է: Շատերը ստեղծել են մեծ ու փոքր բազմաթիվ արհեստանոցներ, վաճառատներ, շինարարական ընկերություններ: Թեպետ նրանց հիմնած ծեռնարկություններում հայերը, օրինակ՝ Քուվեյթում գործող օրենքի պահանջով, կարող են լինել միայն փայատերեր, քանի որ քաղաքացիություն նրանց չի տրվում:

Իշխանությունները ճանաչում են հայերի կրոնական համայնքը: Համայնքների վարչությունները իրավասու են լուծելու անձնական իրավունքի հետ կապված հարցեր: Քուվեյթում գործում են թեմական վարչության ենթակայությամբ դպրոց և ծեմարան: Կա մարզական կյանք, մասնավորապես ֆուտբոլով գրավվող երիտասարդություն և սկաուտական շարժում: Արու Շաբիում և Շարժա-Ռուբայում նույնպես գործում են մեկորյա դպրոցներ:

Ինչպես արաբական շատ երկրներում, այստեղ էլ պաշտոնապես չկան փոքրամասնությունների քաղաքական միավորումներ և ակումբ-

ներ: Այնուամենայնիվ, հստակ դրսնորպում է ՀՀ դաշնակցության առաջատար դերը: Որոշ աշխուժություն ցույց է տալիս նաև ՄԴ հնչակյան կուսակցությունը:

Տարածաշրջանում ռազմական տեսակետից պայքարունավորանգ կացությունը, մասնավորապես, Իրաքա-քուվեյթյան կոնֆլիկտը և Իրաքի նկատմամբ արևմտյան տերությունների ռազմական զայիչ գործողությունները հարցականի տակ են դրել այս ափերում հայկական հետագա կեցությունը: Նույն մտահոգության տեսակետից թերագնահատելիք գործոն չեն նաև Իրանի նկատմամբ կիրառվող սպառնալի քաղաքականությունը:

ԿԻՊՐՈՍ

Երեսնական թվականների կեսերին արդեն 7 հազարի հասած համայնքն այսօր ունի 2–2,5 հազար հայություն: Ծեշտակի նվազումը տեղի ունեցավ 1960 թվականից հետո, երբ հօշակվեց Կիպրոսի անկախությունը, և կղզում ծայր առավ քաղաքական անկայունություն, որը 1963–ին հասցրեց հույն ու թուրք համայնքների քախման, իսկ 1974–ին թուրքիան անպատճի գրավեց կղզու հյուսիսային մասը:

Դայերը կենտրոնացած էին հիմնականում Նիկոսիայում, ինչպես նաև Լառնակայում և ծովամերձ մի քանի փոքրիկ քաղաքներում: Յիմնական գրանցունքը արիեստներ են, մանր ու միջին ծեռնարկատիրությունը, առևտուրը: Կան մտավորականներ, ազատ ասպարեզների և պետական ծառայության մեջ մարդիկ:

Որպես թեմ ենթակա էր Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը:

Դամայնքի ազգային կյանքի դեկավարության գործում վճռական դեր պատկանում էր հանրապետության խորհրդարանի հայության պատգամավորին, որն ընտրվում էր հայության կողմից, երկրի ընտրական օրենքներով սահմանված կարգով: Նրան իրավունք էր վերապահվում մասնակցել հայության հետ աղերսվող հարցերի քննարկմանը, ինչպես նաև կառավարական մարմինների մոտ հետապնդել համայնքի խնդիրները:

Դամայնքում գործում է ՀՀ դաշնակցության տեղական մարմինը, իր երիտասարդական մասնաճյուղերով և ակումբներով: Լուրջ դիրքեր ուներ Դայ բարեգործական ընդհանուր միությունը: Կարևոր հաստատու-

թյուններից էր «Դայ երիտասարդաց միությունը», որի մարզական շատ խմբեր ու թիմեր համակիպրոսյան մակարդակի էին: Նիկոսիայում, Լառնակայում, Լիմասոլում կային եկեղեցուն կից ազգային տարրական վարժարաններ:

Դամայնքի ազգային կյանքի կենտրոնը Մելքոնյան կրթական հաստատությունն էր, որը հիմնադրվել է 1926 թվականին բարերարներ Կարապետ և Գրիգոր Մելքոնյան եղբայրների կտակած միջոցներով: Կտակակատարը ՀԲԸՍ-ն էր, որը և հոգում էր ու վարում վարժարանի գործերը: Իսկ անմիջականորեն կառավարող մարմինը հոգաբարձությունն էր, որը լուծում էր բոլոր ընթացիկ խնդիրները:

Մելքոնյան հաստատությունում տարբեր ժամանակներում մանկավարժական աշխատանք են տարել մեր ազգային մշակույթի խոշոր գործիչներ Յ. Օշականը, Բ. Կանաչյանը, Վ. Թեքեյանը, Վ. Վահյանը, Ա. Պատրիկը և ուրիշներ:

Մելքոնյան կրթական հաստատությունը համափյության նշանակության մի խարիսխ է, որի վրա, ավելի ստույգ, որի շրջանավարտների վրա, ամուր հենքում է շատ ուրիշ համայնքներում ազգային կեցության գործի այս կամ այն բնագավառը: Դաստատությունը հայեցի կրթությամբ կաղողնի վառարան է ամբողջ Սփյուռքի համար: Նաև դերը մասնավորապես շեշտվում է վերջին 25–30 տարիներին, երբ լիրանահայությանը վիճակված ճակատագիրը նվազեցրեց համայնքի կարողությունները:

Վարժարանն ունի վեց կարգ: Դասավանդվում է չորս լեզու՝ հայերեն, անգլերեն, հունարեն, արարեն: Բարձրագույն կարգերում գործում են նաև առևտուի և գիտական բաժինները: Ֆիզիկայի, քիմիայի, մաթեմատիկայի առարկաները մաստուցվում են մի մակարդակով, որպեսզի շրջանավարտներն առանց դժվարության բռնեն Լոնդոնի համալսարանի ընդունելության քննությունները:

Վարժարանի բոլոր տարիների գրեթե 1,5 հազար շրջանավարտների մեջ շատ են հայ ազգային մշակույթին նվիրված անձնավորությունները, ինչպես, օրինակ՝ Ակարիչ Դակոր Դակորյանը, գրողներ Գրիգոր Քեշիշյանը և Կարպիս Սուլեմյանը, լրագրող Շաքե Վարսյանը, երաժիշտ Նուբար Սնգրյանը և ուրիշներ: Վարժարանը հանալիք է նաև Կիպրոսի հայ համայնքի մտավորական շարքերը: Դաստատության նախկին տնօրեն, պատմաբան, դոկտոր Ազապի Նասիրյան-Երմերյանը լուրջ ավանդ նուժեց Դայոց ցեղասպանության խնդիրի գիտական հետազոտության

մեջ վեր հանելով և ընդհանրացնելով Մեծ Բրիտանիայի արխիվային նյութերը:

Սելքոնյան վարժարանը յորանասնական թվականներից ի վեր սերտ կապերի մեջ էր Դայրենիքի հետ: Տարիներ շարունակ Դայաստանը հայագիտական և ուրիշ առարկաների ուսուցիչներ է տրամադրել վարժարանին, առաքել հարուստ գրականություն, ազգային երաժշտական գործիքներ:

ԵԳԻՊՏՈՒ

Ըստ 1927 թվականի մարդահամարի՝ հայերի թիվը 13900 էր: Պետական մարդահամարը իրականացնող ծառայությունը, սակայն, հաշվի չեր առել դեռևս թուրքահպատակություն ունեցող հայերի զանգվածը, որը գրեթե նույնցան էր: Այսպիսով՝ իրականում քանակական թվականների վերջերին հայ ազգաբնակչության թվաքանակը չուրջ 25.0 հազար էր: Խոկ 1954-ին արդեն կազմում էր 40.0 հազար: Դայությունը կենտրոնացել էր Կահիրե և Ալեքսանդրիա քաղաքներուն: Այդ քաղաքներն էլ ներկայացնում էին եկեղեցական երկու վիճակներ, որոնց գավառական ժողովների համատեղ գումարումով ընտրվում էր թեմակալ առաջնորդ:

Դայության մեջ գերակշիռ տոկոս ունեին արհեստավորներն ու ծառայողները, այնուհետև գալիս էին առևտորականները, ազատ ասպարեզի աշխատողները, քանվորները և կալվածատերները: Զարգացման ընթացքում կալվածատերների դասը գրեթե ամբողջապես վերացավ: Քանական թվականների կեսերին նրանք, խուսափելով մրցակցությունից, վաճառեցին կալվածները և հեռացան: Դետագա վայրիվերումների ընթացքում «ոչ ազգային» դրամագլուխը դուրս վանելու եգիպտական քաղաքականության հետևանքով հայության սոցիալական կազմում աստիճանաբար տեղի էին ունենում լուրջ փոփոխություններ: Մյուս դասերի հաշվին ավելանում էր արհեստավորությունը:

Արդեն արդի եգիպտական համայնքի պատմությունը սկսվում է քանական թվականների կեսերից, երբ ծանր մրցակցային պայքար էր ծագել: Եգիպտական դրամագլուխը բոլոր օրինական թե ապօրինի միջոցներով ասպարեզից վտարում էր օտար, այդ թվում և «ոչ ազգային» (հայերի, հույների, իրեաների և այլն) դրամագլուխը, սեփական ազգային շուկան նվաճելու համար: Դայերը մեկը մյուսի հետևից կորցրեցին հրա-

մայական դիրքերը՝ ծխախոտի արդյունաբերության, մետաղագործության, փարերավորման առարկաների, գործվածքեղենի արտադրության և, մանավանդ, առևտրի ասպարեզներում:

Տնտեսության մեջ դիրքերի գիշումը գուգակցվում էր հայության քաղաքացիական և համայնքային արտոնությունների սահմանափակումներով: Բոլոր ասպարեզներում իշխանությունները ուժեղացնում էին իրենց վերահսկողությունը համայնքի ներքին գործերի վրա:

Համայնքի ամրող պատմության ընթացքում հիմնականում գործել են երկու հակընդեմ քաղաքական ուժեր՝ ՀՀ դաշնակցությունը և Ռամկավար ազատական կուսակցությունը: Համապատասխանաբար հրատարակվում էին «Յուսաբեր» և «Արև» օրաթերթերը: ՄԴ հնչակյան կուսակցության ներկայությունը համեմատաբար եղել է ավելի բույլ, երբեմն պարզապես անվանական: Կուսակցությունը հրատարակում էր «Զահակիր» շաբաթաթերթը:

Ինչպես Սփյուռքի մյուս համայնքներում, այստեղ էլ ընթացել է սուր պայքար: Մթնոլորտը հատկապես անշնչելի է եղել քսանական–երեսնական թվականներին. մասնավորապես, գաղութի ազգային իշխանությունների ընտրությունների հարցում: Տեղի են ունեցել բազմաթիվ քայլություններ, նույնիսկ ծեսնամարտեր:

1945 թվականի վերջերին Կահիրեում և Ալեքսանդրիայում ստեղծվեցին «Դայ ազգային խորհուրդներ», որոնք շուտով միաձուլվեցին: «Եգիպտահայ ազգային խորհուրդը», որի մեջ ՀՀ դաշնակցությունից զատ միավորվել էին մյուս բոլոր կազմակերպությունները և միությունները, հիմնականում հետապնդում էր նույն ճպատակը, ինչի համար ստեղծվել էր «Ամերիկահայ ազգային խորհուրդը». Թուրքիայի կողմից բռնագրաված հոդերի պահանջատիրությունը և հայրենադարձության սատարումը: Խորհուրդը լուծարվեց 1948-ին:

Համայնքում հիսնական թվականների սկզբներին գործում էին տասներկու դպրոցներ (5-ական առաքելական և կարոլիկ համայնքներում և 2-ը՝ մասնավոր):

1945 թվականին ստեղծվել է Կահիրեի «Դայ մշակույթի Յուսաբեր» ընկերակցությունը, որը Եգիպտոսում ՀՀ դաշնակցության մշակութային կենտրոնի դեր էր տանում: Նրա ջանքերով կառուցվեց օրաթերթի բազմահարկ, արդիական հնարավորություններով հագեցած շենքը:

1942 թվականին սկսեց գործել «Դայ ազգային հիմնադրամը», որի հիմնադիրների թվում էր Վահան Թեքեյանը: Հիմնադրամը գործում եղաւ:

թյուն ծավալեց համայնքում վաղուց ի վեր գործող «Գեղարվեստասիրաց միության» հովանու տակ, որն էլ, իր հերթին, Ռամկավար ազատական կուսակցության մշակութային կազմակերպությունն էր: Հիմնադրանը լույս ընծայեց Երևու տասնյակից ավելի հայագիտական աշխատություններ: Նրա միջոցներով մշակութային օջախներ ստեղծվեցին Կահիրեաւում՝ «Դայ տունը», Շելիոպոլիսում «Կոկանյան» սրահը, Ալեքսանդրիայում՝ Տիգրան Երևարի անվան Երիտասարդական միության ակումբը: «Միությունը» նպատակադրել էր «համախմբել կազմակերպված մի ուժի մեջ զաղութի Երևան հայ Երիտասարդությունը, վառ պահել և բարձրացնել գեղարվեստի ճաշակը նրանց մեջ, նպաստել նրանց բարոյական և մտավոր գարգացմանը և հայ ոգու պահպանմանը»: Միությունն ուներ ակումբ, որի շրջանակներում գործում էին գրական, Երիտասարդական, Երաժշտական, քատերական, տիկնանց և մի քանի ուրիշ հանձնախմբեր:

ՄԴ հնչակյան կուսակցությունը դեռ 1931-ին հիմնել էր կանանց «Ծարե» միությունը, որը կազմակերպում էր մշակութային ձեռնարկներ: Դնչակյանների հետինակավոր կազմակերպությունն էր «Դայկական ընթերցասրահը», որը գործում էր Կահիրեաւում և Ալեքսանդրիայում:

Դամայնքում գործել են նաև ուրիշ մշակութային միություններ: Կազմակերպություններ:

Արդեն քանական թվականներին գործել են «Աղամյան», «Եգիպտահայ դրամատիկ», «Եգիպտահայ կոմեդի» թատրոնները, սակայն այդ խմբերի գործունեությունը Երևար չտևեց համայնքի ներսում ծայր առաջ քաղաքական սուր պայքարների հետևանքով: Ներկայացման, դերասանի կամ թեմադրիչի որակը, բուն թատրոնի ճակատագիրը կախված էին կուսակցական պատկանելիությունից: Թատրոնի վերականգնման փորձեր արեցին «Դամազգայինը», «Դայ գեղարվեստասիրացը», «Տիգրան Երևարը»: Քայլ արդյունքը միշտ նույնն էր: Ի վերջո պրոֆեսիոնալ թատրոնը փոխարինվեց մշակութային միությունների թատերախմբերով:

Խմբավար Գ. Արիստակեսյանը թեմադրեց «Թմբկաբերդի առումը» և «Անուշ» օպերաները, որոնք Ալեքսանդրիայի և Կահիրեի սրահներում բազմից կրկնվեցին 1923–25 թվականներին: Դամայնքում տարբեր տարիների գործել են քազմարիվ նվազախմբեր և երգչախմբեր: Քառասնական թվականների սկզբներին հենց այստեղ ասպարեզ իջավ ապագայի մեծ երգչուիկ Գոհար Գասպարյանը, այստեղ իր թեմբելը կատա-

թեց Միհրան Երկարը, որոնք հայրենադարձվելուց հետո իրենց հաստատում տեղը գրավեցին հայ մշակույթի Երկնակամարում:

Դայ ազգային մշակույթի գանձարանում խոշոր ներդրում է արևի եղիպտահայ կերպարվեստը: Երվանդ Դեմիրճյանի, Կահրամ Սամուկյանի, Տիրան Կարապետյանի, Պարույր Պարտիզանյանի, Օնիկ Ավետիսյանի, Ալ. Սարուխանի անունները լայնորեն հայտնի են համայնքի սահմաններից դուրս: Նկարիչներ Բյուզանդ Գոճամանյանի և Դակոր Դակորյանի կտավները նրանց հեղինակներին բերել են համաշխարհային արվեստասեր հասարակայնության ճանաչումը:

1952 թվականին Գ. Խասերի իշխանության գլուխ անցնելուց հետո Երևրի ներքին տնտեսական քաղաքականությունը, ծայր առաջ պատերազմը Սուեզի ջրանցքի ազգայնացման առիթով անզլո-ֆրանսիական միացյալ ուժերով Եգիպտոսի դեմ, արարա-իսրայելյան անվերջանալի հակամարտությունը դրդեցին հայ համայնքի քայլայման պրոցեսը: Երբեմնի հարուստ ազգային և մշակութային ավանդույթներով գաղութում ներկայում (2003 թ.) մնացել է շուրջ 4.0 հազարի հասնող հայություն:

Դայերի թիվը Սույամում շուրջ 200 է, որոնք մեծ մասամբ բնակություն են հաստատել Երևրի մայրաքաղաք Խարբումում: Դիմնականում վաճառականներ են, փոքր մաս են կազմում գրասենյակային աշխատողները և արհեստագորները:

Դայերի թվի նկատելի այս նվազումը հիմնականում բացատրվում էր որոշ շրջանում Սույամում տարվող մասնավոր-սեփականատիրական ծեռնարկությունների ազգայնացմանը, որի հետևանքով սեփականատեր հայերի մի մասը արտագաղթել էր Անգլիա, Կանադա, Ավստրալիա, ԱՄՆ և այլ երկրներ:

Դամայնքի մշակութային և կազմակերպչական աշխատանքները դեկավորում էր ընդհանուր ժողովի կողմից ընտրված Սույամահայ ազգային վարչությունը: Կա «Ա. Գրիգոր Լուսավորիչ» եկեղեցի:

Դամայնքում գործում էր Երիտասարդական «Դրամտ» ակումբը և մարզական համայիրը:

Դամաձայն համայնքի կամոնադրության կուսակցական գործունեությունը գաղութում արգելված էր: Դամայնքը Խարթումում ուներ իր սե-

փական դպրոցը, որը կառուցվել է 1930-ին, և եկեղեցի 1937-ին: Դպրոցն ամենօրյա բնույթի էր և դասավանդումը կատարվում էր հայերենով: Դպրոցին կից գործում էր երեքամյա մանկապարտեզը: Դպրոցում ուսուցումը շարունակվում էր ինչն տարիի: Ըստ 1989-ի տվյալների՝ դպրոցում սովորում էին 23 աշակերտներ:

Դամայնքը բավականին ունեսոր էր: Միջոցները հիմնականում գոյացել էին առանձին անձանց նվիրատվություններից: Ստացվող եկամուտները լիովին ծածկում էին դպրոցի, մանկապարտեզի, ակումբի պահպանության և այլ միջոցառումների համար կատարվող ծախսերը:

16800 քառ. մետր տարածություն վլա կառուցված Դայկական ակումբը գաղութի բոլոր միջոցառումների կենտրոնն էր:

ԵԹՈՎՊԻԱ

1925 թվականին Աղիս Աբերայում հիմնադրվեց հայկական եկեղեցի, իսկ 1935 թվականին բացվեց «Գևորգյան» ամենօրյա վարժարանը: «Փյունիկ» աշակերտական շարաբարերը ունեցել է 2000 օրինակ տպաքանակ և հրատարակվել է մինչև 1973 թվականը: Բոլոր այս տվյալները վկայում են, որ մինչև գինվորական իշխանությունների հաստատումը երովպիայում եղել է լուրջ թվով և ազգային լեցուն կյանքով ապրող համայնք, ունեցել է իր ազգապատկան հողերն ու կալվածները: Դատկապես հաջողակ են եղել կաշեգործության ասպարեզում:

1993 թվականի տվյալներով՝ ապրում էին դեռևս շուրջ 1200 հայեր, որոնք կազմակերպված էին իրրև երովպահայոց հովվություն: Դետագյում արտագաղրն ընդունեց ուժեղացված տեմպեր: Այժմ (2003 թ.) համայնքի անդամների թիվը մոտավորապես 300 է:

ԱՎԱՏՐԱԼԻԱ

Դամայնքը կազմավորվել է վարչունական թվականներից սկսած, առավելապես Եղիպոսից, Միջին և Մերձավոր Արևելքից արտագաղրված հայությամբ: XXI դարի սկզբների տվյալներով՝ թվաքանակը շուրջ 25–30 հազար էր: Կենտրոնացած էին Սիդմեյ և Մելքոնյան հանգստի նոր համայնք՝ բավականին ստվար էր գործարանային բանվորնե-

րի խավը՝ շուրջ 40 տոկոսը: Պետական հիմնարկներում ժառայողները համայնքի ընդհանուր թվաքանակի շուրջ 30 տոկոսն էին կազմում, 10 տոկոսի չափով կային արհեստավորներ և առևտրականներ, նույնքան խոշոր ու միջին արդյունաբերողներ, և նույնքան ազատ գրադարձության պարապուներ:

Դամայնքի ազգային կառույցը, ասես, Եգիպտոսում գոյություն ունեցածի ճշգրիտ պատճենն էր, պարզապես փոխառնված և տեղադրված Ավստրալիայում: Եկեղեցապետական կարգը, սակայն, Արևմտյան քաղաքակրթության այս հեռավոր ավստրալիական հարկի տակ արդեն խև չէր դիմանում քննության: Աշխարհիկ կազմակերպություններն ու մարմինները, անկախ նրանց քաղաքական պատկանելիությունից, հաճախ հոգնոր իշխանություններին հրավիրում էին գրադվել միայն հավատի սպասարկման հարցերով:

1968 թվականից ի վեր ստեղծվել է Ավստրալիայի և Նոր Զելանդիայի թեմ Մայր աթոռ Ս. Էջմիածնի հրավասության ներքո: Թեմական խորհուրդը քաղկացած է 7 անձից. 4–ը Սիդնեյից, 3–ը Մելբուրնից: Սիդնեյի և Մելբուրնի եկեղեցական վարչությունները՝ 11–ական մարդուց: Դայ ազգաքանակչության 6 տոկոսը պատկանում էր կաթոլիկ հավատին, և երկու տոկոսի չափով էլ ավետարանական եկեղեցուն:

Դամայնում գործում էին ազգային բոլոր կուսակցությունները:

ՍՌ հնչակյան մասնաճյուղը ստեղծվել է 1983 թվականին: Նրա մականի տակ էին Դայ մարմնամարզական միության (ՀՍՍ) մասնաճյուղը՝ ֆուտբոլի և բասկետբոլի թիմերով (տղամարդկանց), կանանց միության «Մարո» մասնաճյուղը, «Նոր սերունդ» մշակութային միության մասնաճյուղը: 1933–ից հրատարկվում էր «Նոր սերունդ» երկշաբաթերթը, որը 1987–ից հետո վերանվանվեց «Նոր սերնդի ծայն»—ի:

ԴԴ դաշնակցության շրջանային մարմնի դեկավարությամբ գործում էին «Դրո» կոմիտեն, «Դամազգային» մշակութային միության մասնաճյուղը: Կերպինս հիմնադրվել է 1979 թվականին, ուներ գրական և մարզական հանձնախմբեր, երգի–պարի համույթ, «Դակոր Պարոնյան» թատերախումբ: Դրատարակվում էր «Արմենիա» ամսաթերթը:

Ումկավար ազատական կուսակցության կազմակերպությունը գործում է 1976 թվականից: Նրա նախաձեռնությամբ ստեղծված է «Դայ հրավանց խորհուրդ», որը տեղական իշխանություններին և հասարակական կարծիքին ներկայացնում էր Դայ դատի հարցերը: Արդյունավետ գործունեություն էր ծավալում «Թեքեյան» մշակութային միության

մասնաճյուղը, որն ուներ տիկնանց հանձնաժողով, թատերախումբ: Վերջինս համայնքին տարեկան երեք ներկայացում էր ցուցադրում: Դրատարակվում էր «Միություն» շաբաթաթերթը: ՀԲԸ մասնաճյուղեր կային Միունիում և Սելրունում: Միությունն ուներ տիկնանց հանձնախումբ, թատերախումբ:

Դամայնքում կային շատ ուրիշ կազմակերպություններ, Միունիյի եկեղեցու երիտասարդաց և տիկնանց միություններ, «Դայ հանգստյան տուն» միությունը («Ծովինար» ծերանոց), Ավստրալահայ ընկերակցությունը, Դայ պատմագիտական ընկերակցությունը (գործակցում էր «Ավստրալահայ արքայական ընկերության» հետ), «Սելրունի ֆուտբոլի թիմը», «Իրանահայ միությունը» (1980-ին հիմնված), նրանից 1985-ին առանձնացած «Իրանահայ ուսումնասիրաց միությունը» և այլն:

Կարողիկ համայնքի, «Դամազգային» մշակութային և ՀԲԸ միության ամենօրյա վարժարանները լավ կազմակերպված, հարուստ հնարավորություններով հաստատություններ էին: Վարժարանների համար գնվել են քաղաքից հեռու, գեղատեսիլ բնության գրկում ընդարձակ տարածություններ: Աշակերտները փոխադրվում էին վարժարանների սեփական տրանսպորտով: Կային նաև մեկօրյա ուրիշ վարժարաններ:

Վերը թվարկված մամուլի օրգաններից զատ Միունիում հրատարակվել են նաև կրոնակեղեցեական բնույթի «Լույս», «Շույս», «Զայն» ամսաթերթը: Յոթանանական թվականների վերջերից հայ հասարակական կարծիքին լուր էին հաղորդում նաև Սելրունի երկու և Միունիյի մեկ ռադիոժամերը:

Վերջին տասնամյակում աշխուժացած համայնքի բազմազան կապերը Դայրենիքի հետ: Դայաստան այցելեցին աշակերտական խմբեր, հասարակական և մշակութային գործիչներ, ուսուցիչներ, հայ գիտնականներ, մամուլի և ռադիոժամերի աշխատակիցներ, գործարար շրջանների ներկայացուցիչներ: Դամայնքի ազգային մթնոլորտի ավելի թանձրացմանը նպաստեցին հայրենիքից հրավիրված մշակութային խմբերը, կատարողական բարձր վարակ վարակության տեր արվեստագետները: Դամայնքը իր անհապաղ օժանդակությունը թերեց երկրաշարժից տուժած շրջաններին հանգանակելով շուրջ մեկ միլիոն աներիկյան դոլարի գումար:

ԵՎՐՈՊԱ

Հայաստանը ՏԾՇԻ ԴՐԱՅՎԱԿԱՆ ԽՈՎԱՅՐ ԽՈՎԱՅՐ ԽՈՎԱՅՐ
- ՁԱ ՇԱՅՆՇԽՈՎԱՆ ՇԻՆԱՐԱ ՄԱՅԱ ՄԱՅԱ ՄԱՅԱ ՄԱՅԱ ՄԱՅԱ ՄԱՅԱ ՄԱՅԱ ՄԱՅԱ

Եվրոպայում դժվար է գտնել մի երկիր, ուր հայ չլինի, մանավանդ վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում, երբ Սերծավոր ու Սիցին Արևելքի հայությունը հոսեց դեսի Կենտրոնական Եվրոպա ու Ականդի նավայան երկրներ: Բայց որոշ վայրերում, օրինակ՝ Ղանջայում, դեռևս (2003 թ.) տեղի է ունենում համայնքի սկզբնավորության պրոցեսը կամ ել փոքրարիվության պատճառով դեռ վար է կազմակերպվելու մասին մտածելը:

Ենիստանում կան (2003 թ.) բազմաթիվ մարդիկ, որոնք գիտակցում են, թե իրենց նախնիները հայեր են եղել: Ակսվել է ծագումնաբանական կարգի հետաքրքրասիրության մի պրոցես: Վերջին տարիներս նախկին ԽՄՀՄ-ից այստեղ են հայտնվել բազմահազար հայեր: Չունգարիայում վաղեմի գաղութի վերջին մնացորդները կիրակի օրերը դեռ բաց են պահում հայ կարուկի եկեղեցու դռները, փորձում են մշակութային գործունեություն ծավալել:

Խսպանիայում կան մի քանի ընտանիքներ, որոնք բավականին հայրենասեր են և անպատճառ բացահայտվում են երկիր ժամանած որևէ հայի ընդունելու և ճանապարհելու համար:

Պորտուգալիայում և ընդամենը մի քանի ընտանիք է ապրում: Այստեղ, սակայն, գտնվում է Գալուստ Կյուլպենկյան ֆոնդի կենտրոնատեղին: Ֆոնդը հաստատվել է մեծ բարերարի մահից հետո՝ 1956 թվականին, իբրև միջազգային բարեխրական կազմակերպություն, որը նպաստներ է հատկացնում առանց ազգային և դավանական խորականության: Ամեն պարագայում միջոցների առյուծի բաժինը տրամադրվում է Պորտուգալիայի զանազան կազմակերպություններին: Կենտրոնական վարչությանը անդամակցում է Կյուլպենկյանի դստեր որդին՝ Սիքայել Եսայանը, և մինչև 1997 թվականը անդամակցում էր նաև եղբար որդին՝ Ռոբերտո Կյուլպենկյանը: Ֆոնդն ունի հայկական բաժին (տնօրին Զավեն Եկավյան), որն ամենամյա հատկացումներ է կատարում Սփյուռքին և Ղայաստանին հիմնականում կրթական, առողջապահական, գիտական և մշակութային ծրագրերով: Երկրաշարժի առիթով ֆոնդը հավելյալ 1,5 միլիոն դոլարի նպաստ տրամադրեց Ղայաստանին:

Ռոբերտո Կյուլպենկյանը խոշոր պատմաբան գիտնական է, որը մեկ տասնյակից ավելի ծավալուն աշխատություններ ունի արևելագիտական մարզում, մասնավորապես հայ-պորտուգալական, վրաց-պորտու-

զալական կապերի ուսումնասիրնան բնագավառում: 1992 թվականին ընտրվել է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի անդամ: Զավեն Եկավյանը բանասեր պատմաբան է, ժրագան, հայրենասեր գործիչ, արժանացել ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտորի կոչման:

ՖՐԱՆՍԻԱ

Ժամանակակից ֆրանսահայ գաղութի ծեսավորումը տեղի է ունենում քանական թվականներին: Յայ ազգաբնակչության մեխանիկական աճի տեմպերը համազոր էին ԱՄՆ-ի հայ ազգաբնակչության աճի տեմպերին: Գրեթե տասնապատիկ անգամ 60-70 տարիների ընթացքում: Քսանական թվականների սկզբներին 30-50 հազարանոց համայնքը այսօր կազմում է շուրջ 400 հազարանոց մի վիրխարի զանգված: Ընդ որում, ֆիզիկական աճի միտումը շարունակվում է հիմնականում Սերծավոր և Միջին Արևելքից ու Հայաստանից արտագաղթող հայության հաշվին:

Եթե ուշադրությամբ դիտելու լինենք հայության տեղաբաշխման աշխարհագրությունը, ապա կարելի է հանգել մի օրինաչափության. ֆրանսահայ համայնքի ծեսավորման տարիներին հայությունը առանցք էր ընտրել Մարսել-Փարիզ երկարուղին տարածվելով նրա երկայնքով մեկ գույգ կողմերից: Դետագա տարիների նույնիսկ խոշոր հավելումները հիմնականում չեն խախտել օրինաչափությունը՝ ամրացնելով և խտացնելով արդեն իսկ յուրացված գետինը: Դա բացատրվում է Առաջին համաշխարհային պատերազմից հետո այդ գժի վրա նոկած Մարսելի, Ռոն Ալպյան և Փարիզի շրջանների մեջ կարիքով՝ աշխատուժի նկատմամբ և շարժունակության մեջ դյուրություններով (երկարուղային տրանսպորտ), որով աստիճանաբար կատարվում էին ժողովողագրական ներքին տեղաշարժերը՝ գյուղերից ու փոքր քաղաքներից դեպի ավելի խոշորները, Մարսելում, Լիոնում և Փարիզում հիմնական զանգվածի կուտակման վերջնական արդյունքով:

Մի երևույթ ևս ուշադրություն է գրավում: Դամայնքի գոյավորման առաջին տասնամյակում հայության զերակշռող մեծամասնությունը, մինչև իսկ 80 տոկոսը բանվորություն էր անում ամենածանր արտադրությունների մեջ՝ տեղացիների վաստակից բավականին նվազ օրավարձի պայմաններում:

«Բանվորություն» բառը նույնիսկ այնքան էլ ճշգրիտ չէ: Ֆրանսիա-

յում հայտնված հայությունը մեծ մասամբ քուրքական յաթաղանից մազապուրծ հայ գյուղացիությունն էր, որ գործարան կամ հանքախորշ էր մտել առանց տարրական մասնագիտական որակավորման: Այս կացությունը բնութագրական էր նաև Ամերիկայի հայության համար:

Եվ չնայած 1929–33 թվականների ճգնաժամը լրջորեն և առաջին հերթին հարվածեց հենց այս զանգվածին իրը օտարականների և իրը որակավորում չունեցողների, ֆրանսահայությունը հարյուրներով ու հազարներով լրացրեց գործազրկների բանակը, ընկերային գիտությունների համար արտաքինից գրեթե անբացատրելի մի ոստյունով նույն այս զանգվածն արդեն երեսնական թվականների կեսերից սկսեց նվաճել իր բնակված վայրերի մանր–արհեստավորական, մանր–վաճառականական, սննդի և սպասարկման ոլորտի ինֆրակառուցվածքի շոշափելիորեն ազդեցիկ դիրքերը: Ընդ որում, այնպիսի մի հաջողությամբ, որ արդեն հաջորդ երկու–երեք տասնամյակների ընթացքում (պատերազմը տևարար հետաձգեց շարժներացը) այդ զանգվածը իրը կանոն դարձավ իր տան ու արտադրության միջոցների սեփականատեր:

Այս կերպարանափոխությունը, որ երկրորդ գլխում մենք կոչել ենք «Մամիկների հեղափոխություն», իրոք, գալիս էր ընտանիքի ծայրահեռ աշխատանքային լարման հետևանքով: Խնայողության շնորհիվ կուտակված միջոցներով դրվում էին գործի մեջ հիշյալ ինֆրակառուցվածքի սահմաններում, հետճնաժամանակին կոնյունկտուրան խիստ նպաստեց գործի գարգացմանը, և ի վերջո ստացվեց հայտնի արդյունքը:

Այսպիսով՝ նախկին գյուղացին Ֆրանսիայում անցավ ապահասակարգայնացման սոցիալ–հոգեբանական ժամր ուղիով, բայց չհասցրեց ծնավորել թե՝ հոգեբանորեն, թե՝ գիտակցորեն, իրը նոր դասակարգի բանվոր դասակարգի մաս, երբ կրկին վերադարձավ իր արմատին, բայց արդեն որակական նոր մակարդակի վրա: Այսինքն՝ մանր տնտեսատեր, մանր ապրանքարտադրող գյուղացին վերածվեց դարձյալ մանր տնտեսատեր, մանր ապրանքարտադրող արհեստավորի, մանր վաճառականի, թեյարանի կամ սրճարանի տիրոջ:

Պատահական է արդյոք, որ Խորհրդային Հայաստանից արտածվող դասակարգային քարոզը, երբ ֆրանսահայ կամ ամերիկահայ աշխատավորությանը դիմում էին իրը համաշխարհային պրոլետարիատի մի մասի, զանգվածի մեջ արձագանք չեր գտնում կամ գտնում էր միայն իրոք դասակարգային գիտակցության եկած փոքրարիկ խավի մեջ:

Ֆրանսահայությունը միշտ կապված մնաց Հայրենիքին, այդ թվում

յուրովի կապված մնաց նաև ՀՅ դաշնակցությունը իր հետևորդներով, որովհետև քաղաքական պայքարի առարկան խորհրդային Դայաստանը լինելով, կամա թե ականա, քննադատության թե դրվագանքի նյութը հենց նույնն էր, և հարցը պլոտվում էր միշտ նրա շուրջ: Բայց զանգվածը իր ամբողջության մեջ Դայրենիքի հետ կապվում էր ոչ թե դասակարգային, այլ ազգային գիտակցության և հոգեբանության մակարդակով:

Վերջապես մի երրորդ դիտում ևս: Ֆրանսիան, իսկ ավելի ստուգ՝ Փարիզը, երկար ժամանակ ծառայեց իրը Սփյուռքի ոչ պաշտօնական կենտրոն: Անշուշտ, չունեցավ նույն դերը, ինչ որ վերապահված էր հետագայում Բեյրութին: Վերջինս ազգային-մշակութային կյանքի վառարանն էր, համասփյուռքյան կադրերի դարբնոցը: Փարիզը այդպիսի դեր չինաղաց: Նրա առաջելությունը հիմնականում քաղաքական էր, բայց քանի որ Սփյուռքի գոյափորման և հետագա որոշ տարիներին առաջատարը հենց քաղաքական գործոնն էր, մանավանդ որ դեռ չեր ստեղծվել թերութանձնան երևույթը, ուստի Փարիզը տարավ կենտրոնի դերը:

Եղելությունը բացատրվում է մի շարք գործոններով: Դիմնականը Փարիզի որպես համաշխարհային դիվանագիտության և քաղաքական աղերսների խաչածնան միջազգային հրապարակի պատճական փաստն էր: Իսկ տվյալ պարագայում կոնկրետը դա Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո հայության ճակատագիր Փարիզի հետ կապվածվելու իրողությունն էր: Այստեղ կնքվեց 1920 թվականի Սերի (Փարիզի արվարձան) պայմանագիրը: Այստեղ իրենց գործունեությունը ծավալեցին թե Ազգային պատվիրակությունը, թե Դայաստանի Դանորապետության պատվիրակությունը: Այստեղ վերջին հաշվով նախապատրաստվեց Լոգանի խորհրդաժողովը (որը Փարիզից բնավ հեռու չէ):

Պատճական այս գործոնների թերումով հայության ճակատագրի լուծման ակնկալությամբ Փարիզում կենտրոնացավ հայ քաղաքական միտքը՝ իր հիմնական չորս՝ հնչակյան, դաշնակցական, ռամկավարական և համայնավարական տարատեսակներով: Փարիզում խարսխվեցին քաղաքական հոսանքների շատ դեկավար մարմիններ: Նույնիսկ ԴԲԸ կենտրոնական վարչությունը որոշ ժամանակ հարմար գտավ Փարիզը:

Սփյուռքի կենտրոնավայրի այդ դերը գիտակցել են մնացած համայնքները: Մեկից ավելի անգամներ տարրեր քաղաքական մարմինների խողովակով դիմումներ են արվել Փարիզ, օրինակ՝ Շունաստանից,

Սիրիայից, Բուլղարիայից և այլն տեղի տագնապները Կենտրոնի միջամտությամբ լուծելու ակնկալությամբ:

Այնպես որ ֆրանսահայության, մասնավորաբար, փարիզահայության պատմություն գրելը նշանակում է ինչ—որ չափով սիյուռքահայության պատմությունը շարադրել: Նկատի ունենալով, սակայն, որ նախորդ գլուխներում մենք արդեն շոշափել ենք նման կարգի ընդհանրական հարցերը, պիտի բավարարվենք առավել կոնկրետ տվյալները հադրդելով:

XX դարավերջի որոշ տվյալներով Ֆրանսիայի մայրաքաղաքի, նրա մերձավոր արվարձանների և շրջակա արքանյակ քաղաքների հայ ազգարնակցությունը շուրջ 100 հազար էր: Արդեն մի այնպիսի քաղաք, ինչպիսին Ալֆորվիլը է (Փարիզի արվարձան), ասես, բուն իսկ հայկական լինի, այնքան որ շատ ես լսում հայոց լեզուն փողոցում, հանրային տրանսպորտի մեջ, սրճարաններում թե շուկայում: Դամայնքը կազմակերպված է իրքն թեմ ընտրովի թեմական վարչությամբ:

Լիոնի և շրջակայրի (Ռոն–Ալպյան շրջանի) հայությունը նույնպես շուրջ 100 հազար էր: Այստեղ էլ առանձին փոքր ու միջին քաղաքներում հայ ազգարնակցության մեջ կուտակումներ կան: Վալանսում, օրինակ, կան հայկական անվանումներով փողոցներ, մեկ հրապարակ, և հազվադեպ չեն, որ փողոցում կարող ես լսել հայերեն խոսք: Դամայնքը կազմում է առանձին թեմ:

Մարսելում ու ծովամերձ բնակավայրերի շրջագծում հայ ազգարնակցության թվաքանակը գնահատվում էր իրքն 200 հազար: Դարավային Ֆրանսիայի թեմը ժամանակագրական առումով առաջինն է, որ ստեղծվել է երկրի տարածքում: Ֆրանսահայ բոլոր երեք թեմերը գործում են Մայր աթոռ Ս. Էջմիածնի հրավասության ներքո:

Դիշյալ երեք հիմնական շրջաններից դուրս Ֆրանսիայի տարրեր քաղաքներում ևս կա անհամեմատ ավելի փոքրաթիվ հայություն:

Ֆրանսիայի կարուիկ դավանանքի հայությունը նույնպես կազմակերպված է իրքն թեմ և թվաքանակով ավելի զորեղ է, քան ավետարանական համայնքը: Կերպիններու ունեն իրենց աղոթատները և դրանց կից կրթական հաստատություններ Փարիզում, Լիոնում և մի քանի ուրիշ բնակավայրերում:

Անշուշտ, յուրաքանչյուր բնակավայրի հայությունն ունի իր ներքին խնդիրները, բայց ֆրանսահայության ազգային կեցությունը շատ ավելի միասնական հանգույցներ է պարունակում, քան, ասենք, ամերիկա-

հայության պարագայում: Քաղաքական հոսանքների թե բարեսիրական կազմակերպությունների, մշակութային, երիտասարդական, մարզական, տիկնանց և այլ միությունների գործունեությունն ընդգրկում է երկրի ամբողջ տարածքը, քանի որ, իբրև կանոն, բոլոր այդ կազմակերպություններն ու միություններն ունեն իրենց մասնաճյուղերը հայարնակ վայրերում:

Ֆրանսահայությունը չունի իր լորրին պետական իշխանությունների մեջնայի մոտ, ինչպես դա ունի ամերիկահայությունը: Թերևս զարնանալի չէ, որ երեք-չորս տասնամյակ շարունակ լինելով սփյուռքահայության կենտրոնը քաղաքականության բերումով, փարիզահայության ազգային ուժերը այդպես էլ չկարողացան լուծել հաջող քաղաքականություն վարելու մի կարևոր օղակի ստեղծման խնդիրը, օրենսդիր և գործադիր իշխանությունների մոտ հայ լորրիստական մշտական ենթաշերտի գոյության խնդիրը:

Այսօր իսկ հարցը նույն սրությամբ կանգնած է Եվրախորհրդարանի առնչությամբ, մանավանդ, եթե նկատի առնենք համաեվրոպական պրոցեսների հետագա գարգացման, ինտեգրացիայի միտումները:

Ֆրանսահայ քաղաքական ուժերից երկուսը անհրաժեշտության պարագայում, այսինքն դեպքից դեպք, փորձել են ակնկալվող լորրիստական դերը կատարել միջնորդված ճանապարհներով: Դժ դաշնակցությունը Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության և հայ համայնակարները Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության միջոցով երթեմն նույնիսկ հաջողացրել են իշխանությունների հայանպաստ որոշումները ստանալ: Մեր օրերին (2003 թ.) այդ ավանդական մեթոդի կիրառումը դրսեսրվում է նաև «Ֆրանկոպարմինիշն» կազմակերպության գործունեության մեջ, ճիշտ նույն Ֆրանսիայի սոցիալիստական կուսակցության խողովակով: Եվ, անշուշտ, արձանագրվում են, երթեմն, որոշ հաջողություններ:

Խոսքը բուն մեթոդի արդյունավետության մասին է, մանավանդ, եթե Սփյուռքն ունի ԱՄՆ-ում գործող «Դայկական համաժողով» կազմակերպության մշտական առկայության օրինակը:

Քանի որ համեմատություն տարիամբ ամերիկահայության հետ, արժե մի քանի կետ և շեշտել հարցերն ավելի հստակ պատկերացնելու համար:

ա) Զանգվածի մասնակցությունը ազգային-հասարակական կյամքում: Թե՛ ԱՄՆ-ում, թե՛ Ֆրանսիայում հայ զանգվածի մասնակցությունը

համայնքի կյանքին ահավոր ցածր է: Որոշ դիտումների համաձայն հայության մինչև 75–80 տոկոսը այդ երկրներում դուրս է թե՛ եկեղեցու, թե՛ քաղաքական հոսանքների, թե՛ հայրենակցական կամ մշակութային միությունների ազդեցության ոլորտից: Դայաստանին պատահած ողբերգական երկրաշարժի առիթով հանգանակիչ մարմիններին ներկայացել են հարյուրավոր և հարյուրավոր հայ մարդիկ՝ իրենց ավանդը մուծելու համար, որոնք նախկինում երբեք չեն մասնակցել համայնքի որևէ միջոցառման, չեն հետաքրքրվել համայնքի կյանքով:

բ) Ուժացման երևույթը գրեթե նույն արագությամբ է ընթանում, ինչ—որ ԱՄՆ-ի համայնքում: Երրորդ սերնդի երիտասարդներից շատերը դժվարանում են կամ պարզապես հայերեն խոսել չգիտեն: Այդ սերնդի շրջանում բավականին խոշոր է խառնամուսնությունների տոկոսը: Դայությանը պատկանելու գգացումը, սակայն, այդ սերնդի մոտ բնավ էլ չի մարել: Դայ ազատագրական շարժումը, որ ծնունդ առավ յոթանամական թվականներին և, որ մի քանի ահաբեկչական գործողությունների պատճառով անիրավի կոչվեց «Դայ ահաբեկչություն», ներգրավել է նաև հենց այդ սերնդի մարդկանց: Ֆրանսիայի պարագայում հիմնականում երկրում ծնված ու մեծացած երիտասարդությանը, որոնց մի լուրջ մասը նույնիսկ հայերեն չգիտեր կամ չէր կարող գրել և ոչ էլ կարդալ հայերեն լեզվով:

գ) Ինչպես և ԱՄՆ-ում, այստեղ ևս վերջին տասնամյակում (իննութնական թվականներից ի վեր) նկատվում է բավականին լուրջ լարվածություն տեղացի «բնիկ» հայության և Սերծավոր ու Միջին Արևելքից արտագաղթածների միջև: Լարվածությունը դրսնորովում է մանավանդ ազգային—քաղաքական, մշակութային կյանքի ղեկավարությանը հավակնող ուժերի մեջ: «Լիդերության» կամ «լիդերների» պայքարը բնավ էլ աթոռակրիկ չէ, ինչպես պարզունակ մեկնարանվում է երբեմն Սփյուռքում թե Դայաստանում: Դայ ժողովորդի առջև ծառացած կենսական խնդիրների լուծման ճանապարհների ընտրության և, համապատասխանաբար, Սփյուռքի, նրա առանձին խոշոր հատվածների դիրքորոշման հարցն է տարածայնության առարկան:

Այդ կարգի պայքարներ կարող են ծագել գորեղ քաղաքական կազմակերպության շրջանակներում, որովհետև բնականաբար նման կազմակերպությունը պետք է հավակնի «լիդերության»: Ֆրանսիայի պարագայում հետպատերազմյան գրեթե ամբողջ շրջանում ազգային գործերի հրապարակը հանձնված էր ՀՀ դաշնակցությանը: Եվ դա պատահեց ոչ միայն ՀՀ-ի ծիգերի շնորհիվ:

Դամկավար ազատական կուսակցությունը, երեսնական թվականների կեսերին իր Կենտրոնական վարչությունը փոխադրելով Կահիրե, ապա դադարեցնելով իր պաշտոնաթերթ «Ապագայի» հրատարակությունը Փարիզում, աստիճանաբար թողեց ասպարեզը կենտրոնանալով այլ համայնքներում: Դիսնական թվականների վերջերին իր կենտրոնատեղին Եվրոպայից (Ծվեյցարիայից) Ամերիկա փոխադրեց նաև Դայ բարեգործական ընդհանուր միությունը:

Ֆրանսիայում եռանդուն գործունեությունից ըստ եռթյան հեռացակնական ՍԴ հնչակյան կուսակցությունը:

Այսօրվա (2003 թ.) ֆրանսահայ համայնքում ՌԱԿ-ի և ՍԴԴ-ի մասնաճյուղեր, անշուշտ, կան, բայց նրանք լուրջ քաղաքական ազդեցություն չունեն համայնքի գործերի վրա:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում բարձր հեղինակություն և քաղաքական կշիռ ծեռք թերեցին ֆրանսահայ առաջադիմականները, հատկապես ֆաշիզմի դեմ ծավալված Դիմադրական շարժմանը թերած եռանդուն մասնակցությամբ: Դայ համայնավարներից տաղանդավոր գրողներ Ա. Սեման, Լասը և շատ ուրիշներ ընկան Ֆրանսիայի ազատագրության համար, իսկ բանաստեղծ Միսաք Մանուշանը դասվեց Ֆրանսիայի ազգային հերոսների շարքը, նրա անունով փողոցներ ու հրապարակներ կոչվեցին Ֆրանսիայի տարբեր քաղաքներում:

1943 թվականին ընդհատակի պայմաններում ստեղծվեց «Դայ ազգային ճակատ» կազմակերպությունը ծախակողմյանների նախաձեռնությամբ ու ջանքերով: Դուրս գալով ընդհատակից 1945 թվականին իր համագումարում վերակառուցվեց իրևս «Ֆրանսիայի հայ ազգային ընդհանուր միություն» (ՖՐԱԸՄ): Նրան մասնակցում էին համայնքի գործեր բոլոր քաղաքական կազմակերպությունները, բարեսիրական, հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդական միությունները: Բացառությունը կազմում էր ՀՀ դաշնակցությունը, սակայն նրա անդամներից շատերն անհատական նախաձեռնությամբ նույնպես բերում էին իրենց մասնակցությունը ՖՐԱԸՄ-ի աշխատանքներին:

Ֆրանսիայի հայ համայնքում վերջապես գլուխ էր եկել նիասնական ազգային իշխանություն՝ ամենալայն ժողովրդավարական բազայի վրա: Նրա գործունեությունը արդյունավետ էր, բայց շատ կարճ: 1948-ին, արդեն «սառը պատերազմի» պայմաններում, Ռանադիեյի կառավարությունը արգելեց Դիմադրության շարժման տարիներին առաջացած

կազմակերպությունները, առաջին հերթին ներգաղթած տարրերի միավորումները: Արգելվեց նաև ՖՀԱԸՍ-ն:

1949-ին ստեղծվեց «Ֆրանսահայ ճշակութային միությունը»՝ իր կողմին ունենալով ԺՄ-ը՝ Ֆրանսիայի հայ երիտասարդական կազմակերպությունը: «Միությունը», թվում էր, որդեգրել է ՖՀԱԸՍ-ի խնդիրները և աշխատանքը:

Բայց շատ շուտով պարզ դարձավ, որ ֆրանսկոմկուսի մականի տակ նա ծգտում էր դասակարգայնորեն սահմանափակել իր գործունեությունը՝ դառնալու համար «աշխատավորության» կազմակերպություն: Դայստանի պաշտոնական քաղաքականությունն էլ իր հերթին խրախուսում էր նման ծգտումները՝ դիտելով «Միությունը» իրու առաջադիմական:

Այսպիսով «Միությունը» կամովին հրաժարվեց ֆրանսահայության համազգային նարմին լինելու հնարավորությունից, որը նրան ժառանգաբար փոխանցել էր ՖՀԱԸՍ-ն, և սեղմվեց իր «աշխատավորական-առաջադիմական» պատյանից ներս: Ազգային-քաղաքական ասպարեզը մնաց ՀՀ դաշնակցությանը, որը վերցրեց նետված դրոշակը և շարունակեց տանել ազգային գաղափարաբանության առաջամարտիկի դերը:

Վերադառնալով «բնիկ» տարրի և «եկվորների» միջև «լիդերության» համար պայքարին բնական է, որ այդ պայքարը առաջին հերթին դրսեորվեց համայնքի ազգային գաղափարախոսությունը դավանող քաղաքական ուժի իսկ շրջանակներում: Պատահական չէ, որ ուրունական թվականներին ՀՀ դաշնակցության Ֆրանսիայի շրջանի նույնական որոշ անդամներ կախակայվեցին կամ պարզապես դուրս մնացին կուսակցությունից:

Ֆրանսիայում հայ համայնքի գոյատեսության բոլոր տասնամյակների ընթացքում բացվել ու փակվել են բազմաթիվ ու բազմազան հայկական կազմակերպություններ: Որանց բոլորի մասին խոսելը կգրադեցներ շատ էցեր: Ուստի բավարարվենք հակիրճ տեղեկատու տվյալներով՝ միայն առավել կարևոր և հետք ծգած, ինչպես նաև գոյություն ունեցող կազմակերպությունների մասին հաշվի առնելով, որ քաղաքական հոսանքների, թե որոշ միությունների շուրջ արդեն խոսվել է վերը:

Հայրենակցական միություններ: Քսանական թվականների կեսերից ի վեր սկսվում է հայրենակցական միությունների ստեղծման բույն մի շարժընթաց, որը, երեսնական թվականների սկզբներին անցնելով իր

կազմակերպչական փուլը, մինչև հիսնական–վարսունական թվական–ները գործնականում ծանրակշիռ ներդրում է անում թե՛ հայրենակիցների նյութական կացությունը և հայեցի դաստիարակությունը ապահովելու, թե՛ Հայաստանում համանուն բնակավայրեր կամ թաղամասեր հիմնելու ուղղությամբ:

Երևույթը իրոք այնքան բուռն էր, որ երեմն ընդունում էր ծայրահեղ դրսնորման ծներ, երբ հայրենակցականների անչափ մանրատվածությունը լրջորեն խոչընդուռում էր առաջադրած վեհ նպատակների ու ծրագրերի իրագործմանը: Ֆրանսահայ նշանավոր երգիծարան նշան Պեշիկբաշյանը ծաղկեց ծայրահեղությունները՝ նկարագրելով, թե ինչպես արդեն ստեղծվել են նույն գյուղի վերին թաղի և ներքին թաղի հայրենակցականները:

Ֆրանսիայում էլ ստեղծվեցին տասնյակներով, որոնց մեծամասնությունը կամ շուտով միաձուլվեց, կամ դադարեց գործելուց:

Առաջինը հիմնվեց մալաթիացիների հայրենակցական միությունը 1924 թվականին Շամոնում, որպես ԱՄՆ–ում արդեն գոյություն ունեցող մասնաճյուղ: Շուտով տարածում գտավ հայաշատ քաղաքներով մեկ՝ 1926–ին արձանագրելով 1150 անդամներ: Հայրենակցական միությունը գործում է մայիսի 10-ի օրը:

Հայրենակցական միություններից շատերը, իրեն կանոն, գտնում էին հայրենակիցներ տարբեր երկրների համայնքներում և ի վերջո ստեղծվում էին միջհամայնքային միավորումներ: Դրանցից մեկը եղավ մալաթիացիների միությունը, որի հավաքական ջանքերով Երևանում հիմնվեց «Նոր Մալաթիա» թաղամասը:

Միջյանց հետևից հիմնադրվում են սերաստացիների (1925), հաճնեցիների (1926), խարբերդցիների (1926) միությունները, որոնք նույնպես, վերածվելով միջհամայնքային կազմակերպությունների, ավաներ են հիմնում Հայաստանում: Տարբեր տարիներին ստեղծվում են սելոցցիների, բիլեթեկցիների, պոնտացիտրապղոնցիների, շապինզարահիսարցիների, վանեցիների, կիլիկիացիների, կարինցիների, սամաթիացիների, իզմիրցիների, այնքապցիների, բալուցիների, «Բարձր Հայքի», տարոն–տուրութերանցիների, մարաշցիների, կեսարացիների և ուրիշ միություններ:

Հայրենակցական միությունները եղան ազգային–եթնիկական գոյապահանության մեխանիզմի կարևոր հանգույցները: Նրանցից շատերը հրատարակեցին պարբերականներ և տարեգրքեր կամ առանձին հատորներ, որոնցում սերունդների համար կենդանի էին պահպանում

բնօրրանի ավանդույթները ու սովորույթները, բարքն ու վարքը, կենցաղը, պատմությունը, նշանավոր անձանց կերպարները:

Դայ բարեգործական ընդհանուր միության (ՖԲԸ) մասնաճյուղը: ՖԲԸ կենտրոնական վարչությունը 1921-ից ի վեր հաստատվում է Փարիզում՝ շրջանային կազմակերպություններ հիմնելով Մարտելում, Լիոնում, Վալանսում և այլուր: Նյութական օգնություն էր հայրայրում ներգաղթած գանգվածներին: Փարիզում հիմնեց «Նուպարյան մատենադարանը» և «Դայկական տունը» ուսանողության համար: Խև արդեն ավելի ուշ ժամանակներում «Ալեք Մանուկյան» կենտրոնը, որը քաղաքի հայության հազվադեպ հավաքավայրերից մեկն է իր սրահի հնարավորություններով: Մասնաճյուղը այդպես էլ չունեցավ իր դպրոցը Ֆրանսիայում, թեպետ Սփյուռքի տարածքով մեկ բազմաթիվ են միության կրթական հաստատությունները: Նա նյութական օժանդակություն էր հասցնում գոյություն ունեցող միօրյա վարժարաններին: 1960–70 թվականներին շուրջ 3.0 միլիոն ֆրանկի նպաստ տրամադրեց Սևի Սխիքարյան և Դպրոցասեր տիկնանց Ռենսի վարժարաններին: Մասնաճյուղը խոշոր ավանդ ունեցավ հայրենադարձության կազմակերպման գործում: 1962-ից սկսած գործում է մասնաճյուղի երիտասարդական բաժինը:

«Ֆրանսահայ կարմիր խաչը» 1920-ական թվականներից ի վեր ծավալուն գործունեություն ուներ համայնքի մեջ, որը հատկապես շեշտվեց Դիմադրական շարժման տարիներին: Գործակցելով «Դայ տիկնանց միության» հետ գորավիճ եղավ հակաֆաշիստական պայքարին զենք ու պարեն, դեղորայք հասցնելով մարտիկներին, ապաստանելով հայ գերիներին: Զույգ կազմակերպություններն էլ փակվեցին 1948 թվականին կառավարության հրահանգով՝ իրուն ծախսակողման:

«Դայ աղքատախնամ ընկերությունը» Ֆրանսիայի առողջապահության նախարարության նանաչումը ստացավ 1937 թվականին: Պատերազմից հետո հիմնել է ծնրանոցներ Փարիզում, Մոնպառնասում, Սեն Ռաֆայելում: Դետագայում շարունակում էր գործել իրուն «Ընկերային ապահովության մարմին» պետական սոցիալական ապահովության ցանցում:

«Դայ կապույտ խաչի միությունը», որը հիմնվել է 1934 թվականին ՀՀ դաշնակցության հովանավորությամբ, աշխուժություն դրսնորեց հատկապես պատերազմից հետո: Ականայից գրավելով և լցնելով «Կարմիր խաչի» արգելումով ստեղծված պարապը «Միությունը» դրա-

կան լուրջ նշանակություն ունեցավ և ունի համայնքի կյանքում իրեն բարեխրական մշակութային կազմակերպություն: Գործակցությունը ամերիկյան «Հայ օգնության միության» (ՅՕՄ) հետ, որի փաստական մասնաճյուղն է «Կապույտ խաչը», ընդայնում է նրա հնարավորությունների դաշտը: Երկրաշարժից հետո ՅՕՄ-«Կապույտ խաչ»-ի միասնական ջանքերով առաքված օգնությունը ծանրակշիռ էր և արագ: Դայաստանում բացվել է միության գրասենյակը:

«Հափահաս որբերի միությունը» հիմնվել է քանական թվականներին հայտնի մտավորական, բժիշկ Շավարշ Նարդունու նախաձեռնությամբ, եղեռնից մազապուրծ նախկին որբերի հասարակական ճակատագիրը հոգալու նկատառումներով: Միությունը, սակայն, իր մենաշնորհը համարեց ապրիլի սգատոնի նշումը, կանգնեց ծայրահեղորեն այլամերժ դիրքերում ընդունելով միայն, որոշ սահմանների մեջ, ՅՅ դաշնակցության ցուցումները:

«Ֆրանսիական բանակի հայ ռազմիկների միությունը», որ ստեղծվել էր Առաջին աշխարհամարտից հետո, իր մեջ միավորեց նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի հայ վետերաններին: Միությունը ծեսնարկում է զանազան կարգի միջոցառումներ, որոնք կապ ունեն Ֆրանսիայի ազատագրության համար մղված պայքարում հայ մարտիկների մասնակցության տարեթվերի հետ (օրինակ՝ յուրաքանչյուր տարի նշում է Ս. Մանուչյանի օրը): Դանայնում օգտվում է հեղինակությամբ:

«Յանցերի ակումբը», որ ստեղծվել է 1949-ին, ապաքաղաքական յուրատեսակ մի միություն է, որ խնդիր ունի պրոպագանդել հայ արքեստը բարձր պրոֆեսիոնալ մակարդակով: Չնայած էլիտար որոշ երևույթներին ակումբը հաճույքով բացում է իր դռները զանազան մշակութային կազմակերպությունների առջև, վաստակած միջոցներով նյութական օգնություն է ցույց տալիս խոստումնալից հայ աշակերտներին:

Երաժշտական բարձր արվեստի պրոպագանդման առաքելությունն է իրականացնում «Կատրա» միությունը արվեստաբան Գրիգոր Դամբարձումյանի դեկավարությամբ:

1930 թվականից ի վեր մինչև օրս գործում է «Դայ թժշկական միությունը», որի նպատակն է ոչ միայն առողջապահական գիտելիքների տարածումը հայության մեջ, այլև մանավանդ հայ թժշկների մասնագիտական մշտական կատարելագործումը: Միությունը շոշափելի օգնություն է ցույց տվել Դայաստանի առողջապահական մարմիններին նորագույն սարքավորումներ և գործիքներ, դեղամիջոցներ առաքելով,

իսկ երկրաշարժից հետո այդ ամենին գումարվեց նաև հայ բժիշկների գործնական աշխատանքի կազմակերպումը Դայաստանի հիվանդանոցներում, ինչպես նաև Դայաստանի երիտասարդ բժշկական կաղրերի Ֆրանսիայում վերապատրաստելու գործը:

«Ֆրանսահայ գրողների միությունը» 1923–ին իր հիմնադրման օրերից ընդգրկեց համայնքի բարձր մտավորական սերուցքը: Եշմարիտ է, տարբեր տարիներին Փարիզում ստեղծվել են զանազան գրական միավորումներ, ազդարարվել են գրական հրովարտակներ և մանի-ֆեստներ («Յարդգող» միավորում, գրական ակումբ, «Զանք», «Սենք» խմբակցություններ և այլն), որոնք, դնելով նոր մտածելակերպի անհրաժշտության խնդիրները, ըստ եռւթյան որոշակի ընդգման բնույթ են ունեցել նաև «Գրողների միության» ավանդական, փոքր-ինչ ակադեմիական կարգ ու սարքի դեմ, բայց հենց նույն այդ «Ընդվզողներից» շատերը եղել են «Գրողների միության» անդամներ: Շահան Շահնուր, Կազգեն Շուշանյան, Զարեհ Որբունի, Գեղամ Արմանյան (Ա. Սեմա), Լուիզա Ասլանյան (Լաս), Բյուզանդ Թոփայան, Լևոն Չորմիսյան, Դրանտ Բալույան, Լևոն Սոփոլյան և շատ ուրիշներ անդամակցել են միությանը:

Միության առաջին նախագահը նշանավոր մտավորական Արշակ Չոպանյանն էր: «Ֆրանսահայ գրողների միության» գործող նախագահն է դարձալ բարձր կարգի մտավորական Գրիգոր Պըլտյանը:

1968 թ. ստեղծվեց և վերջերս դադարեց գործելուց «Թորոս Ռոսլին գեղարվեստասիրաց միությունը»: Նրանում իրենց մասնակցությունը բերեցին անվանի նկարիչներ Գառզուն, Ժան Սենը, Ռիշար Ժերանյանը, Բյուզանդ Թոփայանը, Զարեհ Մութաֆյանը, ճարտարապետ Էդ. Ուբուջյանը և ուրիշներ: Միության ջանքերով կազմակերպվեցին մի շարք ցուցահանդեսներ:

Վարսունական–յոթանասնական թվականներին համայնքում հիմնվեցին տարբեր հայագիտական հաստատություններ Փարիզում, Լիոնում, Սենտ Էտիենում և այլուր: Դայագիտական ժրագրեր կան Սորբոնի համալսարանում, արևելյան լեզուների և կարոլիկական ինստիտուտներում:

Սույ երեսուն տարի է, ինչ համայնքում հիմնադրվել և գործում է «Երկիր և մշակույթ» անունով մի ընկերություն, որն իր մասնաճյուղերը ունեցավ ԱՄՆ–ում և Եվրոպայի ուրիշ երկրներում: Բացառապես երիտասարդական ուժերով և երիտասարդության բանակումների ծնով ընկերությունը հնագիտական պեղումներ է կազմակերպում պատմական

Հայաստանի տարրեր կետերում: Աշխատանքներ են տարվել «Սուրբ Թաղեհ» վաճռում (Իրան), Քեսապում (Սիրիա), Ամբերդում (Հայաստան): Արշավախմբերին մասնակցող երիտասարդությունը յուրատեսակ ինքնահաստատման կերպ է անցնում իրը իր հարազատ երկրի մշակույթի տերն ու տնօրենը: Կազմակերպության անդամները 1989–1990 թթ. մասնակցեցին Սպիտակի շրջանի Գոգարան գյուղի վերականգնման աշխատանքներին:

Հայաստանի 1988 թ. երկրաշարժը կյանքի կոչեց մի շարք նոր միավորումներ, «Շառլ Ազնավուրը Հայաստանի համար ֆոնդը», «ԽՕՍ Արմենի» ընկերությունը և այլն, որոնք բոլորն ել իրենց առջև դրեցին կոնկրետ խնդիրներ (մանկական վերականգնման ծրագրեր, հիվանդանոցների կամ դպրոցների շինարարություն, դեղորայքի առաքում և այլն) և հետապնդում են դրանք իրենց լրումին հասցնելու նպատակը:

«Ֆրանսահայ մշակութային միությունը», ինչպես նշեցինք վերը, ստեղծվել է 1949 թվականին և անընդմեջ գործում է մինչև օրս (2003 թ.): Ունի քազմաքիվ մասնաճյուղեր Մարսելում, Լիոնում, Դեսինում, Վալանսում, գրեթե բոլոր հայաշատ կենտրոններում: Տարբեր ժամանակներում հրատարակվել են «Ազատ խոսք», «Արձագանք Փարիզի», «Լույս Փարիզի», «Լուսադրյուր» թերթերը: Նրա պաշտոնաթերթն է «Աշխարհը»:

Հետպատերազմյան շրջանում համայնքն ունեցել է քաղաքականութեան երկու կենտրոնացումներ՝ ՀՀ դաշնակցությունը և մյուս կողմից «Ֆրանսահայ մշակութային միությունը»: Թեպետ «Միությունը» պաշտոնապես անկուսակցական կազմակերպություն է, բայց նրանում հրամայական դիրքեր պատկանել են Ֆրանսիայի համայնավար կուսակցության հայազգի անդամներին:

Նման անստույգ կարգավիճակը միշտ առաջ է բերել ներքին վեճեր ու պայքարներ, երբեմն՝ շատ սուր բախումների և նույնիսկ առճակատումների հասցրել, որոնք լուսաբանող օրինակներից մեկը «Աշխարհ» թերթի բնօրուկն էր յոթանասնական թվականների կետերին: Այդ ժամանակներում քավականին ցրտություն կար Խորհրդային Միության կոմկուսի և Ֆրանսիայի կոմկուսի միջև՝ Եվրակոմունիզմի գաղափարի գնահատության շուրջ: Որոշ շրջանում գործը հասել էր նույնիսկ ոչ պաշտոնական խզման:

«Աշխարհի» խմբագրությունը վարում էր մի քաղաքականություն, որի նպատակն էր Խորհրդային Հայաստանի լայն պրոպագանդը, Հայրենիքի հետ ֆրանսահայության կապերի ամրապնդումը: Ֆրանսիայի հա-

մայնավար կուսակցության ազգային փոքրամասնությունների ստորաբաժանումը թերթի նման վարօք դիտում է իրեն անհամաձայնություն և ցույց ֆրանսկոմկուսի քաղաքականության նկատմամբ: Հարցը դրված է գրեթե ճակատայնորեն: «Աշխարհը» պետք է լինի հայկակա՞ն թերթ, թե՝ պիտի լինի կոմկուսի հայատառ թերթ: «Միության» ղեկավարության մի մասը պաշտպանում էր երկրորդ թեզը:

Այս օրինակը փաստարկում է, թե ինչու «Միությունը» չկարողացավ վերածվել համայնքի համագույն կազմակերպության, թեպես նրա ղեկավար կազմում կային աշխարհահոչակ գիտմական Զատիկ Խանգաղյանի նման անկուսակցական անվանի և հետինակավոր դեմքեր: Ըստ կազմակերպություններ, որոնք այլապես ընդդիմադիր էին ՀՅ դաշնակցությանը, հաճախ հրաժարվում էին «Միության» հետ գործակցելուց: Նրա գործունեության մեջ տեսնելով ֆրանսկոմկուսի շահը:

Մյուս կողմից, Դայաստանից արտածվող քաղաքականությունը, որ առաջին փուլում հետապնդում էր դասակարգային շերտավորման, իսկ ապա՝ քաղաքական շերտավորման նպատակներ, «Ֆրանսահայ մշակութային միությանը» որել էր Դայրենիքի հետ կապերն իրականացնող գրեթե միակ, մենաշնորհյալ կազմակերպության կարգավիճակի մեջ: Դա ուներ լուրջ հետևանքներ՝ հայության մի զգալի զանգված օտարելով Դայաստանից: Այնուամենայնիվ, ինքը «Միությունը», անգնահատելի գործ կատարեց Դայրենիքի հետ կապերի ամրապնդման և ընդլայնման ուղղությամբ: Եթե այսօր ֆրանսահայության անխստիր բոլոր հատվածները ամենաքազմազան ու եռանդուն կապեր ունեն Դայաստանի հետ, առանց վարանելու կարելի է ասել, որ դրանց հիմքը որել և անհրաժեշտ հողը մշակել էր «Ֆրանսահայ մշակութային միությունը»:

Եթե այսօր Դայաստանի հայագիտական հաստատությունները, արվեստի օջախները, արխիվները մեծապես հարստացրել են իրենց գրադարակները, ցուցասրահները և պահեստարանները Սփյուռքի հայ ազգային արժեքների հաշվին, ապա դարձյալ քացարիկ է «Միության» վաստակը այդ գործում: Ենց «Միության» նախաճնեռությամբ ու նրա ջանքերի շնորհիկ հայրենադարձվեցին Արշակ Չոպանյանի, Զապել Եսայանի, Սիամանբոյի, Երաժիշտ Օմնիկ Պերպերյանի, քաղաքական գործիչ Արտակ Դարբինյանի արխիվները, Կոմիտասի արխիվի մի մասը, եղագար Ծահինի գրքային նկարագրումները, Գյուլօյանի արձանների հարուստ հավաքածուն, Մարկոսյանի 36 ծեռագիր մատյանների հավա-

բածուն, ուրիշ շատ և շատ արխիվներ, արվեստի գործեր, մասունքներ ու պատառիկներ:

1990 թվականին Մարսելում կայացավ «Միության» հերթական համագումարը, որը մշակեց կազմակերպությունը լայն ժողովրդավարական սկզբունքների վրա վերակառուցելու ծրագիր:

ԺԱՅ-Ը Ֆրանսահայ երիտասարդական միությունը, որ ստեղծվել էր 1945 թվականին, սկզբնական շրջանում գործում էր իրու «Ֆրանսիայի Դայ ազգային ընդհանուր միության» երիտասարդական կազմակերպություն, իսկ 1948-ին՝ Վերջինիս արգելումից հետո սկսեց գործակցել «Ֆրանսահայ մշակութային միության» հետ, դարձյալ իրըն նրա երիտասարդական կազմակերպություն միշտ պահպանելով սակայն իր ներքին գործերի որոշ ինքնավարությունը: Ուներ քազմաքիվ մասնացուղեր, հրատարակում էր «Նոր Կուա» («Ներ ծայնը») ամսաթերթը:

ԺԱՅ-Ը գործնականում շատ ավելի լայն հարաբերություններ էր պահպանում թե՝ միջազգային ու ֆրանսիական կազմակերպությունների, թե՝ համայնքի այլազան ուղղությունների երիտասարդական միավորումների հետ:

Առաջիններից մեկը Սփյուռքում ԺԱՅ-Ը, կապեր հաստատեց Դայաստանի երիտասարդական կազմակերպությունների կոմիտեի հետ:

1963 թվականի աշնանը ԺԱՅ-Ը Փարիզում անցկացրեց գրականության և արվեստի փառատոն, որին մասնակցեցին Ֆրանսիայի և Սփյուռքի այլազան համայնքներից մեծարիվ երիտասարդներ: Ժյուրիի նախազահն էր մեծանուն երգահան Արամ Խաչատրյանը: Իր մասսայականությամբ աչքի ընկավ ԺԱՅ-ի կազմակերպած 1984 թվականի փառատոնը:

Վերջին տարիներս ԺԱՅ-Ը վարում է «Ֆրանսահայ մշակութային միությունից» լիովին անկախանալու քաղաքականություն:

«Դայ մարմնակրթական ընդհանուր միությունը» (ԴՄԸԸ) ֆրանսահայոց ամենահին կազմակերպություններից մեկն է: Ստեղծվել է 1920 թվականին: Մի քանի տարի անց մասնաճյուղեր ուներ Մարսելում, Դիսինում, Վիեննում, Գրենուրլում, Լիոնում: Նետագայում նաև շատ ուրիշ հայարնակ վայրերում:

ԴՄԸԸ-ն ԴՀ դաշնակցության հովանու տակ գործող մարմնակրթական միավորում է: Գործնականում, սակայն, նրա առանձին կազմակերպություններ ունեն ինքնավարություն: Սա վերաբերում է հատկապես ԴՄԸԸ-ի ֆրանսիական մասնաճյուղին: Պատահական չէ, որ տարբեր

տարիների նրա ղեկավար մարմինների մաս են կազմել հանրահայտ գործիքներ, որոնք քաղաքականորեն որևէ աղերս չեն ունեցել ՀՀԴ-ի հետ կամ նույնիսկ դաշտանել են հակընդդեմ հայացքներ: Ավելին «Միությունը» Երկրորդ աշխարհամարտի վերջերին գործակցում էր «Ազգային ճակատի» հետ:

«Միությունը» գարգացրել է ֆիզիկական կուլտուրան համայնքում սկաուտական խմբերի կազմակերպման խողովակով՝ ուշադրության կենտրոնում ունենալով նաև տարրեր ու քաջազար մարզաձեռների գծով մրցումների, մրցաշաբերի սիստեմատիկ անցկացումը: ՀՍԸՍ-ի ֆուտբոլային թիմերի որոշ մարզիկներ նույնիսկ ընդգրկվել են Ֆրանսիայի ազգային հավաքականի կազմում:

«Միությունը» բնականոն հարաբերություններ էր պահպանում Հայաստանի մարզական կազմակերպությունների հետ: Կատարվում էին փոխադարձ այցելություններ՝ մրցությունների և մարզական համատեղ հավաքների նպատակով:

Համայնքում տարրեր տարիներին գործել են քազմաթիվ ուրիշ մարզական միավորումներ և ակումբներ: 1945 թվականին ՀՀ դաշնակցության հովանու տակ ստեղծվեց «Նոր սերունդ» երիտասարդական միությունը, որը մշակութայինց գատ ուներ շեշտված մարզական թեքում: Կազմակերպվում էին ամառային ճամբարներ, ֆուտբոլի մրցումներ:

Մեկօրյա կամ երկօրյա դպրոցների թիվը շատ է, գործում են եկեղեցիներին կից այլնայլ քաղաքներում:

Ամենօրյա դպրոցները մինչև վերջերս երեքն էին, որոնք գտնվում էին Փարիզի արվարձաններում և Մարսելում:

Սերի «Սամուել Մուրատեան» Մխիթարյանների վարժարանը (հիմնվել է դեռ 1846 թվականին) մի քանի դադարներից հետո վերաբացվեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից մեկ տարի անց: Պաշտոնապես համարվել է ֆրանսիական դպրոց, մի քանի առարկաներ դասավանդվել են հայերեն: Այստեղ սովորելու էին զայս հայ երեխաներ Խոալիայից, Շունաստանից, Անգլիայից, Լիբանանից, Թուրքիայից և այլ երկրներից: Դպրոցը գիշենօթիկ էր՝ բոլոր կենցաղային և ուսումնական հնարավորություններով: Նրա շրջանավարտներից շատերը համալրել են Սփյուռքի տարրեր համայնքների մտավորականության շարքերը: Նյութական դժվարությունների պատճառով վարժարանը 1991 թվականին դադարեց գործելուց:

«Դպրոցասեր տիկնանց Ռենսի վարժարանը» (բացվել է 1879

թվականին) իր ներկա վայրում հիմնավորվել է 1928 թվականից սկզբուն իր ողբանոց, հետագայում վերածվելով դպրոցի (գիշերօրիկ և ցերեկային բաժիններով):

Երկու դպրոցներն ել սերտ կապեր են ունեցել Հայաստանի հետ: Ստացել են անհրաժեշտ դասագրքեր, գեղարվեստական գրականություն: Աշակերտական խմբերը մասնակցել են Հայաստանի ճամբարներին, իսկ առանձին ուսուցիչները և տնօրինները Երևանի ուսուցչական սեմինարներին: Ներկայում ֆինանսական լուրջ դժվարություններ ունի նաև Ունակ վարժարանը: ՀՀԴ-ի մականի ներքո Մարտվում գործում է ամենօրյա վարժարան:

Պետք է արձանագրել նաև, որ Ֆրանսիայի կառավարության 1982 թվականի մի որոշմամբ՝ թույլատրված է Ֆրանսիական դպրոցներ հաճախող այլազգի երեխաններին անցնելու նաև մայրենի լեզվի դասընթացներ:

Ֆրանսահայոց մշակույթը բացառիկ դեր ունի ժամանակակից հայ ազգային մշակույթի պատմության մեջ: Եթե մենք խոսում ենք 18-19-րդ հարյուրամյակներում Հայաստանի հողից դուրս մեր ազգային մշակույթի այնպիսի կենտրոնների մասին, ինչպիսին են Թիֆլիսը, Բաքուն, Մուսլիման, Մադրասը, Բեռլինը, Վենետիկը, Վիեննան, Փարիզը, Ռուսությունը և այլն, ապա ներկա ժամանակներում նման մի տեղ վերապահված է Ֆրանսահայոց արդի մշակույթին: Առավել արձանագրելի է երևույթը, քանի որ գոյություն ունի բուն Հայաստանում զարգացող մշակույթը. մի քանի, որ նախորդող շրջաններում շատ նվազ էր թե քանակով, թե որակով:

Իսկ Սփյուռքի տարածքով մեկ գրեթե եզակի բնույթ ունի: Համեմատվելու եզրեր կարող են առաջարկել, թերևս, միայն լիբանանահայ և ամերիկահայ համայնքները, բայց որոնք ել, առնվազն մշակութային սեռերի բազմազանության տեսանկյունից, ակնհայտորեն զիջում են Ֆրանսահայությանը:

Գրականություն և երաժշտություն, գեղանկարչություն ու քանդակագործություն, քատրոն ու կինո, քարձր կատարողական մակարդակ, ճարտարապետություն, գրականագիտություն ու արվեստաբանություն, ժողովրդական արվեստ և այլնայլ բնագավառներ, ենթարնագավառներ ու մասներանգներ և դեռ բացառյալ ազգի հոգևոր կյանքը ծնավորող մյուս մարզերը (զանգվածային լրատվության միջոցները, որ անշուշտ մշակույթի բաղկացյալներ են). այս բոլորով այնքան հարուստ է եղել

համայնքի կյանքը, որ հատուկ հետազոտության շնորհակալ առարկա կարող է լինել:

Պիտի խոսենք մի քանի եական երևույթների մասին:

Եղագար Շահինը, Շարբը, Յովսեփի Փուշմանը (որ քանական թվականներին դեռ Փարիզում էր) Ակարչության մեջ, Գ. Կառվարենցն ու Շ. Ազնավուրը՝ երաժշտության բնագավառում, եղ. Ուրուցյանը՝ ճարտարապետության մեջ, Անրի Վեռոնյը՝ կինոյի ասպարեզում, Արքուր Աղամովը՝ քատերագրության մեջ, Ռուբեն Մելիքը՝ քանաստեղծության մեջ, հարստացրին Ֆրանսիայի և համաշխարհային մշակույթի շտեմարանը՝ միաժամանակ ընդարձակելով այն սահմանները, որոնցով աշխարհը ճանաչում է հայությանը՝ իրեն քաղաքակրթություն արտադրող ազգի: Այդ համաստեղությանը կարելի է առանց վերապահության ավելացնել նաև Ֆրանսիայի Գեղարվեստից ակադեմիայի և Դայաստանի գիտությունների ակադեմիայի անդամ գեղանկարիչ Գառզուին:

Փարիզը՝ իրեն սփյուռքահայության կենտրոն և համաշխարհային մշակութային մայրաքաղաք, իրեն քաշեց մտածման ու արվեստի կենսական ուժերը: Տարբեր ժամանակներում այնտեղ ապրել և ստեղծագործել են Արշակ Չոպանյանը, Վահան Թեքեյանը, Ավետիք Խսահակյանը, Շիրվանզադեն, Ավետիս Ահարոնյանը, Լևոն Բաշալյանը, Տիգրան Կամսարականը, Զավել Եսայանը, Յովհաննես Ասպետը, Թեոդիկը, Յակոբ Օշականը, Կոստան Զարյանը:

Բուն սփյուռքահայ մշակութային շարժումը սկսվեց քանական թվականների վերջներին, երբ հստակ դարձավ այլևս, որ ժամանակակից աշխարհում հայության ինքնահաստատման ճանապարհն անցնում է ոչ թե տոհմիկ վանդակորմի մեջ կղզված անձուկ սահմաններով, այլ ընդհակառակն, մարդկության և աշխարհի դեմ հանդիման մշտապես քացված լայնանիստ դարպասի միջով:

Եվ շարժման ռահվիրաները գտնվեցին Ֆրանսիայում՝ Շահան Շահնուր, Վազգեն Շուշանյան, Նշան Պեշիկբաշյան, Շավարշ Նարդունի, Նիկողայոս Սարաֆյան, Բյուզանդ Թոփիալյան, Զարեհ Որբունի, Գեղամ Արմաճյան, Պետրոս Զարոյան, Դրաչ Զարդարյան, Լուիզա Ասլանյան և դեռ ուրիշներ: Այսինքն այն հույլը, որ կնքվեց «Փարիզի տղաքը» թևավոր անվանակոչությամբ:

«Փարիզի տղաքը» իրենց հերթին ծնունդ տվեցին տաղանդավոր քանաստեղծների մի ամրող համաստեղության, քառասնական թվականներից մինչև այսօր, որոնց մեջ կան Դայաստանի ընթերցող հասա-

րակությանը դեռևս, ցավոք, թիչ հայտնի, բայց իրոք վավերական ներհուն գրողներ Յարութ Կոստանդնյանը, Զուլալ Գազանճյանը, Գրիգոր Պոլտյանը:

Դասական գեղանկարիչներ Մախոխյանը, Ալախազյանը, Խաչատրյանը, Շիշմանյանը, Շաբանյանը քսանական-երեսնական թվականներին ֆրանսահայ մշակույթի զարգացման հիմնայուները եղան: Մախոխյանը արժանացավ «Պատվո լեզեն» շքանշանին: Նրանց ավանդույթների վրա հետագայում անեց գեղանկարիչների ֆրանսահայ դպրոցը: 1931 թվականին հիմնվեց «Դայ ազատ արվեստագետների միությունը», որը գոյատևեց մինչև 1947-ը: Միությունը բավականին բազմամարդ էր: Նրա ցուցադրանքներում աչքի ընկան Շ. Աղամյանի, Թամիրյանի, Յերոյի (Թեքեյան), Ս. Քեպապյանի, Արմիսի, Ա. Բերբերյանի, Ռ. Ժերանյանի, Դ. Գամերի, Գ. Պետիկյանի, Զ. Մութաֆյանի, Գ. Դակորյանի ստեղծագործությունները:

1964 թվականին Երևանում կազմակերպվեց ֆրանսահայ նկարիչների ցուցահանդես, ուր ուշադրության արժանացան Գառզուի, Ռ. Ժերանյանի, Ա. Բարայանի, Զ. Զաքարյանի, Փափազյանի և ուրիշների կտավները:

Վարսունական թվականներին Դայաստանի նկարիչների տանը անհատական ցուցահանդես ունեցավ գրող, նկարիչ Բյուզանդ Թոփիայսը: Թե՛ Դայաստանում, թե՛ ԽՄԴՍ տարբեր քաղաքներում մի շարք ցուցահանդեսներ են ունեցել Գառզուն, Ռիշար Ժերանյանը, Ա. Բերբերյանը, 1990-ին Երևանում կազմակերպվեց Զարեհ Մութաֆյանի կտավների ցուցահանդեսը:

Ազգապահպետական մեխանիզմի կարևորագույն շարժիչներից մեկը Ֆրանսիայում թե ամրող Սփյուռքի տարածքում երկար ժամանակ եղել է քատրոնը: Ցավոք, մեր օրերում մշակույթի այդ սեղ թիչ տարածում ունի:

Փարիզում դեռ 1923-ից գործում էր «Փարիզահայ դրամատիկական թատրոախումբը», որը սպասարկում էր նաև երկրի հայաշատ վայոթը, ինչպես նաև ելույթներ էր ունենում Ռումինիայում, Բուլղարիայում, Բելգիայում, Հվեցարիայում և այլ երկրներում: Դերասաններ Շահիսարունու, Նշանյանի, Գմբերյանի անունները լայնորեն հայտնի են սփյուռքահայությանը:

1944 թվականին «Դայ ազգային ճակատը» հիմնեց «Փարիզի ազգային թատրոնը» տիկին Աննա Բուրապյանի ղեկավարությամբ: Թատրոնն

ունեցավ մի քանի տարվա կյանք և բժմադրեց L. Շանթի, Շեքսպիրի, Ն. Զարյանի առանձին թատրոախաղերը:

Դամաշխարհային երկրորդ պատերազմից հետո սիրողական խմբեր գործել են նաև Լիոնում, Վալանսում, Ռեսինում: 1952 թվականին Փարիզում ստեղծվեց «Պատանեկան թատրոն», որ իր բնույթի մեջ թացախի երևույթ էր Սփյուռքում: Ֆրանսահայ թատրոնը ըստ Էռլյան դադարեց գործելուց վարսովական թվականների վերջերին:

Դամայնքը լուրջ նվաճումներ ունի նաև երաժշտության բնագավառում: 1923 թվականին ստեղծված «Սիփան» և 1930-ին «Կոմիտաս» երգախմբերը 1936-ին ձուլվեցին և կոչվեցին «Սիփան-Կոմիտաս» երգախումբ: Խմբավարն էր երգահան Գուրգեն Ալեմշահը: Երգախումբը գործում է նինջև այժմ (ղեկավար՝ Կ. Աֆրիկյան): Խմբի խոշոր վաստակն է հայ երգի տարածումը ֆրանսահայության մեջ:

Երեսնական-քառասնական թվականներին հայաշատ քաղաքներում հիմնվեցին մի շարք երգախմբեր, որոնք կարճատև կյանք ունեցան: Դամբավագոր էր Մարտելի «Թնար» երգախումբը (ղեկավար՝ Ռ. Ջուրգյան): Խոկ Սեն Լուիի հայկական «Սևան» երգախումբը (ղեկավար՝ Ռ. Ջուրգյան): Խոկ Սեն Լուիի հայկական «Սևան» երգախումբը Շեսինում մասնակցեց «Անուշ» օպերայի բժմադրությանը:

Նշանավոր երգահան և խմբավար Արա Պարթևյանի ղեկավարությամբ գործել են մի քանի երգախմբեր: Վարսովական թվականներին Ա. Պարթևյանը հեղինակային համերգներով հանդես եկավ Երևանի հասարակականության առջև:

Դատկանշական է նաև, որ Փարիզում կազմակերպվել է մանկական երգախումբ «Գարուն» անունով: Տիկին Յլմազյանի գլխավորությամբ այդ խումբը մեծ վաստակ ունեցավ մանկահասակ հայորդիների հոգում ազգային արվեստի կայծեր սերմաններու գործում համայնքի տարածուվ մեեւ:

1983 թվականից Մարտելում հիմնվել է Արամ Խաչատրյանի անվան երաժշտական ֆոնդ (ղեկավարն էր Արշամ Բաբյանը), որն այսօր խոկ շարունակում է հայ երաժշտության պրոպագանդը, հայտնաբերում և խրախուսում է երիտասարդ տաղանդներին:

Բոլոր հայաշատ վայրերում մեծ թիվ են կազմել պարային խմբերը, որոնք գործել են համայնքի պատմության գրեթե ամբողջ ընթացքում վայելելով քարձր ժողովրդականություն: Պարախմբերի մեջ իր քարձր արվեստով նշանավոր էր Փարիզի «Նավասարդը», որը հյուրախաղերով

շրջագայել էր գրեթե ամբողջ Սփյուռքում և զանազան երկրներում: Թե «Նավասարդ» պարախմբի, թե համայնքի ուրիշ պարախմբերի հետ տեսական ժամանակով աշխատել են Հայաստանից գործուղված մասնագետ պարուսույցներ:

Ֆրանսահայ համայնքի մշակութային կյանքը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, մանավանդ սկսած վաթունական թվականներից, անընդհատ հոսանքով ավել է ստացել Հայրենիքի մայր երակից:

Ֆրանսիայում հրատարակված հայ թերթերի, ամսագրերի այլ պարբերականությամբ լույս տեսնող մամուլի անունները թվարկելը կգրավեր շատ էղեր: Ֆրանսիայում էր կենտրոնացել ոչ միայն առաջնակարգ մտավորականություն, հասարակական, քաղաքական, մշակութային գործիչների մի ամբողջ բանակ, այլև հորդացող հասարակական միտքը արտացոլող հայատառ ու ֆրանսատառ հայ մամուլը: Պատահական չե, ուրեմն, որ այդ մամուլը իր ամենաաշխատված շրջանն ապրում էր քանական-հիմնական թվականներին: Իսկ երբ Փարիզը հայ Սփյուռքի ազգային կյանքում իր կենտրոնական դիրքը գիշեց Բեյրութին, աստիճանաբար մարել սկսեց նաև մամուլի կրակը:

Փարիզում լույս էին տեսնում ՀՅ դաշնակցության պաշտոնական «Դրոշակ» ամսաթերթը, «Յառաջ» ամենօրյա լրագիրը, Ռամկավար ազատական կուսակցության «Ապագա» պաշտոնաթերթը, ՍՊ հնչակյան կուսակցության «Գնչակյան մամուլը» և «Զանգը», հայ համայնավարների ՅՕԿ-ի մի շարք թերթեր ու ամսագրեր: Դենց այստեղ հրատարակվեցին «Զվարթնոց», «Զանց», «Մենք» ուղենիշ գծող հանդեսները, նոր սերմոնի բողոքի դրոշը պարզող «Մարտկոցը», կոթողային «Անահիտ» ու «Կեն» հանդեսները, ՔԲԸ-ի «Ծինարար» ամսագիրը, թժկական «Առողջ կյանքը» ու «Հայ բույժը», արվեստագիտական «Կյանք և արվեստ»—ը և այլն: Քիչ թիվ չեն կազմում կրոնաեկեղեցական հրատարակությունները: Փարիզից գատ ուրիշ հայաշատ վայրերում, մասնավորապես, Լիոնում, Մարսելում, Վալանսում, Նիցցայում, հրատարակվել են քաղմարիկ պարբերականներ:

Արդի ժամանակներում (2003 թ.) մամուլի երթեմնի գետը վեր է ածվել առվակի: Մի քանի անկանոն հրատարակություններ նկատի չառնելով հիշատակության արժանի են երեքը: Ֆրանսահայության, թերևս ամբողջ Եվրոպայի հայության (ի բացառյալ Յունաստանը, Ստամբուլը) միակ օրաթերթն է Փարիզի «Յառաջը», որը հրատարակվում է իրևս ան-

կախ լրագիր: ՀՅ դաշնակցության կազմակերպության պաշտոնաթերըն է «Կամքը»: Ֆրանսահայ մշակութային նիությունը շարունակում է «Աշխարհ» շաբաթաթերի հրատարակությունը ծավալի կեսի չափով ֆրանսերենով նյութական ժանր դմշաբությունները հայրահարելու ակնևայությամբ:

Փարիզում ամենօրյա երեր ունի «Այբ» ամկախ ռադիոֆամը: Ռադիոֆամեր կան նաև Մարտելում և Լիոնում:

-մանակու քայլաւայրեց ցածր սովորված գործ ու այ զանանա՞ն դդմանակող օգևածառ նույնուրութեան ընթացքում առաջաւոր լիւաւում մէջ

ԱՆԳԼԻԱ

xx պաշտոնական լրացրելու խմբինքի աթարվածությունը ՀՀ

ՀԱՅ ՀԱՅԱՎԱՐԴԻ ԵՐԱՎԱՆԻ ԽՈՎԱՅՏ, ԱՎԳԱԲՐԱՎՎԱՐԴՐՈՒՑ ՀԱՐՄԱՆ
30,0 հազար եր, ու կենտրոնացած էր Լոնդոն և Սանչեստր քաղաքներում: Առևտրականներ, արհեստավորներ, ազատ ասպարեզի մարդիկ, մուավորականներ: Կազմակերպված է թամի մեջ՝ Մայր աթոռ Ս. Էջմիածնի իրավասության ներքո:

ՍԴ հնչակյան կուսակցությունը աշխատացրել էր իր գործունեությունը 70-ական թվականների վերջերից: Ստեղծվել էին «Նոր սերունդ» մշակութային և ՀԱՄ մարզական միությունների մասնաճյուղերը: Հատկապես վերջինս՝ աշխատանքի իր չափանիշներով ու կերպով, ձգտում էր ընդգրկել համայնքի երիտասարդությանը՝ առանց քաղաքական հայցըները նկատի առնելու:

Ուամկավար ազատական կուսակցության հովանու ներք գործում էր «Թեքեյան» մշակութային միությունը: Կուսակցությունը հրատարակում է «Երեսունի» շաբաթաթերթը:

ՀՀ դաշնակցության փաստական (ոչ պաշտոնական) հիվանու տակ էր գործում «Դայ Կենտրոնը», որը հիմնադրվել է 1988 թվականին: Նրա շրջանակներում աշխատանքներ էին ծավալում տիկնանց բարեսիրական «Դայ օգնության միությունը» (ՇՕՄ), մարզական ՀԱԸՍ և մշակութային-կորպական «Դամագային» միությունները: ՇՕՄ-ը ուներ ամենորյա մանկապարտեզ: «Դայ Կենտրոնին» կից գործում էր շարաթօրյա դպրոց: Գործում էր նաև «Դայ դատի» հանձնախումբը:

Դամայնքի կարևոր ազգային կազմակերպություններից էր «Դայ բարեգործական ընդհանուր միությունը» (ԴԲԸՄ), որ մասնաճյուղ ուներ նաև Մանչեստրում: Դենց այստեղ էլ գոյություն ուներ կիրակնօրյա դպրոց:

Մշակույթի հայ գործիչների մեջ հիշատակելի են թատերական բեմադրիչ Շովիաննես Փիլիկյանը, որն անգլիական թատրոնում նորովի մեկնաբանում էր հին աշխարհի թատերախաղերը և նկարիչ Եղման Այվազյանը: Այս արվեստագետների անունները հայտնի են Սփյուռքում և Դայաստանի արվեստասեր հասարակայնությանը:

Լոնդոնահայ բիզնեսմեն Վարդան Ուզունյանը առաջիններից մեկը գործնական հարաբերություններ հաստատեց Դայաստանի հետ: Նրա նախաձեռնությամբ հայկական կոնյակը՝ «Նոյակ» անունով, վաճառվում էր Եվրոպական շուկաներում:

Դամայնքը իր լուրջ ներդրումը կատարեց երկրաշարժից տուժածներին փուրով օգնություն հասցնելու գործում առաքելով երիկամների դիալիզի սարքեր և այլ նյութեր: Արցախյան շարժմանը իրենց աջակցությունը բերեցին համայնքի բոլոր ուժերը միասնաբար՝ դիմումներ հղելով զանազան հասցեներով, ցույցեր, երթեր ու հանրաժողովներ կազմակերպելով:

ԻՏԱԼԻԱ

Գաղութը շատ փոքր է, հազիվ 1.0 հազար մարդ: Նշանակությունը, սակայն, բավականին մեծ է, եթե նկատի ունենանք նրա արդյունավետ ազգային–մշակութային գործունեությունը:

Առաջին հերթին պետք է նշել, անշուշտ, Վենետիկի Միսիֆարյան միաբանությունը: Նա շարունակում է բազմապատկել ու պահպանել ազգային մեծ հարստությունները, որոնք կուտակվել են Սուլը Ղազար կղզում երախտավոր վանականների մի քանի սերունդների հայրենանվեր ջանքերի շնորհիվ: Միարանության ծեռագրատանը կուտակված է 5000 ձեռագիր, մատենադարանն ունի 60 հազար հայերեն հին ու նոր գրքեր, 45 հազար օտար հրատարակություններ:

Միարանությունը հրատարակում է «Բազմավեպ» ամսագիր: Կերպին տարիներս հաջողվեց միավորել Վենետիկի և Վիեննայի միարանությունները, որոնք տարանջատվել էին դեռևս XIX դարում:

Կերպին 20–25 տարիների ընթացքում միարանությունը ծանր դժվարություններ վերապրեց: Նախ՝ 1975 թվականին հրդեհի զոհ գնացին բավականին թվով XVI–XVII դարերի տպագիր մատյաններ, եկեղեցապատկան իրեր, տարագներ: Ապա՝ ութունական թվականների առա-

զին կեսում միաբանությունը կանգնեց ֆինանսական սնանկության եզրին, քանի որ անհաշվենկատ գործարքի մեջ էր մտել իտալական մի ընկերության հետ, որն արդյօն իսկ սնանկ էր: «Պարտքերը մարելու համար միաբանությունը կորցրեց մեծարիկ կալվածներ (վիլաներ, հարկարաժիններ, հողաշերտեր և այլն): Ամբողջ Սփյուռքով մեկ կազմակերպվեց հաճախակություն: Իր լուման ներդրեց նաև Կազզեն Ա-ն:

Մեծ է Վենետիկի Սուրատ-Ռափայելյան վարժարանի դերը Սփյուռքի մտավորական կաղդերի պատրաստման գործում: Բարձրագույն հոգևոր կաղդեր հայ կաթոլիկ եկեղեցու համար պատրաստում է Հոռոմի Լունյան վարժարանը:

Իտալիայում հայկական համայնք, ըստ եռթյան, գոյություն ունի միայն Սիլանում, որի անդամները, մեծամասնությամբ, պատկանում են Դայաստանյաց առաքելական եկեղեցուն: Այստեղ գործում են «Իտալիայի հայոց միությունը» և «Դայ մշակութային միությունը»: Երկու կազմակերպությունների միացյալ ջանքերով 1953 թվականին Սիլանի կենտրոնում բացվեց «Դայ տունը», որն օժտված է արդիական բոլոր հնարավորություններով:

Իտալահայությունը վճռական մասնակցություն ունեցավ մի քանի խոշոր և կարևոր ծեռնարկությունների հաջողության մեջ: 1965 թվականին Հոռոմի և Սիլանի բարձրագույն դպրոցներում մտցվեց «Դայ ճարտարապետության» դասընթացը: «Դայկական միջնադարյան ճարտարապետությունը» խորագրով ցուցահանդեսներ բացվեցին Հոռոմում և Վենետիկում 1968 թվականին: Նույն թվականին Սիլանում Արմեն և Ջակոբ Մանուկյան եղբայրների նախաձեռնությամբ հիմք դրվեց «Դայկական ճարտարապետության նմուշագրեր» մենագրությունների շարքի հրատարակության գործին: Ըքեղ տպագրական կատարմամբ, անգլերեն և իտալերեն լեզուներով արդյօն լույս են տեսել շուրջ 20 աշխատասիրություններ («Դայպատ», «Խաչքար», «Սանահին» և այլն):

Սիլանի գույգ միությունների համատեղ ջանքերով ստեղծված «Դայկական ճարտարապետություն IV–XVI դարերում» շրջիկ ցուցահանդեսը ներկայացվեց Պարմա, Ֆենովա, Բարի, Տուրին, Սիլան քաղաքներում, ինչպես նաև Վիեննայում, Բուենոս Այրեսում, Բարսելոնում, Բեյրութում:

Ամենակարևոր ծեռնարկումներից մեկը «Դայ մշակութի սինպղողումների» կազմակերպումն էր: Առաջինը տեղի ունեցավ Բերգամոյում 1975 թվականին: Այնուհետև ստեղծվեց մշտական մարմին «Դայ մշա-

կույրի ուսումնասիրության և վավերագրման կենտրոն», որ իրականացրեց Երկրորդ միջազգային սիմպոզիումը Երևանում 1978 թվականին, երրորդը՝ դարձյալ Խոտալիայում 1981 թվականին, չորրորդը՝ Կրկին Երևանում 1985 թվականին: Կենտրոնի ղեկավարն էր պրոֆեսոր Ադրիան Ալպագը Նովելլան: Խոտալիայությունը և կենտրոնի ղեկավարությունը մտադիր են շարունակել արդեն ստեղծված լավ ավանդույթը:

Առաջին ցորեական համաժողովը կազմակերպվել է 1981 մայորային մասնակիությամբ՝ Խոտալիայունը և Արքայությունը միանալու պահին:

ԱՎԱՏՐԻՒՄ

Երկրում հայերի թիվը մեծ չէ, թեպետ վերջին տարիներս նկատվում է մեխանիկական աճի միտում: Այստեղ է գտնվում Հայ առաքելական եկեղեցու Կենտրոնական Եվրոպայի և Հվետիայի հայրապետական պատվիրակը:

Չնայած իր փոքր թվին՝ ավատրահայությունը կարևոր դեր ունի Սփյուռքում: Շարունակում է իր լուրջ հայագիտական գործունեությունը Վիեննայի Միտրարյան միարանությունը: Դրատարակում է «Հանդես ամսօրյա» ամսագիրը, որին աշխատակցում են միարանության անդամները և օտարազգի քանասերները: Հողվածներով և ուսումնասիրություններով հանդես են գալիս նաև Հայաստանի գիտնականները: Միարանությունն ունի հարուստ գրադարան, ծեռագրերի և մամուլի հավաքածուներ:

XXI դարասկզբին համայնքում գործում էին Ավստրիայի հայ առաքելական համայնքի Եկեղեցական վարչությունը, Ավստրո-հայկական մշակութային միությունը, ՔԲԸ-ի մասնաճյուղը, Ավստրահայ ուսանողական միությունը: Կային պարի, թատերական և երգչախմբեր: Ավստրահայ ուսանողությանը նյութական օգնություն հասցնելու նպատակով հիմնվել էր «Նեղին Յաղության» ֆոնդը:

Վիեննայում հրատարակվում էր «Հրայր» շաբաթթերը, որը չեղող կեցվածք ուներ Սփյուռքի հայ քաղաքական ուժերի նկատմամբ:

Ավստրահայ համայնքը դեռ 80-ականների կեսերից փորձեր արեց Սփյուռքում ազգային համաձայնության քաղաքականության ներդրման ուղղությամբ: Պաշտոնական և հրապարակային ծեռնարկումներին, որպես կանոն, պարզվում էին թե եռագույնը և թե Խորհրդային Հայաստանի պաշտոնական դրոշը, իբրև քանախոսներ հրավիրվում էին տարբեր քաղաքական ուղղությունների ներկայացուցիչներ:

Վիեննայի օպերայի առաջատար երգչուհիներից էին Արփինե Փեղի-վանյանը և Սոնա Ղազարյանը:

Համայնքը ծանութեան ժամանակակից առաջատար երգչուհիներից էին Արփինե Փեղի-վանյանը և Սոնա Ղազարյանը:

Հունական առաջատար երգչուհիներից էին Արփինե Փեղի-վանյանը և Սոնա Ղազարյանը:

Համայնքը ծանութեան ժամանակակից առաջատար երգչուհիներից էին Արփինե Փեղի-վանյանը և Սոնա Ղազարյանը:

Համայնքը ծանութեան ժամանակակից առաջատար երգչուհիներից էին Արփինե Փեղի-վանյանը և Սոնա Ղազարյանը:

Երբև եկեղեցական վիճակ բաժանված է երկու թեմերի, որոնցից մեկը գտնվում է Ամենայն Հայոց կարողիկոսության իրավասության տակ և մյուսը՝ Մեծի Տան Կիլիկիո: Ցուրաքանչյուրն ունի իր ազգային-եկեղեցական մարմինները: 80-ական թվականների վերջերին երկու արումների գերագույն մակարդակով ծեղոց բերված համագործակցությունը, ինչպես ամենուրեք, Հունաստանում ևս դեռևս իր համապատասխան դրական անդրադարձը շի գտել ավելի ստորին թեմերի և եկեղեցական համայնքների գործունեության մեջ: Սուր հակամարտությունը շարունակվում է հանդես գալով իրև Ներիամայնքային քաղաքական պայքարի դրսորման ծև:

Ուրեմն և, բնականաբար, գործում են ազգային կուսակցությունները: Շուրջ 20 տարի առաջ Արենք փոխադրվեց ՀՀ դաշնակցության քյուրոն: Այստեղ էր իրատարակվում նրա պաշտոնաթերթը՝ «Դրոշակ» տեսական-քաղաքագիտական ամսագիրը: 1987 թվականին Արենքում ՍԴ հնչակյան կուսակցությունը գումարեց իր համաժողովը:

ՍԴ հնչակյան կուսակցության «Արարս» մշակութային միությունը հիմնադրվել է 1978 թվականին: Ներին տարածայնությունների պատճառով միությունը ճնշվեց: 1981-ին ստեղծվեց «Սևան» մշակութային միությունը:

ՀՀ դաշնակցությունն ուներ տարբեր կազմակերպությունների բա-

ՀՈՒԱՍՏԱՆ

վականին լայն ցանց. Երիտասարդական, մարզական, կանանց միավորումներ, «Համազգային» մշակութային միության մասնաճյուղը, դպրոցներ Արենքում, Սալոնիկում և այլուր: Յրատարակվում էր «Ազատ օր» օրաթերթ:

Ուամկավար ազատական կուսակցության հովանու տակ էր «Արարատ» մշակութային-մարզական միությունը, որն ուներ ակումբ, գրադարան, թատերական և եստրադային խմբեր: Յրատարակում էր «Նոր աշխարհ» շաբաթթերթը: Գործում էր Կալպակյան տարրական վարժարանը: Միության հետ համագործակցարար աշխատում էր ՀԲԸՍ-ի Երիտասարդաց ընկերակցությունը: Ինքը՝ Հայ բարեգործական ընդհանուր միության մասնաճյուղը, հիմնվել է 1935 թվականին:

Համայնքում հայ համայնավարական ուժերը բավականին գորե են եղել Երկրորդ աշխարհամարտի տարիներին՝ մաս կազմելով հակաֆաշիստական դիմադրական շարժմանը, և անմիջապես պատերազմից հետո՝ նպաստելով հայրենադարձության գործին: Յրատարակել են «Նոր կյանք» օրաթերթը: Ներկայում դադարել են գործել:

1988 թվականին Հունաստանում տեղի ունեցավ միջազգային գիտաժողով, որը նյութ ուներ ժամանակակից թուրքիայի ծավալապաշտական քաղաքականությունը: Գիտաժողովի նախաձեռնողն ու կազմակերպիչն էին նոր ժամանակներում հայ ազգային-ազատագրական հեղափոխական շարժման ուժերը:

ԲՈՒՂԱՐԻԱ

Քանական թվականների կեսերին համայնքի բնակչությունը շուրջ 25 հազար էր, իսկ հետպատերազմյան հայրենադարձության նախօրեին՝ 35 հազար: Ընդ որում, 95 տոկոսից ավելին՝ քաղաքարնակներ: Կենտրոնացած էին Սոֆիա, Պլովդիվ, Վառնա, Ռուսե և ուրիշ քաղաքներում:

Համայնքի ազգային կյանքը շատ ավելի աշխույժ էր նախապատերազմյան տարիներին, երբ նրա հիմքում ընկած էր նյութատնտեսական լուրջ կարողությունը: Քանական-երեսնական թվականներին բուլղարահայության ներդրումները երկրի տնտեսության առանձին բնագավառներում հասնում էին շոշափելի չափերի: Դատկապես մետաքսագործության, կաշեգործության, գորգագործության, առևտուրի և արհեստների տարրեր մարզերում հայազգի ծեռնարկատերերը որոշ քաղաքնե-

րում գրավում էին հրամայական դիրքեր: Յենց այդ ճյուղերում էլ մեծ մասամբ իր աշխատանքն էր գտնում իհայ ազգաբնակչությունը: Գործում էին «Թրակիա», «Սևան» հայկական դրամատները:

Ինչպես Սփյուռքի այլազան համայնքներում, այստեղ էլ ազգային կյանքի յուրատեսակ շարժիչն էր քաղաքական պայքարը. որը հետապնդում էր այս կամ այն հոսանքի կողմից ազգային կյանքը իր մենաշնորհյալ հակակշոր տակ ունենալու նպատակը: Եվ, բնականաբար, թիրախը թեմական խորհուրդն էր: Ինչպես երբեք որևէ ուրիշ վայրում, բուլղարահայության պատմության մեջ քսանական—երեսնական թվականները, մինչև 1935 թվականին ֆաշիստական բնույթի կառավարության հաստատումը, նշանավորվեցին թեմական խորհրդի շուրջ ծագած վեճերով ու պայքարով: Իսկ պայքարի բուն բովանդակությունը, հիմնականում, խորհրդային հայաստանի նկատմամբ վերաբերնունքի հարցն էր:

Աշխույժ գործում էին ազգային քաղաքական բոլոր կուսակցությունները, բավականին զրեեղ հոսանք էր նաև Բուլղարիայի կոմունիստական կուսակցության հայազգի անդամների թևը: Մեծ թիվ էին կազմում հայրենակցական միությունները, որոնք բոլորը դադարեցին պատերազմի նախօրեին: Կային որբախնամ և աղքատախնամ մարմիններ, Դայ քարեգործական ընդհանուր միության մասնաճյուղը, Երիտասարդական, մարզական միություններ: Դայ Երիտասարդները երեմն նույնիսկ հասնում էին մարզական քարձը նվաճումների: Դասկովոյի և Վառնայի ֆուտբոլի թիմերի մի շարք խաղացողներ ներգրավվել են Բուլղարիայի ազգային հավաքականի կազմում: Նույն կարգով, Պլովդիվի հայ մարզիկներից ունանք՝ թերև ատլետիկայի գծով: Քաղաքական կուսակցությունները և հոսանքները բացեցին մինչև 50 ակումբներ, ակումբ—գրադարաններ, որոնք տանում էին մշակութային կենտրոնների դեր: Ակումբների նման առատությունը այլևս հատուկ չէ Սփյուռքի մյուս համայնքներին:

Դամայնքի շատ անդամներ իրենց լուման մուտքեցին ֆաշիզմի դեմ պայքարում, հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում մասնակցելով ընդհատակյա շարժումներին:

Դամայնքում գիմնազիաներ (միջնակարգ դպրոցներ) չեն եղել: Գործել են շուրջ մեկուկես տասնյակ տարրական (4—ամյա) դպրոցներ ու մի քանի պրոգիմնազիաներ (7—ամյա): Երեսնական թվականների վերջերին աշակերտության ընդհանուր թիվը հասնում էր 2200-ի:

Երեսնական թվականներին համայնքում լույս են տեսել ավելի քան Երկու տասնյակ թերթեր և ուրիշ պարբերականներ:

Դայ համայնավարների հրատարակած «Կարմիր լուրեր» թերթը, որ լույս էր տեսնում Պլովդիվում 1919 թվականին, առհասարակ առաջին կոմունիստական պարբերականն էր Սփյուռքի տարածքում:

ՄԵ հնչակյան կուսակցությունը հրատարակեց «Պալքանյան մամուլ», ՀՀ դաշնակցությունը «Ազատ խոսք», Ռամկավար ազատական-ները «Փարոս» թերթերը: Կուսակցություններն ունեցել են մամուլի ուրիշ օրգաններ ևս:

Դամայնքում իրականացվել է նաև ազգագրական, գեղարվեստական, պատմագիտական և այլ կարգի գրականության հրատարակություն:

Բուլղարահայության ազգային կյանքում արմատական փոփոխություններ տեղի ունեցան պատերազմից հետո, եր երկրում հաստավեց ամբողջատիրական վարչակարգը: Ենիշտ է, առաջին մի քանի տարիների ընթացքում դեռևս որոշ դյուրություններ կային: Ստեղծվեց նույնիսկ Ստեփան Շահումյանի անվան հայկական միջնակարգ դպրոց:

Ծուտով, սակայն, իշխանությունների քաղաքականությունը երնիկական փոքրանասնությունների նկատմամբ բյուրեղացավ: Վարչակարգը հետամտում էր արագընթաց ուժացման քաղաքականությունը, բայց, ըմբռնելով, որ նման գործը մեկ հարվածով անհնարին է իրականացնել, ջանում էր փոքրանասնական երնուների, այդ թվում և հայության, ազգային գիտակցության աստիճանական սահմանափակման ճանապարհով գնալ: Կուսակցություններն ու հոսանքները արգելվեցին, ստեղծվեց միասնական մի միություն «Երևան» անունով: Պահպանվեց եկեղեցական թեմը և թեմական վարչությունը, պայմանով, որ նա պետք է ծառայեր հավատի պետքերին միայն:

1953 թվականից ի վեր իշխանություններն արգելեցին «Երևան» կազմակերպությանը գրադպելու համայնքի վարչատնտեսական և կրթական հարցերով, որոնք պետությունը համարեց իր մենաշնորհը: Նախկին հայկական դպրոցներն անցնում էին պետությանը (ֆինանսավորում և կառավարում) և դեկավարվում միասնական պետական ծրագրերով: Դամայնքին արտոնվեց հոգալ հայոց լեզվի դասավանդման հարցերը: «Երևան» կազմակերպությունը վերափոխվեց «Երևան-մշակութային միության»:

«Միությունը» այդ պայմաններում կատարեց որոշ գործ: Ստեղծվեցին թատերախմբեր, երգչախմբեր, երգի-պարի համույթներ, նվագախմբեր, գրադարան-ընթերցարաններ: Գործի մարզական բաժինը մնաց համարուղարական իրավասության տակ:

«Միությունը» հրատարակում էր գաղութի միակ «Երևան» թերթը:

Բոլցարիայի օրինակով դիտելի է մի օրինաշափություն, որն առանց բացառության գործել է սոցիալիստական վարչակարգ հոչակած բոլոր երկրներում ԽՍՀՄ հանրապետություններում, Արևելյան Եվրոպայի պետություններում, նույնիսկ «սոցիալիզմի ուղին բռնած» Միրիայում, Եթովպիայում և այլուր: Իր ազգային պետության տարածքից դուրս գտնվող ազգաբնակչությունը, որ ուրիշ «սոցիալիստական» համակարգում կազմում էր երնիկական փոքրամասնություն, ենթակա է փութացված ուժացման: Ստիպողական ասխմիյացիայի այդ գործընթացը պետական քաղաքականության մակարդակի էր քարձրացված: Եվ, որպես կանոն, առաջին հարվածը ուղղվում էր երնիկական փոքրամասնության կրական համակարգին, այսինքն՝ նոր աճող սերնդի հոգեբանությանն ու գիտակցությանը:

Բոլցարիայից անընդհատ հոսանքով հայության արտագաղթը, հիմնականում, հենց դրանով էր բացատրվում: Այժմ (2003 թ.) համայնքում հայ ազգաբնակչությունը շուրջ 5 հազար է:

ՈՈՒՄԻՆԻԱ

Համական թվականների կեսերին համայնքի թվաքանակը 25 հազար էր: Ինչպես և Բոլցարիայում, ոռւմինահայությունն ուներ տնտեսական հաստատում խարիսխ, որի վրա և բարձրանում էր ազգային կյանքի շենքը: Դայազգի ծեռնարկատերերին էին պատկանում խոշոր ընկերություններ և գործարաններ հյուսվածքեղենի, կաշեգործության, կումետիկայի և այլ մարզերում: Բնակչությունը հիմնականում տեղաբաշխված էր քաղաքներում և գբաղվում էր արհեստներով, մանր առևտով: Քսանական թվականներին լուրջ տոկոս էր կազմում քանվորությունը:

Փոքրաթիվ չի եղել հայ մտավորականությունը ուսուցիչներ, թժիշկներ, փաստաբաններ, գրողներ, արվեստի գործիչներ: Սկիուլորում հայտնի անուններ էին բանաստեղծներ Եղվարդ Գոլանճյանը, Զարեհ Պլաուլը, արձակագիր Մ. Պոտուրյանը, Ըկարիչ Շիկ Դամայոյանը: Խոկ հայ լրագրության երախտավոր Դակոր Սիրունին (նոլոյան) քսանական թվականներին հրատարակում էր «Նավասարդ» գրական հանդեսը, որ նշանավոր էր գեղագիտական յուրահատուկ ըմբռնումներով:

Ուլմինահայությունը կազմակերպված է իբրև Դայաստանյաց առա-

թելական եկեղեցու թեմ: Դետպատերազմյան շրջանում թեմակալ առաջնորդն էր Վազգեն Եախսկոպոս Պալճյանը, որ ավելի ուշ՝ 1955 թվականին, ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս: Խակ Երեսնական թվականների վերջերին Երիտասարդ Պալճյանը Բուժսարեստում հրատարակել է «Հերկ» անունով ամսաթերթ, որն աչքի է ընկել իր նոր ազատամտական հարցադրումներով ու մտածելակերպով:

Դամայնքում գործել են ազգային բոլոր կուսակցությունները՝ մամուլի իրենց օրգաններով: Դամայնքն ունեցել է մի շարք դպրոցներ, մշակութային Երիտասարդական, քարեսիրական հաստատություններ:

Պատերազմից հետո նոր վարչակարգի ստեղծումով Երկրում կացությունը արմատապես փոխվում է: Ազգայնացվում է արդյունաբերական և առևտրական դրամագլուխը, պետական քաղաքականության մակարդակի վրա է դրվում եթնիկական փոքրամասնությունների շուտափությունը ուժացման գործը: Իր սայրով Տրանսիլվանիայի հունգար ազգարնակչության դեմ ուղղված այդ քաղաքականության առաջին գոհերը եղան հայերը: Փակվեցին նրանց բոլոր մշակութային հիմնարկությունները, արգելվեցին ազգային կուսակցությունները, դպրոցներն անցան պետական հովանավորության տակ՝ պարտադիր կիրառելով կրթական նախարարության ծրագրերը: Բազմաթիվ ազգային կյանքը սեղմվեց Ստեփան Շահումյանի անվան մի կազմակերպության մեջ, որը հրատարակում էր «Նոր կյանք» թերթը: Թերթը, ըստ եռթյան, ոչ թե հայկական էր, այլ ոումինական:

Ոումինական իշխանությունները, որ տևական ժամանակ հակառակորդի դիրք ունեին ԽՍՀՄ-ի նկատմամբ, շատ ավելի ծայրահետ էին հայության իրավունքների բռնաբարման մեջ, քան դա նկատվում էր Բուլղարիայում: Մինչև խակ համայնքի մշակութային կապը Հայաստանի հետ խզված էր: Ոումինիայի պաշտոնական գործիչները հայությանը դիտում էին իրուս անվտահելի տարր:

Բնականաբար, հենց հիսնական թվականներից ծայր առավ հայության արտագաղթը: Այժմ (2003 թ.) ոումինահայության թիվը չի անցնում 5,0 հազարից:

Չառչեսկուի վարչակազմի տապալումից հետո որոշ միտում է նկատվում համայնքի ազգային կյանքի վերընջուղման ուղղությամբ:

Ներկայում (2003 թ.) Բելգիայի հայերի թիվը շուրջ 1500 է, որոնց կեսից ավելին ապրում է Բրյուսելում, իսկ մյուս մասը՝ Անվերս, Լիեժ և այլ քաղաքներում: Դանայնքը մեծացել է ի հաշիվ Պարսկաստանից, Թուրքիայից, Մերձավոր և Միջին Արևելքից գաղթած հայերի: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո 1959 թ., Բրյուսելում ստեղծվել է Բելգիայի համայնքային Վարչություն: Բրյուսելում գործում են մի շարք հայկական կազմակերպություններ, որոնց թվում Դայ ուսանողների միությունը, Բելգիահայ տիկնանց միությունը, Դայ երիտասարդական միությունը Անվերսում: Պարբերական հրատարակություն լույս չի տեսանում:

Դանայնքային Վարչության գործումների հիմնական սկզբունքներից մեկն է հնարավորության սահմաններում աջակցել հայ ժողովորի փոխօգնության կամ մշակութային միջոցառումներին: Վարչությունը դեպքից դեպք կազմակերպում է երեկոներ, դասախոսություններ և այլն, որոնց նպատակն է ծանոթացնել հայ մշակույթը, ժողովորի ավանդույթները տեղի հասարակայնությանը, զարկ տալ հայոց լեզվի ուսուցմանը հատկապես երիտասարդության շրջանում:

1990 թվականին կառուցվեց Եկեղեցի:

Բրյուսելի կենտրոնական քաղանասերից մեկում քարձրանում է մի քանի հարկանի շատ հարմարավետ և լավ կահավորված շենք, որտեղ տեղավորված է բելգիահայ վարչությունը: Շենքը բելգիահայերի սեփականությունն է, այն գնվել է հիմնականում մեծահարուստ Մելանկրոն Արսլանյանի Նվիրատվությամբ:

Բելգիայի հայ համայնքը բարեկեցիկ է: Դայերը հիմնականում խոշոր առևտուրականներ են, գրադարաններ են աղանանդի առևտորվ, կան նաև մտավորական գործիչներ:

Այրակ Միհիքարյան անվանի Եգիպտագետ, Բրյուսելի համալսարանի դասախոս (Եգիպտական արվեստի պատմության), մի շարք անգամներ մասնակցել է հայկական մշակույթին Նվիրված միջազգային գիտաժողովների: Ունի հայկական արվեստի հարցերին առնչվող բազմաթիվ աշխատություններ:

Պետրոս Ալահայոյան երաժշտագետ, Բրյուսելի ռադիոյի աշխատակից, ջանք չի խնայում ռադիոկայանի միջոցով պրոպագանիզելու հայկական երաժշտությունն ու հատկապես արվեստագետներին: Նա

1985 թվականից նախաձեռնել է հայ երգահավաքումի արշավ. ծայնագրում է և գրի առնում 75–80-ը անց մամիկների ու պապիկների երգերը, պատմածները, ականատեսի և վերապրողի վկայությունները, փաստերը, իհն հայկական երգերը:

Դանիել Նազարյան ջուրակահար, Երևանի պետական կոնսերվատորիայի շրջանավարտ: Նվազում է Բրյուսելի օպերային թատրոնի նվազախմբում:

Դովիհաննես Անագոսյան երաժիշտ, նվազում է ալտի վրա: Անտվերապենի սիմֆոնիկ նվազախմբի մենակատար: Իր հնարավոր աջակցությունն է թերում մշակութային արժեքների հայրենադարձության գործին:

Դամայնքը սերտ կապեր է պահպանում հայրենիքի հետ:

2003 թ. Բելգիայում կայացավ Եվրոպայի հայկական կազմակերպությունների համաժողով, որը ստեղծեց մի նոր կենտրոն՝ «Եվրոպայի հայկական համագումար» անունով:

ՀՈԼԱՆԴԻԱ

Սերկայիս համայնքը սկսել է կազմավորվել Երկրորդ համաշխարհային պատերազմից անմիջապես հետո: Գրանցվել է ներգաղրի երեք ալիք: 1946 թվականին Խոհոնեզիայից, երր քաղաքական անստույգ վիճակը ստիպում է համայնքին գրեթե գլխովին (300 մարդ) լքելու Դոլանդիայի նախսկին գաղութը և փոխադրվելու մայր Երկիր: 1963 թվականին Երանից և 1966 թվականին Թուրքիայից: Վերջին երկու ալիքի պարագայում էլ շարժառիթը աշխատանքի որոնումն էր: Դոլանդահայության մեխանիկական աճի միտումը շարունակվում է:

Այժմ (2003 թ.) համայնքի ազգաբնակչության թիվը շուրջ 4000 է: Գլխավորապես տեղաբաշխված են Ամստերդամում, Ալմելո, Ամսֆորտ քաղաքներում: Տարածված երևույթ է հայերեն գրել-կարդալ չիմանալը: Մի զգալի մասը զգիտի նաև խոսել և գործածում է թուրքերեն կամ քրդերեն լեզուները: Այս և նման երևույթների դեմ իրենց ջանքերն են կենտրոնացնում գոյություն ունեցող միություններն ու մարմինները:

Դամայնքում գործում են. Դոլանդիայի հայկական միությունը (հիմնադրված Ամստերդամում 1975 թ., Ամսֆորտում 1976 թ.), «Արարատ» մշակութային միությունը (Ամստերդամում 1979 թ.): Վերջինս երկու տարի հրատարակել է «Պայքար» անունով ամսաթերթ: «Արարատ» միությունը գոյություն ունեցող միություններն ու մարմինները:

թյունը ձգտում էր գաղութում միավորիչ դեր կատարել: Ալմելոյում, ուր շուրջ 400 հայեր միաժամանակ հայտնվեցին 70-ական թվականների վերջերին, որոնք ներգաղթել էին Անատոլովի ներքին շրջաններից, 1981 թվականին ստեղծվեց Դայկական եկեղեցական միություն, իսկ մինչ այդ ՀԲԸ նախագահ Ա. Մանուկյանի նվիրատվությամբ 1979-ին նորագաղթածները օժտվեցին «Դայ տուն»—ով: Այստեղ սիստեմատիկ տարվում են հայերենի և հայոց պատմության դասընթացներ:

Կարևոր դեր է վերապահված Դաազայի «Արովյան» մշակութային միությանը, որը հիմնվել է 1984 թվականին: Նրա նպատակն է պահպանել հայկական ինքնությունը, ազգային և կրոնական ավանդույթները, անդապնդել համայնքի կապերը Դայաստանի հետ, նպաստել Դոլանդիայի և հայ ժողովուրդների բարեկամության հաստատմանը:

ԳԵՐՄԱՆԻԱ

Դայության թիվը մոտ 10 հազար է (2003 թ.): Գոյություն ունի մեխանիկական աճի միտում: Զանգվածային ներթափանցումը սկսվել է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Բնակվում են փոքրարիվ զանգվածներով Քյոլնում, Դամբուրգում, Բեռլինում, Շտուտգարտում, Մյունիսենում, Մայնի Ֆրանկֆուրտում, Ֆորցայմում և մի քանի ուրիշ քաղաքներում ու քաղաքամերձ վայրերում:

Մեկ համայնքի մասին խոսելը մինչև վերջերս գրեթե անհնարին էր, որովհետև Գերմանիայի հայությունը չուներ որևէ կուսակցական, մշակութային մարմին: Դավաքականություններն ապրում էին զատ-զատ և միմյանցից անջատ ու հաճախ անտեղյակ, ասես տարբեր երկրների բնակչության լինելին: Տարանջատվածությունը շեշտվում էր նաև այն հանգամանքի թերումով, թե նայած որտեղից է տեղի ունեցել դեպի Գերմանիա հոսքը: Մի քանի տարի առաջ ստեղծվեց Դայաստանյաց առաքելական եկեղեցու թեմ Մայր աթոռ Ա. Էջմիածնի իրավասության ներքո:

Պետք է տարբերակել հոսքի երեք աղյուրները: Դիմնականը Թուրքիան է, որից Գերմանիա է ներթափանցում երկու կարգի զանգված՝ պուլսահայություն և զավառահայություն: Պոլսահայությունը խոսում է հայերեն, ունի մտավոր մակարդակ և կարողություն, գավառից մեծ մասը չի տիրապետում մայրենի լեզվին, կրթությամբ նվազ է, թեավտ ավելի ավանդապահ: Որքան էլ որ տարօրինակ է, հենց Թուրքիայից ներգաղթած

այս զույգ ճյուղավորումների միջև զգալի է տարանջատվածությունը, միմյանց օտարելու երևույթը:

Երկրորդ աղբյուրը Իրանն է: Դեպի Գերմանիա արտահոսքը տեղի է ունենում հատկապես Վերջին քսան տարիներս, իհմնականում, քիչ թե շատ ունեոր խավերի թվից: Իրանահայ ծագման զանգվածը համեմատաբար արագ է անցնում ինքնահաստատման պրոցեսով, ստեղծում իր բիզնեսը, բնականարար, նաև ավելի ոյուրին է ինտեգրվում իր շրջապատի հետ: Պատահական չէ խառնամուսնությունների բարձր տոկոսը այդ զանգվածի մոտ:

Վերջապես երրորդ աղբյուրը Մերձավոր Արևելքն է, որտեղից ներգաղթած հայությունը, թեպետ փոքրաթիվ, բայց, թերևս, միակ զանգվածն է, որ ատակ է կատարելու շաղախի, միավորիչի դերը:

Դայության մեջ կանոնավոր կազմակերպված կուսակցական գործունեություն չկա: ՀՅ դաշնակցության ազդեցության ոլորտում գործում էին Սյունիսին «Ազատություն» ռադիոկայանի հայկական խմբագրությունը և «Դայկական հարցի ինստիտուտը»: Մասնավոր զնահատանքի է արժանի ինստիտուտի ծրագիրը, որն արդեն իսկ կենսագործվում է օտար լեզուներով հրատարակելու 10 հատոր վավերագիր և այլ փաստաթղթեր Դայ դատի վերաբերյալ:

1968 թվականին ստեղծվեց «Դեսենի հայ մշակութային միությունը»: Ծովուտգարդում գործում էր «Դայկական կենտրոնը»: Ֆորցայմում և Կյոթինգենում 70-ական թվականների վերջերին իհմնվեցին մշակութային միություններ: Ֆորցայմում գործում էր «Սարդարապատ» պարախումբը: 1977-ին Սյունիսնում իհմնվեց «Դամարավարիական հայկական հայրենակցական միությունը», իսկ մեկ տարի անց՝ ԴԲԸ-ի մասնաճյուղը: Քյոլնում կար եկեղեցի, եկեղեցական միություն: Ունեին «Աղթամար» ֆուտբոլի թիմ և ազգագրական պարախումբ: Գործում էր հայոց լեզվի դասընթացը: Դամբուրգում ևս կար «Մշակութային միություն»:

Բոլոր այս միություններն ու կենտրոնները ջանում էին ստեղծել և ապահովել հայության ազգային կեցության խարիսխների գործունեությունը՝ իհմնել եկեղեցիներ, դպրոցներ, մշակութային, մարզական ակումբներ: Դրանցից շատերը կապեր էին պահպանում Դայաստանի հետ: Գերմանիայում ապրում էին բավականին թվով ունեոր հայեր, որոնք նպաստ են բերում ազգային գործերին: Դամբուրգի միջնորդական ընկերություններից մեկի տեր ու տնօրին Արքահամ Գութունյանը Դայաստանին նվիրեց 2 միլիոն դոլար, որը գործածվել է զանազան ծրագ-

րերի, այդ թվում, երիկամների մեջ գոյացած քարերը փշողելու սարքավորում ծեղոր բերելու նպատակով:

ՃՎԵՂԻԱ

70-ական թվականներին համայնքում կար մինչև 150 հայ: Յիմնվեց Ստովիոլմի հայկական մշակութային միությունը: Լիբանանի քաղաքացիական պատերազմների և, այնուհետև, Իրանից արտազադրի հետևանքով շվեդահայությունը հասավ շուրջ 1500-ի: Յուրօք Մերձավոր և Միջին Արևելքում հայությունը հաջարած է առաջարկած առաջնային գործադրություններում:

1980 թվականից սկսած՝ համայնքը կազմակերպվել է իրու կրոնաեկեղեցական վիճակ՝ Ամենայն Դայոց կաթողիկոսության հովանու ներքո: Սայրաքաղաքից քաջի, հայերը բնակվում են Ուփսալա, Մալմե և մի քանի ուրիշ փոքրիկ քաղաքներում: Կան մեկորյա դպրոցներ: Կառավարությունը աջակցում և վարձատրում է հայոց լեզվի ուսուցիչներին:

Գործում էին նաև Դայ-շվեդական մշակութային միությունը, Ուփսալայի Դայ մշակութային միությունը, Վարսովումի մշակութային «Մասիս» միությունը, Սանվիեն-Օցեյրուի Դայ մշակութային «Վան» միությունը, Գորլանդի Դայ մշակութային «Արարատ» միությունը, Ստոկհոլմի «Արարատ» միությունը, Ուփսալայի Դայ մշակութային «Ռաֆֆի» միությունը, Դալմարաթի Դայ մշակութային «Անի» միությունը, Յոքեմբորի Դայ մշակութային միությունը, Սադերբելի Դայ մշակութային միությունը: Դամայնքը աշխույժ կապեր է պահպանում Դայրենիցի հետ: Միությունների նպատակն է ոչ միայն հայապահպանության խնդիրը, այլև շվեդացիներին հայ մշակույթին ծանոքացնելը:

1990-ի վերջերին տեղի ունեցավ հայկական միությունների և միավորումների համագումար, որի նպատակն էր ստեղծել համայնքի ազգային և կրոնական ղեկավար մարմին, ինչպես նաև՝ մշակութային միությունների աշխատանքները համադրող մի «ընկերակցություն»:

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԵՎ ԴԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Դայությունը տարածված է աշխարհամասում՝ մեկը լուրերի՝ 4-5 ընտանիք բնակվում է նույնիսկ Ալասկայում: Փոքրաթիվ հայություն կա

Մերսիկայում, Հատինական Ամերիկայի մյուս երկրներում: Կազմակերպություններ չունեն: Վերջին տարիներու Շիլիում բնակվող հայերը, որ ըստ լուրերի շուրջ 1000 հոգի են, փորձեր են անում կազմակերպվելու և կապեր են հաստատում Արգենտինայի Կորդորա քաղաքի հայ համայնքի հետ: Դաստատուն և ամուր համայնքներ կան աշխարհամասի վեց երկրներում՝ ԱՄՆ-ում, Կանադայում, Արգենտինայում, Բրազիլիայում, Ուրուգվայում, Վենեսուելայում:

ԱՄՆ-ում համայնքները երկիրեղկված են համաձայն իրենց եկեղեցական կարգավիճակի: Այդ երկրում գուգահեռարար գործում են Ամենայն Դայու կաթողիկոսության և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության իրավասության ներքո գտնվող թեմերը: Այդ առումով միատարր է Դարավային Ամերիկայի հայությունը: Արգենտինայի, Բրազիլիայի և Ուրուգվայի եկեղեցական վիճակները գտնվում են Մայր արքոյի, իսկ Վենեսուելայինը՝ Անդիլիասի աթոռի իրավասության տակ:

Դարավամերիկյան համայնքներում գործում են համագաղութային մարմիններ իբրև թեմերի ընտրովի կենտրոնական վարչական խորհուրդներ: Պաշտոնական իշխանությունները ճանաչում են դրանք որպես հայ փոքրամասնությունների ազգային-եկեղեցական գործերը կառավարող հաստատությունների: Դե-յուրի պահպանվում է եկեղեցական կարգը: Դե-ֆակտո, սակայն, այդ մարմինների գործունեության կորագիծը խիստ տատանվում է իր արդյունավետության մեջ, նայած այն բանին, թե որ կուսակցությունն է շահել ընտրությունները և տանում է արդյոք ներգաղութային համաձայնության քաղաքականություն, թե գեղադասում է նախապատվություն տալ սեփական առտնին շահերին:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆՐԱՆԳՆԵՐ

20-ական թվականների սկզբներին ԱՄՆ-ում արդեն իսկ կար շուրջ 100 հազար հայություն: Դենց նույն տարիներից սկսած գրեթե անընդհատ հոսքով դեպի ամերիկյան ափեր էին գալիս հայ մարդկանց նորանոր բազմություններ: Վերջին ալիքը, որ իր հործանքի մեջ առավ հիմնականում Մերձավոր ու Միջին Արևելքից և Խորհրդային Դայաստանից արտագաղթող ստվար զանգվածը, սկսվեց 70-ական թվականների կեսերից ու մինչև օրս շարժմներացի մեջ է: Եվ երբ այժմ խոսք է գնում «նո-

բեկների» մասին, առաջին հերթին նկատի է առնվում ինը այս վերջին ալիքի բերածը:

Դժվար է «համայնք» բառով սահմանել մի գանգվածը, որը տարածված է հսկայական երկուով մեկ՝ արևոտությոց արևելք և հյուսիսից հարավ գրեթե բոլոր խոշոր ու միջին քաղաքներում, և որի համրանքը ներկայում մեկ միջինից անց է: Այլ խոսքով ասած՝ այսօր աշխարհի յուրաքանչյուր յոր կամ ութերորդ հայր բնակվում է ԱՄՆ-ում: Դժվար է նաև, որովհետև բավականին խոշոր է բողոքական (ավետարանական և այլն) և կաթոլիկ հավատի հայության թիվը, որոնք ունեն իրենց ուրույն համայնքները՝ համապատասխան կրոնաեկեղեցական կազմակերպություններով հանդերձ:

Ինքը՝ Յայաստանյաց առաքելական եկեղեցին, բաժանված է չորս թեմերի միջև, որոնցից երկուսը գտնվում են Ամերիկայում՝ Կարոլինա-սուրբյան հրավասության տակ, մյուս երկուսը՝ Սեծի Տաճան Կիլիկիո: Ինչպես և Յունաստանում, այստեղ էլ զուգահեռ գործող թեմերում ամեն ինչ մնացել է պայքարի և միջյանց օտարման նախկին դիրքերում: Երբևէ որական քացառություն հիշատակարժան է վերջին տարիներս զուգ թեմերի միասնական ելույթները ի պաշտպանություն Արցախի հայության արդար իրավունքների:

Վիճակագրական ստույգ տվյալների բացակայության պատճառով դժվար է նաև հստակ պատասխան տալ այն հարցին, թե ինչ գրադարձներ ունի հայ ազգարնակչությունը:

20-ական թվականներին ճնշիչ գերակշռություն ուներ ոչ որակյալ աշխատանքի բանվորության թվաքանակը: Մեծ թվով զաղբական ընտանիքները հազիկ էին ծայրը ծայրին հասցնում, ապրում էին նյութական ծայրահեռ թշվառության մեջ: Որոշ օտար բարեխրական կազմակերպություններ նույնիսկ դրամ և նյութական միջոցներ էին հավաքում «սովոր հայերին ի նպաստ»*: Յենց այս զանգվածի առջև էլ լուրջ դժվարություններ էին հարուցվում քաղաքացիական իրավունքների հարցում: 1925–26 թվականներին Օրեգոնում երկարատև դատավարություն գնաց մի ոմն Կարտոզյանի հայցով, որով նա ամերիկյան քաղաքացիություն ստանալ էր ուզում: Դատավարությունը լայնորեն դուրս եկավ ան-

* 1987-ին Եյու Յորի և Լու Անժելիսի առանձին ռեստորաններում ճաշացանէի վրա եղել է «Starving Armenian burger» («Սովոր հայերի հացափաթեթ») կերակրատեսակը, որպես հին օրերի տիտուր հիշատակ: Որոշ հայերի կողմից արված լուրջ սպասնակիք տակ (ճաշարանները այսին պայթեցնեին) անմիջապես հանվել է ճաշացանկից:

հատական հայցի սահմաններից: Որոշվում էր, թե արդյոք սպիտակամը՝ թթ է հայ ազգը, և ամերիկյան քաղաքացիություն, հետևաբար և երկրում ապրելու օրինական իրավունք ստանալով, ատա՞կ է արդյոք դյուրավ ծովալվելու և չի՝ «աղտոտելու» արդյոք ամերիկացու մարդարանական տիպը:

Բնական է, ուրեմն, որ հենց այդ ժամանակահատվածում գաղութում բավականին գորեղ էր համայնավարական թնը, որը սկզբում համես եկավ ինքնուրույն «Դայ բանվորական կուսակցության» ծեռվ, ապա ծովալվեց «Ամերիկայի բանվորական կուսակցության» մեջ՝ պահպանելով հայության մեջ աշխատանք տանելու առաքելությունը, մամուլի իր միջոցները («Բանվոր», «Պրոլետար», «Լրաբեր» և այլն): Նրա նախաձեռնությամբ էլ ստեղծվեց «Ամերիկահայ ազգային խորհուրդը», որը դիմում կատարեց 1945 թվականին Սան Ֆրանցիսկոյում հավաքված ՄԱԿ-ի առաջին ժողովին Դայ դատի պահանջատիրության ոգով, և հրավիրվեց «Դայկական համագումար» 1947 թվականին: Միայն ՀՀ դաշնակցությունը չմասնակցեց հիշյալ ծեռնարկումներին:

Արդեն 30-ական թվականներին, համայնքի տնտեսական ինքնահաստատմանը գուգընթաց, կտրուկ փոխվել է սկսում սոցիալական կազմի պատկերը:

Գերակշռություն են ստանում մանր ու միջին սեփականատեր արհեստավորները, արհեստավոր վաճառականությամբ գրադվողները: Դանդես են զալիս խոշոր ծեռնարկատերեր: Այսօր իսկ կա բանվորություն, հատկապես որակյալ աշխատանքով գրադված մարդիկ, բայց այդ զանգվածը միշտ նվազելու միտում է դրսնորում: Աստիճանաբար, ավելի ու ավելի շատանում է խոշոր դրամատերերի ու ծեռնարկատերերի թիվը: Գյուղատնտեսությամբ գրադվողները երբեք մեծ տոկոս չեն կազմել, թեպետ 20-ական թվականներին որոշ քանակությամբ հայեր սկսեցին մշակել Կալիֆոռնիայի քարերեր հողերը: Այժմ մնացել են առանձին ֆերմերներ, գյուղատնտեսական արտադրանքը մշակող ու վերամշակող ծեռնարկատերեր:

Ամերիկահայությունն այսօր տնտեսապես բարվոք, կայուն վիճակի հավաքականություն է, որն ինքնարավ ապահովում է ազգային կառույցների նյութական խարիսխները: Խոսքը եկեղեցիների, դպրոցների, մշակույթի տների, գեղարվեստական ու մարզական խմբերի, ակումբների, գրադարանների, մամուլի, գրահրատարակչական գործի և ուրիշ համանան լծակների մասին է: Շատ քաղաքներում նույնիսկ կառուցված

Են հայկական մշակույթը հավերժացնող կորողներ և Մեծ Եղեռնի անմեղ գոհերը ոգեկոչող հուշաքանդակներ: Արտո Չարմաքչյանի «Կոմիտասը» Դետրոյթի կենտրոնական պողոտայի վրա, Վարազ Սամվելյանի «Սասունցի Դավիթը» Ֆրեզնոյում, Խորեն Դարությանի «Սիերը» Ֆիլադելֆիայում, Ֆրիդ Սոլոյանի «Դավերժությունը» Վաշինգտոնում և շատ ուրիշ բարձրարվեստ գործեր ոչ միայն զարդարում են ամերիկյան քաղաքի փողոցը, հրապարակը, այգին, այլ տաճում են հայ ազգային կեցությանը նպաստող մշտական գործոնի առաքելություն:

«Դավաքականություն» ինացքը, սակայն, ճշգրիտ կերպով չի բնորոշում կացությունը: Դեռավորությունները և քաղաքական գետնի վրա տարանջատվածությունը այնքան մեծ են, որ ազգային կեցության միասնական հանգույցների մասին (ինչպես, օրինակ, Ֆրանսիայի պարագայում էր) ոչ միշտ կարող է խոսք գնալ: Նույնիսկ քաղաքական նույն հոսանքի կամ մշակութային նույն միության շրջանակներում հաճախ տարբերակվում են գործելակերպերը, ասենք, Կալիֆորնիայում և Նոր Անգլիայում:

Միաժամանակ, փոքրաթիվ չեն այն տարածքները, որտեղ գրեթե ամեն քայլափոխի լուս ես հայերեն բառ ու բան, ազդագրերը խոսում են անզերեն ու հայերեն: Դամաշխարհային կինոյի մայրաքաղաք Հոլիվուդում, օրինակ, ինչպես արևմտյան Բեյրութում, Դալեապում կամ Երևանում, կարող ես հաճախ հանդիպել մայրի հարևանությամբ նարդու ճակատամարտերի տեսարանների, երբ դրացի հայ տղամարդիկ գլուխ գլխի են հավաքվել իրենց աղմուկ-աղաղակով, շրիսկ-թիսկոններով, կատակ-սրախոսություններով, ճարպոտ, քազմահարկ հիշոցներով: Բայց այսպիսի կենցաղը առավել բնութագրական է «նորեկներին»: Նախկինում ներգաղթածներից երկրորդ և երրորդ սերունդները, որպես կանոն, հեռացել են իրենց ծնողների ապրօք շրջաններից և այժմ բնակվում են քաղաքամերձ շրեն արվարձաններում, որոնք չունեն հայկական նկատելի պիտակավորում: Տնտեսական և պրոֆեսիոնալ մի շարք պատճառների թերումով նրանք ցրվել են երկրորդ մեկ և հաճախ յուրացրել են հայկական համայնքներից ու ազգային ինֆրակառուցվածքից գուրկ վայրերը: Բնականաբար, դա նպաստել է խառնամուսնությունների մեծացմանը և ուժացման արագացմանը:

Սփյուռքի մյուս համայնքների համեմատությամբ ամերիկահայությունն ամենից ավելի է վտանգված ուժացման սպառնալիքից: Երևոյքի դեմ առաջին ահազանգերը հնչեցին դեռ 20-ական թվականներին: Ամե-

դիկահայ այդ տարիների մամուլի, մասնավորապես, «Դայրենիք» օրաթերթի եցերում գրեթե ամեն թվի մեջ կարելի է համդիպել ընտանիքի ամրությունը, բարքերի ամաղարտությունը, նոր սերնդի ազգային դաստիարակությունը հետամտող նյութերի: Նույնիսկ քատերախանդեր գրվեցին ու բնադրվեցին, որոնք, այլապես, արվեստի բարձր որակով չեին փայլում, բայց ուղղված էին ծիշտ նույն նպատակին: Դրանցից մեկում քննադատության առարկա է դառնում բուռն թափով ընթացող խառնամուսնությունը և ծաղրվում է հայ մարդկանց մի խավի հոգերանությունը, որոնց կյանքի կարգախոսն էր. «Ի՞նչ օգուտ հայ լինելուց»:

Ամերիկյան կյանքի համակարգը, երբ բացակայում է (գեր իր արտաքին դրսնորումների մեջ) ազգային թե կրոնական որևէ հալածանքը, երնիկական փոքրանասնություններին գրկում է ազգային ինքնապաշտպանության բնագդից: Բնական հակազդեցությունը, որ ենթագիտակցական մակարդակի վրա միշտ պրկված էր պահպանում ազգապաշտպան լարերն ու փոկերը, երբ հայությունը ապրում էր մուսուլմանական միջավայրում, ամերիկյան պայմաններում, այսինքն նույնադապան շրջապատում, գրեթե խապար վերանում է:

Թեպետ ծնականորեն մնում է ի գորու եկեղեցապետական համակարգը, առաջվա ննան հոգնոր հովիվը ժողովրդից ընտրված «առաջնորդ» է, «ազգապետ», բայց ըստ եռթյան, աշխարհական կազմակերպություններն են որոշում եկեղեցու գործունեության սահմանները: Ազգապաշտպան մեխանիզմի այդ օրակը, որ վճռական դեր ունի Արևելքում, ԱՍԽ-ում (առհասարակ Արևմուտքում), աստիճանաբար մղվում է երկրորդական բնագծից: Կերծապես, ամերիկյան կացութածնը, որ պարտադրում է գրեթե ամրող ժամանակը հատկացնել անհատական ծեռներեցությանը նյութական բարվոց վիճակ ապահովելու համար, ըստ եռթյան, չի խրախուսում հավաքական գոյակցությունը: Պատահական չէ, թերևս, որ մեր ժամանակներում ամերիկահայության մինչև 80 տոկոսը որևէ առնչություն չունի դասական ազգային քաղաքական թե մշակութային հաստատությունների հետ, իսկ նրանցից շատ-շատերը առհասարակ իրենց հայությունը բացահայտեցին Դայասատանին պատահած երկրաշարժի առիթով, երբ ցանկություն ունեցան օգնելու Դայրենիքին (նույն երևույթը դիտելի է նաև Ֆրանսիայում):

Ամերիկահայ կազմակերպությունների և մարմինների թիվը մի քանի հարյուր է: Սահմանափակվենք հասարակական ընդիհանուր նշանակու-

թյան և տարողության որոշ կազմակերպությունների մասին հակիրք տվյալների հրապարակումով:

ՍԴ հնչակյան կուսակցությունը ԱՄՆ-ի հայ համայնքի հնարնակներից մեկն է: Գրեթե 100 տարի հրատարակվում է «Երիտասարդ Հայաստան» (Սյու Յորգում) պարբերականը (այժմ ամսաթերթ, բայց երևում է անկանոն, խիստ ընդմիջումներով): Ունեցել է ուրիշ հրատարակություններ: 20-ական թվականներին Ամերիկայի հնչակյանությունը «Հայ բանվորական կուսակցության» հետ միանալու փորձ կատարեց, որը վերջացավ ծախողությամբ: ՍԴ հնչակյան կուսակցությունը մերժեց կորցնել իր ազգային դեմքը, որը նրանից պահանջում էր Ամերիկայի բանվորական կուսակցությունը (Հայրանկուսը, ինչպես գիտենք, մտնում էր Ամերանկուսի մեջ): ՍԴ հնչակյան կուսակցությունը աշխուժացրել էր իր գործունեությունը Կալիֆոռնիայում, հատկապես 80-ական թվականներից սկսած ներգաղրի նոր ալիքի հետևանքով: Լու Անժելեսում հիմնվել էր ակումբ, զարկ էր տրվում մշակութային և մարզական կյանքին, հրատարկվում էր «Սասիս» շաբաթաթերթը:

ՀՀ դաշնակցությունը համայնքում միշտ աչքի է ընկել իր բարձր կազմակերպվածությամբ: Զգտել է մենատիրության: 60-ական թվականներից ի վեր ստեղծել է իր սեփական կառույցները երկրի տարածքով մեկ, մասնավորապես, Անդիլիասի արոտի հովանու ներքո գործող երկու թեմական վիճակները, որոնց առները ազգային իշխանությունները միշտ գտնվել են իր հակակշղի տակ: Քրատարակում էր «Հայրենիք» (Բուտոն) և «Ասպարեզ» (Լու Անժելես) թերթերը, «Հայրենիք ու իշղի» և «Արմինիցն ույու» հանդեսները: Ուներ ռադիոտամանը և «Հորիզոն» հեռուստածրագիրը Լու Անժելեսում: Մշակութային կրթական «Համազգային» միությունը արդյունավետ աշխատանք էր տանում իր մականի տակ գործող հայկական դպրոցների հոգսերը հոգալու ուղղությամբ: Կարող գործունեություն էին ծավալում ՀՀ դաշնակցության Հայ դատի հանձնախմբերը երկրի տարբեր շրջաններում, մասնավորապես, Կաշինգունի մասնաճյուղը:

Կուսակցության հովանու տակ էր ամերիկահայ Խոչըր բարեսիրական կազմակերպություններից մեկը՝ «Հայ օգնության միությունը» (ՀՕՄ), որը երկուաշարժից հետո լուրջ կապեր հաստատեց Հայաստանի հետ՝ նյութական շոշափելի օգնություն հասցնելով տուժածներին: ՀՕՄ-ը ունի իր գրասենյակը Երևանում:

Ռամկավար ազատական կուսակցությունը նույնպես համայնքի

կարևոր քաղաքական ուժերից է: Դրատարակում էր «Նոր օր» (Լու ԱԲ-ջելս) և «Արմինիըն միրոր սփեքթեյրոր» (անգլերեն) շաբաթաթերթը: Գործունեությունը առավելաքար դրսնորպվում էր «Թեքեյան» մշակութային միության խողովակով, որը տարածուն ցանց ուներ երկրում իր մեջ ընդգրկելով մի շարք ակումբներ, երգչախմբեր, երգի-պարի, թատերական և ուրիշ խմբակներ:

Դայ բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՍ) Ամերիկայի իր շոշանային վարչությունից զատ 50-ական թվականների երկրորդ կեսից ի վեր կենտրոնատեղին Եվրոպայից փոխադրել է ԱՄՆ: Դրատարակում էր «Դուշարար միություն», «Դուշարար» և «Արարատ» (անգլերենով) հանդեսները: Ուներ մի քանի դպրոցներ, Ժերանոց: Աշխատանքները կազմակերպում էր երկրի զանազան կողմերում գործող մասնաճյուղերի միջոցով: Նյու Յորքի «Անդրանիկ» պարախումբը մեծ հաջողությամբ հանդես էր գալիս համայնքի հայության առջև: 1988 թվականին պարախումբը այցելեց Դայաստան, համերգներ տվեց երևանում, Գյումրիում, Արմավիրում և այլուր:

ՀԲԸՍ-ի աշխատանքներում վերջին տարիներս նկատելիորեն շեշտը դրվում էր անգիտական հայ երիտասարդությանը իր արմատներին վերադարձնելու նպատակով իրականացվող ծեռնարկումների վրա: Ամսան ամիսներին սիստեմատիկաբար կազմակերպվում էին ամերիկահայ երիտասարդական խմբեր, որոնք Դայաստանում, մասնավորապես, երևանի պետական համալսարանի բազայի վրա, անցնում էին հայոց լեզվի դասընթացներ, ծանոթանում էին Դայերենիքին, շփվում ժողովրդի հետ:

Դայաստանի երկրաշարժից հետո ՀԲԸՍ-ն իր ամերիկյան մասնաճյուղերի միջոցով հանգանակեց շուրջ 7 միլիոն դոլար: Այդ գումարը Ալեք Մանուկյան ընտանիքի հատկացրած 4 միլիոն դոլարի հետ միասին տրամադրվեց Գյումրիում սառնարանային տնտեսություն ստեղծելու նպատակին: Նախաձեռնվեց նաև Դայաստանում Ամերիկյան համալսարան հիմնելու գործը: ՀԲԸՍ-ն ունի իր գրասենյակը Երևանում:

Բոլոր այս կազմակերպությունները մեծ ուշադրություն էին նվիրում երիտասարդության մարզական կյանքին, պարբերաբար կազմակերպվում էին մրցումներ, հանդիպումներ, նավասարդյան խաղեր: Տավոր, նման ծեռնարկումները, իբրև կանոն, իրագործվում էին տվյալ միության պատերից ներս, առանց որ իրավիրվեն ուրիշ կուսակցությունների մականի տակ գործող մարզական միավորումները: Պրոպագանդվում էր

սերը նաև ազգային մարզատեսակների նկատմամբ: Ուորերքառում (Մասաչուսետսի նահանգ) 1974-ին ստեղծվել էր նոյնիսկ «Դայ թարլուի (Նարդու) ընկերակցություն»:

Ամերիկահայության կյանքում, առհասարակ Սփյուռքի պատմության վերջին տասնամյակներում, ուրույն երևույթ է «Ամերիկայի հայկական համաժողովը» (ԱՀՀ): Այս կազմակերպության առաջացումը կապվում է համայնքի առջև օրինաչափորեն հառնող մեկից ավելի խնդիրների հետ:

Ինչպես և Ֆրանսիայում, ԱՄՆ-ում ևս 70-ական թվականներից ի վեր գոյացավ մի վիճակ, երբ ակնհայտ հակասություն առաջացավ տեղաբնակների և «Եկվորմերի» միջև: Դայտնի պատմաբան, Կալիֆորնիայի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ Ռիչարդ Շովիաննիսյանը այդ երևույթը կոչում է մրցակցություն «Լիդերության» համար: Խնդիրը, անշուշտ, պարզունակ արոռակովվը չէր: Դարձի եռթյունը ամերիկահայության գարգացման հետագա ուղիների որոնումն էր:

Մերձավոր Արևելքից փոխադրված մտավորականությունը, որ շատ գորեն էր իր հայկականությամբ և գրեթե անմիջապես հրամայական դիրքեր գրավեց համայնքի հասարակական կյանքում, ազգային կեցության հետագա խնդիրը ջանում էր լուծել «մերձավորարևելյան» կերպով, այսինքն՝ ստեղծելու ու գարգացնելու ուրույն հայկական կառույցներ, որոնց հատուկ են քաղաքական տարարաժամանումները, շրջապատող հասարակությունից որոշակի վարագությունը: Ամերիկահայության ազգային կյանքի աննախընթաց աշխուժացումը վերջին տասնամյակներում, մեծարիկ կրթական, մշակութային օջախների ստեղծումը հիմնականում հենց «Եկվորմերի» ջանքերի արդյունք էր:

Ամերիկայում ծնված ու մեծացած սերունդները կամ «տեղաբնակներ» ազգային կեցության հետագա ուղիները տեսնում էին ամերիկյան կյանքի հետ համայնքի ինտեգրացիայի մեջ: «Տեղաբնակները» մերժում էին քաղաքական տարարաժամանումները հայկական էթնիկական մակարդակի վրա հնարավոր և ծիշտ գտնելով երկրի քաղաքական կյանքին մասնակցությունը ընդհանուր ամերիկյան հաստատությունների խողովակնությունը: Ինտեգրացիայի շնորհիվ տասնյակ տարիների ընթացքում բազմաթիվ հայեր ծանրակշիռ դիրքեր են գրավել ամերիկյան հասարակական կյանքի այլազան բնագավառներում: Նահանգային և դաշնակցային խորհրդարաններում ու կառավարություններում, պետական թե դիվանագիտական ծառայության մեջ, արդարադատության թե առող-

ջապահության համակարգերում, գիտության, գրականության, արվեստների ասպարեզում և այլն:

Ամերիկյան հասարակական կյանքի մեջ ներփակումը հայ ազգային կեցության վրա ունի երկակի ազդեցություն: Մի կողմից՝ ավանդական վարագույրի վերացումով և օտար հասարակական հարաբերությունների ներթափանցումով, ուժեղանում է ուժագնան շարժմանթացը: Մյուս կողմից՝ առարկայականորեն տեղի է ունենում ամերիկյան իրականության մեջ հայ տարրի ինքնահաստատում, որը նպաստում է նրա ազգային ինքնազիտակցության ընդլայնմանը և ամերիկյան հասարակության կողմից հայ ազգային արժեքների ավելի լավ ճանաչմանը: Ամեն պարագայում, ներփակումն ընթանում է իրու առարկայական և օրինաչափ պրոցես, քանի որ ամերիկածին հայերի մեծամասնության համար, անկախ Մայր Դայրենիքի նկատմամբ ունեցած նրանց վերաբերմունքից, բնուրագրական է ԱՄՆ-ի քաղաքական, հասարակական իրավակարգին նվիրվածությունը, հավատը երկրի «բացառիկ» դերի ու կոչման նկատմամբ, և կախված չէ այս կամ այն կազմակերպության ենթակայական կամքից: Կազմակերպությունները միայն կարող են նպաստել կամ խոչընդոտել օրինաչափության ընթացքը: Ամերիկայի հայկական համաժողովը կյանքի կոչվեց նպաստելու համար: Միաժամանակ, դա «տեղաբնակների» յուրովի մարտահրավերն էր «եկվորներին»: «լիոլերության» համար պայքարում:

ԱՐԴ-Ն ստեղծվեց 1972 թվականին իրու քարեսիրական և կրթական ֆոնդ, որի նպատակն էր օժանդակել ԱՄՆ-ում հայ ազգային մշակույթի տարածմանը և ամերիկահայերի կրթությանը: Դիմնադիրներն էին Ստիվեն Մուգարը և Ջարայր Ջովնանյանը: Վերջինս մշտապես հաստատության հոգարարձուների խորհրդի նախագահն էր: Յ. Ջովնանյանը շինարարական գործի խոշոր կազմակերպիչ, մասնագիտական քարձոր գիտելիքների տեր, քաղաքականագետ ու ազգասեր գործիչ էր:

Մինչև 1984 թվականը ԱՐԴ-ի գործադիր մարմնի անդամների կեսը 77 դաշնակցության և ՌԱ կուսակցության ներկայացուցիչներ էին: Դա էլ հենց մտնում էր ԱՐԴ-ի ծրագրի մեջ՝ լինել վերկուսակցական մի մարմին, ավելի ճիշտ՝ մի մեծ ու տարածուն հովանոց, որի տակ տեղ գտնեին հայության բոլոր քաղաքական խավերը: Այլ խոսքով՝ Ամերիկայի համահայկական մի համաժողով: Բայց գաղափարը չիրականացավ: Կուսակցությունները ետ քաշեցին իրենց ներկայացուցիչներին: ԱՐԴ դեկավար մարմինների մեջ ներգրավվեցին երկրի այլազան ասպարեզների գի-

տության, ֆիրմաների, իրավաբանական և քաղաքական ծառայությունների երևելի գործիքներ՝ համայնքի «տեղաբնակ» ընտրանին:

ԱՐԴ-Ը ուներ բազմազան ծրագրեր: Գիտահետազոտական ծրագիրը նախատեսում էր Հայոց ցեղասպանության հարցերի պարզաբանումը ամերիկային հասարակությանը, ինչպես նաև ուսումնասիրություններ ամերիկահայ համայնքի, առհասարակ Սփյուռքի ապագա զարգացման ուղիների շուրջ: Կառավարական ծրագիրն ընդգրկում էր ԱՄՆ-ի պետական մարմինների կողմից հայ համայնքին, ինչպես նաև Սփյուռքի տարբեր համայնքներին ցուցաբերվող օժանդակության իրացման խնդիրները: Ենց նույն կառավարական ծրագրի խողովակով ԱՐԴ-Ը 1175 հազար դոլարի նպաստ ապահովեց լիբանանահայությանը քաղաքացիական պատերազմի օրերին: Ուսանողական ծրագրը հետամտում էր ամերիկայն պետական ու կառավարական շրջաններում հայ երիտասարդների ամենամյա գործնական ուսումնառության կազմակերպման նպատակը: Հայ ուսանողները բաշխվում էին կոնգրեսի անդամների, կառավարական պաշտոնյաների գրասենյակների վրա, շփվում պետական մեխանիզմի առօրյա գործունեության հետ, նաևնակցում փաստաթրերի նախագծերի պատրաստմանը կամ գործնական քայլերի իրականացմանը: Լուրջ աշխատանք էր տարվում ամերիկայն քաղաքական կյանքի մեջ հայ երիտասարդության մուտքը ոյուրացնելու և հիմնովին նախապատրաստելու ուղղությամբ:

Թեպետ ԱՐԴ-Ը պաշտոնապես չի ընդունում, բայց իրականում տանում է հայկական լոքրի դերը ամերիկայն կոնգրեսի մոտ: Այդ նպատակով ԱՐԴ-ի կառուցվածքում ստեղծված է մի մարմին՝ «Քաղաքական գործողությունների կոմիտե» անվանմամբ: Հատկապես նկատելի գործունեություն ծավալվեց ամերիկայն օրենսդիրների կողմից № 192, № 247, № 241 բանաձեռի ըննարկման առթիվ նրանց տրամադրելով մեծաքանակ նյութեր Հայոց ցեղասպանության վերաբերյալ: 1986 թ. կոնգրեսի կողմից ցեղասպանության կոնվենցիան վավերացնելու շուրջ ծավալված արշավի շրջանակներում ԱՐԴ-ն կազմակերպեց ամերիկահայության 20000 նամակների հոսքը Սենատի հասցեով: Վերջին տարիներս ԱՐԴ-ի համակարգում ստեղծվել է Հայկական ազգային ինստիտուտ (ANI), որը կոչված է իրազործելու «Համաժողովի» գիտահետազոտական ծրագիրը:

«Համաժողովի» 1988 թվականի տարեկան նիստը որոշում ընդունեց անդամագրության կարգը ոյուրացնելու մասին ծգտելով ավելի լայն

շրջանակներ ներգրավելու կազմակերպության մեջ: ԱՐՀ-ի նպատակ-ների մեջ էր մտնում Ֆրանսիայում և Շարավային Ամերիկայում մասնա-ճյուղերի ստեղծումը, այլ խոսքով ասած՝ հանասփյուռքյան միավորնան վերածվելը:

Վերջին տարիներս ԱՐՀ-ն աշխույժ կապեր է պահպանում Շայաս-տանի հետ: Երկրաշարժի առիթով Գյումրիում շինարարական գործա-րանների համալիր (հավաքովի կառուցապատշչներ, դուռ, լուսամուտ, տանիք, կղմինդր պատրաստող արտադրություններ) ստեղծելու նպա-տակով կազմակերպությունը հատկացրել է շուրջ 4 միլիոն դոլար: ԱՐՀ-ն առաջինը Սփյուռքի կազմակերպություններից իր գրասենյակը բացեց Երևանում:

Ամերիկահայ կազմակերպությունների թվում յուրահատուկ տեղ են գրավում «Կարդանանց ասպետները»: Փակ, յուրօքի գաղտնագրված միավորում է, որ իր մասնաճյուղերն ունի երկրի շատ կողմերում: Զքաղ-վում է մշակութային կամ մշակույթի մարզում քարեսիրական գործու-նեությամբ: Երկրաշարժի առիթով նույնպես նյութական մասնակցու-թյուն բերեց Շայաստանի օգնության ֆոնդին:

Շամայնքի սկզբնավորման տարիներին մեծ տարածում գտան հայ-րենակցական միությունները, որոնց թիվը հասնում էր մինչև հարյուրի: Մեծ մասամբ շատ շուտով միաձուլվեցին ամրողական գավառները ներկայացնող հայրենակցականների մեջ: Ամերիկահայոց պատմու-թյունն ուսումնասիրող Արա Ավագյանը նշում է 40 թիւ թե շատ խոչոր միավորումներ: Դրանցից են «Վասպուրականի», «Սերաստիայի», «Սա-լարիայի», «Սարաշի», «Արարկիրի» և ուրիշ հայրենակցական միու-թյունները: Գրեթե բոլորը հրատարակում են տեղեկատու պարբերա-կաններ, որոնք լուրեր են պարունակում հայրենակցների կյանքի և գործի մասին, լուսարանում են տվյալ գավառի պատմությանը վերաբ-րող հարցերը:

Հայրենակցական միությունների մեծ մասը քանական-երեսնական թվականներին ծեռնարկեց Շայաստանում հանանուն բնակավայրերի ստեղծմանը: Նետագայում, միությունների գործունեության բուլացմա-նը զուգընթաց, ամընդհատ նվազում էին հայրենակցականների խողո-վակով կապերը, նվազում էր և համանուն բնակավայրերին ցույց տրվող նյութական օժանդակությունը: Մեր ժամանակներում դեռևս գործուն կապեր ունեն «Արարկիր», «Սերաստիա» և մի քանի ուրիշ միություններ: Ընդ որում, կապերն իրականանում են նաև Շայաստանի առանձին գի-

տական, թժկական, ուսումնական հաստատությունների հետ: Նման գործունեություն, օրինակ, շարունակում է արդյունավետ ծավալել «Սերաստիա» հայրենակցական միությունը:

Դայրենակցականների զարգացման կորագիծը գնում է ամընդհատ դեպքի վար: Բնականաբար, դա առաջին հերթին կապված է սերմուափոխության հետ, եթե երկրորդ-երրորդ սերնդի մարդիկ այլևս հոգեբանական նույն բարդությունը չունեն իրենց ծնողների ապրած հուշերի նկատմամբ: Դայրենակցականները ժամանակին կատարեցին անգնահատելի ազգապատճեն դեր: Բայց եթե համայնքը սկսեց բացվել շրջապատող միջավայրի առջև, ժայր առավ ամերիկյան կյանքի հետ ինտեգրացիայի շարժմանը, սեփական կեղևից ներս պարփակումը ամերիկածին հայ երիտասարդության հայացքին այլևս երևում էր իրևս ժամանակավորեալ երևույթ:

Մեր ժամանակներում, սակայն, դիտելի է մի նոր կացություն, որի շրջանակներում տեղի է ունենում հայրենակցականները հիշեցնող նոր կազմակերպությունների ծնունդը: Խոսքը վերաբերում է «Ստամբուլահայերի», «Պարսկահայերի», «Լիբանանահայերի» և ուրիշ նման միությունների ստեղծմանը: Պատմությունը, ասես, կրկնվում է, այնքանով, որքանով Մերձավոր ու Միջին Արևելքի հայությունը վերջերս միայն՝ 70–80–ական թվականներին, սկսեց զանգվածարար ներգաղթել Ամերիկա և 20–ական թվականներին ներգաղթածների հոգեբանությամբ ծեռնամուխ եղավ սեփական կազմակերպությունների ստեղծմանը:

Եթե նախորդ ալիրի հայրենակցականներն անմիջականորեն ներկայացնում էին Դայաստանի հարազատ տեղանունները՝ ծգտելով նոր սերնդին կապած պահել հայրենի հուշերի հետ, նոր ալիրի հայրենակցականները կարծես իրենց հայրենիքն են համարում այն վայրերը, ուր արդեն իսկ գաղթի հետևանքով հաստատվել էին ժամանակին: Այս կացությունը առթում է հոգեբանորեն եռատված լինելու բարդույթը (հայ, լիբանանահայ, ամերիկահայ), «Եկվորների» մեջ լրացուցիչ խոչընդոտներ հարուցում արդեն ծևավորված համայնքի կողմից նրանց ընդունման գործում:

Եվ նման կազմակերպությունների ստեղծումը նաև յուրահատուկ պաշտպանական հակագոեցության հետևանք է: Ըստ լուրերի՝ Կալիֆոռնիայում քայլեր են ծեռնարկվում նաև «Դայաստանցինների» միավորում ստեղծելու ուղղությամբ: Պաշտպանական հակագոեցությունը երևս այս դեպքում ավելի արդարացված է, քանի որ «տեղաբնակները»

համեմատաբար դժվար են ընդունում Հայաստանից արտագաղթածներին մի շարք (հիմնականում որոշ երիտասարդների դրսնորած վարքի ու քարքի) պատճառներով:

60–70–ական թվականները ամերիկահայ դպրոցի հիմնադրման և բուն զարգացման տարիներ եղան: Մինչ այդ կային մեկօրյա դպրոցներ:

Ըստ 1986 թ. տվյալների՝ ամենօրյա դպրոցների թիվը 22 է, որոնցում սովորում է շուրջ 4 հազար աշակերտություն: Խսկ մեկօրյա դպրոցների ընդհանուր թիվը շուրջ 50 է: Դպրոցներ կան բոլոր քաղաքական ուղղությունների, բոլոր կրոնադավանական ճյուղավորումների հովանու ներքո: Մեծարիվ հայ աշակերտություն ընդգրկված է նաև Կայիֆոսնիայի պետական դպրոցներում, որոնցում ուսուցումը անվճար է: Դպրոցները բացված են, աշխարհագրական տեղաբաշխման իմաստով, գրեթե բոլոր հայաշատ վայրերում և յուրաքանչյուր աշխարհում: Առաջնային դպրոցները համապատասխանում են պետական դպրոցների ծրագրերին, հավելյալ հայոց լեզու, պատմություն, կրոն: Եկեղեցական թեմերին կից գործում են կրթական խորհուրդներ, որոնք մերողական օգնություն են մատուցում բոլոր կարգի կրթօջախներին:

Հայկական ամենօրյա վարժարանները սովորաբար ունեն մանկապարտեզի, նախակրթարանի և երկրորդականի բաժիններ: Ծրագիրը համապատասխանում է պետական դպրոցների ծրագրերին, հավելյալ հայոց լեզու, պատմություն, կրոն: Եկեղեցական թեմերին կից գործում են կրթական խորհուրդներ, որոնք մերողական օգնություն են մատուցում բոլոր կարգի կրթօջախներին:

Կրթական գործի կազմակերպման ասպարեզում հարցը այլևս դպրոցների պակասը չէ, ինչպիսի կացություն, օրինակ, գյուղաբնակչությունը համապատասխանում է Ընդհակառակն, դպրոցների թիվը նույնիսկ շատ ավելին է, եթե որանք օգտագործվեն տվյալ բնակավայրի բոլոր աշակերտների համար՝ առանց նրանց ծնողների քաղաքական պատկանելիությունը հաշվի առնելու: Ցանկությունը բարեման նույն փողոցի վրա դեմ դիմաց կարելի է հանդիպել քաղաքական տարրեր ուղղությունների հովանու ներքո գործող վարժարանների, որոնք առանձին—առանձին փոքրարիվ են, տկար:

Հարցի մյուս, եական կողմը, ուսուցչական—մանկավարժական կատրերի մի մասի մասնագիտական ցածր որակն է, որը հետևանք է անբարվար վարժատրության: Սփյուռքահայ ուսուցչի վարժատրության խնդիրն, առհասարակ, մնում է անլուծելի: Հաճախ մայրենի լեզվի ուսու-

ցիշների ամսականները շատ ավելի վար են պետության կողմից սահմանված նվազագույն չափերից: Թիշ չեն դեպքերը, երբ ուսուցչական-մանկավարժական ասպարեզ են ընկնում այնպիսի մարդիկ, որոնք ուրիշ ասպարեզում այլևս պիտանի չեն: Ի դեպ, նյութական սույն պայմանների մեջ են, առհասարակ, հայեցի կեցությանը նվիրված մտավորականները՝ հայագետ գիտնականները, գրողները, լրագրողները, հայ մշակույրի տարածողները:

Մի ուրիշ կողմ նս: Դայ բարերարները մեծագույն հայրենասիրական գործ են կատարում, երբ խոշոր գումարներ նվիրաբերելով, իրենց անվամբ դպրոցներ են հիմնում, կառուցում: Դաճախ, սակայն, մոռացության է մատնվում դպրոցի հետազա, բուն գործունեությունը նյութավես ապահովելու խնդիրը: Պատահական չէ, որ գրեթե բոլոր վարժարարներն ունեն ֆինանսական ծեղզվածքներ և ստիպված են տարվա ընթացքում բազմիցս դիմել զանազան հանգանակությունների, բարեգործական ճաշկերույթների, պարահանդեսների կազմակերպմանը և դրամահավաքի այլ միջոցների:

70–80 ական թվականներին կադրերի պատրաստման կարևոր օջախն եղավ Լա Վենի հայագիտական քոլեջը՝ դոկտոր Կարպիս Տեր-Եղիայանի գլխավորությամբ:

Դետարքրական երևույթ է ներկայացնում «Դայ աստվածաշնչի քոլեջ», որը 1981 թվականից ի վեր գործում է Փասադինայում (Կալիֆորնիա): Դպրոցը կոչված է հոգնոր կադրեր պատրաստելու հայ ավետարանական եկեղեցու համար: Դասավանդվում են հայերեն և անգլերեն թրիստոնեական գրականություն, քարոզարանություն և ուրիշ առարկաներ, որոնք անմիջապես կապ ունեն «Աստվածաշնչի» ուսուցման հետ:

Դայագիտական կենտրոնները և լսարանները, որ վերջին երկու տասնամյակի ընթացքում մեծ թվով ստեղծվեցին Ամերիկայի համալսարաններում, վերջին հաշվով համայնքի գործունեության արդյունք են, քանի որ դրանց նյութական հիմքը գոյանում է հայերի դրամական նվիրատվություններից: Դարվարդի, Կոլումբիայի, Կալիֆորնիայի, Պենսիլվանիայի, Ֆրեզնոյի, Վեյնի, Նեստրոյի և ուրիշ համալսարանների, Մերձավոր Արևելյի ուսումնասիրման ինստիտուտի, ԱՄՆ-ի շուրջ 30 այլ գիտական կենտրոններին կից հայագիտական ամբիոնների, լսարանների ծրագրերը հիմնականում ուղղված են հայոց լեզվի, հայ ժողովրդի պատմության և մշակույրի ուսումնասիրմանը, գիտահետազոտական

աշխատանքների կատարնանը և, հատկապես, կադրերի պատրաստմանը: Ուսանողների թվում կան հայեր և այլազգիներ:

Գիտահետազոտական աշխատանքների մարզում ուրույն տեղ ունեն Բոստոնի «ՆԱԱՍՐ» հայագիտական հաստատությունը և «Զորյան ինստիտուտը»: 80-ական թվականներից ի վեր գործող այս հաստատությունները ուշադրությունը կենտրոնացնում են հիմնականում արդի Սփյուռքի, Դայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, Դայ դատի խնդիրների ուսումնասիրության վրա: «Զորյան ինստիտուտի» նախաձեռնությամբ ստեղծված է եղեռնից վերապրողների վկայությունների մի խոշոր տեսադարան: Աշխատանքներ են տարվում ամերիկյան և Եվրոպական արխիվների մշակման ուղղությամբ: «ՆԱԱՍՐ» – Դայկական ուսումնասիրությունների և հետազոտության ազգային ընկերակցությունը, որի տնօրենն է Մանուկ Յանզը, աչքի է ընկնում իր հրատարակություններով, մանավանդ, հայագիտական էքսպրես–ինֆորմացիաներով՝ անգլերեն լեզվով:

Ամերիկայա մամուլը առաջատար դիրքեր է գրավում ժամանակակից Սփյուռքում, քանի որ, ի տարբերություն, օրինակ, Լիբանանի հայ թերթերի, ժամանակին հասնում է աշխարհի որևէ անկյուն, և նրա էջերն էլ լեցուն են այլազան լրատվությամբ, հայ քաղաքական, տնտեսական թե մշակութային կյանքի մասին բազմակողմանի վերլուծություններով: Այդ ինաստով աչքի են ընկնում ՀՀ դաշնակցության «Ասպարեզը», Ռամկավար ազատական կուսակցության «Նոր օրը», չեզոք «Նոր կյանքը», անգլերեն լեզվով լույս տեսնող «Կալիֆոռնիա կուրյերը», «Արմինիյը Ռիվորըրըրը», որոնց հրապարակումները մեծ հետաքրքրություն են առաջացնում ընթերցողների շոշաններում: ԱՄՆ-ում լույս են տեսել և այժմ էլ լույս են տեսնում բազմաթիվ ամենօրյա և տարբեր պարբերականությամբ լրագրեր, անսագրեր, տարեգրեր: Դրատարակվել է գեղարվեստական և գիտական գրականություն:

ԱՄՆ-ի թե արևելյան, թե արևմտյան ափերին գործում են շուրջ 20 հայկական ուղիղություններում մեծ հետաքրքրություն են առաջանական տակ, թե անկախ կարգավիճակով: Դեռարձակումներ կատարվում են հայերեն և անգլերեն լեզվուներով: Բոլոր ռադիոհեռուստատեսային ժամերի խմբագրությունները լայնորեն օգտագործում են Դայատանից հայթայթված ծայնատեսագրությունները:

• Վերջին տարիներս ԱՄՆ-ի գաղութը, մանավանդ Լու Անժելեսը, դարձել է ամենաաշխույժ հասարակական մտքի թատերաբեմ:

Հայ Սփյուռքի մեջ ամերիկահայ հաճայնքը բացառիկ է Եկեղեցիների քանակությամբ: Բոլոր հարանվանությունների Եկեղեցիների ընդհանուր թիվը 120 (1986 թ. տվյալներ) է: Հայ առաքելական Եկեղեցու գույզ թեմերի (Եջմիածնի Մայր աթոռի իրավասության տակ) Եկեղեցիների թիվը 60 է: Ազգային առաջնորդարանների (Անքիլիասի աթոռի իրավասության տակ) Եկեղեցիների թիվը 31 է: Հայ կաթոլիկ Եկեղեցիները 5-6 են: ԱՍՍ-ում գործում է հայ կաթոլիկ Եկեղեցու թեմը: Զանազան հայ քողոքական Եկեղեցիների (ավետարանականների, հայ եղբայրության, ժողովականների և այլն) ընդհանուր քանակությունը 24 է: Հայ Եկեղեցիներ կան Արիզոնայի, Կալիֆորնիայի, Վաշինգտոնի, Կոմելիութիկուտի, Ֆլորիդայի, Իլինոյսի, Մասաչուսետսի, Միջիզանի, Նյու Յերսիի, Օհայոի, Պենսիլվանիայի, Ռոտ Այլենդի, Տեխասի, Վիրջինիայի, Վիսկոնսինի, Սերիլենդի, Նյու Յեմիշիրի նահանգներում և Կոլումբիա նարզում (Ճաշնագույն մայրաքաղաքում): Այսինքն՝ հավաքական հայություն կա ԱՍՍ-ի նահանգների մեկ երրորդից ավելի մասում:

Հաճայնքի սկզբնավորման օրերից ի վեր հայ ազգային մշակույթը ևս բռնեց զարգացման ուղին: Բնականաբար, այդ հոլովույթում միշտ առկա է եղել կրկնակի ամերիկան թե հայրենական մշակույթների ուղղակի ազդեցությունը: Արդեն 30-ական թվականներին ստեղծվեցին ու հետագայում բազմացան հայ արվեստների զարգացմանը, պրոպագանդին ու տարածմանը նպաստող զանազան ընկերակցություններ: Ներկայում գործում են գրականության, երաժշտության, կինոարվեստի, գեղանկարչության, թատերական արվեստի, գորգագործության և հայ մշակույթի այլ մարգերին աջակցող բազմաթիվ կազմակերպություններ և ֆոնդեր: Լու Անգելեսում երկար տարիներ գործում եր հայ գրքի «Ապրիլ» վաճառատուն-հրատարակչականը:

1973 թվականին ստեղծվեց Ամերիկայի հայ արվեստի միությունը՝ Գևորգ (Ժորա) Թումանյանի գլխավորությամբ: Միությունը ծեսնամուխ եղավ Հայաստանից արվեստագետների և գրողների հրավիրմանը, որպեսզի նրանք հանդես գային ԱՍՍ-ի և Կանադայի հայության առջև: Միությունը, առաջիններից մեկը նոր փուլում, սկիզբ դրեց Հայրենիքի հետ մշակութային լայն կապերին:

Ամերիկահայ գրականությունը դեռ 20-ական թվականներին տվեց քարձրարվեստ էօեր, որոնք Սփյուռքի պատմության մեջ հաճախ հիշատակվում են իրքն «կարուտի գրականություն»: Գրականագետ Օշին Քեշիշյանը իր դասախոսությունների մեջ խոսում է ամերիկահայ շուրջ 150

գրողների մասին: Լևոն Սյուլընեսյանը, Վահե Շայկը, Արամ Շայկազը, Անդրանիկ Անդրեասյանը և շատ ուրիշներ իրենց գործնորով հարստացրել են հայ գրականությունը: Խոկ Շամաստեղի անունը ընդմիշտ մտել է հայ մշակույթի պատմության մեջ:

Մեր օրերում մի քանի քարծրարվեստ գրողներ շարունակում են զարգացնել մայրենի գրականության ավանդույթները, միաժամանակ տաղանդի հանդուգն խոյանքով նվաճում են նոր դաշտեր՝ կերտելով օտար ափերում հայության ինքնահաստատման դժվարին ու հոգեբանորեն բարդ տագնապը: Արդի ամերիկահայ գրականության առաջատար միտումը ամերիկյան հայվուեյ-ավտոմայրությի ելած հայ անհատի կոտորակված հոգու ցուցադրումն է: Մարդ պետք է ընթանա հայվուեյի արագությամբ, պետք է ծովականի միջավայրին, բայց մնա հայ, պետք է անընդհատ մաքրագործի սեփական հոգու հայվուեյը: Ի դեպ, հենց «Հայվուեյ» է կոչել պատմվածքների իր ժողովածուն շնորհալի արձակագիր Պողոս Գյուլընեանը: Նուպար Ակիշյանը պատկերում է «Զանգըլ Թաուն» («Զունգլիների քաղաք») ընկած հայ մարդու ապրումները, մաքառումները, հասումները: Դակոր Կարապենցը, որի մասին արդեն խոսել ենք Երանի քաժնում, անհատի և հասարակության հարաբերակցության քացահայտման խճողված խաչմերուկներում դրսնորում է մի տաղանդ ու մակարդակ, որով շատերը չեն, որ կարող են հպարտանալ ժամանակակից ամերիկյան և եվր պական գրականության անդաստանում:

Շամայնքում կա անգիտագիր գրողների մի մեծ խումբ, որի գեղարվեստական արտադրանքը չի կարելի դուրս բռնել հայ գրականության անդաստանից, ինչպես արվել է տասնյակ տարիներ՝ ընկալյալ սովորությամբ: Վիշյան Սարոյանի գրականությունը, նրա հուզիչ ու հուսահատ կոչը «Եյ, ո՞վ կա այդտեղ», որով մի նորօրյա Դիոզենեսի ննան մարդ է փնտրում մարդաշատ շրջապատում, ճիշտ և ճիշտ բարգանում է հայության ինքնահաստատման, մենության տագնապը: Չե որ թե՝ Կարապենցը, թե՝ Ակիշյանը, թե՝ մյուս նորերը ըստ Եւրյան Սարոյանի շառավիղներն են:

Նույն դիտումը կարելի է անել կերպարվեստի մարզում: Այստեղ մենք մեզ նույնիսկ ավելի ենք կողոպտել՝ մեր ազգային մշակույթից օտարելով սարոյանական մեծության առնվազն երեք գագաթների՝ Շովսեփ Փուշմանին, Արշիլ Գորկուն և Ռուբեն Նաբյանին, որոնք առանց դույզն իսկ սակարգության մտնում են XX դարի համաշխարհային արվեստի գանձարանը, բայց ոչ թե հայկական, այլ ամերիկյան դռնով: Ինչո՞ւ:

Թերևս այն պատճառով, որ նրանց գործերը Հայաստանում գրեթե չկան, կամ գուցե այն պատճառով, որ նրանց գեղարվեստական զգացողության ու մտածողության կերպը տարբերվում է Հայաստանի արվեստագետների ավանդական ուղղուց:

Փուշմանի դիմանկարները հայ մարդկանց մի ամբողջական պատկերասրահ է: Նրա արևելյան կերպավորումներն ու խորհրդապաշտական տեսիլները միանգանայն հաշտ են իր տան անձուկ պատուհանից օտար աշխարհին նայող հայ մարդու զարմացած հայացքին: Մի մանրութ, սակայն, ընդգծելով, որ հայացքի տերը հանճարեղ աչք էր:

Արշիլ Գորկին (Ոստանիկ Աղոյան) իր կյանքով ու եղերական վախճանով, իր ապրումներով ու գերզգայնությամբ առոյց չի հիշեցնում Եղիա Տեմիրճիպաշյանին, որ նույնպես գնահատված չեր սեփական ազգի կողմից: Բազմաշխարհ էր Գորկին: Հայաստանից էր՝ զյուղացու վճիռ հոգով ու միաժամանակ արստրակցիոնիստ: Նրա ստեղծագործությունը ասես ծիծաղում է, ողբում, պարում, մարտնչում, կասկածում, հաստատում: Իսկ ինչպիսի՞ն էր հայ մարդու հավաքական հոգին, որ եղեռնից մազապուրծ իրեն գտել էր ամերիկյան ափերին: 2003 թ. Էջմիածնում հիմնադրվեց Արշիլ Գորկու ստեղծագործությունների ցուցահանդես:

Ուրեմն Նաքյանը, որի քանդակները զարդարում են Ամերիկայի առաջատար պուրակներն ու պարտեզները, պետական թե արվեստների սրահները, և որը, ամբողջովին խորբացած սեփական ժողովողից, միայն կյանքի վերջում մի բուռ հայրենասեր հայերի, մասնավորապես վաշինգտոնարնակ հասարակական գործիչ, ժրաժան տիկին Ռիտա Պալյանի ջանքերով սկսեց մերձենալ իր ժողովողին, արդյո՞ք իր գործում չի դրել հայոց հոգու թանձրուկը: Նրա զանգվածեղ, ժայռաբեկորները հիշեցնող մարմնավորումները, որ անսպասելի հատվում են, կարծես, սրի հարվածով, նորից շարունակվելու և դարձյալ նոր հատումներով դանդաղելու համար, բայց որ այնպես հաստատուն, ծանրածանր գամված են հողին, ասես, խոր արճատներ ունեն ընդերքում, արդյո՞ք հայրենի եզրքից բռնավտարված Ուրեմն Նաքյանի իսկ ներաշխարհի ծիչը չեն:

Սարոյանը, Փուշմանը, Գորկին, Նաքյանը և դեռ ուրիշներ սպասում են հայ մշակույթի գանձատուն իրենց մուտքին:

Ամերիկահայությունը տվել է ամերիկյան կինոարվեստի երախտավոր Ռուբեն Մամուլյանին, մեծ երգահան Ալան Շովիաննեսին, անվանի երգչուիհներ Լիլի Չուգասզյանին և Լուսին Ամարային, երգեհոնահար

Պերճ ժամկոչյանին, ջուրակահար Գաֆաֆյան քույրերին, դաշնակահար Շահան Արծրունուն, մեծ թվով երաժիշտ կատարողների, դերասանների, եղագահանների, նկարիչների, քանդակագործների, ճարտարապետների և արվեստի բազմազան այլ բնագավառների ուրիշ գործիչների:

Մշակութային առաջընթացի և ազգային գիտակցության հաստատման մեջ շոշափելի ավանդ է մուծել ամերիկահայ հասարակական գիտությունը: Պատմաբաններ, Դայաստանի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ Ոիչարդ Յովհաննիսյանը, Նինա Գարսոյանը, Ռոբերտ Մայրաքը, Գևորգ Բարդակյանը, Զեյնս Թաշչյանը և ուրիշներ մշակում են հայ ժողովրդի անցյալի թե արդի կացության, այդ թվում և Սփյուռքի, հանգուցային հարցերը: Բանասեր-պատմաբան Ավետիս Սանջյանը ուսումնասիրել է թե՝ ինն հայկական գաղութները, թե՝ հրապարակումներ իրականացրել ժամանակակից Սփյուռքի հոգևոր կյանքի այլազան էջերի շուրջ:

Արշիլ Գորկու կյանքի և գործի ուսումնասիրությանն են նվիրված նրա քրոջ որորու, արվեստաբան Կառլեն Մուրադյանի բազմաթիվ գրքերն ու հրապարակումները: Գրականության պատմության մեջ լուրջ պրայտումներ է արել Զեյմս Էթմեթըյանը:

Բարձր չեղականագիտական մտքի թոփքը, բայց և գտնվում է պահանջարկի նակարդակի վրա: Վահե Օշականի անսպասելի, այլև հմուտ ընդհանրացումները, Անդ. Անդրեասյանի, Երվանդ Ազատյանի, Օշին Քեշիշյանի, Արմեն Տոնոյանի, Լեռ Դամայանի և մի շարք ուրիշների ներամփոփ մտորումները և նուրբ դիտումները լույս են սփոռում ամերիկահայ թե, առհասարակ, սփյուռքահայ գրական պրոցեսի վրա:

Տասնյակներով ու հարյուրներով ուրիշ անուններ չեն հիշատակված այս սուր էջերում, թեպետ արժանավոր գործ են կատարում, որպեսզի պահպանն ամերիկահայության ազգային նկարագիրը ընդունող հասարակության հետ իմտեղացման բարդ ու հակասական պրոցեսում:

Տասնյակներով մայ դմազայ մերու ծախուայսազ թվյոթը դմզյան նույսա ոմմէցնը օքը մ. մ. ԿԱՆԱԴԱ

XXI դարասկզբին հայության ընդհանուր թիվը, եթե համարենք տարբեր աղբյուրների տվյալները, 30–40 հազար էր: Կազմակորումը, հիմնականում, տեղի էր ունեցել հիսնական թվականներից հետո: Գոր-

ծուլ են ՍԴ հնչակյան, ՅՅ դաշնակցություն և Ռամկավար ազատական կուսակցությունները: ՅՅ դաշնակցության կազմակերպությունը, որ նախապես հյուսիսամերիկյան շրջանի մասնաճյուղ էր, վերջերս ստացավ ինքնուրույն կարգավիճակ, իր Կենտրոնական կոմիտեով հանդերձ:

Ռամկավար ազատական կուսակցությունը 1987 թվականին Սոնիբալում որոշ ժամանակով հաստատեց իր Կենտրոնատեղին՝ նաև մի կենտրոնատեղի պահպանելով նաև Բեյրութում: Զա բխում էր Լիբանանի քաղաքական անքարենպաստ կացությունից:

Սոնիբալում ընակվում է 20–25 հազար հայություն: Այստեղ է գտնվում Հայ առաքելական եկեղեցու կանոնահայոց առաջնորդարանը:

ՅՅ դաշնակցությունը 1979 թվականից հրատարակում է «Հորիզոն» շաբաթաթերթը: «Համազգային» միուրյունը համախմբում էր երիտասարդ շատ մտավորականների: Մեծի Տանն Կիլիկիի կաթողիկոսության հրավասության տակ էր գտնվում «Սուլը Հակոբ» եկեղեցին, փորձեր էին արվում հիմնելու թեմ: Հայ օգնության միուրյան նիցոցներով ֆինանսավորում էր ամենօրյա վարժարանի գործունեությունը, որը ուներ «ծաղկոց» և նախակրթական ստորաբաժանումներ: «Համազգային» մականի տակ գործում էին «Լեռն Շամբ» երիտասարդական կազմակերպությունը, մարգական ընկերությունը: Կուսակցությունը համայնքի գորեղ կազմակերպություններից մեկն էր, որը հեղինակություն ուներ զանգվածի մեջ:

Ռամկավար ազատական կուսակցությունը 1975 թվականից հրատարակում էր «Ապագա» շաբաթաթերթը: 1980-ին հիմնվեց նաև «Ապագա» հրատարակչությունը: «Թեքեյան» մշակութային միուրյան մասնաճյուղը գործում էր 1964 թվականից, ուներ իր երիտասարդական և տիկնանց հանձնախմբերը, քատերախումբը:

Հայ բարեգործական ընդհանուր միուրյան մասնաճյուղը հիմնվել է 1957 թվականին: 1978-ից ի վեր նրա հովանու տակ աշխատում էր Արմեն-Քերեկ վարժարանը: Վարժարանը բաղկացած էր «ծաղկոց» և նախակրթական ստորաբաժանումներից: Դպրոցն ուներ լայն հնարավորություններ: Մեփական ավտորուսներով երեխաները քաղաքի տարբեր ծայրամասերից փոխադրվում էին դպրոց ու տուն: Ուսուցանում էին երեք լեզուներ հայերեն, ֆրանսերեն (նահանգի պաշտոնական լեզուն) և անգլերեն:

1967 թվականին ստեղծվել է Պոլսահայերի միուրյունը, որի կարգախոսն էր ամեն կարգի քաղաքական գործունեության արգելումը միու-

թյունից ներս: Կանադայի հայության ամենազանգվածային կազմակերպություններից մեկն էր Տորոնտոյի և Ջամիլտոնի իր մասնաճյուղերի հետ միասին: Յրատարակում էր «Գեղարդ» հանդեսը, ուներ «Արարատ» մարզական միություն, «Շիրակ» պարախումը, Տիկնանց հանձնախումը:

Սոնրեալի չորս համալսարանների մոտ 500 հայ ուսանողությունը ստեղծել էր իր միությունները, որոնք միավորվել էին Մաքդիլ համալսարանին կից համադրիչ մարմնի մեջ: Միությունները ժրագրված աշխատանք էին տանում ուսանողությանը հայոց պատմությանը, գիտությանը, մշակույթին հաղորդակից դարձնելու, Հայրենիքի առօրյային ու անցուղարձին ծանրացնելու ուղղությամբ:

Ութսունական թվականների վերջերին կազմակերպվեց «Հայ բիզնեսմենների (առևտրականների) միությունը»: «Տոյոտա» ճապոնական ընկերության Կանադայի ներկայացուցիչ Մկրտիչ Մալխասյանի ղեկավարությամբ: Միությանը անդամակցում էր շուրջ 120 մարդ: Նույն գործիչը ստեղծել էր «Մալխասյան գիտամշակութային հիմնադրամ» նպատակ ունենալով քացել և ֆինանսավորել հայագիտական ամբիոն, ուսանողների թոշակներ հատկացնել:

Տորոնտոյում 1979 թվականին ՍԴ հնչակյան կուսակցության մականի տակ ստեղծվեց «Նոր սերունդ» մշակութային միության մասնաճյուղը, որը կարծ ժամանակում կարողացավ իր շուրջը համախմբել մեծաթիվ երիտասարդություն:

«Համագգային» մշակութային միությունը, որ գործում էր 1968 թվականից, նույնպես ուներ երիտասարդական կազմակերպություն, ինչպես նաև երգչախումը և թատերախումը: Մեկ հարյուրի չափ աշակերտներ ուներ ՅՕՍ-ի վարժարանը, որ 1959 թվականին հիմնվեց իրու մեկօրյա, այնուհետև վերածվեց ամենօրյա դպրոցի:

1967 թվականից ի վեր գործող «Թեքեյան» մշակութային միությանը կից գործում էին պարի խումբ, երիտասարդական միություն, կանանց հանձնախումը:

Մշակութային մյուս հաստատություններից հիշատակարժան են «Մասիս» միությունը՝ տիկին Չեչեկի գլխավորությամբ, և «Կոմիտաս» երգչախմբային միությունը (գեղարվեստական ղեկավար, երգիչ Դավիթ Վարժապետյան): Գործում էին չեղոք գետնի վրա: Միության շուրջ համախմբված էին հիմնականում «Սուրբ Խաչ» եկեղեցու համայնքի անդամները: Երգչախմբի անդամների թվում կային իտալացիներ, մեքսիկացիներ:

Սփյուռքի տարածքով մեկ գրեթե բացառիկ երևոյթ էր տիկին Արփի Սերասի անհատական ծեռնարկումը: 1979 թվականին նա ստեղծեց վարժարան՝ շուրջ 180 աշակերտներով, որոնցից մոտ կեսը օտար էին, մյուսները՝ հայ: Երեխաներն առավոտյան հաճախում էին կանադական դպրոցներ, իսկ կեսօրից հետո ամեն օր այստեղ անցնում էին հայոց լեզու:

Կանադայի մյուս քաղաքներում, հատկապես արևմտյան ափին, կային փոքրարիվ հայկական համայնքներ:

Դայ կարողիկ և հայ ավետարանական համայնքները նույնպես ունեին իրենց եկեղեցիներն ու աղոթատները: Կարողիկ համայնքը համեմատարար ավելի ներփակ էր: Տորոնտոյի բողոքական համայնքն ուներ տիկնանց և երիտասարդական միություններ, կիրակնօրյա դպրոց:

1988 տարեվերջին Դայաստանին հարվածած երկրաշարժը առիր եղավ, որպեսզի գեր ժամանակավորապես համախմբվի կանադահայուրյունը՝ հաչու համազգային աղետի: Կանադան խոչըր երկրներից թերևս միակն էր, որի հայությունը կուտակված միջոցները՝ 1,5 միլիոն ամերիկյան դոլարի չափով, տրամադրեց միասնական նպատակի համար՝ Դայաստանի կառավարության խնդրանքին ընդառաջելով: ՀՀԴ, ՈՍԿ, ՍՐԴ կուսակցությունների, Պոլսահայոց միության, չեզոք կազմակերպությունների ներկայացուցիչների միատեղ որոշումն էր այդ միջոցները հատկացնել Դայաստանում թոշնի մսի վերամշակման նորագույն տեխնիկայով ու տեխնոլոգիայով՝ հագեցած արտադրության կազմակերպմանը:

ԱՐԳԵԼՏԻՆԱ

Ըստ XX դարավերջի տվյալների՝ համայնքում ապրում էին 70–80 հազար հայեր, որոնք տեղաբաշխված էին Բոււնոս Այրես, Կորդովա, Սենտոսա, Մար դե Պլատա և այլ քաղաքներում, կազմակերպված էին իրեն թեմ: Դարավային Ամերիկայի երկրներից հատկապես Արգենտինայում (Բրազիլիայում և Ուրուգվայում համեմատարար ավելի նվազ չափերով) հայությունը վերապրում էր ազգային կյանքի ուժեղ զարդոնք, որը բացատրվում էր թե համայնքի համեմատարար երիտասարդությամբ (սկսել է կազմավորել, հիմնականում, երկորդ համաշխարհային պատերազմից հետո և յոթանասուն–ութսունական թվականներին բուռն

բացահայտեց իր պոտենցիալ հնարավորությունները), թե Դայրենիքի հետ հաստատուն և անընդհատ աճող կապերի թերումը։ Դայրենիքի հետ մշտական և բավականին արդյունավետ կապ էին հաստատել համայնքի ավելի քան 60 կազմակերպություններ։

«Արմենիա» մշակութային միություն։ Եթե նկատի ունենամք, որ, ըստ երկրի օրենսդրության, արգելված էին օտար կուսակցությունները, սա ըստ եռթյան ՀՀ դաշնակցության և «Դամագգային» մշակութային միության գույց առաքելությունները միավորող մի մարմին էր։ Դայերեն և իսպաներեն լեզուներով հրատարակում էր «Արմենիա» օրաթերթ (1932 թվականից)։ Սերտորեն գործակցում էր Դայ մարմնակրթական ընդհանուր միության հետ, որն ուներ սեփական մարզադաշտ Բուենոս Այրեսից 30 կմ հեռավորության վրա։

«Շարժում» մշակութային միություն։ Սա էլ, նմանօրինակ կերպով, մարմնավորում էր ՍԴ հնչակյան կուսակցության և «Նոր սերունդ» մշակութային միության առաքելությունները։ Դրատարակում էր «Շարժում» շաբաթաթերթը (1937 թվականից) հայերեն և իսպաներեն լեզուներով։ Ուներ սեփական ակումբ և տպարան։

«Թերեյան» մշակութային միություն։ Նոյն տրամաբանությամբ մարմնավորում էր նաև ՌԱ կուսակցության խնդիրները։ Դրատարակում էր «Սարդարապատ» շաբաթաթերթը (1975 թվականից) հայերեն և իսպաներեն լեզուներով։ Սերտորեն գործակցում էր ՀԲԸՆ-ի հետ։

«Արգենտինահայ մշակութային միություն»։ Արգենտինայի համայնավար կուսակցության հայազգի անդամների և համակրողների կազմակերպությունն էր։ Դրատարակում էր հայերեն և իսպաներեն լեզուներով «Սևան» շաբաթաթերթը (1944 թվականից)։ Ուներ սեփական շենք ակումբային հնարավորություններով։ Միության «Գայանե» պարախումը բարձր հեղինակություն էր վայելում համայնքում։

Միջմիութենական մարմինը իր մեջ ներառում էր բազմազան կազմակերպությունների ներկայացուցչություններին խնդիր ունենալով։ Դայ դատի հետապնդումը միասնական ուժերով։ ՀՀ դաշնակցությունը նրա գործունեությանը չէր մասնակցում։

«Դայ պրոֆեսիոնալների միություն»։ Անկուսակցական կազմակերպություն էր, որի մեջ համախմբվում էին բարձրագույն կրթություն ստացած հայերը։ Միությունը գտնում էր բարձր պրոֆեսիոնալ մակարդակով քննարկել արդի շրջանում հայ ազգին հուզող քաղաքական թե գիտական խնդիրները, մասսայականացնում էր ազգային մշակույթը։

Հայրենակցական բազմաթիվ միությունների թվում դեռևս իրոք արդյունավետ գործողներից էին Հաճն և Սարաշի հայրենակցականները: Դենց այդ միությունների նախաձեռնությամբ Հայաստանում հիմնվեցին Նոր Հաճն և Նոր Մարաշ բնակավայրերը: Լուրջ գործունեություն էր ծավալում նաև Այնքափի հայրենակցական միությունը: Բոլորն ունեին իրենց սեփական ակումբները:

Հանայնքում գործում էին մի շարք ամենօրյա և մեկօրյա հայկական դպրոցներ, որոնցում դասավանդումը գնում էր ըստ պետական կրթական խորհրդի ծրագրի, կեսօրից հետո արտոնվում էր հայերենով անցնել հայոց լեզու և կրոնի պատմություն:

Համայնքի կյանքում մշակութային մեծ առաքելություն էին տանում «Կոմիտաս» և «Արաքս» երգչախմբերը:

Հանայնքի մշակութային կյանքը աշխույժ էր: Վարսունական թվականներից Ժայր առած փոխայցելությունները, որոնց շնորհիվ տակավ առ տակավ ավելացավ թե Հայրենիք այցելող խմբերի, թե Հայրենիքից համայնք ժամանող գեղարվեստական կոլեկտիվների թիվը, մեծապես խրանեց ազգային զգացմունքի զարդումը: Ուսուցչական ամենամյա սեմինարներին թե հայագիտական գիտաժողովներին ու մշակութային կարևոր ծեսնարկումներին գրեթե միշտ մասնակցել են արգենտինահայ ժամկավարժները, գիտնականները, մշակույթի գործիչները: «Արաքս» երգչախմբի գեղարվեստական ղեկավար Ժան Ալմուխայանը արժանացավ Հայաստանի կոմպոզիտորների միության «Կոմիտասի» անվան մրցանակին: Տարիներ շարունակ դեկտեմբեր-հունվար ամիսներին Հայաստանում են անցկացրել երկրորդական վարժարանների շրջանավարտների բազմաթիվ խմբեր, այդ թվում և Մխիթարյան միաբանության դպրոցի սաները:

Թե ՀԱԾՍ-ը, թե ՀԲԾՍ-ի երիտասարդական լիգան կազմակերպում էին ամենամյա նարզական մրցություններ և զանազան հանդիպումներ՝ ներգրավելով նաև դրացի երկրների հայ երիտասարդությանը: ՀԲԾՍ-ի երիտասարդական լիգան կազմակերպել է գեղանկարիչների ցուցահանդեսեր, դասախոսությունների շարքեր:

Հիշատակության արժանի է 1978 թվականին Հայաստանի օպերայի և բալետի թատրոնի բալետի խմբի այցելությունը, որի ընթացքում ներկայացվեցին Ա. Խաչատրյանի «Սպարտակ» և «Գայանե» բալետները: Կազմակերպիչն էր Մյուլեքյան հիմնարկությունը, որը հետագայում դադարեց գործելուց:

Հայ առաքելական դավանանքի հինգ եկեղեցիներից զատ համայնքում կային նաև Հայ ավետարանական և Հայ կաթոլիկ եկեղեցիներ: Գաղութում գործում էին երեք ռադիոժամեր:

Համայնքը մեծ լուսա ուներ Հայ դասի պաշտպանության և պղոպագանի հարցում: Պրոֆեսոր Ռոբերտ Մալխասյանը համայնքի կողմից քաջնից մասնակցել էր միջազգային այլազան ատյանների, որոնցում քննարկվել են ցեղասպանության, մասնավորապես, Հայոց ցեղասպանության խնդիրները: Մասամբ նաև համայնքի ջանքերի շնորհիվ էր, որ երկրի խորհրդարանը ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին որոշում:

Պատմաբան, իրավաբան Պատմուալ Օհանյանը գրել է հայ ժողովրդի պատմությունը իսպաններեն լեզվով: Հայոց «սպալվ» և «սատրվու»

Բութենոս Այրեսի հրապարակներից մեկը կոչված է «Հայաստան»: Տեղադրված է խորհրդանշող կոթող, որի հեղինակն է Հայաստանի անվանի քանդակագործ Լևոն Թոքմաջյանը: Հայոց պատմության հայության անհաջող սահմանադրությունը հայության համար նշանակալի է այս պատմության հայության հայության համար: Այս պատմության հայության հայության հայության համար նշանակալի է այս պատմության հայության հայության համար: Այս պատմության հայության հայության համար նշանակալի է այս պատմության հայության հայության համար:

Համայնքը կազմավորվել է 20-ական թվականներին: Ծուրջ 20000 հայություն, հիմնականում Սան Պաուլոյում և մի քանի հարյուր մարդ՝ Ոիհ դե Ժանեյրոյում: Կազմակերպված է իրրև թեմ:

XX դարավերջի տվյալներով՝ գործում էին Հայ կենտրոնը, «Արմենիա» և Հայ օգնության միությունները: ՀՀ դաշնակցության հակակցոի տակ, Զեյթունի և Մարաշի հայրենակցական միությունները, ՀՐԸՍ-ի մասնաճյուղը: Ունեին սեփական շենքեր, ակումբային հնարավորություններ, որոնք հանրային նպատակներով գործածվում էին սիստեմատիկ կերպով (դասախոսություններ, հանդիպուներ, ժողովներ, հանդեսներ և այլն): Կար նաև պրոֆեսիոնալների միություն: 1974-ից ի վեր գործում էր ռադիոժամ:

Հայ առաքելական, կաթոլիկ և ավետարանական մեկական եկեղեցիներ կային Սան Պաուլոյում: Առաքելական եկեղեցուն առջնքեր գործում էր մեկօրյա վարժարան:

1962 թվականից ի վեր Սան Պաուլոյի համալսարանում պրոֆեսոր Եսայի Գոուզյանի ղեկավարությամբ գիտամանկավարժական գործունեություն էր ծավալել հայագիտական ամբիոնը, որը պորտուգալերեն

հրատարակել է Հայոց ցեղասպանությանը վերաբերող ուսումնասիրություններ և նյութեր՝ վեց հատորով։

Համայնքի ջանքերով ցաղաքապետարանը Սան Պաուլոյի հրապարակներից մեկը կոչել է «Արմենիա»։ Տեղադրված է Մեծ եղեռնի հուշակորողը։ Նույն անվամբ կոչված է նաև մետրոյի կայարաններից մեկը։

ՈՒՐՈՒԳՎԱՅ ԵՎ ՎԵՆԵՍՈՒԵԼԱ

Նույն ժամանակների տվյալներով՝ մայրաքաղաք Մոնտեվիդեոյում բնակվում էր շուրջ 5000 հայություն, որի գրադարձը առարկան, մեծ մասամբ, առևտուրն էր։ Փոքրաթիվ համայնքը, սակայն, բավականին աշխույժ ազգային կյանք էր ապրում։ Նկատելի էր հայ բոլոր ցաղաքական ուժերի ներկայությունը։ ՄԴՀ-ն ուներ իր ակումբը՝ «Շնչակյան հայկական տուն» անունով, երիտասարդական նվազախումբը, իր ռադիոհամար (շաբաթը մեկ անգամ) «Հայ ծայ» անունով։

Հայ բարեգործական ընդհանուր միությունը, որի խողովակով էլ հիմնականում դրսնորվում էր ՈՄԿ-ի գործունեությունը, լայն ժողովրդականությունը էր վայելում։ Ուներ երիտասարդական լիգա և կանանց օժանդակ հանճնախումբ։ 9000 քառ. մ տարածության սեփական կալվածի վրա կառուցված են Ա. Մանուկյան երկրորդական վարժարանը և Նուպարյան նախակրթարանը։ Դպրոցներն ունեին ժամանակակից հնարավորություններով փակ մարզարան (Միսաք Գույումճյանի նվիրատվություն)։

Բավականին գորեղ էին ՀՀ դաշնակցության դիրքերը համայնքի կենտրոնական մարմիններում։ «Պոամյան» ակումբը, «Արմենիա» երիտասարդական կազմակերպությունը, «Հայ օգնության միության մասնաճյուղը», «Կոմիտաս» ռադիոհամար (ամեն օր՝ կես ժամ տևողությամբ) գործում էին կուսակցության մականի տակ։

Զախակողմյան ուժերը գործում էին «Հայ ազգային կենտրոն» կազմակերպության մեջ, ունեին սեփական ակումբ, «Երևան» երիտասարդական խումբ, կանանց օժանդակ մարմին։

Ուրուգվայի հայ համայնքի կյանքում քացառիկ երևույթ էր «Ռադիո Արմենիան»։ Քիմնադրվել է 1935 թավականին Հարություն Ռուբինյանի կողմից, որը և վարում էր գործերը մինչև իր մահը։ Շաղորդումները ծայնասփուլում էին շաբաթական 16 ժամ տևողությամբ հայրենասիրական

բովանդակությամբ: Նրա միջոցով տասնյակ տարիներ շարունակ հայությունը (նաև Արգելությունը) տեղյակ էր լինում Հայրենիքի անցուղարձերին:

Դենց «Ռազին Արմենիայի» և նրա մշակութային հանձնաժողովի նախաձեռնությամբ Սոնտեվիդեոյի ծովաներծ հրապարակներից մեկը 1975 թվականին կոչվեց «Պլասա Արմենիա», իսկ պողոտան՝ «Ռամբուլա Արմենիա»:

Դամայնքի ջանքերով երկրի խորհրդարանը նպաստավոր որոշում կայացրեց Դայոց ցեղասպանությունը ճանաչելու ուղղությամբ:

Վենեսուելայում ևս փոքրաթիվ գաղթօջախն է առաջացել հատկապես Երկրորդ աշխարհամարտից հետո՝ 50–ական թվականներից ի վեր ի հաշիվ Սիրիայից, Լիբանանից, Հունաստանից, Եգիպտոսից, Թուրքիայից, Բուլղարիայից և Ռումինիայից արտագաղթածների: Ընդհանուր թվաքանակը շուրջ երեք հազար էր, որից մեկ հազարը բնակություն էր հաստատել մայրաքաղաք Կարակասում: Գրեթե բոլորը հիմնականում զբաղված էին նավարդյունաբերության զանազան ասպարեզներում:

Դամայնքը կազմակերպված էր իրոն կրոնաեկեղեցական վիճակ՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հովանու ներքո: Ուներ գործադիր կենտրոնական վարչություն՝ որպես ազգային կյանքի ղեկավար մարմին, ուր բոլոր հրամայական դիրքերը գտնվում էին ՀՀԴ տեղական մասնաճյուղի ձեռքում:

Դամայնքի սեփականությունն էր Ազգային «Արարատ» տունը: Գործում էին Տիկնանց միությունը, Երիտասարդաց միությունը, հայկական պարախումը:

Դայությունն ուներ նյութական բարեկեցիկ վիճակ:

Դայությունը նույնական է այսպիսում, որ այս պատճենը կազմակերպված է առաջարկությամբ Արական բարեկեցիկ վիճակի համար և այս պատճենը կազմակերպված է առաջարկությամբ Արական բարեկեցիկ վիճակի համար: Ինչպես այս պատճենը կազմակերպված է առաջարկությամբ Արական բարեկեցիկ վիճակի համար, այս պատճենը կազմակերպված է առաջարկությամբ Արական բարեկեցիկ վիճակի համար:

առաջանալով «ոչնչից մեծ աղմուկ» շեքսպիրյան բանաձևումի տրամաբանությամբ: 1971 թվականին, օրինակ, կառուցվեց Մոնտեվիդեոյի «Ալեք Սանտակյան» երկրորդական վարժարանը, բավականին հարուստ շենքային և տեխնիկական հնարավորություններով: Բանականությունը և ազգային շահը, թվում է, թե ափոի պահանջեին մյուս ուժերից ջանքերը միավորել եղածը ավելի զորացնելու և արդյունավետ օգտագործելու համար: Բայց վեց տարի հետո՝ 1977-ին, ճիշտ եղածի պատի ետևը ստեղծվեց «Ներսիսյան» վարժարանը՝ ամենախղճուկ հնարավորություններով, ասես պատիկների մեջ իրենց ավելի հաջողակ քույրիկների ու երայրիկների նկատմամբ հոգեբանական բարդույթներ առաջ բերելու նպատակով:

ՄԻՌԱՐ ՄԿՋՈՒ

ԴԱՄԱՀՈՇՄՑԱՅ ԴԱՌՄԱՐՔՅ

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

01	ՍՊՅԱՅԻ ՎԱՐԴԱՎԵՍՎԱՆ ՊՐԵՍԵՐՎԱՆ ԾԱԿԱԿԱՐԱՅՈՒԹԵՒ
22	ԳՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՌԱՋԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՎԵՐԺԱ-ՇՐՅԱՅԻ
25	ԱՌԱՋԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԵՂԱՅԻ ԱՄԱՐՏՈՒՅԱՆ
25	ԱՌԱՋԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԵՂԱՅԻ ԱՄԱՐՏՈՒՅԱՆ
26	ԱՌԱՋԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԵՂԱՅԻ ԱՄԱՐՏՈՒՅԱՆ
26	Ա. ԵՎԱՐԵՎԱՆ ԱՌԱՋԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՄԱՐՏՈՒՅԱՆ ԱՄԱՐՏՈՒՅԱՆ
	Ամերկան մոմենտույանոց ժամին որոշ նայում բնույթ
27	Բ. Դար քառ առաջնային ուժ
27	Ո. Ա. Խայթանի մեջության մասին առաջնային ուժ
28	Ա. Առաջնային մասին առաջնային ուժ
28	Առաջնային մասին առաջնային ուժ
	Առաջնային մասին առաջնային ուժ
	Կանոնադր հարցի բարյարական լուծումն նայել
	Կանոնադր հարցի բարյարական լուծումն նայել
	Երրորդ գլուխ նախանձան և 2 ժամանակակի քառուունի առաջնային ուժությունը

ՄԻՌԱՐ ՐՊՈՐԴ

ԶՍԴՈՐՈՒՄԵՈՐ ԱԳՈՒՅՓՈՒ

ՌԱԴԱՐՈՒՅԱՆ ԱՎԱՐԱԿԱՆ ՎԱՐՈՐ. I

02	ԽԱՅԱԿԱՎԱՅ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ	ՌԱԴԱՐՈՒՅԱՆ ԱՎԱՐԱԿԱՆ ՎԱՐՈՐԸ
23	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ	ՌԱԴԱՐՈՒՅԱՆ ԱՎԱՐԱԿԱՆ ՎԱՐՈՐԸ
23	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ
24	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ
25	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ
25	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ
25	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ
26	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ
26	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ
26	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ
27	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ
27	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ
28	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ
28	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ	ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ ՎԱՐՈՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 3

Հայոց պատմության մասին գործառքը կազմության մեջ հայության մասին պատմության մասին մասունք է:

ԱՊԱԶԻՆ ԳԼՈՒԽ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

1. Ժողովրդագրական պատկերը	10
2. Քայլենիք-Սփյուռք հարաբերությունների սկզբունքները	22
Առաջին շրջան: Ազգային միասնության սկզբունք	23
Երկրորդ շրջան: Դասակարգային շերտավորման սկզբունք	27
Երրորդ շրջան: Բաղաքական շերտավորման սկզբունք	45
Չորրորդ շրջան: Բոլոր տիպի շերտավորումների վերացման, ազատ հարաբերությունների սկզբունք	49
3. Սփյուռք-Քայլենիք հարաբերության հիմնահարցը	51
4. Եկեղեցու դերի գնահատության հարցեր	55

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ ՍՓՅՈՒՇՔԻ ԳՈՅԱԿՈՐՈՒՄԸ

1. Լոգանի խորհրդաժողովը: Բաղաքական հույսերի պատրանաթափումը	59
2. Սփյուռքացման շարժման բացը	75
3. Զանազան կուսակցությունների և կազմակերպությունների քաղաքական գործունեությունը	80
Ա. Քայլափոխական դաշնակցություն	80
Բ. Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցություն	85

9. Ուամկավար ազատական կուսակցություն	91
Դ. Դայ համայնավարներ	97
Ե. «Չեղոքներ»	100
4. Պայշարի բորբոքումը	108
Ա. Ազգային պետականության խորհրդանիշների խնդիրը	108
Բ. Ազգային միասնության խնդիրը	113
Գ. Բարեգործական քննադատության թիրախ	117
5. Ընդունող հասարակության հետ ինտեգրացիայի շարժմանը	119
Արտադրության ոլորտ	121
Հոգևոր ոլորտ	125
ՏՏՏ	
ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ	

ՍՓՅՈՒՇՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴՈՒՈՎՈՒՅԹԸ

1. Ինքնահաստատման փուլ	132
2. Զարթոնքի փուլ	144
Ա. Եկեղեցական տագմապը	151
Բ. Դայ դասի հետապնդումը	155
Գ. Դայաստանի ժողովրդագրական շարժումները	
Սփյուռքի այլազան ուժերի ընկալմամբ	164
Երրորդ գլխի հավելված № 1՝ Եվրապաղամենուի քանածեց	
Դայկական հարցի քաղաքական լուծման մասին	168
Երրորդ գլխի հավելված № 2՝ ժողովրդումների դատական ատյանի որոշումը	173

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ ՍՓՅՈՒՇՔԱՅԱ ԳԱՂԹՕԶԱԽՆՆԵՐ

Ուսւաստան և ԽՄԴՄ նախկին հանրապետություններ	174
Սիրիա	176
Լիբանան	183

Իրան	194
Թուրքիա	203
Իրաք	205
Հորդանան	206
Խորայել	207
Յնդկաստան	208
Պարսից ծոցի Երկրներ	209
Կիպրոս	210
Եգիպտոս	212
Սույան	215
Երովաչիա	216
Ավստրալիա	216
Եվրոպա	219
Ֆրանսիա	220
Անգլիա	241
Խուալիա	242
Ավստրիա	244
Հունաստան	245
Բուլղարիա	246
Ռումինիա	249
Բելգիա	251
Դուանուիա	252
Գերմանիա	253
Ըստիա	255
Հյուսիսային և Հարավային Ամերիկա	255
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	256
Կանադա	274
Արգենտինա	277
Բրազիլիա	280
Ուրուգվայ և Վենեսուելա	281

Կարլեն Լևոնի Դալլարյան

ՀԱՅ ՍՓՅՈՒՇԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(համառօտ ակնարկ)

Դրասուակը ու բարյան տնօրին	ՄԱԾՍ ՄԱՎԱԿԱՆՅԱԼ,
Գեղարվեստական խթագիր	ՄՐՍ ԲԱՂՐԱՄԱՐՅԱՆ
Սրբագրէ	ԱԶԻՒԿ ՆԱԽՆՅԱՆ
Դամակարգչային շարվածք	ՍՈՒՍԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Դամակարգչային ծնավորումը	ԼԱԼԱ ԴՐԱՍԵՖՅԱՆԻ
Կազմի համակարգչային ծնավորումը	ԱՐԵԿԻԿ ԴԱԿՈԲՅԱՆԻ

Տպագրությունը օֆսեթ, բուղբջ օֆսեթ, չափը 60x84/16,
ծավալը 18 տպ. մամուլ, տպարանակը 500



Երևան, 375051, Կոմիտասի 49/2
Դե. 23-25-28, 23-26-48, ֆաք 23-25-95
E-mail: zangak@arminco.com, URL: www.zangak.am